Մատենաշար «ՑՈՒԱԱՌԵՐ» Թիւ 89

Ե. ԳԻՇԵԼԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԱՄԲ,
ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻԱՄԲ
ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ
ՊՐՈՖ. ԴՈՔՏ Ե. ՑԱՂՈՒՄՅԱՆԻՑ

ԳԱՀԻՐԷ
1950
ՏՊԱՐԱՆ «ՑՈՒՄԱԲԵՐ»

2213

Uit de nalatenschap van
Nubar Jessayan (1920-2009)

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԱՍՏՄՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ,
ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ
ՊՐՈՖ. Դ-Ր Ե. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ

ԳԱՀԻՐԷ
1950
ՏՊԱՐԱՆ "ԳՈՒՍԱՆԵՐ"

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. Այն օրուանից, երբ քրիստոնէութիւնը մուտք գործեց Հայաստան և Տրդատ թագաւորն ու Գրիգոր Լուսաւորիչն այն բարձրացրին պետական կրօնի աստիճանին, փոխուեց նաեւ հայ ժողովրդի և հայ պետութեան քաղաքական դրութիւնը երկու միմեանց հետ մրցող և Հայաստանի լիակատար տէրը դառնալ ձգտող մեծ պետութիւնների — Հռովմէական կայսրութեան և Պարսից Սասանեան պետութեան միջեւ։ Քանի դեռ քրիստոնէական կրօնը յաղթող չէր հանդիսացել Հռովմէական կայսրութեան մէջ և Հայաստանում, Հռովմէական կայսրութեան և Պարսից պետութեան յարաբերութիւնների հիմքը Հայաստանի վերաբերմամբ կազմում էին միմիայն քաղաքական իրաւարձութիւնները, պետական սահմանների ապահովութեան հարցերը և այլն. իսկ IV դարի սկզբից, քրիստոնէական կրօնի յաղթութիւնից յետոյ Հռովմէական կայսրութեան մէջ և Հայաստանում, վերոյիշեալ հարցերի վրայ աւելանում է և նրանց լուծման համար կարեւորագոյն չարժառիթներից մէկն է դառնում կրօնական խնդիրը։ Հայերի քրիստոնէութիւն ընդունելը և կրօնով հռովմէական կայսրութեանը յարելը բնական և իրաւացի կասկած է առաջացնում Պարսկաստանի պետական գործիչների մէջ և նրանց երկիւղ է ներշնչում, թէ կրօնով միացած լինելով Հռովմէական կայսրութեան հետ՝ հայերն անչուշտ ձգտելու են նաև քաղաքականապէս մօտենալու նրանց, ուստի եւ Պարսից պետութիւնը կանգնած է մի մեծ երկիւղ և ստրատեգիական տեսակէտից չափազանց կարեւոր մարզ կորցընելու անաւորւ վտանգի առաջ։

Ամբողջ Առաջաւոր Ասիայի և մասնաւորապէս Հայոց պատմութեան IV եւ V դարերի (ինչպէս նաեւ հետագայի) իրադարձութիւնների ճիշտ ըմբռնման եւ պարզաբանման բանալին այս է։ Այս քաղաքական ձգտումներով են բացատրւում Պարսից պետութեան IV դարի առաջին կէսից սկսած սոսկալի հալածանքները քրիստոնէութեան դէմ. այդ հալածանքները մերթ մեղմանում են, մերթ բռնկւում նոր թափով ու ուժով՝ մինչեւ Պարսից Սասանեան պետութեան անկումը, որն այս անլուծելի խնդիրը ժառանգութիւն է թողնում իրեն յաջորդող արաբական պետութեանը:

Այս ամբողջ ժամանակաշրջանում Հայաստանը, մուրճի և սալի միջեւ ընկած, խիստ ծանր վիճակի մէջ էր: Պարսից պետութիւնը նրանից պահանջում էր ըստ ամենայնի, կրօնով և ազգային առանձնայատկութիւններով ու պետական կեանքով, միանալ իրեն հետ և մնաս բարեւ ասել ազատ ու ինքնուրոյն պետական ազգային կեանքին։ Աւելի լաւ չէր հայերի դրութիւնը նաև հռոմէական կայսրութեան նկատմամբ։ Այստեղ էլ նրան ազգային պետական ինքնուրոյն և ազատ կեանքի նոյն կորուստն էր սպառնում, որովհետեւ հայերը, կրօնով միացած լինելով իրենց արեւմտեան հարեւանների հետ՝ արդէն կորցրել էին ազգային ինքնապահպանման այդ պատուարը և՝ դեռ եւս գիր ու գրականութիւն չունենալով՝ ենթակայ էին նաև ազգային ինքնապահպանման երկրորդ և ամենակարեւոր պատուարը —սեփական լեզուն— կորցնելու և Հռոմայեցիների հետ լիովին ձուլուելու վտանգին: IV դարի վերջի և V դարի սկիզբի հայ խոշորագոյն գործիչների միտքն ու հոգին այս ցաւին գարման անելու հոգսերով էին պաշարուած. մինչեւ որ նրանցից ամենախոշորին՝ Մեսրոպ Մաշտոցին յաջողուեց հայոց լեզուի համար այբուբեն հնարել V դարի սկզբին, ժամանակի կաթողիկոս Սահակ Պարթեւի գործակցութեամբ Աստուածաշունչն ու եկեղեցական գրքերը հայերէն թարգմանելով՝ ինքնուրոյն կեանք ապահովել Հայոց եկեղեցուն, և սեփական գրի ու գրականութեան հիմք դնելով՝ հաստատուն պատուանդան և յուսալի յենարան ստեղծել ազատ և ինքնուրոյն ազգային կեանքի զարգացման համար:

Գրերի գիւտը և ինքնուրոյն գրականութեան սկիզբը դարագլուխ է կազմում հայոց պատմութեան մէջ։ Սահակ Պարթեւի և Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների —թարգմանիչների— բեղմնաւոր գործունէութեան հետեւանքով հայ ազգը ինքնագիտակցութեան եկաւ, ճանաչեց ու ջերմօրէն սիրեց իր անցեալն ու իր հայրենիքը։ Թէեւ նա հետագայում կորցրեց իր պետական անկախութիւնը, բայց նրա մէջ մշտապէս վառ մնաց ազատութեան ձգտումը և այն ղգացումը, որ մարդու և ժողովրդի համար ամենաբարձր բարիքը ազատութիւնն է և ամենասիրելի բանը՝ հայրենիքը, որի պաշտպանութեան համար չպէտք է խնայել ոչինչ, նոյնիսկ կեանքը։ Հայրենիքի կարօտն ու սէրը և խղճի ազատութեան ու քաղաքական ազատութեան տենչը այնուհետեւ անմար մնաց հայ ազգի սրտում և նա չատ անգամներ ոտքի ելաւ այն անաւոր բռնաւորների դէմ, որոնք պատմութեան ընթացքում փորձեցին չղթայել, կաշկանդել նրա ազատութիւնը։ Հայոց պատմութիւնը այդպիսի հայրենական պատերազմների, ապստամբութիւնների ու ըմբոստացումների մի չարան է և այդ չարանի մէջ իր կարեւորութեամբ ու նշանակութեամբ առաջնակարգ տեղ է գրաւում «Վարդանանց» ապստամբութիւնը, որի պատմութիւնը գրել է հայ ժողովրդի ամենասիրելի հեղինակներից մէկը, «քաղցրազրուցիկ» Եղիշէ վարդապետը։

2. Եղիշեի կենսագրութիւնը.— Ո՞վ էր «Պատմութիւն Վարդանանց» վերնագիրը կրող ոսկեղէն մատեանի հեղինակը։ Դժբախտաբար չատ քիչ բան գիտենք նրա կեանքի և գործունէութեան մասին և այդ քիչն էլ հէնց այն է, որ պահել–հասցրել է մեզ աւանդութիւնը։ Որքան էլ այդ աւանդական կենսագրութեան մէջ անհաւանական գծեր կան, որքան էլ փորձեր են եղել խախտելու բոցաշունչ հայրենասէր Եղիշէ վարդապետի V դարում ապրած և ականատես պատմագիր լինելու հանգամանքը, այնուամենայնիւ այդ փորձերն, ինչպէս ստորեւ կը տեսնենք, պէտք է համարել բոլորովին ձախողուած, ուրեմն և մենք պէտք է իրաւունք տանք աւանդութեանը։

Աւանդութեան համաձայն, Վարդանանց պատմագիր Եղիշէն եղել է վարդապետ, Սահակ Պարթեւի և Մեսրոպ Մաշտոցի

կրտսերագոյն աշակերտներից, նրանց բացած ուսումնարաննե-
րում հայերէնի հետ միասին անչուշտ սովորել էր յունարէն,
ասորերէն և պարսկերէն լեզուները։ Երբ կարիք զգացուեց աշա-
կերտների մի երկրորդ խումբ ուղարկել այն ժամանակուայ
գիտութեան կենտրոնը՝ Աղեքսանդրիա, ուրիշների հետ (Մովսէս
Խորենացի, Դաւիթ, Մամբրէ Եայլն) այդ երջանիկների մէջ էր
նաեւ Եղիշէն։ Այդ խումբը չուրջ 434ին անցնում է նախ Եդե-
սիա, ապա Պաղեստինի վրայով Աղեքսանդրիա, որտեղ երկար
մնում են կիւրեղ Աղեքսանդրացու դպրոցում և համառնում
գիտութիւնների մէջ։ Այնտեղից ուզում էին անցնել Յունաս-
տան, բայց հողմը նրանց Հռոմ գցեց, ուր կարճ ժամանակ
մնալուց յետոյ Աթէնքի և Կոստանդնուպոլսի վրայով վերա-
դարձան հայրենիք այն ժամանակ, երբ նրանց բարերարներն ու
ուսուցիչները վախճանուել էին։ Այդ վերադարձը պէտք է տեղի
ունեցած լինի 441 կամ 442 թուականներին։ Ի՞նչ հիմունքով
է Բաբգէն Կիւլեսէրեանը Մովսէսին, Դաւթին և Եղիշէին 451
թուին դեռ Բիւզանդիայում գտնում, «այսինքն Վարդանանց
պատերազմը վերջանալէն չատ յետոյ վերադարձան ի Հայս,
հետեւաբար՝ պատմագիրը ականատես չէ Վարդանանց դէպքե-
րուն»,— բոլորովին անհասկանալի է ինձ համար (տե՛ս Կիւլե-
սեռեան, «Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն», Վիեննա,
1909, էջ 68)։

Եթէ Եղիշէն արտասահման ուղեւորուելիս 24—25 տարե-
կան երիտասարդ լինէր, ուրեմն նրան պէտք է համարենք ծըն-
ւած մօտ 410—415ին։

Ի՞նչ գործով է զբաղուել հայրենիք վերադառնալուց յետոյ
Եղիշէն, նոյնպէս որոշակի յայտնի չէ։ Նրա անանուն կենսա-
գիրը («Սուիերք Հայկականք», ժԱ. 39—45) ասում է, թէ
«զինուորեալ էր սրբոյն Վարդանայ և սպասաւորէր նմա և էր
հաւատարիմ յամենայն իրս աստուածայինս և մարդկայինս»։
Ասում են նաեւ, թէ նա եղել է Մամիկոնեան Վարդան սպա-
րապետի քարտուղարը և մերձաւոր ազգակիցը։ Եղիշէին նոյ-
նացրել են նաեւ Արտաշատի ժողովական Ամատունեաց Եղիշէ
եպիսկոպոսի հետ։ Այս նոյնացումը, սակայն, չատ անհաւանա-
կան է. նախ՝ Եղիշէն այդ ժամանակ դեռ չատ երիտասարդ էր

(հազիւ 35—36 տարեկան) այդպիսի բարձր աստիճանի հասած լինելու համար։ Երկրորդ՝ երբ Պարսից Յազկերտ II թագաւորը Հայոց նախարարներին Տիզբոն է կանչում պատասխանատուութեան, Վարդան սպարապետի հետ այնտեղ է լինում նաև Եղիշէն, ինչպէս երեւում է իր իսկ խօսքերից (տե՛ս երկրորդ յեղանակի սկիզբը՝ «ես ինքնին անձամբ արդէն ի տեղւոջն պատահեցի և տեսի, և լուայ ղձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով» և երրորդ յեղանակի սկիզբը՝ «Այլ ասացուք փոքր ի շատէ, զի ձայնակից լիցուք այնոցիկ, որ դառնապէս զմեզն ողբային»). այս բանն անհնարին, առնուազն խիստ անյարմար կը լինէր, եթէ Եղիշէն եպիսկոպոս և այն էլ Ամատունեաց եպիսկոպոս լիներ։ Բացի այդ՝ աւանդական կենսագրութեան մէջ («Սուիերք», ԺԱ.) ասուած է, որ նա կրօնաւորական կեանքը յանձն է առել իր «Պատմութիւնը» և միւս գրուածքները գրելուց յետոյ, ուրեմն Արտաշատի ժողովից առնուազն 10 տարի անց։ Երրորդ՝ Եղիշէի «Պատմութեան» ընծայականից էլ ամենևին չի երեւում, որ հեղինակը եպիսկոպոս եղած լինի. այն աւելի սազական է մի համեստ վարդապետի։ Եթէ պատմագիրն Արտաշատի ժողովական եպիսկոպոս լինէր, նա որևէ կերպով կը հասկացնէր իր գործակցութիւնն այդտեղ, քանի որ նա սիրում է չեչտել իր ականատես պատմագիր լինելը։ Եւ, վերջապէս, չորրորդ՝ բոլոր պատմագիրներն անխտիր այս հեղինակին տալիս են Եղիշէ վարդապետ անունը և ոչ մի հիմք չկայ, բացի անուան նոյնութիւնից, նրա եկեղեցական աստիճանը բարձրացնելու։ Մերժելով այդ նոյնացումը, ինչպէս նաև Եղիշէի զինուոր կամ վարդանին աղգակից լինելը, իրաւ անարժէք զրոյց, պէտք է ասենք, սակայն, որ հաւանական է Եղիշէի որևէ ձեւով, օրինակ՝ իբրեւ քարտուղար, Վարդան սպարապետին մօտիկ լինելը, որովհետեւ նա իր «Պատմութեան» մէջ ռազմագիտական հմտութիւն է դրսեւորում (տե՛ս, օրինակ, Հայոց պատերազմի նկարագրութիւնը վերջերորդ գլխում և այլն)։

Այնուհետեւ այսքանը գիտենք Եղիշէ վարդապետի մասին, որ նա գրել է Վարդանանց պատմութիւնը և էլի ուրիշ կանոնական և մեկնաբանական (Կիրակոս Գանձակեցի) գրուածքներ և իր կեանքի վերջին շրջանը Վարդանանց պատերազմից յետոյ,

գուցէ և նրա ազդեցութեամբ ու հետեւանքով անց է կացրել ճգնութեամբ սկզբում Մոկաց երկրում գտնուած մի այրում, իսկ յետոյ, երբ նրա բնակութեան տեղը հովիւների միջոցով յայտնուում և հռչակուում է ամէն կողմ, նա Մոկաց երկրից հեռանում է և բնակութիւն հաստատում Ուշտունեաց գաւառում, ծովեզրին մօտիկ գտնուող մի այրում, որը նաև կենսագրի օրով՝ նրա անունով կոչւում էր Ս. Եղիշէի այր։ Մի քանի տարի էլ այստեղ ճգնելուց յետոյ մեռնում է, նրան գտնում են մեռած, քննում-իմանում են, որ Եղիշէն է, և թաղում են հէնց այրի մօտ («Սոփերք», ժԱ.)։ Ինչպէս գրում է Ղ. Ալիշանը՝ «Ընչխարքն Եղիշեայ փոխադրեալ գտանին այժմ ի Ջաղար Աստուածածին վանս, ի ստորոտ բարձր և ծաղկաւէտ Արտոս լերին, որ ձգի ի հարաւոյ գետոյն Խոչապայ և յարեւելից հարաւոյ ծովուն Վանայ, և որ գործէ զձորն Ոստանայ»։ Այս աւանդութիւնները Եղիշէի ճգնական կեանքի մասին կարելի է ըստ էութեան ճըշմարտութեան համապատասխան համարել, բացի նրա նշխարների փոխադրութեան խնդրից, որ ոչնչով հաստատուած չէ։

Եղիշէի մահուան թուականը և նրա կեանքի տեւողութիւնը մենք հաստատապէս չգիտենք։ Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, ինչպէս կը տեսնենք ստորեւ, Եղիշէի «Պատմութիւնը» գրուած է 458 թուականից ոչ շուտ, մասամբ հաւանօրէն 464ից յետոյ, և այնուհետեւ Եղիշէն, ինչպէս երեւում է, շատ երկար չի ապրել, մենք կարող ենք նրա մահը դնել 470-ի և 475ի միջեւ։ Ծննդեան տարեթիւը հաշուելով 410—415ի միջեւ՝ սրանով նրա կեանքի մօտաւոր տեւողութիւնը կը լինի 60 տարի։

3. Եղիշեի «Վարդանայ Պատմութիւնը».— Եղիշէի ամենահռչակաւոր աշխատութիւնը, որ նրան անմահացրել է, նրա «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրուածքն է, որ նա գրել է Մամիկոնեան Դաւիթ Երէցի խնդրով և որի նիւթն է հայերի ապստամբութիւնը Պարսից Յազկերտ II թագաւորի դէմ և պատերազմը 450—451 թուականներին։ Գրուածքը, ինչպէս ցոյց է տալիս ընդայականը, բաժանուած է եօթ գլուխների կամ յեղանակների, և վերջում ունի նաեւ մի ութերորդ յեղա-

նակ «Արտաքոյ եւթն յեղանակին», որի մէջ պատմուած է Պարսկաստան գերի տարուած հոգեւորականներու նահատակութիւնը։ Այս գլխին կցուած է նաեւ երկու յաւելուած՝ «Վասն խոստովանողացն Հայոց Յորէնայ և Աբրահամու» և «Անուանք նախարարացն, որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի եառուն զանձինս ի կապանս արքունի», որը վերջանում է գերեալների կանանց կենցաղավարութեան անունների նկարագրութեամբ։

Տեղի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով այստեղ մանրամասն կանդ առնելու «յեղանակների» թուի և այդ յեղանակներից մէկի, հինգերորդ յեղանակի, կորած լինելու վրայ, և հետաքրքրուողներին յանձնարարելով կարդալ այս մասին մանրամասնութիւնները Բաբգէն Կիւլեսէրեանի, Գր. Տէր-Պօղոսեանի և Ն. Ակինեանի ուսումնասիրութիւնների մէջ, այսքանը միայն անհրաժեշտ ենք համարում այստեղ շեշտել, որ Եղիշէի «Պատմութեան» մեր ձեռքը հասած տեքստի մէջ ոչ մի պակաս չի զգացուում։ Իսկ այն խնդիրը, թէ արդեօք այժմեան հրատարակութիւնների գլխաբաժանումը ճի՞շդ է, թէ՞ «ութերորդ» գլուխն էլ է մտնում ընդհանուրի մէջ և ա՛յն պէտք է համարել եօթերորդ գլուխը, կարելի կը լինի լուծել, թերեւս, միայն Եղիշէի բոլոր ձեռագրերի համեմատութեամբ կատարուած գիտական հրատարակութիւն լոյս ընծայելուց յետոյ։ Յամենայն դէպս մխանգամայն պարզ է, որ Եղիշէն իբրեւ ամբողջական երկ մեր ձեռքն է հասել փոքր ի շատէ անաղարտ վիճակում։ Սրանով, ի հարկէ, չենք ուզում բացառած լինել, որ այժմեան Եղիշէի մէջ կան և կարող են լինել փոփոխուած ևախադասութիւններ եւ հատուածներ, որոնք հեղինակի գրչին չեն պատկանում, այլ նրա մէջ մտցուած են հետագայում խմբագրողների կողմից կամ առաջացել են արտագրութիւնների ժամանակ գրիչների կողմից։

Եղիշէի անաղարտութեան հարցը չշփելիս՝ չի կարելի անուշադրութեան մատնել նաև Թովմա Արծրունու հետած տեղեկութիւնը Եղիշէի բնագրի աղճատուած լինելու մասին։ Թով-

մա Արծրունին պնդում է*), թէ եղիշէի «Պատմութեան» մէջից հանուած են Արծրունեաց տան վերաբերեալ հանդամանքները և յատկապէս Վահան Արծրունու մարտիրոսութիւնը։ Նրա ասելով՝ այդ խարդախութիւնը կատարել է յայտնի ճեսuորական աղանդաւոր Բարձուման։ Սա գալով Մոկաց երկիրը իր աղանդը սերմանելու համար՝ ծանօթանում է այդ երկրում ճգնող եղիշէի հետ, խնդրում է նրանից Պատմութեան գիրքը կարդալու համար, և եղիշէն կատարում է նրա խնդիրը։ Բայց Արծրունեաց իշխան Մերշապուհը՝ լսելով Բարձումանի իր սահմանները մտնելը՝ խիստ խօսքերով հրամայն է ուղարկում նրան հեռանալու իր երկրից։ Ահա այս պատճառով Բարձուման՝ քինախընդիր լինելով՝ իր վրէժն առնում է Արծրունիներից նրանով, որ, ինչպէս ասացինք, «ի բաց եհան ի գրոցն պատմութենէ, որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք և որ ինչ օրինակ մարտիրոսութեան վահանայ Արծրունւոյ»։ Այդ ժամանակները մեռնում է եղիշէն, և երբ Բարձուման նրա պատմութեան գիրքն այդպէս խարդախած վերադարձնում է, ոչ ոք դրա վրայ ուշադրութիւն չի դարձնում, կարծելով, թէ հէնց եղիշէն ինքն է այդպէս գրել։

Գտնուել են լուրջ բանասէրներ, որոնք թուլմայի այդ չինծու առասպելին պատմական արժէք են վերագրել և հատանական են համարել եղիշէի «Պատմութեան» խարդախուած լինելը Բարծումա նեստորականի կողմից։ Բայց բանասէրների մեծամասնութիւնը ներկայումս համաձայն են միմեանց հետ, որ այդ գրոյցն անարժէք է միանգամայն և չի էլ համապատասխանում մեր ձեռքում եղած եղիշէի այժմեան տեքստին։ Մեր այժմեան եղիշէի մէջ Արծրունեաց յիշատակը ջնջուած չէ ամենևին, ընդհակառակն, Արծրունիները յիշւում են բազմաթիւ անգամներ։ Բացի այդ, եթէ Բարծուման ջնջելու լինէր որևէ Արծրունու անունն, ամենից առաջ նա պիտի ջնջէր էր անձնական թշնամի Մերշապուհ Արծրունու անունը, որին մենք մի քանի անգամ հանդիպում ենք եղիշէի «Պատմութեան» մէջ, և ոչ թէ

*) Պատմութիւն տանն Արծրունեաց. Կ. Պոլիս, 1852, էջ 89:

վանան Արծրունու անունը, որ նրան ոչ մի ընտաս չէր պատճառել։ Ինչ վերաբերում է յատկապես Վանան Արծրունուն, բանասէրներն իրաւամբ չեչտում են, որ նա անյայտ է նաև Փարպեցուն. ուրեմն Փարպեցի՞ն էլ պէտք է խարդախուած համարենք Բարծրումայի կողմից։ Այս ամենից հետեւում է, որ Թովմա Արծրունու տուած տեղեկութիւնը միանգամայն անարժէք է հինգերորդ դարի և Եղիշէի պատմութեան վերաբերմամբ։ Հաւանական է, որ նա չփոթել է VI դարում պատահած անցքերը Վարդանանց պատերազմի հետ կապուած դէպքերի հետ։ Այս մտքին է բերում մեզ այն հանգամանքը, որ Թովմա Արծրունին նոյն հատուածում, խօսելով Բարծրումա նեստորականի մասին, ասում է. «ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. գրէ առ կողմանս Ասորեստանի՝ զգուշացուցանելով մի՛ խառնիլ ընդ նեստորականն. զնոյն գրէ և առ որս ի Ծուժաստանին էին ժողովուրդ ուղղափառացն...»*։ Թովմայի այս հատուածի հիման վրայ Զամչեանը և նորերից էլ ոմանք, օրինակ S. Weber (Katholische Kirche in Armenien, էջ 458 շար.), Քրիստափոր անունով մի կաթողիկոս են ընդունում Գիւտի և Յովհան Մանդակունու միջեւ, որ ոչնչով չի արդարանում։ Ղազար Փարպեցու նման ժամանակակից և ճշդապատում հեղինակն այդպիսի կաթողիկոս չի ճանաչում. իսկ Մելիտէ և Մովսէս Մանազկերտացիներին յիշող Ղազարը չէր կարող չյիշել այդ Քրիստափորին, եթէ նա յիրաւի գոյութիւն ունեցած լինէր։ Անկախ այս հանգամանքից, ա՛յն, ինչ որ Թովմա Արծրունին ասում է Քրիստափոր կաթողիկոսի մասին, վերաբերում է VI դարու 30-ական թուականներին կաթողիկոսութիւն արած հայոց կաթողիկոս Քրիստափոր Ա.-ին, որի մասին ասորական աղբիւրներն էլ վկայում են, որ յարաբերութիւններ է ունեցել Մի-ջագետքի ասորական համայնքների հետ, այցելել է նրանց, նրանց համար եպիսկոպոսներ է ձեռնադրել և այլն (այս մասին տե՛ս Ե. Տեր-Միքայելեան, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները

*) Անդ. էջ 88:

Աստրոց եկեղեցիների հետ. Էջմիածին, 1908, էջ 122—133)։ Ուրեմն Թովմա Արծրունին այս դէպքում ակնյայտ կերպով չփոթում է V և VI դարերի դէպքերը, հաւանօրէն նոյնն է տեղի ունեցել նաեւ Բարծումայի անուան հետ կապուած այս ամբողջ հատուածի վերաբերմամբ։ Այսպիսով՝ Եղիշէի «Վարդանանց Պատմութիւնը» իրրեւ ամբողջական երկ մեր ձեռքը հասել է առանց վերոյիշեալ խարդախման։

4. Եղիշեի «Վարդանանց Պատմութեան» բնոյթը. — Թէեւ Եղիշէի երկը կրում է «Պատմութիւն» անունը և իրրեւ այդպիսին մեր ձեռագրերի պատմական ժողովածուներում դուրս է մղել Ղազար Փարպեցուն, բայց այն իսկապէս ասած մի սովորական պատմութիւն չէ, այլ վկայաբանական գունաւորում ստացած մի պատմական դիւցազներգութիւն. պատմութիւնն իրեն նիւթ վերցրած մի բանաստեղծական քերթուած, ո՛չ թէ սոսկ պատմաբանի, այլ հոգով բանաստեղծի գործ, որ գրուած է խիստ որոշ նպատակով — «Որպէսզի չարունակ կարդաս, լսելով առաքինի անձերի քաջութիւնը և չետ կացածների վատթարութիւնը»։ Եղիշէն եղել է V դարի կէսի հայրենական այս մեծ դիւցազներգութիւնը պատրաստողներից մէկը, ինչպէս ինքը վկայում է՝ ականատես վկայ և մասնակից է եղել սարսափելի դէպքերին («Ահա կամքիս հակառակ արտասուալից ողբերով չարադրում ենք այն բազմաթիւ հարուածները, որոնց մէջ հէնց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»։ «Ո՛չ կարծիքներ լսելով եմ այլայլուել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ե՛ս ինքս անձամբ նոյն տեղում պատահեցի և տեսայ ու լսեցի յանդգնաբար խօսելու ձայնը. ինչպէս սաստիկ քամին, որ ալեկոծում է մեծ ծովը, այնպէս էր չարժում ու տարուբերում իր զօրքերի ամբողջ բազմութիւնը» և այլն և այլն) և պատերազմը վերջանալուց յետոյ, դէպքերի դեռեւս թարմ տպաւորութեան տակ, վէրքերը դեռ լիովին չապիացած՝ գրի է առել իր տեսածն ու լսածը. ի՞նչ զարմանք, որ նրա երկից այնպիսի անմիջականութեան ու թարմութեան հոտ է բուրում, որ հարբեցնում է ընթերցողին, և որի հետ երբեք չի կարող համեմատուել ժամանակ-

անցնելուց յետոյ սառնութեամբ ամէն մանրամասնութիւն կշռադատած ու գրուած որեւէ իսկական պատմական երկ, ինչպիսին այս դէպքում Ղազար Փարպեցու գրուածքն է։ Միամտութեան արդիւնք է այս երկու հեղինակների երկերը իբրեւ պատմական գրուածքներ միմեանց հետ համեմատելը և մէկի առաւելութիւնները միւսի վերաբերմամբ ցոյց տալը, որովհետեւ դրանք բոլորովին տարբեր բնոյթի և տեսակի երկեր են, որոնց երբեք չի կարելի միեւնոյն չափանիշով մօտենալ։ Ղազար Փարպեցու գրուածքն իսկական պատմութիւն է, որի նպատակն է պատմական երեւոյթների ծագումն ու զարգացումը նկարագրել, իսկ Եղիշէի երկը, պատմական նիւթ ունենալով հանդերձ, մի բանաստեղծութիւն է, լի քնարական սրտաբուխ զեղումներով, որի նպատակն է «սիրելիների համար մխիթարութիւն, յուսացողների համար յոյս և քաջերի համար քաջալերութիւն լինել» նեղ օրերում։ Այն գրուած է ցոյց տալու համար, որ հայրենասիրութիւնը, ազատութեան սէրը ոչ մի զոհաբերութեան առաջ կանգ չի առնի, ամէն նեղութիւն ու տառապանք կը կրի հայրենիքի սիրոյ և խղճի ազատութեան համար, իր կեանքն անգամ չի խնայի, որովհետեւ «չհասկացուած մահը մահ է, հասկացուած մահը՝ անմահութիւն. ով որ չգիտէ, թէ ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտէ մահը, նրանից չի վախենում», որովհետեւ «վախը թերահաւատութեան նշան է, իսկ թերահաւատութիւնը մեզնք վաղուց են՛ք մերժել մեզնից։ Այս պատճառով էլ հայրենիքի ազատութեան համար մարտնչող լաւերն ու առաքինիները նրա աչքին աւելի լաւ ու աւելի կատարեալ են երեւում, իսկ վատերն ու ուրացողները՝ աւելի վատթար ու աւելի գարշելի. սրանով պատմական ճշտութիւնն աղօտանում է և անձերի ու գործերի նկարագրութեան ժամանակ գոյները խտանում են։ Այդպէս, լաւերն ու առաքինիները, կամ մեր ժամանակի արտայայտութեամբ ասած՝ դրական տիպերը, այնպէս են նկարագրւում, որ նրանց մէջ ոչ մի պակասութիւն ու թերութիւն չես կարող գտնել, և նրանք միայն հիացմունքի առարկայ կարող են լինել, ինչպէս օրինակ Վարդանը, Ղեւոնդ Երէցը և առհասարակ հոգեւորականները, փափկասուն տիկնայք. մինչդեռ վատերն ու ուրա-

ցողները կամ բացասական տիպերը հակառակ ծայրայեղութեան հասցրած գոյներով են նկարագրում, ինչպէս Յաղկերտը, Միհրներսեհը և Վասակը, մանաւանդ վերջինը, որին Եղիշէն հալածում է նոյնիսկ նրա մահից յետոյ էլ. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա առ ի կշտամբութիւն յանդիմանութեան մեղաց նորա, զի ամենայն, որ զայս լուեալ գիտասցէ, նզովս զնեսա արկցէ և մի լիցի ցանկացող դորձոց նորա»:

5. Քննութիւններ Եղիշէի պատմութեան վերաբերեալ.— Ինչպէս մեր հին մատենագրութեան մի-ւս աչքի ընկնող բոլոր գործերը, այնպէս էլ Եղիշէ վարդապետի «Վարդանանց Պատմութիւնը» ենթարկուել է մանրազնին քննութեան դանազան բանասէրների կողմից։ Այդ քննութիւններն սկզբում, XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամեակում, կրում են չափաւոր և փոքր ի շատէ անաչառ, զուտ բանասիրական բնոյթ (Գր. Տ. Պօղոսեան, Ն. Ադոնց, Բարգէն Կիւլեսէրեան և այլք), իսկ հետագայում, նորենացու վերաբերեալ եղած անչափաւոր և միտումնաւոր քննադատութիւնների օրինակով, Եղիշէի վերաբերեալ քննադատութիւններն էլ դառնում են անասնձ, անհիմն, բռնազբօսիկ և նախատական ու հայհոյական արտայայտութիւններով լի. Եղիշէն էլ հանդէս է բերում իբրեւ մի գրական կեղծիք, «ամենաթոյլ մի մատեան, որ չի կրնար դիմանալ լուրջ քննադատութեան» (Ն. Ակինեան)։

Համառօտակի անցնենք այդ քննութիւններին 1).

ա. Դրանց մէջ ժամանակով առաջին տեղը գրաւում են Գր. Տ. Պօղոսեանի յօդուածները «Եղիշէի Պատմութեան աղբիւրը» և «Նկատողութիւններ Եղիշէի Պատմութեան վերաբերեալ» վերնագրով, որոնք լոյս են տեսել Վիեննայի «Հանդէս Ամսօրեայի» 1895 և 1896 թուականների համարներում (1895 թ., էջ 20—23, 58—61, 110—113, 1896 թ., էջ 129.

---

1) Եղիշէի «Վարդանանց Պատմութեան» մասին եղած քննադատութիւնների վերաբերեալ մեր ստորեւ գրածը նախապէս տպագրուել է ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի տեղեկագիրը 1943 թ., No. 3, էջ 63—98 և Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի տեղեկագիրը 1944 թ., No. 1—2, էջ 98—103:

168, 197 և 302)։ Գր. Տ. Պօղոսեանը չեչտում է, որ «ծայրայեղութեան հասած տարբերութիւններ» կան Եղիշէի և Ղազար Փարպեցու մէջ, և այդ տարբերութիւնների ու երկու հեղինակների փոխյարաբերութիւնների հարցը պարզելու համար քննարկում է 3 հիմնական խնդիր. 1) երկու հեղինակների մօտ պահուած նախնարարական ցանկերը. 2) Բիւզանդիոն ուղարկուած պատգամաւորութեան հարցը և 3) Հոռոմներին ուղարկուած օգնութեան մասին եղած տեղեկութիւնները։

Առաջին հարցի վերաբերեալ մանրամասն քննութեան առնելով երկու հեղինակների մէջ բերած բոլոր ցանկերը՝ Գր. Տ. Պօղոսեանը գալիս է հետեւեալ եզրակացութիւններին.— ա) չորս ընդհանուր ցանկերը և յատկական ցանկերը տարբեր հեղինակների գործեր են. բ) Եղիշէի յատկական ցանկերի հեղինակը V դարի պատմութեան անտեղեակ անձ է և պատմական ֆակտերը յեղաշրջող պատմիչ է, որովհետեւ նրա յատկական ցանկերը ո՛չ միայն ընդհանուր ցանկերից են տարբերւում, այլ և նրանք իրար մէջ անգամ աւագութեան կարգի միօրինակութիւն չունեին. գ) Ղազարի յատկական ցանկերի հեղինակը համեմատաբար աւելի ծանօթ է V դարին. նա ինքն իրեն հետեւ երեք յատկական ցանկերում համաձայնելուց յետոյ՝ 6-րդ ցանկով համաձայն է նաեւ չորս ընդհանուր ցանկերին։ «Առաջին եզրակացութիւնից հետեւում է,— չարունակում է Գր. Տ. Պօղոսեանը,— որ մեր ձեռքը հասած Եղիշեի եւ Ղազարի աշուցներով պատմութիւնների հեղինակներն իրենց ձեռքին գրաւոր աղբիւր են ունեցել, որից դուրս են գրել 4 ընդհանուր ցանկը, իբրեւ մի երորդ հեղինակի գործ։ Վերջին երկու եզրակացութիւնից հետեւում է, նախ, որ յատկական ցանկերի հեղինակները 451 թուի պատերազմին ժամանակակից անձերի գործեր չեն, այլ ուշ ժամանակի պատմիչներ են նրանց հեղինակները, և երկրորդ, որ 451-ին ժամանակով աւելի մօտ է Ղազարի յատկական ցանկերի հեղինակը, քան Եղիշէի»։ Ընդհանուր եզրակացութիւնն այն է, որ «4 ընդհանուր ցանկը մէկն է այն հետքերից, որոնք մնացել են Եղիշէի և Ղազարի անունով մեզ հասած պատմութիւնների մէջ նրանց գրաւոր աղբիւրներից»։

Բիւզանդիոն ուղարկուած դեսպանութեան վերաբերեալ մատնանշելով, որ Եղիշէն մէկ պատգամաւորի անուն է տալիս, իսկ Ղազարը երեք, Դր. Տ. Պօղոսեանը բերում է Եղիշէից «Եւ իբրեւ յանդիման եղեն մեծի թագաւորին» յորդորի պրուած հատուածը եւ համեմատելով այն Ղազարի մէջ պահուած «երթեալք յանդիման եղեն թագաւորին Թէոդոսի» նման հատուածի հետ, հետեւեալ երկու ենթադրութիւնն է անում. կամ երկու պատմիչներից մէկը միւսին աղբիւր է ծառայել կամ երկու պատմիչներն էլ մի երրորդ յիշատակարանից են արտագրել այս հատուածը, նոյն եղրակացութեան գալով նաեւ Յ-րդ հարցի, Ազուանների օգնութեան գնալու հարցի վերաբերեալ, Դր. Տ. Պօղոսեանը պնդում է, թէ Եղիշէն չի կարող Ղազարի աղբիւրը լինել, որովհետեւ նա յայտնապէս աղաւաղուած է եւ հակասութիւններ է պարունակում, հակառակ դէպքում Ղազարն էլ պէտք է նոյն հակասութիւններն ունենար. ուրեմն հարկաւոր է ընդունել, որ Եղիշէն իր ձեռքին ունեցել է կամ Ղազարի պատմութիւնը, կամ Ղազարի ձեռքին եւս եղած մի ուրիշ աղբիւր, որից եւ արտագրելով մասամբ անփոփոխ՝ համաձայնում է Ղազարի հետ մասամբ էլ փոփոխելով եւ աղաւաղելով՝ հակասութեան մէջ է ընկնում թէ՛ իրեն եւ թէ Ղազարի հետ։

Մենք այլեւս կանգ չենք առնի Դր. Տ. Պօղոսեանի յօդուածներում արծարծուած այն խնդիրների վրայ, թէ Ղազար Փարպեցին աւելի լայն հայեացք, բուն քաղաքական տեսակէտ ունեցող եւ աւելի արժանահաւատ պատմիչ է, քան թէ Եղիշէն, որը մխակոզմանիք է եւ խնդրին կրօնական մեկնութիւնն է տալիս։ Այս հարցում քանասէրների մէջ ընդհանուր համաձայնութիւն է տիրում եւ վիճելու առիթ չկայ, թէեւ պէտք է այն էլ ասել, որ Դր. Տ. Պօղոսեանը չափազանցացնում է մոգերի դերը Եղիշէի մէջ իբրեւ «ներդործող ուժի եւ Յազկերտին հրահանգողների, մինչդեռ Ղազարի մէջ Մինրներսեհն է կրօնական հալածանք սկսելու պատճառը», Եղիշէի մէջ էլ Մինրներսեհն է համարւում այդ քաղաքականութիւնը հրահրողը (տե՛ս երրորդ յեղանակի վերջը՝ «Եւ ո՛չ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թագաւորն հրամանի բերանոյ նորա (Մինրներսեհի)

անսայր, որոյ եւ ձախող իրացն իսկ բուռն հարեալ եր ցորա», ինչպէս նաեւ VIII յեղանակի սկզբում՝ «իսկ մեծ հոգւոյապետն յոյժ էր յերկիւղի, քանզի ինքն էր պատճառ ամենայն չարեացն, որ գործեցան». այլև VIII եղանակի վերջում Մինրնեռահի մասին ասւում է, թէ՝ «ինքն իսկ յանձն իւր կրթէր զաւէր աշխարհին Հայոց», և մոգերը ներկայանում են միայն իբրեւ նրա բերանը, որոնք աւելը չեն փախցնում ամէն անգամ այս հարցն արծարծելու (Համմ. VIII յեղանակի սկիզբը, որտեղ Մինրնեռահի համար ասւում է՝ «Սկսաւ բանս ի բերանդնել մոգպետին և մոգացն, որք մատուցեալ յանդիման ասէին զթագաւորն»),

Հակասութիւնները ու տարբերութիւնները, ինչպէս և նմանութիւնները, Եղիշէի և Ղազար Փարպեցու մէջ ճիշտ են մատնանշուած Գր. Տ. Պօղոսեանի և մեր մի քանի գիտաշխատողների կողմից, Սակայն խնդիրն այն է, թէ ինչպէս պէտք է բացատրել դրանք և արդեօք դրանք ապացո՞յց են մէկի ունեցած կախման մեւսից, Ամենակարեւորն այստեղ ընդհանուր և յատկական տանկերի խնդիրն է, Մեզ թւում է, որ ճիշտ դիտելով երեոյթները՝ Գր. Տ. Պօղոսեանը սխալ բացատրութիւն է տուել նրան, Փարպեցուն աւելի մօտ համարելով 451 թուի անցքերին, քան Եղիշէին, Փարպեցու տանկերի աւելի կանոնաւոր, իրար հետ համաձայնուած լինելու պատճառն այն է, որ նա գրել է տասնեակ տարիներ անցնելուց յետոյ, հանգամանաբար աւելի խաղաղ ժամանակ. հնարաւորութիւն է ունեցել օգտուելու աղբիւրներից, ձեռքին եղել են իրեւ այդպիսի տանկեր, որոնք նա համեմատել է իրար հետ և ճշտել, հակասութիւնները վերացրել, ինչպէս որ նրա պարտականութիւնն էր իբրեւ պատմչի. իսկ Եղիշէն, ինչպէս վերեւն ասացինք, զուտ պատմութիւն չի գրել, այլ մի դիւցազներգութիւն. նրա համար նշանակութիւն չեն ունեցել տանկերի պատասխանութեան կարգն ու ճշտութիւնը, նրա նպատակի համար բաւական էր ընդունել միայն, թէ ո՛վքեր են եղել, օրինակ, առաքելական հաւատարիմները և ո՛վքեր ուրացողներն ու նրանց կողմնակիցները, և որտեղ նա իր ձեռքին պատրաստի տանկ չի ունեցել, ինքն է ջիղուխեամբ ստեղծել այդ տանկը՝ առանց պահել

գասաւորութեան և հակասութիւնների վրայ ուշք դարձնելու։ Մանաւանդ որ այդ ցանկերից մէկը կամ միւսը, ինչպէս նաեւ եզակի և յոգնակի արտայայտութիւնները, կարող են աղաւաղուած կամ յետոյ մտած լինել Եղիշէի սկզբնագիր բնագրի մէջ։ Չէ՞ որ Գր. Տ. Պօղոսեանն ինքն էլ դնում է Եղիշէի ականատես պատմագիր լինելու հարցը և այդ ականատեսութեան հանգամանքը չի վստահանում ժխտելու, ինչպէս արել են ուրիշ բանասէրներ (օրինակ՝ Կիւլեսէրեան)։ Խօսելով այն մասին, թէ ինչպէս պէտք է բացատրել Եղիշէի մի քանի անգամ իրեն ականատես լինելը չեշտելը, Գր. Տ. Պօղոսեանը գրում է. «Մենք ոչ մի հիմք չունենք ասելու, թէ այդ խօսքերը, որոնք ականատես հեղինակի ժամանակին են վերաբերում, կեղծ են, ընդհակառակը, մեզ յայտնի է, որ պատերազմից յետոյ Պարսկաստանի խորքերում և 442 թուին Քուշանաց արշաւանքի ժամանակ կազմուած բանակի մէջ կային քահանաներ, որոնցից մէկի մասին յիշւում է, որ «համառօտութիւն» է գրել. դա Աբրահամ Խոստովանողն է. մեզ յայտնի է նոյնպէս, որ տմն Մովսէս Սիւնեաց եպիսկոպոս գրել է V դարի պատմական դէպքերի մասին «Ճառեր». յայտնի են նաեւ V դարի մասին մեզ հասած զանազան յիշատակարաններ, թէ արդեօք յետին դարերի գրողներից մէ՞կը, Եղիշէի անուան տակ ծածկուած, այս յիշատակարաններից է օգտուել և ուղղակի դուրս գրել նրանց հեղինակի ականատես լինելու մասին տեղեկութիւնները,— այդ որոշելու համար միջոցները պակասում են... Այսպէս, ուրեմն, երբեք հակառակ չէ և ընդհակառակն պատմական տեղեկութիւններին համապատասխանում են ականատես լինելու մասին վկայութիւնները», եւ սրանից յետոյ Գր. Տ. Պօղոսեանը հետեւեալ ենթադրութիւնն է անում. «Մենք կարծում ենք, որ Եղիշէի անունով պատմութիւնը, ինչ վիճակի մէջ որ նա մեզ հասել է, հիմնուած է եղիշէի իսկական յիշատակարանի վրայ, որը յետին դարերում փոփոխութեան ենթարկուելով՝ այլայլուել է և մի նոր գրութեան, մեզ հասած պատմութեան, հիմք է ծառայել»։ «Այս ենթադրութեան հիմքն է հէնց այն, որ մեզ հասած պատմութիւնը վերագրուած է պատերազմին մասնակից Եղիշէին և նրա անունով է մեզ հասել»։ «... Առանց

եղիշէի մի որևէ պատմական գրաւոր վաստակի գոյութեան դժուար թէ բոլորովին նոր գրութիւն վերագրուէր նրան» և.ն.

Եթէ Գր. Տ. Պօղոսեանն ընդունում է, այսպիսով եղիշէի սկզբնագիր յիշատակարանի գոյութիւն, էլ ի՞նչ հարկ կայ ենթադրելու, որ յետին դարերի գրողներից մէկն է դուրս գրել հեղինակի ականատես լինելու մասին եղած տեղեկութիւնները, քանի որ դրանք հէնց եղիշէի իրեն սկզբնագիր յիշատակարանինը կարող են լինել։ Սրանով իր բացատրութիւնն է գըտնում նաեւ աղաւաղումների և հակասութիւնների հարցը, որոնք կարող են սկզբնագիր եղիշէի մէջ մտցուած լինել հետագայ խմբագիրների կողմից, ուրեմն և նրանց հիման վրայ խնդիրը այնպէս պատկերացնել, թէ եղիշէն իր ձեռքին ունեցել է Ղազարի Պատմութիւնը, երբեք չի կարելի։ Այնուհետեւ հիմնաւոր չէ նաեւ Գր. Տ Պօղոսեանի այն պնդումը, թէ «եղիշէն չի կարող Ղազարի աղբիւրը լինել, որովհետեւ նա յայտնապէս աղաւաղուած է և հակասութիւններ է պարունակում, հակառակ դէպքում պէտք է Ղազարն էլ նոյն հակասութիւններն ունենար»։ Մի՞թէ Ղազարը չէր կարող՝ նկատելով եղիշէի մէջ եղած հակասութիւններն ու աղաւաղումները և ուրիշ աղբիւրներ էլ ունենալով իր ձեռքում՝ ուղղել դրանք։

Եղիշէի ականատես պատմագիր լինելու հարցը, ինչպէս երեւում է, շատ է զբաղեցրել Գր. Տ. Պօղոսեանին. նա մի անգամ էլ է անդրադառնում դրան 1906 թուին (տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1906, էջ 219—221» «Եղիշէի քննական ուսումնասիրութեան» մի հատուածի առիթով») և գրում է հետեւեալը. «Առաջին անգամ մեր յօդուածում... հարց յարուցանելով եղիշէի մէջ հանդիպող ականատեսի խօսքերի մասին, այն ժամանակ ենթադրել ենք, որ այդ խօսքերն աղբիւր յիշատակարաններից են մնացել և անպատճառ կեղծիք կարող են չլինել։ Նոյնն այժմ էլ կրկնում ենք նորագոյն հիմքերով և պնդում ենք, որ նոքա ո՛չ միայն կեղծիք չեն, այլ ականատեսի խօսքեր են։ Այդպիսի յիշատակարաններ կային մինչեւ Թոմաեն, այն է՝ Խոսրովանողի «համառօտութիւնը», Եղիշեի նախատիպը, Մովսէս Սիւնեաց եպիսկոպոսի ճառերը և այլն։ Արդարեւ դիւրին չէ միանգամայն ապացուցանել այդ ենթադրութեան իրաւացի լինելը, այն

ցիչատակարանների կորստեան պատճառով, բայց դժուարութիւնը հերթ ին չէ միշտ. ընդհակառակն, անարժէք է ականատեսի խօսքերն էլ կեղծիք ընդունել հէնց նրա համար, որ դիւրութեամբ պատգուցուած է եղիշէի յետին խմբագրութիւնը լինելը. նամանաւանդ որ գիտենք հաստատ, Աբրահամն իրրեւ ականատես դրել է վարդանանց գործերը. Պէտք է չմոռանալ, որ բուն ինքնագլուխ եղիշէի ձեռագրութեան ուղղակի եւ պէտք է լինի որոշել այն թարգմանչի հատուածները, որոնք յետին խմբագրութեան մէջ մնում են ճախաւիպ աղբիւր յիշատակարաններից»: (Ընդգծումները մերն են, — Տ. — Մ.).

Մեզ թւում է, որ Գր. Տ. Պօղոսեանն այստեղ արդէն միանգամայն ճիշտ հողի վրայ է կանգնել, ինչպէս մեր գրականութեան բոլոր հնագոյն երկերը, այնպէս էլ եղիշէի նախատիպը կամ սկզբնագիրը հետագայում անչուչտ խմբագրութեան է ենթարկուել և բանասիրական լուրջ քննադատութեան նպատակը պէտք է լինի — մի փոքր ձեւափոխում ենք Գր. Տ Պօղոսեանի վերջին, մեր կողմից ընդգծուած նախադասութիւնը — որոշել այն փոփոխութիւններն ու յաւելուածները, որ հետագայ խմբագրութիւնը կամ խմբագրութիւնները մտցրել են սկզբնական կամ նախատիպ բնագրի մէջ։ Բացի այդ, այստեղ պէտք է աւելացնել նաեւ այն, որ քանի որ եղիշէն, դոնէ իր սկզբնագիր բնագրի մէջ, իրեն ականատես հեղինակ է յայտարարում, այդ ականատեսութիւնը հիմնաւոր փաստերով ժխտելու պարտականութիւնն այն բանասէրների վրայ է ընկնում, որոնք այն չեն ընդունում (ինչպէս Կիւլեսէրեանը և ուրիշները). սրխալ կը լինի, ուշեմն, եղիշէի վկայութիւնը ճիշդ ընդունողներից պահանջել, որ նրա՛նք ապացուցեն այդ վկայութեան իրաւացի լինելը, կասկած յայտնողը ինքը պարտաւոր է հիմնաւորել իր կասկածը. իսկ մինչեւ այժմ դեռ ոչ մի բանասէր չի կարողացել փոքր ի շատէ լուրջ, ծանրակշիռ փաստերով հերքել եղիշէի ականատես պատմագիր լինելու հանգամանքը։

Գր. Տ. Պօղոսեանի առաջին յօդուածաշարքը դեռ չէր վերջացել, երբ այդ յօդուածների ազդեցութեամբ հանդէս եկաւ Գր. Նալպանեանը (տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1895, էջ 113—116), որն անմիջապէս յետ վերադրեց իր արտայայտած նախկին այն

կարծիքը, թէ մեր այժմեան եղիշէն աղբիւր է ծառայել Ղազար Փարպեցու համար (տե՛ս Գր. Խալաթեան, «Ղազար Փարպեցի և գործք նորին», էջ 117—120)։ Այժմ նա այն կարծիքն է յայտնում, թէ «եղիշէի բնագիրն առաջ չատ տարբեր էր այն օրինակից, որ այսօր մեր առաջ են դնում տպագրութիւնները։ Վերջնիս մէջ նկատւում են յետսամուտ ընդարձակ ընդմիջարկութիւններ (Interpolation)»։ Խալաթեանի կարծիքով էլ՝ եղիշէն ունեցել է նախնական բնագիր, որից գուցէ օգտուել է Փարպեցին և որը ծանօթ էր նաև Սեբէոսի։ Այդ նախնական բնագիրը յետոյ ենթարկուել է փոփոխութիւնների և նորից մշակուել՝ ըստ երեւոյթին ոչ վաղ քան VII դարը։

բ. Գր. Տ. Պօղոսեանից անկախ՝ 1894—1896 թուականներին գրել և նախ «Հանդէս Ամսօրեա»յի 1905—1907 թուականների համարներում և ապա առանձին գրքով տպագրել է իր ուսումնասիրութիւնը Բաբգէն Կիւլեսէրեանը («Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն։ Ազգային Մատենադարան Ծէ. Վիեննա, 1909, էջ ԻԷ+461)։ Սա մի ընդարձակ աշխատութիւն է, որի մէջ մանրամասնաբար խօսւում է եղիշէի ձեռագրերի, հրատարակութիւնների, օտար լեզուներով թարգմանութիւնների և ուսումնասիրութիւնների, հայերէն աշխարհաբար թարգմանութիւնների և ուսումնասիրութիւնների, եղիշէի կենսագրութեան, «Պատմութեան» բովանդակութեան, գրութեան ժամանակի, աղբիւրների (Աբրահամ Խոսրովանող, Փիլոնի հայերէն թարգմանութիւնը ևայլն), Ղազար Փարպեցու հետ ունեցած առնչութեան, լեզուի մասին։ Այս բոլորը զետեղուած է գրքի առաջին մասում։ Երկրորդ մասը Սիւնեաց, Մամիկոնեանց նախարարութիւնների, Վասակի և Վարդանի, Վարդանանց պատերազմի մասին է, իսկ երրորդ մասը՝ Սասանեանների, մոգական կրօնի, սրա ու քրիստոնէութեան յարաբերութեան, չորրորդ դարի Հայաստանի քրիստոնէութեան մասին։ Այս երրորդ մասից յատկացուած 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխները Կիւլեսէրեանը յետոյ հրատարակել է առանձին գրքոյկով («Հայաստանեայց եկեղեցին հինգերորդ դարու մէջ», Կ Պոլիս, 1912, ժ6+97)։ Այս գրքոյկում առանձնապէս կարեւոր է եղի-

չէի «վարդանանց Պատմութեան վրայ եղած այլ և այլ ուսումնասիրութիւնների ցանկը (էջ ԺԱ – ԺԵ)։

Կիւլեսէրեանի ընդարձակ ուսումնասիրութեան նպատակն է ապացուցել, որ Եղիշէն օգտուել է Ղազար Փարպեցուց և նա, ուրեմն, ժամանակակից և ականատես պատմագիր չէ. երբ նա իրեն ժամանակակից և ականատես պատմագիր լինելը չատ անգամներ չեշտում է, այդ իբր միայն ընթերցողներին մոլորեցնելու և իր անձը թագցնելու համար յօրինուած կեղծիք է։ Սակայն այս կասկածը, Եղիշէի ականատես պատմագիր լինելու մասին, Կիւլեսէրեանը ոչինչով չի հիմնաւորում, չի բացատրում, օրինակ, թէ ինչ պատճառով և ինչպիսի նկատառումներից դրդուած է Եղիշէն կեղծիք կատարում և իր անձը թագցնում, այլ ասում է լոկ հետեւեալը. «Անմեղն նուրբ՝ բայց իրական կասկածի մը չարժառիթն՝ նոյն ինքն պատմագրին ականատեսի չեշտերն են։ Ի՞նչ հարկ կայ՝ գրեթէ ամէն յեղանակի մէջ թէ՛ ուղղակի և թէ անուղղակի կերպով մը չեշտել, թէ ինքն ականատես է իր պատմագրած դէպքերուն։ Կարծես դիմացը կասկածող մը կայ, զոր աներկմիտ ընելու ամէն ճիդ կը թափէ։ Փոխանակ այնչափ կրկնութիւններու՝ եթէ պատմագիրն անգամ մը իր անունը գրոշմէր իր գործին որևիցէ մի անկիւնը, բաւական էր ամէն կասկած և ամէն ենթադրութիւն հերքելու»։ Ականատեսութեան խնդիրն այս ձեւով լուծելը, ի հարկէ, լուրջ բան չէ և այդպիսի վաստարկումները համոզիչ համարել չի կարելի։ Մի՞թէ թոյլատրելի է ականատես որեէ գրողի անձը կասկածի ենթարկել միմիայն նրա համար, որ նա մի քանի անգամ զանազան առիթներով կրկնում է իր ականատեսութեան հանգամանքը։ Ի՞նչ վատահութիւն, թէ եթէ Եղիշէն իր անունը դրոշմած լինէր իր գրքի «որևիցէ մի անկիւնը», հէնց այդ հանգամանքը մի այլ բանասէր «անհերքելի» ապացոյց չպիտի համարէր նրա կատարած կեղծիքի. չէ՞ որ մենք այդպիսի մատենագիրներ էլ ունենք, որոնց անունը թէեւ դրոշմուած է նրանց գրուածքների ճակատին, բայց նրանք, այնուամենայնիւ, նոյնպիսի կասկածների առարկայ են դարձել։ Վերջապէս, կրկնութիւններ, երբեմն բոլորովին աւելորդ կրկնութիւններ, կարելի է մատնանշել չատ գրողների գրուածքներում, նոյնիսկ

Եղիշէի քննադատների գրուածքներում, բայց այդտեղից եզրակացութիւն անել հեղինակի անձի կամ աստածների վաւերականութեան մասին, մեր կարծիքով, միանգամայն անտրամաբանական է ու անթոյլատրելի։

Այնուհետեւ Կիւլեսէրեանը ցոյց է տալիս, որ Եղիշէն օգտուել է Մարութաս Մայփերկաթցու (=Նփրկերտ, Մարտիրոպոլիս կամ Մարտիրոսաց քաղաք) Արեւելեան վկաների պատմութեան այն հայերէն թարգմանութիւնից, որ կատարել է Աբրահամ Խոստովանողը և աւելացնում է, որ այդ պէտք է տեղի ունեցած լինի «Թարգմանչին աքսորէ վերադառնալէն յետոյ։ Աքսորէն դարձը կ'իյնայ 464ին սկիզբը» (էջ 151)։ Կիւլեսէրեանն ընդունում է, որ այդ գրուածքը «Աբրահամ Աստրեստանի մէջ կը թարգմանէ աստրերէնէ». ուրեմն թարգմանութիւնը պէտք է եղած լինի 464ից առաջ, աւելի որոշ՝ 452-ի և 464-ի միջեւ, հաւանօրէն, նկատի ունենալով դրա համար պահանջուղ աւելի երիտասարդական հասակը և աշխոյժը, չուրջ 455—456-ին։ Այս այսպէս լինելով՝ մենք այնուհետեւ ոչ մի հիմք չենք տեսնում Կիւլեսէրեանի նման ենթադրելու, որ Աբրահամի թարգմանութիւնը Հայաստան հասած և, օրինակ, Եղիշէի ձեռքն ընկած պէտք է լինի անպատճառ թարգմանիչի աքսորից վերադառնալուց յետոյ, այն է՝ 464 թուականի սկիզբին։ Գիրքն անշուշտ թարգմանուած էր նոյնպիսի հալածանքների ու նեղութեան մէջ գտնուող հայերին հոգեւոր մխիթարութիւն մատակարարելու համար և ամենայն հաւանականութեամբ թարգմանութիւնից անմիջապէս յետոյ հասցուել է Հայաստան և լայնօրէն ծանօթացուել հայ գրական շրջաններին։ Այնպէս որ Եղիշէի նրանից օգտուած լինելը «վկայաբանական աստուածներու և ձեւերու փոխառութիւններու» մէջ ոչ մի կերպով չի կարող փաստ ծառայել Եղիշէի Պատմութիւնը V դարի վերջերը կամ VI դարի սկիզբները տանելու համար։

Ապա Կիւլեսէրեանն արծարծում է Փիլոնի երկերի հայերէն թարգմանութեան հետ Եղիշէի ունեցած առնչութեան հարցը։ Փիլոնի երկերի հայերէն թարգմանութիւնը առանց հաստատուն հիմքերի կատարուած համարելով V դարի վերջերին — VI դարի սկիզբներին, Կիւլեսէրեանը մի քանի օրինակներ է բե-

քում՝ ապացուցելու համար, թե Եղիշէն օգտուել է այդ թարգմանութիւնից և, ուրեմն, իր գիրքը գրել է V դարի վերջին կամ, աւելի ճիշտ, VI դարի սկիզբին։ Սակայն բերուած օրինակներն ամենևին չեն ապացուցում, թե Եղիշէն օգտուել է Փիլոնի հայերէն թարգմանութիւնից, որովհետև այդ օրինակները ոչ մի տեղ բառացի նմանութիւն չունին, իսկ եթէ հարցն այն է, թե Եղիշէն մտքեր ու ոճեր է ազատօրէն փոխ առել Փիլոնից, ապա այդ կարող էր անել նա հէնց բնագրին ծանօթ լինելով և ինքն անձամբ հայացնելով Փիլոնի դեռ հայերէն չթարգմանուած մտքերը՝ առանց որևէ հայերէն թարգմանութիւն ունենալու իր ձեռքին, ինչպէս մենք էլ այժմ այդպիսի բան կատարում ենք զանազան հեղինակների ու նրանց գործերի վերաբերմամբ։ Օրինակ, ի՞նչ կարող են ապացուցել այսպիսի նմանութիւնները, որոնք բերել է Կիւլեսէրեան իբրև ապացուցական նմանութիւններ.

Փիլոն	Եղիշէ
«Ջուգութիւն արդարութիւն ծնաւ... Անզոյգն աղբիւր է չարեաց»:	«Ջուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց»:
«Ինքն իւր է տեղի և ինքն ինքեամբ լի և բաւական, աստուած» և այլն:	«Ո՛չ սկիզբն առեալ յումեքէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնենաւոր, ո՛չ ի տեղի ուրեք, այլ ինքն ինքեան տեղի»:
Ֆանզի և կանայք ըստ սովորութեան լսեն ընդ նոսա և նախանձին զնոյն նախանձն, և զնոյն համ յիմնեաց բերեն»:	«Ամենեքեան (հայ կանայք) մխահամուռ զերկնաւոր նախանձն բերելով՝ ոչինչ ընդոյաս երեւեցաւ յայնցանէ, որ ոչ նաշակեցին զաքխարն»:
«Ու սպաս պաշտաման կրեն ոչ ի ծառայից և յաղախնաց»:	«Զի թէպէտեւ ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երեւէր ի նոցանէ՝ թէ ո՛ր տիկինն իցէ կամ ո՛ր նաժիշտն»... «Ոչ ոք ումեք չուր ի ձեռս արկանէր և ո՛չ կրտսերք աւագայ դաստառակս մատուցանէին»:

Այսպիսի օրինակներն աւելի չուտ ապացուցում են, որ Եղիշէն ինքն է աղատօրէն թարգմանում ու ընդարձակում Փիլոնից վերցրած մտքերը. քան թէ որ նրա առաջ VI դարի սկզբին կատարուած հայերէն թարգմանութիւն է եղել։

Անցնենք Վասար Փարպեցու և Եղիշէի առնչութեան հարցին ըստ Կիւլեսէրեանի, Նրա համար պարզ է, որ «ամէն պարագայի մէջ Վարդանանց անանուն պատմագիրը չի կրնար ժամանակագրօրէն Ղազարէն նախադասուիլ. Ամենէն պարզ՝ բայց հաստատուն ապացոյց կը համարիմ նոյն ինքն Փարպեցին: Այս պատմագիրը Վարդանանց և Վահանեանց մանրամասն պատմութիւնը գրելով (այսինքն՝ Ե. դարու Մամիկոնեանց) երբեք ակնարկութիւն մըն ալ չ'ըներ թէ իւր գրածներն Վարդանանց նկատմամբ՝ ուրիշ մը արդէն գրած ըլլայ նախապէս... Եղիշէ կամ ուրիշ մը՝ եթէ գոյութիւն ունեցած ըլլար Փարպեցիէն առաջ՝ իբր պատմագիր Մամիկոնեանց, Փարպեցին անպատճառ զայն պիտի ունենար իւր ձեռքն և պիտի յիշէր՝ ինչպէս որ յիշած է Ագաթանգեղոսն ու Բուզանդը»...: «Իրաւ է որ Փարպեցին չէր կրնար Վարդանանց պատմութիւնն իր ձեռքն ունենալ, բայց սա կրնար իր ձեռքն ունենալ Փարպեցու պատմութիւնը... Անուրանալի է, որ շատ ընդարձակ նմանութիւններ կան երկու պատմութիւններու մէջ. նմանապէս կան կարեւոր տարբերութիւններ, որոնք մատենագրական այսպիսի խնդիրներու մէջ քննադատը կը մխեցնեն երրորդ աղբիւրի մը հաւանականութեամբ լուծելու կնճիռը» (էջ 177—179). Սակայն Կիւլեսէրեանը երրորդ աղբիւրն անհաւանական է համարում և գտնում է, որ կարելի է առանց երրորդ աղբիւր ենթադրելու էլ եզրացութեան յանգել:

Այնուհետեւ Կիւլեսէրեանը, այդպիսի եզրակացութեան յանգելու համար, մատնանշում է նմանութեան բազմաթիւ էջեր Փարպեցու և Եղիշէի մէջ որոնք, սակայն, ոչինչ չեն ապացուցում, որովհետեւ նրանց երկուսի ո՛չ միայն երրորդ աղբիւր ունենալու, այլ և անկախութեան դէպքում էլ ուրիշ կերպ լինել չէր կարող, քանի որ նրանք գրուած են միեւնոյն նիւթի մասին և ժամանակով էլ իրարից շատ հեռու չեն, Այստեղ հարկ ենք համարում նաեւ չեշտել. որ զանազան մանր-մունր տարբերութիւնները նոյնպէս ոչինչ ապացուցել չեն կարող, որովհետեւ մենք թէ՛ առօրեայ կեանքից և թէ պատմութիւնից շատ դէպքեր գիտենք, երբ նոյնիսկ դէպքին ականատես մարդիկ միեւնոյն իրողութիւնը տարբեր ձեւով են նկարագրում՝

մօտենալով տարբեր կողմերից և ուշադրութիւն դարձնելով եբեւոյթի տարբեր կողմերի վրայ։

Բայց մենք մի կողմ ենք թողնում Կիւլեսէրեանի «անպոռճառ զայն պիտի ունենար իւր ձեռքին» կամ «սա կրնար ի՛ւ ձեռքն ունենալ Փարպեցու պատմութիւնը» թէական եզրակացութիւնները, որոնց հաւանականութիւնը ամենեւին ոչնչով չի գերազանցում նրանց անհաւանականութիւնից և անցնում ենք նրա բերած նմանութիւնների հարցին։ Կիւլեսէրեանն ասում է, որ երկու պատմագիրների նմանութիւնները միօրինակ չեն. Եղիշէն փոփոխում է Ղազարի մօտ եղածը, «Այն հաւատացեալները, որոնք ընդարձակ են Փարպեցու քով, զանոնք կը սեղմէ Վարդանանց պատմագիրը և փոխադարձաբար...», հետեւում է 12 օրինակ, որոնք սակայն բնաւ ապացուցականութիւն չունին։ Մեր ասածը ակնյայտնի կացուցանելու համար դնենք այստեղ դրանցից մի քանիսը.

Փարպեցի	Եղիշէ
«Աստուածք զոգւոցն գիւտս չերմագոյնս ևս գրեն և կամին տեսանել... (էջ 117)... և առաւել պարտիմք և ընդ գիւտ ամենեցուն հոգւոց հոգալ և գտանել և եթէ յանկարծ ծուլացեալ գտանիմք յայսպիսի մեծ հոգոցութենէ, տեղեկացեալք յօրինակ մերոց թէ ծանրը պատուհաս կրելոց եմք յաստուածոցն» (էջ 122):	«Մանաւանդ զի և առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ»:

Այս պարզ նախադասութիւնն ասելու համար կարիք կա՞ր, որ Եղիշէն Փարպեցու գիրքն ունենար աչքի առաջ և նրա երկու իրարից բաւական հեռու ընկած էջերից քաղէր այդ միտքը մարդկանց Աստծու առաջ պատասխանատու լինելու մասին։ Կարծում ենք՝ ո՛չ։ Մանաւանդ որ Աստուածաշնչին քաջ ծանօթ Եղիշէի մտքում այդ առիթով կարող էին ուրուանչուել Մատթ. ԺԲ. 36. Հռոմ. ԺԴ. 12 և Եփես. ԺԴ. 17, որտեղ, թէև այլ կապակցութեամբ ու իմաստով, բայց խօսքը դարձեալ Աստծու առաջ «համար» տալու մասին է։ Պէտք է նկատի ունենալ նաև, որ Եղիշէն Աստծու առաջ «համար» տալու մասին խօսում է նաեւ VIII յեղանակում. «Այլ է՝ որ համարս խնդրէ ի մէնջն և

վան արտաքնոց և վան ներքնոց» կամ «Տալոց հատուցանելոց ես վրէժ թագաւորաւն քով յանկաչառ աստենին Աստուծոյ» (Եղիշէ, Թիֆլիս 1913, էջ 221—226)։

էջ 210—211. «եւ արին վարդան տէրն Մամիկոնէից բաժանեալ զիւր գունդն յերիս առաջս»։

«Իսկ արին վարդան յառաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր և միսրան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր այսպէս»։

էջ 214. «Իսկ ի զօրացն Պարսից, որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ, զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք ի զօրագլխացն Պարսից, երկք հազար հինգ հարիւր քառասուն և չորս այր»։

«Իսկ ի կողմանէ ուրացելոցն անկանէրը յայնմ աւուր երկք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր»։

էջ 304. «Տէ՛ր Յիսուս, ընկալ զոգիս մեր»։

«Տէ՛ր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն և խառնեա զմեզ ի գունդս սրբոց քոց»։

Այսքանը բաւական ենք համարում, մենք ընտրեցինք, տեղը խնայելու համար, ամենակարճ հատուածները. բայց միւսներն էլ նոյն բնոյթի են, կարելի է միայն զարմանալ, որ այսպիսի ոչինչ չափազ նմանութիւններով ուզում են ապացուցած համարել Եղիշէի կախումը Ղազարից, մինչդեռ այդ օրինակների հիման վրայ կարելի է նոյնպիսի, եթէ ոչ աւելի մեծ, իրաւունքով ասել, թէ Ղազարն է արտագրել Եղիշէից։ Պարզ չէ՞ միթէ, որ Պարսիկների կողմից ընկածների թուի առթիւ պատած «զոր ստուգիւ համարեալը» յետոյ աւելացրած բացատրութիւն է մի հեղինակի կողմից, որ իր առջեւ ունեցել է միայն թիւը։ Ապշեցուցիչ է մանաւանդ «Տէր Յիսուս, ընկալ զոգիս մեր»ը մէջ բերելը, որը Յիսուսի մահուան ժամին արտասանած «Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» բառերի ձեւափոխութիւնն է (Ղուկ. ԻԳ. 46), որը ասել է նաեւ Ստեփաննոս Նախավկան իր մահուան ժամին,— «Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ» (Գործք Առաք. է. 59), ասել է Սահակ Պարթեւն իր մահուան րոպէին (տե՛ս Կորիւն, հրատ. Մ. Աբեղեանի, էջ 88), և որը կարելի է գտնել նաեւ վկայաբանական գրուածքներում

իրեն նահատակուածներուն վերջին խօսքը (տե՛ս Վկայք Արեւելից, էջմիածին, 1921, էջ 164, երանելի Եղանդուխտի խօսքերը՝ «Դու, Տէր, ընկալ զհոգի իմ»։

Բայց սրանով չբաւարարուելով՝ կիւլեոէրեանը բերում է «փոփոխօրէն ընդօրինակուած նամանութիւններու ուրիշ խումբ մըն ալ, աւելի հետաքրքրականը»։ Մենք հնարաւորութիւն չունենք և միտք էլ չկայ այդ բոլորը մէջ բերելու, բայց մի երկուսի վրայ այնուամենայնիւ անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել։

Փարպեցի

1. «Արդ՝ քանի աշխարհք են, որում դուք իշխէք առտուածարար»... և այլն։

2. «Այսօրիկ ամենեքեան եպիսկոպոսք և ի պատուական երիցանց սուրբն Ղեւոնդ, և Խորէն ի Մորենոյ, և Դաւիթ, և այլ պատուական երիցսունք և այլ վանականք բազումք... այսօրիկ ամենեքեան աւագ տանուտեարք, հանդերձ աւագ սեկՀօք և բարեպաշտ եպիսկոպոսօք և աւագ քահանայիւք և վանականօք, պատասխանի հրովարտակին գրէին»։

3. «Մի ոմն յոստանիկ տանէն, որում անուն էր Զանդազան,... լսէր յամանց զխորհեալն Հայոց և երթեալ վաղվաղակի պատմէր նմանութն իւրում վասակայ։ Որոյ բանից իրազգած եղեալ ննենգաւոր քսուին՝ աւագ նախարարքն Հայոց կալեալ զնա ի գեօղն որ կոչի Արծակ, տարեալ կապեցին ի միւսում եւս ի գեօղ յանուանեալ Բերդկունս, ի նմին բագրեւանդ գաւառի, զոր յիս բազում աւուրց՝ ըստ արժանի գործոց իւրոց անօրէնութեանց՝ քարկոծեալ սպանեցին»։

Եպիւբ

«Աշխարհն Հայոց, վրաց և Աղուանից, և Լինաց, Ծաւդէից և Կորդուաց, Ալձնեաց» և այլն։

«Այս ամենայն եպիսկոպոսք և քորեպիսկոպոսք և պատուական երիցունք ի տեղեաց տեղեաց հանդերձ սուրբ ուխտիւ եկեղեցւոյ, միաբանք և միահաւանք միահամուռ ժողովեալք ի թագաւորանիստ տեղին յԱրտաշատ, հաւանութեամբ մեծամեծ նախարարացն և բազմութեամբ աշխարհին արարին այնոքիկ նամակին պատասխանի»։

«Իսկ մի ոմն ի նախարարացն որ անուր դիպեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միաբանեաց ընդ նոսա ի մեծ վկայութիւնն և անդէն առժամայն ի նոցունց ի տեղւոջն քարկոծեցաւ, և ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցունց»։

4. «Եւ այսպէս յօրինեալ զճաշատն, և յԱստուծոյ խնամն ապահինեալք՝ յարձակեցան ի վերայ թշնամեացն: Որոս նախագոյն յառաջեալ ի տեղի մարտին կամսարականն Արշաւիր և Մուշեղպուհն Դիմաքսենից, որք յանգիտութենէ տեղւոյն դիպեցան թանձրախոր գաստիկ մօրից... (պատմում է տղմի մէջ ընկղմուելը, Մուշ Դիմաքսեանի ոգեկոչումը, Արշաւիրի, Լփնաց թագաւորի եղբօրը վիրկին սպանելը և յետոյ նորից ձի նստելը)... և զարհուրեցուցեալ զթեւս իւրոց կողմանն թշնամեացն՝ փախստական առնէր»:

5. «Թէ արդ ոտեայ անօրէնն վասակ ուխտին Աստուծոյ... և զսերեալսն տմրոցացն Հայոց ի բաց կատ... (պատմում է Մամիկոնեան և կամսարական և այլ տոհմերի երեխաներին հաւաքելն ու Սիւնեաց բերդերը տանելը և ապա Զարեհից թագաւորի մօտ ուղարկելու մտադրութեան մասին):

«Եւ զայս ասելով՝ խումբ առաքեալ յարձակէին. և զալ Թևն բեկեալ զձախոյ կողմամբն արկեալ, և որոյ հարակ զամենեսեան տայինն ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչեւ յամուր տեղիս մայրեացըն առ խորագոյն դարիւքն Լոփնաց գետոյ... (ապա պատմում է նախարարներից մէկին ձիուց վայր գցելը, Մուշի սպանուելն ու գազրիկի վիրաւորուելը, Վուրկի սպանութիւնը)... և զրազում հա՛ր... ընդ նմին սատակէր»:

«Գուժկան հասանէր... վասն ապստամբին վասակայ, յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զրազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս աթոռոյն, որ կայանք զօրացն էին՝ զԳառնին և զերամօնս և զԴրասխանակերտն՝ և զմեծ Դաստակերտն, զվարդանաշատն և զամուրն Օշականն... (հետեւում են մի քա բերդերի անունները, որ գրաւել էր վասակը)... աւերեալ և հրձիգ արարեալ և զամենեցուն ձեր զընտանիս վտախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ»:

Այսքանը բաւական ենք համարում, Այս տիպի «նմանութիւնների» մասին Կիւլեսէրեանն ասում է (էջ 191). «Ահա խումբ մը նմանութիւններ ալ, որոնք նոյնութիւններ են թրապէս, Վարդանանց պատմագիրն իր առջեւն ունի ազբիւր մը, կը հետեւի անոր ընթացքին և կարծես իւր հետքերը խոտորցնելու աւելորդական միջոցներ ի գործ կը դնէ, մինչ որ իւր աղբիւրի մէջ որոշ է, զայն ընդհանուր բացատրութեամբ մը կը փոխանակէ. յականէ յանուանէ եղած յիշատակութիւնները,

ըլլա՛յ նախախրատ կամ իշխան, ըլլա՛յ եկեղեցական, պաշտօնի տիտղոսներով կը բացատրէ և վոխադարձաբար երբ Փարպեցի բերդեան կ'ըսէ, ինքը քանի մը բերդերու անուն կը չարէ» և ն.։

Մեղ թուում է, սակայն, որ այստեղ եւս Կիւլհսէրեան բոլորովին սխալուած է և նրա բերած օրինակներն ամենևին չեն ապացուցում նրա կանխակալ թեզիսը։ Մենք չենք խօսում առաջին օրինակի մասին, որ բնաւ ոչինչ չի ապացուցում. բայց պէտք է հարցնել երկրորդ օրինակի վերաբերմամբ՝ մի՞թէ Եղիշէն երէցների մասին խօսելիս իր «ազբիւրների» մէջ գտնելով իր ամենաախթելի հերոսներից մէկի՝ Ղեւոնդ երէցի անունը, կը ջնջէր այն և «պաշտօնի տիտղոսով» մէայն կը բացատրէր՝ «իւր հետքերը խոտորեցնելու համար», այն Եղիշէն, որ նոյն Արտաշատի ժողովի առիթով մէկիկ-մէկիկ բերում է բոլոր ներկայ եղող եպիսկոպոսների անուննները, առանց վախենալու, որ «ազբիւրի» մէջ էլ այդ ցուցակը կայ։ Եւ, վերջապէս, Արտաշատի անու՞նը որտեղից հանեց Եղիշէն, եթէ Ղազարն է նրա աղբիւրը։ Չէ՞ որ Ղազարը Արտաշատի անունը չի տալիս։ Ո՞ւր է այստեղ «նոյնութիւնը»։

Այնուհետեւ, 3-րդ օրինակի մէջ ոչ մի նոյնութեան կամ նոյնիսկ նմանութեան մասին չի կարող խօսք լինել. դրանք անշուշտ բոլորովին տարբեր դէպքեր են, կա՛մ ամենաչատը, եթէ խօսքը նոյն դէպքի մասին է, նրա մասին եղած պատմութեան բոլորովին այլ վարիանտներ են հասել երկու պատմիչներին և նրանք իրարից անկախ օգտագործել են այդ վարիանտները։ Ղազար Փարպեցու ասելով՝ Զանդաղանը ուրիշներից լսում է Հայոց խորհուրդը և գնում-պատմում է Վասակին։ Այս իմաստով՝ հայ նախարարները բռնում են նրան Արծակ պիւղում, բանտարկում Բերդկունքում և ous orbr աչցնելուց յետոյ քարկոծելով սպանում որպէս մատնութեան պատիժ։ Իսկ Եղիշէն պատմում է, թէ նախարարներից մէկը, որը հենց խորհրդի մէջ էր, չհամաձայնեց նրանց հետ և՝ որպէսզի գաղտնիքը վաղաժամ չբացուի, տեղնուտեղը քարկոծուեց միաբանուածների կողմից որպէս նախազգուշական միջոց։ Ո՞րն է այստեղ «նոյնութիւնը» կամ թէկուզ «նմանութիւնը»։

4-րդ օրինակը նոյնպէս աւելի չուտ ապացուցում է Եղի-

չէի ինքնուրոյնութիւնը, քան թէ կախումը։ Այնտեղ կայ ուշադրութեան արժանի ռազմավիտական մի դարձուածք, որ չունի Ղազար Փարպեցին, և որը ցոյց է տալիս Եղիշէի՝ դէպքերին աւելի մօտիկ, ծանօթ և հմուտ լինելը։ Այդ դարձուածքն է՝ «զալ թեւն բեկեալ, զձախոյ կողմամբն արկեալ և սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին և փախստական առնէին մինչեւ յամուր տեղիս մայրեանցն առ խորագոյն դրիւքն լռինաս գետոյ»։ Սրա հանդէպ Ղազար Փարպեցին պատմում է Արչաւիր կամաարականի ճահիճների հանդիպելու, նրա մէջ խրուելու և այտեղից՝ մի մոյկը մորի մէջ թողած՝ «միամոյկ տղմաթաթաւ հանդերձ ամենայն զինուն հանեալ զերիվարն ի ցամաք» վիպական պատմութիւնը, որ անշուշտ հետագայ ճոխացման բնոյթ ունի։

Վերջապէս, 5-րդ օրինակը։ Ղազար Փարպեցին ասում է միայն, թէ Վասակը գրաւել է բերդերը, իսկ Եղիշէն մէկ-մէկ թւում է, թէ ո՛ր բերդերն է գրաւել։ Ի՞նչպէս կարող է սրանից հետեւել, թէ Եղիշէն Ղազարից յետոյ է գրել և ձեռքին ունեցել է Ղազարի գործը, ինձ համար բոլորովին անհասկանալի է։ Ընդհակառակը, որ Եղիշէն մէկիկ-մէկիկ թւում է գրաւած բերդերը, այդ ցոյց է տալիս, որ նա ժամանակով աւելի մօտ է նկարագրուող անցքերին և այդ բերդերից իւրաքանչիւրի անունը նրան որեւէ բան է ասում, մինչդեռ 40—50 տարի յետոյ գրող Փարպեցուն լիովին բաւական էր ասել միայն, որ Վասակը գրաւել է բերդերը առանց մանրամասնութիւնների մէջ մանելու։ Մենք, որ ապրել ենք առաջին իմպերիալիստական պատերազմը, նաև ապրել ենք երկրորդը, տեսել ենք և լաւ գիտենք, որ պատերազմի ժամանակ և նրանից քիչ ժամանակ անցած՝ նրա բոլոր մանրամասնութիւնները, գրուած թէկուզ և փոքր քաղաքների և բերդերի անունները մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում և բերնէբերան են անցնում, իսկ երկար ժամանակ անցնելուց յետոյ՝ այդ մանրամասնութիւններն ու անուննները աղօտանում ու մոռացւում են և միայն ընդհանուր պատկերն է մնում։ Եւ ժամանակակից պատմագիրներն էլ, ի հարկէ, դէպքերի մասին աւելի մանրամասնութիւններ են յիշում ու անուններ մէջ բերում, քան հետագայ պատմագիր-

ները, որոնք պատմական դէպքերը դիտում են թռչնասլաց բարձունքից և տեսնում ու նկարագրում են միայն ընդհանուր քնորոշ գծերը։

Այսպէսով, քննարկելով Կիւլեսէրեանի հիմնական փաստարկումները, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ, չնայելով իր բոլոր ճիգերին, նրան չի յաջողուել ապացուցել իր թեզիսը Եղիշէի ականատես պատմագիր չլինելու և Ղազար Փարպեցուց օգտուած լինելու մասին։

Սրանով վերջացնում ենք մեր ասելիքը Կիւլեսէրեանի ուսումնասիրութեան մասին՝ յատկապէս Եղիշէի և Ղազար Փարպեցու առնչութեան վերաբերեալ։ Բայց նախքան Եղիշէի և Ղազար Փարպեցու փոխյարաբերութեան այս կնճռոտ խնդիրը թողնելը՝ մենք կ'ուզենայինք բանասէրների ուշադրութիւնը հրաւիրել մի կէտի վրայ, որ մինչեւ այժմ, որքան մեզ յայտնի է, գիտողութեան չի արժանացել, բայց որը կարող է այս խնդրի վրայ պայծառ լոյս սփռել։ Մեր ասելիքը վերաբերում է այն տեղին, որտեղ երկու պատմագիրների մէջ էլ խօսք է լինում Ղեւոնդ երէցի հիւանդոտ լինելու մասին։

Եղիշէն այդ կէտը պատմում է ութերորդ գլխում (Ղուկասեան Մատենադարան ձԱ., Թիֆլիս, 1913, էջ 219—224) հետեւեալ ձեւով. Դենչապուհը համոզելով Սահակ եպիսկոպոսին և Յովսէփին, որ չյամառեն իրենց մօտրութեան մէջ, Ղեւոնդ երէցի մասին ասում է. «Ես գիտեմ, զի ի հրապոյր առնդ այդորիկ եղեալ էք դուք. հանգի ինձն ախտացեալ և մարմնով և ձեռնարկութեամբ բժշկաց չիք գտեալ առողջութիւն, և հիւանդոտ կենօք ձանձրացեալ է, և փափագէ ի մահ քան ի կեանս։ Սրան նախ պատասխանում է Յովսէփը, որը, չժխտելով Ղեւոնդ երէցի ունեցած դերը, ասելացնում է. «Իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ ելանել յախտալից մարմնոյս, առաւել և մեք ամենեքեան. զի չիք ոք ամենեւին ի ծնունդս կանգնից՝ որ ունիցի զմարմինս առանց ցաւոց չարչարանաց»։ Ցետոյ էլ Ղեւոնդ երէցն է նոյն մտքով անդրադառնում իր հիւանդոտ մարմնին, պաշտպանում ու գովում է բժշկութեան արուեստը և յայտնում, որ չարչարուած ու հիւանդոտ մարմինը նրա հոգու առողջութեան նշանն է։

Նոյնը պատմում է նաև Ղազար Փարպեցին (Տփղիս, 1904, էջ 79—81), որ այս խօսակցութիւնն անել է տալիս Մխիթարեանի և աւագանու առջեւ։ Այստեղ, Ղեւոնդ երէցի տուած բացատրութիւններից յետոյ, որին բարձրաձայն իրենց հաւանութիւնն են յայտնում մեւանները, Մխիթարեանը զայրացած նրանցից պահանջում է՝ «Բայց դուք պիտեղ տուք մեզ, թէ և ձեր ոճն բանք են, զոր մանապարտ այդ իշխեաց աներկիւղ համաձայնութեամբ յանդգնել և խօսել առաջի մեր» (էջ 81)։ Մինչեւ այստեղ ամբողջ դատավարութեան ժամանակ դեռ ոչ մի խօսք չի եղել Ղեւոնդ երէցի հիւանդ կամ ցաւագար լինելու մասին, եւ ահա յանկարծ Ցուվաէփն ու Սահակը իրենց պատասխանի մէջ իրենց համամիտ և համախորհուրդ լինելը յայտնելով Ղեւոնդ երէցի ասածներին՝ աւելացնում են, «Իսկ դու ախտիւ դառնութեան առ զայրացմանդ թշնամանեցեր զդաս, երանի՛ այնոցիկ, որ մատց աչօք սրատեսք իցեն և արդարահայեացք. այլ մարմնական ախտիւ մեծամեծք ըմբռնեալ տկարանան, է զի և կրաերք. և դուք զոհ այդպիսի ախտիւ մի՛ գայրագնեալ ըրծուցամանիք, զի դուք էք արժանի եպերանաց բազմաց» (էջ 81)։ Քանի որ Ղազար Փարպեցու մէջ Մխիթարեանը, նաև հետագայ դատավարութեան ժամանակ, Վեհդենչապուհը ոչ մի խօսք չի ասել Ղեւոնդի հիւանդոտ լինելու մասին, ո՞րտեղից դուրս եկաւ Ցուվաէփի և Սահակի կողմից այս կշտամբանքը Մխիթարեանին հասցէին։ Արեւի պէս պարզ է, որ Ղազար Փարպեցու աղբիւրի մէջ Մխիթարեանը կամ Վեհդենչապուհը որեւէ նման դարձուածք Ղեւոնդի հիւանդոտ լինելու մասին ասել է, որ Փարպեցին անուշադրութեամբ բաց է թողել, առանց զգալու Ցուվաէփի ու Սահակի պատասխանի և կշտամբանքի անյարիրութիւնը նախորդին։ Ապա պարզ է նաեւ, որ այստեղ ոչ մի դէպքում եղբ շէն չի կարող Փարպեցուց օգտուած լինել, այլ պէտք է առնուազն ընդունել, որ մեր այժմեան Եղիշէն ու Ղազար Փարպեցին մի երրորդ աղբիւր ունեն իրենց առջեւ, և չատ հաւանական է, որ այդ աղբիւրը մեր այժմեան Եղիշէի սկզբնագիրն է կամ նախատիպը, որը հետագայում խմբագրելով ու փոփոխելով՝ ընդունել է իր այժեան կերպարանքը։

Գ. Անցնում ենք Նիկ. Ադոնցի մի դիտողութեանը, որը

նոյնպէս պատճառ է դարձել Ղևոնդին VI դարի մատենագիր հռչակելու։ Ադոնցը իր «Հայաստան Յուստինիանոսի օրով» (Պետերբուրգ, 1908) համալիր ուսումնասիրութեան մէջ, խօսելով Յունաց բաժնի Հայաստանում գտնուած վասակ Մամիկոնեանի գործակցութեան մասին մարզպան Վասակ Սիւնու հետ, այն կարծիքն է յայտնում, թէ գուցէ Ղևոնդի յիշած Վասակ Մամիկոնեանն այն Վասակն է, որը 536 թուի ապստամբութեան ամենագործունեայ անդամներից մէկն էր և կանգնած էր նաեւ հայ իշխանների պարսից Թագաւոր Խոսրով I ին ուղարկած պատգամաւորութեան գլուխ։ Այսպիսի կարծիք յայտնելու համար նրան հիմք են ծառայում Վասակ Մամիկոնեանի մասին Ղևոնդի ասած հետեւեալ խօսքերը. «Այրն այն սպարապետ էր Մարին Հայոց և հաւատարիմ զօրացն Հռոմովմոց ի սահմանին Պարսից» (IV գլուխ)։ Որովհետեւ, ինչպէս ասում է Ադոնցը, «յայտնի է, որ ո՛չ ռազմարուեստիւններում և ո՛չ էլ ներքին Հայաստանում կայսրները զօրք չէին պահում և սահմանների, ինչպէս նաեւ երկրի պաշտպանութիւնը յանձնարարուած էր տեղական ուժերին, կրկ մինչեւ 529 թուականը, երբ Յուստինիանոս կայսրն առաջին անգամ նշանակեց Հայաստանի ստրատեգ և նրան ենթակայ երեք դուկեր, քանի որ պատմագիրը խօսում է Հայաստանում եղած հռոմէականն զօրքերի սպարապետի մասին, հասկանանք այս ստրատեգի թէ դուկերից մէկի իմաստով, նրա երկը չի կարող 529 թուից առաջ գրուած լինել» (էջ 125 և 126 ծանոթագրութիւն)։

Գլխաւորապէս Ադոնցի այս կարծիքի հիման վրայ Աբր. Զամինեան (Հայ Գրականութեան Պատմութիւն, Ա. Մաս., Նոր Նախիջեւան, 1914, էջ 99) Ղևոնդին համարում է VI դարի առաջին կէսի հեղինակ, որը ո՛չ միայն Վարդանին ժամանակակից չէ, այլեւ մեծ դէպքից 20—30 տարի յետոյ է ծնուել։ Սակայն Զամինեանը տարօրինակ կերպով միեւնոյն ժամանակ այն կարծիքն է յայտնում, թէ այս ենթադրութեանը չեն հակասում Ղևոնդի դէպքերին ականատես եղած լինելու մատնանշումները։ Նրա ասելով՝ «Այդ խօսքերն արձագանք են պարսկական այն հալածանքներուն, որոնք երբեք դադարում չունէին և միապէս կը չարունակուէին Վարդանանց առեներէն մինչեւ մեր հեղի-

նակի ապրած ժամանակները VI դարուն առաջին քառորդը, գէթ մասնաւոր դէպքերու մէջ, ի նկատի առնելով Եղիշէի ոգին՝ կարող չենք վերագրել բառերու մէջ կեղծիք տեսնել. հեղինակը պարզաբար կ՚ուզէ ասել, թէ ինքը ընդհանրապէս ծանօթ է պարսկական հալածանքներուն և անձամբ իսկ փորձած», Այսպիսի բռնաղբօսիկ բացատրութիւնը, ի հարկէ, բոլորովին անընդունելի է. ի՞նչպէս կարող է դէպքերից 20—30 տարի յետոյ ծնուած մարդը գրել, թէ նա ականատես է եղել իր ծննդից առաջ կատարուած դէպքերին և այդ կեղծիք չպիտի համարուի, բոլորովին անհասկանալի է։ Սակայն վերադառնանք Ն. Ադոնցի դիտողութեանը։

Նախ, 529 թուին սատանեգութիւն հաստատելը բոլորովին չի ժխտում, որ մինչեւ այդ թուականներն էլ բիւզանդացիները պահպանում էին իրենց պետութեան և իրենց ենթարկուած Հայաստանի սահմանները Պարսից պետութեան դէմ. այդ զօրքերը կազմուում էին տեղական ուժերից և չէին մտնում բիւզանդական զինուորական կազմակերպութեան մէջ նեղ մտքով առած։ Նրանք յատուկ սահմանապահ զօրքեր էին, բայց նոյնիսկ տեղական ուժերից կազմուած յատուկ սահմանապահ զօրքերն էլ պէտք է որ իրենց զօրապետն ունենային, իսկ ի՞նչ անուն կարող էր տալ Պարսկական Հայաստանում ապրող և գրող հայը այդ զօրապետին, եթէ ոչ ընդհանուր գործածութեան մէջ գտնուող և քաղաքացիութիւն ստացած «սպարապետ» անունը։ Չէ՞ որ Եղիշէն և գլխում նոյն սպարապետ անունով է կոչում նաեւ յոյն զօրավար Անաստոլիոսին։ Այնուհետեւ, ինձ թւում է, որ Ադոնցը սխալ է բացատրում Եղիշէի համապատասխան հատուածը, ասելով թէ՝ «Պատմագիրը (Եղիշէն) խօսում է Հայաստանում եղած հռոմէական զօրքերի սպարապետի մասին»։ Եթէ պատմագիրը Վասակ Մամիկոնեանին համարէր Հայաստանում եղած հռոմէական զօրքերի սպարապետ, այն ժամանակ նա «Այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց» բառերի վրայ չէր աւելացնի «և հաւատարիմ զօրացն Հռոմայեցոց և սահմանին Պարսից». որովհետեւ նախ՝ հռոմէական զօրքերի սպարապետի համար անմտութիւն է ասել, թէ նա հաւատարիմ կամ վստահութիւն ներշնչող անձ էր հռոմէական զօրքերի համար Պարսից

սահմանագլխին և երկրորդ՝ չէ՞ որ հռովմէական զօրքեր չկային Պարսից սահմանի վրայ, էլ ի՞նչպէս կարող էր Վասակ Մամիկոնեանը նրանց սպարապետը լինել։ Վերոյիշեալ հատուածը ճիշդ է, ուրեմն, միայն այն մտքով հասկանալի, որ Վասակ Մամիկոնեանը եղել է Մաորին Հայոց տեղական ուժերից կազմըւած սահմանապահ զօրքերի սպարապետը, որը և իրրեւ այդպիսին կարող էր հռովմէական զօրքերի կողմից որպէս հաւատարիմ ու վստահելի անձ ճանաչուել[1]։

Այս դիտողութիւնների վրայ պէտք է այժմ աւելացնել նաև այն, ինչ որ մեզնից միանգամայն անկախ ասում է ակադ. Մ. Աբեղեանը[2]) նոյն հարցի մասին, մասնաւորապէս նրա հէնց նոյն Ագոնցի գրքից բերուած վկայութիւնները, որ Թուստինիանոս կայսրը, ճիշտ է, հիմնել է 529 թուին usrաsեգի պաշտօնը, բայց դուքսերի պաշտօնը Հայաստանում գոյութիւն է ունեցել Թուստինիանոսից չատ առաջ, և ուրեմն, «Մաորին Հայոց» սպարապետ յորջորջումը կարող է հէնց Հայաստանի Մելիտինէում նստող դքսին վերաբերել, որն ի հարկէ տեղական զօրքերի հրամանատարն էր։ Բայց այդ՝ չէ՞ որ հէնց կորիւնն էլ «Հայաստանի սպարապետ» բառերով է բնորոշում Մելիտինէում նստող դքսին։ Ինչո՞ւ պէտք է Եղիշէի «սպարապետ» բառը գործածելուց այդպիսի ծանրակշիռ եզրակացութիւններ հանուեն։

Այսպիսով, Վասակ Մամիկոնեանի սպարապետ կոչուելը և

---

1) Համմ. Dr. K. Güterbock, Römisch-Armenien und die römischen Satrapien im vierten bis sechsten Jahrhundert. Königsberg i. Pr. 1900, էջ 36». «Römische Truppeu Waren auch in den Satrapengebieten nicht stationiert.' Die Kaiser erachteten es für ausreichend, den Grenzschutzdienst gegen Persien von den Satrapen selbst und ihren Leuten versehen zu lassen. Selbst des unmittelbar an der parsischen Grenze gelegene Maptyropolis hatte noch unter Kaiser Anastasius keine römische Besatzung. Vorübergehende Einfälle der Barbaren mussten die Satrapen abwehren, im Falle eines Krieges aber Hilfstruppen stellen und mit ihnen zum römischeu Heere stossen»: Նոյնպիսի փոխյարաբերութիւններ էին իշխում անշուշտ նաեւ Եղիշէի յիշած Մաորին Հայքում։

2) Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Երեւան 1944, էջ 294—297։ Մեր յօդուածը Ագոնցի վերոյիշեալ դիտողութեան մասին գրուել է 1942 թ. Յունուարին և լոյս է տեսել ակադ. Մ. Աբեղեանի գրքից մօտ մի տարի առաջ։

Եղիշէի համապատասխան հատուածը ոչ մի կապ չունի 529 թուին ստրատեգութիւն հաստատելու կամ դուկերի պաշտօնի հետ և ոչ մի դէպքում չի կարող հիմք ծառայել Եղիշէին իր բնական տեղից VI դար տեղափոխելու համար, մանաւանդ որ առհասարակ էլ սխալ է մի բառից այդպիսի մեծ եզրակացութիւններ հանելը, եթէ ուրիշ ատիպողական հանգամանքներ չկան. իսկ այդպիսիները տուեալ դէպքում լիովին բացակայում են։

Ապա, անկախ այս հանգամանքից, պէտք է ուշադրութեան առնել այն, որ Վասակ Մամիկոնեանին վերաբերող հատուածը Եղիշէի մէջ չատ խառն ու անկարգ դասաւորութիւն ունի. օրինակ՝ հէնց մի քայն սուտ քահանաներին վերաբերող հատուածը կրկնւում է երկու անգամ և երկրորդ անգամ ընկել է Յունաստան ուղարկուած թղթերի և նրանց թողած ազդեցութեան ամփոփումը տուող բառերի միջեւ։ Ուստի և պէտք է ենթադրել, որ այն կարող է նաև հետագայի ընդմիջարկութիւն լինել։ Բացի այդ, Եղիշէն III գլխում պատմում է, որ հայերը բիւզանդացիներից օգնութիւն են խնդրում պարսիկների դէմ կռուելու համար և յատուկ հրովարտակ են ուղարկում Թէոդոս կայսրին Յովսէփ կաթողիկոսի, Վասակ մարզպանի, Ներշապուհ Ռմբոսեանի և Վարդան սպարապետի ստորագրութեամբ։ Մի մարդ, որ պաշտօնական ձեւով ապաւինել էր այդ օգնութեանը և խնդրել թէ «դուք ևս ի ձեռն առջի՛ք զմեզ... եթէ սակաւիկ մի հեղգայք, դուցէ բազում և այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա», էլ ի՞նչպէս կարող էր դրանից մի քանի ամիս չանցած ու պատասխան չստացած՝ կայսեր թագաւորանիստ քաղաքը նորից թղթեր ու «հրովարտակներ» գրել ու մոլորեցնել յոյներին, թէ բոլոր հայերը միաբանել են իրեն հետ և Պարսիկների դէմ ոչինչ չունին։ Ինչո՞ւ պէտք է յոյները հաւատային այնպիսի մարդուն։ Մեզ թւում է այդ պատճառով, որ Եղիշէի նախնական բնագիրն այստեղ աղաւաղուել է. փոփոխութեան է ենթարկուել հետագայ խմբագրողի կողմից և գուցէ VI դարում ապրող Վասակ Մամիկոնեանին վերաբերող գործողութիւնները վերագրուել են V դարին։

Հարկ ենք համարում այստեղ ասելացնել նաեւ այն, որ Ն. Ադոնցը, յայտնելով այն կարծիքը, թէ «Եղիշէն մեր ձեռքը

դանուած խմբագրութեամբ չի կարող VI դարից առաջ գրուած լինել», միաժամանակ ընդունում է, որ Եղիշէի պատմութեան մէջ շատ ինքնուրոյն էջեր էլ կան, որոնք չեն կարող աղբիւր ունեցած լինել Ղազար Փարպեցուն, Ուստի Ադոնցը ենթադրում է, թէ Եղիշէն այդ կէտերը քաղել է մի երրորդ աղբիւրից (Ադոնց, «Մարզպան Վասակ պերեդ սուդոմ իստորիկով», Ջապ. վոստ. Օտդ. Իպպ. Րուս. Արխ. Օբշչ. XV, Պետ. 1904, էջ 0122—0130)։

դ. Մեզ մնում է, վերջապէս, խօսել Եղիշէի «Վարդանանց Պատմութեան» վերաբերեալ վերջին և ամենաընդարձակ քննադատական ուսումնասիրութեան մասին, որը պատկանում է Վենետիկի Մխիթարեան Ն. Ակինեանին։ Ն. Ակինեանն իր ուսումնասիրութիւնը նախապէս տպել է «Հանդէս Ամսօրեայ»ի 1931—1937 թուականների համարներում (վերջին յօդուածը զետեղուած է 1937 թուի Նոյեմբեր-Դեկտեմբերի համարում, տակը գրուած է «շարունակելի», բայց այդ շարունակութիւնը չկայ այլեւս ո՛չ 1938, ո՛չ 1939 և ո՛չ էլ 1940 թուի 1—6 համարներում, որոնք եղել են իմ ձեռքին)։ Յօդուածների էջերը «Հանդէս Ամսօրեայ»ում չենք մատնանշում, որովհետեւ նրանց թիւը շատ մեծ է և բացի այդ Ն. Ակինեանն իր ուսումնասիրութիւնը հրատարակել է նաեւ առանձին, երկու հատորով («Եղիշէ վարդապետ և իւր Պատմութիւնն Հայոց Պատերազմին», Քննական ուսումնասիրութիւն, Հատոր Ա., Վիեննա, 1932. 8°, ԺԲ+399։ Ազգային Մատենադարան No. 133 և Հատոր Բ., Վիեննա, 1937, 8°, 401 - 806։ Ազգային Մատենադարան No. 140)։ Երկրորդ հատորով վերջանո՞ւմ է արդեօք Ակինեանի ուսումնասիրութիւնը թէ ոչ, չենք կարող ասել, որովհետեւ այդ գրքի լոյս տեսնելու յայտարարութիւնը տպուած է «Հանդէս Ամսօրեայ»ի 1937 թուի Յունուար-Մայիս միացեալ համարի շապկի վերջին էջի վրայ, իսկ նոյն թուի Նոյեմբեր-Դեկտեմբեր համարում դեռ կայ, ինչպէս ասացինք, մի շարունակելի յօդուած, էջ 533—558։

Իմ մտքով անգամ չի կարող անցնել թէկուզ՝ ամենահամառօտ խօսքերով ուրուագծել Ակինեանի այդ ստուարածաւալ հատորների բովանդակութիւնը և ապա անցնել իմ առարկութիւններին նրա փաստարկութիւնների առիթով, որովհետեւ

այդպիսի աշխատանքը կը պահանջէր ինձնէից առնուազն հինգ անգամ աւելի ծաւալ, քան այն երկու–երեք մամուլն է, որ տրամադրուած է ինձ այս ամբողջ առաջաբանի համար: Ուստի ես, ցաւօք սրտի, ստիպուած եմ բաւարարուել միայն մի քանի ամենակարեւոր կէտերը մատնանշելով և դրանց առիթ իմ առարկութիւնները բերելով:

Ակինեանը նոյնպէս, նախորդ քննադատների նման, այն կարծիքի է, որ Եղիշէն կարդացել և առատօրէն օգտուել է Ղազար Փարպեցուց, որը դէպքերը նկարագրում է իրականութեանը համապատասխան, մինչդեռ Եղիշէն, իբր, կոյրի նման խարխափում է խաւարում: Այժմեան Եղիշէն մի անշնորհք, անճարակ, հակասութիւններով լի խմբագրութիւն է VII դարու, «անձոյլ, համադրութիւն մը անմիասնական տարրերու»: Այսպէս է ասում Ակինեանը 1931 թուին, իսկ 1935 թուին «Կամսարական Աշոտի» յիշատակութիւնից մէյն այն եզրակացութիւնն է հանում, թէ «խմբագիրը IX դարեն կ'երեւայ» («Հանդէս Ամսօրեայ», 1935, էջ 234), որովհետեւ VIII դարի վերջին Արշարունիքի տէրն Աշոտ Բագրատունին էր, իսկ Աշոտ անունն, իբր, այդ ժամանակներից յետոյ է ընդհանրացել Բագրատունիների մէջ: Ակինեանի կարծիքով՝ Եղիշէի սկզբնագիրը նկարագրած է եղել 572 թուականի Հայոց պատերազմը և ապա դրան հետեւող 20-ամեայ Պարսկա–Բիւզանդական պատերազմները: Հետագայում, 531—595 թուականների վերաբերեալ պատմութիւնը ձեւափոխուած, աղաւաղուած և յարմարեցրած է 451 թ. ապըստամբութեան պատմութեանը՝ Ղազար Փարպեցու սխեմայով կազմուած և ըստ այնմ հրատարակուած: «... Եթէ սկզբնագիրը 572ի Հայոց պատերազմը նիւթ ունէր իր չինուածքին, խմբագիրը նիւթ ընտրած է իրեն 451-ի ապստամբութիւնը: Ուրուագիծը մատակարարած է Ղազար Փարպեցին իր բ. դրուագին մէջ. աստղձ ծառայած է Եղիշէի պատմութիւնը 7 յեղանակի մէջ: Եղիշէի պատմութիւնը ձեւաւորուած է Ղազարի կաղապարին վրայ. աւելորդ մասերը յապաւուած են, պակասները լրացուած՝ հետեւելով Ղազարի: Դէպքերու նկարագրութիւնները յարմարցուած են Ղազարի տեղեկութիւններուն, անունները փոփոխուած են փոխառութեամբ Ղազարէն: Ամբողջութիւնն այժմ եր-

կու պատմագրութիւններու զանգուած է. բովանդակութիւնը 451ի ապստամբութեան յարակից դէպքերն են, իսկ նկարագրութիւնները՝ 572ի հայոց պատերազմի պատմութեան դրուագները» («Հանդէս Ամսօրեայ», 1931, էջ 183—184)։ Մի այլ տեղում ասւում է, որ սկզբնագիրը տուել է 540—595 թուերի իրադարձութիւնները և աւարտուել է 595ին, «որովհետեւ իրեն անծանօթ է տակաւին Խոսրով II Պարուէզի վեցերորդ տարւոյն (596) խոստացուած վերադարձն հայ նախարարներու երկրորդ մասին»։

Մատնանշելով Փարպեցու և Եղիշէի մէջ եղած տարբերութիւնները Ցազկերտ II-ի նկարագրի, նրա մղած պատերազմների ու կատարած գործողութիւնների վերաբերմամբ, Ակինեանը որոշում է այն «գլխաւոր կէտանները», որոնց վրայ ուշադրութիւն պիտի դարձնէին Եղիշէի պատմութիւնն ուսումնասիրողները բայց չեն դարձրել. ա) Ցազկերտ բ. ունէ՞ր այն նկարագիրն ու աչխարհահայեացքը, ինչպես կը նկարագրուի արքայից արքայն Եղիշէի գրչին տակ։ բ) Ստուգիւ պատերազմասէ՞ր էր Ցազկերտ. արչաւե՞ց Բիւզանդական հողեր, թափե՞ց արիւն աւերե՞ց երկիրներ, դարձա՞ւ աւարով։ գ) Այս արչաւանքը բերա՞ւ իր հետ խաղաղութեան դաչինք և Պարսկաստանէն Բիւզանդիոն փախստականներու վերադարձ։ դ) Ցազկերտ բ.ի օրով ուղարկուա՞ծ է Դենշապուհ մը Հայաստան աչխարհագիր ընելու. տեղի ունեցա՞ծ է առհասարակ Ե. դարուն մարդահամար և հարկերու դրութեան փոփոխում։ ե) Մղա՞ծ է Ցազկերտ պատերազմ կովկասեան ազգերու դէմ. եղա՞ծ է մինչամուսին Քուշանաց երկիրը, դրա՞ծ է փականք Ճորա պահակին։ զ) 451ի հայկական ապստամբութիւնը պատճառե՞ց մտահոգութիւն պարսից արքունիքին իբր պատճառ յոյն-պարսկական խաղաղութեան լուծման։ Կարո՞ղ էր Աւարայրի ճակատամարտը «Հայոց պատերազմ» անունն ընդունել»։

Մենք բոլորովին մի կողմ ենք թողնում վերջին հարցը իբրեւ անբովանդակ, որովհետեւ ինքնըստինքեան հասկանալի է, որ ամէն մի նոյնիսկ իր ծաւալով փոքր ապստամբութիւն (իսկ այս դէպքում ապստամբութիւնը փոքր համարել էլ չի կարելի) քննականաբար մտահոգութիւն պիտի պատճառէր Պարսից արքունիքին, մանաւանդ որ ապստամբները նոյնիսկ Պարսից կողմից

մարզպան նշանակուած վասակ Սիւնու ստորագրութիւնը կրող թղթով դիմել էին Պարսկաստանի ախոյեան Բիւզանդիային և նրանից զինուորական օգնութիւն խնդրել Պարսկաստանի դէմ. մի բան, որ պատմում է նաեւ Ղազար Փարպեցին և որի վաւերականութիւնն անժխտելի է. Բայց այս դեռ երկրորդական հանգամանք է, գլխաւորն այն է, որ Ակինեանի ասելով՝ Եղիշէի պատմածը չի յարմարւում Ցազկերտ բ.ին, ուստի պէտք է Պարսից պատմութեան մէջ մի աւելի յարմար թագաւոր փնտռել, և Ակինեանն իբրեւ այդպիսին մատնանշում է Խոսրով I Անոշաւուանին, որին, իբր չատ յարմարւում են թէ՛ թագաւորի բնութագիրը և թէ՛ քաղաքական-տնտեսական դէպքերը։ Նա՛ է, որ առանց պատերազմ հրատարակելու յարձակւում է Բիւզանդական երկրամասերի վրայ. ասպատակում, աւերում է այդ երկրամասերն ու վերադառնում։ Սկսւում են երկարամեայ պատերազմներ, հաղիւ 562ին յաջողւում է խաղաղութեան դաշինք կնքել, այս անգամ 50 տարուայ տեւողութեամբ. պայմանների մէջ նշանակուած էր նաև «վերադարձ Պարսկաստանից հռոմէական սանմանն» փախածների։ Ցետոյ նա արշաւում է կովկասեան ազգերի դէմ, բարելաւում է հայկական դրութիւնը և ձեռնարկում է պարտադիր հռչակելու պետական կրօնը։

Քանի որ թագաւորների բնութագիրը չատ էական դեր է կատարում Ն. Ակինեանի փաստարկումների մէջ և Եղիշէի պատմութիւնն իբրեւ հետագայ դարերի կեղծիք ցոյց տալու ապացոյցների մէջ ամենակարեւորներից մէկն է, մի քիչ աւելի մանրամասն կանգ առնենք այս հարցի վրայ։ Ի՞նչպէս է նկարագրում Եղիշէն Ցազկերտ բ.ին և ի՞նչ է առարկում Ն. Ակինեանն այդ նկարագրի դէմ։ Եղիշէն Ցազկերտ բ.ին նկարագրում է իբրեւ մի պատերազմասէր, արիւնարբու, դաժան, քրիստոնեաներին թշնամի, ամբարտաւան և անձնապաստան իշխան, որ սնապարծութեամբ իրեն մարդկային բնութիւնից վեր էր դասում, աստուածանման և անմահ էր համարում։ Սրա դէմ Ակինեանն ասում է, թէ պարսիկ և արաբ գրողները Ցազկերտ բ.ին, ընդհակառակը, գովում են իբրեւ «ողորմած, հեզաբարոյ և խաղաղասէր» իշխան։ Փարպեցին էլ նրան ոչնչով չի պախա-

րակում, համարում է արդարամիտ (օրինակ, պատժեց Վասակին), աւելի չուտ՝ կամազուրկ մի թագաւոր, որին ղեկավարում էին իր մինիստրները: Քուչանների դէմ կրած պարտութիւններից հետեւում է, որ նա պատերազմասէր բնաւորութիւն չի ունեցել։ Այնուհետեւ Ակինեանը բերում է Շպիգելի տուած բնութագիրը Յազկերտ բ-ի մասին. «նա արդար էր իր հպատակներու հանդէպ, բարեացակամ նաեւ նկատմամբ իր բանակին» և այլն։ Սրանից հետեւցնելով, որ Եղիշէի նկարագրած թագաւորը Յազկերտ բ-ը չէ, այլ Խոսրով I Անուշաւանը, ինչպէս նրան նկատում են բիւզանդացիները, մանաւանդ Պրոկոպը, Ակինեանը չարունակում է, թէ աւելի հետաքրքրական է Եղիշէի պնդումը, որ թագաւորն իրեն ձեւացնում է ապուռածանմման եւ անմահ (ընդգծումն իմն է, Տ. Մ.). սա մի ակնարկ չէ՞ այն տիտղոսի, հարցնում է Ակինեանը, որով Խոսրով I դիմում է Յուստինիանոս կայսրին (Մենանդր, հատակոտոր 11, էջ 353, տպ. Բոննի. «աստուածեղէն, առաքինի, խաղաղասէր իշխան Խոսրով արքայից արքայ, երանելի, բարեպաշտօն, բարերար, որում դիք չնորհեալ են բախտ մեծ եւ թագաւորութիւն մեծ, ակա ակայից և ի բնութենէ աստուածոց — Յուստինիանոս կայսեր եղբօր մերում խնդալ»), և Անուշաւանի մականուանը, որ թարգմանւում է անմահ հոգի, անմահ, Աւելի հիմունքների կարիք չկայ,— պնդում է նորից Ակինեանը,— որ նկարագրուած Պարսից թագաւորի մէջ Խոսրով I Անուշաւանին տեսնենք, բայց ուրիշ ապացոյցներ էլ կան: Եւ այդ ապացոյցներից ամենազօրաւորներից մէկը Յազկերտի արշաւանքի նկարագրութիւնն է դէպի հռոմէական սահմանները, մինչեւ Մծբին, երբ Թէոդոս կայսրը հաշտութիւն է կնքում, որի մէջ կէտ կայ նաեւ «փախստականների վերադարձի մասին»։ Ակինեանը պնդում է, որ Յազկերտն այդպիսի պատերազմ չի մղել և երկու պետութիւնների միջեւ երկարատեւ խաղաղութիւն է եղել. այդ են վկայում Զլորենոսի և Անատոլիոսի Մարկիանոս կայսերն ասած խօսքերը, թէ պէտք չէ խաղաղութեան դաշինքը քանդել և մի պատերազմ սկսել, որի վերջն յայտնի չէ, թէ ինչ կը լինի։ Ասորական կարգա դը Բեթ Սլոքի վկայաբանութիւնն էլ ասում է, որ Յազ-

կերտի առաջին 7 տարիները խաղաղութիւն է տիրել և բիւզանդացիներն էլ այդպիսի կռիւների մասին չեն պատմում։ Այս իդիլլիան հիմնաւորելու համար Ակինեանն առանց այլեւայլութեան մերժում է մի քանի նշանաւոր գիտնականների կողմից (Tillemont, Le Beau, Nöldeke) Procop, Pers. 1, 2 յիշուած իբր Վռամ ե.ի (420—439) ժամանակ կատարուած յարձակումը 441 թուին, ուրեմն ո՛չ թէ Վռամ ե.ին, այլ Յազկերտ բ.ին (439—457) վերագրելը. այլեւ Ակինեանն ուզում է, առանց որևէ հիմքի, Տաբարիի բացարձակ վկայութիւնը, թէ Մինրներսեհը Յազկերտ II-ի հրամանով մեծ զօրքով մտել է հռոմէական սահմաններըը, 421 թուին պատահած անցքերի արձագանք համարել։ Այն ինչ,— չարունակում է Ակինեանը,—Խոսրով I Անոշաւուանին չատ յարմար են եղիշէի նկարագրութիւնները: 540—562ի դէպքերն են կարճ, բայց իրական ակնարկներով պատմուած— Միջագետք մտնելը, այրելով ու կոտորելով մինչեւ Դարա հասնելը, որի ժամանակ հռոմէական քաղաքները չեն պաշտպանուում և ընկնում են պարսիկների ձեռքը. եկեղեցիներն այրուում են, բնակիչները կոտորուում, մնացածները գերի տարուում. Յուստինիանոս կայսրը ղուր փորձում է հաշտեցնել Խոսրովին, բայց յաջողւում է հաշտութիւն կնքել միայն 562ին՝ ամէն տեսակ զիջումներ անելով. հաշտութեան պայմանների մէջ էր նաև § 6-ը, որի համաձայն փախստականները երկու երկրներից էլ կարող են տները վերադառնալ. «եղիշէի նկարագրած արիւնահեղ, գերող, գերվող պատերազմը չէ մղուած ո՛չ Յազկերտ բ.էն է ո՛չ էլ ե. դարու ընթացքին», — եզրափակում է Ն. Ակինեանը.

Եւ Ակինեանը զարմանում է, թէ ի՛նչպէս մինչ այժմեան քննադատներն աչքաթող են արել այս հատուածը. Ու նորից մի անգամ էլ ամփոփում է իր եզրակացութիւնները. ա) Եղիշէի հետագայ խմբագիրն անունները փոխել է, բայց Զ. դարի դէպքերը ե. դարի հանգամանքներին չի յարմարեցրել: բ) Սկզբնագիրը 531—590 թուականների դէպքերն է նկարագրում. ըստ այդմ՝ «Հայոց պատերազմը» 572ի ապստամբութիւնն է և յաջորդ պատերազմները. գ) Գլխաւոր դերակատարն է Խոսրով I Անոշաւուան-Անմահը (531—579), խմբագիրն առիւծի գլուխը

կտրել է և «անոր տեղը աղուէսի խալամ մ'է դրած և ներկայացուցած մեզի աղուէս մը։ Յոսրով Անոչատուանի հզօր դէմքը, անարկու բարբառը, գիշատիչ մագիլները համարած է, թէ Ցաղկերտ բ.ի անուան տակ պիտի թագչեն»։ Մի այլ տեղում Ակինեանն ասում է. «Եղիշէ փորձած է դամձած Ցաղկերտը հակային հանդերձներով հրապարակ իջեցնել»։ «Յոսրով անունը փոխած է Ցաղկերտի, բայց յորջորջանքն Անոչատուան – Անմահ (յանմահից կարգի դնէր զանձն) վրիպած է իմաստքին ուշադրութենէն»։

Տեսնենք, ուրեմն, թէ ո՛րքան հիմնաւոր են Ակինեանի դիտողութիւնները երկու թագաւորների նկարագրների և նրանց վերագրուած պատմական գործողութիւնների մասին։

Ամենից առաջ՝ Ցաղկերտ բ.ի նկարագիրը Եղիշէի մէջ։ Արդէն ասացինք, որ Եղիշէն Ցաղկերտ բ.ին նկարագրում է իբրեւ մի պատերազմասէր, արիւնարբու, դաժան, քրիստոնեաների թշնամի, ամբարտաւան և անձնապաստան իշխան, որն իրեն մարդկային բնութիւնից վեր էր դասում և աստուածանման ու անմահ էր համարում, կա՞յ այս նկարագրի մէջ որևէ բան, որ արտաքոյ կարգի է, չի համապատասխանում պարսից մի թագաւորի բնաւորութեան և ստիպում է աւելի յարմարը փնտռել։ Նախ, րոլորովին չմտածուած է Ակինեանի այն առարկութիւնը, թէ Ցաղկերտը պատերազմասէր չէր, որովհետեւ մի քանի անգամ յաղթուել է, կամ աւելի ճիշտ, անյաջողութիւնների հանդիպել Քուշանների դէմ մղած արշաւանքների ժամանակ։ Կարելի՞ է ասել, օրինակ, որ Նապոլէոնը պատերազմասէր չէր, որովհետեւ յաղթուեց 1812 թուին Ռուսաստանում, 1813ին Ազդերի ճակատամարտում, Լայպցիգի մօտ կամ Վատերլոյում 1815 թուին։ Որ նա պատերազմ է սկսել յոյների դէմ և ապա երկար տարիներ կռիւներ մղել քուշանների դէմ իր պետութեան արեւելեան սահմաններում, աւելի շուտ ակնյայտ ապացոյց է նրա պատերազմասիրութեան։

Երկրորդ, ոչ մի կարիք չկայ ապացուցելու արեւելեան որեւէ բռնակալի դաժանութիւնն ու արիւնարբու լինելը, որովհետեւ այդ ինքնըստինքեան հասկանալի է, և աւելի շուտ հարկ

է ապացուցել, թէ որևէ մէկն ընդհանուր կանոնից բացառութիւն է կազմել, որ պարսիկ իշխողներին հեշտութեամբ կարելի էր «համպարիշտ, անօրէն, հպարտ և ամբարտաւան» մակդիրները կպցնել, դրա մասին մենք մի վկայութիւն էլ ունենք «Վկայք Արեւելից» ժողովածուի մէջ (Էջմիածին, 1921 թ., էջ՝ 186) Որմզդի վերաբերմամբ։

Բայց մի կողմ թողնենք Սղիշէին և տեսնենք, թէ ի՛նչ են պատմում օտարները Յազկերտի մասին, կարքա դը Բեթ Սլոքի նահատակների պատմութեան մէջ (տե՛ս G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig 1880. էջ 43 — 60) ասորի հեղինակը Յազկերտի մասին պատմում է, որ նա իր թագաւորութեան առաջին 7 տարին քրիստոնեաներին չի հալածել և առհասարակ էլ բարեացակամ է եղել, «իսկ 8-րդ տարում սպանել է իր դասերը, որը միեւնոյն ժամանակ իր կինն էր. եւ կոտորել է տուել իր պետութեան մեծամեծներին 1)։ Այնուհետեւ նա արշաւում է դէպի Զոլ նահանգը (տեղը հաստատապէս յայտնի չէ. ենթադրւում է կա՛մ Հիւրկանիայում, Գուրգանում, կամ Ճորա պահակի մօտերքը։ Վերջին դէպքում բոլորովին անբովանդակ է դառնում Ակինեանի վերեւում յիշուած հարցերից մէկը՝ Յազկերտը պատերազմ մղե՞լ է կովկասեան ազգերի դէմ) և նուաճում այնտեղի իշխանին, մի քաղաք է շինում և իր անունով Շահրեստան Յազդգերդ անուանում։ Այնտեղ եղած ժամանակ նա քրիստոնեաներին դուրս է հանում իր բանակից։ Ղորմելին կարծում էր, թէ թշնամիները նրան յաղթում են քրիստոնեաների պատճառով։ Եւ նա բնջրեց 10 հազար մոգ, ներքինացրեց տղաց և իր ծառայութեան մէջ առաւ. տղոցից տասերը մեռան այս դաստասացից։ Եւ Պարսից թագաւորների դրած այն կարգը, որի համաձայն իւրաքանչիւր ամսի սկզբին մի չարաթ չարունակ ամէն մի պաշտօնեայ կարող էր ներկայանալ թագաւորի առեանը և անարդար լուծում տացած խնդիրների մասին զեկուցել թագաւորին, այդ կարգն այս չարագործը վերացրեց» եւ այլն։ Այնուհետեւ պատմը-

---

1) Բոլոր ընդգծումները իմն են: Տ. Մինն:

ւում են քրիստոնեաների սատիկ և անողորմ հալածանքները։

Այս տեղեկութիւնները յայտնի են Ակինեանին, նա դրանք մինչեւ իսկ մէջ է բերում տեղ-տեղ, բայց չի տեսնում, որ քրիստոնէութեան թշնամի, դաժան եւ արիւնարբու լինելու աւելի ակնբախ վկայութիւններ փնտռել պէտք չէ։ Որ ժողովուրդը Ցազկերտ բ.ին մի դաժան և արիւնարբու չարագործ է համարել, այդ երեւում է նաեւ նրա դատեր ու կնոջ սպանութեան պատմութիւնից, ինչպէս միանգամայն իրաւացի նկատում է Նէօլդեքէն (Tabari, էջ 114, ծանօթ. 1), «թէեւ այդ (դատեր ու կնոջ սպանութիւնը) հնարաւոր է, բայց չատ էլ հաւանական չէ, որ պալատի ներսում կատարուած նման երեւոյթների մասին որևէ ճշգրիտ բան յայտնի դարձած լինի, Բայց յամենայն դէպս մենք տեսնում ենք, թէ ինջպիսի կարծիք կար այդ թագաւորի մասին»։ Սրա համար էլ Նէօլդեքէն Ցազկերտի մասին ասում է. «Սա հալածում էր թէ՛ քրիստոնեաներին և թէ՛ հրեաներին։ Առհասարակ էլ դժուար է նրա մասին որևէ լաւ բան ասել» (տե՛ս Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 106)։

Երրորդ, այն ամէնը ինչ մենք գիտենք Յոսրով I Անուշաւռւանի մասին, ընդհակառակը, բոլորովին չի համապատասխանում եղիչէի՝ Ցազկերտի նկարագրին։ Արդէն Ակինեանն ինքը մատնանշում է, որ Ֆիրդուսի, Տաբարի և այլն Յոսրովին նկարագրում են իբրեւ ժողովրդին երջանկացնող մի իշխանի, գովում են նրա արդարութիւնն ու քաջութիւնը և նրա ժամանակը համարում են Պարսից պատմութեան ամենաերջանիկ շրջանը։ Հայ պատմագիր Սեբէոսը նրա մասին ասում է. «Այս Յոսրով, որ կոչեցաւ Անուշ Հոգւան, ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն, յառաջ քան զապստամբութիւնս զայս, հաստատեաց զերկիր, քանզի է խաղաղասէր և աշխարհաշէն։ Եւ ի լինել ապստամբութեանն այնորիկ, յայնմհետէ ընդոստուցեալ զարթեաւ ի բարկութիւն, զանձն անվնաս համարեալ, իբր թէ «Հայր էի ամենայն երկրի, և ոչ տէր, և անուցեալ զամենես-

սեան իրրեւ որդի և սիրելի» (տե՛ս Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939, էջ 28)։ Հետաքրքրական է Տաբարիի պատմածը (էջ 266—267), թէ Խոսրով II-ը սովոր էր ժողովրդին ասել. «Մեր պապը՝ Խոսրով, Հաւատի որդին, ձեզ հօր նման էր նայում»։

Խոսրով I Անոշաւուանին այլ կերպ են նկարագրում բիւզանդացիները, և այդ լիովին հասկանալի է, որովհետեւ Խոսրով I նրանց ամենասիրելի թշնամին էր և շատ ամօթալի պարտութիւններ էր պատճառել նրանց։ Դրա համար էլ, օրինակ, Պրոկոպը նրա մասին ասում է՝ «կեղծաւոր, անագորոյն, արծաթասէր, սուտ, երդմնազրուժ, ամէն ամօթալի գործողութիւն կատարող, բնաւորութեամբ չատ չար» և այլն, մի կարծիք, որ Նէօլդեքէն չափազանցուած և անարդար է գտնում պարսից ամենալաւ և ամենաչնորհքով թագաւորներից մէկի մասին (տե՛ս Տաբարի, էջ 162)։ Սրա վրայ աւելացնենք նաև այն, ինչ որ Ակինեանն ինքն է բերում Գիւտերբոքի գրքից («Բիւզանդիոն և Պարսկաստան», Վիեննա 1911, էջ 53—55) նոյն թագաւորի մասին։ Գիւտերբոքն ասում է. «Բայց դրսեւորուած պակասութիւններէն (Պրոկոպի յիշած) չատերը արեւելեան բռնապետի մը նախատիպ պատկերը կը ստուերագծեն և պարսկական ազգային նկարագրին կը համապատասխանեն։ Այստուհանդերձ նշանաւոր իշխող և Սասանեան հարստութեան ամենահոյակապ թագաւորն էր։ Գիտցաւ արեւմտեան մտաւոր մշակութեան արժէքը գնահատել։ Եթէ նոյնիսկ առասպել ըլլայ յոյն փիլիսոփայութեան մէջ խորամուխ ըլլալը, բայց իրողութիւն է, որ հռովմէական պետութենէն վտարուած նոր պղատոնականաց համար ապաւէն ըրաւ Տիզբոնը և Ջերմապէս բարեխօսեաւ Ցուստինիանոսի, որ անվնաս ետ դառնալ կարենան իրենց հայրենիքը»։

Այս բոլորից հետեւում է, որ Եղիշէի տուած նկարագիրը ամէն կողմից չատ աւելի համապատասխանում է Ցազկերտ Բ.ին, քան թէ Խոսրով I-ին և առհասարակ էլ մի նոր թագաւոր փնտռելու ոչ մի կարիք չկայ։

Այնուհետեւ, ինչպէս տեսանք, Ակինեանը չատ մեծ նշանակութիւն է տալիս Եղիշէի այն խօսքերին, թէ թագաւորն իրեն

ձեւացնում է մարդկային բնութիւնից բարձր, աստուածանման եւ անմահ, և այս բոլորը համեմատութեան դնելով Խոսրով I-ի Անոշաւուան մականունի հետ, որ նշանակում է «անմահ հոգի, անմահ», գալիս է այն եզրակացութեան, թէ այստեղ նկարագրուած թագաւորը միայն Խոսրով I կարող է լինել։

Նախ, Ակինեանն այնպէս է գրում, կարծես Խոսրով I ինքն է իրեն այդ մականունը տուել, որ ոչնչով հաստատել չի կարելի։ Նոյն իսկ ժամանակակից վկայութիւններ Խոսրովի այդ մականուան մասին չեն հաղել մեզ (Nöldeke. Tabari, էջ 136, ծանօթ. 2)։ Երկրորդ, յայտնի է, և Ակինեանն էլ գիտէ այդ բանը Նէօլդեքէից, որ «անապատն չրջանի պարսիկները «Անոշակառուան» կը գործածեն «երանելի» իմաստով վախճանուածների համար»(Tabari, նոյն էջ), մի իմաստ, որ լիովին համապատասխանում է մեր «բարեյիշատակ», «երջանկայիշատակ» եւ «ողորմած հոգի» մակդիրներին, և որ հաւանօրէն հետագաներն են տուել Խոսրով I-ին՝ չեշտելու համար նրա գրական գործունէութիւնը։ Նէօլդեքէն ինքն այս ձեւով է հասկացել և Խոսրով I-ի այդ մականունը թարգմանել «der Selige = «երանելի». «Chosrau I, mit nem Beinamen Anôscharvan «der Selig» ist jedenfalls ein grosser König gewesen» (տես Aufsätze zur persischen Geschiche, Leipzig 1887, էջ 133)։ Եւ վերջապէս, երրորդ, այդ ո՞ր արեւելեան բռնակալն է, որ իրեն սովորական մարդ է համարել և իր ծագումն ու յատկանութիւնները մինչեւ աստուածները չի հասցրել. ինչո՞ւ պէտք է հիմա այդ արտօնութիւնը միայն Խոսրով I-ի համար պահուի։ Մի՞թէ Ակինեանին յայտնի չէ, որ ո՛չ միայն արեւելեան թագաւորներն իրենք, այլ նաեւ նրանց հպատակները սովորութիւն ունէին իրենց թագաւորներին աստուածների հետ համեմատելու, աստուածների հետ կապելու եւ աստուածային պատիւներ մատուցանելու նրանց։ Այդ սովորութեան ու հայեացքների մեղմացած արձագանգն է, անկասկած, քրիստոնէական չրջանի թագաւորների սիտղոսի մէջ մի չատ գործածուող «ողորմութեամբ Աստուծոյ» արտայայտութիւնը։ Մեր ասածի ճշտութիւնը և Ակինեանի փաստարկման անհիմնութիւնն ակնառու ցոյց տալու համար մենք մի քանի վկայութիւններ կը բերենք

հէնց մի միայն Ղազար Փարպեցուց, վկայութիւններ, որոնք խիստ յատկանշական են։

Էջ, 154 (հրատ. Տփղիս, 1904). Պերոզ թագաւորի համար երկու անգամ ասուած է՝ «աստուածացման տէրն Պերոզ» և «ինքն աստուածացման տէրն Աբեաց Պերոզ»։

Էջ 175. Վահան Մամիկոնեանը Վաղարշ թագաւորին ասում է. այն, ինչ որ դուք արիք մեզ համար, մանկացուց մարդու համար անհնար էր և միայն Աստուած կարող էր անել... «որպէս եղէք աստուածաբար կենդանացուցիչ մեռելութեանս իմոյ... կամէի, թէ զբովանդակ անձս յարուցեալ էր, և ոչ զկէսս. վասն զնոյնի զկէսս մեռեալ տեսանեմ դեռ»։

Էջ 42. Միհրներսեհն ասում է Ցաղկերտին. «Արդ՝ քանի աչխարհք են, որում դուք իշխէք աստուածաբար...»։

Էջ 48. Հայ նախարարներն ասում են Ցաղկերտին. «Իշխանութիւն ունիս նման Աստուծոյ ի վերայ մեր և ամենայն մարդոյ...»

Էջ 93. Վեհդենչապուհն ասում է չահաստանի մարդկանց. «Ցիշեցէք զերկիւղ թագաւորաց, որք նման աստուածոց իշխեն սպանանել և կեցուցանել...»։

Էջ 79. Վարդանի քաջագործութիւնների վերաբերեալ ասւում է Ցաղկերտի մասին. «զոր իւր իսկ աստուածացման տեառն իւրովք աչօք տեսեալ էր ի Մարվիրոտ՝ զնորա քաջասքանչութիւնն...»։

Էջ 98. Վեհդենչապուհը Ցովսէփին ասում է. «Զի թէպէտ եւ թուին մեզ ծանր թշնամանքդ, որով թշնամանեալ ասացեր զմեզ անմիտս և կորուսեալս, սակայն առ համարձակապէսն յանդգնութեամբն, զոր իշխեցեր յաստուածացման թագաւորն ասել բանս անարժանս՝ իբրեւ զոչինչ թուին ի մեզ կողմն թշնամանքդ մեր անձանց և թեթեւութիւն»։

Այս սովորութիւնների և մտայնութիւնների պատկերը լրացնելու համար յիշենք նաև վրաց Աշուշա բդեշխի նօթահնար երկրպագութիւնը Ցաղկերտին.— «Ցարուցեալ ի խորանէն առաջի ամենեցուն անկեալ յերկիր հոլովէր այսր և անդր, և ապա հարկանէր զգուխ ի գետինն» (Փարպեցի, Էջ 107)։

---

1) Սրանց վրայ կարելի է աւելացնել նաեւ Մովսէս Խորենացու վկա-

Բերուած օրինակներից ամենայն ակնառութեամբ պարզըւում է, ուրեմն, որ տիրող հասկացողութիւնների և սովորութիւնների համաձայն՝ Յազկերտ Բ.ն էլ իրաւունք ունէր իրեն մարդկային բնութիւնից վեր եւ աստուածանման բան համարելու և ամենեւին կարիք չկայ եղիշէի նրա մասին ասածը վերագրելու Թեսրով I-ին և եղիշէին կեղծարար դուրս բերելու։

Մի այլ կէտ, որի վրայ չատ է կանգ առել Ակինեանը և որի հիման վրայ փորձել է ապացուցել, թէ եղիշէի սկզբնագիր պատմութիւնը վերաբերել է 531—590 թուականների դէպքերին, եղիշէի պատմութեան սկզբի հետեւեալ բառերն են Յազկերտի մասին. «Եւ առ յոյժ յիմարութեան իւրեւ զգազան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին, եւ բազում գաւառս Հռոմոց աւերեաց ապատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և անաթեկ արար զամենայն զօրս աշխարհին»։

Ակինեանը գտնում է ամենից առաջ, որ Յազկերտը որևէ նման արշաւանք չի գործել հռոմէական պետութեան սահմանները. եթէ նա մղած լինէր մի այդպիսի պատերազմ, «որ անաթեկ արար ամենայն զօրս աշխարհին», և որի «սարսափը հասած էր մինչեւ մայրաքաղաք», այդ չէր կարող բիւզանդական պատմիչներին և ասորիներին անծանօթ լինել, ինչպէս որ է իրօք նա, ինչպէս ասացինք, չի ընդունում Նէօլդեքէի և ուրիշների բացատրութիւնը, ըստ որի Պրոկոպի Pers· 1, 2 պատմած արշաւանքը պէտք է վերագրել ո՛չ թէ Վռամ V-ին, ինչպէս արել է Պրոկոպը թիւրիմացաբար, այլ Յազկերտ Բ.ին, մի բան, որ Նէօլդեքէն չատ հաւանական է դարձրել (Tabari, էջ 116, ծանօթ. 2)։ Բայց այս մի կողմ թողնենք։

Բանն այն է, որ Ակինեանը սարօրինակ կերպով չի ընդունում նաև Տաբարիի բացայայտ յիշատակութեան ճշտութիւնը, թէ Յազկերտի թագաւորութեան սկզբում հռոմայեցիները

թիւնը (Գիրք III, գլ. 55, էջ 330—331, Տփղիս, 1913). Որսի ժամանակ Ատոմ Մոկացին երկու անգամ ծաղրում է Խոսրովի մահից յետոյ հայոց թագաւոր նշանակուած պարսից արքայորդի Շապուհին՝ ասելով նրան. «Գնա՛, գնա՛, աստուածորդիդ Պարսից, եթէ այր իցես». երկրորդ անգամ էս, երբ կինն որսալիս կրակը շրջապատում է Շապուհին և Ատոմին և Շապուհը չփոթւում է, նոյն Ատոմ Մոկացին Շապուհին ծաղրում է հետեւեալ խօսքերով. «Աստուածորդիդ պարսից, ահա հայր քո և աստուած, ընդէ՞ր դանդիտես»։

դանդաղեցին վճարելու սահմանուած տուրքը պարսիկներին, որի պատճառով Ծազկերտը Միհրներսեհին մեծ զօրքով արշաւանքի ուղարկեց, և Միհրներսեհը իրականացրեց՝ Թագաւորի կամքը (Tabari, էջ 116)։ Նրա համար նշանակութիւն չունի նաեւ այն, որ Տաբարին որոշակի տարբերում է այս արշաւանքը վռամ V-ի օրով (421—422) տեղի ունեցած արշաւանքից, ասելով, թէ Միհրներսեհն ուղարկուեց այնքան զօրքով, որքան վռամ Vի ժամանակ կատարուած արշաւանքի ժամանակ (Tabari, էջ 116, հմմտ. էջ 108)։ Ակինեանի ամբողջ փաստարկութիւնն այն է, թէ մեծ արշաւանքների և արիւնահեղութիւնների մասին այդ վկայութիւնների մէջ խօսք չկայ, ընդհակառակը, այնտեղ կոնֆլիկտը լուծուել է անարիւն, մինչդեռ Եղիշէի պատմած արշաւանքները «ծանր հետեւութիւններ ունեցած են»։ Այս միտքը նա կրկնում է չարունակ. «Նոյն իսկ եթէ համաձայնինք, որ Պրոկոպիոսի յիշատակած դէպքը նոյնը ըլլայ Տաբարիի ակնարկած արշաւանքի հետ և հրատարակուած պատերազմը խաղաղացած ըլլայ անարիւն, չենք կրնար նոյնին հետ միաբանել Եղիշէին, որ արիւնահեղութիւններու մասին կը խօսի»։ Այստեղից Ակինեանը հետեւցնում է, որ Եղիշէի նկարագրութիւնը վերաբերում է 540ի արշաւանքին։ Այնուհետեւ Ակինեանը հատուածներ է բերում Եղիշէից և իր կողմից բացատրում է դրանք. նրա մէջ բերած կտորներն ու բացատրութիւնները այնքան բնորոշ են նրա բանասիրական մեթոդի համար, որ կարեւոր ենք համարում իբրեւ նմուշ մի երկուսը դնել այստեղ։

Եղիշէ

«Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն, արիւնահեղութիւն, վասն այնորիկ յանձ իւր տարուբերէր, թէ յո՛ թաւիեցից զղառնութիւն թիւնից կամ ո՛ւր բացատրեցից զբազմութիւն նետից։

Ակինեանի բացատրութիւնը

Սա ակնարկում է Մազդակեանց կոտորածը, արքայորդիների ու ներքանց զաւակների կոտորածը, նախարարների եւ արքայորդիների կողմնակիցների սպանութիւնը։ «Ասոնք 531—539 տարիները լեցուցին»։ 539ին պատրաստութիւններ հռոմէական երկիրն արշաւելու։

«Ինչո՛ւ խռովութիւնն ու արիւնահեղութիւնն այդ է և ո՛չ թէ Ծազկերտի օրով կատարուած մեր վերը նկարագրած գաղանութիւնները (իր դստեր և կնոջ սպանութիւնը, դարձեալ

աւագանիներուն կոտորածը, 10 հազար մոգերուն ներքինացումը, քրիստոնեաներուն արիւնահեղ հալածանքները), այդ յայտնի է, երեւի, միայն Ակինեանին։

«Եւ առ յոյժ յիմարութիւնն իբրեւ զգազան մի կատաղի յարձակեցաւ... և ահաւասիկ արար զամենայն դօրս աշխարհին»:

540ի արշաւանքի նկարագրութիւնն է, համառօտ, բայց կուռ. հասաւ Անտիոք. այրեց, աւերեց երկիրը—առանց դիմադրութեան: Զօրքըն ահաբեկուած էր և դիմադրութիւն չէր ցոյց տուեր:

Մենք տեսանք արդէն, որ Ցաղկերտ Բ.ի թագաւորութեան սկզբում տեղի է ունեցել արշաւանք և այն էլ մեծ զօրքով, իսկ ոչ մի այդպիսի արշաւանք առանց արիւնահեղութեան ու աւերումների չի լինում, Անհեթեթ է նաեւ Ակինեանի այն բացատրութիւնը, թէ հռոմէական զօրքը՝ դեռ դիմադրութիւն ցոյց չտուած ու պարտութիւն չկրած՝ անաբեկուել էր. Սակայն այս հատուածի մասին ստորեւ։

«Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի խաղաղասէր էր»... (Անատոլ զօրավարին ուղարկում է հաշտութիւն կայացնելու):

Թէոդոսն ու Անատոլը խմբագիրն է փոխել: Պէտք է լինի Ցուստինիանոս Ա., և ո՛չ թէ «խաղասէր» էր, այլ բանակներն զբաղուած էին Իտալիա և Աֆրիկա. դրա համար փորձեց հաշտեցնել Խոսրովին:

Բացատրութեան բռնազբօսիկութիւնն ու անհեթեթութիւնն այնքան ակներեւ է, որ չարժէ այդ մասին որևէ աւելի քան ասել։

«Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան, և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և եւս ի ձեռս նորա»: (Այստեղ Ակինեանը փակագծի մէջ իր կողմից աւելացնում է՝ «Ցուստինիանոս»):

Սա կ'ակնարկէ 562ի մշտնջենաւոր խաղաղութեան դաշինքի 6րդ կէտը, «Շատ փախստականներ կային — դասալիքներ քաղաքական կամ կրօնական պատճառներից դէպի դէպի Հռոմէական և ապաստան գտած էին» (Cüterbock, 104—107)— բոլոր այդ փախստականներուն խաղաղութեան դաշինքով (§ 6) անարգել թոյլ տրուեցաւ իրենց հայրենիքը վերադառնալ և ամէն պատիժ ազատ կացուցուեցան:

Անկանխակալ ընթերցողի համար միանգամայն պարզ է, որ Եղիշէի առածը և 562ի հաշտութեան 6րդ կէտը բոլորովին տարբեր բաներու մասին են խօսում։ Եղիշէն ասում է, որ կայսեր քաղաքում կային Քրիստոնեութեան պատճառով փախած պարսիկներ. սրանց բռնեց կայսրը և յանձնեց Ցազկերտին։ Ուրեմն, խօսքն անհատների մասին է, որոնք պարսիկ լինելով՝ քրիստոնէութիւն էին ընդունել և պարսկական օրէնքով մահապարտ էին, իսկ 562ի հաշտութեան 6րդ կէտը մի ընդհանուր երկուատեք թոյլտուութիւն է փախստականներին հայրենիք վերադառնալու։ Ի՞նչ կապ կարող է լինել ժամանակով ու բովանդակութեամբ իրարից միանգամայն տարբեր այդ երեւոյթների մէջ։

Եւ այսպիսի բանասիրական մարզանքներից ու հնարամտութիւններից յետոյ Ակինեանը եզրակացնում է դարձեալ, թէ սրանք բոլորը «դասական ապացոյցներ են», որ «Եղիշէի նկատի առած «իշխանը» միայն Խոսրով Ա. Անուշառուանը կրնայ ըլլալ և ակնարկուած դէպքերը 540—562ի պարսկա-հռոմէական պատերազմի պատմութեան էջեր են... Այնպէս բացայայտ են պատմագրին տողերն այստեղ, որ չատ գլուխ յոգնեցնել պէտք չկայ վերահասու ըլլալու համար իրողութիւններուն»։ Եւ զարմանո՞ւմ է Ակինեանը, «թէ ի՛նչպէս Եղիշէի քննադատները չէին անդրադարձած անոր մինչեւ այսօր։ Աւելի չօշափելի կռուան, քան որ կռուայ այս հատուածին մէջ մեզի Եղիշէ, չէր կրնար ապասուիլ»։

Սակայն, եթէ այս ամբողջ գործի մէջ մի զարմանալու բան կայ, այդ էլ հէնց Ակինեանի փաստարկումներն ու եզրակացութիւններն են, որոնք,— իր խօսքերով ասենք,— միանգամայն «բռնազբօսիկ են, երեւակայական և անզօր»։

Բանասիրական տեսակէտից իրօք մի չատ լուրջ խնդիր է, թէ ի՛նչպէս պէտք է հասկանալ Եղիշէի մէջ բերուած հատուածը՝ «եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուռեայց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին»։ Չէ՞ որ նոյն Եղիշէն մի երկու էջ ներքեւ Ցազկերտի հրովարտակի մէջ «Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ»

նոյն արշաւանքի մասին հետեւեալն է ասում. «Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղաղաց գնացաք յերկիրն Յունաց, և ԱՌԱՆՑ ԳՈՐԾՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԻՐՈՎ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն»: Այս ակնբախ ու բացայայտ հակասութիւնը չի կարելի վերացնել Ակինեանի այն ոչինչ չասող նախադասութեամբ, թէ «Այսպէս ճանչնալով յանձին արքայից արքայի՝ Խոսրով Ա.ի դէմքը, հասկանալի կ'ըլլան այնուհետեւ նաեւ հրովարտակին յոխորտ խօսքերը, յատուկ պարսկական մեծախօսութեան և Խոսրովի նկարագրին, թէ «առանց գործոյ պատերազմի», այսինքն՝ առանց թշնամու հետ բախում ունենալու՝ «սիրով մարդասիրութեամբ (?) նուաճեցաք զամենայն երկիրն (հռոմայեցւոց) մեզ ի ծառայութիւն», ակնարկելով այն տուրքը, զոր դրած էր հռոմայեցւոց վրայ (545) իբրեւ պայման զինադադարի» («Հանդէս Ամսօրեայ» 1931, էջ 603)։ Երեւի զգալով, որ իր ասածին բոլորովին չեն յարմարում «սիրով մարդասիրութեամբ» բառերը (երկիրներն աւերելը, եկեղեցիներն հրձիգ անելը, ժողովրդին թալանելն ու գերելը իսկապէս որ անկարելի է հաշտեցնել «սիրով մարդասիրութեամբի»ի հետ), Ակինեանը նրանց վերաբերմամբ հարցական նշան է դնում,

Մեզ թւում է, որ երկիրներ աւերելու վերաբերեալ կտորը պէտք է, նկատի ունենալով հրովարտակի վերեւ մէջ բերուած հատուածը, կա՛մ ճարտասանական չափազանցութիւն համարել, կա՛մ, որ աւելի հաւանական է, հետագայի ընդմիջարկութիւն. մանաւանդ որ այդ կտորը թիւրիմացութիւն կարող է առաջացընել և անիմաստ էլ է. ի՞նչ է նշանակում «եհար միջի ի քաղաքն Մծբին», Չէ՞ որ Մծբինը պատկանում էր Պարսից պետութեանը և նրա առաջաւոր բազան էր՝ հռոմէական նահանգների վրայ յարձակուելու համար. ուրեմն պարսից զօրքն աւերել ու հրդեհել էր իր սեփակա՞ն երկիրը մինչեւ Մծբին։

Մեր եզրակացութիւնն այն է, որ այդ հատուածի վրայ ոչինչ հիմնել չի կարելի և Ակինեանի փորձն այստեղ ևս ձախողուած պէտք է համարել,

Սակայն Ակինեանը իր կանխակալ կարծիքը հաստատելու համար ընդարձակօրէն քննութեան է առնում նաև Յազկերտի

արշաւանքների խնդիրը Քուշաններուն դէմ և այստեղ էլ ներքին հակասութիւններ է գտնում, անհամաձայնութիւններ Ղազար Փարպեցու հետ. կարծես Փարպեցին էլ ժամանակակից Եղիշէի նման պարտաւոր էր մանրամասն իմանալ ամէն գարնան կըրկնուղ այդ փոխադարձ մարտ-մուներ սահմանամերձ յարձակումներն ու ասպատակութիւնները թէ՛ պարսիկների և թէ՛ Քուշանների կողմից, և եթէ Փարպեցին անծանօթ է մնում դրանցից մի երկուսին իսկ չի յիշատակել դրանք իբրեւ աննշան բաներ, ուրեմն Եղիշէին պէտք է մեղադրել խարդախութեան մէջ։ Ակինեանի ասելով, օրինակ, սկզբնագրում եղել է Խոսրովի ԺԲ—ԻԱ տարիները (արշաւանքներ Հեփթաղների դէմ). այս թուերը Եղիշէն խարդախել եւ դարձրել է Դ—ԺԱ, օրպէսզի համաձայնեցնի Յազկերտի՝ քուշանների դէմ մղած առաջին արշաւանքները նոյն թագաւորի հետագայ արշաւանքի հետ, որ եղել է նրա թագաւորութեան ԺԶ. տարին։ Այս ձեւով վարուելով՝ Ակինեանը նոյն իսկ այն տեղն է հասնում, որ Յազկերտ Բ.ի քուշաններից կրած պարտութիւնները, յենուելով Եղիշէի վրայ, վերագրում է Խոսրով I Անուշաւուանին, որի մասին ոչ մի տեղից յայտնի չէ, թէ պարտութիւն կրած լինի քուշաններից յաղորդ հեփթաղներից. ընդհակառակը յայտնի է, որ Խոսրով I, թուրքերի խաքանի հետ միացած, ոչնչացրել է հեփթաղների պետութիւնը։ Ակինեանը չատ լաւ գիտէ, որ հեփթաղ անունն առհասարակ ծանօթ չէ Եղիշէին և նա այս արշաւանքների առիթով գործ է ածում քուշաններ կամ աւելի ընդհանուր հոներ անունը։ Բայց փոխանակ սրանից այն միակ ճիշտ և տրամաբանական հետեւութիւնն անելու, որ Եղիշէն իր պատմութիւնը գրել է մինչեւ քուշանների անհետացումը պատմութեան թատերաբեմից (468ին) և հեփթաղների ասպարէզ գալը, Ակինեանն այստեղ էլ փորձում է զանազան անհամոզիչ և նոյնիսկ անլուրջ բացատրութիւններով առաջ քշել իր թեզը. նա գրում է. «Տարօրինակ է հրովարտակի մէջ Քուշանաց աչքուռթիւն արտայայտութիւնը, քանի որ այդ պետութիւնն այլեւս չկար և Պարսկաստանի թշնամիները VI դարու առաջին կէսին Հեփթաղներն էին, Քուշանները 468ին հեռացած էին արդէն իրենց նախկին հայրենիքէն, թողնելով գայն աւար հեփթաղնե-

րուն, Ի՞նչպէս այժմ արքայից արքայ անունց յիշատակութիւնը կրնայ ընել, կը յիշեմ պարսիկ սուրհանդակին խօսքերը, ըսուած առթիւ Վերոզի սպանութեան լուրին, «Ամենայն մարդ տեսանել լոկ սիրով չկարէր զայրն հեփթաղ և կամ զանունն լոկ լսել, թող թէ կռուող ընդդէմ Հեփթաղի երթալ» (Փարպեցի)։ Իրօք ալ 485էն իվեր ոչ մէկ պարսիկ համարձակուած էր ոտքս կանգնել Հեփթաղին։ Այս էր թերեւս պատճառը, որ խոյս տըւած էր արքայն լսելի ընել Հեփթաղներու անունը»։ Ուրեմն արքայից արքայ հզօր Խոսրով Ա.ը, ըստ Ակինեանի, դէպ ի ժողով անելով Հեփթաղներէն դէմ կռուելու համար, և այն էլ Հեփթաղներէն պետութեան անկման ժամանակաշրջանում, հրովարտակի մէջ վախեցել է իր բանակին յայտնել, թէ ո՛ւմ դէմ են պատերազմելու, և խուսափել է հեփթաղների անունը տալուց, որպէսզի իր զօրքերը չսարսափեն։ Սրանից էլ աւելի անլուրջ և անհիմն առարկութիւն դժուար է պատկերացնել։

Նոյնպիսի անհեթեթութիւն է Հեփթաղների պետութեան կործանման (554-ին) մասին ակնարկ տեսնել Եղիշէի այն տողերի մէջ, որտեղ նա պատմում է, թէ Քուշաններէն թագաւորը չկարողացաւ Պարսից Ծաղկերտ թագաւորի դէմ դուրս գալ պատերազմով, այլ խուսափեց դէպի ամուր անառիկ կողմերը և «թախտեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօվն իւրով»։ Պարզ չէ՞ մթթէ, որ եթէ Քուշաններէն թագաւորը կարողացել է իր ամբողջ զօրքով խոյս տալ, որովհետեւ, երեւի յանկարծակիի եկած, չի վատահացել կռուի բռնուել, ապա ուրեմն նրա պետութեան կործանման մասին խօսք չի կարող լինել։

Ապա՝ Ակինեանը Եղիշէի մէջ գտնում է այս դէպքերի ժամանակագրութեան համար մի ամուր կռուան— «571ի աստղերու երեւումը «լուսալիր պայծառացեալ» և նոյն չրջանին տեղի ունեցած «երկրաշարժը» Այս կռուանի մասին ևս առանձին ոգեւորութեամբ է խօսում Ակինեանը. նա ասում է. «Համոզուելու համար, թէ ո՞ւր, ո՞ր դարուն ունի Եղիշէ իւր պատմական հողը, բաւական էին արդէն այն ապացոյցները, որոնց հասանք պատմական համեմատութեամբ։ Բայց չեմ կրնար անտեսել կարեւոր կռուան մըն ալ «Լուսալիր պայծառացեալ», որ ունի իր մէջ ոյժը՝ կոչելու ալ տեսանելի ընելու դարը, ուր կը գոր-

ձէ Եղիշէ... Բռնազբօսիկ էին թերեւս մեկնութիւններս, երեւակայական թերեւս համեմատութիւններս, և անզօր վերջապէս ապացոյցներս պարսկա-հռովմէական, պարսկա-հնդիթաղական և պարսկա-թրքական պատերազմներէն: Կարող են գտնուել մարդիկ, որ այսպէս դատեն։ Բայց թէ նաեւ աստղաբաշխական ապացոյցիս առջեւ պիտի ուզեն յամառիլ անոնք իրենց կանխակալ կարծեաց վրայ, անհաւատալի պիտի երեւայ ինձ»։ Եւ ապա բերում է երկու բերդերի առանց ձեռք տալու քանդուելը եւ «Լուսալիր պայծառացեալ» աստղերի երեւումը (Եղիշէ, III գլուխ), որոնցից առաջինը (բերդերի քանդուելը) բացատրում է երկրաշարժով, իսկ երկրորդը՝ («Լուսալիր պայծառացեալ» աստղերը)՝ մոլորակների կոնստելացիայով, որոնք երկուսն էլ պատահել են 570—571 թուականներին և վկայուած են արաբական պատմագիրների կողմից՝ կապելով իրենց մարգարէ Մահմեդի ծննդեան հետ։

Մի կողմ թողնելով մոլորակների կոնստելացիայի հարցը, որը պատմւում է բոլոր կրօնների հիմնադիրների ծննդեան առթիւ, և որով դեռ չի յաջողուել ոչ մէկի ծննդեան տարեթիւը որոշել (օրինակ, չի յաջողուել նոյնիսկ Քրիստոսի ծննդեան ճիշտ տարեթիւը աստղի երեւալով որոշել, և զանազան գիտնականներ զանազան տեսակ են հաշւում), այստեղ պէտք է ուշադրութիւն դարձնել հետեւեալ հանգամանքների վրայ։

Նախ, Եղիշէի համապատասխան տեղը, ինչպէս Ակինեանն էլ նշում է, շատ խանգարուած է. նրա շարադրութիւնն անկապ է և անյարիր թէ՛ նախորդ և թէ՛ հետագայ պատմուածներին։ Արդէն վերեւում պատմում է, որ ուխտապահները յարձակում են այն բերդերի և աւաններն վրայ, որոնք գտնւում էին պարսիկների ձեռքում և «տապալէին քանդէին զբնակութիւն նոցա» (այստեղ Եղիշէն թւում է առնուած բերդերն ու անմատոյց ամրոցները, թէ՛ մեծերը և թէ՛ փոքրերը), իսկ քնակիչներին գերի են տանում. քանդում-աւերում են, հրկիզում կրակի պաշտամունքի տեղերը և ամենուրեք կանգնեցնում են Քրիստոսի փրկական խաչը և վերականդանացնում քրիստոնէական պաշտամունքը։ Ապա Եղիշէն աւելացնում է՝ «Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առհասարակ»։ Սրա

տրամաբանական և բնական չարունակութիւնն սկսում է «Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս հաղարապետն Աղուանից առաքեալ եպիսկոպոսաւ աշխարհին...» և այլն հատուածով (տե՛ս Եղիշէ, Տփխիս, 1913, էջ 88 և 89), իսկ այս երկու հատուածների միջեւ ընկած պարբերութիւնները ճորից պատմում են բերդերի վրայ յարձակուելու մասին, որի ժամանակ նրանցից երկուսը առանց ձեռք տալու իրենք իրենց կործանուում են և առհասարակ զարմանալի հրաշքներ են պատահում («համեհայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորա և զարմանալիս»), որոնց մէջ են նաեւ «վառեալիր պայծառացեալ» աստղերը։ Եթէ Եղիշէն հետագայ խմբագրութեան է ենթարկուել և նրա մէջ յետագայ հատուածներ կան, իսկ այս ակնհայտ է, ապա այս խառնաչփոթ հատուածները պէտք է անկասկած այդպիսիների շարքը դասուեն։

Երկրորդ, Եղիշէի մէջ այդ հատուածներում ոչ մի ակնարկ չկայ երկրաշարժի մասին («Երկու մեծամեծ բերդացն պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան, մինչեւ ամենայն բնակչաց երկրին զահի հարեալ ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունս այրէին»), Այստեղ պատմուած է մի մաքուր հրաշք երիքովի պարիսպների կործանման կամ Ճեսու դատաւորի հրամանով արեւի կանգ առնելու նման (Ճեսու Նաւեայ, Զ. 20, ժ. 12—13), մինչդեռ երբ երկրաշարժի մասին է խօսքը, մեր պատմիչներն այդ բանը որոշակի բառերով հաստատում են։ Օրինակ, Եղիշէն VIII գլխում Ղեւոնդեանց նահատակութիւնից յետոյ. «Դարձեալ հասարակ գիշերաւ չափ ձայնք անեղք հնչէին, և բնդիւնի որոտաձայնի ի ներքուստ՝ որպես դղրդումն գետնաշարժի. երկիրն դողայր ի ներքոյ նոցա»։ Կամ Ղազար Փարպեցին (էջ 102) նոյն առթիւ. «Ծանկարծակի ինքին աւուր յերեկօրեայ գիշերոյն լինէր շարժումն մեծ ի տեղւոջն. բոմբիւնի ահագին եւ ձայնի ահագնի յանդնդոց հնչէին... ձայնք որոտմանց և փայլատակունք զլեռինս դողացուցանէին... քանզի դողումն մեծի շարժմանն ի վեր ոստուցեալ զնոսա ընկենոյր յերկրէ... և դադարեր երկիրն ի շարժելոյ»։ Կամ համմա. նաեւ Վկայք Արեւելից, Էջմիածին, 1921, էջ 234. «Շարժմունի եւ ձայն մեծ որոտման ի չորրորդում աւուր և կարկուտ և հողմ, մինչեւ զարհուրեցան ամենեքեան... Եւ

իջեալ հուր յերկնից և կիզեաց զպատապանսն և խարիճ բագնոց տաճարին կործանեցաւ և նշխարք սրբոյն (Յովսէփայ) աններեւոյթ եղեն ի տեղւոջնոյ, իսկ Եղիշէի համապատասխան հատուածում, ինչպէս տեսանք, ոչ մի նման նկարագրութիւն չկայ. այնտեղ պատմուած է միայն այն զարմանալի հրաշքներից մէկը, որոնք պատմւում էին բերնէ բերան ժողովրդի մէջ, ինչպէս Եղիշէն էլ հէնց ասում է՝ «ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում»։

Երրորդ, ժողովրդի մէջ պատմուած և մեր պատմագիրների մէջ անցած այդպիսի զարմանալի հրաշքների վրայ որևէ բան հիմնելը առնուազն միամտութիւն կը լինի։ Օրինակ, Փարպեցին վերեւ նկարագրուած երկրաշարժի մասին ասում է, թէ այն տեղի է ունեցել միայն երկու ասպարէզի չափ տարածութեան վրայ, որ անհեթեթութիւն է, կամ նոյն պատմագրի ասելով (մի բան, որ չկայ Եղիշէի մէջ), Ղեւոնդեանց մարմիններըը գըտնըւում են երկնքից իջած լոյսի շնորհիւ, որ գիշերը ցերեկուայ նման պայծառ է դարձնում։ Էլ չենք խօսում Ագաթանգեղոսի պատմած հրաշքի մասին Տրդատ թագաւորի և հայոց զօրքի մկրտութեան ժամանակ (Ագաթանգեղոս. հրատ. Գ. Տէր Մկըրտիչեանի և Ստ. Կանայեանի, Տփղիս, 1909, էջ 433—434), որ մի ամբողջ օր է տեւում։ Ծայռնի է, որ այդպիսի մի հրաշապատում դրոյց էլ ժողովրդի մէջ պատմուել և մեր պատմագիրների մէջ է մտել Մեսրոպ Մաշտոցի մահուան առթիւ (Կորիւն և Մովսէս Խորենացի)։ Նրա մահուան ժամանակ այն տան վրայ, «յորում երանելին վախճանէր», «խաչանմանն լուսաւոր չողաւոր ձեւով աքանչելի տեսիլ երեւաց, և ամէն մարդ ինքը տեսաւ այդ և ոչ թէ ընկերը պատմեց»։ Այդ նշանը երեւում է այնքան ժամանակ, մինչեւ որ Մեսրոպի մարմինն ամփոփում են Օշականում և «ապա նշանն աներեւոյթ լինէր» (Կորիւն, հրատ. Մ. Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 92—94, համմտ. Մովսես Խորենացի, III գիրք, կէ. գլուխ)։ Մենք աւելորդ ենք համարում այսպիսի երեւոյթների իրականութեանը «համապատասխան» լինելու մասին խօսել. թէեւ 1940 թուին էլ կարող են մարդիկ գըտնըւել, որոնք նման բաներն իրական են համարում և աշխատում են բացատրել «գագաղի վրայ դրուած ողորկ արծաթէ խաչի

ցոլացումով օդի մէջ խաղաղ եղանակին, արեգակի ճառագայթների տակ» (Ստ. Մալխասեանց, Մորենացի, աշխարհաբար թարգմանութիւն, ծանօթագրութիւն 344, էջ 340—341). Իբրեւ թէ հնարաւոր է, որ այսպիսի ցոլացումը մի քանի օր տեւի և բոլոր բազմութիւնը տեսնի, թէ կրօնական մոլեռանդութիւնը կամ հիւանդոտ երեւակայութիւնը ինչե՞ր տեսնելու և ինչե՞ր հնարելու է ընդունակ, դրա մի փայլուն ապացոյցն էլ հէնց Ստ. Մալխասեանի իբրեւ օրինակ բերած նորագոյն դէպքն է. «1893 թուին Մրիմեան Հայրիկի օծման ժամանակ ռուսաց պաշտօնական «Կաւկազ» լրագրի խմբագիրն անձամբ գնացել էր էջմիածին իբրեւ թղթակից իր լրագրի, և նա հոկտեմբերին հեռագրեց «Կաւկազ»ին, թէ օծման ժամանակ (որ կատարւում էր բաց օդում, տաճարի հիւսիսային պատի մօտ) օդի մէջ տաճարի վրայ լուսեղէն խաչ երեւաց, ոմանք այն ընդունել են իբրեւ լուսեղէն խաչ, ուրիշներն էլ ճանաչել են իբրեւ արեգակի շուրջը կապած բակ։ Այս մասին որքան գիտենք,— ասում է Մալխասեանը,— տպագրուած է նաեւ «Արձագանգ» թերթում»։ Նախ, եթէ նման բան տեղի ունեցած լինէր, այդ մասին ամենից աւելի պիտի խմբկահարէր էջմիածինն իր «Արարատ»ով, և երկրորդ, մէկը ես, որ այն ժամանակ 14 տարեկան պատանի էի և էջմիածնի ճեմարանի IV դասարանի աշակերտ ու անձամբ բոլոր աշակերտների հետ միասին ներկայ էի օծման ամբողջ հանդէսին, պէտք է այդ հրաշքը տեսած կամ գոնէ լսած լինէի։ Բայց ես այդ մասին առաջին անգամ լսում եմ 1940ին Մալխասեանի ծանօթութիւնից. Պարզ չէ՞, որ դա էլ ժողովրդի մէջ բերնէ բերան անցնող մի երեւակայական հրաշք է, որի թակ կամ խաչ լինելն անգամ չեն կարողացել ճշտիւ որոշել, և որն իր նպատակների համար փորձել է օգտագործել «Կաւկազ»ի խմբագիրը։

Մենք տյս պատմութիւնը բերինք միայն նրա համար, որպէսզի ցոյց տանք, թէ Սղիշէի մէջ պատմուած այդ ժողովրդական երեւակայական հրաշքներն էլ (բերդերի առանց ձեռք դպցնելու կործանուելն ու «Լուսալիր պայծառացեալ» աստղերը), անկախ այն հանգամանքից, թէ երբ են նրանք մտել Սղի-

չէի մէջ, անշուշտ նոյն տիպի երեւոյթներ են և նրանց վրայ հիմնուած եզրակացութիւնները ոչինչ ապացուցել չեն կարող։ Այնպէս որ բոլորովին իզուր է Ակինեանն իբրեւ «անհերքելի իրողութիւն ներկայացնում» իր եզրակացութիւնը և զարմանք յայտնում, թէ «ինչպէս E. Drouin և J. Marquart, նաև Th. Nöldecke, որոնք այնպէս վկայեալ տեղեակներ են 545—672 տարիներու հիւսիսական ազգերու և դրացի պարսիկ պետութեան քաղաքական յարաբերութիւններու մասին և մեծ ելեւէջներուն, չեն կրցած անդրադառնալ Եղիշէի պատմութեան հարազատ իմաստին ու յարած կանխակալ կարծեաց՝ չարունակած են օգտագործել զայն իբրեւ «ժամանակակից» աղբիւր Ս. դարու պարսիկ-քուշանական յարաբերութիւններու համար»։ Ցիշուած լուրջ գիտնականները չէին կարող, ի հարկէ, այդպիսի խաբուսիկ և երեւոյն հիմքերից այդքան ծանրակշիռ եզրակացութիւններ հանել։

Հետեւեալ ծանրակշիռ խնդիրը, որ բերում է Ակինեանին իբրեւ ապացոյց Եղիշէի կեղծիք լինելուն, Դենչապուհի Հայաստան գալն ու կատարած աշխարհագիրն է։ Ակինեանն ասում է. «Եթէ չունենայինք իսկ ուրիշ յենարաններ, դամագիտ ըլլալու Եղիշէի պատմութեան յօրինման թուականին, անոր պատմութեան չօշափած ժամանակներուն, բաւական էր այս աշխարհագիրն ինքնին գլխովին, բանալու համար աչքերը, թէ ո՞ւր կ'ապրի և ի՞նչ կը պատմէ պատմագիրը։ Կը խոստովանիմ, ինծի համար անակնկալ մը եղաւ, երբ կանգ առնելով աշխարհագրին քով ես ինձ հարց տուի, թէ ծանո՞թ է աշխարհագիրս պարսից պատմութեան, եւ թղթատելով Տաբարիի պատմութիւնը՝ կարդացի հոն հետեւեալ 1 Անոշաւուանի օրով տեղի ունեցած աշխարհագրի մանրամասնութիւնները, երկու պատմագիրներու հաղորդած տեղեկութիւններն ըստ ամենայնի նոյնը գտայ. անոնք կը լրացնէին և կը լուսաբանէին զիրար։ Կասկածս, որ գոյացած էր իմ մէջ նկատմամբ Եղիշէի պատմութեան հարազատութեան, ոստումով մը փոխուեցաւ ստուգութեան։ Եղիշէի գաղտնիքը լուծուած էր։ Ն. Ադոնց և Մանանդեան ալ աչքի

առաջ ունեցած էին այս տողերը, բայց կանխակալ նախապատ-
չարմունքը չէր թույլ տուեր հասկնալու Եզիչէին» (այլն 1):

Սակայն Տաբարիի և Եզիչէի համեմատութիւնը դոյց է տալիս, որ նրանց տուած տեղեկութիւնները ո՛չ միայն ըստ ամենայնի ճոյնը չեն, այլեւ հակաց կէտերում հակասում են միմեանց: Օրինակ, Տաբարին ասում է, թէ թագաւորը հրամայել է «այնպիսի օրէնք սահմանել, որ նպաստակներն իրենց աստիճանին համեմատ կարեցած բարեկեցիկ եւ հանգիստ կեանք վարել», կարգադրում է «գլխահարկ դնել բոլորի վրայ, դուրս հանելով ազատները, մեծամեծները, քինուորները, քահանաները, նոտարները և այն ամէնքը, որոնք արքունի ծառայութեան մէջ են», թագաւորը պահանջում է, որ պաշտօնեաները ճշտակուածից աւելի հարկ չպահանջեն, վնասուած հունձից հարկ չվերցնեն, 50ից վեր եւ 20ից ցած տարիք ունեցողներին ազատեն գլխահարկից *և այլն և այլն* (Տաբարի, էջ 241—247): Եւ Նէօլդեքէն էլ այդ առիթով բացատրում է, թէ հողահարկի կանոնաւորումը անչուշտ ձեռնտու եղաւ հատատարապէս թէ՛ նպաստակներին և թէ արքունի գանձարանին: Այդ հարկերի ծանրութիւնը չի զգացուել: Իսկ Եղիշէն ասում է, թէ Դենշապուհը եկեղեցին և հոգեւորականներին հարկի տակ դրեց և երկրի հարկը աւելի եւս ծանրացրեց: Այս երկու տեղեկութիւններն այնպէս բացարձակօրէն հակասում են միմեանց, որ նրանց հոյնութեան մասին խօսելը միմիայն կանխակալ կարծիքից գլխած քաչքչուկ է: Եւ իրօք, ի՞նչպէս քաչքչուկ չանուանել Ակինեանի այս առթիւ գրած տողերը. «Հարկերու փոփոխութիւնը, որուն նպատակն էր թէ՛ ժողովրդեան բարեկեցութեանը նպաստել և թէ արքունի գանձարանը հարստացնել, կ'երեւայ Եզիչէի տողերէն, թէ Հայաստանի համար մասնաւոր թեթեւութիւն չբերաւ (այս ճշտիկում է, Դենշապուհի հարկերն աւելի ծանրացրե՞ց). կա՛մ որովհետեւ, գոնէ Հայաստանի մէջ հին

---

1) Այդ աշխարհագիրը կատարելու կարգադրութիւնն արել է իսկապէս Կավատ I (488—531), որի օրով և հիմնականում տեղի է ունեցել այն: Խոսրով I-ը կարգադրել է միայն աւարտել գործը և ըստ այնմ հարկերը նշանակել: Տես Tabari, էջ 241—242: Ե. Տ. Մին.:

Աշխարհագրի խնդիրը: Եթե Դենչապուհը պետք է Հայաստանում նոր կարգեր սահմաներ, եկեղեցին ու հոգեւորականութիւնը հարկի տակ դներ և երկրի հարկերն աւելի ծանրացներ, ապա չէ՞ որ նա դրա համար պետք է ցուցակագրութիւն կամ աշխարհագիր անէր: Եւ Դենչապուհը Ղեւոնդեանց պատմարութեան ժամանակ յիշատակում է, ինչպես կը տեսնենք փոքր ինչ ստորեւ, որ նա տարի ու կէս չրջել է Հայաստանում՝ անշուշտ այդպիսի մի ցուցակագրութեան համար, ի՞նչ հարկն է ստիպում Հայաստանում յատուկ նպատակով կատարուած այս մանակի ցուցակագրութիւնը «ոստումով մը» նոյնացընելու պրեթէ մի դար յետոյ ամբողջ պետութեան մէջ կատարուած աշխարհագրի հետ: Չէ՞ որ մենք ուրիշ աղբիւրներից էլ տեղեկութիւն ունենք քրիստոնէական եկեղեցու հարկի ենթարկուած լինելու մասին. համմ. Վկայք Արեւելից, էջ 104—«Սահակ Պարթեւ հարկահանքն աննախարին հարկօք զազատութիւն եկեղեցւոյ և այնպէս ջանային, զի առ սակաւ-սակաւ բարձցեն զազատութիւնն», կամ «Ցամին հարիւրերորդի, եւթն և տասնեւերորդի թագաւորութեանն Պարսից, որ էր ամ երեսնեւերորդ առաջնորդ Շապհոյ արքայից արքայի, արկին ի հարկ զքրիստոնեայսն» (ուրեմն, 340/341 թուին), կամ՝ անդ, էջ 108 — «Այլ զհարկսդ, զոր եդիք՝ մեք յանձն ոչ առնումք: Զո՞ւ լիցի մեզ, որ եմք ազատ ի բնէ, մատանել ի ծառայութիւն մարդկան»: Մի՞թէ պարզ չէ, որ այդպիսի հարկեր դնելուց առաջ պետք է ցուցակագրութիւն կատարուէր, թէ քանի եկեղեցի կայ, որքան հոգեւորական կամ առ հասարակ քրիստոնեայ, որոնք հարկի ենթակայ են, իսկ եթէ հարցը վերաբերում էր մի ամբողջ երկրի, ինչպես այս դէպքում Հայաստանին, ապա պետք է ամբողջ երկրում ցուցակագրութիւն կատարուէր կամ աշխարհագիր արուէր: Ուրիշ ի՞նչ կերպով կարող էր երկրի դրութեան

մէջ այդպիսի հիմնական փոփոխութիւն կատարուել, հասկանալի չէ։

Այնուհետեւ, գալով Դենչապուհի հարցին, Ակինեան առաջարում է Եղիշէի յիշած Դենչապուհին և Ասողիկի յիշած մարզպան Դենչապուհին, որի գործունէութիւնն ընկնում է VI դարի երրորդ քառորդին՝ նրա կարծիքով՝ «երկու անձնաւորութիւնների նոյնութիւնը ամէն կասկածից վեր է»։ Ասողիկը (էջ 84) այս Դենչապուհի մասին միայն այսքանն է ասում, որ «զչնամոլութիւնն չատացոյց և զորմզդական հուրն վառեաց ի ներչուն նիս, և սաիպէր զբրիստոնեայս կրակի երկիր պապանել. յաղագս որոյ բազում ք մեռան»։ Այս նկարագրութիւնը և Եղիշէի Դենչապուհի գործունէութիւնը Հայաստանում բոլորովին չեն համապատասխանում իրար, Եղիշէի Դենչապուհը վերջն յիշուած չարիքներից և ոչ մէկը չի գործում Հայաստանում և ուրեմն ոչ մի բանական հիմք չկայ այդ երկու անձերի նոյնութեան հարց դնելու։ Բացի այդ, մենք տեսանք, որ Ակինեանը սխալւում է թէ՛ հարկերի և թէ աշխարհագրի վերաբերեալ հարցերում. ուստի և սրանից բղխող երկու Դենչապուհների մեացումն էլ պէտք է սխալ լինի։ Ցայտնի է Ղազար Փարպեցուց էս, որ V դարու Պարսից պետական գործիչների մէջ կայ Դենչապուհ կամ Վեհդենչապուհ անունով մէկը, որին յանձնարարւում է Ղեւոնդեանց դատաւարութեան և նահատակութեան գործը։ Ակինեանի դիտողութիւնը, թէ Դենչապուհին չպէտք է շփոթել Ղազարի Վեհդենչապուհի հետ, միանգամայն անտեղի է, որովհետեւ Ղազարն այդ միեւնոյն անձին թէ՛ Վեհդենչապուհ է անուանում (էջ 88, 89, 92—102) և թէ Դենչապուհ (էջ 97, 102—105), ուրեմն անուան մէջ ոչ մի տարբերութիւն չկայ։ Ապա, Եղիշէի մէջ մի հատուած կայ (VIII գլ., էջ 218—219 և 221), որ ոչ մի դէպքում չի կարող խմբագրական յատկացուած կամ փոփոխութիւն, ո՞ւր ինաց կեղծաւորութիւն լինել կամ վերագրուել VI դարի մարզպան Դենչապուհին, այնքա՞ն անմիջականութիւն կայ նրա մէջ և անձնական յիշողութիւնների հոտ է բուրում այնտեղից։ Այդ հատուածում Դենչապուհն ասում է հայ հոգեւորականներին. «Ծործամ եկի ես յաջխարհիս Հայոց՝ գտարի մի եւ վեց ամիս եհաս ծրծել ինձ ասդ. ոչ յիշեմ ես

աւելցնելի՝ եթէ բան մի տրտունջ յումեքէ լսեալ վասն քո (Սահակ եպիսկոպոսի), նոյնպէս և առաւել վասն Յովսէփայ. զի դա իսկ էր իշխան ամենայն քրիստոնէից և հաւատարիմ յամենայն իրս արքունի։ Նա և որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն՝ մեծապէս գոհ էր ղառնէս զայսմանէ. զի ես ինձեն աչօք իմովք տեսի, զի որպէս հայր հաստատուն համարեալ էր ամենայն աշխարհին, և անաչառութեամբ սիրէր զմեծամեծս և զփոքունս... Իմ զի աղ եւ հաց կերեալ է յոսխարհին ձերում, գութ և սէր ունեմ ընդ աշխարհն ձեր»։

Այսպիսով, բոլորովին անտեղի է V դարի Դենչապուհին, որ պատմական անձնաւորութիւն է, տեղափոխել VI դարի վերջերը և նոյնացնել մի ուրիշ անձնաւորութեան հետ, որ պատահաբար նոյնպէս Դենչապուհ անունն է կրում։

Այնուհետեւ, յայտնի է, որ Եղիշեի Յազկերտի մասին պատմում է, թէ նա հրեաներից հալածել է ո՛չ միայն Հայաստանում, այլ եւ Պարսկաստանում («Եւ և հրամայն յափշտակել զգրիստոնէից զինչս և զստացուածս, որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին» — I գլուխ, էջ 19)։ Այս մենք տեսանք արդէն նաեւ աստրական կարգա դը բնի Սլոքի վկայաբանութիւնից։ Յայտնի է նաև, որ Յազկերտը կրօնական տեսակէտից մի մոլեռանդ թագաւոր լինելով՝ առհասարակ հալածել է իր պետութեան մէջ եղած բոլոր մարդկանց, որոնք մազդայական կրօնին չէին պատկանում, օրինակ՝ նաև հրեաներին։ Ուրեմն Եղիշէի և աստաքինների տուած բնութագիրը Յազկերտ բ. մասին, ինչպէս արդէն նշել ենք, միանգամայն համընկնում է։

Այս ակնբախ հանգամանքներն եւս ստիպում են ասել՝ Ակինեանը փորձում է Եղիշէի ակնարկած քրիստոնէութեան ընդհանուր հալածանքները վերագրել Խոսրով I Անուշաւանին, թէեւ շատ լաւ գիտէ, որ այդպիսի մեղադրանքը բացարձակապես ո՛չ մի պատմական տեղեկութեամբ արդարացնել չի կարելի և միանգամայն հակասում է իրեն եւս քաջ յայտնի տեղեկութիւններին։ Այդպէս, Խոսրով I Անուշաւանը յայտնի է իբրեւ բաւականաչափ ազատ մտածող մի թագաւոր, որ հետաքրքրել է իրեր թէ յունական փիլիսոփայութեամբ և ուրիշ ազգերի կրօններով, թէեւ այդ հետաքրքրութիւնն, ըստ նէօլ-

դեքեի, հումորիստական բնույթ ուներ։ Յոսրով 1-ը մոլեռանդ մարդ չէր և մանաւանդ մոլեռանդ մազդայական չէր։ Նրա օրով եղած սակաւաթիւ մասնակի հալածանքները վերաբերում են ՄԻՄԻԱՑՆ այն պարսիկներին, որոնք քրիստոնեայ էին դարձել՝ ուրացնելով մազդայական կրօնը, մի բան, որ պարսկական օրէնքով պատժւում էր մահով։ Յայտնի է նաեւ, որ նոյնիսկ այդ օրէնքը գործադրւում, յատկապէս Յոսրով 1-ի ժամանակ, խստիւ չէր գործադրւում. օրինակ, Նեստորականների կաթողիկոս Մար-Աբան (մեռել է 552ին) և ուրիշները երկար տարիներ գործել են իբրեւ հոգեւորական, պետական պաշտօններ են վարել և չեն հալածուել։ Յոսրով 1-ը Գրիգոր Ռաժիկին գերութիւնից դառնալուց յետոյ տալիս է իր նախկին պատիւները, գիտենալով, որ նա ուրացել է մազդայական կրօնը։ Հետեւելով իր հօր՝ կաւատի քաղաքականութեանը՝ Յոսրով 1 վերահաստատել է նրա դրած օրէնքը — «Իւրաքանչիւր ոք ըստ հաւատս կալցի», և քրիստոնեաներին ոչ մի վնաս չի պատճառել։ 540 թ. Հոկտեմբերի Մար-Աբայի ժողովի որոշումների մէջ Յոսրովի մասին ասում է՝ «ողորմած և բարերար..., որի աչքը բոլոր արարածների փրկիչ Քրիստոսը չարժում է իր քարի կամքի համաձայն, որպէսզի ցա շարունցակ ցրա սուրբ եկեղեցու բարիքը խնդի» (Braun. das Buch der Synhados. Stuttgart und Wien. 1900. էջ 99)։ Գրիգորի վկայաբանութեան ակզբում էլ (Hoffmann. Auszüge. էջ 78) ասուած է. «Ցոյների 850 (=538/539) թուականին քրիստոնեաների վիճակը շատ երջանիկ էր. նրանք ամենուրեք եկեղեցիներ ունէին և ոչ ոք չէր կարող նրանց վնաս հասցնել, ինչպէս սահմանուած էր թագաւորական մի հրամանով։ Այս վիճակը տեւեց Պերոզ թագաւորի իշխանութիւնից մինչեւ Յոսրով թագաւորի տասերորդ տարին (539/540)։ Այս թուին մոգերը քրիստոնեաների դէմ հալածանք հանեցին. ուրեք քրիստոնեաները բոլոր (սակաւաթիւ) էին, այնտեղ բանդուեցին եկեղեցիները ու վանքերը»։ Այստեղից պարզապէս հետեւում է, որ սկզբունքային պետական հալածանք չի եղել քրիստոնէութեան դէմ, այլ միայն մոլեռանդ ամբոխի ելոյթներ, որոնք առանձին վնասներ չեն տուել և մեծ չափերի չեն հասել։ Բայց ասելի հետաքրքրական է նոյն վկայաբանութեան

հայերէն խմբագրութիւնը (Տ. Տ.— Մկրտիչեան, Դրիգոր Մանաճիհր Թաժիկ, էջ 22). «ի տասերորդի թագաւորութեան Խոսրովայ որդւոյ Կաւատայ Պարսից արքայի եւ հրամանն յարքայէ ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, որպէսզի զորս գտցեն յազգէ Պարսից խոսովանեալ ի Քրիստոս, կալեալ արգելցեն ի բանտ և խիստ տանջանօք բռնադատեսցեն, զի ուրացեալք զաստուածպաշտութիւնն՝ երկրպագեսցեն արեգականն և պաշտեսցեն զնոսա», Ինդիրը վերաբերում է, ուրեմն, դարձեալ միայն մաղդեզական կրօնն ուրացած պարսիկներին և ընդհանուր հալածանքների մասին խօսք լինել չի կարող։

Հարցը պարզ է. Խոսրով I Անոշաւռւանը երբեք ընդհանուր հալածանք չի հանել քրիստոնեաների դէմ, ինչն Ակինեանն այս բոլոր մանրամասնութիւնները մէջ բերելուց յետոյ ասում է. «Այնուհետեւ (յոյների հետ 562 թուին դաշինք կնքելուց յետոյ) չի յիշուիր, թէ Խոսրով հալածած ըլլայ քրիստոնեաները կամ իր օրով նահատակուած ըլլան նորադարձներ, Ընդհակառակը, չրջան առաւ հրապարակի վրայ այն գրոյցը, թէ Խոսրով իր մահուան անկողնոյն մէջ նեստորականներու կաթողիկոսէն ընդունած ըլլայ մկրտութիւնը» (Սեբէոս, Յովհաննէս Եփեսացի), ... «Հազուադէպ անգամ դատապարտած է Խոսրով քրիստոնեայ մը քրիստոնէութեան համար իմահ. իսկ թէ հրիստոնեայ մը բոնի մոգութեան դրդած է, կարելի չէ ապացուցել ժամանակակից աղբիւրէ, նկատի չառնելով Եղիշէն և իրմէ կախում ունեցող Յովհաննէս Եփեսացին», «Արեւելից արեւելի այս հանդուրժող բաղաքականութեան օնորին էր, որ Հայաստան յոյն-պարսկական պատերազմներու բովանդակ տեւողութեան մնաց պարսիկ դրօշին հաւատարիմ», ... Այսպէս, կրնանք ըսել, թէ մինչեւ 570 մօտաւորապէս հայերը չունէին մասնաւոր դժգոհութիւն մը արքայից արքայի վարած քաղաքականութեան դէմ և մասին կրօնի եւ եկեղեցւոյ», «զի չէր ուրուք ձեռն արկեալ յայանի յեկեղեցին» (Եղիշէ)։ Ուրեմն, ըստ Ակինեանի, քրիստոնէութեան դէմ հանած ընդհանուր հալածանքի պատճառը Խոսրով I-ի ժամանակ եղե՞լ է Թուինում մի Աստուշան կառուցելու խնդիրը. սրա համա՞ր է «Յովհաննէս Եփեսացու ժամանակակից Եղիշէն» քրիստոնէութեան ընդհանուր հալածանքներ հնարել

կամ եղած մասնակի դէպքերը սաստիկ չափազանցացրել, որպէսզի Խոսրովին քրիստոնեաներին թշնամի և հաստատած մարտ դուրս գերի։

Սակայն այս բոլոր անմտութիւններն ու հակասութիւնները Ակինեանն ինքն է ստեղծել, երբ, լինելով V դարու Հայոց սպատամբութեան պատմիչը, եղիշէն ոչ մի գործ չունի Խոսրով I-ի և 572-ի Հայոց սպատամբութեան հետ և երբեք չի կարող ժամանակակից եղած լինել VI դարի վերջերին սպրող Յովհաննէս Եփեսացու հետ։ Ու եղիշէի Յազկերտին տուած բնութագիրն էլ ամենևին չի կարող յարմարուել Խոսրով Կնի. Մի՞թէ հարկաւ Խոսրով I-ի մասին կարող էր ասուել, թէ նա անյաջողութիւններից այնքան է վհատուել ու իրեն կորցրել, այնպիսի ձեւով է սկսել խօսել, որ համենայն վզրուկքն և պատուականն նախատարքն, որ նստէին յատենին և ունկն դնէին յեղյեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պչնուին և զգլուխ ի վեր ոչ կարէին համբառնալ» (եղիշէ, էջ 105—107)։ Բնաւ ո՛չ, Որովհետեւ Խոսրով I ամենևին պատճառ չունէր վհատուելու. նրա գործերն ամէն տեղ յաջող էին գնացել մինչ այդ և արեւելեան պատերազմից կորագլուխ դարձողը նա չէ, այլ, ինչպէս տեսանք, Յազկերտ բ.ն է, ինչպէս ճիշտ պատմում է եղիշէն։

Բացի այն, որ Խոսրով I-ի անունը, չնայած հայկական սպատամբութեանն ու նրա հետ կապուած խնդիրներին, այնուհետեւ էլ սիրով ու երախտագիտութեամբ են յիշել քրիստոնեաները, այդ ակնբախ երեւում է այն հանգամանքներից, որ նախ՝ թէ՛ հայ և թէ օտար պատմիչները նրան մահուանից մեծ քրիստոնէութիւն են ընդունել տալիս, և երկրորդ, որ Խոսրովից դեռ հարիւր տարի յետոյ էլ քրիստոնեաները իրենց երախտագիտութիւնը դէպի Խոսրովը նրանով են արտայայտում, որ թաղում են նրա թոռան թոռ դժբախտ Յազկերտ III-ին, ինչպէս պատմում է իբն Ալթիրը III, 96 (տե՛ս Nöldeke, Tabari, էջ 162, ծանոթագրութիւն), որ անկարելի կը լինէր, եթէ նա իրօք քրիստոնէութեան դէմ ընդհանուր հալածանքներ հանած լինէր։

Այս մեթոդով չարունակելով իր ուսումնասիրութիւնը՝

Ակինեան հասնում է բազմաթիւ միանգամայն անընդունելի եզրակացութիւններին, որոնցից տեղի սղութեան պատճառով յիշենք միայն մի երկուսը։

Ակինեանը գտնում է, օրինակ, որ «Հայոց փափկասուն տիկնայքը» իրենց հայրենիքում չէին գտնւում, այլ փախել էին Կ. Պոլիս, և չարունակում է, թէ այդ տիկնանց յարքունուստ ռոճիկը Տիզբոնից չէր կարող լինել, այլ անշուշտ կայսեր նշանակածն էր։ Պարսիկներն ամէն ինչ յափշտակելուց և յարքունի գրաւելուց յետոյ ինչո՞ւ պիտի ռոճիկ տային նախարարների կանանց, — ասում է Ակինեանը. «Այս անհեթեթ պիտի համարուի անշուշտ»։ Նախ, բոլորովին անհասկանալի է, թէ ինչո՞ւ պիտի հայ նախարարների կանայք Կ. Պոլսում եղած ժամանակ «հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից», ինչո՞ւ նրանք ցերեկն արեւակէզ պիտի լինէին և գիշերը գետնաքեկ, չէ՞ որ Յովհաննէս Սիեւացի ժամանակակից պատմիչը պատմում է. և Ակինեանն էլ մէջ է բերում այդ, թէ փախստականներն «ընդունեցին կայսերական նուէրներ, պարգեւներ, մեծապատիւ հիւրասիրուեցին, շնորհուեցին տներ եւ բնդարձակ կայսերական բնակարաններ բոլոր անոնց, որոնք եկած էին անկէ (Հայաստանից) կաթողիկոսի հետ»։ Այս ի՞նչ անբացատրելի հակասութիւն է։ Երկրորդ, չէ՞ որ Եղիշէն VII գլխում պատմում է, թէ երկրի բերդերում ամրացած հայ իշխանները, լսելով Ցազկերտ II-ի ներման հրովարտակի մասին, մարզպանի միջոցով կամք յայտնեցին ներկայանալ թագաւորին՝ բացատրութիւններ տալու համար։ «Եւ դայս լուեալ թագաւորին, ոչ կապանօք՝ այլ արձակ ոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել։ Անդին վաղվաղակի զկին եւ զորդիս. եւ զինչս իւրաքանչիւր ետուն ի ձեռս մարզպանին, և ինքեանք փութանակի գնացին ի ամերոցն արքունի»։ Ի՞նչ է նշանակում այս, եթէ ոչ, որ անշուշտ թագաւորի հրամանով մարզպանին յանձնարարուած էր պահպանելու նրանց գոյքն ու ընտանիքներին, և որ դրա համար նրանց պէտք է ապրուստի միջոցներ կամ ռոճիկներ տրուէին։ Երրորդ, Ղազար Փարպեցին Պերոզի մասին ասում է՝ «կարգեաց ձեզ (հայ նախարարներին) ռոճիկ ի Հրեա, և կանանց ձերոց յաչխարհի իւրեանց» (էջ 180)։ Սա ցոյց է տալիս, որ այդ ձեւով ռոճիկ նշանակելու սովորութիւն Պարսկաստանում կար։

Հաւանօրէն Յազկերտ II-ի օրով հայ նախարարների կանանց համար սահմանուած ապրուստի միջոցները կամ Եղիշէի բառերով ասենք՝ «զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ» (VIII գլուխ) յետոյ, նախարարների դատապարտութեան հետեւանքով, կորուել էին և Պերոզի օրով նորից վերականգնուել։ Այսպիսով, զուտ երեւակայութեան արդիւնք է «նոյ փաթիլասուն տիկիններին» կ. Պոլիս տեղափոխելը։

Ապա Ակինեանն ասում է, թէ Շապուհի հալածանքներից յետոյ ակնարկուած հրովարտակը «միայն կաւատի կրօնի ազատութեան հրամանագիրը կրնայ ըլլալ» (Իւրք թղթոց, 60 և Անքէտս 120—123)։ Հարց է առաջ գալիս՝ ինչո՞ւ։ Չէ՞ որ հէնց Ակինեանն ինքը մէջ է բերում ասորական ժողովոց Գրքից, թէ արդէն Յազկերտ I (399—420) «վերատին հրամայեց տիեզերական ամենայն օրէնութեամբ իր բովանդակ պետութեան մէջ եղած այն բոլոր եկեղեցիները, որոնք իր հայրերու օրով քանդուած էին, ազատ արձակել այն ամէնքը, որոնք վանն Աստուծոյ փոքձըւած էին, իրաւունք տալ, որ հաւատայի եւ առաջնորդի, ինչպէս եւ կղերականի ազատ եւ աւետիսով ծոչին» (Braun, des Buch der Synhados, էջ 8)։ Ի՞նչ է այս, եթէ ոչ «կրօնի ազատութեան հրամանագիր», և ինչո՞ւ ուրեմն միայն նախորդ I կարող էր ասել, թէ «իմ հայրն ազատ է թողել կրօնը և պատուում էր եպիսկոպոսներին»։ Ո՞ւր է այստեղ հաստատակ տրամաբանութիւնը։

Այնուհետեւ, իրրեւ ապացոյց, թէ Եղիշէի մէջ ակնարկներ են պահուած կայսեր և Հայոց մէջեւ 572ի ապստամբութեան առիթով կնքուած դաշինքի, Ակինեանը բերում է հետեւեալ կտորները Եղիշէից, բայց միանգամայն բռնազբօսիկ կերպով իրեն ասածին հակառակ բառերը փակագծերի մէջ է առնում իբրեւ հետագայի յաւելում, կամ պարզ և հասկանալի ու իրենց տեղին գործածուած բառերի փոխարէն ուրիշներն է դնում. «Եւ իբրեւ այսպէս հաստատեցաւ [(և հաստաւ) օգնականութիւն յուսոյն նոցա ի մարդկանէ (կայսերէ), դարձեալ սուրբ եպիսկոպոսունքն քաջալերել սկսան զանձինս և զզօրսն ամենայն»։ Ակինեանը չի ղգում, որ այդ ձեւով փոխուած և միտքը հակառակ շրջուած նախադասութեան մէջ «դարձեալ» բառն անիմաստ

է պահանջում, իսկ հետապնդողականությունը բոլորովին անհիմն կարելի էր համարել «թեպետ և հայէին յիւրեանց սակաւութիւնն եւ յերկոցունց բազմաւորացն միաբանութիւն, ոչինչ վատասքարեալ զոլային... դիւրին է Աստուծոյ սակաւուն զբազմացն գործ գործել» և այլն, իսկ V դարու վարդանանց սպառամարտության համար այն միանգամայն տեղին է և հասկանալի:

Միւս օրինակը. «Ինձ կը թուի, թէ այս մեծ յաղթութեան (հայ-յոյն դաշինքի) մասին է խօսքը, երբ կ'ըսուի, թէ «իբրեւ այս ամենայն յաղթութիւն լինէր երկիւղածացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսք և երիցունք պատուէր հրամանի առեալ աշխարհին, զողջոյն ամին Քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած և զսոն պատերազմացն յաղթութեան (դաշինքն յաղթութեան) խառնել ի Ս. սոն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կայցէ մեծ յիշատակարանս այս ընդ Աստուածային անանց սոնին», իրրեւ բացատրութիւն Ակինեանն աւելացնում է. «Քաղոց ամիսը 570ին կը համապատասխանէր Յուլեան տարւոյ նոյեմբերի 3—Դեկտեմբեր 2 շրջանին, Հաւանօրէն այս միջոցին մեկնած էր Արտակ Փնուսի կոստանդնուպոլիս և վերադարձած Դեկտեմբերի մէջ, բերելով հետը կայսերական դիրը, որով կը խոստանար Յուստինիանոս օգնել Հայոց կայսերական զօրքով։ Այս ուրախալուր օրուան յիշատակը կը յանձնարարուի խառնել ի սուրբ սոն Յայտնութեանն Քրիստոսի...»։ Սակայն այս «բացատրութիւնը» չուտով մոռանում է Ակինեանը և հետեւեալ իսկ յօդուածում մի նոր բացատրութիւն է տալիս, իրարից բաժանելով իր հնարած «զաշանց հաստատութիւնը» և նիշէի «պատերազմացն յաղթութիւնը», Նոր բացատրութիւնը հետեւեալն է. «Քաղոց ամիսը 570/571 տարւոյն կը համապատասխանէր Յուլեան տոմարի 3/XI—2/XII ամսուն, ինչպէս տեսանք,— չարունակում է Ակինեանը,— այս ամսոյն կնքուած էր Հայոց և Յուստինիանոս կայսեր մէջ դաշինք։ Դաշանց հաստատութեան համար սահմանուած էին պահքն ու աղօթքը, իսկ «զսոն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ սոն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կայցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց սոնին»

պէտք է խմանալ այսպէս. յաղթութիւնը տարուած էր Փետրուարի 3ին, այն է Յայտնութեան տօնին քառասնօրէքի մէջ. այս պատճառով անոր յիշատակը տօնախմբել կը սահմանուի Յայտնութեան տօնին հետ»։ Դուրս է գալիս կատարեալ մի անհեթեթութիւն, յաղթութեան տօնը սահմանւում է կատարել ո՛չ թէ անմիջապէս, պահքից ու աղօթքից յետոյ նոյն տարին, որ բնական և հասկանալի կը լինէր, այլ «յաղթութեան» երեւակայական օրից՝ Փետրուարի 3ից ուղիղ 11 ամիս յետոյ, հետեւեալ տարուայ Յայտնութեան տօնի հետ, որովհետեւ չէ՞ որ նոյն տարուայ Յայտնութեան տօնն արդէն անցել էր։

Ո՞րքան պարզ ու բնական է այս քաշքշուքի հանդէպ Եղիշէի ասածը և նրա անբռնազբօսիկ բացատրութիւնը։ Յաղթութիւնը կատարուել էր 450 թուի վերջերին, 450/451 թուականին Զատից ամիսն ընկնում է Դեկտեմբերի 6ից մինչեւ Յունուարի 4ը ներառեալ. Յունուարի 5ին Ճրագալոյցն է, իսկ 6ին Յայտնութեան տօնը։ Ուրեմն պատուիրուում է Դեկտեմբերի 6ից մինչեւ Յունուարի 5ը պահքով և աղօթքով անցկացնել, իսկ պատերազմների յաղթութեան տօնը կատարել Յայտնութեան տօնի հետ միասին, խառնել նրա հետ։

Այնուհետեւ, հայերի և յոյների այս դաշնադրութեան առթիւ Ակինեանը գրում է. «Պատգամաւորութիւն մըն ալ ուղարկուած է կայսերանիստ քաղաք Հայոց եպիսկոպոսներու հաւատքական թղթով, ուղղուած քաղաքին եպիսկոպոսներուն։ Երկու եկեղեցիք, Հայոց եւ Յունաց, հաղորդակցութեան մէջ կր մտնեն այսու։ Նղբայրութեան գեղեցիկ առհաւատչեայ մը, որով կր զօդուին երկու եկեղեցիներու ներկայացուցիչներու սրտերը, իրարու աղօթակից կ'ըլլան քրիստոնէական կրօնի հաստատութեան համար»։

Սրա հանդէպ պէտք է ասել, որ նման հաղորդակցութիւն երկու եկեղեցիների միջեւ հնարաւոր էր միայն մինչեւ V դարու առաջին կէսը, մինչեւ 451 թուականը կամ Քաղկեդոնի ժողովը, և սրեցին՝ Եղիշէի պատմածն էլ միայն այդ ժամանակաշրջանին կարող է վերաբերել։ VI դարի 70ական թուականների համար այդպիսի հաղորդակցութիւն ընդունել բոլորովին անկարելի է։ Ակինեանն այստեղ, Հայոց և Յունաց եկեղեցիների «հաղորդակցութեամբ և գեղեցիկ եղբայրակցութեամբ» տարուած, արդէն

բոլորովին մոռացել է իր գլխաւոր աղբիւրներից մէկի բացայայտ վկայութիւնը։ Այդ աղբիւրը Յովհաննէս Եփեսացի պատմիչն է։ Նա, պատմելով հայերի Կոստանդնուպոլիս փախչելը Յովհաննէս Բ. կաթողիկոսի հետ, ասում է, որ հայոց եպիսկոպոսները, մայրաքաղաք գալով, սկզբում միաժուռեամբ գնում էին և հաղորդւում սինոդիտների (իմա՛ քաղկեդոնականների) հետ նրանց եկեղեցում։ Այդ բանն ի հարկէ հաճելի չի լինում միաբնակներին, բայց Հայաստանում էլ մեծ դժգոհութիւն է առաջ բերում։ Յովհաննէս Եփեսացին այդ մասին ասում է. «Երբ այս բանիր նրանց երկրում լսուեց, զայրացան նրանց վրայ թէ՛ մնացած եպիսկոպոսները եւ թէ երկրի բնակիչները. եւ նրանից խիստ (բաներ) գրեցին սրանց, որի մասին ժամանակը պահանջում է, որ լռութեամբ ծածկենք» (Եկեղեցական Պատմութիւն, Գիրք բ., գլ. 23)։ Ապա Յովհաննէս Եփեսացին պատմում է, որ դրանից յետոյ հայերը բաժանուեցին եւ առանձին համայնք կազմեցին։ Միխայէլ Ասորին (Ed. Chabot, էջ 344 ասորերէն բնագիր) բերում է մինչեւ իսկ կաթողիկոսին և նրա հետ եղածներին ուղարկուած սպառնական խօսքերը. «Եթէ դուք խառնուէք սինոդիտների հետ եւ նրանց հետ հաղորդուէք, ... մենք ձեզ այլեւս չենք ճանաչի, այլ միայնակ կը նզովենք»։ Ուշագրաւ է նաեւ այն, որ Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը (858—867, երկրորդ անգամ 878—886) Հայոց Զաքարիա կաթողիկոսին (855—876) գրած թղթում («Պրաւոսլ. Պալէստին. Սբորնիկ XI 1, էջ 181—182) վարդան Մամիկոնեանի համար ասում է, թէ Յունաստան գալուց յետոյ՝ «ի հաղորդութենէն ի բաց եկաց, ասելով՝ թէ վարդապետ մեր ոչ հրամայեցին մեզ»)։

Ահա թէ ի՞նչպիսի կերպարանք ունէր VI դարի երկրորդ կէսին հայ և յոյն «կրօնական եղբայրակցութիւնը» և ի՞նչպիսի անյարմար վիճակի մէջ կ՛ընկնի մարդ, եթէ բացարձակ պատմական վկայութիւնները մի կողմ թողնի և կանխակալ նախապաշարմունքների վրայ հիմնուած իր թէզիսն առաջ մղի։

---

1) *Այս ամբողջ անցուդարձի մասին տես* Ն. Տ. Միքաելեան, *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ. Էջմիածին* 1908, էջ 113—115։

Այս բոլորովին անհիմն թեղիսը պաշտպանելու համար է, որ Ակինեանն առաջարկում է «հոնցաց» բառի փոխարէն «յունցաց» կարդալ հետեւեալ նախադասութեան մէջ. «Դեսպանս արձակեցին յաշխարհն հոնաց բանս դնել ընդ նոսա և ուխտ հաստատել» (Փլ. III, էջ 100), առանց ուշադրութիւն դարձնելու, որ անմիջապէս դրան հետեւող բառերը՝ «և ի բազում յայլ ազգս բարբարոսաց, որ համագործք էին հոնաց աշխարհին... յանձն առին եւ զերդումն ֆիսոնեից» ամենեւին թոյլ չեն տալիս, որ այստեղ բարբարոս հոների փոխարէն քրիստոնեայ և ոչ-բարբարոս յոյների անունը դրուի։

Ակինեանը մէջ է բերում նաև այն հանգամանքը, որ Եղիշէն չէ չեշտում Ցովսէփի կաթողիկոս լինելը, մինչդեռ Ղազար Փարպեցին չեշտում է։ Այս առթիւ Ակինեանն ասում է. «Այս ընթացքը ակամայ կասկած կ'արթնցնէ մեր մէջ իմբագրին եթէ ոչ հայկական ծագման, գոնէ անոր Հայոց Եկեղեցւոյ պատկանելու մասին։ Նա հայ չրջանէն չատ հեռու՝ օտար չրջանակի մը մէջ ապրած ըլլալու է գիտնալ չկարենալու համար, թէ ի՛նչ էր հայ եկեղեցւոյ պետին իսկական տիտղոսը։ Օտարք կարող էին, նկատելով, թէ Հայոց Եկեղեցւ գլուխը Արարատեան դաշտի մէջ ունի իր նիստը, «Եպիսկոպոս Այրարատի» անուանել զինքը։ Ցամենայն դէպս, հայ ականջին չատ պակ կը հնչէ «Ցովսէփ եպիսկոպոս Այրարատայ», ուր կը սպասուէր «Ցովսէփ երէց, կաթողիկոս Հայոց Մեծաց»։

Նախ, խորթ է հնչում հէնց «կաթողիկոսի» կողքին «երէց» բառը դնելը և մենք ուրիչ անգամ այդպիսի առադրման չենք հանդիպում, գոնէ յաճախ չենք հանդիպում։ Երկրորդ, Ղազար Փարպեցին հէնց այդ պատճառով էլ մի քանի անգամ յատկապէս չեշտում է, որ Ցովսէփը ձեռնադրութեամբ միայն երէց է եղել, բայց կաթողիկոսական իշխանութիւն է վարել, և ապա միայն նրան առանց այլեւայլութեան կաթողիկոս է անուանում։ Այդ տեղերը հետեւեալներն են.

էջ 44—«Ցովսէփ, որ թէպէտ և երէց էր ըստ ձեռնադրութեան, այլ զկաթողիկոսութեան Հայոց զաթոռն ունէր ի ժամանակին»։

էջ 70 — «Սուրբ երէցն Յովսէփ, որ զկաթողիկոսութեանն Հայոց ունէր զաթոռ»։

էջ 71— «Հանդերձ երանելեաւն Յովսէփաւ, որ թէպէտ և զձեռնադրութիւն երիցութեան ունէր, սակայն յաթոռ կաթողիկոսութեանն էր վիճակեալ արժանաւորապէս»։

էջ 75—«Զսուրբ երէցն Յովսէփ, որ զկաթողիկոսութեանն ունէր զաթոռ ի ժամուն»։

էջ 78 — «Զսուրբն Յովսէփ, զարդարեւ զկաթողիկոսն Հայոց»։

էջ 79— Միայն Իշտունեաց Սահակ եպիսկոպոսի մասին է ասում, թէ նա ձեռնադրութեան և օծման լրիւ կարգն ունի, «իսկ այլքս և ես միապէս եմք ըստ կարգի քահանայութեանն»։ Յովսէփի մասին ասում է. «Զսա, զոր տեսանէք, թէպէտ և մանկագոյն քան զիս տեսանէք տիովք, այլ պատուով կարգեալ է արժանաւորապէս, և գլուխ է ամենայն Հայոց քահանայութեանց»։

Այնուհետեւ Փարպեցին վեց անգամ էլ Յովսէփին կաթողիկոս է անուանում (էջ 86, 92, 98, 100, 101 և 110) առանց որևէ բացատրութեան։ Այստեղից պէտք է անշուշտ եզրակացնել, որ Յովսէփը ձեռնադրութեամբ ու օծմամբ կաթողիկոս չի եղել, այլ Մեսրոպ Մաշտոցը վախճանուելիս նրան է յանձնել հայրապետական աթոռը իբրեւ «գլխաւորի, վերակացուի, տեղապահի», ինչպէս ասում է Կորիւնը (էջ 96), կամ «զաթոռ եպիսկոպոսութեանն տեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի վայոց ձորոյ, ի Խոզոցիմ գեղջէ», ինչպէս ասում է Մովսէս Խորենացին (III կէ, Տփղիս, 1913, էջ 358)։ Այս իմաստով պէտք է հասկանալ նաեւ Փարպեցու առաջին դրուագի վերջի պարբերութիւնը՝ «Զորոյ գնեաւ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն վայոց ձորոյ, ի գեղջէն որում անունն էր Խոզոցիմք»։

Այս է հաւանօրէն պատճառը, որ դէպքերին ժամանակով աւելի մօտիկ եղիչէն զգուշացել է Յովսէփին առանց այլեւայլութեան կաթողիկոս անուանելուց, և ո՛չ թէ չի իմացել Հայոց

եկեղեցու պետի իսկական տիտղոսը, ինչպես ենթադրում է Ակինեանը. մանաւանդ որ կաթողիկոս դառնալու համար այդ ժամանակներն անչուշտ պահանջւում էր արդէն Պարսից թագաւորի եթէ ոչ հաստատութիւնը, գոնէ հաւանութիւնը, ինչպէս ցոյց է տալիս Սանակ Պարթեւի պատմութիւնը և, բացի այդ, կաթողիկոսի տիտղոսի հետ կապուած կալուածական հարցեր էլ կային, որոնք Գրիգոր Լուսաւորիչի տան ժառանգութիւն լինելով՝ Սանակ Պարթեւի մահից յետոյ այլևս ուրիշ անձերի չէին կարող անցնել, որովհետեւ նրանով այդ տոհմը վերջանում էր. Հետագայի պատմիչ Փարպեցին, որի ժամանակ, երեւի, այդ հարցերն արդէն լուծուած էին և Սանակ Պարթեւից յետոյ արդէն մի քանի կաթողիկոսներ էին հայրապետական աթոռ նստել (Մեսրոպ, Մովսէս, Դիւտ և Յովհաննէս Մանդակունի, այլեւ Բաբգէն), կարող էր առանց դժուարութեան նաեւ կաթողիկոս անուանել Յովսէփ երէցին, որ նա, սակայն, ինչպէս տեսանք, առանց այլեւայլութեան չի արել։ Մի՞թէ Ղազար Փարպեցին (էջ 78)՝ «զարդարեալ կաթողիկոսն Հայոց» արտայայտութեան հէնց միայն «արդարեալ» բառը փայլուն ապացոյց չէ՞, որ ըստ Ղազար Փարպեցու էլ Յովսէփը «յroէ» կաթողիկոսական իշխանութիւն է վարել, բայց ձեռնադրուած կաթողիկոս չի եղել, հակառակ դէպքում իմաստ չէր ունենայ «արդարեալ» բառը։ Այս ամենից յետոյ՝ ի՞նչ զարմանալու բան կայ, որ ժամանակակից և դէպքերին ականատես պատմիչ Եղիշէն Յովսէփին կաթողիկոս անուանը չի տուել։ Այն էլ պէտք է ասել, որ Յովսէփին աստիճանով բոլորից բարձր, մեծ եպիսկոպոս և Այրարատի եպիսկոպոս անուանելով Եղիշէն դրանով արդէն բաւականաչափ չեշտել է նրա գերակայ դերը մեւս եպիսկոպոսների մէջ և օտարութիւն կամ խորթութիւն տեսնել դրա մէջ բոլորովին չի կարելի։ Ձպէտք է մոռանալ նաեւ, որ Եղիշէն նոյնիսկ Հռոմի պապին մեծ Հռոմի եպիսկոպոս է անուանում և առհասարակ էլ եպիսկոպոսին մի վայրի (այս դէպքում «Այրարատի») անունով կոչելը շատ աւելի հին և ընդունուած սովորութիւն է եկեղեցական հիերարխիայի մէջ, քան ամբողջ երկրի («Հայոց Մեծաց») անունով, և մինչեւ այսօր ոչ մի բնիկ հայի ականջին պաղ

չի հնչել «Եղիշէի Ցովսէփ եպիսկոպոս Այրարատայ, արտայայտութիւնը։

Իսկ Եղիշէի կամ նրա խմբագրի հայ լինելու կամ պոնէ նրա հայոց եկեղեցուն պատկանելու մասին կասկած յարուցելը սեփականամտաններից ծծուած ենթադրութիւն է, որ ոչնչով արդարացուել չի կարող, բացի ամբողջ խնդրին կանխակալ և միտումնաւոր մօտեցում ունենալուց։ Իսկապէս էլ ո՞ր եկեղեցուն կարող էր պատկանել Եղիշէն կամ նրա խմբագիրը։ Ցունա-հռոմէակա՞ն, բայց չէ՞ որ Եղիշէի խմբագիրն, ըստ Ակինեանի, ինչպէս կը տեսնենք, «կծու միաբնակ» մըն է»։ Միաբնակ մարդը նեստորական էլ չէր կարող լինել, ուրեմն մնում է ենթադրել, որ սորի միաբնակ է եղել։ Իսկ ո՞րտեղից է հապա այն անկեղծ և զուտ հայ հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը, որ իւրաքանչիւր էջից, և ի՞նչն է ստիպում այդպիսի վայրիվերոյ ենթադրութիւններ անելու այնպիսի չափազանց պարզ մի խնդրի մասին, ինչպիսին Ցովսէփ երէցի կաթողիկոսական իշխանութիւնը տեղապահութեամբ վարելն է և Եղիշէի նրան իրաւամբ կաթողիկոս չանուանելը։

Այս հարցի քննութիւնն էլ, ուրեմն, պարզում է, որ Եղիշէի սկզբնադիրն անշուշտ Ղազար Փարպեցուց առաջ է, և նրա պատմութիւնը իրաւի ժամանակակցի և ականատեսի պատմութիւն է, որ, ինչպէս տեսանք, ճշդրտութեամբ արտացոլում է ժամանակակից յարաբերութիւնները։

Նոյնքան և աւելի տարօրինակ ու անըմբռնելի են Ակինեանի կատարած բնագրական ուղղումներն ու վերականգնումները. այս ուղղութեամբ բաւական ենք համարում իբրեւ նմուշ միայն երկու օրինակ բերել, թէեւ նրանց թիւը շատ շատ է։ «Իսկ զօրականքն (իմա՛ եպիսկոպոսք և հաւատացեալք)... ոչ երբեք հեղգացեալ եմք յարքունի վաստակս, և ոչ խառնեալ վաստութիւն ընդ արութիւն քաջութեան (այսինքն՝ չենք գործած պետական օրէնքներու դէմ)» և այլն։ Փակագծերի մէջ բերուածներն, ըստ Ակինեանի, պէտք է եղած լինեն սկզբնական բնագրի մէջ, որի այժմեան տեքստը, այդպիսով, յարմարեցրել է խմբագիրը. դուրս է գալիս, որ եպիսկոպոսներն ու հաւատացեալները դարձրած է «զօրականք», իսկ «քաջութեան հետ երկ-

չոտուքիւն չխառնելն» էլ յոռնել է «պետական օրէնքների դէմ յանցանք չենք գործել» բառերի տեղը։ Սա տեքստի վերականգնում չէ, այլ բացայայտ կամայական փոփոխութիւն։ Այդպիսի բանասիրական մեթոդով կարելի է ամէն տեքստ վերածել իր տրամագծօրէն հակառակին և ապացուցել ամէն բան։

Երկրորդ օրինակը. «Նկատմամբ երեք եպիսկոպոսներու չարաչար մահուան կը գրէ Եզնիկ պարզապէս՝ «Եւ ահա իշխանութիւն առեալ չարաչար սպասաւորացն, զի զչորս զինուորս ի բուն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն... և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն (իմա՛ նոր բռնաբարներու վրայ)»։ Համեմատութեան համար ուշադրութեան արժանի են մեր ընդգծած բառերը. Եզնիկի 4 անձը Ակինեանը դարձնում է 3, բացատրելով Գ և Դ տառերի սովորական չփոթութեամբ, իսկ ի՞նչպէս են Եզնիկի աւագ զօրականները կամ իշխանները եպիսկոպոս դառնում, դրա մասին պէտք է հարցնել Ակինեանին։ Բացի այդ՝ Եզնիկի 4 նախարարները չեն սպանուում, այլ միայն չարչարանքների են ենթարկուում, մինչդեռ Ակինեանի 3 եպիսկոպոսները, ըստ Յովհաննէս Եփեսացու, մորթազերծ են արուում։ Այս դժուարութիւնն էլ ոչինչ է Ակինեանի համար և նա բացատրում է. Եփեսացին բերանացի պատմուածքից գիտէ դէպքը և «կարելի է պատմուածքին անճիշտ իմացման վերագրել», այսինքն՝ նրան ասել են, թէ եպիսկոպոսներին չարչարել են, իսկ նա թիւրիմացութեամբ հասկացել է, թէ մորթազերծ են արել։ Ընթերցէքն առհասարակ չատ կասկածելի է համարում այդ եպիսկոպոսների սպանութիւնը՝ վերագրելով այն կոստանդնուպոլիս փախած հայերի պատմածների չափազանցութիւններին, և Ակինեանն ինքն էլ վերջում աւելացնում է, թէ «հաւանօրէն ազատ արձակուեցան այս բանտարկեալները»։ Ուրեմն Ակինեանի ցանկացած նոյնացումն ընդունելու համար հարկաւոր է նախ՝ եպիսկոպոսների պատիժը թնթեւացնել, մորթազերծութիւնը փոխարինել միայն չարչարանքներով, երկրորդ՝ աւագ զօրականները պէտք է դարձնել եպիսկոպոս, և երրորդ՝ չորսը պէտք է դարձնել երեք. ուրիշ խօսքով՝ նախկին տեքստից ոչ մի բառ չպէտք է թողնել իր տեղում։

Բայց բոլորովին զաւեշտական է դառնում խնդիրը, երբ Ակինեանը փորձում է VI դարի անցուդարձով բացատրել թագաւորի հրամանը՝ այրուձիու բազմութիւնը Պահ դրան ներսում սրգելելու մասին։ Թողնենք, որ Ակինեանն ինքը խօսի. «Երբ Մսրովի յաղթ բանակը վերադառնում է Տիզբոն, թագաւորը հրաման է տալիս, որ Գրիգորին (Ռաժիկին) պահեն Տիզբոնի արեւելեան կողմը գտնուող Զկարթա գը Բեթ Բալան կոչուած դիւղը։ Թագաւորը թոյլ տուաւ, որ բանտին դուռը բաց մնայ, որպէսզի դէպի հոն խուժող բազմութիւնը կարենայ տեսնել վինքը» (Hoffmann, Auzüge, 82)։ — Այս բանը կ'ակնարկէ հաւանօրէն եղիշէ, երբ կը գրէ՝ «Անդէն ի ներքս Պահ դրանն արգելոյր զբազմութիւնն այրուձիոյն... և հրաման սաստիւ ի վերայ գունապանացն առնէին, թէ որ յարեւելս առ մեզ գայցեն թողցեն, իսկ յարեւելից յարեւմուտս՝ անանց լիցի ճանապարհն։ Եւ իբրեւ արգել և փակեաց զնոսա յամուր յանել գառապիղն, որ յիրաւի ասացի ամուր և անել, քանզի չիք անդ տեղի փախստի և թագստի, վասնզի չուրջանակի թշնամիք են բնակեալ»... և այլն։ Ի՞նչ տրամաբանութեամբ հնարաւոր է բանտի դռները բաց թողնելը, որպէսզի հետաքրքիր պարապ բազմութիւնը Գրիգոր Ռաժկին տեսնի, նոյնացնել Պահ դուռը փակելու հրամանի հետ, որպէսզի այրուձիու բազմութիւնը արեւելքից արեւմուտք չկարողանայ փախչել, միանգամայն անհասկանալի է. բայց առանց այն էլ այնքա՞ն ակնհարեւ է այս բացատրութեան անհեթեթութիւնը, որ կարիք չկայ այլեւս նրա վրայ երկարօրէն կանգ առնելու։

Անդրադառնալով Աւարայրի պատերազմում ընկած հայ նահատակների թուին, Ակինեանն իրեն թոյլ է տալիս ծաղրելու եղիշէին. «Նա աչխատանք չէ տարած գումարելու թուերը. արդիւնքը նշանակեր է Ղազարի համաձայն, առանց «փորձով» ստուգելու գումարը։ Աւելի՞ ապացոյցի պիտի կարօտինք խըմբագրին անճարակութիւնը յայտնանախատ ընելու»։

Եթէ այս գործում նախատելու արժանի մի բան կայ, այդ էլ հէնց Ակինեանի վերաբերմունքն է դէպի եղիշէն և դէպի իր առջեւ դրուած թուերը։ Այստեղ, յիրաւի, թուերի գումարման մէջ սխալ կայ, բայց այդ սխալը ո՛չ թէ եղիշէինն է, այլ Փարպեցունը։ Նա ասում է (էջ 72—73). «Եւ որպէս չատ խուզիւ և

բազում քննութեամբ հարցեալ և ուսաք գնահատակելոցն թիւս, որք ի տեղւոջ պատերազմին պահակեցան ընդ աւագ նախարարան՝ երկերիւր եօթանասուն և վեց այր։ Ել. ղորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով և կամ փղօք կոխեցին՝ եօթն հարիւր և յիսուն այր. որք լինին միահամուռ հազար երեսուն և վեց այր», Արդ՝ 9 աւագ նախարարներ+276+750=1035 և ոչ թէ 1036։ Իսկ ընդհակառակն (տե՛ս Վենետիկի տպագրութիւն 1893 թ., էջ 225—226) միանգամայն ճիշտ գումարուած տալիս է 9 աւագ նախարար+287+740=1036։ Ո՞վ է այստեղ, ուրեմն, ծաղրելին, թո՛ղ դատեն ընթերցողները։

Այնուհետեւ, տարօրինակ են Ակինեանի կատարած անձերի նոյնացումները. այնքան տարօրինակ, որ ոտիդ տակ այլեւս ամուր գետին չես զգում ամենեւին, այլ միայն մի բարակ լար, որի վրայով չենք կարծում, թէ մէկն էլ վստահանայ անցնել, բացի Ակինեանից։ Այդպէս, նրա ասելով, ընդհէր մէջ Մխիթարեանի համար գործածուած «դառնացեալ ծերը» պէտք է «անչուշտ արքայից արքայն լինի»։ Մխիթարեանի փոխարէն պէտք է կարդալ Վզուրկ Մխիր (Խոսրով I-ի ժամանակակից)։ Այս առթիւ Ակինեանն ասում է. «Եթէ պատմական համարենք յանուն Մխիթարեանի ընդհէրի քով պահուած նամակը, ինձ աւելի հաւանական կը թուի վերագրել զայն Վզուրկ Մխիրի և խոստագիրը կարդալ՝ «Վզուրկ-Մխիր Վզուրկ հրամանատար Երան և Աներան» («Հանդէս Ամսօրեայ», 1932, էջ 566)... «Ընդհէրի խմբագրիչը դիւրաւ կարող էր Ղազարի ազդեցութեամբ Վզուրկ Մխիրը դարձնել Մխիթարեան, որի վերջը — «մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ի տուն իւր» (Ընդհէր, գլ. VIII)— մեծ ճմանութիւն ունի Վզուրկ Միհրի վախճանի մասին պատմածին» (ընդգծումն իմն է, Տ.-Մ.)։

Իրօք, զարմանալի՜ մեծ է նմանութիւնը։ Միհրներսեհը պատօճառն է լինում և «անարգանօք» իր տունն ուղարկում, բայց հանգիստ ապրում է «մինչեւ gor վախճանի կեցաց իւրոց», մինչեւ իսկ արքունիք եւս ունենալուց կտրուած չէր և հնարաւորութիւն ունէր թագաւորի առաջ չարախօսելու կապեալ նախարարների մասին, բայց չէր ուզում այդպիսի բան

անել, մինչդեռ Վզուրկ Միհրի մասին պատմում է, թե ճա բանտարկում է, եւ ապա սպանում։

Տարբեր մարդկանց այս ձեւով «դիւրաւ» նոյնացնելու բազմաթիւ օրինակներ է տալիս Ակինեանը, բայց ամենից արտառոցը դրանց մէջ այն է, որ նա միմեանց հետ համեմատում է միեւնոյն անձի զանազան յորջորջումներն է համարում վաստակ Սիւնի—Վահան Սիւնի Շաւասպ—Դենչապուհ։ Սրանք բոլորն էլ զանազան տիպի բռնութիւններ են իգործ դնում Հայոց երկրում, և այդ բռնութիւնները համեմատելով իրար հետ, Ակինեանն ապացուցում է անձերի նոյնութիւնը։ Օրինակ, VI դարի Դենչապուհը չատացնում է «չնմոլութիւնը» (Ասողիկ, 84). Սուրէնը «չնայր ընդ կանայս ազատաց՝ ոչ առնելով զայրն առեր կնոջ իւրոյ» (Ասողիկ, 84), Շաւասպը մոգութիւն է ընդունում, քրիստոնէութիւնը և քրիստոնեաններին հալածում, բայց վերեւում յիշուած արարքներից ոչ մէկը չի գործում (Թովմա Արծրունի, կ. Պոլիս, 1852, էջ 85), Եղիշէի Դենչապուհը հարկերը ծանրացնում է, եկեղեցին հարկի տակ դնում և «յամենայն տան արար խառնուածիւն», բայց նրա վերաբերմամբ էլ խօսք չկայ չնմոլութեան կամ չնութիւն անելու մասին։ Սակայն այդ էլ ոչինչ. Ակինեանը նմանութիւնը կամ նոյնութիւնն ապացուցելու համար առաջարկում է «յամենայն տան արար խառնուածիւն» բառերն այդ մտքով հասկանալ, իբր «եղիշէն աւելի համեստ ձեւով է արտայայտւում»։ Աւելի հեռու գնալ իսկապէս որ չի կարելի։

Ահա այս ձեւով և բանասիրական այս մեթոդով Եղիշէն յայտարարւում է մի կեղծիք, որ առաջ գրուած է եղել 572-ի ապստամբութեան մասին, և ապա մի «անշնորհք», «սուտ», «երազատես», «անիմաստասէր», «վայրիվերոյ» խմբագիր խարդախել է և փարպեցուն ուղեցոյց ունենալով՝ վերածել 451-ի ապստամբութեան պատմութեան։ Ինչպէս երեւում է՝ Ակինեանը իր հայհոյանքներին ապացուցական զօրութիւն է վերագրում։ Սակայն այստեղ էլ ազատ չենք մնում Ակինեանի հակասութիւններից։ «Հանդէս Ամսօրեայ»ի 1931 թ. ի էջ 135-ում նա յայտարարում է, որ «Ա—Գ յեղանակներու մէջ սկզբնագրեն փոխրուած է ծաւ մաս, նաև Գ—Զ յեղանակներու գոնէ էական կէտերու

մէջ», իսկ նոյն համարի 187 էջում ինքն իրեն հակասելով ասում է. «Ամբողջ Ա. յեղանակն առհասարակ իր այժմեան կերպարանքին մէջ չի թուիր սկզբնական։ Անոր բովանդակութիւնը կա՛մ կրկնութիւն է Բ. յեղանակին և կա՛մ անկէ փրցուած էջ մը կը ներկայացնէ։ Ինքն իր մէջ չի կազմեր ամբողջութիւն, միանական միտք, չ'ամփոփեր որոշ ժամանակ, չունի նաեւ ինքնայատուկ սկզբնաւորութիւն, պատշաճ եղիչէի ճառագրական ոճին։ Ամբողջը կը հատարիմ խմբագրչեն»։

Ակինեանը փորձում է նաեւ բացատրել, թէ ի՛նչն է եղել այդպիսի կեղծիքի պատճառը և մի քանի անգամ անդրադառնում է այս հարցին. կարեւոր ենք համարում մէջ բերել նաև նրա այս բացատրութիւնները։ Մի տեղ նա ասում է ամփոփման մէջ, «572-ի դաշինքը հայերի և Բիւզանդիայի մէջ պատճառ եղաւ, որ պատերազմ չմղող բնակչութիւնը իր ունեցած չունեցածով փախաւ Բիւզանդիա և հռոմէական բանակը մտաւ Հայաստան, 20 տարի տեւող պատերազմների ժամանակ փախստականները օտարութեան մէջ չատ ազէտների ենթակայ եղան և հռոմէական բանակն էլ Հայաստանում զանազան չարիքներ գործեց։ Դրան միացան դաւանաբանական վիճաբանութիւններ։ Պատերազմը ձախողուեց. բազմաթիւ տարիների ընթացքում կրած նեղութիւնները զուր անցան։ Անէծքով յիշեցին եկող սերունդները 572-ի ապստամբութեան պարագլուխներին (Փիրք Թղթոց, էջ 93)։ Այդ պատճառով էլ, երբ լոյս տեսաւ եղիչէի պատմութիւնը, որի մէջ պատերազմին մասնակցողները նկարագրուում էին իբրեւ հերոսներ ու նահատակներ, իսկ ովքեր չէին մասնակցել, նշանակուում էին որպէս վախկոտներ, այս բանը Պարսից Հայաստանում հաւանութիւն չգտաւ։ Մանաւանդ որ գնահատւում էր ս. դաւիթը Բիւզանդիայի եւ հայերի միջեւ։ Դրա համար մտածեցին ամբողջը ուրիշ ձեւով դնել պարակ. հայերի առջեւ։ Գրուածքը յարմարեցուում է 451-ի ապստամբութեանը, որի հերոս Վարդան Մամիկոնեանը դեռ ժողովրդի յիշողութեան մէջ էր։ Թէեւ խմբագիրը չատ անչնորհք կերպով էր կատարել ձեւափոխութիւնը, բայց նրա կեղծիքը երկար ժամանակ մնաց չբացուած։

Մի այլ տեղում («Հանդէս Ամսօրեայ», 1931, էջ 183) Ակին-

հանն ասում է. «Ի՞նչ էր չարժառիթն այս վայրագութեան, ի՞նչ էր պատճառը այս սեւ վրէժխնդրութեան։ Ատելութիւնը հանդէպ հռոմէացւոց։ Ո՛չ կը փաստարանուէր հայ-հռոմէական ուխտադրութիւնը, միաբանութիւնը սուրբ ուխտին՝ կռուելու հայ հողի վրայ, քրիստոնէութեան անուան և կայսեր փառքին համար, ուր կը ներքողուէին իբրեւ նահատակներ ռազմադաշտերու վրայ ինկնողները, կռիւներու հետեւանքով հռոմէական հող փախստեայ եկեղեցականները, նախարարներն ու տիկնայքը հոն չարակնած է խմբագրիչը, յուզուած է իր մաղձը։ Չէ հանգուրժած տեսնել կամ լսել նման սերտ «միաբանութիւն» մը, կնքուած հայ ժողովրդեան և «անարի» հռոմէացւոց միջեւ։ Դաւանաբանական-հոգեբանական հողի վրայ գործուած է այս աւերն»։

Ապա՝ «Անաստոլիոսի և Ֆլորենտիոսի մասին ըսուած անարգական խօսքերը, որոնց մասնակից է նաեւ Մարկիանոս, իրենց ծագումն ունին կրօնական-դաւանաբանական հակասութեանց զգացումներէ, որոնք բունուած են խմբագրիչին սրտին մէջ և այս դէպքին գտած են առիթ արտայայտուելու...։ Խմբագրիչը հակաքաղկեդոնական մըն է և լաւ տեղեակ 448—451 տարիներու եկեղեցական պատմութեան»։

Վերջապէս, «Հանդէս Ամսօրեայ»ի 1936 թուի էջ 62 կարդում ենք. «Այստեղ խմբագրին անմիտ փոփոխութիւնները և հանդէպ Մարկիանոսի և անոր «ծառայից» ատելութիւնը կ'աղաղակեն մեծաձայն։ Խմբագիրը նախապաշարուած է կայսեր և անոր սպարապետի և հիւպատի մասին, կայսրը «անարի» է և Անաստոլիոս և Ֆլորենտիոս «անարգք և իվատ արանց, միանգամայն և անաստուածք», անշուշտ ո՛չ թէ անոր համար, որ անոնք խորհուրդ չտուին կայսեր՝ Հայոց աչակցիլ, այլ որովհետեւ մասնակցած էին անոնք Քաղկեդոնի ժողովին և դատապարտած Դիոկորոսն ու իր հետեւորդները, կծու միաբնեայ մըն է խմբագիրը, թաթխուած է. դարու հակաքաղկեդոնական վէճերու մէջ»։

Ուրեմն Ակինեանին այս եզրակացութեան է բերել և նրան Սղիչէի բազմադարեան «կեղծիքը» բաց անելու առիթել միմիայն Սղիչէի III գլխի համապատասխան հատուածը, որի մէջ Սղիչէն

պատմելով, թէ Մարկիանոս կայսրը չի կամեցել աջակից լինել հայերին, ասում է, թէ նա լսել է իր վատ ծառաներ Անատոլիոսի և Զլորենտիոսի խորհրդին, որոնք երկուսն էլ անարգ և վատ մարդիկ էին ու անաստուած. ուստի անարի Մարկիանոսը աւելի լաւ է համարել հեթանոսների հետ ունեցած խաղաղութեան դայինքը պահպանել, քան պատերազմակից լինել քրիստոնէութեան ասխարին։ Ասում ենք՝ միմիայն այս կէտն է եական կարեւորութիւն ունեցողը Ակինեանի փաստարկումների մէջ, որովհետեւ «Բիւզանդիայի և հայերի ս. դաչինքի» կամ «հռոմայներու և հայ ժողովրդեան միջեւ կնքուած սերտ միաբանութեան» էութիւնը տեսանք վերեւում, երբ խօսում էինք Կոստանդնուպոլսում քաղկեդոնականների ու այնտեղ փախած հայ հոգեւորականների ու իշխանների հազորդակցութեան տպաւորութեան մասին Հայաստանում, որտեղից հրահանգ ուղարկուեց փախածներին՝ ոչ մի կրօնական-եկեղեցական հաղորդակցութիւն չունենալ քաղկեդոնական հռոմէների հետ. իսկ թէ, միւս կողմից, ի՛նչպէս էին զգուեցրել այդ «ս. դաչնակիցները» հայ ժողովրդին բուն Հայաստանում կատարած իրենց անթոյլատրելի հարստահարութիւններով ու չարագործութիւններով, որի պատճառով և ժողովուրդն ատելով ատում էր յոյներին, այդ էլ քաջ յայտնի է պատմութիւնից և ծանօթ է նաեւ Ակինեանին։

Սակայն ամէն մի անկողմնակալ ու անկանխակալ բանասէր պէտք է ասի, որ Ակինեանի բերած վերջին հատուածում եւս ոչ մի կրօնական դաւանաբանական վիճաբանութեան հետք չկայ, ո՛չ էլ կարելի է որևէ բառից հետեւցնել, թէ խմբագիրը կծու միաբնակ է, որ «թաթխուած է է. դարու հակաքաղկեդոնական վէճերու մէջ»։ Եւ իսկապէս, ի՞նչ կայ նիւխէի ասածի մէջ արտասովոր և անբնական, Հայերը կռանքի ու մահու հայրենական պատերազմ մղելով պարսիկների դէմ՝ իրենց հաւատակից քրիստոնեաներից օգնութիւն են խնդրում, յոյս դնելով նրանց «արիութեան ու քաջութեան» վրայ։ Իսկ սրանք չկարողանալով կամ չկամենալով պատերազմ սկսել Պարսիկների դէմ՝ զլանում են որեւէ օգնութիւն հասցնել հայերին, որոնք այդպիսով մնայուն են մնում Պարսից հզօր պետութեան դէմ։ Պարզ

չէ՞ միթէ, որ այդ վերաբերմունքը պէտք է մեծ արտնեղութիւն պատճառէր հայերին և սաստիկ զայրացնէր հայրենասէրներին։ Աւելի չուտ կարելի է զարմանալ, որ Եղիշէն, ժամանակակից պատմագիրն ու քիւզանդացիների մերժման ամբողջ դառնութիւնն անձամբ զգացած մարդը, աւելի խիստ չի արտայայտուել Մարկիանոսի և նրա խորհրդատուների մասին, այլ բաւականացել է առաջնին «անարի», իսկ վերջիններին՝ «անարգ, վատ և անատուած մարդիկ» անուանելով։ Ամենաչատը, որ կարելի է այս հատուածի մասին ասել, այդ այն է, ինչ որ մենք ասել ենք մեր 105րդ ծանոթագրութեան մէջ՝ Ակինեանի գիրքը կարդալուց առաջ և որն այժմ էլ հարկ չենք համարում որեւէ չափով ձեւափոխել։ Այդ ծանոթագրութեան վերջում մենք ասել ենք. «Արդեօք Մարկիանոսի և նրա ծառաների դէմ ուղղուած այս նախատական խօսքերի մէջ չե՞ն արտացոլում նաև Քաղկեդոնի ժողովի (451 թ.) հետ կապուած հանգամանքներն ու այդ ժողովի չնորհիւ ամբողջ Արեւելեան կայսրութեան հաւատի մէջ կատարուած փոփոխութիւնը, որին բացասաբար է վերաբերում Եղիշէն»։ Ինչո՞ւ պէտք է Քաղկեդոնի ժողովից 10—12 տարի յետոյ, 460ական թուականների սկիզբին, իր պատմութիւնը գրող Եղիշէն, որ իր կրթութիւնն ստացել էր Կիւրեղի Աղեքսանդրիայում, այսքանը չկարողանար ասել Մարկիանոսի և իւրայիններէ մասին՝ նրանց արածի կործանարար հետեւանքները ամբողջ Արեւելեան կայսրութեան և մանաւանդ Պաղեստինի և Եգիպտոսի համար արդէն տեսնելուց յետոյ, և ի՞նչ հիմք կայ իր արդար զայրոյթն այդքան չափաւոր կերպով արտայայտող մարդուն է. դարու գործիչ և այն էլ «կծու մխիթարեայ մը» յայտարարելու։ Եթէ Եղիշէն է. դարում ապրող և այդ դարի հակաքաղկեդոնական վէճերի մէջ թաթխուած մէկը լինէր, անկարելի է, որ այդ հանգամանքը որեւէ կերպով արտայայտութիւն չգտնէր թէկուզ Արտաշատի ժողովի դաւանաբանական նամակի մէջ, որտեղ այդպիսի վէճերի հետք անգամ չկայ։ Բացի այդ՝ է. դարու մարդիկ Մարկիանոսին «անարի» չէին անուանում, այլ չատ աւելի խիստ մակդիրներ էին կպցնում նրան, ինչպէս «ամբարիշտ», «անօրէն», «վիրագ», «չարափառ» (Գիրք Թղթոց, էջ 119, 120, 121, 124, 143).

դարձեալ մի ցայտուն ապացոյց, որ Եղիշէին ոչ մի կերպով հնարաւոր չէ իր տեղից շարժել և VII դար տանել։

Այս հարցում էլ Ակինեանը փորձում է Փարպեցուն հակադրել Եզիշէին և ասում է՝ «Զգալի է Փարպեցւոյ գրչին տակ հանդէպ Մարկիանոսի խաղաղասէր զգացում մը, հակառակ հայոց խնդրանքին մերժման», բայց մենք պէտք է ասենք, որ այդ չատ բնական է և բացատրւում է նրանով, որ Փարպեցին գրել է դէպքերից 40—50 տարի անցած, երբ վէրքն այլեւս թարմ չէր, կրքերն իջած էին, հանդարտուած և չատ բան մոռացուած, և յոյների մերժումը կարելի էր դիտել իբրեւ մի ցաւալի, բայց անցած պատմական դէպք («կասեցուցին զմիտս թագաւորին, և վերատեցաւ ակնկալութիւն հայոց, որում ուշ եդեալ մնային, և ոչ պատահեցաւ», Ղազար Փարպեցի, էջ 74), մինչդեռ Եղիշէն իբրեւ ժամանակակից և գործին մասնակից անձ չատ աւելի սուր կերպով է զգացել յոյներից օգնութիւն չստանալու ողբերգութիւնը հայերի համար և այդ պատճառով էլ աւելի խիստ ոճով է արտայայտւել Մարկիանոսի և իր մարդկանց մասին, չանցնելով սակայն չափաւորութեան սահմաններից։

Արդեօք Ակինեանի այս բոլոր ապարդիւն ճիգերի պատճառն ու հիմքը «Հայ-հռոմէական ուխտադրութիւնը» չէ՞, որի երազական տեսիլքի ձախողումը «յուզել է նրա մաղձը», Ակամայ ստիպուած ենք զգում մեզ այսպիսի հարց տալու, երբ կարդում ենք, որ Ակինեանը կեղծիք է համարում նաև Եղիշէի «Անձեւացեաց» կոչուած ձեռագիրը։ Այդ ձեռագիրը, որ պատկանելիս է եղել մի օտարերկրացու, Սըր Զարվայթին, և որից Գալֆաեանը կատարել է իր հրատարակութիւնը, ճիշտ է, «մինչեւ այժմ չէ յայտնուած որեւէ մատենադարանի մէջ», բայց մի՞թէ սրանից հետեւում է, որ այդ օրինակը գոյութիւն չի ունեցել և Գալֆաեանը հնարել է այն։ Ահա թէ ինչ է ասում այս մասին Ակինեանը. «Գալֆաեան Տէրէն վարդապետի նկարագրութիւնը կատարած կ'արթնցնէ իմ մէջ, ամբողջ կեղծիք կը թուի։ Անուններըը, որոնք առաջ բերուած են ձեռագրին յիշատակագրութիւններէն, վիճաւուած ընտրուած անուններ կ'երեւան։ Ձեռագիրն իր արտաքին և ներքին յատկութիւններով այնքան խոր հնութեան կնիք չի կրեր... ինձ կը թուի, թէ Գալֆաեան հրապոյր մը,

ճոխութիւն մը տալու համար իր հրատարակութեան և առիթ զայն Մխիթարեան հրատարակութեանց բնծայելու համար, հանած է հրապարակ «բան Անձեւացեացն օրինակի» ճոխ վերտառութեամբ» (ընդգծումներն իմն են. Տ. Մ.)։ Ուրեմն՝ ո՛չ միայն Անձեւացեաց կոչուած ձեռագիրն իր բազմաթիւ յիշատակագրութիւններով, այլեւ Սբր Զարվայթին էլ հնարել, կեղծել ու յարմարցրել է Գալֆաեան վարդապետը՝ Մխիթարեանցերին իրենց հրատարակութեամբ ստուերի մէջ թողնելու համար։ Կարելի՞ է լրջօրէն հաշուի նստել այսպիսի ենթադրութիւններէ հետ և հնարաւո՞ր է որևէ լուրջ բանավէճ սրա շուրջը։ Ակինեանը բռնուած է ամէն տեղ կեղծիք տեսնելու հիւանդագին ցանկութեամբ, և նա սրարշաւ առաջ է ընթանում՝ ոտի տակ տալով ամէն արգելք ու խոչընդոտ և վճռապէս արհամարհելով ամէն մի իրական դժուարութիւն. նա արդէն Ղազար Փարպեցու ամբողջ Ա. դրուագն էլ կեղծիք է յայտարարել («Հանդէս Ամսօրեայ», 1935 թ., էջ 459)։

Այսպէս ուրեմն, Ակինեանը չի կարողացել համոզիչ փաստերով ապացուցել իր վեց գլխաւոր կռուաններից (տե՛ս վերեւ, էջ 42) և ոչ մէկը՝ Քննադատութեան չեն դիմանում ո՛չ Ցաղկերտ II-ի տեղ Յոսրով I Անուշառուանին դնելը, ո՛չ Ցաղկերտ II-ի պատերազմասէր չլինելու մասին արած անհիմն դիտողութիւնը, ո՛չ Ցաղկերտ II-ի բիւզանդացիների դէմ մղած պատերազմի ժխտումը, ո՛չ Թեոդոսիոս VI դարի վերջերը տեղափոխելը և ոչ էլ միւս մանր-մունր կէտերը։ Բոլորովին հնարաւոր չէ բռնաբռօսիկ համեմատութիւններով, երեւակայական նոյնացումներով ու անտեղի քաչքչուքներով Ղեւոնդին դարձնել 572-ի հայոց ապստամբութեան պատմիչ 1)։

---

1) Հարկ ենք համարում այստեղ նշել, որ այն ամէնը, ինչ մէջ է բերում ու բացատրում է Ակինեանը 572-ի ապստամբութեան կապակցութեամբ հայ և օտար աղբիւրներից, խիստ արժէքաւոր են և բանասիրութիւնը նրանց կողքից անցնել չի կարող։ Այդ էջերը Ակինեանի ամբողջ աշխատութեան կէսից աւելին են։ Ակինեանի ճակատագրական սխալն սկսւում է նրանից, որ նա փորձում է Ղեւոնդին էլ օգտագործել իբրեւ 572-ի ապստամբութեան աղբիւր։

Սրանով վերջացնում ենք Եղիշէի վերաբերեալ եղած բանասիրական քննութիւնների մասին մեր ասելիքը, որ առանց այն էլ չատ երկարեց և անցաւ արդէն մեզ տրամադրուած սահմաններից։

Մեր ընդհանուր եզրակացութիւնը հետեւեալն է.

Եղիշէ վարդապետի Վարդանանց պատմութեան սկզբնագիրն անկասկած Ե. դարի երկրորդ կէսի գործ է, գրուած ականատես մարդու կողմից, և վերաբերում է 451 թուի ապստամբութեանը։ Բայց, ինչպէս մեր բոլոր հին մատենագիրները, այնպէս էլ Եղիշէի պատմութիւնը հետագայում, գուցէ և Է. դարում, թերևս նոյնիսկ 572 թուականի ապստամբութեան և նրան հետեւող պատերազմների դէպքերի ու յիշողութիւնների ազդեցութեամբ, ենթարկուել է խմբագրման եւ որոշ փոփոխութիւններ ու յաւելումներ են մտել նրա մէջ, որոնցից մի քանիսը մատնանշեցինք։ Այդպիսի խմբագրական խառնափնթորութեան օրինակ կայ նաև VI յեղանակի պատերազմի նկարագրի մէջ, որտեղ «Ինդ էր տեսնել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց» հատուածն իր տեղում չէ և դժուարացնում է ճիշտ միտքն ըմբռնելը։ Բոլորովին իր տեղում չէ և հաւանօրէն խմբագրական յաւելում է նաև III յեղանակի վերջի Քրիստոսի մարդեղութեան վերաբերեալ հատուածը, որ սկսւում է «Այլ մեք ապրեալքս զօրութեամբ Աստուծոյ» բառերով և այլն, և այլն։

6. Վերը ասածներից յետոյ հեշտ է արդէն որոշել Եղիշէի Վարդանանց պատմութեան գրութեան աւելի ճշգրիտ ժամանակը։ Նկատի ունենալով I գլխում եղած «տրջք օրհասականք ընդ վախճանել չնչոյն հզօրագոյնս կռուին» հատուածը, որի մէջ խօսք է լինում թագաւորութեան մէջ տեղի ունեցող գժտութիւնների և երկպառակութիւնների մասին, որ կարող է վերաբերել միմիայն Ցազկերտ բ.ի մահից յետոյ եղած գահաժառանգութեան կռիւներին, պէտք է հաւանական համարել, որ Վարդանանց պատմութիւնը գրուած է 458 թուականից յետոյ, 460 թուականի չուրջը։ Խօսք կարող է լինել միայն VIII յեղանակը մի փոքր աւելի ուշ գրուած լինելու մասին, որովհետեւ նրա վերջում յիշատակւում են Պերոզ թագաւորի հինգերորդ տարուայ դէպքերը. «Եւ ի նմին հինգերորդ ամին զբազմաց նոցա

(հայ նախարարների) անդրէն զկեանս չնորհեաց, և այլոցն առ յոյն խոստացաւ՝ յամն վեցերորդ մխանգամայն արձակէ զամենեսեան կենօք եւ պատուով։ Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի»։ Պերոզի թագաւորութեան սկիզբը երկու կերպ է հաշուըւում. եթէ յիշենք նրա գահակալութիւնը Յազկերտի մահից անմիջապէս յետոյ, նրա առաջին տարին պիտի ընդունենք 457/458-ը, ուրեմն 5-րդ տարին կը լինի 461/462-ը, իսկ եթէ հաշուենք եղբօրն յաղթելուց յետոյ փաստօրէն արքայից արքայ դառնալուց, այսինքն 459 թուի Յուլիսի 30-ից, այդ դէպքում նրա 5-րդ տարին կը լինի 463/464 թուականը։ Ուրեմն Եղիշէի VIII գլուխը կամ յեղանակը գրուած պէտք է լինի ոչ ուշ 464/465 թուականից, երբ աքսորուած նախարարները վերադարձան Հայաստան, ինչպէս յայտնի է, Եղիշէն, չնայած իր խոստմանը, այդ վերադարձը չի արձանագրել։

7. Եղիշէի անուանով մնացած միւս գրուածքները։ — «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք» Վենետկի 1859 թ. հրատարակութեան մէջ բացի պատմութիւնից Եղիշէին են վերագրուում նաեւ հետեւեալ երկերը. 1. Բան խրատու յաղագս միանձանց (էջ 159—165), 2. Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց (167—198), 3. Յաղօթսն որ ասէ Հայր մեր (199—206). 4. Ի մկրտութիւնն Քրիստոսի (207—212), 5. Ի թաքոր լերին կամ յայլակերպութիւն Քրիստոսի (213—239), 6. Ի չարչարանսն Քրիստոսի (Ի խաչելութիւնն, ի թաղումն, ի յարութիւնն. յերեւումն աշակերտացն և այլն) (240—354), 7. Վասն դատաստանին և միւսանգամ գալստեան (355—356), 8. Վասն յիշատակաց մեռելոց (357—362), 9. Կանոնք վասն դիւահարաց (363—368), 10. Վասն հոգւոց մարդկան թէ ուստի՛ գան և առ՛վ երթան (369—376)։ Վենետիկի հրատարակիչները 3-րդ գրուածքից յետոյ դրել են հետեւեալ դիտողութիւնը. «Յաջորդ ճառքդ գտանին յանուն Եղիշէի վարդապետի, այլ հարազատութեանն և իմաստից չիք երաշխաւորել» (էջ 206)։ Բացի սրանցից՝ Եղիշէին վերագրուում է նաեւ «Արարածոց մեկնութիւն» վերնագրով մի գրուածք, որի կորուստը մեծ զրկումն է հայերէն դպրութեանց, և այս կորստեան ցաւն աւելի զգալի կ՛ընեն նորա հատուածները, զոր համանուն երկասիրութեանը մէջ

յառաջ կը բերէ Վարդան՝ մատենագիր ԺԴ. դարու (Հ. Գ. Զարբ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 348)։ Այս գրուածքներից Եղիշէին են պատկանում հաւանօրէն միայն Միանձանց խրատը և Ալլակերպութեան ճառը (գուցէ նրան կցուած Թաբոր լեռան նկարագրութիւնը միայն)։ Նոյնիսկ վերջինս կասկածելի է. իսկ մնացածները հաւանօրէն պատկանում են այլ և այլ Եղիշէների, օրինակ՝ Ամատունեաց Եղիշէ եպիսկոպոսին (Կիւլեսէրեան, անդ էջ 216—217) և ուրիշների։

Ինչ վերաբերում է «Արարածոց» մեկնութեանը՝ ապա պէտք է ասել, որ Վարդան Արեւելցու նոյն վերնագիրը կրող հաւաքական մեկնութեան մէջ պահպանուել են Եղիշէի այդ կորած մեկնութիւնից բազմաթիւ հատուածներ, որոնց հաւաքմամբ ու ճշտմամբ, ինչպէս և առանձին վիճակում մի քանի գրչագրերում պահպանուած հատուածների օգնութեամբ հնարաւոր է վերականգնել այդ աշխատութեան մեծագոյն մասը։ Ներկայումս ՀՍՍՌ Պետական Մատենադարանում Եղիշէին ընծայուող «Արարածոց մեկնութեան» այդ հատուածների հաւաքման ու ճշտման և հրատարակութեան համար պատրաստելու աշխատանքներով զբաղուած է պատմական գիտութիւնների թեկնածու ընկ. Լ. Խաչիկեանը։

8. Եղիշէի Վարդանացից պատմութեան հրատարակութիւններն ու թարգմանութիւնները. — Եղիշէն բազմաթիւ հրատարակութիւններ է ունեցել, որոնց ցուցակը դնում ենք ստորեւ.

1. Կ. Պոլիս, 1764։
2. Պետերբուրգ, 1774 ?։
3. Պետերբուրգ, 1787։
4. Նոր-Նախիջեւան, 1787 ?։
5. Կալկաթա, 1816։
6. Կ. Պոլիս, 1823։
7. Վենետիկ, 1828։
8. Վենետիկ, Մատենագրութիւնք, 1838։
9. Վենետիկ, 1852։
10. Վենետիկ, Մատենագրութիւնք, ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց, 1859։

11. Կ. Պոլիս, 1860.

12. Թէոդոսիա, 1861 (ըստ Անձեւացեաց օրինակի. հրատ. Հօրէն վրդ. Գալֆաեանի).

13. Փարիզ, 1861.

14. Մոսկուա, 1861:

15. Վենետիկ, 1864.

16. Երուսաղէմ, 1865.

17. Կ. Պոլիս, 1866.

18. Զմիւռնիա, 1867.

19. Կ. Պոլիս, 1871, 12⁰, էջ 474.

20. Կ. Պոլիս, 1871, փոքրադիր 4⁰, էջ 130 երկսիւն.

21. Կ. Պոլիս, 1873, վերջին, Բ. տպագրութիւնը.

22. Տփղիս, 1879 (Գ. Այվազովսկու հրատ. ըստ Անձեւացեաց օրինակի).

23. Մոսկուա, 1892 (Յ. Յովհաննիսեանի հրատ. ըստ Անձեւացեաց օրինակի).

24. Վենետիկ, 1893.

25. Վենետիկ, 1902 (Փորթուգալ փաչայի հրատ., ծանօթագրութիւնները իւրաքանչիւր յեղանակի վերջը).

26. Վենետիկ, 1903 (Փորթուգալ փաչայի հրատ., ծանօթագրութիւնները իւրաքանչիւր էջի տակը):

27. Տփղիս, 1904 (Ղուկասեան Մատենադարան Ա., ըստ Անձեւացեաց օրինակի).

28. Տփղիս, 1913 (Ղուկասեան Մատենադարան ԺԱ., ըստ Անձեւացեաց օրինակի).

(Համմա. Ակինեանի ուսումնասիրութիւնը, Կիւլեսէրեանի Եղիշէն և Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն, Վենետիկ, 1909).

Եղիշէի Վարդանանց Պատմութիւնը թարգմանուած և հրատարակուած է հետեւեալ օտար լեզուներով.

Անգլիերէն, Նէյմանի, Լոնդոն, 1830.

Իտալերէն, Կապելետիի, Վենետիկ, 1840:

Ֆռանսերէն, ա. Կապարաջի Կարապետի, Փարիզ, 1844. բ. Լանգլուայի (Collection des Historiens... de l'Arménie, t. II). Փա-

բիզ, 1869։ Այս նոյն թարգմանութիւնը տպագրուած է երկրորդ անգամ Փարիզում, 1905 թուին, H. Leclerq։ Les Martyres, VI մխայն տեղ-տեղ ոճը սրբագրելով։

Ռուսերէն, ա. Շանչեանի, Թիֆլիս, 1853։

բ. Դիլլենի, Խարկով. 1884 (ոչ լիակատար)։

Եղիշէի այս գողտրիկ երկը չորս անգամ էլ թարգմանուել է աշխարհաբար.

ա. Եղիշէ վարդապետի պատմութիւնը Վարդանի և Հայոց պատերազմի համար, թարգմ. Մարտիրոս Սիմոնեանց, Մոսկուա, 1863։

բ. Եղիշէի պատմութիւնը Վարդանի և Հայոց պատերազմի համար, թարգմ. Հ. Ղուկասեանց. Թիֆլիս 1891։

գ. Եղիշէ, §Վարդանանց Պատմութիւն, թարգմ. Գիւտ Աղանեանց, ա. ք., Թիֆլիս, 1911։

դ. Եղիշէի Վարդանանց Պատմութիւնը. աշխարհաբար թարգմանեց Յ. Վարժ., կ. Պոլիս, 1911։

Եղիշէից բաւական մեծ հատուածներ աշխարհաբար է թարգմանել նաև Կ. Կոստանեանը իր «Հիւսուածք Հայոց հին պատմագիրների խօսքերից» աշխատութեան բ. գրքում. Տըփղիս, 1894, երկրորդ տպագրութիւն։

Մեր թարգմանութիւնն իրրեւ լրիւ թարգմանութիւն հինգերորդն է։

9. Ներկայ թարգմանութեան հանգամանքները.—Այս թարգմանութիւնը կատարուած է հիմնականում Անձեւացեաց կոչուած օրինակից, որը Եղիշէի պատմութեան լաւագոյն օրինակներից մէկն է։ Սակայն մենք ամէն տեղ կուրօրէն չենք հետեւել Անձեւացեաց օրինակին, այլ տեղ-տեղ չեղումներ ենք կատարել նրանից՝ համաձայն Վենետիկի 1893 թուականի և Փորթուգալ փաշայի 1903 թուականի հրատարակութիւնների, որտեղ մեզ թուացել է, թէ վերջիններիս ընթերցուածներն աւելի ընտիր են, քան Անձեւացեաց օրինակինը, թարգմանելիս զգուշութեան համար աչքի առաջ ենք ունեցել Լանգլուայի ֆրանսերէն և Շանչեանի ռուսերէն թարգմանութիւնները, ինչպէս նաև աշխարհաբար թարգմանութիւնները (բացի Կ. Պոլսում տպուած Ց. Վարժ. ի աշխատութիւնից), և որոշ չափով օգտա-

գործել ենք դրանք։ Օգտուել ենք նաեւ Հ. Ղուկասեանի և Գ. Աղանեանի թարգմանութիւնների առիթով լոյս տեսած մի չարք դրախօսականներից (Մկ. Ղազարեան, Ս. Տ. Մալխասեան, Հ. Ց. Տաշեան, Ս. Ցարուքիւնեան), ինչպէս նաեւ եղիշէի մասին տարբեր բանասէրների գրած ղանազան յօդուածներում ցրուած բազմաթիւ դիտողութիւններից այս կամ այն հատուածի մասին։ Շնորհակալութեամբ յիշատակելով այս ամէնը, սակայն, մենք չենք ուզում արդանուլ որևէ չափով պատասխանատու համարել նրանց մեր կողմից թոյլ տրուած հնարաւոր թերութիւնների և սխալ արտայայտութիւնների համար։ Դրանց միակ պատասխանատուն մենք ենք և ապագայ հրատարակութիւնների համար սիրով ու երախտագիտութեամբ կ՚ընդունենք ամէն մի հրապարակական ու մասնաւոր ուղղում և ցուցում։

Ինդրում եմ նկատի ունենալ, որ թարգմանութեան մէջ վիպագծերի մէջ առնուած բառերը մեր կողմից են աւելացուած՝ միտքը պարզելու համար։

Եղիշէի պատմութեան վերաբերեալ եղած բովանդակ ընդարձակ մատենագրութեան ցանկը մենք այստեղ չենք դնում։ Ցանկացողները կարող են այն գտնել հետեւեալ գրքերում.— Ա. Ղազիկեան «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», Վենետիկ, 1909, էջ 568—577, Բ. Կիւլեսերեան, «Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն», Վիեննա, 1909, էջ 14—40 և նոյնի «Հայաստանեայց եկեղեցին հինգերորդ դարու մէջ», «Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն» գրքէն յապաւուած գլուխներ։ Կ Պոլիս» 1912, էջ ԺԱ—ԺԵ։

Ե. Տ.-Մինասեան

ԵՂՒԶԷՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԴԱՒԻԹ ԵՐԷՑԻ ՝
ԽՆԴՐԱՆՔ (ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ) ՎԱՐԴԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ի՛ս պատուիրած գործը կատարեցի, ո՛վ առաքինի. Հայոց պատերազմի մասին հրամայեցիր (գրել), որի մէջ քչերի հանդէպ շատերն առաքինի գտնուեցին։

Ահա գրեցի այս եօթը գլուխների մէջ,

Առաջին՝ ժամանակները։

Երկրորդ՝ Արեւելքի իշխանի ձեռնարկած գործերը։

Երրորդ՝ եկեղեցու ուխտի միաբանութիւնը։

Չորրորդ՝ նոյն ուխտից բաժանուած մի քանիսի երկպառակութիւնը։

Հինգերորդ՝ Արեւելքցիների յարձակումը։

Վեցերորդ՝ Հայերի ընդդիմանալը պատերազմով։

Եօթերորդ՝ Հռովմէական գործերի երկարաձգումը։

Այս եօթը գլուխների մէջ կարգով գրեցի և հոծ ու լի բովանդակութեամբ դրի սկիզբը, մէջտեղն ու աւարտը, որպէսզի չարունակ կարդաս, լսելով առաքինի անձերի քաջութիւնը և յետ կացածների վատթարութիւնը. ո՛չ թէ երկրաւոր առատ գիտութեանդ անձնական պակասը լրացնելու, այլ երկնաւոր նախախնամութեան այցելութեան համար, որ նախագիտութեամբ երկու կողմերին էլ հատուցում է տալիս, որ այս տեսանելի բաներով անտեսանելիները յայտնի է դարձնում։

Իսկ դու, ո՛վ մեծդ աստուածային գիտութեան մէջ, ինչո՞ւ արդեօք (ինձ) հրամայեցիր, քանի որ ինքդ կարող էիր հրամաններ ընդունել աւելի լաւերը (գրելու) համար ։ ինչպէս

թեւում է ինձ և իմաստասիրութեամբ պարապած մարդկանց՝ այս բանը երկնաւոր սիրոյ նշան է քո մէջ և ոչ թէ երկրաւոր փառասիրութեան, ինչպէս որ հմուտ պատմագիրներից ոմանք ասել էլ են՝ «Միթբանութիւնը բարի գործերի մայրն է, անմիաբանութիւնը՝ չար գործերի ծնողը»։

Այսպէս և մենք տեսնելով, որ քո հրամանը անկեղծ սիրուց է (առաջացել), ամենեւին չդանդաղեցինք և չվախեցանք՝ մեր ոգիտութիւնը նկատի ունենալով։ Որովհետեւ մեծ բան է անկեղծութիւնը՝ ակարութեանն օգնելու համար, ինչպէս աղօթքը՝ գիտութեան և մաքուր սէրը՝ հասարակաց օգտի համար։

Որ և մենք քո հրամանի հետ ընդունելով՝ յօժարութեամբ ակսեցինք այս բանը, որ սիրելիների համար մխիթարութիւն է, յուսացողներին՝ յոյս, քաջերին՝ քաջալերութիւն, որոնք յօժարակամ յարձակւում են մահուան վրայ՝ առաջները տեսնելով յաղթութեան զօրագլխին 3, որը ոչ ոքից թշնամութեամբ ոտնահար չի լինի, այլ բոլորին ցոյց է տալիս իր անպարտելի ուժը։ Եւ ահա՛, ում որ կամենում է՝ առաքինի գինուոր է ընդունում։ Եւ որովհետեւ գինուորութիւնը բազմապիսի կոչում ունի, նա էլ բազմապիսի չնորհներ է բաժանում բոլորին. այս աննենգ սրտի սուրբ սէրն ամէն բանից մեծ ենք ճանաչում։

Այս պարզութիւնը նման է երկնային պարզութեանը. և այս էլ քո մէջ տեսնելով՝ մոռացանք մեր բնութեան (յատկութիւնները)։ Եւ ահա քեզ հետ վեր ենք բարձրանում սաւառնելով, և երբ բարձր թռած կ՛անցնենք բոլոր վնասակար մրրկածին օդերից՝ փոքր ի շատէ ծծելով վերին անապական օդերից, կը ստանանք գիտութիւն մեր անձերի փրկութեան և ամենայաղթ եկեղեցու փառքի համար։ Ուստի և բազմաթիւ սուրբ պաշտօնեաները թող զուարթութեամբ կատարեն իրենց պաշտօնն ու ծառայութիւնը, որպէսզի փառաւորուի բոլորիս հայրը. ուր և նրա հետ ցնծայ ու բերկրի Սուրբ Երրորդութիւնն իր յաւիտեանական էութեան մէջ։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Արդ, որովհետեւ քո աննախանձ բարքդ ու բնութիւնից պատուէր ու հրաման ստացանք, սկսենք, որտեղից արժան է սկսել, թէպէտ և չէինք յօժարի մեր ազգի թշուառութիւնը ողբալ։ Ահա մեր կամքի հակառակ արտասուալից ողբերով չարաչարում ենք այն բաղմաթիւ հարուածները, որոնց մէջ հէնց մենք էլ ընկանք՝ ակամառես լինելով։

Երբ Արշակունեաց ցեղը4 վերացաւ, Հայոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ցեղը5, որ իր իշխանութիւնը վարում էր մոգերի կրօնի համաձայն և շատ անգամ կռիւ էր մղում նրանց հետ, ովքեր չէին ընդունում նոյն կրօնը. սկսելով Տիրանի որդի Արշակ թագաւորի օրերից՝ կռւում էր մինչեւ Վռամշապուհի որդի Հայոց Արտաշէս արքայի վեցերորդ տարին, եւ երբ սրան էլ ջրկեց թագաւորութիւնից, իշխանութիւնն անցաւ Հայոց նախարարներին, որովհետեւ թէպէտեւ հարկը Պարսից արքունիքն էր գնում, սակայն Հայոց հեծելազօրն ամբողջապէս նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ։ Այս պատճառով էլ աստուածապաշտութիւնը հպարտ ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում, արքայից արքայ Շապուհի6 թագաւորութեան սկզբից մինչեւ Վռամի7 որդի արքայից արքայ Յազկերտի8 երկրորդ տարին, որին սատանան իրեն գործակից գտաւ, և հաւաքուած ամբողջ թոյնը դուրս թափեց և լցրեց նրան ինչպէս թունաւորուած նետերով. լի կապարճ, եւ սկսեց

յոխորտալ անօրէնութեամբ, գոռոզանում էր և աղմկելով հող էր հանում երկրի չորս կողմերը, և մեղ՝ Քրիստոսի հաւատացեալներիս՝ իբեն թշնամի և հակառակորդ էր ներկայացնում, և նեղւում ու տագնապում էր անխաղաղասէր կեանքով։

Որովհետեւ նրան չատ սիրելի էր խռովութիւնն ու արիւնհեղութիւնը, այդ պատճառով էլ ինքն իր մէջ ալեկոծւում էր, թէ ո՞ւմ վրայ թափեմ դառն թոյները, կամ ո՞ւր արձակեմ բաղմաթիւ նետերս։ Եւ սաստիկ յիմարութեան պատճառով՝ ինչպէս մի կատաղի գազան յարձակուեց Յունաց երկրի9 վրայ, հարուածեց մինչեւ Մծբին10 քաղաքը և ասպատակ սփռելով՝ աւերեց Հոռոմների11 չատ գաւառներ, և հրդեհեց բոլոր եկեղեցիները. աւար ու գերի հաւաքեց և ահաբեկեց երկրի ամբողջ զօրքը։

Իսկ երանելի Թէոդոս կայսրը12, որովհետեւ խաղաղասէր քրիստոնեայ մարդ էր, չկամեցաւ նրա դէմ պատերազմի դուրս գալ, այլ Անատոլ անունով մի մարդու, որ Արեւելքի նրա սպարապետն էր, չատ գանձերով նրա մօտ ուղարկեց։ Եւ բռնեց ու նրա ձեռքը տուեց այն պարսիկ մարդկանց, որոնք քրիստոնեայ լինելու պատճառով փախել էին և գտնւում էին կայսեր քաղաքում։ Եւ այն ամէնը, ինչ որ ասաց (Յազկերտ) ժամանակին, (Թէոդոսը) կատարեց նրա կամքի համաձայն, և իջեցրեց նրա մեծ բարկութիւնը. և այսպիսով նրան վերադարձրեց իր քաղաքը՝ Տիզբոն13։

Երբ անօրէն իշխանը տեսաւ, որ իր չարութիւնը յաջողուեց, սկսեց մի այլ խորհուրդ էլ մտածել, ինչպէս մի մարդ, որ բորբոքուած կրակի մէջ չատ վառելափայտ է աւելացնում։ Որովհետեւ որտեղից մի քիչ կասկած ունէր, այնտեղից լիովին ապահովուեց. այդ պատճառով էլ քրիստոնեաների սուրբ ուխտից չատերին խախտեց՝ մէկին սպառնալի խօսքերով, միւսին՝ չըղթաներով ու տանջանքներով, երրորդին՝ չարաչար մահով սպանելով։ Ցափշտակում էր նրանց ստացուածքն ու կալուածքները և մեծ անարգանքով տանջում էր բոլորին։ Եւ երբ տեսաւ, որ ցիրուցան եղան այս ու այն կողմ, խորհրդի կանչեց ձախակողմեան պաշտօնեաներին14, որոնք կռապաշտութեան մէջ կաշկանդուած էին անքակտելի կապերով, վառուած ու կրակ կտրած

ինչպէս մի հնոց՝ եկեղեցու սուրբ ուխտն այրելու համար։

Որովհետեւ այդպիսիները հէնց իրենց կենդանութեան ժամանակ բնակւում են ինչպէս թանձրամած խաւարում, և հոգիները մարմնի մէջ փակուած են ինչպէս կենդանի (մարդը) գերեզմանում, որոնց (հոգիների) վրայ ամենեւին չի ծագում Քրիստոսի սուրբ լոյսի նշոյլը։ Օրհասական արկերն էլ չնչերը հատնելիս աւելի ուժգին են կուռւում, և իմաստուններն խոյս տալով փախչում են նրանցից։ Այսպիսի մի վախճան է եկել-հասել այդ տէրութեանը. երբ նրանց խփում են՝ չեն զգում, և երբ (իրենք) են խփում՝ չեն հասկանում. իսկ երբ արտաքին թշնամի չի գտնւում, իրենք իրենց հետ են կռիւ սկսում, մարտընչում։ Մարգարէի խօսքը հէնց յարմար է գալիս նրանց վերաբերմամբ. «Մարդ, ասում է, իր քաղցածութիւնից (տխպուած) չուռ կը գայ և կ'ուտի իր անձի կէսը»15։ Սրա նման ասում է նաև Տէրն ինքը. «Ամէն մի տուն և թագաւորութիւն, որ բաժանւում է ինքն իր մէջ, հաստատուն մնալ չի կարող»16։

Արդ, ի՞նչ ես ծեծկւում, ի՞նչ ես կռիւ տալիս, ի՞նչ ես այրւում, ի՞նչ ես բորբոքւում, ինչո՞ւ չես հանգչում17, ի՞նչ ես խորհրդի կանչում նրանց, ովքեր ձեր հոգիները ձեզանից խլել՝ ձեր անապականը ապականութիւն են դարձրել, իսկ ձեր ապականացու մարմինը զարդերի դիակի նման քարշ են տուել ու դէն գցել։ Ջէ՞ որ այդ ես կամենում, որ ամբարիշտ խորհուրդ ծածկուի. կը տեսնես՝ երբ կը յայտնուի, յետոյ կ'իմանաս դրա վերջը։

Մոգերն18 ասում են. «Ի՛նչ թագաւոր, աստուածները տուին քեզ այս տէրութիւնը և յաղթութիւն. նրանք ամենեւին մարմնաւոր հարստութեան կարօտ չեն, մէյն թէ մի կրօնի դարձնեա քո տէրութեան մէջ գտնուած բոլոր ազգերին ու ժողովուրդներին. այն ժամանակ Յոյների երկիրն էլ հնազանդուելով՝ կ'ենթարկուի քո իշխանութեանը։ Արդ, այս բաները դու չուտով կատարիր, արքա՛յ, զօրք հաւաքիր և գունդ կազմիր, վեր կաց գնա Քուշանների19 երկիրը և բոլոր ազգերին ժողովիր և անցկացրու Պահ դռնից20 ներս, և այնտեղ չինիր քո բնակութիւնը։ Երբ բոլորին արգելես ու պահես հեռաւոր օտարութեան մէջ, քո կամքն ու խորհուրդները կը կատարուեն և, ինչպէս

երեւում ես մեր գուշակութիւններիդ21 մէջ, դու կը տիրես նաեւ Քուշաններուն երկրին և մինչեւ անգամ Ցոյները քո իշխանութիւնից դուրս չեն գայ։ Միայն թէ քրիստոնեաների կրօնը մէջտեղից վերացրու»։

Այս խորհուրդը հաճելի եղաւ թագաւորին ու իրեն համամիտ մեծամեծներին. հրովարտակներ գրեց, արագագնաց սուրհանդակներ ուղարկեց իր տէրութեան բոլոր կողմերը։ Եւ այս է հրովարտակի պատճէնը.

«Իմ տէրութեան բոլոր ազգերին, Արիներին և անարիներին22, թող բազմանայ մեր մարդասէր ողջոյնը ձեզ. դուք ողջ եղէք, մենք էլ արդէն ողջ ենք աստուածների օգնութեամբ։

«Առանց ձեզ որեւէ նեղութիւն տալու ելանք-գնացինք Ցոյների երկիրը, և առանց պատերազմի՝ սիրով ու մարդասիրութեամբ նուաճեցինք ամբողջ երկիրը մեզ ծառայելու։ Դուք բարին մտածեցէք և անսպառ ուրախութեան մէջ ւնացէք. բայց չուտով կատարեցէք այս բանը. որ ասում ենք.

«Մենք մտքներումս դրել ենք անպատճառ վերկենալ-գնալ Արեւելքի աշխարհը, աստուածների օգնութեամբ մեզ ենթարկել Քուշանների տէրութիւնը. դուք հէնց որ այս հրովարտակը տեսնէք, չուտով առանց ուշացնելու այրուձի ժողովեցէք՝ ինձանից առաջ, ներկայացէք ինձ Ապար աշխարհում»23։

Այս պատճէնի համաձայն հրովարտակ հասաւ Հայոց, Վրաց և Աղուանից24 և Լփնաց25, Ծաւդէից26, և Կորդուաց27, Աղձնեաց28 աշխարհները և չատ ուրիշ հեռաւոր տեղեր, որոնք առաջ պարտաւոր չէին այն ճանապարհը գնալ։ Զօրք էր ժողովում մեծ Հայքից աղնուականներին և աղատորդիներին և թագաւորական կալուածներից ոստանիկ մարդկանց. նոյն օրինակով Վրաց, Աղուանից և Լփնաց աշխարհներից, և հարաւի զանազան կողմերից՝ Տաճկաստանի և Հոռոմների աշխարհի սահմաններին մօտիկ, և Կորդուաց, Գղաց29 և Ծաւդէից և Արզնարդիւնց30 (երկրներից), որոնք բոլորն էլ հաւատում էին մի կաթողիկէ առաքելական եկեղեցու։

Եւ անմեղութեամբ չիմանալով թագաւորի խարդախ միտքը՝ իւրաքանչիւր երկրից միամտութեամբ և անտրտում ուրախութեամբ ու տիրասէր խորհրդով ելան-գնացին, աներկբայ

ջանքով կատարելով (իրենց) ընտրական ծառայութիւնը, իրենց հետ վերցրին նաև աստուածային սուրբ կտակարաններ31, շատ պաշտօնեաներով և բազմաթիւ քահանաներով։ Բայց հրամանն տուին (իրենց) աչխարհում, որ կեանքի ակնկալութիւն չունենան, այլ (իրենց) վախճանին (սպասեն), յանձնարարելով միմեանց (իրենց) հոգիներն ու մարմինները։ Որովհետեւ թէպէտեւ թագաւորի խորհուրդը նրանց յայտնուած չէր, բայց բոլորի սրտում էլ կասկած կար. մանաւանդ երբ Յոյների զօրութիւնն էլ ընկճուած տեսան նրա առաջ, շատ խիստ խոցուեցին իրենց մտքերում։

Բայց որովհետեւ Աստծու սուրբ կտակարանների պատուիրանները պահող մարդիկ էին, չարունակ յիշում էին Պօղոսի պատուէրները, թէ «Մտառանե՛ր, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին. ո՛չ թէ կեղծաւորութեամբ և աչառութեամբ, այլ սրտանց ծառայել ինչպէս Աստծուն և ոչ ինչպէս մարդկանց. որովհետեւ Տիրոջից է լինելու ձեր վաստակների հատուցումը» 32։

Այս ամբողջ բարեմտութեամբ ուղեւորուելով (իրենց) աչխարհից և իրենց յանձնելով Սուրբ Հոգուն, հրամանը չուտով կատարելով՝ ներկայացան, ամէն ինչ անելով նրա կամքի համաձայն։ Թագաւորը չատ ուրախացաւ՝ այն մտքով, թէ իր կամքը կատարուեց. և ահա նրանց հետ վարուում էր այնպէս, ինչպէս խրատել էին նրա ամբարիշտ պաշտօնեաները։

Արդ, երբ թագաւորը տեսաւ բարբարոսների33 գնդի ամբողջ պատրաստութիւնն ու բազմութիւնը, որոնք յօժարակամ եկել էին արքունի ծառայութեան, աւելի եւս ուրախացաւ իր մեծամեծների և իր զօրքերի ամբողջ բազմութեան առաջ։ Արտաքուստ թագցնում էր իր մտադրութիւնները և ակամայ առատ-առատ պարգեներ էր տալիս նրանց, ելաւ-գնաց Հոնաց աչխարհի տէրութեան վրայ, որին Քուչանք են անուանում, և երկու տարու չափ կռուելով՝ նրանց ոչ մի վնաս հասցնել չկարողացաւ։ Յետոյ զինուորներին ուղարկեց իւրաքանչիւրին իր տեղը և նրանց փոխարէն իրեն մօտ ուրիշներին կանչեց նոյն պատրաստութեամբ։ Եւ այսպէս տարեցտարի սովորութիւն սահմանեց, և այնտեղ իրեն համար բնակութեան քաղաք չինեց.

իր թագաւորութեան չորրորդ տարուանից սկսած մինչեւ իր իշխանութեան տասնմէկերորդ տարին34 :

Եւ երբ տեսաւ, որ Հռոմէները հաստատ մնացին իրենց դաւինքին, որ դրել էին նրա հետ, և հայլնդուրներըը35 դադարեցին ձորա պահակն 36 անցնելուց, և իր երկիրն ամէն կողմից խաղաղութեան մէջ է տպրում, և դեռ Հոների թագաւորին էլ նեղն է լծել, որովհետեւ աւերեց նրա չատ գաւառները, և իր թագաւորութիւնը յալոզ դրութեան մէջ է,— աւետաւորներ ուղարկեց իր աչխարհի բոլոր ատրուչաններըը37 , սպիտակ ցուլերով և գիսաւոր նոխազներով առատացրեց կրակի զոհերը, և միանգամայն անընդհատ դարձրեց իր պիղծ պաչտամունքը. մոգերից չատերին և մոգպետներից է՛լ աւելի չատերին մեծարեց պատկաներով ու պատիւներով։ Նաև հրամայեց յափչտակել Պարսից աչխարհում գտնուող քրիստոնեաների ինչքն ու գոյքը։

Եւ այսպէս հպարտացաւ, գոռոզացաւ իր մտքում, սանձարձակօրէն յոխորտում էր մարդկային բնութիւնից էլ վեր, ո՛չ միայն մարմնական պատերազմների գործերի մէջ, այլ ինքն իրեն հայրենի կարգի բնութիւնից մեծ մի բան էր կարծում. այդ պատճառով նա կեղծաւորութեամբ ինքն իրեն իր կարծիքով թագցնում էր, բայց, ինչպէս նկատում էին իմաստուններըը, ինքն իրեն կարծես անմահների կարգն էր դասում։ Եւ սաստիկ զայրացած էր Քրիստոսի անուան վրայ, երբ լսում էր, թէ տանջըւեց, խաչուեց, մեռաւ և թաղուեց։

Եւ երբ այսպէս օրէցօր ցնորուած տարուբերուում էր նոյն մտքով, Հայոց մանկագոյն նախարարներից մէկն ընդդիմաբանեց նրան և ասաց. «Քա՛ջ թագաւոր, դու ո՞րտեղից գիտես Տիրոջ մասին այդ բանները, որ խօսում ես։ Թագաւորը պատասխան տուեց և ասում է. «Հէնց իմ առաջ կարդացին ձեր մոլորութեան գրքերը»։ Կրկին պատասխան տուեց պատանին և ասում է. «Թագաւո՛ր, ինչո՞ւ մինչեւ այդտեղ միայն կարդալ տուիր. չարունակել տուր կարդալը, և այնտեղ կը լսես յարութիւնը, չատերին յայտնուելը, երկինք վերանալը, Հօր աջ կողմը նստելը, երկրորդ գալստեան խոստումը՝ բոլորին հրաչալի կերպով յարութիւն տալով, արդար դատաստանի համառօտ հաստատումը»։ Երբ թագաւորն այս լսեց, խոր խոցուած՝ երեսանց

ծիծաղեց և ասաց. «Այդ բոլորը խաբէութիւն է»։ Քրիստոսէ զինուորը պատասխան տուեց և ասաց. «Եթէ քեզ համար հաւատալի են նրա մարմնաւոր չարչարանքը, է՛լ աւելի հաւատալի պիտի լինի քեզ համար նրա երկրորդ ահաւոր գալուստը»։

Թագաւորը այս լսելով՝ բորբոքուեց Բաբելոնի հնոցի38 կրակի նման, այնպէս որ մինչեւ անգամ իւրայիններըն եւս քաղդէացիների նման այրուում էին։

Այն ժամանակ ամբողջ բարկութիւնն ու սրտմտութիւնը թափեց այն երանելի մարդու վրայ, որի անունը Գաբեգին էր։ Կապուած ոտներով ու կապուած ձեռներով երկու տարու չափ յանձնուեց չարչարանքների, և իշխանութիւնից զրկուելով՝ մահուան դատապարտուեց։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԵԼՔԻ ԻՇԽԱՆԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾԵՐԸ

Ուստի հոգիները թուլացած են երկնաւոր առաքինութիւնից, ապատիկ երկիւղի մէջ է ընկած (նրանց) մարմնի բնութիւնը. ամէն հողմից չարժուում է և ամէն խօսքից վրդովւում և ամէն բանից դողում. այդպիսի մարդը երազական բաներով է անցկացնում իր կեանքը, իսկ մահուան ժամանակ էլ անդառնալի կորստեան է մատնւում, ինչպէս որ հներից մէկն ասել է՝ չհասկացուած մահը մահ է, հասկացուած մահը՝ անմահութիւն. Ով որ չգիտէ, թէ ինչ է մահը, վախենում է մահից. իսկ ով գիտէ մահը, նրանից չի վախենում։

Եւ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնութիւնից։ Կոյրը զրկւում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտութիւնը զրկւում է կատարեալ կեանքից։ Լաւ է աչքով կոյր (լինել), քան մտքով կոյր։ Ինչպէս որ հոգին մեծ է մարմնից, այնպէս էլ մտքի տեսողութիւնը մեծ է մարմիններիի տեսողութիւնից, եթէ մէկը չատ ճոխացած լինի աշխարհական մեծութեամբ, իսկ մտքով աւելի աղքատ լինի, այնպիսին ողորմելի է չատերից. ինչպէս որ տեսնում էլ ենք ո՛չ միայն հասարակ մարդկանց մէջ, այլ և նրա մէջ, որ ամենից մեծն է։ Եթէ թագաւորը իմաստութիւնն իրեն աթոռակից չունի, չի կարող իր վիճակի մէջ վայելուչ լինել։ Իսկ եթէ մարմնաւոր բաների վերաբերմամբ այսպէս է, ո՛րքան աւելի եւս հոգեւոր բաների վերաբերմամբ է։

Ամբողջ մարմնի կենդանութիւնը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է. և ինչպէս որ մի մարդու վե-

րաբերմամբ է, այնպէս էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ։ Թագաւորը մի այն իրեն համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստեան պատճառ է եղել։

Բայց մենք թէպէտ և թոյլտուութիւն չունենք բամբասելու այն իշխանին, բայց չենք էլ կարող գովաբանել մի մարդու, որ Աստծու դէմ է կռւում։ Այլ կը պատմենք անդ.քերն ու՝ դէպքերը, որ նրա ձեռքով անցան սուրբ եկեղեցիների գլխով, և չեմ դանդաղի. գործերի ընթացքը ո՛չ թէ բամբասասէր մտքով, այլ ճշմարտութեամբ պատմելուց չեմ դադարի։ Ո՛չ կարծիքներ լսելով եմ վեր թռել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ե՛ս ինքս անձամբ նոյն տեղում պատահեցի և տեսայ ու լսեցի յանդգնաբար խօսելու ձայնը. ինչպէս սաստիկ քամին ալեկոծում է մեծ ծովը, այնպէս էր չարժում ու տարուբերում իր զօրքերի ամբողջ բազմութիւնը, եւ բոլոր ուսմունքների հանդիսաւոր քննութիւն էր կատարում, կշռադատում էր մոգութիւնն ու քաւդեութիւնը39 և իր աշխարհի բոլոր ուսմունքները, կեղծաւորութեամբ մէջ էր բերում նաև քրիստոնէութիւնը և ասում էր դայրացած. «Հարցրէ՛ք, քննեցէ՛ք, տեսէ՛ք. որը լաւն է՝ թող այն ընտրենք ու պահենք»։ Եւ ջանք էր գործ դնում, որ իր մտադրութիւնը չուտով կատարուի։

Իսկ զօրքի մէջ եղած զանազան կողմերից եկած քրիստոնեաները հասկացան այն կրակը, որ ծածուկ վառւում-բորբոքւում էր և ուզում էր լեռներն ու դաշտերն առհասարակ հրդեհել։ Նրանք էլ կրակ կտրեցին անմարելի հրով և սաստկապէս պատրաստուեցին գաղտնի որոգայթների փորձութեան դէմ։ Այնուհետեւ սկսեցին բարձրաձայն, սաղմոսներով ու հոգեւոր երգերով և մեծապայծառ վարդապետութեամբ (իրենց) պաշտամունքը կատարել մեծ բանակի դէմ յանդիման, և աներկիւղ ու անվախ յօժարութեամբ սովորեցնում էին իրենց մօտ եկող մարդկանց։ Եւ Տէրն էլ յաջողում էր նրանց (գործը) զանազան հրաշքներով, որովհետեւ հեթանոսական զօրքի մէջ (եղած) չատ հիւանդներ բժշկւում էին։

Իսկ անօրէն իշխանը երբ իմացաւ, թէ յայտնուեց (իր) խորամանկ մտադրութիւնը, և պատրաստուած հուրը՝ դեռ ոչ ոք նրա վրայ չփչած՝ նրա վառուելը յայտնի դարձաւ Աստծու եր-

կիւղածներին, սկսեց ծածուկ նետերով խոցոտել իր չար միտքը և անբուժելի վէրքեր էր պատրաստում հոգիների և մարմինների համար։ Մերթ չանթում գալարւում էր ինչպէս մի թունաւոր օձ, մերթ ձգւում մռնչում էր ինչպէս զայրացած առիւծ, ճմլւում ու թապլտկւում էր խարդախ մտադրութեամբ. կամենում էր իր կամքը կատարել։ Քանի որ ձեռքը ձգել և բռնել չէր կարողանում,— որովհետեւ ամէնքը միատեղ չէին նրա մօտ մի եւնոյն վայրում,— այնուհետեւ սկսեց առաջ քաշել կրտսերներին աւագների միջից, և անարգներին պատուականների միջից, եւ տգէտներին գիտուններուի միջից, և վախկոտներին քաջ մարդկանց միջից. և էլ ի՞նչ մէկ-մէկ թուեմ, բոլոր անարժաններին առաջ էր քաշում, իսկ արժանաւոր մարդկանց յետ էր տանում. մինչեւ անգամ հօրն ու որդուն բաժանում էր միմեանցից։

Եւ թէպէտ բոլոր աղգերի վերաբերմամբ էր այս անկարգութիւնն անում, բայց աւելի Հայոց աշխարհի դէմ էր մարտընչում. որովհետեւ նրանց աւելի ջերմեռանդ էր տեսնում աստուածպաշտութեան մէջ, մանաւանդ նրանք, ովքեր Հայոց նախարարական տոհմից էին եւ միամտութեամբ պահպանում էին առաքեալների եւ մարգարէների սուրբ քարոզութիւնը։ Նրանցից ոմանց խաբում էր ոսկով ու արծաթով, եւ չատերին էլ ուրիշ առատ պարգեւներով. ոմանց էլ ագարակներ ու մեծամեծ դիւղեր (չնորհելով), ոմանց մեծամեծ պատիւներով ու իշխանութիւններով։ Եւ ուրիշ դատարկ յոյսեր էլ էր տալիս նրանց։ Եւ այսպէս հրապուրում ու յորդորում էր չարունակ. «եթէ միայն, ասում է, մոգութեան կրօնը յանձն առնէք, և ձեր մոլորութիւնից սրտանց դառնաք մեր երեւելի դիւցազնական կրօնի ճշմարտութեանը, մեծութիւնների և աւագութիւնների կը հասցընեմ (ձեզ) իմ սիրելի նախարարներին հաւասար, մինչեւ իսկ է՛լ աւելի կը բարձրացնեմ»։ Եւ այսպէս կեղծաւորութեամբ խոնարհւում էր ամէնքի մօտ՝ խօսելով նրանց հետ սիրոյ պատրուակով, որպէսզի կարողանայ նրանց խորամանկութեամբ որսալ՝ խորհրդատուների առաջին խրատի համաձայն։ Եւ այս բանն անում էր իր իշխանութեան չորրորդ տարուց սկսած մինչեւ տասնմէկերորդ տարին[40]։

Եւ երբ տեսաւ, որ ծածուկ հնարագիտութիւնը բանի տեղ չանցաւ, այլ դիմացիններն աւելի չատ էին գործում, — որովհետեւ տեսնում էր, որ քրիստոնէութիւնն օրէց օր աճում-տարածւում էր հեռաւոր ճանապարհի այն բոլոր կողմերը, որոնցով ինքն անցնում էր, — սկսեց հալումաշ լինել և հառաչելով հոգոց հանել։ Ականայ յայտնեց գաղտնի մտադրութիւնները. բարձրաձայն հրաման տուեց և ասաց. «իմ իշխանութեան ներքոյ գտնուած բոլոր ազգերն ու ժողովուրդները թող բոլորը ձեռք քաշեն (իրենց) մոլար կրօնքներից և գան երկրպագութիւն անեն միմիայն արեգակին, զոհեր մատուցելով և աստուած անուանելով (նրան), սպասաւորելով կրակին. բացի այս ամենից՝ մոգութեան օրէնքներն էլ կատարեն, առանց որեւէ բան պակասեցնելու»։

Այս ասելով՝ բարձրաձայն հրատարակում էր (հրամանը) մեծ բանակի մէջ. և իսկոյն պատուէր էր տալիս ամենքին. և չտապով սուրհանդակներ էր ուղարկում բոլոր հեռաւոր ազգերի մօտ, այդ նոյն հրամանը հասցնում էր բոլորին։

Արդ, իր թագաւորութեան տասներկուերորդ տարուայ սկզբին անթիւ քանակութեամբ զօրք ժողովեց և յարձակուելով հասաւ Իտալական երկիրը[41]։ Այս տեսնելով Փուչանների թագաւորը չկարողացաւ պատերազմի դուրս գալ նրա դէմ, այլ փախուստ տալով ամուր անառիկ կողմերը՝ թաքչելով ազատուեց իր ամբողջ զօրքի հետ։ Իսկ սա ասպատակ սփռեց գաւառներն, տեղերն, վայրերի վրայ. առաւ բազմաթիւ բերդեր ու քաղաքներ. հաւաքեց գերիներ, կողոպուտ ու աւար, և տալաւ-հասցրեց իր իշխանութեան (տակ գտնուած) երկիրը։ Եւ ահա այնուհետեւ նոյն դատարկ մտադրութեան յետեւից ընկած՝ հաստատուեց իր մոլար կարծիքի վրայ, ասելով իր ամբարիշտ պաշտօնեաներին. «Ի՞նչ տանք մենք աստուածներին այն մեծ յաղթութեան փոխարէն, որ ոչ ոք չկարողացաւ մեր դէմ պատերազմի դուրս գալ»։

Այն ժամանակ բոլոր մոգերն ու քուրմերը միաբերան իրենց ձայնը բարձրացրին և ասացին. «Աստուածները, որ քեզ տուին քո տէրութիւնը և յաղթութիւն քո թշնամիների դէմ, ամենեւին կարիք չունեն քեզնից խնդրելու այս տեսանելի պատուական բաներից, միայն թէ մարդկանց բոլոր մոլար ուսմունք-

նները վերացնես և (բոլորին) զրադաչտական կրօնին42 ու պատուիրանին դարձնես։

Այս խօսքին հաւանեցին թագաւորն ու բոլոր մեծամեծնները, մանաւանդ նրանք, ովքեր կրօնի առաջնորդներն էին, Յորհուրդ արին և այդ խրատը յաղթող հանդիսացաւ։

Այնտեղ Պահ դրան ներսում արգելեց Հայերի, Վրացիների և Աղուանների և այն բոլորի բազմաթիւ հեծելազօրը, ովքեր հաւատում էին Քրիստոսի սուրբ աւետարանին։ Եւ դռնապաններին խիստ հրաման տուին, որ դէպի արեւելք մեզ մօտ եկողներին ներս թողնեն, իսկ արեւելքից արեւմուտք փակ լինի ճանապարհը։

Եւ երբ արգելեց ու փակեց նրանց ամուր և անել վանդակի մէջ,— և իրաւացի ասացի ամուր և անել, որովհետեւ այնտեղ փախչելու և թաքչելու տեղ չկայ, քանի որ չորս կողմը թշնամիներ են բնակւում,— այն ժամանակ գործի ձեռնարկեց նրանց վերաբերմամբ, նրանցից չատերին թուլացրեց մեծ չարչարանքներով ու պէս-պէս տանջանքներով, և ստիպում էր ուրանալ ճշմարիտ Աստծուն և հաւատալ տեսանելի տարրերին, իսկ զօրականներն առհասարակ գեղեցիկ խորհրդով, արիասիրտ զօրութեամբ մխաքան աղաղակում էին և ասում. «Վկայ են մեզ երկինքն ու երկիրը, որ երբեք չենք ծուլացել արքունի ծառայութեան մէջ և ոչ էլ վախկոտութիւն ենք խառնել (մեր) արութեան ու քաջութեան հետ. զուր և անողորմ են մեզ վրայ (տեղացող) այս հարուածները»։ Եւ այնքան չատացաւ նրանց գոռում-գոչումի ձայնը, մինչեւ որ ինքը թագաւորն իր աչքով տեսաւ կատարուող անցքերը, և տեղն ու տեղը իսկոյն երդումով հաստատեց ու ասաց. «Ձեզ չեմ զլջանի, մինչեւ չկատարէք իմ ամբողջ կամքն ու հրամանները»։

Եւ ահա չարանենգ սպասաւորները իրաւունք ստանալով՝ բուն աւագներից չորս զօրականի մէջտեղ բերին և սկսեցին տանջել։ Նախ և առաջ նրանց դատաստանը տեսան խիստ ծեծելով, և նոյն կապանքներով տարան բանտը գցեցին։ Իսկ միւսներին (թագաւորը) առժամանակ խաբէութեամբ ներեց, և ամբողջ մեղքը գցեց բանտարկուածների վրայ. և այս կատարում էր սատանայական խրատի համաձայն։

Իսկ տասներկու օրից յետոյ հրամանն տուեց առաջ և սովորական օրերից աւելի ճոխ ընթրիք պատրաստել և հրաւիրեց քրիստոնեայ վինուորականներից չատերին։ Եւ սեղանի պատրաստութեան ժամին՝ իւրաքանչիւրին իր նստելու տեղն էր չնորհում սեղանի չուրջը. և խօսում էր նրանց հետ սիրով ու խոնարհութեամբ առաջուայ կարգի համաձայն, որպէսզի գուցէ համաձայնեն գոհած մխ ուտել, որ երբեք օրէնք չէր ուտել քրիստոնեաներին. Երբ ոչ մէկն էլ յանձն չառաւ (ուտել), չատ էլ չտխպեց, այլ հրամայեց մատուցել նրանց սովորական կերակուրը, և առաւելապէս գինիով էր ճոխացնում սեղանի ուրախութիւնը։

Եւ երբ այնտեղից դուրս եկան արքունի սրահը, նրանցից ամանց ձերբակալեցին՝ ձեռները յետեւները կապելով և խոնջանները կնքելով43, և զգուշութեամբ պահում էին ո՛րին երկու և ո՛րին էլ երեք օր։ Շատ ուրիշ անարժան չարչարանքներ էլ էին տալիս, որ սինչեւ անգամ գրի առնել արժանի չենք համարում։ Եւ նրանցից ոմանց էլ աղնուական պատուից զրկելով՝ քաշ տուին–տարան օտարութիւն։

Եւ դարձեալ նրանցից գնդեր կազմեցին և ուղարկեցին հեռաւոր երկիր՝ անբնակ վայրերի ամրոցները՝ թագաւորի թըշնամիների դէմ պատերազմ մղելու համար. չատերը հէնց այնտեղ էլ իրենց մահը գտան սրով։ Եւ բոլորի նշանակուած թոշակները պակասեցնում էին, և քաղցով ու ծարաւով տանջում նրանց. ձմեռելու համար դժնդակ տեղեր էին նշանակում նրանց և բոլորի աչքում անարգ ու վատթար նրա՛նց էին ցոյց տալիս։ Իսկ նրանք Քրիստոսի սիրոյ համար մեծ ուրախութեամբ էին յանձն առնում բոլոր չարչարանքները այն մեծ յոյսի ակնկալութեամբ, որ առաջուց պատրաստուած է պատուիրանապահ համբերողների համար։ Որքան չարութեամբ աւելացնում էր անարգանքը, այնքան նրանք աւելի եւս զօրանում էին Քրիստոսի սիրոյ մէջ. մանաւանդ, որ նրանցից չատերը Սուրբ Գիրքը սովորել էին մանկութիւնից, նրանով մխիթարում էին իրենց և քաջալերում ընկերներին, և աշկարայ կատարում ու

աւելացնում էին (քրիստոնէական) պաշտամունքը։ Այս պատճառով էլ հեթանոսներից չատերը, որոնց ախորժելի ու դանկալի էին թուում (նրանց երգերի) ձայները, քաջալերում էին նրանց և մխիթարական խօսքեր ասում, թէ լաւ է մարդ մահու չափ չարչարանք կրի, քան այդպիսի կրօնն ուրանայ։

Սակայն թէպէտեւ նրանք Քրիստոսի սիրոյ պատճառով խիստ ուրախ և զուարթ էին ներքուստ, բայց (նրանց) արտաքին տեսքը չատ ողորմելի էր այն օտարութեան մէջ։ Այսպիսի պատուական գինուորութիւնը հասել էր չարաչուք և անարդ վիճակի և հայրենի ազատութիւնը չարաչար կերպով գտնուում էր մարդախոշոշ բռնաւորի ծառայութեան մէջ, որը արիւնհեղութեամբ հեթանոսների օրէնքներից էլ գերազանցում էր և ամենեւին չէր կարծում, թէ այս ամենի համար կարող է երկնքում մի վրէժխնդիր լինել։ Այլեւ ոչ ոքի երկրաւոր ծառայութիւնները չէր յիշում. և որ ամէն բանից մեծ է մարմնաւոր կարգով, այնտեղ կային հայ նախարարներից ոմանք, որոնք նրա եղբայրներին մեծացրել էին իրենց մայրենի կաթով, ամենից աւելի նրա՛նց էր տանջում։

Բացի այս ամենից՝ մի այլ չարութիւն էլ նիւթեց։ Իր հաւատարիմ ծառաներից մէկին, որի անունը Դենշապուհ էր, գրոծով ուղարկեց Հայոց երկիրը. սա եկաւ տեղ հասաւ արքունի հրամանով, բերեց մեծ թագաւորի ողջոյնը, և խաղաղասէր կեղծաւորութեամբ ամբողջ Հայոց երկիրը աչխարհագիր արեց՝ իբր թէ հարկերը ներելու և այրուձիու ծանրութիւնը թեթեւացնելու նպատակով։ Թէպէտեւ երեսանց կեղծաւորութիւն էր անում, բայց ներքուստ երեւում էին չարագոյն դիտաւորութիւնները։

Առաջին, եկեղեցու ազատութիւնը ծառայութեան տակ դրեց44։

Երկրորդ, վանքերում բնակուած միայնակեաց քրիստոնեաներին նոյն աչխարհագրի տակ գցեց։

Երրորդ, երկրի հարկն աւելի ծանրացրեց։

Չորրորդ, նախարարներին բանսարկութեամբ թշնամացրեց միմեանց հետ, և ամէն տան մէջ խռովութիւն գցեց։

Եւ այս ամէնն անում էր, որպէսզի գուցէ քանդի միաբանութիւնը, և եկեղեցու ուխտը ցրուէ, և միայնակեացներին

վախցնի, և չինականներին ոչնչացնի. և չափազանց աղքատութեան պատճառով ակամայ ընդունեն մոգական կրօնը։

Բայց ամենից վատթարը հինգերորդն էր. որովհետեւ նա, որ երկրի հազարապետն45 էր, համարւում էր քրիստոնեայ աշխարհականների վերակացու հայրը. սրա դէմ գրգռելով ամբաստանութիւն յարուցնց, և նրան գործից հանելով՝ նրա փոխարէն մի պարսիկ բերեց (մեր) աշխարհը. և մի մոգպետի էլ աշխարհին դատաւոր (կարգեց), որպէսզի եկեղեցու փառքը խանգարեն։

Սակայն թէպէտեւ այս բոլոր գործերը դժնդակ էին, բայց դեռ ոչ ոք յայտնի կերպով ձեռք չէր տուել եկեղեցուն. այդ պատճառով էլ ոչ ոք նրան չընդդիմացաւ, թէեւ հարկերը ծանր էին։ Որովհետեւ որտեղից պէտք էր հարիւր դահեկան46 առնել, կրկնապատիկն էին առնում. այսպէս էլ (հարկի տակ) դրին եպիսկոպոսներին և երէցներին, ո՛չ միայն չէն, այլ եւ աւերակ տեղերը։ Բայց ո՞վ կարող է պատմել, թէ ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր47 էին նշանակուած լեռների, դաշտերի և անտառների վրայ։ Առնում էին ո՛չ թէ ինչպէս վայել է պետական արժանապատուութեանը, այլ աւազակաբար յափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապէս զարմանում էին, թէ մի տեղից որ այսքան դանձ է դուրս գալիս, էլ ի՞նչպէս է չէն մնում այդ աշխարհը։

Եւ երբ տեսան, թէ այս ամէնով չկարողացանք զզուեցնել, այն ժամանակ յայտնապէս հրաման տուին մոգերին և մոգպետներին մի նամակ գրել՝ իրենց ձախուձուռ հաւատի համաձայն։ Եւ նամակի պատճէնն այս է.

«ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՎԶՈՒՐԿ48 հրամանատար Երան և Աներան49, Հայոց Մեծաց չատ ողջոյն».

«Իմացած եղէք, որ ամէն մարդ, ով բնակւում է երկնքի տակ և չունի դեմիմազդեղն50 կրօնը, նա խուլ է և կոյր եւ Հարամանի51 դեւերից խաբուած։

«Որովհետեւ քանի դեռ չկային երկինքն ու երկիրը, մեծ աստուած Զրուանը հազար տարի զոհ էր անում և ասում էր. «Թերեւս ինձ մի որդի լինի Որմիզդ անունով, որ ստեղծի եր-

կինքն ու երկիրը»։ Եւ յղացաւ երկու հոգի (իր) որովայնում. մէկը զոհ մատուցանելու և միւսն էլ թերեւս ասելու համար։ Երբ իմացաւ, որ որովայնի մէջ երկուսն են, ասաց. «Որը չուտ դուրս գայ, նրան կը տամ թագաւորութիւնս»։

«Բայց նա, որ թերահաւատութիւնից էր յղացած, պատառեց որովայնը և դուրս եկաւ։ Ասում է նրան Զրուանը. «Ո՞վ ես դու»։ Ասում է՝ «Ես որդին եմ, Որմիզդը»։ Զրուանն ասում է նրան. «Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարաչեր»։ Եւ երբ լիխտ դառնապէս լաց եղաւ, թագաւորութիւնը նրան տուեց հազար տարով։

«Երբ ծնաւ միւս որդուն եւս, անունը Որմիզդ դրեց. թագաւորութիւնը խլեց Արհմնից և տուեց Որմզդին, և ասում է նրան. «Մինչեւ այժմ ե՛ս քեզ զոհ արի, այժմ դո՛ւ ինձ արա»։ Եւ Որմիզդն ստեղծեց երկինքն ու երկիրը, իսկ Արհմնը (նրա) դէմ չար գործեց։

«Եւ արարածներն այսպէս են բաժանւում. հրեշտակները Որմզդինն են, իսկ դեւերը՝ Արհմնինը, և այն բոլոր բարիքները, որոնք երկնքից գալիս են երկիր, Որմզդինն են, իսկ այն բոլոր վնասները, որ գործւում են այնտեղից այստեղ, Արհմնի արածներն են։ Նմանապէս երկրիս վրայ ինչ որ բարի է, այն Որմիզդն է ստեղծել, իսկ ինչ որ բարի չէ, այն Արհմն է ստեղծել. ինչպէս որ մարդուն Որմիզդն է ստեղծել, իսկ ախտերը, հիւանդութիւններն ու մահը Արհմնն է ստեղծել։ Եւ բոլոր թշուառութիւններն ու փորձանքները, որ լինում են, և դառն պատերազմները չարի մասի արարածներն են. իսկ յաջողութիւններն ու իշխանութիւնը և փառքն ու պատիւները, և մարմնի առողջութիւնը, դէմքի գեղեցկութիւնը և ճարտարախօսութիւնն ու երկարակեցութիւնը,— սրանք բարիից են (իրենց) գոյութիւնն առնում. իսկ այն ամէնը, որ այդպէս չէ, նրա մէջ չարի մասն է խառնուած։

«Եւ մոլորուած են այն բոլոր մարդիկ, որ ասում են, թէ «Մանն Աստուած է ստեղծել, և չարն ու բարին նրանից են լինում»։ Մանաւանդ ինչպէս քրիստոնեաններն են ասում, թէ «Աստուած նախանձոտ է. ծառից մի թուղ ուտելու համար Աստուած մահ ստեղծեց, և մարդուն այդ պատժին ենթարկեց» 52։

Այդպիսի նախանձ մարդն էլ չունի մարդու նկատմամբ. ո՛ւր մնաց թէ Աստուած (ունենայ) մարդկանց նկատմամբ. որովհետեւ ով ասում է այս բանը, նա խուլ է և կոյր, և Հարամանիք դեւերից խաբուած։

«Մի ուրիշ մոլորութիւն էլ. ասում են՝ «Աստուած, որ ստեղծեց երկինքն ու երկիրը, եկաւ և ծնուեց մի կնոջից, որի անունն էր Մարիամ և նրա մարդու (անունը) Յովսէփ». իսկ ճշմարտութիւնն այն է, որ նա բանթուրակ անունով մէկի որդին է եղել, անկարդ խառնակութիւնից (ծնուած) 53։ Եւ այդպիսի մարդու ետեւից են մոլորուած չատերը։

«Եթէ Հոռոմների աչխարհը մեծ յիմարութեան պատճառով տգիտաբար մոլորուել է և զրկուել մեր կատարեալ հաւատից, իրենց անձերին են պատճառում իրենց վնասը. էլ դո՞ւք ինչու էք նրանց մոլորութեան ետեւից գնալով խելացնորուում։ Այլ՝ ինչ կրօն որ ձեր տէրն ունի, դուք էլ նոյնն ունեցէք. մանաւանդ որ Աստծու առաջ էլ ձեզ համար հաչիւ պէտք է տանք։

«Մի՛ հաւատաք ձեր առաջնորդներին, որոնց նածրացի 54 էք անուանում, որովհետեւ սաստիկ խաբեբաներ են. ինչ որ խօսքերով ուսուցանում են, գործով յանձն չեն առնում։ Ասում են՝ «Մխա ուտելը մեղք չէ», և իրենք չեն ուզում ուտել. «կին առնել պէտք է», բայց իրենք նրա վրայ նայել էլ չեն ուզում. «Հարստութիւն ժողվելը, ասում են, չատ մեղք է», բայց աղքատութիւնը չափից աւելի են գովում։ Յարգում են թշուառութիւնը և պարսաւում յաջողութիւնը. ծաղրում են բախտ անունը և խիստ պախարակում են փառաւորութիւնը. սիրում են անշուք հագուստը և անարդ բաներն աւելի են յարգում, քան պատուականները. մահը գովաբանում են և կեանքը պարսաւում. մարդու ծնունդն անարգում են և գովում են անզաւակութիւնը։ Եւ եթէ դրանց լսէք և կանանց չմերձենաք, շուտով կը հասնի ձեր աչխարհի վերջը։

«Սակայն ես չկամեցայ ամէն բան մանրամասն գրել ձեզ, որովհետեւ ուրիշ չատ բաներ էլ կան, որ խօսում են դրանք։ Այս բոլոր գրածներիցս աւելի վատթարագոյնն այն է, որ քարոզում են, թէ Աստուած մարդկանց ձեռքով խաչ բարձրացուեց, նոյնը մեռաւ և թաղուեց, և ապա յարութիւն առաւ ու եր-

կինք վերադառնալ։ Զի՞ որ դուք ինքներդ պէտք է դատաստան անէիք այդպիսի անարժան ուսմունքների համար։ Դեւերը, որ չար են, չեն բռնւում ու տանջւում մարդկանց կողմից, ո՛ւր մնաց Աստուած, բոլոր արարածների Արարիչը. այսպիսի բաներ ասելը ձեզ համար ամօթ է, իսկ մեզ համար՝ խիստ անհանդուրժելի։

«Արդ, երկու բան կայ ձեր առաջ. կամ կէտ առ կէտ պատասխան տուէք այս նամակին, և կա՛մ վեր կացէք Դուռն եկէք և ներկայացէք Մեծ Ատեանին»։

Այն եպիսկոպոսների անունները, որոնք պատասխանեցին նամակին.

ՅՈՎՍԷՓ՝ Այրարատի եպիսկոպոս.
ՍԱՀԱԿ՝ Տարօնի եպիսկոպոս.
ՄԵԼԻՏԷ՝ Մանազկերտի եպիսկոպոս.
ԵԶՆԻԿ՝ Բագրեւանդի եպիսկոպոս.
ՍՈՒՐՄԱԿ՝ Բզնունեաց եպիսկոպոս.
ՏԱՃԱՏ՝ Տայոց եպիսկոպոս.
ԹԱԹԻԿ՝ Բասենի եպիսկոպոս.
ՓԱՍՈՒՆ՝ Տուրուբերանի եպիսկոպոս.
ԵՐԵՄԻԱ՝ Մարդասցանի եպիսկոպոս.
ԵԻԼԱԼԻ՝ Մարդաղւոյ եպիսկոպոս.
ԱՆԱՆԻԱ՝ Սիւնեաց եպիսկոպոս.
ՄՈՒՇԷ՝ Առծրունեաց եպիսկոպոս.
ՍԱՀԱԿ՝ Ռշտունեաց եպիսկոպոս.
ԲԱՍԻԼ՝ Մոկաց եպիսկոպոս.
ԳԱԴ՝ Վանանդի եպիսկոպոս.
ԵՂԻՇԷ՝ Ամատունեաց եպիսկոպոս.
ԵՂԲԱՅՐ՝ Անձեւացեաց եպիսկոպոս.
ԵՐԵՄԻԱ՝ Ապահունեաց եպիսկոպոս։

Այս բոլոր եպիսկոպոսները[55] *և բազմաթիւ քորեպիսկոպոսներ*[56] *և պատուական երէցներ*[57] *զանազան տեղերից եկեղեցու սուրբ ուխտի հետ միասին՝ միաբան և միահաւան, միահամուռ ժողովուելով Թագաւորանիստ Արտաշատ քաղաքը, մե-*

ծամեծ նախարարների և աշխարհի ամբողջ բազմութեան հաւանութեամբ գրեցին նամակի պատասխանը։

«ՅՈՎՍԷՓ ԿՊԻՍԿՈՊՈՍ, ինձ հետ միաբանածներուդ հետ միասին մեծամեծներից միջեւ փոխրերը, Ասրիներուն եւ Անարիներուն Միհրներուն մեծ հազարապետիդ շատ ու շատ ողջոյն խաղաղասէր մտովս. ես եւ Ասեաց ամբողջ զօրաբանակին58։

«Նախնիներից սովորութիւն ունենք՝ աստուածատուր պատուիրանի համաձայն՝ աղօթք անել թագաւորի կեանքի համար և անդադար խնդրել Աստծուց նրա համար երկար կեանք, որպէսզի խաղաղութեամբ վարի այն տիեզերական իշխանութիւնը, որ Աստուած է յանձնել դրան. որպէսզի դրա երկարատեւ խաղաղ կառավարութեան ժամանակ մենք էլ առողջութեամբ և աստուածպաշտութեամբ անցկացնենք մեր կեանքը։

«Մեր աշխարհն ուղարկած քո նամակի վերաբերմամբ (պատասխանում ենք)։ առաջ ժամանակները մոգպետներից մէկը, որ ձեր հաւատի մէջ ամենից կատարեալն էր և դուք նրան մարդկային բնութիւնից վեր մի բան էիք համարում, հաւատաց երկնքի ու երկրի արարիչ կենդանի Աստծուն, և կէտ առ կէտ բացատրեց ու հասկացրեց ձեզ ձեր կրօնը։ Եւ երբ չկարողացան խօսքով նրա դէմն առնել, քարկոծուելով մեռաւ Որմիզդ արքայից59։ Եւ եթէ ճիշդ կը համարես լսել մեր ասածը, այդտեղ ձեր աշխարհի շատ վայրերում կայ նրա գիրքը, կարդա՛ և այնտեղից կը տեղեկանաս։

«Ինչ վերաբերում է մեր կրօնին, ամենաւելին աներեւոյթ չէ այն և ոչ էլ աշխարհի որևէ մի անկիւնում է քարոզւում, այլ համատարած ամբողջ աշխարհում, ծովի և ցամաքի ու կղզիների վրայ, ո՛չ միայն արեւմուտքում, այլև արեւելքում, այլև հիւսիսում ու հարաւում և մէջերքում լի է հոծութեամբ։ Ո՛չ թէ մարդու է ապաստանած, որ վերակացուի միջոցով տարածուի աշխարհում, այլ իր հաստատութիւնն իր մէջ ունի։ Ո՛չ թէ ուրիշ վաթարների մօտ է վեհ երեւում, այլ վերեւից՝ երկնքից ունի (իր) անսուտ օրէնսդրութիւնը, ո՛չ միջնորդի ձեռքով, որովհետեւ մէկ է Աստուած և բացի նրանից ուրիշը չկայ, ո՛չ աւելի մեծ և ոչ էլ աւելի փոքր։

«Ո՛չ թէ որևէ մէկից է Աստուած սկիզբն առել, այլ ինքն-

ըստինքեան մշտնջենաւոր է. ո՛չ թէ մի որևէ տեղ է, այլ ինքը տեղ է իրեն համար. և ոչ թէ գոնուում է որևէ ժամանակի մէջ, այլ ժամանակները նրանից են գոյացել. ո՛չ միայն աւելի հին է քան երկինքը, այլև քան կարող են մտածել ու կարծել մարդիկ ու հրեշտակները. Տարրեղէն կերպարանք չի ընդունում և աչքի տեսողութեան չի ենթարկւում. և ո՛չ միայն ձեռքով չի կարելի զննել, այլև ոչ ոքի մտքի տակ անգամ չի ընկնում, ո՛չ միայն մարմնաւորներիս, այլեւ անմարմին հրեշտակների. բայց եթէ ինքը կամենում է, ճանաչւում է իր արժանաւոր (հաւատացեալներին) մտքով, բայց աչքերին չի տեսնւում, և այն էլ՝ ո՛չ թէ երկրաւորներիս մտքով (է ճանաչւում), այլ նրանց, ովքեր ճշմարտութեամբ հաւատացել են Աստծուն։

«Եւ նրա անունն է երկնքի ու երկրի արարիչ. իսկ երկնքից ու երկրից առաջ, որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է։ Ինքն անժամանակ է, իսկ արարածներիս երբ կամեցաւ՝ լինելու սկիզբ դրեց ո՛չ թէ ընչից, այլ ոչնչից. որովհետեւ ինչր միայն նա է, եւ մնացած ամէն բան նրանից ընչացաւ։ Ո՛չ թէ իբր յեռոյ իմացաւ եւ ստեղծեց, այլ դեռեւս չստեղծած՝ իր կանխագիտութեամբ տեսնում էր արարածներին. ինչպէս և այժմ նախ քան մարդու բարի կամ չար բան գործելը՝ Աստծուն յայտնի են մարդկանց չգործածները։ Այսպէս էլ այն ժամանակ, երբ դեռ բան չկար. ո՛չ թէ խառնիխուռն էր ճանաչում դեռ չստեղծուածներին, այլ իւրաքանչիւր մասերի տեսակները նրա առաջ կային կարգաւորուած և յարմարեցուած, իսկ մարդկանց եւ հրեշտակների (վերաբերմամբ)՝ թէ՛ տեսակները և թէ այն ամէնը, ինչ որ լինելու էին տեսակի մէջ։

«Եւ որովհետեւ ստեղծող զօրութիւն է, մեր չարութիւնը չէր կարող արգելք լինել նրա բարերարութեանը, ինչպէս որ հէնց եղաւ էլ. և դատաւոր ունենք արարիչ աջը։ Այն ձեռքը, որ երկինքն ու երկիրը հաստատեց, նոյնը և քարեղէն տախտակների վրայ փորագրեց և դպրութիւն տուեց մեզ, որը պարունակում է խաղաղական և փրկարար օրէնքներ. որպէսզի ճանաչենք երեւելի և աներեւոյթ (արարածների) արարիչ մի Աստծուն. ո՛չ այլ և այլ, իբր թէ մեկը բարի և մեսը՝ չար, այլ միեւնոյնը՝ համակ բարի։

«Բայց եթէ քեզ թուայ, թէ Աստծու ստեղծածներուն մէջ չար բան կայ, ասա՛ համարձակ, որպէսզի թերեւս ճշմարիտ բարին սովորես։ Ասացիր, թէ դեւերը չար են. կան և բարի դեւեր, որոնց թէ՛ դուք և թէ մենք հրեշտակ ենք անուանում. եթէ կամենան՝ դեւերն էլ բարի կը լինեն, և եթէ կամենան՝ հրեշտակներն էլ չար կը լինեն։ Այս բանը մարդկանց մէջ էլ է լինում, եւ աւելի մխեւնոյն հօր որդիների մէջ. կա՛յ, որ հնազանդու հպատակ է հօրը, եւ կա՛յ, որ սատանայից էլ աւելի վատ է։ Նոյնիսկ ինքը մարդն էլ առանձին՝ երկուսի բաժանուած է երեւում, երբեմն չար եւ երբեմն բարի. նա, որ բարի էր, նոյնը չարացաւ, պատահեց, որ կրկին դէպի բարին չրջուեց, բայց բնութիւնը մէկ է։

«Իսկ այն, որ ասում ես, թէ մէկ թուզի համար Աստուած մահ ստեղծեց, մի կտոր մագաղաթը աւելի աննշան բան է, քան թուզը, բայց եթէ թագաւորի խօսքը գրուում է նրա վրայ, ով այն պատռում է, մահուան պատիժ է ստանում։ Արդ, կարելի՞ է չար ասել թագաւորի մասին. ամենեւի՛ն, ես չեմ ասում, այլ որպէս խրատ մէջ բերելով՝ ուրիշներին սովորեցնում եմ։ Աստուած այն ժամանակ նախանձոտ կը լինէր, եթէ պատուիրած չլինէր այն ծառից չուտել. իսկ եթէ առաջուց զգուշացրեց, իր բնական սէրն ու գութը ցոյց տուեց նրա վերաբերմամբ։ Իսկ մարդն արհամարհելով (այն)՝ մահուան պատիժ ընդունեց։

«Բայց այն, որ ասացիր, թէ Աստուած կնոջից ծնուեց, դրանից քեզ վայել չէր խորշել և փախչել. որովհետեւ անաւասիկ Աբէլը և Որմիզդը հօրից են ծնուել և ոչ թէ մօրից. որի մասին եթէ լաւ մտածես, դու էլ չես ընդունի։ Եւ մի այլ դրանից էլ աւելի ծաղրելի բան, Միհր աստուածը կնոջից ծնուեց, եթէ (ներելի է, որ) մէկն իր ծնողի հետ պառկի։

«Բայց եթէ մի քիչ քեզանից հեռացնէիր իշխանական գոռոզութիւնդ, և գայիր ընկերաբար պայքարելու, գիտեմ, որ ինչպէս ուրիշ ամէն բանով չատ իմաստուն ես, մեր Տիրոջ սուրբ կոյսից ծնուելն էլ աւելորդաբանութիւն չէիր համարի, այլ աշխարհս ոչնչից ստեղծելուց աւելի մեծագոյնը կը համարէիր վերջին փրկութիւնը, յանցաւորութիւնը կը վերագրէիր մարդու

ազատութեանը, իսկ ծառայութիւնից ազատուելը՝ Աստծու բարերարութեանը։

«Որովհետեւ երբ լսում ես, թէ Աստուած այս ամբողջ աշխարհը ոչնչից ստեղծեց, այնպէս պէտք է հասկանաս, որ արարածները նրա խօսքով ծնուեցին, իսկ Աստուած, որ այս մեծ մարմինն առանց չարչարանքի ծնեց, ի հարկէ իբրեւ հայր գութ ունի սրա վրայ։ Որովհետեւ քանի որ ինքն անապական է, արարածներին էլ առանց ապականութեան ծնեց, իսկ սա իր կամքով գլորուելով ապականուեց. և ինքն իրեն այլեւս չէր կարող ոտքերի վրայ հաստատուն կանգնել։ Որովհետեւ հողից էր (ստեղծըւած), ինքն իրեն վնասելով՝ նորից նոյն բնութեանը դարձաւ. և քանի որ ո՛չ թէ ուրիշ որևէ չար զօրութիւնից ընդունեց պատիժն ու պատուհասը, այլ իր անհոգութիւնից, որ չլսեց բարերար պատուիրանը, (նրա) ծառայական մասը պատժուեց մահով, որ կրեց իր անձի մէջ։

«Արդ, եթէ մահը չար աստուածն ստեղծեց, մէջտեղը մահուան ի՞նչ գոյութիւն է երեւում. ոչինչ։— Բայց բարի Աստծու արարածներին ապականեց։— Եթէ այդ այդպէս է՝ նրան չի կարելի բարի էլ ասել, այլ կիսագործ ապականացու, եւ ո՛ր աստծու արարածները ապականուող են և փճացող, նրան չի կարելի անեղծ աստուած ասել. թողէ՛ք, ուրեմն, այդ յիմար բարքանջանքները։

«Մի աշխարհը երկու իշխող չի ունենայ, ո՛չ էլ մի արարածը՝ երկու Աստուած։ Եթէ մի աշխարհին յանդգնեն իշխել երկու թագաւորներ, աշխարհը կը փճանայ և թագաւորութիւնները կ'ոչնչանան։

«Այս աշխարհը նիւթեղէն է, և նիւթերը ջոկ-ջոկ են և միմեանց հակառակ։ Այս հակառակորդների արարիչը մէկ է, որ համաձայնեցնելով սրանք՝ սիրել է տալիս միմեանց. ինչպէս որ (ստեղծողը) կրակի ջերմութիւնը ճզմելով մեղմացնում է օդի հովութեամբ, և օդի կարծր բրտութիւնը՝ կրակի ուժով, այնպէս էլ մանրամաղ փոշիացած հողը զանգում է ջրի խոնաւութեամբ, իսկ ջրի վայր թափուող բնութիւնը սալայատակի նման ամրացնում է հողի խառնուրդով։

«Որովհետեւ եթէ այս տարրերը միաբանուէին, գուցէ կար-

ճամխոներից մէկը անապական աստուած էլ կարծէր սրանց, և Արարչին թողնելով՝ այս արարածին երկրպագութիւն մատուցանէր. այդ պատճառով էլ՝ ով որ սրան ստեղծեց, առաջուց զգուշացաւ, որպէսզի մարդիկ տեսնելով այս ապականացու տարրերի առկայութիւնը, մխիթարին սրա կառավարողին ճանաչեն անապական, մէկին և ո՛չ երկուսին, նոյն Արարչին այս չորս տեսակ նիւթերի, որոնցից առաջանում են բոլոր բաները իրենց ստեղծողի հրամանով։ Եւ չրջափոխուելով չորս եղանակով կատարում են իրենց տարեւոր սպասաւորութիւնը. և չորսն էլ նայում են իրենց ստեղծողի կամքին ու ակնարկութեանը, և առանց դիտակցելու լծուած են անհրաժեշտ գործը կատարելու՝ պատուի կարգը չյափշտակելով միմեանցից։

«Ահա պարզ բացատրութիւնը, որ ամէն մարդու համար դիւրըմբռնելի կը լինի։ Որովհետեւ կրակը գոյացութեամբ և զօրութեամբ խառնուած է երեք մասերի մէջ էլ, այնպէս որ ջերմութիւնն աւելի շատ գտնւում է քարերի և երկաթների մէջ, և աւելի քիչ՝ օդի և ջրի մէջ, բայց ինքն առանձին ոչ մի տեղ չի երեւում։ Իսկ ջրի բնութիւնն այնպէս է, որ առանձին էլ կայ, երեք մասերի հետ խառն էլ կայ, աւելի շատ՝ հողաբոյսերի մէջ և աւելի քիչ՝ օդի և կրակի մէջ։ Իսկ օդը թափանցանց գտնւում է կրակի և ջրի մէջ, և ջրի միջոցով էլ բուսական կերակուրների մէջ։

«Եւ այսպէս այս տարրերը խառնուած են և դարձել են ինչպէս մի մարմին, և չեն կորցրել իւրաքանչիւրն իր բնութիւնը, և երբեք էլ կանգ չեն առել հակառակութեամբ, հնազանդ մնալով այն անխառն իշխանին՝ որ խառնուածներն յարմարեցնում է իրար հետ՝ բոլոր կենդանիների բնակութեան և ամբողջ աշխարհիս յարակայ տեւողութեան համար։

«Իսկ եթէ այս անբան աշխարհի համար այսպէս հոգ է տանում Աստուած, ի՞նչքան աւելի կը հոգայ բանաւոր աշխարհի՝ մարդու համար։

«Այս բանն ասաց նաև ձեր երեւելի իմաստուններից մէկը, թէ Միհր աստուածը մարդկային մօր ծնած էր, և աստուածաշունչ թագաւոր է և քաջ համհարզ եօթերորդ աստուածների։ Եթէ կարելի է հաւատալ այդ առասպելաբանութեանը, — որ

դուք նոյնիսկ գործերով կատարեալ էք ցոյց տալիս ձեր հաւատի մէջ,— մենք այլեւս առասպելներին չենք հաւատում, այլ աչակերտ ենք մեծ Մովսէս մարգարէի, որի հետ Աստուած խօսեց մորենու մէջ Սինայում, և ղէմ առ ղէմ օրէնքներ գրեց և տուեց նրան. և հասկացրեց այս նիւթեղէն աշխարհի արարածական լինելը և իր աննիւթ էութիւնը, որ այս նիւթերի ստեղծողն է ոչնչից. և ցոյց տուեց նրան, որ այս երկիրը երկրաւորներով և երկինքը երկնաւորներով նրա ձեռքի գործն են։ Երկնքի բնակիչները հրեշտակներն են, իսկ երկրի բնակիչները՝ մարդիկ. բանաւոր են միայն մարդն ու հրեշտակը, իսկ Աստուած բարձր է երկնքից և երկրից։

«Եւ բոլոր արարածներն անդադար օրէն կատարում են նրա պատուիրանները ու հրամանները և երբեք չեն անցնում իրենց համար դրուած սահմանից. բայց մարդն ու հրեշտակը ազատ են թողնուած իրենց կամքին, որովհետեւ բանական են. եթէ նրա հրամանին հնազանդ մնան, անմահ են և Աստծու որդիներ։ Բոլոր արարածներին տուել է ծառայութեան համար — երկիրս՝ մարդկանց, իսկ երկինքը՝ հրեշտակներին. իսկ եթէ ականջ չդնեն և պատուիրանը չպահեն, Աստծուն ընդդէմ գործեն, ամէն պատուից (կ'ընկնեն) և կ'անարգուեն, որպէսզի (նրա) իշխանութիւնն անդադար երեւայ, իսկ յանցանք կատարողներն ամօթալից լինեն։

«Իսկ եթէ դու մոլորուել ես ապիտութեան մէջ, ես, որ հաստատ գիտեմ, չեմ կարող քո մոլորութեան յետեւից գալ։ Եթէ հետեւեմ քո անուսումնութեանդ, երկուսս էլ անդառնալի կորստի կը մատնուենք, գուցէ՝ ես քեզանից աւելի վատթար, որովհետեւ ինձ վկայ ունեմ Աստծու ինքնասաց ձայնը. «Այն ծառան,— ասում է,— որը չգիտէ իր տիրոջ կամքը, և ծեծի արժանի մի գործ է կատարում, ծեծ ուտելն ուտում է. բայց աւելի քիչ. իսկ ով լաւ տեղեակ է թագաւորի կամքին և որևէ յանցանք է գործում նրա առաջ, բազմապատիկ տանջանքի է ենթարկուում առանց բարեխօսի»61։

«Արդ, խնդրում եմ քեզ և քո իշխանութեան տակ եղած բոլորին. ո՛չ դու ինձ հետ բազմապատիկ տանջանքի ենթարկուիս և ո՛չ էլ ես քեզ հետ՝ աւելի քիչ. այլ ես ու դու և ամբողջ

քաղմութիւնդ քաջ թագաւորիդ հետ միասին այնպէս աշակերտենք աստուածային դրքերին, որ տանջանքներից փրկուենք և դժոխքը ոտնակոխ անենք, և անհանդչելի կրակից ազատուենք, և արքայութիւնը ժառանգենք, և անցաւոր կեանքով անվերջ ուրախանանք անանց մեծութիւնը։

«Բայց ինչ բանից որ դու զարհուրել ես, բարեհաճ եղիր և շուտով կ'աշակերտես ճշմարտութեանը։

«Հրեշտակներից մէկն անմահների գնդից՝ ապստամբուելով հեռացաւ երկնքից և գալով մեր աշխարհը՝ խաբէական խօսքերով ու սուտ խոստումով անիրագործելի յոյս տուեց անփորձ ու անկիրթ նոր եղած մարդուն, ինչպէս մի մանուկ տղայի, ըմբռնացնելով նրա միտքը, որ ուտի այն ծառի պտղից, որին հրամայել էր չմօտենալ,— որպէսզի աստուած դառնայ։ Իսկ նա Աստծու պատուիրանը մոռանալով՝ խարուեց-գնաց մոլար խաբէութեան յետեւից, կորցրեց իր ունեցած անմահ փառքը և չհասաւ երազով յուսացած փառքին։ Ուստի և մերժուելով կեանքի վայրից՝ գցուեց այս ապականելի աշխարհը, որի մէջ դուք էլ բնակուած էք այժմ, և ցնորուած մոլորուում էք միեւնոյն խրատուի յետեւից, այլեւս չուտելով պատուիրած ծառից, այլ արարածներին աստուած անուանելով, և անխօս տարրերին երկրպագելով, և անորովայն դեւերին կերակուր մատուցանելով և բոլորի արարչից հեռացած լինելով։

«Զար խրատուն չի կշտանում, այլ կամենում է, որ իրենից էլ աւելի վատթարները կատարի։ Որովհետեւ դեւերը ո՛չ թէ բռնութեամբ են մարդուն դէպի կորուստ տանում, այլ մեղքը քաղցրացնում են մարդու քմքի համար, յորդորելով որսում են անուսումներին և խաբում, ինչպէս որ շատ մարդիկ իրենց ընկերներին գողութեան և աւազակութեան են յորդորում։ Ո՛չ թէ որեւէ բռնութեամբ մղելով, այլ ստապատիր խաբէութեամբ շատ չարիքներ են գործել տալիս, ոմանց կախարդութիւն, ոմանց պոռնկութիւն և ոմանց էլ շատ ուրիշ անթիւ աղտեղի բաներ։ Եւ արդար դատաւորները մահու չափ վրէժ են առնում. ո՛չ իբր թէ բարի Աստծու դատաւորները բարեգործ են լինում, իսկ չարինը՝ չարագործ. որովհետեւ շատ է պատահում, որ բարի

մարդկանցից չարութիւն է բխում, և յետոյ այն չարագոյնները-ից էլ՝ կատարեալ բարութիւն։

«Եւ ճշմարիտ դատաւորները, որոնք դատում են չարագործ-ներին, ո՛չ թէ չար ու չարչարող են կոչւում, այլ շատ բարի և բարեգործ. և բնութիւնը մէկ է և ոչ թէ երկու. իսկ այն մէկից երեւան են գալիս երկու տեսակ գործեր, ոմանց համար մահա-քեր, իսկ ուրիշների համար պարգեւատուն։ Եւ եթէ մարդկանց մէջ այսպէս է կատարւում, որ (դատաւորը) թագաւորից ստա-ցած իրաւունքի համաձայն պատժի միջոցով կառավարում է իր իշխանութիւնը, ո՞րչափ աւելի կը լինի Աստծու խնամքը ամ-բողջ աշխարհի համար, որ բոլորին էլ կեանք է կամենում և ոչ թէ մահ։ Եւ ահա, ուր բազմացաւ յանցանքը, բոլորին էլ մահով պատժեց, իսկ ուր հնազանդութիւն և լսողութիւն եղաւ, անմահութեան պարգեւներ չնորհեց։

«Ճշմարիտ Աստուածը, մեր բոլորիս արարիչը նա է, որին-դու անսանձ արձակ բերանով անահ աներկիւղ համարձակ հայ-հոյում ես։ Թողած Յիսուս Քրիստոս փրկական անունը՝ Բան-թուրակի որդի ես անուանում և կարծում ես, թէ մոլորեցուցիչ մարդ է. այլ և երկնաւոր փրկութիւնն աղաւաղում-անարգում ես՝ անձիդ և ամբողջ աշխարհիդ կորստեան համար։ Այդ տան-ջանքների անանցական վրէժը պիտի փոխհատուցես սպառնացած Գեհենին62 անչէջ կրակի մէջ՝ քո բոլոր գործակիցներով մէկ-տեղ, առաջիններով, միջիններով և վերջիններով։

«Իսկ մենք այսպէս ենք ճանաչում Աստծուն և այս բանին հաւատում ենք աներկբայ։

«Նա, որ ստեղծեց այս աշխարհը, նոյնը եկաւ և ծնուեց աւուրբ կոյս Մարիամից, ինչպէս առաջուց գուշակել էին մար-գարէները, առանց մարմնաւոր կարգի որևէ պատճառի։ Ինչպէս որ ոչնչից ստեղծեց այս մեծամասնին աշխարհը, այնպէս էլ առանց որևէ մարմնական միջնորդի (իր) մարմինն առաւ անա-բատ կոյսից ճշմարտապէս, և ոչ իբրև ստուեր երեւալով։ Ճշմար-տապէս աստուած էր և ճշմարտապէս մարդ դարձաւ. ո՛չ մարդ գառնալիս աստուածութիւնը կորցրեց, և ո՛չ էլ աստուած մնա-լիս՝ աղաւաղեց մարդկութիւնը, այլ (մնաց) մի եւնոյնը։

«Բայց որովհետեւ չէինք կարող տեսնել անտեսանելուն և

մերձենալ անմերձենալուն, ուստի եկաւ մեր մարդկութիւնն ընդունեց, որպէսզի մենք էլ նրա աստուածութիւն(ից բաժին) ընդունենք։ Ամենեւին անարգ բան չհամարեց իր ստեղծած մարմինն առնելը, այլ մեծարեց նրան իրրեւ իր աստուածստեղծ գործը։ Ո՛չ թէ քիչ-քիչ չնորհեց սրան անմահութեան պատիւն ինչպէս անմարմին հրեշտակներին, այլ միանգամից զգեցաւ ամբողջ բնութիւնը մարմնով՝ չնչով և հոգով, և միացրեց աստուածութեան հետ. միութիւն և ոչ թէ երկուութիւն. և այսուհետեւ մէկ ենք ճանաչում աստուածութիւնը, որ կար այս աշխարհից առաջ, նոյնը և այսօր և յաւիտեան։

«Այս Յիսուս Քրիստոսը, որ իր մարմնի մէջ փրկեց ամբողջ աշխարհը, իր կամքով դէպի մահ եկաւ. և ինչպէս ինքն աստուածութիւնը գիտէ՝ մարմնացաւ անսպառ կոյսից և ծնուեց ու խանձարուրներով փաթաթուեց և մսուրի մէջ դրուեց. և այս արեւելեան կողմերից մոգերին չարժեց-բերեց իրեն երկրպագելու. որպէս երեխայ անուեց կաթով, աճեց ու մեծացաւ երեսուն տարի, ամբորդի Յովհաննէսից[63] մկրտուեց Յորդանան գետում[64]։ Մեծամեծ հրաշքներ ու սքանչելիքներ գործեց հրեաների մէջ. մատնուեց քահանաների կողմից, դատապարտուեց Պոնտացի Պիղատոսի[65] կողմից։ Խաչուեց, մեռաւ, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ. երեւաց տասներկու աշակերտներին և ուրիշ չատերին՝ աւելի քան հինգ հարիւրի։ Եւ նրանց հետ չրջելով քառասուն օր՝ երկինք վերացաւ Ձիթենեաց սարից[66] իր աշակերտների աչքի առաջ, ելաւ ու նստեց հայրենի աթոռը։ Աստուածաւ երկրորդ անգամ գալ ահաւոր զօրութեամբ՝ մեռելներին յարութիւն տալու, ամբողջ աշխարհս նորոգելու, արդարների և մեղաւորների միջեւ արդար դատաստան անելու, արժանաւորներին պարգեւատրելու և ա՛յն չարագործներին պատժելու համար, ովքեր այս բոլոր բարերարութիւններին չեն հաւատում։

«Այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որեւէ այլ դառն հարուած։ Մեր ամբողջ գոյքն ու ստացուածքը քո ձեռքումն են, և մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա, ինչ ուզում ես։ Եթէ այս հաւատի

մէջ թողնես, ո՛չ երկրի վրայ ուրիշ տէր կ'ընդունենք քո փոխարէն և ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստուած կ'ընդունենք Յիսուս Քրիստոսի փոխարէն, որից բացի՝ ուրիշ Աստուած չկայ։ Իսկ եթէ այս մեծ վկայութիւնից յետոյ ուրիշ բան հարցնես, անհաւասիկ պատրաստ ենք՝ մեր ամբողջ մարմինը քո ձեռքը տուած. արա՛ չուտով՝ ինչ որ կամենում ես, քո կողմից տանջանք. իսկ մեր կողմից յանձնառութիւն. քո սուրը և մեր պարանոցները: Մենք ոչնչով աւելի լաւ չենք մեր նախնիներից, որոնք այս հաւատի համար դրին իրենց գոյքն ու ստացուածքը և մարմինները։ Որովհետեւ եթէ անմահ էլ լինէինք և պէտք լինէր մեզ մեռնել Քրիստոսի սիրոյ համար, արժան էր. որովհետեւ նա էլ անմահ էր, բայց ա՛յնչափ սիրեց մեզ, որ մինչեւ անգամ մահ յանձն առաւ, որպէսզի մենք էլ նրա մահով փրկուենք յաւիտենական մահից։ Եւ եթէ նա իր անմահութիւնը չխնայեց, մենք, որ (մեր) կամքով մահկանացու եղանք, (մեր) կամքով էլ կը մեռնենք նրա սիրոյ համար, որպէսզի նա էլ յօժարութեամբ ընդունի մեզ իր անմահութեան մէջ. կը մեռնենք իրրեւ մահկանացուներ, որպէսզի (նա) մեր մահն ընդունի որպէս անմահների մահ։

«Իսկ դու այս ամենի մասին մեզ այլեւս մի՛ հարցնի. որովհետեւ մեր հաւատի ուխտը ո՛չ թէ մարդու հետ է, որ երեխայի նման խաբուենք, այլ Աստծու հետ է անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ, ո՛չ այժմ և ո՛չ յետոյ, ո՛չ յաւիտեանս և ո՛չ էլ յաւիտենից յաւիտեանս»։

Ամբողջ բազմութիւնը, մեծերից մինչեւ փոքրերը, միաբանուեցին այս մեծ վկայութեանը. անաուտ երդում դրին՝ կեանքով և մահով հաստատ մնալ նրա վրայ։

Երբ այդ նամակն արքունիք հասաւ և կարդացին մեծ Կոնստանտիոս[67] բանակի ամբողջ բազմութեան առաջ, չատերը, որ լսում էին, գովում էին (տուած) պատասխանները։ Թէպէտեւ տէրութիւնից երկիւղ էին կրում, սակայն գաղտնաբար մէկմէկու մօտ նոյն գովասանական վկայութիւնն էին տալիս. ճարտարաբանութիւնից աւելի զարմանում էին աներկիւղ համարձակութեան վրայ։ Եւ անաբեկուածներից չատերն սկսեցին

ամրապէս զօրանալ և նոյն չչնջիւնն էր լսւում բոլոր թերանների։

Իսկ չարաչէր մոգպետը մեծ հազարապետի հետ միասին չարախօսութիւն չնչեց և Թագաւորին իբրեւ անչինջանելի հուր բորբոքեց։ Եւ նա սկսեց ատամները կրճտացնել ինչպէս մի օրհասական վիրաւոր և բոլորի առաջ ձայն արձակելով մեծ հրապարակի68 մէջ՝ ասաց. «Ես գիտեմ այդ բազմաթիւ մարդկանց չարութիւնը, որոնք թերահաւատութեամբ են վերաբերւում մեր կրօնին և անդարձ մոլորուած են կախարդութեան յետեւից։ Եւ ես մտքումս դրել եմ, որ ոչ ոքի մեծամեծ հարուածներից չազատեմ, մինչեւ որ ակամայ հեռանան այնպիսի սխալ կրօնից. եթէ ամենամօտիկ մարդկանցիցս մէկն էլ լինի, նոյն պատիժները նրանց էլ կը տամ»։

Այն ժամանակ դառնացած ծերը69 խօսք վրայ բերեց և ասաց Թագաւորին. «Ինչո՞ւ համար է այդ քո մեծ տրտմութիւնը. որովհետեւ եթէ կայսրը քո հրամանից դուրս չի գալիս և հոները քեզ են ծառայում, էլ ո՞ր մարդն է երկրի վրայ, որ կարող է ընդդիմանալ քո հրամանին։ Տիրաբար հրաման տուր ներսը70, և ինչ էլ որ ասես՝ իսկոյն կը կատարուի»։

Եւ Թագաւորն անմիջապէս ներս կանչեց դպրապետին և հրամայեց հրովարտակ գրել. բայց այլեւս ո՛չ թէ սովորութեան համաձայն, այլ զայրագին խօսքեր ինչպէս աւելի և անպիտան անձերի, ամենեւին չյիշելով տիրասէր մարդկանց մեծամեծ ծառայութիւնները, այլ միայն անուն-անուն կանչելու հրամանտալով այն մարդկանց, որոնց ինքը ճանաչում էր։ Եւ սրանք են նախարարների անունները.

Սիւնեաց տոհմից Վասակ անունով.
Արծրունեաց տոհմից Ներսապուհ անունով.
Ռշտունեաց տոհմից Արտակ անունով.
Խորխոռունեաց տոհմից Գադիսոյ անունով.
Մամիկոնեան տոհմից Վարդան անունով.
Մոկաց տոհմից Արտակ անունով.
Ապահունեաց տոհմից Մանեհ անունով.
Ամատունեաց տոհմից Վահան անունով.

Վահեւունեաց տոհմից Գիւտ անունով.
Անձեւացեաց տոհմից Ներսես անունով։

Այս նախարարներին անուն-անուն կանչեցին արքունի դուռը. (Հայ նախարարների) մի մասը հէնց իրեն մօտ էին՝ բանակում, միւսներն էլ հիւսիսային կողմերը՝ Հոնաց պահակում. նախարարներից ոմանց էլ թողել էր Հայոց աշխարհում։

Արդ, թէպէտեւ բոլորը միեւնոյն տեղում չպատահեցին միմեանց, բայց առաջուց իմանալով չարաբարոյ բռնաւորի մտադրութիւնները, հեռաւորներին էլ իբրեւ միեւնոյն վայրում եղած մերձաւորների միմեանց մօտիկ էին համարում։

Եւ մեծ եպիսկոպոս Յովսէփի ձեռքով նոյն ուխտի մէջ հաստատուելով՝ իւրաքանչիւրն իր տեղից ելան–գնացին արքունի Դուռը։ Եւ չատ էին չտապում (իրենց) եղբայրների, որդիների և դայեկասնունդ71 սիրելի բարեկամների համար, որոնք խիստ մեծ նեղութեան մէջ էին։ Այս պատճառով էլ նրանք իրենց անձը մահուան մատնեցին՝ ամենեւին չվախենալով ինչպէս թոյլ վատասիրտներ, այլ մեծ քաջութեամբ սիրտ էին տալիս միմեանց, որ գուցէ կարողանան նրանց փրկել մեծամեծ հարուածներից։

Երբ հասան արքունի դուռը՝ Զատկի Աւագ Շաբաթ օրը ներկայացան թագաւորին։ Եւ թէպէտ իրենց եղբայրներին տեսնում էին մեծամեծ վշտերի ու տառապանքների մատնուած, որոնք Քրիստոսի անուան համար սաստիկ նեղութեան մէջ էին, բայց դէմքերին ոչ մի տրտմութիւն ու տխրութիւն չէին ցոյց տալիս ժողովի առաջ։ Եւ որքան նրանք ուրախ-զուարթ էին երեւում բոլորին, այնքան աւելի էին զարմանում չարաչարները։

Առաջուան ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որեւէ պատուաւոր զօրավարի առաջնորդութեամբ հեծելազօր էր գնում Դուռը, թագաւորը մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջութիւնն ու խաղաղութիւնը. և երկու–երեք անգամ նոյնն էր անում. զօրահանդէսն էլ թագաւորն ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մօտ գալ–տեղ հասնելն անգամ մեծ չնորհա-

կալութեան արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամէնքին, յիշում էր նրանց նախնիների ծառայութիւնները և պատմում էր նրանցից իւրաքանչիւրի քաջութիւնը։

Իսկ այն օրը սրանցից և ոչ մէկն էլ չյիշեց, այլ ինչպէս մի չար դեւ՝ չէր դադարում ձմեռուայ բուքը յուզելուց ու չարժելուց. ինչպէս որ հէնց նմանւում էլ էր վրդովուած ալեկոծ ծովի, որը ո՛չ թէ երեսանց է մի քիչ (յուզւում), այլ նոյնիսկ անդունդից էր բարձրանում փրփրած ու իրար վրայ դիզուած. և վիշապաձայն որոտալով, գաղանի նման մռնչալով ընդհանրապէս սարսափեցնում էր իր տիեզերական իշխանութիւնը, կարծես թէ փուլ գալով պիտի տարածուէր ամէն կողմ լեռների, անդունդների և ձորերի վրայ՝ լայնարձակ ու գեղեցիկ դաշտերը մի անգամայն փչացնելու համար։

Մռնչալով ձայն արձակեց և ասաց. «Երդուել եմ մեծ աստուած արեգակով,— որ իր ճառագայթներով լուսաւորում է ամբողջ տիեզերքը և իր ջերմութեամբ կենդանացնում է բոլոր արարածներին,— որ եթէ վաղն առաւօտեան, ածանչելու ծագելուն պէս, բոլորդ ինձ հետ միասին ծունր չդնէք նրա առաջ՝ նրան աստուած դաւանելով, ձեզ ամենեւին զիջողութիւն չեմ անի, ամէն տեսակ նեղութիւն ու չարչարանք կը թափեմ ձեզ վրայ, մինչեւ որ ակամայ կատարէք իմ կամքն ու հրամանը»։

Իսկ հաւատացեալները՝ Քրիստոսի մէջ հաստատուած՝ ո՛չ ձմեռային սառնամանիքից էին հովանում և ոչ խորշակի տօթից տաքանում, ո՛չ ահագին ձայնից էին սարսափում և ո՛չ էլ տանջանքների սպառնալիքից վախենում, այլ վերեւ նայելով՝ տեսնում էին Քրիստոսի զօրութիւնն իրենց օգնութեան եկած և զուարթ դէմքերով ու համեստ խօսքերով առաջ անցնելով՝ թագաւորին պատասխան տուին.

«Ինդրում ենք քեզնից, քա՛ջ թագաւոր, ականջ դիր մեր մի քանի խօսքին և քաղցրութեամբ լսի՛ր, ինչ որ ասելու ենք։

«Քեզ յիշեցնում ենք արքայից արքայ Շապուհի ժամանակները, որ քո պապ Յազկերտի72 հայրն էր, և Աստուած նրան Հայոց երկիրը ժառանգութիւն տուեց հէնց այս կրօնով, որով և մենք ենք կառավարում այժմ, և մեր հայրերն ու մեր հայ-

բերի պապերը նրա ծառայութեան մէջ մնացին և սիրով կատարում էին նրա բոլոր հրամանները, և չատ անգամ էլ նրանից մեծամեծ պարգեւներ էին ստանում։ Նա այն ժամանակներից մինչեւ քո հայրենի աթոռը նստելդ՝ մենք էլ նոյն կերպով ծառայեցինք և, թերեւս, քեզ աւելի լաւ, քան քո նախորդներին»։

Այս ասելով՝ ցոյց էին տալիս, որ զինուորութեան կարգի մէջ իրենց քաջութիւններն աւելի էին, քան թէ առաջիններին։ Իսկ տուրքեր, սակեր և աշխարհի ուրիշ ինչ տեսակ հարկեր որ կային, աւելի չատ էին մտնում արքունի (գանձարանը), քան նրա հօր ժամանակ։

«Նոյնիսկ տուրք եկեղեցին, որ մեր նախնիների կարգի համաձայն սկզբից ևեթ ազատ էր ի Քրիստոս, դու հարկի տակ դրիր, և մենք քո տէրութեանդ սիրոյ համար ամենեւին չընդդիմացանք քեզ։ Արդ, ինչո՛ւ համար է այս ցաւումը յարուցուած մեզ վրայ. դու մեզ ասա՛ մեր յանցանքն ու մեղքը. մի՞թէ մեր կրօնն է պատճառ, որ մենք անվաստակ ենք դուրս գալիս քո առաջ»։

Իսկ չար դեւը, ամէն նենգութեամբ լցուած, երեսը մի կողմ դարձրեց և ասաց. «Վնաս եմ համարում արքունի գանձարանն ընդունել ձեր աշխարհի հարկը, և ձեր արիութիւնն ու քաջութիւնն էլ՝ անօգուտ, որովհետեւ տգիտութեամբ մոլորուել էք մեր ճշմարիտ կրօնից, աստուածներին անարգում էք, կրակն սպանում, ջրերը պղծում և մեռելներին հողի մէջ թաղելով՝ երկիրն ապականում, և մեր կրօնի պատուէրները73 չկատարելով՝ ուժ էք տալիս Հարամանիին, և, որ ամենից մեծն է, ամէն ժամանակ կանանց չէք մերձենում. և դեւերը մեծապէս ուրախանում են, երբ չէք խրատւում և չէք պահում մոգերի բոլոր կարգերը։ Տեսնում եմ ձեզ ինչպէս անապատի մէջ ցրուած ու մոլորուած խաչներ, և ինձ համար մեծ խղճահարութիւն է՝ չլինի՞ թէ աստուածները ձեր պատճառով բարկանան ու վրէժը մեզանից առնեն։ Իսկ դուք եթէ կամենում էք ապրել և ձեր անձերը փրկել, և մեծարանքներով յետ ուղարկուել, ինչ որ ասացի՝ վաղը չուտ կատարեցէք»։

Այն ժամանակ երանելի նախարարներն առհասարակ բարձ-

րացրին իրենց ձայնը և ասացին բոլորի առաջ. «Մի՛, թագաւո՛ր, այլեւս մի՛ ասի մեզ այդ բանը. որովհետեւ եկեղեցին մարդու չինածը չէ և ոչ էլ արեգակի տուածը, որի մասին դու թիւրիմացութեամբ կարծում ես, թէ աստուած է. ո՛չ միայն աստուած չէ նա, այլ և կենդանի էլ չէ։ Իսկ եկեղեցիները ոչ թագաւորների պարգեւ են, ո՛չ ճարտար արուեստների գործ, ո՛չ իմաստունների գիւտ, ո՛չ գինուորների քաջութեան աւար և ոչ էլ դեւերի ստապատիր խաբէութիւն. այլ և ինչ էլ որ ասելու լինիս երկրաւորներից, վեհ բաներից թէ վատթարներից, ոչ մի տեղ նրանցից ամենեւին եկեղեցի չի դուրս գայ։ Այլ մեծ Աստծու շնորհն է այն, որ տուել է ո՛չ թէ մարդկանցից որեւէ մէկին, այլ բոլոր բանական ազգերին, որոնց վիճակուած է այս արեգակի ներքոյ բնակուել։ Նրա հիմքը դրուած է հաստատուն վէմի վրայ. ո՛չ ներքեւինները կարող են (այն) չարժել և ոչ էլ վերեւինները դրդուեցնել։ Իսկ ինչ որ երկինքն ու երկիրը չեն կարող խախտել, թող մարդկանցից ոչ ոք չկարողանայ յաղթել նրան։ Ուրեմն, ինչ ձեւով ուզում ես վարուել՝ վարուի՛ր. բոլորս պատրաստ ենք այս ամէն հարուածների ու տանջանքների մեքենաների համար, որ սպառնացիր, ո՛չ միայն չարչարուելու, այլեւ մեռնելու։ Եւ եթէ դարձեալ նոյն բանը հարցնես, ամէն մէկիցս սրանից էլ աւելի (կտրուկ) պատասխան կը լսես»։

Այն ժամանակ թագաւորը՝ լեղուց աւելի դառնացած՝ փորի մէջ կուտակուած կամաւոր մաղձի ծովը փուլ էր տալիս, և նրա քթից ու բերանից առհասարակ ջերմախառն գոլորշի էր դուրս գալիս, ինչպէս սաստիկ հնոցից թանձր ծուխը։ Եւ սիրտը չհամբերելու պատճառով՝ կատորում էր իր մարմնի զօրութիւնը, ծակոտում մտադրութիւնների բակմաթեր ամանը և ցրւում–տարածում էր (իր) բոլոր նենգաւոր մտածմունքները։ Եւ ինչ որ ամենեւին չէր կամենում յայտնել իր սիրելիներին, ակամայ արտայայտում էր Քրիստոսի ծառաների առաջ և ամէն ինչ կարգով ասում։

Երեք-չորս անգամ կրկնում էր իր անաստուտ երդումն արեգակի անունով և ասում էր այսպէս. «Ձէք կարող քանդել իմ պինդ ամրոցներս և թոյլ չեմ տայ, որ դուք չուտով գտնէք

ձեր ուզածը. այլ ձեզ բոլորիդ և ովքեր այստեղ զօրքի մէջ են, չարաչար կապանքներով Սագաստան74 վտարել կը տամ անճառնապարհ տեղերով, այնպէս որ ձեզանից չատերը գնալու ժամանակ խորշակից կը սատկեն, իսկ մնացածները կը գցուեն ամուր բերդերը և անելանելի բանտերը։ Ձեր աչխարհն էլ անթիւ զօրք կ'ուղարկեմ փղերի հետ միասին, և ձեր կանանց ու որդիներին Հուժաստան75 քչել կը տամ, և ձեր եկեղեցիները և ինչ որ վկայարան էք կոչում, կը քանդեմ, կ'աւերեմ և կը վչացնեմ և եթէ էլի մէկը ընդդէմ դուրս եկած լինի. գաղտնների ատների տակ գցուելով՝ անողորմ մահով կը մեռնի։ Այս ամէն ասածներս կ'անեմ և կը կատարեմ (ձեր) աչխարհում մնացածների վերաբերմամբ»։

Եւ անմիջապէս հրամայեց պատուական նախարարներին մեծ անարգանքներով հեռացնել իր աչքի առաջից. և զգուշութեամբ հրամայեց տուեց դահճապետին, որ նրանց առանց կապելու իրաքանչիւրին իր իջեւանում պահի, իսկ ինքը՝ իրենից դուրս եկած՝ անմխիթար տրտմութեամբ նորից վերադարձաւ և հաղիւ ընկաւ իր օթեւաններըւ

Իսկ Քրիստոսին ճչմարտութեամբ հաւատացողները ամենեւին չէին երկմտում ու թերահաւատում իրենց սուրբ վարդապետների առաջին խրատի վերաբերմամբ, այլ դեռ եւս հնարք էին մտածում, թէ ի՛նչպէս իրենց և իրենց սիրելիներին ազատեն այն մեծ նեղութիւնից։ Շատ էին ջանք գործ դնում և հարստութեան մեծամեծ խոստումներ ու յոյս էին տալիս այն մեծամեծներին, որոնք (արքուն ի) Դրանը նրանց օգնում էին, և հէնց նոյն ժամանակ էլ նրանց ահագին դանձեր տուին։

Եւ երբ բոլոր կողմերից փակուեց նրանց անելանելի բանտի մուտքը, այն ժամանակ Աբրահամի օրինակը76 մէջ բերելով աղաղակում և ասում էին իրենց սրտերում. «Մենք բոլորս մեր եղբայրներին ու որդիներին և բոլոր սիրելիներին նուիրել ենք և Իսահակի պէս կապած դրել սուրբ սեղանի վրայ. ընդունի՛ր, Տէ՛ր, մեր այս կամաւոր նուէրը և մի՛ թոյլ տայ, որ այս անօրէնն իչխանը քո եկեղեցին ծաղրուծանակի ենթարկի»։

Թագաւորի ներքին խորհրդակիցներից մէկը գաղտնի կապուած էր Քրիստոսի անքակ սիրով, որովհետեւ նոյնիսկ մկրտը-

ւած էր կենդանի աւազանի մէջ, և մեծապէս հոգ էր տանում վշտացածների կեանքը փրկելու։ Եւ երբ հաստատապէս տեսաց, որ թագաւորն իր սպառնացած բազմաթիւ չարիքները բոլորն ուզում է կատարել Հայոց աշխարհի գլխին, թէպետեւ նրանցից ոչ բոլորին, բայց մի քանիսին խրատ տուեց և սովորեցրեց, թէ ի՛նչ հնարք գործ դնեն, որ առժամանակ իրենց փրկեն այն նեղ դրութիւնից։

Եւ մինչդեռ զօրք էին պատրաստում, որ նրանց անդարձ օտարութիւն քշեն, ինչպէս քշել էին Վրաց աշխարհի բազմաթիւ նախարարներին, հէնց այդ ժամանակ գուժկան հասաւ Փուշանների կողմերից, թէ Թշնամիներից մի գունդ անջատուեց ու արքունի չատ գաւառներ աւերեց։ Այս բանը երկնային մի մեծ օգնութիւն եղաւ նրանց համար։ Անօրէնն չտապով ապագնապում էր հեծելազօրն առաջ ուղարկել, և ինքն էլ անյապաղ նրա յետեւից գնաց. և խորը խոցուելով իր մտադրութիւնների մէջ՝ խափանեց իր առաջին հաստատուն երդումը։

Իսկ Աստծու երկիւղածներն այս տեսնելով՝ մեծ յուսով աղօթելով ասում էին միաբան. «Դո՛ւ, ամէնքի Տէ՛ր, որ գիտես մարդկանց սրտի գաղտնիքը և յայտնի է քեզ ամէն մի աներեւոյթ մտադրութիւն, և կարօտ չես տեսանելի բաների ոչ մի վկայութեան, այնպէս որ մեր չգործածներն էլ տեսնում է քո աչքը, այժմ քո առաջ ենք ղեղում մեր խնդրուածքը։ Ընդունի՛ր, Տէ՛ր, մեր ծածուկ աղօթքները և մեզ կատարեալ դարձըրու քո պատուիրանների համաձայն, որպէսզի ամաչի չարը, որ խրոխտացած մարտնչում է մեր դէմ անօրէնի իշխանութեամբ։ Տարուբերի՛ր, Տէ՛ր, նենգաւորի կամակոր մտադրութիւնները, և խափանի՛ր նրա ամբարիշտ կամքը և մեզ խաղաղ մտադրութեամբ յետ դարձրու դէպի մեր սուրբ եկեղեցին, որպէսզի չլինի թէ յանկարծակի յափշտակուելով՝ չարաչար աւերուի թշնամիների ձեռքով»։

Եւ ամէնքն այս անքակտելի ուխտը դրին Աստծու հետ, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրութեան վրայ, և իրեն միեւնոյն խրատատուին պատգամաւոր ուղարկեցին ներսա, իբր թէ կատարուելու է նրա անօրէն կամքը։

Երբ այս լսեց Թագաւորը՝ չափազանց ցնծաց և ուրախացաւ,

կարծելով թէ աստուածներն իրեն օգնութեան են հասել, չրջելով և ոչնչացնելով Աստծու ծառաների հաստատուն մտադրութիւնները, որովհետեւ ահա երկրպագութիւն են մատուցանում արեգակին, պատուելով նրան զոհերով և մոգութեան բոլոր օրէնքներով։ Բայց այս բանը չկարողացաւ հասկանալ ցնորուածը, թէ արդարութեան արեգակի անստուեր լոյսը մաշում և ոչնչացնում էր նրա խաւարային մտադրութիւնները և եղծըւում-ապականւում էր նրա ամբողջ խեղաթիւր կամքը։ Եւ ճշմարտութեան յայտնութիւնից կուրացած՝ ամենեւին չհասկացաւ այն պատրանքն ու խաբէութիւնը, որով սխալեցրին նրան։ Նրանց առաջ երկրաւոր պարգեւներ էր թափում և նորից բոլորին վերադարձնում էր իրենց պատիւն ու գահը, առաջ քաշելով և երեւելի դարձնելով նրանց իր ամբողջ տիեզերական իշխանութեան մէջ։ Եւ նրանցից իւրաքանչիւրին անչափ առատութեամբ ագարակներ և աւաններ էր չնորհում արքունիքից, սիրելիներ և բարեկամներ էր անուանում նրանց և կամակոր մտքի հպարտ յանդգնութեամբ կարծում էր, թէ ճշմարտութիւնը կը փոխանակուի ստութեան հետ։

Եւ այս անելուց յետոյ՝ շատ այրուձի ուղարկեց նրանց հետ, և մոգերից էլ ոչ պակաս քան եօթ հարիւրից աւելի ուսուցիչներ յղեց նրանց հետ և մի մեծ իշխանի էլ նրանց վրայ մոգպետ կարգեց։ Յոնաթհում էր և աղաչում պատուիրելով, թէ մինչեւ ես այս պատերազմից խաղաղութեամբ յետ կը դառնամ, դուք ամէն բան արէք ու կատարեցէք իմ կամքի համաձայն։ Եւ այսպէս չքով ու պատուով երկար ճանապարհ էր դնում նրանց դէպի Հայոց երկիրը։ Իսկ ինքն ուրախալի աւետիս ուղարկեց շատ ատրուշանների, գրեց և յայտնեց մոգերին ու մոգպետներին և զանազան աշխարհների բոլոր մեծամեծներին, թէ ի՛նչպէս աստուածների օգնականութեամբ իմ առաքինի գործը առաջ տարայ։

Իսկ այն գարշելիները այնուհետեւ դուրս գալով իւրաքանչիւրն իր խաւար դարանից՝ փափագում էին չուտով կատարել (Թագաւորի) հրամանը. ձայն տուին հեռաւոր երկրները, որ վեր կենան, գնան արեւմտեան աշխարհը։ Եւ դեռ չէին հասել Հայոց մեծ աշխարհը, որ փայտի միջոցով վիճակ էին գցում, թէ

ո՛ր ժողովուրդը (մոգերի) ո՛ր դասին է բաժին ընկնելու աշա-
կերտելու համար։ Որովհետեւ առհասարակ հրամանն էին առել
արքունիքից մտնել ինչպէս Հայոց, այնպէս էլ Վրաց և Աղուա-
նից և Լփնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդէից և Դասան77
աշխարհները, և դարձեալ ուր որ զանազան տեղեր Պարսից իշ-
խանութեան մէջ ծածուկ պաշտում էին քրիստոնէութիւնը։

Եւ անակնկալ յարձակուելով չտապում էին կողոպտել սուրբ
եկեղեցիների գանձերը. և այնուհետեւ ինչպէս դեւեր իրար մօտ
էին հասնում, եւ հաւաքուեց մեծ զօրաբանակ և չարասէր սա-
տանան իրրեւ զօրավար երևաց նրանց մէջ, և անդադար յոր-
դորելով՝ բոլորին սաստիկ չտապեցնում էր։ (Գործն սկսելու)
ժամկէտ նշանակելով վեցերորդ ամիսը՝ տագնապի մէջ էին և
չտապեցնում էին արքունի հրամանով։

«Նաւասարդից մինչեւ Նաւասարդ, ասում է, մեծ թագաւո-
րի իշխանութեան տակ գտնուած բոլոր վայրերում պէտք է վե-
րանան եկեղեցու արարողութիւնները, պէտք է փակուեն և
կնքուեն սուրբ տաճարների դռները, նուիրական անօթները
պէտք է գրով ու համարով յարքունիս գրաւուեն, լռեն սաղ-
մոսերգութեան ձայները և դադարեն անսուտ մարգարէների ըն-
թերցուածները։ Քահանաները չվստահանան իրենց տներում
ուսուցանել ժողովրդին, եւ Քրիստոսին հաւատացող այն տղա-
մարդիկ ու կանայք, որոնք բնակուած են մենաստաններում, փո-
խեն իրենց հագուստը՝ աշխարհական կարգի համաձայն։

«Նոյնպէս եւ նախարարների կանայք պէտք է ընդունեն մո-
գերի ուսմունքն ու վարդապետութիւնը։ Ազատների եւ չինա-
կանների տղաներն ու աղջիկները պէտք է կրթուեն նոյն մո-
գերի հաւաքատեղերում։ Պէտք է կարճուի եւ արգելուի սուրբ
ամուսնութեան օրէնքը, որ ունէին նախնիքներից քրիստոնէու-
թեան սովորութեան համաձայն. մէկ կնոջ փոխարէն թող չատ
կանայք առնեն, որպէսզի Հայոց ազգն աճի-բազմանայ։ Աղջիկ-
ները ամուսնանան (իրենց) հայրերի հետ, եւ քոյրերը՝ եղ-
բայրների հետ. մայրերը չխորշեն (իրենց) որդիներից, այլեւ
թոռները մտնեն (իրենց) պապերի անկողինը։

«Զոհելու կենդանիները չմորթուեն առանց (աստուածներին)
նուիրուելու, թէ ոչխար լինի, թէ այծ, թէ արջառ, թէ թռչուն

եւ թէ խոզ։ Իմորն առանց փանդամի 78 հչունցուի. ծիրան ու քակորը կրակի մէջ չգցուեն. ձեռքերն առանց գումիզի 79 չլըւացուեն, ջրչուներն, աղուէսներն ու նապաստակները չսպանուեն։ Օձերն ու մողէսները, գորտերն ու մրջիւնները եւ էլի ինչ որ խառնափնդոր ճճիներ կան, ոչնչացուեն, եւ թուով ու համարով մէջ բերուեն արքունի չափի համեմատ։ Եւ էլի ինչ որ այսպիսի ծառայութիւններ կան՝ զոհելու կամ մորթելու վերաբերեալ, ըստ տարեկան տօների եւ կապճաթիւ մոխրա-չափ 80 կարգով (պէտք է կատարուեն)։

«Այս ամէնը, ինչ որ ասացինք, մի առժամանակ թող բոլորը կատարեն մինչեւ տարուայ վերջը. իսկ մնացած բոլոր բաները հետագայում կը պատրաստեն»։

Մոգերն ու մոգպետներն այս բոլոր հրամաններն ու պատուիրանները ստանալով՝ գիշեր ու ցերեկ չտապում էին հասնել Հայոց աշխարհը. եւ անչափ ուրախութիւնից երբեք չէին ձանձրանում ճանապարհի երկարութիւնից։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻ[81] ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թէպէտեւ չենք կարող պատմել այն բոլոր չարիքները, որ բանակի մէջ անցան Հայոց զօրամասի գլխով, սակայն չենք էլ կամենում լռել և ծածկել (մեր) վիշտն ու նեղութիւնը, այլ փոքր ի չատէ կ'ասենք, որպէսզի ձայնակից լինենք նրանց, ովքեր դառնապէս ողբում էին մեզ[82], որպէսզի դու էլ. երբ լսես, չատ արտասուք թափես ազգի թշուառութեան վրայ։

Որովհետեւ ահա Պարսից մեծ բանակում զանազան ազգութիւնների մարդիկ, որոնք հաւաստացել էին Քրիստոսի սուրբ աւետարանին, երբ տեսան Հայերի չար յանձնառութիւնը, սաստիկ խոցուեցին իրենց մտքերում և կործանուեցին, գետին ընկան իրենց երեսների վրայ։ Նրանցից չատերը ծանր սուգի թախծի մէջ՝ վշտացած հոգով ու դառն արտասուքով եկան ու յանդիմանեցին նախարարներին և խիստ պախարակեցին քահանաների խմբին։ Բոլորին խայտառակում էին և ասում. «Ի՞նչ պիտի անէք այդ սուրբ կտակարանները, կամ թէ ո՞ւր պիտի տանէք տէրունական սեղանի անօթները. մի՞թէ պիտի մոռանաք ձեր հոգեւոր օրհնութիւնները և կամ պիտի լռէք ու դադարեցնէք մարգարէական ձայնը։ Աչքերդ փակեցիք՝ չկարդալու համար, և ականջներդ խցեցիք՝ չլսելու համար. մի՞թէ պիտի չյիշէք այն, ինչ որ անմոռաց կայ ձեր մտքում։ Ի՞նչ պիտի անէք Տիրոջ պատուիրածը՝ «Ով ինձ ուրանայ մարդկանց առաջ, ես էլ նրան կ'ուրանամ իմ երկնաւոր Հօր և սուրբ հրեշտակների առաջ»[83]։

«Առաքելական քարոզութիւններուդ վարդապետներ էիք, այժմ այն մոլար խաբէութեան աշակերտ պիտի լինիք։ Ճշմարտութեան ուսուցիչներ էիք, այժմ մոգերի սուտ խաբէութի՞ւնը պիտի սովորեցնէք։ Արարչական զօրութեան քարոզիչներ էիք, այժմ տարրերին աստուա՞ծ էք դաւանում։ Աստուածիւնը յանդիմանողներ էիք, այժմ ստից էլ աւելի՞ սուտ պիտի լինէք։ Հրով և հոգով էիք մկրտուած, այժմ պէտք է մոխրի և փոչո՞ւ մէջ թաթախուէք։ Կենդանի մարմնով և անմահ արիւնով էիք անուած, այժմ զոհերի ճարպի և կեղտոտ արիւնի՞ մէջ պիտի աղտոտուէք։ Սուրբ Հոգու տաճար էիք, այժմ դեւերի զոհարա՞ն պիտի լինէք։ Քրիստոսազգեաց էիք մանկութիւնից, այժմ այդ փառքերից զրկուած՝ դեւերի նման արեգակի առա՞ջ պիտի պարէք։ Արքայութեան ժառանգ էիք, այժմ ինքներդ ձեզ Գեհենի ժառանգ դարձրիք։ Նրա՛նց է սպառնացած անշէջ հուրը, դուք ինչո՞ւ էք նրանց հետ այրուում-խորովւում։ Նրա՛նց համար է գիրանում անմահ որդը, իսկ այժմ դո՞ւք էք ձեր մարմինները գիրացնում նրան կերակրելու համար։ Նրա՛նց համար է թանձրացուած պահւում արտաքին խաւարը, դուք՝ լուսազգեստներդ՝ ինչո՞ւ նրանց հետ դէպի նոյն խաւարն ուղեւորուեցիք։ Նրա՛նց համար էր փորուած խորխորատը, ինչո՞ւ նախ դուք ընկաք նրա մէջ։ Նրանք վաղուց արդէն կուրացած էին, դո՞ւք ինչու կուրացաք կոյրերի յետեւից։ Ե՞րբ պիտի սովորէք նրանց աստուածների բազմաթիւ անուննները. այն աստուածների, որոնցից ո՛չ մէկն էլ մէջտեղում չկայ։ Ծանր բեռներից թեթեւացած էիք, ինքներդ ծանր բեռ վերցրիք ձեզ վրայ։ Մանկութիւնից ազատուած էիք, չարաչար կերպով մտաք անազատելի ծառայութեան տակ։

«Ի՞նչ կը լինէր գիտենայիք և յայտնի լինէր ձեզ, որ երկինքը սուգ մտաւ ձեզ վրայ, և երկիրը վշտացաւ ձեր ոտների տակ։ Վերեւից հրեշտակներն են բարկացած ձեզ վրայ, իսկ երկրից մարտիրոսներն84 են զայրացած ձեզ վրայ։ Խղճո՞ւմ եմ, խղճո՞ւմ եմ ձեր սիրելիներին, և աւելի չատ խղճում եմ հէնց ձեզ։ Որովհետեւ եթէ մա՛րդ ազատէր ձեզ ծառայութիւնից և դուք ինքներդ ձեզ ուրիշի ծառայութեան ներքոյ դնէիք, սաստիկ կը բարկացնէիք ձեր առաջին տիրոջը, իսկ այժմ ի՞նչ

պիտի անէք այն աստուածասաստ հրամանը, թէ՝ «Ե՛ս եմ Աստուած և բայի ինձանից չկայ ոչ մի ուրիշը, և ո՛չ էլ ինձանից յետոյ ուրիշ ոեւէ Աստուած է լինելու. նախանձոտ Աստուած եմ ես, հայրերի մեղքը հատուցանում եմ որդիներին մինչեւ եօթը դար85», Եթէ ուրեմն արդար որդիները հայրերի մեղքերի համար մահ են ստանում, հապա երբ իրենք որդիները մեղք գործեն, չէ՞ որ թէ՛ իրենց և թէ հայրերի փոխարէն միանգամայն պէտք է պատասխան տան։

«Դո՛ւք էիք մեր ապաստանի ամուր պարիսպը. երբ այստեղից վտանգ էր սպառնում, ձեզ մօտ էինք ապահովութիւն գտնում. այժմ այդ մեծ ամրութիւնը հիմնայատակ տապալուեց։ Դո՛ւք էիք մեր պարծանքը ճշմարտութեան թշնամիների առաջ, այժմ դո՛ւք էք մեր նախատինքը նոյն թշնամիների մօտ։ Մինչեւ այժմ ձեր ճշմարիտ հաւատի համար մեզ էլ փոքրիշատէ խնայում էին. իսկ այժմ ձեր պատճառով մեզ էլ են անողորմ կերպով դատում։ Ո՛չ միայն ձեր անձերի համար էք պատասխան տալու Աստծու ահեղ աթոռի առաջ, այլեւ այն բոլոր բազմաթիւ մարդկանց համար, որոնց նոյնպէս չարչարելու են ձեր պատճառով»։

Այս և սրանից էլ աւելին խօսեցին մեծամեծ իշխանների հետ և ցաւերի վրայ ցաւեր աւելացրին։ Ցայտնել և պարզել նրանց իրենց մտադրութիւնը՝ չէին ուզում. լռել և պատասխան չտալն էլ աննպատակ էր. սրտերը պատռւում էին և յորդ արտասուք էին թափում. Նրանց հետ միասին՝ լսողներն ու տեսնողներն էլ դառնացած բոլորը անմխիթար սուգի մէջ էին ընկնում։

Այն ժամանակ այնտեղ՝ զօրքի մէջ եղած քահանաները, սըրտերի բարկութիւնից այլեւս չկարողանալով համբերել, անջատուեցին հեռացան նախարարներից և ամբողջ բազմութիւնից եւ մէկին չտապով սուրհանդակ ուղարկեցին ձիով Հայոց աշխարհը։ Սա գոյժը բերանն առած և օձիքը պատառելով հասաւ եպիսկոպոսների ժողովին, սաստիկ արտասուելով կանգնել-պատմում էր չարչարանքների բոլոր անցուդարձը, բայց նրանց չէր յայտնում ծածուկ մտադրութիւնը։

Այն ժամանակ եպիսկոպոսները ցրուեցին ամէն մէկն իր իշխանութիւնը, և քորեպիսկոպոսներ ուղարկեցին գիւղերն ու

ագարակները և լեռնային գաւառների բազմաթիւ ամրոցները։ Դրդեցին հաւաքեցին մեծ բազմութեամբ այր և կին, չինական և ազատ, քահանայ և միայնակեաց. իրատեցին, ամրապնդեցին և բոլորին Քրիստոսի զինուոր դարձրին։

Եւ խորհրդի առաջին վճիռն այս հաստատուեց «Հարազատ եղբօր ձեռքը թող բարձրանայ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Աստծու պատուիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն և որդին չակնածի հօր պատուից։ Կինը կռուի իր ամուսնու հետ եւ ծառան դիմադրի իր տիրոջը։ Աստուածային օրէնքը թագաւորի ամէն բանում, և նոյն օրէնքից յանցաւորներն ստանան իրենց դատապարտութիւնն ու պատիժը»։

Երբ այս այսպէս հաստատուեց ու կարգաւորուեց, բոլորն էլ զինուած դուրս եկան՝ սաղաւարտները գլուխներին, սրերը մէջքերին և վահանները ձեռներին, ո՛չ միայն քաջ տղամարդիկ, այլ և ամուսնացած կանայք։

Իսկ Հայոց զօրագունդը բոլորը օգնականներով ու բազմաթիւ մոգերով չորրորդ ամսին86 եկան հասան Հայոց աշխարհը, մի մեծ գիւղաքաղաք, որի անունն էր Անգղ87։ Այդտեղ բանակ դրին, հաւաքուեցին, տեղաւորուեցին և ամէն կողմերից անթիւ բազմութիւն ժողովուեց այնտեղ։

Եւ այնպէս պատահեց, որ քսաներկուդ օրից յետոյ մի կիրակի օր մոգպետն ինքը մոգերի հետ միասին եկաւ մեծ ուժով, որպէսզի քանդի եկեղեցու դռները. ուզում էր փորձել, թէ գործն ի՛նչ ընթացք կը ստանայ։ Իսկ սուրբ Ղեւոնդ երէցը առաջին խորհրդակիցների և բազմաթիւ ուխտակիցների հետ միասին այնտեղ պատրաստ գտնուեց և թոյլ չտուեց։ Թէպէտեւ լաւ տեղեակ էր բոլոր նախարարների մտադրութիւններին և ո՛չ էլ մոգպետի ուժին ու զօրութեանը, ամենեւին չսպասեց բոլոր եպիսկոպոսներին և նոյնիսկ մի քիչ էլ չհամբերեց ու չներեց անօրէնն իշխանին, այլ մեծ աղմուկ ու տագնապ առաջացրեց զօրքերի և մոգերի մէջ։ Որովհետեւ դագանակները ձեռքերն առած՝ մոգերի և մոգպետի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին իրենց կացարանները, իսկ իրենք պաշտամունքը վերսկսելով եկեղեցում՝ Քրիստոնէական կարգն էին կատարում, շարունակելով այն մինչեւ նոյն կիրակի երեկոն։

Այս խռովայոյզ տագնապից յետոյ՝ Հայոց աշխարհի բոլոր կողմերից տղամարդկանց ու կանանց մեծ բազմութիւն հաւաքուեցաւ նոյն տեղը։ Պէտք էր տեսնել, թէ ինչպիսի՜ աղետալի իրարանցում ընկաւ. ոմանք աղբիւրի պէս յորդ արտասուք էին թափում իրենց աչքերից. ուրիշները բարձր ճչալով կարծես թէ երկինքն էին դողացնում, իսկ կէսն էլ խիզախելով ու դէպի ջէնքը վազելով՝ նախընտրում էին մեռնել քան թէ ապրել։ Իսկ սուրբ եկեղեցու ուխտից ոմանք, աւետարանը ձեռներն առած, աղօթքներով Աստուած էին կանչում։ Ուրիշներն էլ փափագում էին, որ երկիրը պատռուի, որպէսզի իրենց համար գերեզմանը դառնայ։ Եւ այսպէս մեծ սարսափ էին գցում մոգպետի վրայ։ Սա ստէպ-ստէպ աղաչում էր իր օգնականներին, որ հնար գտնեն իրեն մահից փրկելու և ողջ-առողջ նորից արքունիք հասցնելու։

Իսկ այն գործի մասին, որի համար եկել էր, ստիպում էր նրանց և ասում. «Թողէք գրեմ և ցոյց տամ մեծ թագաւորին, որ ձեռք վերցնի այսպիսի առաջարկութիւններից. որովհետեւ եթէ աստուածներն իրենք էլ օգնութեան գան, հնարաւոր չէ, որ Հայաստանում հաստատութիւն գտնի մոգական կրօնը, ինչպէս որ փորձեցի եկեղեցու ուխտի մխաքանութիւնը։ Որովհետեւ եթէ այս աշխարհի զօրքն էլ մոգեր լինէին, նրանք ամենեւին չէին խնայի և սրանց էլ կը սատկեցնէին, ո՛չ միայն դրսից եկածներին, այլեւ իրենց եղբայրներին, որդիներին և բոլոր մերձաւորներին, ինչպէս նաև հէնց իրենց։ Մարդիկ, որոնք ո՛չ չղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկիւղ կրում և ոչ հարստութիւնը բանի տեղ դնում և, վերջապէս, որ բոլոր չարիքներից ամենից վատթարն է, մահը գերադասում են կեանքից, ո՞վ է, որ կարող է նրանց դիմադրել։

«Ես լսել էի մեր նախնիքներից, թէ արքայից արքայ Շապուհի88 օրերում, երբ այդ ուսմունքն սկսեց աճել ու բազմանալ և լցնել Պարսից ամբողջ երկիրը, և նոյնիսկ մինչեւ արեւելք հասնել, մեր կրօնի վարդապետները յորդորեցին թագաւորին (այնպէս անել), որ մոգութեան կրօնը բոլորովին չվերանայ աշխարհից. նա էլ սաստիկ հրաման տուեց, որ քրիստոնէութիւնը բոլորովին դադարի, բայց որքան նա կամեցաւ արգելել, նրանք աւելի ու աւելի աճեցին ու բազմացան, և հասան

մինչեւ Քուշանների աշխարհը, և այնտեղից էլ (քրիստոնէութիւնը) տարածուեց դէպի հարաւ, մինչեւ Հնդկաստան։

«Եւ այնպէս աներկիւղ ու համարձակ էին նրանք Պարսից աշխարհում, որ մինչեւ անգամ երկրի բոլոր քաղաքներում այնպիսի եկեղեցիներ չկային, որոնք իրենց պայծառութեամբ գերազանցում էին թագաւորական պալատներից։ Շինում էին նաև վկայարան կոչուածները, և նոյնպէս զարդարում էին եկեղեցիների նման, և բոլոր տեղերում, չէն թէ անապատ, միայնանոցներ էին չինում։ Եւ թէեւ ոչ մի տեղից յայտնի օգնութիւն չէր երեւում, բայց նրանք չարունակ աճում ու անընդհատ բազմանում էին և մարմնաւոր մեծութեամբ ճոխանում։ Հարստութեան պատճառների մասին մենք ոչինչ չգիտէինք, բայց այսքանը միայն ճշդրիտ իմանում էինք, որ ամբողջ տիեզերքը նրանց ուսմունքի յետեւից էր գնում։

«Թէպէտեւ թագաւորը սկսեց խստութիւններ գործ դնել նրանց վերաբերմամբ և նրանցից չատերին բռնեց ու չարչարեց, և չատ չատերին էլ մահով սպանեց, բայց նա դառնացաւ ու ինքն իրեն ձանձրացաւ, իսկ նրանց բազմութիւնը չկարողացաւ նուազեցնել։ Նոյնպէս և թէպէտ վակեց և կնքեց եկեղեցիների դռները ամբողջ Պարսից աշխարհում, բայց նրանք ամէն տուն եկեղեցի դարձրին, և ամէն տեղ իրենց պաշտամունքն էին կատարում։ Եւ ամէն մէկն իր անձը վկայարան էր համարում, և մարդկեղէն չինուածքն աւելի լաւ էին հաչւում, քան հոգեղէնը։ Սպանողների սրերը բթացան, իսկ նրանց պարանոցները չյոդնեցին. նրանց ատացուածքն աւարի առնողները յոգնեցին, իսկ աւարը օրէցօր աճեց ու բազմացաւ։ Թագաւորը զայրացած էր, և բարկացած դահիճները խիստ դառնացած, իսկ նրանք արթուն ու զուարթ՝ ուրախութեամբ էին ընդունում, ամէն հարուած ու տանջանք և սիրով տանում էին իրենց գոյքի ամէն մի յափշտակութիւն։

«Երբ թագաւորը տեսաւ, որ գրոհ տալով դէպի մահ դիմեցին, ինչպէս սուրբ զոհացուները դէպի երկնաւոր աղբը, արգելեց և վերջ տուեց նրանց հարուածներին ու տանջանքներին. և հրամայեց տուեց մոգերին ու մոգպետներին, որ ոչ ոք ամենեւին նեղութիւն չտայ նրանց, այլ ամէն մէկն աներկիւղու-

թեամբ հաստատ մնայ իր հաւատին — մոգն ու զանդիկը[89] և հրեան ու քրիստոնեան, և էլի ինչ բազմաթիւ դաւանութիւններ որ կան Պարսից աշխարհի զանազան կողմերում։ Եւ այնուհետեւ երկիրը հաստատուն խաղաղութիւն ձեռք բերեց, և բոլոր խռովութիւնները ու յուզմունքները դադարեցին։ Որովհետեւ մեր աշխարհի խռովութեան հետ՝ Արմուտքն եւս մեծապէս չարժըւեց և ամբողջ Տաճկաստանն էլ նրանց հետ յուզուեց։

«Այս ահա լսելով գիտենք. բայց այն, որ ես իմ աչքով տեսայ, ինձ թուում է, թէ է՛լ աւելի մեծ պիտի լինի, քան առաջուանը։ Արդ, դո՛ւ, որ այս աշխարհի մարզպանն[90] ես, պարտաւոր ես հոգ տանել, գրել և ցոյց տալ արքունիքին սրանց մեքան ուժը, թէ ի՛նչպէս աներկիւղաբար բանի տեղ չդրին արքունական հրամանը։ Եւ եթէ մենք չչտապէինք ու փախուստի չդիմէինք, մեզանից ոչ մէկին էլ կենդանի չէին թողնի։ Եթէ անզէն մարդիկ այսպիսի ուժ ցոյց տուին, հապա եթէ յանկարծ զինուորներին էլ իրենց հետ միացնեն, ո՞վ կարող է դրանց յանդուգն յարձակման առաջ կանգնել։

«Ես ահա անտեղեակ էի, որ այդ եկեղեցու ուխտը անքակտելի է միմեանցից. որովհետեւ ուրի՛շ բան է, երբ մարդ լսում է, և ուրի՛շ բան է, երբ հաստատ կերպով իր աչքով է տեսնում։ Դո՛ւ, որ մանկութիւնից այդ կրօնի մէջ էիր սնուած, և հաւատիօրէն գիտէիր այդ մարդկանց յամառութիւնը, որ առանց շատ արիւն թափելու դրանք մեզ թոյլ չեն տայ ձեռք առլու եկեղեցիներին, ինչո՞ւ այդ ամէնը ճշդութեամբ չասացիր թագաւորի առաջ։ Քանի որ բոլոր նախարարներից մեծը դո՛ւ էիր, և այս ամբողջ աշխարհը քեզ էր յանձնուած որպէս մարզպանի, ինչո՞ւ դու ինքդ հոգ չտարար մեծապէս։ Որովհետեւ ուրիշ ժամանակ իմաստուն էիր և ես այդ գիտէի. բայց այս բանն իմաստութեամբ չարիր։ Եթէ այդպէս չէ, ապա յայտնի է, որ դու էլ նրանց համամիտ ես, և (նրանք) քո խորհրդով բերին այս անցքերը իմ ու զօրքի գլխին։

«Արդ, եթէ այդ այդպէս է, և դու չես կամենում մոգութիւն ընդունել, ամենաբեին մի՛ քաշուի և մի՛ վախենա արքայից. ես կը գրեմ ու ցոյց կը տամ մովպետան մովպետին[91] և դերանդարձապետին[92] և մեծ հազարապետին[93], որ թագաւո-

բին համաձայնեցնեն, որպէսզի թոյլ տայ (վարուելու) առաջին հրամանի համեմատ, և մարդկանց կամքին թողնուի, որպէսզի փոքր առ փոքր ընտելանան մոգական կրօնին, և ովքեր ընդունեն այն, սիրով կատարած լինեն արքունի հրամանը։ Որովհետեւ այս աշխարհը մի ծայրերկիր է. գուցէ՝ երբ նրանց որեւէ վնաս հասցնեն, նրանք էլ վեր կենան ցրուեն օտարութիւն, իսկ երբ այս աշխարհը մարդկանցից դատարկուի, այն ժամանակ քեզ էլ գլխովին մեծ վնաս կը հասնի արքունիքից»։

Մարզպանը պատասխան տուեց մոգպետին և ասայ. «Այդ բոլոր խրատներդ, որ ասացիր, ճշմարիտ են. բայց ինչ որ մենք սկզբում չհասկացանք, դու տեսար, և այժմ սաստիկ զղջացինք, իսկ այժմ ինչ որ ասում եմ, արա՛ և քեզ լաւ կը թուայ։ Մի քիչ համբերութիւն ունեցիր և քո այս խորհուրդը ծածկի՛ր չատերից. բայց յայտնի՛ր այն մարդկանց, որոնց ես կ'ասեմ, մինչեւ որ ես ուժ հաւաքեմ, օգնական զօրք կանչեմ, գուցէ կարողանամ եկեղեցու այդ ուխտը երկփեղկել։ Եւ եթէ կարողանամ այդ այդպէս անել, այնուհետեւ գիտեմ, որ արքայական հրամանն էլ կարող եմ կատարել»։

Եւ անմիջապէս զօրք հանեց Սիւնեաց աշխարհից, իր զօրամասն ստուարացրեց՝ մոգերին ու մոգպետին օգնութեան հասնելու համար։ Եւ ապա սկսեց ասել. «Հապա դու մի հրովարտակ ուղարկիր Դուռը, որ Աղուանից աշխարհում գտնուած տաս հազար այրուձին Հայաստան գայ ձմեռն անցկացնելու համար. երբ նրանց մեր ձեռքի տակ ունենանք, էլ ոչ ոք չի կարողանայ մերժել արքունի հրամանը»։

Մոգպետը պատասխան տուեց և ասաց մարզպանին. «Այդ խորհուրդը դարձեալ հակառակ է իմ խօսքերին. որովհետեւ եթէ մենք բռնութեամբ կռուենք այս երկրի հետ, ապա երկիրը կը քանդուի, մենք էլ պատուհասից չենք փրկուի, մեր անձերին վնաս (կը լինի) և պետութեանն էլ մեծ կորուստ»։

Բայց մարզպանն ամենեւին չկամեցաւ նրան լսել, որովհետեւ սրտանց էր ընդունել պարսկական կրօնը։ Այնուհետեւ սկսեց ոմանց խաբել գոյքով, ոմանց՝ յորդորական խօսքերով. բոլոր ռազմիկներին էլ ահեղ խօսքերով սպառնալով՝ վախեցնում էր։ Մշտապէս չատացրեց սեղանատան մթերքները և եր-

կարացնում էր ուրախութեան ժամերը, գիշերնեբի երկարատեւութիւնը մաշելով արթնցութեան երգերով ու լկտի պարերով. ոմանց համար սիրելի էր դարձնում երաժշտական կարդերն ու հեթանոսական երգերը, մեծամեծ գովեստներ էր տալիս Թագաւորի կրօնին, Արքունիքից բերել էր նաև շատ դրամ և սրանրա գրպանը գաղտնի կաշառք էր խոթում, իբր թէ պարգեւ ու պատիւ է տալիս. և մեծ նենգութեամբ անմեղ մարդկանց հրապուրում էր և իր կողմը քաշում,

Իսկ երբ այս ամէնը տեսան սուրբ եպիսկոպոսները, է՛լ աւելի ուժեղ կերպով ամրապնդուեցին իրենց միաբանութեան մէջ և հնարագէտ իմաստութեամբ բանակը երկու մասի բաժանեցին, Մանաւանդ երբ հաստատ կերպով իմացան ու հասկացան, որ Սիւնեաց անօրէնն իշխանն ստացել էր այն օրհասական վէրքն իր հոգու մէջ, խորշելով հեռացան և փախան նրանից,

Մի գիշեր ուխտի ամբողջ բազմութիւնը խորհուրդ կապմեց և զօրքերի սպարապետին94 էլ կանչեցին խորհրդի. հարցրին, քննեցին և տեղեկացան, որ նրա դիտաւորութիւնն անչարժ է և մի փոքր անգամ չի թերացել Քրիստոսի սիրուց, Եւ միաբան աղօթք անելով նրա համար, նրան կրկին ընդունեցին առաքինիների շարքը, նրա միջոցով շատերին էլ գրաւեցին նոյն միաբանութեան մէջ. ովքեր առաջին միաբանութիւնից անջատուած չէին, եկան-հաւաքուեցին և մեծ զօրագունդ կազմեցին, Եւ է՛լ աւելի զատուեցին-հեռացան մոգերից ու մոգպետից և անօրէն վասակից,

Իսկ նա այնքան յիմարացրեց ու ապուշացրեց մոգպետի միտքը, որ նոյնիսկ չթողեց, որ նա գործի հետեւանքները հասկանայ, Սկսեց մոգեր բաժանել նախարարների տները և մեծ-մեծ ոռճիկներ նշանակել, կենդանիներ զոհել և բռնութեամբ ստիպել կնքուած մարդկանց, որ զոհած միս ուտեն և արեգակին երկրպագութիւն տան, Երբ այսպիսի պիղծ խառնակութիւնն սկսեց չատանալ ամբողջ երկրում, այն ժամանակ մինչեւ իսկ փշտիպաններին95 կանայք յանդգնեցին կիրակի օրը եկեղեցու ճրագները հանգցնել և հաւատաւոր կանանց96 չորերը պատառոտել:

Այս աղմուկն ու վայնասունը երբ տեսան միաբան սուրբ եպիսկոպոսները, աւետարանը ձեռներն առնելով գնացին և ա-

ռանց հարցնելու մտան սպարապետ ի կայանը, որտեղ ժողովուած էր Հայոց զօրքը, իրենց ձայները բարձրացրին և ասացին. «Ձեզ բոլորիդ աղաչում ենք այս սուրբ աւետարանով. եթէ մարզպանն ու մոգպետը ձեր խորհրդով են գործում այս անօրէն չարութիւնները, նախ մեր պարանոցները կտրեցէք և յետոյ ձեռք տուէք եկեղեցուն, իսկ եթէ նրանք առանց ձեր կամքի են գործում այդ չարութիւնը, թո՛ղ այսօր եւ եթ դրա վրէժը պահանջուի նրանցից»։

Իսկ ովքեր գտնուում էին ներսում, սպարապետի կացարանում, ուրքի ելան, միաբան իրենց ձայները բարձրացրին առ Աստուած և ասացին. «Դո՛ւ, Տէ՛ր, որ բոլորի սրտերը գիտես, քեզ ամենաբին պէտք չէ մարդկանց վկայութիւնը. եթէ մենք սրտանց խոտորուած լինենք քեզանից, այն դու ինքդ լաւ գիտես. հէնց այսօր էլ դատի՛ր մեզ մեր մեղքերի համաձայն. իսկ եթէ հաստատ ենք մնացել այս աւետարանի սուրբ ուխտին, դո՛ւ, Տէ՛ր, մեր օգնականն եղի՛ր այսօր, և ճշմարտութեան թշնամիներին տո՛ւր մեր ձեռքը, որպէսզի նրանց հետ վարուենք մեր կամքի համաձայն»։

Երբ այս բանն ասացին, բոլորը գլուխները գետնին էին խփում, և ողջոյն ստացան աւետարանից ու եպիսկոպոսներից ակ նախարարներից մէկը, որ այնտեղ պատահեց, նրանց խորհրդի մէջ էր. սա չմիաբանուեց նրանց հետ այդ մեծ վկայութեան գործում և իսկոյն տեղն ու տեղը նրանց կողմից քարկոծուեց և մեծ սարսափ ընկաւ բոլորի վրայ։

Այն ժամանակ բոլորն այնպէս բորբոքուեցին նախանձախընդրութեամբ ու զայրոյթով, որ մինչեւ անգամ բոլոր տեսնողների երիկամները դողում էին. նրանք ոչնչի տեղ դրին արքունի պարգեւները և ոտնատակ տուին ահագին հրամանները։ Շտապով վազեցին դէպի իրենց զէնքերը, ամբողջ գիշերը սպառազինուեցին, պատրաստուեցին և արեւի ծագելուն պէս զօրքը երեք մասի բաժանելով՝ վրայ տուին բանակին։ Առաջին գունդն արեւելեան կողմից, երկրորդ գունդն արեւմտեան կողմից եւ երրորդ գունդը հիւսիսային կողմից չուրջանակի իրենց մէջ առան-փակեցին մեծաթիւ բանակը97. չատերին կոտորեցին, է՛լ աւելի չատերին երեւելի մարդկանցից կապեցին և ամուր բեր-

դերում բանտարկեցին իրենց իշխանութեան տակ։ Եւ բանակի կողոպուտը, թալանն ու աւարը մի տեղ ժողոված պահում էին իբր թագաւորի հրամանով։

Իսկ երբ մարզպանին էլ ձերբակալեցին, նա երդումով միաբանուեց նրանց հետ, որ հաստատ կը մնայ ուխտին, զղջում էր, որ առաջ բաժանուել էր նրանցից։ Ապաշխարելով ընկնում էր սուրբ եպիսկոպոսների ոտները, և աղաչանք-պաղատանք էր անում, որ չմերժեն ու չհեռացնեն նրան իրենցից։ Երկու-երեք անգամ անստուտ երդում տուեց սուրբ աւետարանի վրայ բազմութեան առաջ, իր երդումը գրեց, կնքեց և կապեց աւետարանից և աղաչում էր, որ Աստուա՛ծ վրէժխնդիր լինի իրենից և ոչ թէ նրանք մարդկաբար սատկեցնեն իրեն։ Իսկ նրանք թէպէտեւ հաստատ գիտէին նրա նենգութիւնն ու կեղծաւորութիւնը, և թէ խաբէութեամբ նորից դառնալու է էլի առաջուայ մոլորութեանը, ամենևին հոգ չտարան նրա վրայ ձեռք բարձրացնելու նախորդ յանցանքի համար, այլ նրա դատապարտութիւնը թողին սուրբ աւետարանին։

Իսկ նրանք, ովքեր եկել էին եկեղեցու սուրբ գանձը կողոպտելու համար, իրենց անձերն ու աւարը ակամայ դրին սուրբ եպիսկոպոսների և ամբողջ զօրքի առաջ. և թագաւորի հրամանը ջնջուեց-ոչնչացաւ։ Եւ Աստծու զօրութեամբ յաղթութիւն գտնելով՝ տղամարդիկ և կանայք և ամբողջ ռամիկ բազմութիւնը աղաղակում և ասում էին գոհանալով. «Պատրաստ ենք հալածուելու և մեռնելու և ամէն տեսակ նեղութիւն ու չարչարանք կրելու այն սուրբ եկեղեցիների համար, որ աւանդեցին մեզ մեր նախահայրերը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան զօրութեամբ, որով նորից ծնուեցինք մի հաւատի յուսով, մկրտուելով Յիսուս Քրիստոսի անունով. նոյն նմանութեամբ կամենում ենք չարչարանքներով և արիւնով նորոգել մեր անձերը։ Որովհետեւ մեզ հայր ենք ճանաչում սուրբ աւետարանը և մայր՝ առաքելական կաթողիկէ եկեղեցին. թո՛ղ ոչ ոք իբրեւ չար անջրպետ մէջ ընկնելով՝ մեզ սրանից չբաժանի»։

Այնուհետեւ տէրը ծառայից աւելի չէր երեւում, և ո՛չ էլ փափուկ մեծացած ազատը՝ վչտացած գեղջուկից, և ո՛չ էլ մէկը միւսից աւելի պակաս քաջութեան մէջ։ Միեւնոյն յօժար սիրտն

ունէին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղայ, և Քրիստոսի անունով բոլոր մխաքանուածները։ Որովհետեւ առհասարակ (բոլորն էլ) միեւնոյն զէնքով զինուորուեցին և Քրիստոսի հաւատի պատուիրանի միեւնոյն ըրահը հագան, ճչմարտութեան միեւնոյն գօտիով ամրացրին իրենց մէջքերը թէ՛ տղամարդիկ և թէ կանայք։

Այնուհետեւ վեր ընկած էր մնում ոսկին, և ոչ ոք իրեն համար արծաթ չէր վերցնում առանձին, և առանց ագահութեան արհամարհուած, անարգուած էին զարդարանքի ու մեծարանքի համար յատկացուած պատուական հագուստները։ Ինչպէս և ամէն մի գոյք ոչինչ էր համարւում իր տիրոջ աչքում։ Իրենց անձերի վրայ նայում էին ինչպէս մեռած դիակների վրայ, և ամէն մէկն իր գերեզմանն ինքն էր փորում. իրենց կեանքը մահ էին համարում, իսկ մահը՝ հաւատի կեանք։

Բայց չուտ-չուտ այս խօսքն էր լսւում. «Միայն թէ քաջութեամբ մեռնենք, միայն թէ անուն և հոգի ժառանգենք, որ մեր մէջ կենդանի լինի Քրիստոսը, որի համար հեշտ է միւս անգամ ծորոգել մեզ հողից, ինչպէս և նախկին բոլոր մեռածներին, և իւրաքանչիւրին հատուցանել իր գործերի համեմատ»։

Այս և սրանից էլ աւելին խօսելով և իրենց ու միմեանց մխիթարելով՝ զինուորները մի անգամ էլ պատրաստեցին իրենց զէնքերը, և աղօթաւորները չարունակում էին իրենց աղօթքները, և պահեցողները ճգնում էին իրենց պահքի մէջ։ Պաշտօնեաների ձայները գիշեր-ցերեկ անպակաս էին սուրբ սաղմոսները կարդալու մէջ. աստուածային կտակարանների ընթերցումը երբեք չէր դադարում ոչ մի ժամ, այդպէս էլ՝ մեկնիչների երկնաւոր վարդապետութեամբ մխիթարելը։

Այն ժամանակ նորից յարձակուեցին այն բերդերի և աւաններ վրայ, որ երկրի զանազան ամուր տեղերում գրաւել էին պարսիկները. կործանեցին-քանդեցին նրանց բնակութիւնները։ Նախ՝ մեծ Արտաշատը իր աւաններով. և առան անմատչելի ամրոցները՝ Գառնի քաղաքը, Անին, Արտագերսը և իրենց աւանները. Երկայնորդն ու Արճնին և իրենց աւանները, Բարձրաբերդը, Խորանիստը, Ծխանիստը, ապահով Ողականը, և սրանց հետ իրենց աւանները. Արփանեալը, Վան աւանը, նրա հետ նաև

իր աւաններըը. Գոեաչն ու Կապոյտը, Որոտն ու Վասակաչատը98։

Այս բոլորն ամէն մէկն իր գիւղերով ու ագարակներով, զօրքերով ու զօրագլուխներով նոյն տարին առան ու կործանեցին և տղամարդկանց ու կանանց գերի տարան իրենց գոյքերով ու ստացուածքներով, պատուական գանձերով ու կահ-կարասիով։ Տապալում-քանդում էին նրանց չէնքերը և հրկիզում էին կրակի պաշտօնարկի և պաշտամունքի տեղերը։ Մաքրում էին կռապաշտութիւնների պղծութիւնը և գրաւում էին աստուածների սարք ու կարգը, բերում-դնում էին սուրբ եկեղեցում և սուրբ քահանաների միջոցով նուիրում էին ի ծառայութիւն աէրունական տեղին։ Եւ սնոտի պաշտամունքի փոխարէն, որ տապալեցին հեթանոսները բոլոր վայրերում, կանգնեցնում էին Քրիստոսի փրկական խաչը. ամենասուրբ տեղն էին սարքում և արբուխեամբ կատարում կենդանարար խորհուրդը, պաշտօնեաներ ու քահանաներ էին նշանակում այն տեղերում։ Ամբողջ երկիրն առհասարակ ուրախանում էր հաստատուն յուսով։

Եւ մինչդեռ այս մեծ առաքինութեամբ կատարեալ էին գործում իրենց նահատակութեան գործը, կարծես մի տեսակ աստուածային չնորհ էր եբեում բոլորի վրայ. որովհետեւ առանց հայոց զօրքերից հրաման ունենալու՝ աշխարհի արեւելեան կողմից ոմանք յարձակուեցին Ատրպատականի99 աշխարհի վրայ և գանազան տեղերում մեծ վնասներ տուին՝ բազմաթիւ աւերներ առնելով, աւերելով ու կործանելով։

Իսկ ովքեր մեծ ամրոցներն էին դիմում, երեսները խաչակնքելով յարձակւում էին զօրքի վրայ. այդպիսով երկու մեծ բերդերի պարիսպներ՝ դեռ ոչ ոք չմօտեցած՝ կործանուեցին ընկան. այնպէս որ երկրի բոլոր բնակիչները այդ մեծ հրաշքից զարհուրած՝ իրենք իրենց ձեռքով այրում էին կրակատուններըը, ուրանալով մոգութեան կրօնը՝ հաւատում էին սուրբ աւետարանին։

Ուրիշ մեծ-մեծ յաջողութիւններ էլ էին կատարւում զօրականների միջոցով. որովհետեւ ուր ամենեւին յոյս չկար, թէ որեւէ մէկը Աստծու անունը կուտայ, այնտեղ մեծ արհաւիրքներ էին թափւում նրանց վրայ և ամէն մարդ նոր ու զարմանալի տեսիլներ էր պատմում իր ընկերոջը։ Նոյնպէս և աստ-

ղերը երկնքում սաստիկ լուսաւոր ու պայծառ էին երեւում, մի բան, որ նրանց առաջին բնութեանը յատուկ չէր։ Եւ այդ երկրի բոլոր տղաները խիզախում էին պատերազմող տղամարդկանց նման։

Եւ ահա չատ օրեր անցնելուց յետոյ՝ եկաւ-հասաւ Աղուանից հազարապետը նոյն աշխարհի սուրբ եպիսկոպոսի հետ միասին, մեծ տագնապով չտապեցնում էր ղօրքին՝ ասելով. «Հոների աշխարհի կողմերը գտնուած Պարսից զօրքը յետ դարձաւ այս կողմը, եկաւ մտաւ մեր երկիրը. և չատ ուրիշ այրուձի էլ արքունիքից եկաւ։ Եւ բացի այս ամենից՝ հետները բերել են նաև երեք հարիւր մոգ վարդապետներ, պատակեցին աշխարհը և ոմանց իրենց կողմը գրաւեցին, և կամենում էին եկեղեցու վրայ ձեռք բարձրացնել. թագաւորի հրամանով ստիպում էին բոլորին և ասում էին. «Եթէ յօժարակամ յանձն առնէք (մոգական) կրօնը, պարգեւներ ու պատիւներ կը ստանաք նրանից, և արքունիքը կը ների ձեր հարկերը. իսկ եթէ ձեր կամքով յանձն չառնէք, մեզ հրամայուած է գիւղերում և քաղաքներում ատրուշաններ շինել, և Վռամական կրակը100 դնել նրանց մէջ, և ձեր ամբողջ երկրի վրայ մոգեր ու մոգպետներ կարգել օրէնսդիր։ Եւ եթէ ոեւէ մէկը անհնազանդ գտնուի և դիմադրի, ինքը մահուան պատիժ կը կրի, իսկ նրա կինն ու որդիները հայրենիքից զրկուելով՝ արքունի (կալուածներում աշխատելու) կը գնան»։

Իսկ Հայոց զօրքը երբ լսեց այս դառն գոյժը, ամենևին չթուլացաւ քաջութիւնից և չվհատեց, այլ դարձեալ ամբողջ երկրից համագունդ ժողով արին այն բոթաբեր պատգամաւորների վերաբերմամբ, որոնք եկել էին նրանց մօտ։ Եւ միաբանութեամբ քաջալերելով՝ արձակեցին նրանց, որպէսզի մի առժամանակ սուտ խաբէութեամբ յետ պահեն նրանց իրենց չար կամքը կատարելուց, և թոյլ չտան իրենց եկեղեցու սուրբ ուխտին դիպչելու. և խորհուրդ անելով՝ Աստծու օգնութեամբ մի ելք էին փնտռում գործի համար։

Այն ժամանակ մեծ նախարարներից մէկին Գնունեաց տոհմից՝ Ատոմ անունով, չտապով ուղարկեցին Արեւմտեան երկիրը, որ Արեւելքի չարամիտ թագաւորի այս բոլոր մտադրութիւննե-

րը յայտնի, միաժամանակ պատմի նաև իրենց քաջութիւնները, որ կատարեցին գործով, ոտի տակ տալով ահեղ հրամանը, և մոգերին մեծապէս սատկեցնելը, և նրանից օգնութիւն ու օժանդակութիւն խնդրի, և եթէ նա կամենայ, նրա ծառայութեան տակ մտնեն։

Եւ այս է այն գրութեան պատճէնը, որ գրեցին Թէոդոս[101] կայսրին.

«Յովսէփ եպիսկոպոս իմ բազմաթիւ եպիսկոպոսակիցներով և Հայոց ամբողջ զօրքով, վասակ մարզպան և ներշապուհ Իմբռոսեան վարդան սպարապետի հետ միասին, և բոլոր մեծամեծ նախարարներով՝ մեծանուն Թէոդոս կայսրիդ չատ ողջոյն հասնէ մեր կողմից քեզ ու քո բոլոր զօրքերին, որ ձեր խաղաղասէր մարդասիրութեամբ տիրում էք ծովին ու ցամաքին, և երկրաւորներից չկայ մէկը, որ դէմ գնայ ձեր անխոչընդոտ տէրութեանը։

«Ինչպէս որ մենք էլ ունենք ձեր առաքինի նախնիների մասին անսուտ յիշատակարաններ, նրանք Եւրոպան նուաճելով՝ անցան և տիրեցին Ասիացիների երկրներին եւս Սերայի սահմաններից մինչեւ Գադերովնի[102] կողմերը, և ոչ ոք գտնուեց, որ ըմբոստանար և նրանց ձեռքի տակից դուրս գար։

«Եւ այնչափ մեծ իշխանութեան մէջ մեծ ու սիրելի դաստակերտ էին անուանում Հայոց աշխարհը։ Այս պատճառով էլ մեր նախնին՝ Տրդատիոսը, յիշելով ձեր առաջին սէրը, որ մանկութեան ժամանակ իր հօրն սպանող մարդախողխող հօրեղբայրների ձեռքից փախցրած՝ փրկուել ու սնուել էր յոյների երկրում և ձեր օգնութեամբ թագաւորելով տիրեց իր հայրենի աշխարհին, սոյնպէս և Քրիստոսի հաւատն ընդունելով Հռոմի սուրբ եպիսկոպոսից[103], լուսաւորեց հիւսիսի խաւար կողմերը, որ և անա Արեւելքի խաւարասէր որդիներն ուզում են խլել, կորզել մեր ձեռքից։

«Եւ մենք յոյս դնելով ձեր արիութեան ու քաջութեանվրայ, բաներ կայինն, որ ընդդիմացանք նրանց հրամաններին, բայց է՛լ աւելի չատ բան կայ, որին պատրաստուել ենք այսուհետեւ (ընդդիմանալու)։ Գերադասեցինք մահն աստուածապաշտութեամբ, քան կեանքն ուրացութեամբ. եթէ դուք էլ պաշտ-

պանէք մեզ, ահա կրկին կեանքի հանդիպեցինք և ոչ թէ մահուան, իսկ եթէ մի քիչ էլ դանդաղէք, գուցէ այս կրակի բոցը ուրիշ չատ աշխարհների էլ հասնի»։

Եւ երբ ներկայացան մեծ թագաւորին և կարդացին Հայոց աշխարհի աղաչական գրութիւնն ու նախնիքների յիշատակարանները, չատ գրքեր մէջ բերին՝ կարդացին և նրանց մէջ էլ գտան նոյն հաստատուն ուխտը։

Եւ մինչդեռ երանելի Թէոդոսը հարցուփորձ էր անում ամբողջ Սինկղիտոսին[104] և կամենում էր գործի համար մի հնար գտնել խաղաղութեամբ, և մեծ յօժարութեամբ հոգ էր տանում, որ Արեւելքի եկեղեցիները չյափշտակուեն անօրէն հերձանոսների կողմից, այդ նոյն ժամանակ չուտով հասաւ նրա կեանքի վախճանն ու աւարտումը, և օգնութեան գործը չարաչար խափանուեց։

Եւ նրա փոխարէն թագաւորեց Մարկիանոս կայսրը[105]. սա էր խրատատու վատթար ծառաների չնորհիւ, այն է՝ Անատոլ սպարապետի և Փլորենտիոս ասորու, — երկուսն էլ անարդ ու վատթար, միեւնոյն ժամանակ և անաստուած մարդիկ, — նրանց կողմն անցնելով թագաւորը՝ չկամեցաւ ուշադրութիւն դարձնել Հայերի միաբան ուխտին, որ իրենց ամբողջ ուժով ընդդիմադրել էին հերձանոսների չարութեանը։ Իսկ այս անարի մարդը աւելի լաւ էր համարում իր դաշինքը պահել հերձանոսների հետ[106] մարմնական խաղաղութեան համար, քան թէ քրիստոնէութեան ուխտին պատերազմակից լինել։ Այս պատճառով էլ չտապեց, դեսպաններ ուղարկեց Պարսից թագաւորի մօտ նոյն Փլորենտիոսին, և հաստատուն դաշն կնքեց նրա հետ՝ օգնութիւն ցոյց չտալ Հայոց զօրքին ո՛չ զօրքով և ոչ էլ զէնքով ու ամէն տեսակ օժանդակութեամբ։

Եւ երբ այսպէս կատարուեց-պրծաւ, և նրանց յոյսը կտրուեց մարդկային օգնութիւնից, դարձեալ սուրբ եպիսկոպոսներն սկսեցին քաջալերել իրենց և Հայոց զօրքին։ Թէպէտեւ տեսնում էին իրենց սակաւութիւնն ու երկու թագաւորների միաբանութիւնը, բայց և այնպէս ամենեւին չէին վհատւում ու դողում, այլ նախկին ուխտադրութեան համաձայն խիզախում էին և ասում. «Պատրաստ ենք սպանելու և մեռնելու համար.

Աստծու համար հեշտ է քիչ մարդկանցով չատերի գործ կատարել, և անարգների միջոցով՝ մեծամեծ բաներ անել»։

Թէպէտեւ թագաւոր չունէին իրենց առաջնորդ, և ոչ էլ դրսից որեւէ օգնական օտարներից, բայց բոլոր նախարարներն անձնական առաքինութեամբ և սուրբ վարդապետների միխիթարութեամբ իրենց բոլոր զօրքերի հետ միասին ամէն մէկն իր տնից չտապով եկան, մի տեղ հաւաքուեցին, նաև ուրիշ չատ հեծելազօր, որոնք թագաւորական տնից էին։

Եւ ամբողջ զօրքը երեք գնդի բաժանեցին։

Առաջին գունդը տուին Ներչապուհ Ռմբոսեանին, և ուղարկեցին նրան երկիրը պահպանելու Ատրպատական աշխարհի սահմաններին մօտիկ։

Երկրորդ գունդը տուին Հայոց Վարդան զօրավարի ձեռքը, որ անցնի վրաց սահմանից ճորա մարզպանի վրայ, որ եկել էր Աղուանից եկեղեցիներն աւերելու։

Իսկ երրորդ գունդը յանձնեցին Սիւնեաց Վասակ իշխանին, որն իր ներքին մտադրութիւններով հեռացած չէր հեթանոսների ուխտից։

Նա ընտրեց և իրեն հետ վերցրեց այնպիսի մարդիկ, որոնց հաւատի թուլութիւնը գիտէր.—

Բագրատունեաց իշխանին իր զօրքով.
Սորխոռունեաց իշխանին իր զօրքով.
Ապահունեաց իշխանին իր զօրքով.
Վահեւունեաց իշխանին իր զօրքով։
Պալունեաց իշխանին իր զօրքով.
Գաբեղենից իշխանին իր զօրքով.
Ուրծա իշխանին իր զօրքով։

Եւ ուրիշ բազմաթիւ զօրք էլ արքունի տնից իր կողմը գցեց, նոյնպէս և ուրիշ տոհմից մի քանի սեպուհներ։ Եւ խորամանկ խաբէութեամբ դարան էր մտնում իր երկրի ամուր տեղերում, կեղծաւորութեամբ պատճառ բերելով, թէ ճեպընթաց պիտի անցնի-յարձակուի Պարսից զօրքի վրայ՝ Աղուանից երկրից նրանց հալածելու համար։

Իսկ նա իր ամրածածուկ թաքստոցից չտապով դեսպաններ ուղարկեց Պարսից զօրքերի մօտ, թէ «Ահա քանդեցի Հայոց

ուխտի միաբանութիւնը և երեք կողմերի վրայ գունդ-գունդ քանդելով բաժանեցի։ Առաջին գունդը հեռացրի Հերի և Ջաբեւանդի107 կողմերը. երկրորդ գունդը իմ ձեռքի տակ է, որոնց թոյլ չեմ տայ որեւէ վնաս հասցնելու արքունական զօրքին, եւ էլի որքան պատերազմող մարդ որ կար այս աշխարհում, ցիրուցան արի այս երկրի զանազան կողմերը։ Իսկ երրորդ գունդը վարդանի հետ Աղուանք ուղարկեցի՝ փոքրաթիւ և ոչ թէ բազմաթիւ զօրքով։ Համարձակ դուրս արի նրա առաջ և ամենեւին մի՛ վախենա նրա դէմ պատերազմի ելնելուց. գիտեմ, որ պարտութիւն պիտի կրեն քո մեծ զօրութեան առաջ»։

Այս բանը գրեց և հասկացրեց մարզպանին, որի անունը Սեբուխտ էր։ Իսկ նա, երբ լսեց վասակից այս բոլոր խրախուսանքները և ստուգելով համոզուեց, որ Հայոց սպարապետը սակաւաթիւ գնդով է գալիս նրա վրայ, այլեւս չմնաց ճորա կողմերում, այլ հաւաքեց իր ամբողջ բազմաթիւ զօրքը և չտապով անցաւ Կուր անունով մեծ գետը, և հանդիպեց նրան Վրաց սահմաններին մօտիկ Խաղխաղ108 քաղաքի հանդէպ, որ Աղուանների թագաւորների ձմերոցն էր։ Անցաւ-սփռուեց իր ամբողջ զօրքով, բանակ դրեց և դաշտի ամբողջ մեծութիւնը բռնեց. զինուած ու լիովին սպառազէն դուրս եկան կռուելու Հայոց զօրքի դէմ։

Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնուած ամբողջ զօրքը, երբ տեսան հեթանոսների գնդի մեծ պատրաստութիւնը, նայեցին նաև իրենց սակաւութեանը. թէեւ թուով նրանցից չատ աւելի քիչ էին, բայց ամենեւին չվախեցան նրանց մեծ բազմութիւնից, այլ բոլորը միասին իրենց ձեռքերը դէպի երկինք բարձրացրին, աղաղակում էին և ասում.

«Դատի՛ր, Տէ՛ր, նրանց, ովքեր դատում են մեզ. կռուի ելիր նրանց դէմ, ովքեր ահա մարտնչում են մեր դէմ. քո զէնքով ու ասպարով օգնի՛ր մեզ109։ Թափահարիր և դողացրո՛ւ այս անօրէնների գունդագունդ բազմութիւնը. ցրուի՛ր և ոչնչացրո՛ւ քո թշնամիների չար միաբանութիւնը այս քո փրկական մեծ նշանի առջեւ և մեր՝ սակաւաթիւներիս՝ ձեռքով քաջութիւն ու յաղթութիւն պարգեւի՛ր այս անհամար բազմութեան դէմ։ Ո՛չ թէ անօգուտ վաստակների անոտի փառասիրութեամբ պարծե-

նալու համար ենք աղաչում, կամ թէ ընչասէր ագահութեամբ անցաւոր հարստութիւն կողոպտելու, այլ որպէսզի ճանաչեն ու իմանան այն բոլորը, ովքեր չեն հնազանդւում սուրբ աւետարանի քարոզութեանը, թէ դո՛ւ ես կեանքի ու մահուան տէրը, և քո՛ ձեռին է յաղթութիւնն ու պարտութիւնը։ Իսկ մենք պատրաստ ենք մեռնելու քո սիրոյ համար. և եթէ պէտք լինի նրանց սպանել էլ, ո՛չ թէ մեզ, այլ ճշմարտութեան համար վրէժխնդիր կը լինենք»։

Այս ասելով՝ խումբ կազմեցին ու յարձակուեցին, և աջ թեւը ճեղքելով՝ ձախ կողմը գցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրայ և փախցրին մինչեւ անտառի ամուր տեղերը՝ Լփինաս գետիII10 խոր ձորերի մօտ։ Այստեղ ԲաղասականIII թագաւորի թագաւորազներից ոմանք յետ դարձան, Հայոց նախարարներից մէկին ձիուց վայր գցեցին, Դիմաքսեան գնդից Մուշին սպանեցին և Գազրիկին վիրաւորեցին։

Այնտեղ աչքը վեր բարձրացրեց Արշաւիր Արշարունին, մռնչաց առիւծի պէս և յարձակուեց վարազի նման, փռեց-սատակեցրեց Լփինաց թագաւորի եղբայր քաջ Վուրկին և նրա բազմաթիւ համհարզներին էլ նրա հետ սպանեց։ Եւ այսպէս առհասարակ իւրաքանչիւրն իր ախոյեանին գետին էր գլորում։ Եւ սաստիկ յանդուգն յարձակման պատճառով գետը թափածների թիւն աւելի շատ էր, քան թէ ցամաքի վրայ սրի անցրածներինը։ Եւ ընկած դիակների բազմութիւնից գետի յստակ ջրերը արիւն դարձան, և նրանցից ոչ ոք չկարողացաւ փրկուել և թաք կենալ դաշտերի խիտ անտառներում։ Բայց թշնամիների զօրականներից մէկը իր զէնքերով միասին բարձրանալով ձիու մէջքին՝ անցաւ մեծ գետը, մազապուր պրծաւ պատերազմից՝ գոյժ տարաւ մնացած բուն բանակին, որոնք փախան գնացին մեծ չահաստանը[112]։

Այն ժամանակ Հայոց զօրքերը պատերազմի մեծ գործն աւարտելով՝ սկսեցին դիակների կողոպուտը. հաւաքեցին բանակի մեծ աւարը և կողոպտեցին ընկած դիակները. ժողովեցին շատ արծաթ ու ոսկի, արի մարդկանց և լաւ երիվարների զէնքերն ու զարդերը։

Դարձեալ ոչ պակաս քաջութեամբ յարձակուեցին այն բեր-

դերի և քաղաքների վրայ, որ գրաւել էին պարսիկներն Աղուանների աշխարհում, հզօրապէս մարտնչելով և կրակ տալով նրանց ամուր բերդերը. և մոգերի այն խմբերը, որոնց պատրաստել–բերել էին երկրում գայթակղութիւն գցելու համար, ո՛ւր էլ գտնում էին ամուր–ամուր տեղերում, սրի ճարակ դարձընելով՝ թողնում էին երկնքի թռչուններին և երկրի գազաններին կերակուր։ Այն տեղերը մաքրեցին բոլոր պիղծ զոհերից և եկեղեցիները փրկեցին–ազատեցին անտանելի նեղութիւնից։

Աղուանից նախարարներից ու բոլոր չինականներից չատերն էլ, որոնք Աստծու անուան համար ցիրուցան էին եղել կապկոհ լեռներիII3 ամուր տեղերում, երբ տեսան այդ գործի յաջողութիւնը, որ Աստուած կատարում էր Հայոց զօրագնդի միջոցով, նրանք նոյնպէս եկան–ժողովուեցին և խառնուեցին Հայոց զօրքի հետ, և նրանց հետ միաբան ու հաւասար մասնակցեցին քաջութեան գործին։ Այնուհետեւ գնացին–արշաւեցին Հոների պահակիII4 վրայ, որ բռնութեամբ գրաւել էին պարսիկները. առան, քանդեցին պահակը և կոտորեցին ներսում բնակուած զօրքը և Դուռը յանձնեցին Վահանին, որ Աղուանների թագաւորների ցեղից էր։ Եւ այս բոլոր քաջագործութիւններն անելիս՝ նրանցից ամենևեին ոչ ոք չվիրաւորուեց, բացի մէկ երանելուց, որ նահատակուեց մեծ պատերազմի մէջ։

Եւ տեղն ու տեղը այն մարդուն, որին յանձնել էին Դուռը, հէնց նրան էլ դեսպան ուղարկեցին Հոների երկիրը և Հոների երկրին գործակից ուրիշ չատ բարբարոս ազգերի մօտ՝ նրանց հետ բանակցելու և դաշն կնքելու, որ հաստատ մնան այդ միաբանութեան վրայ։ Իսկ նրանք երբ այս բոլորը լսեցին, շտապով եկան–հասան այնտեղ և ականատես եղան յաղթութեան գործին։ Եւ չյապաղեցին երդումով դաշն կնքել իրենց օրէնքով ու կարգով. ընդունեցին նաև քրիստոնեաների երդումը՝ հաստատ պահելու միաբանութիւնը նրանց հետ։

Երբ այս բանն աւարտեցին և իրենց համար մեծ ապահովութիւն ձեռք բերին, և դեռեւս նոյն վայրում տեղաւորուած էին հանգիստ կերպով, Հայոց աշխարհից մի գուժկան հասաւ, ճակատը վիրաւորուած ու օձիքը պատառոտուած, (և պատմեց) ապստամբ Վասակի մասին. «Հեռացել է քրիստոնէութեան ուխ-

տից և աւերել Հայոց աշխարհի չատ տեղերը, մանաւանդ արքունի ձմերոցները, որոնք զօրքի կայաններն էին, Գառնին և Երամոնսը և Դրասխանակերտը՝ մեծ Դաստակերտը, Վարդանաշատը և Օշական ամրոցը, Փառախոտը, Արդեանքը, Ծոլակերտաւանը, և Արմաւրի բերդը, Կուաշ աւանը, Արուճը, Աշնակը և ամբողջ Արագածոտնը, Արտաշատի նահանգը և նոյնիսկ Արտաշատն115 ամբողջովին, ինչպէս և նրա չուրջը գտնուած բոլոր գիւղերն ու աւանները՝ առել, աւերել և կրակ է տուել, և ձեր բոլորի ընտանիքները փախցրել-հեռացրել է իրենց բնակութիւնից։ Զեռք է տուել նաև սուրբ եկեղեցիներին. տարել է նաև եկեղեցու սեղանի սուրբ անօթները. գերել է քահանաների ընտանիքներին, իսկ նրանց կապել ու բանտ է դրել. և ինքը աստաստակ սփռելով ու տարածելով ամէն կողմ՝ ամբողջ երկիրն աւերում է։ Եւ այն գունդը, որ Աորպատականի կողմերում էր, չկարողացաւ օգնութեան ձեռք մեկնել Միջնաշխարհինն116։ Իսկ այնտեղ մնացած զօրքը՝ փախուստ տալով այդ անօրէնից՝ քաշուել է երկրի մի ծայրը և դեռևս պահում է Քրիստոսի սիրոյ մխաքանութեան ուխտը ձեղ հետ։ Իսկ նրանք, ովքեր նրա հետ էին, ոմանք փախան ամէն մէկն իր տեղը, բայց աւելի բազմաթիւ են նրանք, ովքեր մոլորուեցին և հետեւեցին նրա ամբարշտութեանը»։

(Հայոց զօրքը) խիստ չտապով չուեց այնտեղից՝ մեծ աւարով և անչափ հարստութեամբ նորից Հայոց աշխարհը վերադառնալու համար. և անտրտում ուրախութեամբ բարձր ձայնով երգում էին և ասում. «Գոհութիւն մատուցէք Տիրոջը, որովհետեւ նա բարի է, որովհետեւ նրա ողորմութիւնը յաւիտենական է. ո՛վ ջարդեց մեծամեծ ազգերին և սպանեց հզօր իշխաններին, որովհետեւ նա բարի է, որովհետեւ նրա ողորմութիւնը յաւիտենական է»117։ Եւ այս սաղմոսը մինչեւ վերջը երգելով՝ կատարեալ աղօթքով փառք էին տալիս սուրբ Երրորդութեանը։ Այնտեղ զօրավարը խնամքով հոգում-կարգաւորում էր զօրքի դրութիւնը առաջապահներով, վերջապահներով ու կողմնապահներով, և երեսուն օրուայ մէջ ողջ ու առողջ հասցրեց հայրենի երկրի սահմանները։

Լուր հասաւ ուրացեալ Վասակին և նրա հետ եղած իշխան-

ներին վարդանի զօրախմբի արիութեան ու քաջութեան մասին Աղուանից աշխարհում, ինչպէս նաև Հոների մի ւթաքանուելու մասին։ Դեռ միմեանց չէին հանդիպել, նա մի գիշերից օգուտ քաղելով՝ փախաւ–ընկաւ իր երկրի ամուր տեղերը, և այնպիսի տագնապի մէջ հեռացաւ, որ Այրարատ գաւառից վերցրած գերին ու աւարը, իրն էլ ակամայ վրան աւելացրած, թողեց ու փախաւ։

Եւ որովհետեւ ձմեռ ժամանակը վրայ էր հասել և պաշարները թշնամիների գունդն աւարել էր, (Վարդանը) չկարողացաւ ամբողջ զօրքը մի տեղում պահել ու մատակարարել, այլ սփռեց-տարածեց երկրի զանազան գաւառները՝ ձմեռը հանգստանալու համար։ Պատուէր ու հրաման տուեց, որ կազմ ու պատրաստ լինեն գարնան պահին։ Եւ աւագ նախարարների խմբից քչերին իրեն գործակից թողնելով՝ ուժեղացաւ և գրաւեց թագաւորանիստ տեղերը։

Եւ գունդ–գունդ զօրք էր ուղարկում Սիւնեաց աշխարհը, առնում ու աւերում էր շատ գաւառներ. և այնպէս նեղը լծեց (Վասակին) և նրա հետ եղած ամբողջ զօրքին, որ սովի վտանգից անխտիր սատկած էշերի և ձիերի միս էին ուտում։ Եւ շատ հարուածներ էին հասցնում ուրացեալներին, այնպէս որ սուրբ եպիսկոպոսների ժողովն ու քահանայութեան ամբողջ ուխտը գառն արտասուք էին թափում չարաչար վշտացածների վրայ, որովհետեւ բոպիկ ոտքով էին քշում տղամարդկանց ու փափկասուն կանանց, և շատ տղաներ քարերին դիպչելով սպանուեցինընկան ճանապարհների վրայ։

Երբ Աստծու երկիւղածները այս ամէն յաղթութիւնները ունեցան, բոլոր եպիսկոպոսներն ու երէցները հրաման արձակեցին ժողովրդին՝ ամբողջ Քաղոց ամիսը118 պահքով ու աղօթքով խնդրուածք անել Աստծուն, և պատերազմների յաղթութեան տօնը խառնել Քրիստոսի Յայտնութեան սուրբ տօնին, որպէսզի այս մեծ յիշատակը անխափան մնայ աստուածային անանց տօնի հետ։

Եւ Աստծու այս բոլոր այցելութիւնները, որոնք մեծապէս երեւացին Հայոց աշխարհի վրայ, սուրբ եպիսկոպոսները գրեցին և ուղարկեցին Յոյների երկիրը, մեծ քաղաքը՝ եկեղեցու սուրբ

ուխտին, որպէսզի նրանք էլ աղօթք անեն և Աստծուց խնդրեն՝ որ ինչպէս սկսել ենք, այնպէս էլ աւարտենք։

Եւ նախկին բռնուած պարսիկներից մէկին (կապանքները) դաց արին ու բերին նախարարների առաջ. նրա հետ խօսում էին և ցոյց էին տալիս այն բոլոր վնասները, որ եղան. թէ՛ երկրների աւերուելը, թէ՛ արքունի ղօրքերի ջարդուելը և թէ՛ այն բանները, որ դեռ պէտք է լինէին առաջիկայում։ Եւ երբ այս բոլորը լրիւ հասկացրին նրան, երկու կողմերն էլ՝ թէ՛ առաքինիները և թէ չեռ կացածները՝ միաբանուեցին ու ամբաստանեցին, թէ ի՞նչպէս զուր և անտեղի սոխպուեցին հայրենի կրօնից հրաժարուել, և ապստամբ վասակի խաբէութիւնը, թէ ի՞նչպէս թագաւորին խաբեց Հայոց անունից, թէ յանձն են առնում մոգութիւնը, մինչդեռ ոչ ոք նրան խօսք չէր տուել, այլ նա ինքն իրենից քծնելով խաբել էր։

Երբ այս ամէնը լիովին հասկացրին, նրան պատգամաւոր ուղարկեցին (թագաւորի մօտ)՝ եղածն արդարացնելու և հնարքներ գտնելու, որ թերեւս կարողանան իրենց եղբայրներին նեղութիւնից ազատել։

Բայց նրա մօտ անօրէն վասակի գուժկաններն աւելի առաջ էին հասել, որ պատմեն արքունի ղօրքի գլխով անցած բոլոր աղէտները, և ամբողջ մեղքը գցել էր եկեղեցու սուրբ ուխտի վրայ։ Որովհետեւ անօրէնի կամքն հէնց այն էր, որ եպիսկոպոսների միաբանութիւնն անջատի նախարարներից. բայց այն բանը դեռ չէր իմացել, որ բնութեան մէջ պատահում է, որ հոգին ու մարմինն առժամանակ բաժանւում են միմեանցից, բայց ով որ Աստծու սիրով է ուխտ կապել, այդ բանը չի կարող լինել։

Արդ, այն մարդը գնալով ձմերոցի տեղը[119], այս ամէնը պատմեց թագաւորին, գրգռեց-դողացրեց նրան, և նա իր բոլոր ուժը կորցրեց-թուլացաւ. մանաւանդ որ արեւելքի պատերազմից կորագլուխ էր վերադարձել և ոչ թէ բարձրագլուխ։ Երբ իրեն մօտ հասած վերջին պատգամաւորից ստուգեց ու հաստատեց ամէն ինչ, իր գործերի անյաջողութեան ամբողջ մեղքը խորհրդակիցների վրայ գցեց։ Եւ այն ժամանակ մարեց նրա բոցավառ բորբոքումը, որովհետեւ փակուեց չար խրատատուների բերանը, որոնք անդադար յորդորում էին նրան դժնդակ

գործեր կատարել։ Հոնարհուեց իր բարձր հպարտութիւնից և վայրենացած սիրտը մարդկային քնութեան փոխարկեց. նայեց ու տեսաւ, որ ինքը լի է տկարութեամբ. հասկացաւ, որ չի կարող կատարել այն ամէնը, ինչ որ կամենում է. այդ պատճառով էլ դադարեց այն յանդուգն յարձակումից և վերջ տուեց մոլեդնոտ գոռում-գոչումին։

Եւ նա, որ ահագին ձայնով որոտում էր և է՛լ աւելի անեղ հրամաններով դողացնում էր հեռաւորներին ու մերձաւորներին, սկսեց քաղցր և աղերսական խօսքերով խօսել բոլորի հետ և ասել. «Ես ի՞նչ մի վնաս եմ տուել, կամ ի՞նչ յանցանք եմ գործել սրեւէ ազգի կամ ժողովրդի կամ առանձին անձի դէմ։ Չէ՞ որ Արեաց աշխարհում ահա բազմաթիւ դաւանութիւններ կան, և իւրաքանչիւրի պաշտամունքը յայտնի է։ Ո՞վ երբեւիցէ նեղեց-ստիպեց (նրանց)՝ մոգութեան կրօնին դարձնելու համար. մանաւանդ քրիստոնէական կրօնի վերաբերմամբ. ինչպէս որ հաստատ ու հաւատարիմ են մնացել իրենց հաւատին, այնպէս էլ մեր աչքում բոլոր կրօններից բարձր նրանք են երեւացել։ Եւ ոչ ոք չի կարող որեւէ բիծ դնել նրանց ընտիր կրօնին, այլ զուգահաւասար եմ համարում մեր մազդեզանց հաւատին, ինչպէս որ նրանք յարգուած էլ էին մեր նախնիքների օրով, որը և ես ինքս էլ յիշում եմ իմ հօր120 ժամանակից, որը նստած էր այս մեծ գահի վրայ։

«Երբ նա սկսեց հետազօտել և քննել բոլոր դաւանութիւնները և հաստատ կերպով վերահասու եղաւ, ամենից վեհը գտաւ բոլորի մէջ քրիստոնէական կրօնը. այս պատճառով էլ մեծարանքներ էին ստանում արքունի պալատում և նրանից առատաձեռն պարգեւներ ստանալով ուրախանում էին և ազատ-համարձակ շրջում ամբողջ երկրում։ Նոյնիսկ քրիստոնեաների գլխաւորներին, որոնց և եպիսկոպոս են կոչում, ընծաների և պարգեւների էր արժանացնում, ինչպէս հաւատարիմ ոստիկաններին՝ նրանց էր յանձնում հեռաւոր մարզերը, և երբեք չէր ախալուսում արքունի մեծամեծ գործերը (նրանց յանձնելով)։

«Իսկ դուք այս բաներից ոչ մէկը երբեք չյիշեցիք. այլ ամէն օր ականջներս ձանձրացրիք՝ ամէն տեսակ չարութիւն խօսելով նրանց մասին։ Տեսէք, որ ինձ գործել տուիք այն, ինչ

որ չէի ուզում և մեծամեծ վնասներ եղան երկու անհաշտ թըշնամիների միջեւ եղած սահմաններում։ Ես մինչդեռ մենք դեռ հեռաւոր ճանապարհին ենք և այս պատերազմում ոչ մի գործ գլուխ չենք հանել, դուք այստեղ իմ տան մէջ պատերազմ յայտարարեցիք իմ դէմ, որի վերջն աւելի վատթար է լինելու, քան արտաքին թշնամիների դէմ մղուած պատերազմինը»։

Այս ամէնը և սրանից էլ աւելին էր խօսում բոլոր մեծամեծների հետ, և մեղքն ու յանցանքը գցում էր մոգպետի ու մոգերի վրայ։ Ես բոլոր վզուրկներն ու պատուաւոր նախարարները, որոնք նստած էին առեանում և ականջ էին դնում նրա յեղյեղուկ խօսքերին, ամաչելով գլուխները կորացնում էին և գետնին էին նայում, և չէին կարողանում գլուխները վեր բարձրացնել։

Բայց նրանցից մի քանիսը թագաւորին հաճոյանալու համար այսպէս ասացին. «Այո՛, քա՛ջ արքայ, արքաների՛ արքայ, այդ այդպէս է, ինչպէս ասացիր, և այժմ կարող ես ամէն ինչ ճշմարտապէս նուաճել. չկայ այնպիսի մէկը, որ կարողանայ քո կամքից դուրս գալ. որովհետեւ աստուածները քեզ այնպիսի (իշխանութիւն) են տուել, որ ինչ կամենում ես, կարող ես անել։ Մի՛ սրտնեղիր ու տագնապիր ինքդ քո մէջ և մի՛ կոտրիր մեր բոլորիս սիրտը. գուցէ գործերին վերջ տալու համար մի հեշտ հնարք գտնուի։ Սիրտդ լայն պահիր և համբերութեամբ թոյլ տուր այդ մարդկանց նորից քրիստոնէական կրօնը պաշտելու և դրանց միջոցով ապստամբներին հաւանութեան կը բերես»։

Այս խօսքերը հաճելի եղան թագաւորին. և անմիջապէս իր առջեւ կանչեց իր զօրքի մէջ գտնուած ամէն ազգի պատկանող քրիստոնեաներին, որոնց բռնութեամբ արգելել էր, որ ոչ ոք չհամարձակուի իր ներկայութեամբ Աստծուն պաշտել։ Որովհետեւ ովքեր ընդդիմացան, չարչարեց և արգելեց նրանց յայտնի պաշտամունք կատարել, ոմանց էլ ակամայ երկրպագել տուեց արեգակին և բոլոր զօրականներին տրտմութեան ու սգի մէջ գցեց։

Իսկ այն օրը նորից հրամայեց, որ համարձակօրէն առաջուայ պէս հաստատ մնան քրիստոնէական կրօնի մէջ։ Իսկ ովքեր յանցաւոր էին, չէին կամենում անմիջապէս, առանց մեծ ապաշ-

խարութեան, գալ ու խառնուել քրիստոնէութեան չարքին, թագաւորը հրամայում էր այդպիսիներին բռնութեամբ վերցնել և տանել իրենց եկեղեցին, եւ երէցներին էլ իրաւունք տուեց, որ ինչպէս գիտեն, իրենց կարգի համեմատ վարուեն։ Ում ոտքիկը կտրել էր, կրկին սահմանեց ամէն մէկին, և ում տեղը խլել էր, հրամայեց վերադարձնել և նրանց չէր արգելում ամէն օր արքունիք մտնել. և ամէն բան, ինչ և ինչպէս առաջ կարգըւած էր, կրկին այնպէս կարգաւորեց։ Յոնաթհուում և սիրով խօսում էր նրանց հետ նախկին սովորութեան համաձայն։

Եւ երբ այս ամէնն արեց ու կարգադրեց, նրանց ներկայութեամբ թողութեան հրովարտակներ ուղարկեց իր իշխանութեան ու տէրութեան բոլոր կողմերը քրիստոնեաների վերաբերմամբ։

«Եթէ մէկը կապանքի մէջ է, թող արքունի հրամանով արձակուի. և եթէ մէկի գոյքը յափշտակուած է, թող վերադարձըւի։ Այդպէս էլ հողերը — թէ՛ հայրական, թէ՛ պարգեւ ստացած և թէ փողով գնած — եթէ որեւէ մէկը խլել է, հրամայեցինք, որ վերադարձուեն»։

Եւ երբ նրանց տեղեկացնում էր այս ամէնը, նրանցից խընդրում էր հաւատարիմ վկայութիւն ուղարկել Հայոց երկիրը, և երդումով ուխտում որ նրանց առաջ՝ իր բոլոր մեծամեծների հաստատութեամբ, թէ «Ամենեւին մտքովս չեմ անցկացնի վրէժխնդիր լինել։ Ինչպէս առաջները ճշմարտութեամբ պահում էիք ձեր կրօնը, այսուհետեւ աւելի՛ պահեցէք. միայն թէ մեր ծառայութիւնից դուրս մի՛ գաք»։

Այս ամէնը գրում և ցոյց էր տալիս թէ՛ Հայոց երկրին և թէ ուրիշ շատ աշխարհների, որոնք քրիստոնէական կրօնին էին հետեւում։ Իսկ ինքը ծածուկ խորամանկութեամբ շտապով դեսպաններ ուղարկեց Մարկիանոս կայսեր մօտ, եւ երբ ստուգեց-իմացաւ, որ Հոռոմները հրաժարուել են քրիստոնեաներին օգնական զօրքով և որեւէ այլ բանով օժանդակելուց, նորից դարձաւ իր նախկին մոլար կարծիքին։ Գործերի անյաջողութեան պատճառն իր պաշտօնեաներին էր համարում և մտքովն անց էր կացնում, թէ առաջուայ մտածածի համեմատ կը կատարի ամէն ինչ։

Իսկ հայերը թէպէտեւ ստացան թագաւորի խաբեբայական սիրալիր գրութիւնը, որը երեսանց կեանքի ապեխս էր բերում, իսկ ներսից լի էր մահի դառնութեամբ, զարմացած էին նրա թերակատար մտածմունքների վրայ և ասում էին միմեանց. «Ո՛րքան լիրբ է նա իր խորամանկ խաբեբայութեամբ, որ երկու–երեք անգամ փորձ անելով՝ կշտամբուեց և չի ամաչում։ Եւ տեղեակ լինելով մեր անքակտելի միաբանութեանը՝ դեռեւս լրբանում ու լկտիանում է. յետեւներից ընկած՝ կամենում է վհատեցնել մեզ։

«Բայց հաւատա՞նք նրա յեղյեղուկ հրամանին. նրա ո՞ր բարեգործութիւնը տեսանք Պարսից աշխարհում գտնուած բոլոր եկեղեցիների վերաբերմամբ։ Որովհետեւ ով որ ինքն իրեն հակառակ չար է, ուրիշի համար չի կարող բարի լինել. և ով որ ինքը խաւարի մէջ է շրջում, նա ուրիշին չի կարող ճշմարտութեան լուսով առաջնորդել։ Ինչպէս որ անիրաւութիւնից արդարութիւն չի լինի, այնպէս էլ ստութիւնից ճշմարտութիւն չի լինի, նմանապէս և խռովասէր մտքից՝ խաղաղութեան ակընկալութիւն։

«Բայց մենք, որ փրկուած ենք Աստծու զօրութեամբ և հաստատուած Քրիստոսի տուած յոյսի հաւատով, որ եկաւ և մեր բնութիւնն ունեցող մարմին առաւ սուրբ կոյսից և անբաժանելի աստուածութեամբ միացած՝ իր մարմնի վրայ կրեց մեր մեղքերի չարչարանքը, և նոյն մարմնով խաչուեց ու թաղուեց և յարութիւն առնելով չատերին երեւաց, և աշակերտների ներկայութեամբ բարձրացաւ իր Հօր մօտ, և նստեց զօրութեան աջ կողմը, հէնց սրան ենք մենք ճշմարիտ Աստուած դաւանում և նրան ենք սպասում, որ Հօր փառքով ու զօրութեամբ գալու է յարութիւն տալու բոլոր ննջեցեալներին, և նորոգելու արարածների հնութիւնը, յաւիտենական դատաստան անելու արդարների և մեղաւորների մէջեւ։

«Չենք խաբուի երեխայի նման և չենք մոլորուի անտեղեակ մարդկանց նման, և չենք խաբուի ինչպէս տգէտներ, այլ պատրաստ ենք ամէն տեսակ փորձութիւնների։ Եւ աղաչում ենք Աստծուն և անդադար խնդրում նրա անչափ ողորմութիւնից, որ ինչով սկսել ենք, նրանով էլ աւարտենք քաջութեամբ և ոչ թէ վախկոտութեամբ։ Որովհետեւ հիմա Աբեւելքն ու Արեւմուտքն իմացան ձեր աստուածամարտ լինելը և մեզ զուր տեղն

պանելը, չնայած մեր բոլոր ծառայութիւններին։ Մեզ վկայեն երկինքը երկնաւորներով և երկիրը երկրաւորներով, որ մինչեւ իսկ մեր մտքերում էլ ամենեւին չենք մեղանչել. և փոխանակ մեզ պարգեւներ տալու և բարիք անելու՝ կամենում էք մեր ճմարիտ կեանքը խլել մեզնից. այդ անհնար բան է և այլեւս չի լինելու։

«Իսկ այժմ հաւատա՞նք նրա անարժան բերանին, որ չարաչար սուիպում էր ուրացութիւն (յանձն առնել). այսօր առանց որեւէ բարիք անելու նա կարո՞ղ է աւետիքի քարոզիչ լինել։ Եւ նա, որ հայհոյում էր Քրիստոսի և հաւատացողներին սուիպում էր ուրանալ նրան, այսօր չենք կարող նրա ակամայ խոստովանութեանն անմիջապէս վստահել։ Նա, որ երդւում էր իր աուտ ու անոտի հաւատով՝ եկեղեցու պաշտօնեաներին ամէն տեսակ չարչարանքների ենթարկելու, այժմ եկել է գողգոթ չնորհակալութիւն է յայտնում, և դրանով կամենում է իր ամբողջ չարութիւնը մեզ վրայ թափել։ Ո՛չ դրան ենք հաւատում և ոչ էլ այդ սուտ հրամանն ենք ընդունում»։

Իսկ նա երբ հասկացաւ, թէ չեմ կարող քանդել միաբանուածների հաստատակամութիւնը, այն ժամանակ իր մօտից արձակեց դառնութեամբ լցուած ծերին[121], որի մէջ սատանան բոյն էր դրել իր զօրութեամբ, և նա չատ արիւնհեղութիւններ էր գործել. նրա ցանկալի կերակուրը մանկութիւնից սրբերի անապրատ մարմինն էր, և նրա ագահութեան ըմպելիքը՝ անմեղների արիւնը։ Նրա չարութեան վրայ աւելացրեց նաև իր մահաբեր հրամանը — բոլոր երկրներից կազմուած գնդեր էր դնում նրա հետ, ինչպէս և փղերի բազմաթիւ երամակներ էր ուղարկում նրա հետ։

Երբ (սա) հասաւ Հայաստանի սահմաններին մօտ, մտաւ Փայտակարան[122] քաղաքը, և ամբողջ ղօրքը սփռեց-տարածեց քաղաքի չուրջը՝ իբրեւ դղուչութիւն, իր չարահնար մտադրութիւնների համար պատրաստութիւն տեսնելու նպատակով։ (Այս) հին չարութիւն վիշապը ամուր որջի մէջ մտած և մեծ կեղծաւորութեամբ իրեն անվախ ձեւացնելով՝ հեռաւորներին սաստում էր ահարկու ձայնով, իսկ մերձաւորների վրայ օձի նման ֆչչացնում էր սողալով։ Սա ամբողջ Պարսից պետութեան իշխանն ու հրամանատարն էր, որի անունն էր Միհրներսեհ, և ամենեւին ոչ մէկը չկար, որ համարձակուէր նրա խօսքից դուրս գալ։ Եւ ո՛չ միայն մեծամեծներն ու փոքրերը, այլեւ թագաւորն ինքը լսում էր նրա խօսքին, որը և հէնց ձեռնարկել էր այն ձախողակ գործերը։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՑ ԲԱԺԱՆՈՒԱԾՆԵՐԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ

Մինչեւ այստեղ չատ էլ չէի վախենում պատմել մեր ազգի այն հարուածները, որ ճշմարտութեան արտաքին թշնամիները չարաչար կերպով յարուցին մեզ վրայ. որոնցից քչերը մեզ ջարդեցին և չատերը ջարդ կրեցին մեզանից, որովհետեւ դեռեւս միաբան և հաւասար էինք, թէպէտեւ ոմանք ծածուկ նենգաւոր երկմտութեան մէջ էին, սակայն արտաքինների աչքում միաբանութիւնն ահաւոր էր երեւում. ինչպէս որ երկու-երեք տեղ չկարողացան էլ դէմ կանգնել (մեզ):

Ուրդ՝ այստեղից արդէն, երբ ներս է սպրդում երկպառակութիւնը, միաբանութիւնը քանդուելու հետ հեռանում է նաեւ երկնաւոր առաքինութիւնը, եւ անձնասիրութիւնն աւելանալով՝ խիստ չատանում է լացն ու ողբը: Որովհետեւ կարուեցինընկան այն անդամները, որոնք առաջներում այս սուրբ մարմնին էին պատկանում, ուստի մարդու լացը գալիս է իր առջեւ այդ դիակը տեսնելիս. է՛լ աւելի դառնու թեամբ է լցւում (սիրտը) այն մարդու պատճառով, որի հոգին ու մարմինն առհասարակ դիակ են դառնում: Եւ եթէ մի անձի վերաբերմամբ այսպէս է, ո՞րքան աւելի կը լինի մի ամբողջ ազգի վերաբերմամբ:

Բայց այստեղ մեր ողբը ո՛չ թէ միայն մի ազգի համար է, այլ (չատ) ազգերի ու երկրների. որ և չարունակելով կը պատմեմ կարգով, թէպէտեւ ոչ ուրախ սրտով: Ահա ակամայ գրում եմ այն չատերի մասին, որոնք զրկուեցին իրենց ճշմարիտ կեանքից և ուրիշ չատերի էլ կորստեան պատճառ եղան, ոմանց միայն այս երեւացող բաների, իսկ միւսների՝ թէ՛ երեւացող և

թէ աներեւոյթ։ Եւ ամենից վատն այն է, որ նրանց բաց արած կորստեան դուռը մխայն Աստուած կարող է փակել, իսկ մարդ (կարողութեան) սահմանից անցել է և այլեւս հնար չկայ։

Այս անօրէն Մհերներսեհը, քանի որ առաջուց տոյժ էիտէր Վասակի ամբարշտութիւնը, այն ժամանակ էլ մարդ ուղարկեց և նրան իրեն մօտ կանչեց։ Նա էլ, քանի որ առաջուց անջատուել ու բաժանուել էր Հայերի միաբանութիւնից, եկաւ–ներկայացաւ նրան. և ապացուցում էր իր հաւատարմութիւնը և Հայերի անիրաւ ապստամբութիւնը։ Դեռ աւելացրեց ու պատմեց այնպիսի բաներ էլ, որ Հայերը բնաւ չէին արել, և կամենում էր ընտանեբար հաճոյանալ անօրէնին։

Իսկ նա թէպէտեւ ներքուստ սաստիկ պախարակում էր նրբան, բայց արտաքուստ պատիւ տուեց և երկրաւոր մեծամեծ պարգեւներ առաջարկեց նրան։ Եւ խոստացաւ նրան աւելի մեծ իշխանութիւն, քան թէ ունէր, և նրա ուշքը դարձրեց այնպիսի անոտի բաների վրայ, որ իր իշխանութիւնից վեր էր. իբր թէ նրան վայել է թագաւորական վիճակի հասնել. միայն թէ այս գործի հնարը գտնի, թէ ինչպէս պէտք է քանդել Հայոց ուխտի միաբանութիւնը, և թագաւորի անմբը կատարուի այն երկրում։

Եւ երբ ամէն բանի յանձնառու եղաւ՝ նրա կամքի համաձայն վարուել, դառնացած ծերն էլ հասկացաւ, որ նա թմրել ուցնորուել և անջատուել է միաբանուածների հաստատութիւնից. իր տրտմած սրտում չատ մխիթարուեց և մտքով անցկացրեց, որ կը կարողանայ բոլորին էլ այս ձեւով որսալ դէպի անգիւտ կորուստը։ Եւ իր հնարագիտութեանն էր վերագրում այն, ինչ որ (թխում էր) այդ մարդու անխելքութիւնից, և տեղեակ չէր այն բանին, որ նա իր կամքով է իր անձը չոկել ու անջատել սուրբ եկեղեցուց, հեռացել ու օտարացել Քրիստոսի սիրուց։

Որովհետեւ նաև մոռացութեան էր տուել Աստծու որդու գալուստը, և չյիշեց սուրբ աւետարանի քարոզութիւնը, ո՛չ սպառնալիքներից վախեցաւ և ո՛չ էլ աւետիսով մխիթարուեց։ Ուրացաւ այն աւազանը, որ յղացաւ նրան[123] և չյիշեց ընկալուչ սուրբ հոգին[124], որ ծնեց նրան։ Անարգեց այն պատուական մարմինը, որով սրբուեց, և ոտնահարեց այն կենդանի ա-

րիւնը, որով մեղքերի քաւութիւն առացաւ։ Ջնջեց որդեգրութեան գիրը և իր ձեռքով խորտակեց մատանու հաստատունկնիքը[125], դուրս եկաւ երանելիների թուից և չատերին ապըատամբեցրեց իրեն հետ։

Կամակորութեամբ ձեռնարկեց և դիւապաշտութեան որդեգիր մտաւ, չարի անօթ դարձաւ և սատանան նրան լցրեց ամէնտեսակ խորամանկութեամբ։ Իր ձեռքն առաւ ինչպէս վահան, և հագաւ նրան ինչպէս զրահ, և դարձաւ նրա կամքի կատարեալ զինուորը։ Հնարներով կռիւ մղեց իմաստունների դէմ, և մեծ խորագիտութեամբ՝ գիտունների դէմ, յայտնի կերպով՝ անմեղների դէմ և ծածկաբար՝ խորագէտների դէմ. ձեռնարկեց և չատերին դուրս հանեց Քրիստոսի գնդից և խառնեց դեւերի գնդերի հետ։ Շատ ուրիշ տեղեր էլ գողաբար սողոսկեց և օձի նման ներս մտաւ ամբաւյածների մէջ. և ցանկապատի մէջ ճեղքըւածք առաջացնելով՝ յայտնապէս յափշտակեց-առաւ ու դուրս հանեց բազմաթիւ ազատների և է՛լ աւելի բազմաթիւ չինականների, ինչպէս և ուրիշ ոմանց, որոնք միայն անունով էին քահանայ։

Նրա գործակիցների անուննները սրանք են[126].
Ռիշտունեաց Արտակ անունով իշխանը.
Խորխոռունեաց Գադիշո անունով իշխանը.
Վահեւունեաց Գիւտ անունով իշխանը.
Բագրատունեաց Տիրոց անունով իշխանը.
Ապահունեաց Մանեճ անունով իշխանը.
Գաբեղենից Արտեն անունով իշխանը.
Ակեայի Ընջուղ անունով իշխանը.
Ուրծի Ներսեհ անունով իշխանը.
Պալունեաց միւս մասի վարաղշապուհ անունով իշխանը.
Ամատունեաց մի սեպուհ Մանէին անունով.

Եւ ուրիշ շատ ազատ մարդիկ արքունի տնից, որոնց ոտանիկ են անուանում։

Եւ իր ամբողջ աշխարհը լիովին ապստամբեցրեց և ուրանալ տուեց ո՛չ միայն բազմաթիւ աշխարհականներին, այլև շատերին եկեղեցու ուխտից, մանաւանդ սուտ եկեղեցիների միջոցով,

որոնց ձեռքով գործում էր այն չարիքները. այն է՝ մի երէց Զանգակ անունով, մի երէց Պետրոս անունով, մի սարկաւագ Սահակ անունով. սրանց ուղարկում էր անմեղ մարդկանց մօտ, խաբում էր ու մոլորեցնում. երդւում էին սուրբ աւետարանով և ասում, թէ «Թագաւորի կողմից ամէնքին պէտք է չնորհուի քրիստոնէութիւնը», եւ այսպէս խորամանկութեամբ չատերին անջատում էին սուրբ միաբանութիւնից, տանում ու խառնում էին ուրացողների խումբերին։

Նա ժողովեց բոլոր գայթակղուածներին և մի մեծ զօրագունդ կազմեց. նրանցից չատերի անունները մէկ առ մէկ գրեց և ցոյց տուեց մեծ հազարապետին, ինչպէս և իր արիութիւնն ու քաջութիւնը, մեծապէս պարծենալով, թէ ի՛նչպէս աշակերտեցրեց մոլար խաբէութեանը. և այնպէս ցոյց տուեց, թէ հայոց զօրքը բաժան–բաժան է եղել և պառակտուած է։

Եւ երբ այս բոլոր չարիքները յայտնուեցին նրան, քանդեց նաև Վրաց աշխարհի միաբանութիւնը[127] Հայերից, Աղուանիցն էլ չթողեց առաջ չարժուել. նոյն ձեւով յետ պահեց նաև Աղձնեաց երկիրը։ Թուղթ ղրկեց նաեւ Ցունաց երկիրը վասակ անունով մի մարդու այն Մամիկոնեաններից, որոնք Ցոյների ծառայութեան մէջ են գտնուում, ցոյց տալով (ամէն ինչ) յեղաշրջուած եւ սուտ ու սխալ։ Այս թշուառութեան ժամանակ այն մարդը Ստորին Հայքի[128] սպարապետ էր և Հոռոմների զօրքերին հաւատարիմ մի անձ Պարսից սահմանի վրայ. և իր գործերով Աստծու օրէնքներին հակառակ գործող մարդ էր։ Այս Վասակն իրեն գործակից գտաւ այն Վասակին այն մեծամեծ չարիքների մէջ, որի համար երկուսը միաբանուեցին։

Նա գրում և չարունակ ապացուցում էր, իբր թէ ամբողջ Հայաստանը միաբանուել է իրեն հետ։ Այս միեւնոյն գիրը նեռքին Վասակը [129] մեծ զգուշութեամբ ուղարկում էր կայսեր Թագաւորանիստ քաղաքը, մինչեւ որ սուրբ եպիսկոպոսների միտքն էլ սառցրեց նրանցից և Ցոյների ամբողջ զօրքի մէջ էլ կասկած գցեց ուխտի վերաբերմամբ։

Մանաւանդ որ այն սուտ քահանաների ձեռքով խաբում ու մոլորեցնում էր ինչպէս ճշմարիտ մարդկանցով. աւետարան էր ուղարկում խաչի հետ միասին. և իր ամբողջ սատանայական

աստուածածապաշտների կարգն էր դասում. իրեն աւելի հաստատուն էր ցոյց տալիս, քան ամբողջ Հայոց զօրքը. երդւում էր ու հաստատում և ցոյց էր տալիս արքունիքից ստացած թողութեան բոլոր հրամանները։

Ցոյների աչխարհի կամքն էլ հէնց այս էր — հաճութեամբ լսել այս ամէնը. բայց Վասակի չնորհիւ Է՛լ աւելի փոխուելով՝ նոյն մտքի մէջ գլորուեցին։

Այսպէս էր վարւում նաև աչխարհի բոլոր ամուր կողմերում, Տմորիքում[130] և Կորդուաց աչխարհում, Արցախում և Աղուանքում, Վրաստանում եւ Խաղտեաց աչխարհում[131]. մարդիկ էր ուղարկում, պնդում էր, որ ո՛չ ոք նրանց հիւրընկալութեան արժանի չհամարի։

Եւ նրա մեծ չարութեան համաձայն էլ առաւելապէս ժամանակը յաջողեցրեց նրա գործերը, որովհետեւ Հայոց զօրքին դրսից ոչ մի օգնող չեղաւ, բացի այն հոներից, որոնց հետ խօսք էին կապել։ Սակայն նրանց համար էլ հաւաքեց Արեաց բազմաթիւ հեծելազօրը, արգելեց եւ փակեց նրանց ելքի ճանապարհը. որովհետեւ նա ամենեւին հանգիստ չէր տալիս Պարսից թագաւորին, այլ ուղարկում-կանչում էր բազմաթիւ զօրքեր Ճորա պահակը, հաւաքում էր Վրաց աչխարհի ամբողջ կօրքը, ինչպէս եւ Լփնաց եւ Ճղբաց զօրքերը, Վաոը, Գաւը եւ Գղվարը, Խրանը եւ Հեճմատակը, Փասխը, Փոսխն ու Փխւքուանը եւ Թաւասպարանի[132] ամբողջ զօրքը, լեռնայինն ու դաչտայինը, եւ բոլոր ամուր լեռներինը։ Ոմանց գոյքով, մեծ պարգեւներով եւ արքունի գանձարանից առատ-առատ պարգեւներ բաչխելով, ոմանց էլ թագաւորի հրամանով սպառնալով՝ տագնապի մէջ էր գցում։

Երբ այս ամէնն արեց ու աւարտեց թագաւորի հրամանի համաձայն, ամէն օր գրում ու ցոյց էր տալիս Պարսից մեծ հազարապետին, որ ծածկուել-թաք էր կացել Փայտակարան քաղաքում։ Այնուհետեւ Միհրներսեհն էլ համարձակուեց իրեն ցոյց տալ չատ ազգերի. ոմանց ահ էր տալիս, եւ ոմանց էլ սիրով պարգեւներ էր բաչխում։ Իրեն մօտ կանչեց Վասակին եւ նրա հետ եղած բոլոր իչխաններին, չատ պարգեւներ չնորհեց նրանց

արքունի գանձարանից, նոյնպէս եւ այն զօրքերին, որ նրան համամիտ էին։ Վասակը նրա առջեւ էր տարել նաեւ ուրացող երէցներին. ապացուցում էր, հաստատում և յայտարարում, թէ սրանց միջոցով պիտի որսամ նրանց ու բաժանեմ միաբան ուխտից։ Իսկ հազարապետը երբ այդ լսեց, չատ չնորհակալ եղաւ երէցներից և յուսադրեց նրանց. «Եթէ յաղթութիւնը մեր կողմը լինի, մեւս քահանաների ունեցած-չունեցածը դրանց եմ չնորհելու. և դրանց մեծ ծառայութեան մասին յայտնելու եմ թագաւորին»։

Եւ այսպէս (Վասակը) չարժեց ու չփոթեց Հայոց աշխարհը, մինչեւ իսկ բազմաթիւ հարազատ եղբայրների բաժանեց միմեանցից. հօրն ու որդուն միաբան չթողեց և խաղաղութեան մէջ խռովութիւն գցեց։

Նոյնիսկ հէնց իր երկրում նա երկու եպբօրորդիներ ունէր պատգինութեան սուրբ ուխտի մէջ. նրանց մասին գրեց և յայտնեց արքունիքին և իրաւունք ստացաւ նրանց ստացուածքի վրայ, նրանց հեռացրեց-քշեց երկրից, որպէսզի այլեւս այնտեղ չվերադառնան։ Հալածեց ու փախցրեց աշխարհի բոլոր միայնակեացներին, որոնք նախատում էին նրա անդարձ ամբարշտութիւնը։ Ամէն չարիք արեց-պրծաւ ճշմարտութեան դէմ. և ինչ էլ որ չէին իմանում անօրէն հերձանոսները, հասկացնում էր նրանց, նաեւ քրիստոնէութեան ուխտի վերաբերեալ, թէ ի՞նչ հնարքներով կարող է այն վերացնել Հայոց աշխարհից։

Երբ այս բոլոր չարութիւնները Մինրնեբսեհը տեսաւ նրա մէջ, իր անձից աւելի յոյսը նրա վրայ դրեց։ Հարցնում և ըստուգում էր, թէ ընդամէնը քանի՞ մարդ կայ Հայոց աշխարհում վարդանի գնդի մէջ։ Երբ նրանից լսեց, թէ վաթսուն հազարից աւելի են, նա տեղեկութիւններ պահանջեց իւրաքանչիւրի քաջութեան մասին, կամ թէ՝ նրանցից քանի՞ հոգի են սպառազէն, և կամ քանի՞ հոգի են առանց զէնքի լոկ աղեղնաւորներ. նոյնպէս և վահանաւոր հետեւակների մասին։

Եւ երբ լսեց բազմութեան թիւն ու համարը, է՛լ աւելի չտապեց իմանալ, թէ քանի՞սն են քաջ զինուորների պարագլուխները, որպէսզի նրանցից իւրաքանչիւրի դէմ երեքը պատրաստի, բացի բոլոր մնացած բաներից։ Մինչեւ անգամ նը-

րանցից ամէն մէկի զրօշներին 133 մասին էլ էր տեղեկութիւն հարցնում, և թէ զօրքը քանի՛ գնդի են բաժանելու և նրանցից ո՛վքեր պէտք է հրամանատար լինեն, և ո՛ր զօրագլուխը ո՛ր կողմից պէտք է պատերազմի մէջ մտնի, և ի՛նչ են իւրաքանչիւր համհարզների անուննները, և քանի՛ փողահար պէտք է ձայն արձակեն գնդի մէջ։ Արդեօք (ցցապատնէշներով ու խրամով չրջապատուած) բանա՞կ պիտի դնեն, թէ՞ արձակ դաշտում տեղաւորուեն. ճակատ առ ճակա՞տ պիտի գործեն, թէ՞ համագունդ մի տեղի վրայ գրոհ տան։ Նրանցից ո՛րը պէտք է տատանման մէջ մնայ և կամ նրանցից ո՛րը չանք թափի՝ իր անձը մահուան ենթարկելով։

Եւ երբ այս ամենի մասին տեղեկացաւ նրանից. կանչեց բոլոր զօրագլուխներին, նրա ներկայութեամբ բոլորին հրամայեց, որ բոլորը կատարեն նրա հրահանգները։ Եւ ամբողջ զօրքը զօրագլուխների հետ միասին յանձնեց աւագներից մէկին, որի անունը Մուշկան Նիսալաւուրտ էր։

Իսկ ինքն այնտեղից ելաւ-գնաց Աբեւելեան երկիրը. և ներկայանալով մեծ թագաւորին՝ պատմեց նրան գործի բոլոր հանգամանքները. իր հնարագէտ իմաստութիւնը և վաճառի խաբեբայ ճար ու հնարները, թէ ի՛նչպէս նա իր նախկին ամբարչտութիւնը կամեցաւ ծածկել նրանով, որ քանդեց-երկպառակեց հայոց զօրքը։

Երբ թագաւորն այս ամէնը լսեց մեծ հազարապետի բերանից, դառնացաւ ինքն իր մէջ և անստուտ երդմամբ ասաց. «Եթէ այն անօրէնը ողջ ազատուի մեր պատերազմից, մեծ անարգանքով պէտք է խմացնեմ մահուան դառն բաժակը»։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԵՒԵԼՑԻՆԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Աստծու սէրն աւելի մեծ է, քան ամէն երկրաւոր մեծութիւն. և այնպէս աներկիւղ է դարձնում մարդկանց, ինչպէս հրեշտակների անմարմին զօրքերը, ինչպէս որ աշխարհի հէնց սկիզբից կարելի է տեսնել շատերին շատ անգամ և շատ տեղեր՝ Այն մարդիկ, որոնք Աստծու սիրով՝ ինչպէս զէնքով սպառազինուած էին, ամենևին չկնայեցին և անարի վատասիրտների նման չվախեցան ո՛չ մահից, ոչ գոյքի յափշտակութիւնից, ո՛չ սիրելիների խողխողումից և ո՛չ էլ ընտանիքների գերութիւնից, հայրենի երկրից դուրս գալուց և օտար երկրում ստրկութեան մէջ ընկնելուց. նրանք բանի տեղ չդրին այս բոլոր չարչարանքները, միայն թէ միաբան մնան Աստծու հետ, որպէսզի միմիայն նրանից չմերժուեն և նրան իրենց մտքում գերադասեցին բոլոր տեսանելի մեծութիւններից՝ Եւ ուրացութիւնը մեռելութիւն էին համարում, իսկ Աստծու համար մեռնելը՝ անանձ կենդանութիւն. երկրիս վրայ ծառայելը՝ իրենց կեանքի ազատութիւն, և իրենց անձերն օտարութեան մատնելը՝ Աստծու հետ գտնուել՝ Ինչպէս որ այս ժամանակ մեր աչքերով տեսանք, որովհետև Հայոց աշխարհն էլ նոյն նահատակութեամբ նահատակուեց՝

Որովհետև երբ մեծ վարդանը տեսաւ իր աշխարհի երկպառակութիւնը, ամենևին չվախեցաւ թերահաւատութեամբ՝ Թէպէտև ստուգեց-իմացաւ դեռևս իրեն հետ միաբանուածներից չատերի երկմտութիւնն էլ, այնուամենայնիւ ինքնիրեն

սիրտ տուեց և իր զօրքերին էլ քաջալերեց. քանի որ հէնց ինքը դեռ գրաւած էր պահում թագաւորանիստ տեղերն այն նախարարների հետ միասին, որոնք չանջատուեցին սուրբ ուխտից։ Հրամայեց ամբողջ զօրքին հաւաքուել Արտաշատ քաղաքը՝ այն յետ կացածների փոխարէնն, որոնք գնացին Սիւնեաց իշխանի յետեւից, կարգեց նրանց եղբայրներին կամ որդիներին կամ եղբօրորդիներին և ամէն մէկին տուեց նրանց զօրքերը, որովհետեւ ամբողջ երկիրը դեռ նրա իշխանութեան տակ էր։

Եւ նրանք բոլորը չտապուլ եկան հասան պատերազմի տեղը, իւրաքանչիւրն իր զօրքով ու ամբողջ պատրաստութեամբ, նրանք եւ ովքեր ի րնէ հաստատ էին մնացել իրենց տեղում։

Ներշապուհ Արծունին,
և Յորէն Յորխոռունին,
և ինքը սպարապետը,
և Արտակ Պալունին,
և Վահան Ամատունին,
և Վահեւունեաց գունդը,
և Թաթուլ Դիմաքսեանը,
և Արշաւիր Արշարունին,
և Շմաւոն Անձաւացին,
և Տաճատ Գնթունին,
և Ատոմ Դնունին,
և Խոսրով Գաբեղեանը,
և Կարէն Սահառունին,
և Համայեակ Դիմաքսեանը,
և էլի մի ուրիշ Դիմաքսեան՝ Գազրիկը,
և Ներսեհ Քաջբերունին,
և Փարսման Մանդակունին,
և Արսէն Ընձայացին,
և Այրուկ Սլկունին,
և Վրէն Տաշրացին,
և Ապրսամ Արծրունին,
և արքունի Շահխոռապետը,
և Խուրս Սրուանձտեացը,
և Քողեաննները, և Ակեացինները, և Տրպատունինները, և

Ռչտունիների զօրքը, և արքունի բոլոր գործակալներն ամէն մէկն իր զօրքերի հետ միասին[134]։

Սրանք բոլորը համախմբուած հասան պատերազմի գործի համար Արտազու դաշտը[135], և նրանց ընդհանուր թիւը եղաւ վաթսունևվեց հազար մարդ ձիաւոր և հետեւակ։

Նրանց հետ եկան սուրբ Յովսէփը, սուրբ Ղեւոնդ Երէցը և բազմաթիւ այլ քահանաներ և է՛լ աւելի բազմաթիւ պաշտօնեաներ։ Որովհետեւ նրանք էլ ամենեւին չվախեցան պատերազմի գալ նրանց հետ, քանի որ ո՛չ թէ մարմնական էին համարում այն կռիւը, այլ հոգեւոր առաքինութեան կռիւ. ցանկանում էին իրենք էլ քաջ զինուորներին մահակից լինել։

Սպարապետը նախարարների միաբանութեամբ սկսեց խօսել զօրքի հետ և ասաց.

«Շատ պատերազմներ եմ մղել ես և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար յաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք յաղթեցին մեզ. բայց աւելի շատն այն է, որ յաղթող ենք դուրս եկել և ոչ թէ յաղթուած, բայց այդ բոլորը մարմնաւոր պարծանք էր, որովհետեւ անցաւոր թագաւորի հրամանով էինք մարտնչում։ Ով փախչում էր՝ վատանուն էր երեւում աշխարհում և նրանից անողորմ մահ էր ստանում. իսկ ով քաջութեամբ առաջ էր ընկնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգեւներ էր ստանում անցաւոր ու մահկանացու թագաւորից։ Եւ մեզնից ամէն մէկս էլ ահաւասիկ շատ վէրքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրայ. և ուրիշ շատ քաջութիւններ էլ են եղել, որոնց համար եւ մեծամեծ պարգեւներ են ստացուել։ Անարդ եւ անօգուտ եմ համարում այդ քաջութիւնները եւ ոչինչ բաներ՝ այդ բազմաթիւ պարգեւները, որովհետեւ բոլորն էլ ոչնչանալու են։

«Իսկ արդ՝ եթէ մահկանացու հրամանատուի համար այսպիսի քաջ գործեր էինք կատարում, ի՛նչքան աւելի եւս (պէտք է կատարենք) մեր անմահ թագաւորի համար, որ տէրն է կենդանիների եւ մեռելների եւ բոլոր մարդկանց դատելու է իրենց գործերի համեմատ։ Զէ՞ որ եթէ խիստ շատ ապրելով ծերանամ, միեւնոյնն է՝ այս մարմնից պէտք է բաժանուենք, որպէսզի մտնենք կենդանի Աստծու մօտ, որից այլեւս չպէտք է բաժանուենք։

«Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանաւանդ որ ձեղանից չատերը քաջութեամբ ինձնից աւելի լաւ էք և հայրենական գահի պատուով՝ աւելի բարձր. բայց երբ ձեր յօժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զօրագլուխ, թող իմ խօսքերը ախորժալուր և բաղձալի թուան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին. Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմութիւնից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահագին սրի դէմ թիկունքներս դարձնենք, որպէսզի եթէ Տէրը յաղթութիւնը մեր ձեռքը տայ, ոչնչացնենք նրանց զօրութիւնը, որպէսզի բարձրանայ ճշմարտութեան կողմը. իսկ եթէ հասել է ժամանակը մեր կեանքը սուրբ մահով աւարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թէ արիւթեան ու քաջութեան մէջ վախկոտութիւն չխառնենք։

«Մանաւանդ ես չեմ մոռացել և յիշում եմ, թէ ի՛նչպէս ես և ձեղանից ոմանք այն ժամանակ անօրէն իշխանին խաբեցինք-մոլորեցրինք, ինչպէս մի անպիտան մանուկ տղայի, երբ երեսանց նրա ամբարիշտ կամքը իբր կատարեցինք, բայց Տէրն ինքը վկայ է մեզ, թէ ծածուկ մտադրութիւններով ի՛նչպէս անբաժան ենք մնացել նրանից։ Այս դուք ինքներդ էլ գիտէք, որ հնարներ էինք փնտռում ազատելու մեր սիրելիներին, որոնք մեծ նեղութեան մէջ էին, որպէսզի նրանց հետ միասին մարտի մէջ մտնելով՝ կռուենք անօրէն իշխանի դէմ հայրենի աստուածատուր օրէնքների համար։ Եւ երբ նրանց չկարողացանք որևէ կերպ օգնել, թող անհնար լինի, որ մարմնաւոր սիրոյ համար Աստծուն մարդկանց հետ փոխանակենք։

«Իսկ արդ՝ երկու և երեք կռիւների մէջ ինքը Տէրը մեծ զօրութեամբ օգնեց մեզ, այնպէս որ քաջութեան անուն ժառանգեցինք և արքունի զօրքը չարաչար ջարդեցինք, մոգերին էլ անողորմ կերպով կոտորեցինք, և կռապաշտութեան պզծութիւնը մի քանի տեղերից սրբեցինք, թագաւորի անօրէն հրամանը ջնջեցինք-ոչնչացրինք, ծովի խռովութիւնն իջեցրինք, լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառուեց, գազանացած զայրոյթը դադարեց։ Նա որ ամպերի վրայից էր որոտում, ընկճուած՝ իր սովորական բնութիւնից էլ ցած իջաւ՝ մեզ հետ խօսելով։ Նա, որ խօսքով ու հրամանով էր աւե-

զում կատարել իր չարութիւնը սուրբ եկեղեցու վերաբերմամբ, այժմ աղեղով և նիզակով և սրով է կռւում։ Նա, որ կարծում էր, թէ մենք քրիստոնէութիւնն իբրեւ զգեստ ունենք հագած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպէս մարմնի գոյնը (չի կարելի փոխել), գուցէ այլեւս չկարողանայ էլ մինչեւ վերջը։ Որովհետեւ սրա հիմքերը հաստատ կերպով դրուած են անշարժ վէմի վրայ, ո՛չ թէ երկրի վրայ, այլ վերեւում՝ երկնքում, ուր ո՛չ անձրեւներ են գալիս, ո՛չ քամիներ են փչում և ոչ էլ հեղեղներ յարուցանում։ Եւ մենք էլ, թէպէտեւ մարմնով երկրի վրայ ենք, բայց հաւատով երկնքում ենք հաստատուած, որտեղ ոչնչ չի կարող հասնել Քրիստոսի անձեռագործ չինուածքին։

«Հաստատ մնայէք մեր անդրդուելի ղօրագլխի վրայ, որ երբեք չմոռանայ ձեր քաջագործութիւնները։ Ո՛վ քաջեր, մեզ համար մեծ չնորհ է այս, որ Աստուած կատարեց մեր բնութեան միջոցով, որի մէջ և մեծապէս երեւում է Աստծու զօրութիւնը։ Որովհետեւ եթէ ուրիշներին կոտորելով աստուածային օրէնքի համար՝ մեզ պարծանք ժառանգեցինք և մեր աղգատոհմի քաջ անունը եկեղեցուն թողինք, և վարձի ակնկալութիւնը Տիրոջից է, որ պահուած է մեզնից ամէն մէկի համար իր սրտի յօժարութեան և կատարած գործերի համեմատ, ի՛նչքան աւելի ևս, եթէ մենք մեռնենք մեր տէր Յիսուս Քրիստոսի մեծ վկայութեան համար, որ նոյնիսկ երկնաւոր հրեշտակներն են ցանկանում, եթէ հնար լինէր։ Եւ որովհետեւ այս պարգեւները ո՛չ թէ բոլորին է պատչաճ, այլ ում համար պատրաստում է բարերար Տէրը, մեզ էլ այս պատահեց ո՛չ թէ մեր արդար գործերի համար, այլ աննախանձ պարգեւատուի կողմից. ինչպէս որ էլ է ասւում Կտակարանում. «Ուր աւելի եղաւ մեղքը, այնտեղ էլ աւելացան Աստծու չնորհները»136։

«Եւ խիստ յարմար է գալիս մեզ այս պատգամը. ինչպէս որ մեծ չափով ամբարիշտ երեւացինք մարդկանց, կրկնապատիկ չափով արդարացած կ'երեւանք մարդկանց ու հրեշտակներին և ամէնքի Հօրը։ Որովհետեւ չէ՞ որ այն օրը, երբ մարդիկ լսեցին մեր ամբարիշտ գործը, շատ արտասուք թափուեց սուրբ եկեղեցում, և ի՛լ աւելի շատ՝ մեր սիրելիների մէջ։ Մինչեւ անգամ մեր ընկերները զայրացած՝ սրով էին սպառնում մեզ և

կամենում էին դառն մահով պատժել մեզ, մեր ծառաները խըրտնում–փախչում էին մեզանից։ Հեռաւոր մարդիկ էլ, որոնք լսել էին մեր քրիստոնէութեան անունը, տեղեակ չլինելով մեր մըտադրութիւններին, ողբ ասելով անդադար սուտ էին անում մեզ վրայ և անպիտութեամբ չատ անարգական բաներ էին խօսում մեր մասին։ Եւ ինչ որ ամենից մեծն է՝ կ'ասեմ. ո՛չ մի այլ մարդիկ երկրի վրայ, այլև հրեշտակները երկնքում իրենց երեսները չուռ տուին մեզանից, որպէսզի տխուր դէմքերով չնայեն մեզ։

«Եւ ահա եկել–հասել է ժամանակը, որ ամէն մի կեղտ կոչուած բան հեռացնենք մեզանից։ Այն ժամանակ իբրեւ մի վըշտալից սգաւոր՝ հոգով ու մարմնով տրտմած էինք, այսօր երկուսով էլ զուարթացած ու զգաստացած՝ առհասարակ խելամիտ ենք դարձել. որովհետեւ բարերար Տիրոջն էլ տեսնում ենք մեզ հետ իբրեւ առաջնորդ. մեր զօրավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների զօրագլուխը։ Վախը թերահաւատութեան նշան է. թերահաւատութիւնը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»։

Առաքինի զօրավարն այս ամէնը խօսեց ամբողջ բազմութեան առաջ. դարձեալ և նրանցից սրան–նրան ծածուկ քաջալերում էր ու սիրտ տալիս և բոլոր պակասութիւններն ու թերութիւնները լրացնում։ Զօրականներից ո՛րը ոչինչ չունէր, հոգում էր իր սեփականութիւնից և ընկերներից. ով զէնք չունէր, զէնք էր հայթայթում նրան. ում զգեստ էր պէտք, զգեստ էր հագցնում, և ում ձի՝ ձի էր տալիս։ Եւ առաստ պարէնով ուրախացնում էր բոլորին, և ինքն իրեն զուարթ էր ցոյց տալիս ամէնքին։ Եւ պատերազմական կարգի համաձայն՝ քաջ տղամարդկանց յիշատակութեան արժանի գործերը շարունակ կըրկնում էր նրանց առաջ, որովհետեւ հէնց ինքն էլ մանկութիւնից տեղեակ էր սուրբ կտակարաններին։ Եւ ձեռքն առնելով Մակաբայեցոց քաջ նկարագիրը՝ կարդում էր, որ բոլորը լսեն, և յորդառատ խօսքերով նրանց հասկացնում էր գործերի հանգամանքները, թէ ինչպէս մարտնչելով կռուեցին աստուածատուր օրէնքների համար Անտիոքացիների թագաւորի դէմ։ Թէպէտեւ նրանք

նոյն պատերազմի մէջ իրենց մահը գտան, բայց նրանց քաջ անունն անմոռաց մնաց մինչեւ այսօր ո՛չ միայն երկրի վրայ, այլեւ երկնքում։ Ցիշեցնում էր զօրականներին նաեւ այն, թէ ինչպէս Մատաթիայի ազգատոհմը քակտուեց-անջատուեց նրա մխութիւնից, հնազանդուեցին թագաւորի հրամանին, մեհեաններ չինեցին, պիղծ զոհեր մատուցին, Աստծուց չեղուեցին, և մահուան պատիժ սոացան սուրբ միաբանուածների ձեռքով։ Իսկ Մատաթին և նրա հետ եղածները ամենեւին չվհատուեցին և չթուլացան, այլ է՛լ աւելի զօրացան և երկար ժամանակ ձեռնամուխ եղան պատերազմի գործին։ Այս պատմում էր և տեղն ու տեղը դաշտում տեղաւորում զօրքը և բոլոր կողմերից հետզհետէ կարգաւորում այրուձին։

Մի քանի օրից յետոյ էլ Պարսից զօրագլուխը առաջ խաղաց ամբողջ հեթանոս բազմութեան հետ. եկաւ-հասաւ Հայոց երկիրը՝ Հեր և Զարեւանդ գաւառը։ Այնտեղ՝ գաւառում կանգ առնելով, բանակ դրեց, փոս փորեց, պատնէշ չինեց, ցցապատերով փակեց, և ամէն պատրաստութեամբ ամրացրեց ինչպէս քաղաք։ Նրա զօրքերից մեծաթիւ գունդ բաժանուեց, ասպատակելով արշաւեց և կամենում էր բազմաթիւ գաւառներ կողոպտել։

Երբ այդ բանը լսեց Հայոց զօրքը, բոլոր զօրականների մէջից ընտրեցին Ամատունեաց ցեղից մի սեպուհի՝ Առանձար անունով, որ իմաստութեամբ ու քաջութեամբ լցուած մի մարդ էր։ Սա երկու հազարով դուրս եկաւ նրա դէմ, ջարդեց-սատակեցրեց նրա գնդից չատերին, իսկ մնացածներին փախցրեց-հալածրեց նրանց բանակը։ Իսկ ինքը ողջ և առողջ վերադարձաւ, և այն օրը մեծ ուրախութեան ծոն եղաւ Հայոց զօրքի համար։

Ուրացեալ Վասակը մի անգամ էլ սկսեց իր առաջին կեղծաւորութեան համեմատ հնարներ գործ դնել. վերեւում յիշուած տուտ երէցների հետ չրջում էր, նրանց միջոցով արքայի կողմից պատգամներ էր յայտնում, և երդմամբ հաւատացնում էր, որ կարող են նորից քրիստոնէութիւնը պաշտել։

Եւ այս բանը շատ օրեր կատարելով՝ չկարողացաւ միաբանութիւնը քանդել, մանաւանդ եկեղեցու սուրբ ուխտը, որ զօրքից հեռացած չէր, ինչպէս երանելի Ղեւոնդ երէցը հրամայն

առնելով իր սուրբ ընկերներից՝ մեծ Յովսէփից և բոլոր մեծա-մեծներից, քահանաներից և զօրագլուխներից. բաց արեց իր բերանը և բարձր ձայնով ասաց (զօրքի) պատգամաւորների առաջ.

«Բոլորդ յիշեցէ՛ք առաջին հայրերին, որոնք նախքան Աստծու որդու ծնունդը (ապրել են) զանազան ժամանակներում։

«Որովհետեւ երբ չարը մեզ հեռացրեց ու դուրս գցեց աստուածային տեղից[137], անողորմ դատաստանի տակ ընկանք այն յանցանքի ու մեղքի համար, որ մեր ազատ կամքով գործեցինք անարժանաբար և դրգռեցինք արարչական զօրութեան զայրոյթն ու բարկութիւնը մեզ վրայ, և ողորմած դատաւորին դրդեցինք անաչառ կերպով վրէժ առնելու արարածներից, մինչեւ այն աստիճան, որ նա հրաման տուեց երկնային ծովին թափուել ցամաքի վրայ, և երկրիս հաստատուն յատակները ծակծկուելով հակառակ կողմից նոյնը գործեցին[138]։ Վերեւիններն ու ներքեւինները մեզ համար տանջանքի գործիք դարձան, որ առանց բարեխօսի մեր յանցանքի վրէժն առնեն։

«Չէ՞ որ միայն արդար Նոյը կատարեալ գտնուեց մարդկային ազգի մէջ, որ իջեցրեց տէրունական ցասումի սրտմտութիւնն ու բարկութիւնը և սկիզբ դարձաւ մարդկային ազգը աճելուն ու բազմանալուն։ Նոյնպէս և Աբրահամը առաքինի գտնուեց իր փորձութեան ժամանակ և Աստծուց ստացած պարգեւները իր իսկ ձեռքով նորից նրան էր մատուցում. այդ պատճառով էլ Աստուած նրան որպէս օրինակ ընդունեց, որովհետեւ նրա մէջ տպաւորուած էր տեսնում Աստծու որդու աներեւոյթ գալուստը, անըմբռնելիի ըմբռնումը և անմահի զենումը, որ իր մահով խափանեց մահի իշխանութիւնը։ Եթէ ուրեմն մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսի մահակից լինել, որովհետեւ ում հետ որ մեռնենք մենք, նրա հետ էլ կը կենդանանանք։

Յիշեցէ՛ք, առաքինե՛ր, մեծ Մովսէսին, որ դեռ այրական հասակին չհասած՝ սուրբ նահատակութեան խորհուրդը տղայութեան հասակում երեւաց նրան. և Եգիպտացիների թագաւորի տունը նրան ծառայութիւն էր մատուցանում և ակամայ դայեակութեամբ սնուցանում նրան. և ժողովրդին նեղութիւնից փըր-

կելու ժամանակ երկնքի ու երկրի միջնորդ եղաւ, միեւնոյն ժամանակ նաեւ Եգիպտացիների աստուած անուանեց։ Որովհետեւ ուր սուրբ խորհուրդը զօրացաւ, իր անձով վրէժ լուծեց Եգիպտացիներից, իսկ ուր աստուածային յայտնութիւնն եղաւ նրա վրայ, գաւազանի միջոցով էր մեծամեծ հրաշքները գործում, եւ իր ունեցած սուրբ նախանձախնդրութեան պատճառով սպանեց Եգիպտացուն և աւազի տակ թաղեց. դրա համար էլ նրան մեծ անուն տուեց և ժողովրդին առաջնորդ կարգեց։ Եւ գլխաւորն այն է, որ արիւն թափելով արդարացաւ և բոլոր մարգարէներից աւելի մեծ կոչուեց, ո՛չ միայն արտաքին թշնամիներին կոտորելով, այլեւ (իր) ազգակիցներին, որոնք անապատում Աստծուն փոխանակեցին հորթի հետ։

«Եւ եթէ նա հեռուից այդպիսի վրէժ էր լուծում Աստծու օրդու գալստեան համար, մենք, որ ականատես եղանք ու մեծապէս վայելեցինք նրա չնորհների երկնաւոր պարգեւները, է՛լ աւելի պարտաւոր ենք վրէժխնդիր լինել մօտակայ ժամանակի ճշմարտութեան համար։ Նա մահուամբ իր անձը զոհեց մեր մեղքերի համար և մեզ արդարացրեց չափազանց ծանր դատապարտութիւնից. մենք էլ ուրեմն մահուամբ մեր անձը զոհենք նրա անմահ զօրութեան համար, որպէսզի առաջին վրէժխնդիրներից աւելի պակաս չգտնուենք։

«Ճիշեցէ՛ք մեծ քահանայ Փենեհեզին, որ սպանութեամբ վերացրեց պղծութիւնը պատերազմի ժամանակ և քահանայութիւնը ցեղից-ցեղ երդումով հաստատեց։ Մի՛ մոռանաք նաեւ սուրբ մարգարէ Եղիային, որ չէր կարողանում դիմանալ Աքաաբի կռապաշտութեանը նայելիս, և արդար նախանձախնդրութեամբ ութ հարիւր հոգուն իր ձեռքով սպանեց, և երկու յիսնեակին էլ անչէջ հրի կերակուր դարձրեց[139], և աստուածային վրէժը լուծելով՝ անըմբռնելի և ահեղ կառքով երկրից երկինք վերացաւ։ Դուք հասել էք է՛լ աւելի մեծ բախտի. որովհետեւ ձեզ համար այլեւս կառք չի ուղարկուի, որ վերանաք, այլ կառքերի և երիվարների տէրն ինքը հզօր զօրութեամբ և սուրբ հրեշտակներով ընդառաջ գալով՝ ձեզ իւրաքանչիւրիդ թեւեր կը բուսցնի, որպէսզի նրա ուղեկիցներն ու քաղաքացիները լինէք։

«Էլ ի՞նչ կրկնեմ ձեր քաջ կարիճութեան առաջ, քանի որ ինձնից աւելի տեղեակ և հմուտ էք սուրբ կտակարաններին։ Դաւիթը մանկութեան ժամանակ քարով կործանեց մեղէն մեծ բլուրը140 և ամենևին չվախեցաւ հսկայի ահագին սրից. ցըրուեց այլազգիների գնդերը և զօրքը փրկեց մահուանից ու ժողովրդին՝ գերութիւնից. և եղաւ Իսրայէլի թագաւորների անդրանիկն ու Աստծու որդու հայր կոչուեց։ Նա (այդպէս) կոչուեց ժամանակի պէտքի համար, իսկ դուք, Սուրբ Հոգուց ճըշմարտապէս ծնուածներդ, Աստծու որդիներ էք և Քրիստոսի ժառանգակիցներ։ Թո՛ղ ոչ ոք ձեր բաժինը ձեղնից չկտրի, և ձեզ օտար ու խորթ դարձնելով՝ բաժնից զրկի։

«Ցիշեցէ՛ք Իսրայէլի բոլոր նախկին զօրավարներին՝ Յեսուին, Գեդէոնին, Եփթայեին և բոլոր միւսներին, որոնք ճշմարիտ հաւատ ունէին. նրանք չարդեցին-կոտորեցին հեթանոսների զօրքը և երկիրը պիղծ կռապաշտութիւնից մաքրեցին։ Եւ իրենց հաստատուն և արդար գործունէութեան համար, որ ամենևին չերկմտեցին իրենց մտքերի մէջ, արեգակն ու լուսինն՝ ականջներ չունենալով՝ լսեցին ու կատարեցին նրանց հրամանն ու խօսքը. ծովն ու գետերը ճանապարհ բաց արին նրանց առաջ՝ հակառակ իրենց սովորութեան։ Եւ երիքով քաղաքի բարձր պարիսպները լոկ ձայնից ընկան կործանուեցին՝ արդարութեան օրէնքների վրէժխնդրութեան համար։ Եւ բոլոր միւսները, որոնք իւրաքանչիւրն իր դարում հաւատի համեմատ քաջութիւններ կատարեցին, գովաբանուեցին մարդկանց կողմից և Աստուած էլ նրանց արդար համարեց։

«Չէ՞ որ նոյն Տէրն է սկզբից մինչեւ այսօր և յետոյ էլ, յաւիտեանս յաւիտենից և բոլոր յաւիտեաններից էլ այն կողմը։ Չի նորոգւում, որովհետեւ չի հնանում. չի մանկանում, որովհետեւ չի ծերանում։ Աստծու անյեղյեղուկ բնութիւնը չի փոխւում, ինչպէս որ ինքն էլ ասում էր սուրբ մարգարէների բերանով. «Ես եմ, ես եմ, ես նոյնն եմ սկզբից մինչեւ յաւիտեան. իմ փառքը ուրիշին չեմ տայ և ոչ էլ իմ քաջութիւնները՝ կուռքերին»141։

«Այս գիտենալով, եղբայրնե՛ր, չթուլանանք ու չվհատուենք, այլ պինդ սրտով և հաստատուն հաւատով յօժարակամ

յարձակուենք այն թշնամիների վրայ, որ վեր են կաչել-գալիս են մեզ վրայ։ Մեր յոյսը կրկնակի է երեւում մեզ. եթէ մեռնենք՝ կ'ապրենք և եթէ մեռցնենք՝ միեւնոյն կեանքն է կանգնած մեր առաջ։ Ցիշենք առաքեալի խօսքը, որ ասում է, թէ՝ «Այն ուրախութեան փոխարէն, որ սպասում էր նրան, նա յանձն առաւ համբերել մահուան, այն էլ՝ խաչի մահուան. այդ պատճառով էլ Աստուած նրան աւելի եւս բարձրացրեց և այնպիսի մի անուն տուեց նրան, որ բոլոր անուններից վեր է. որովհետեւ Ցիսուս Քրիստոսի անունը ծունր պիտի դնեն բոլոր երկնաւորներն ու երկրաւորները և սանդարամետականները»142։

«Որովհետեւ ով ճշմարտութեամբ միացած է Աստծու Որդու հետ, հոգու աչքով տեսնում է իմանալի արեգակի143 ճառագայթների անտեսանելի յստակ լոյսը, որ ամէն ժամ և ամէն օր չատ աւելի պայծառ ծագելով երեւում է բոլորին. և սրբատեսիլ ու մաքուր հայեացքներն անպղտոր յստակութեամբ դէպի ինքն է ձգում և թափանցեցնելով երկնքի միջով՝ մօտեցնում է անմերձենալի պատկերին և զօրաւոր մտքով որոշում է երկրպագել միասնական զօրութեան երեք մասերին։ Եւ արդ, ո՛վ աստուածային աստիճաններով եկած լինի և բարձրութեամբ (աստուածային) արքունիքին հասած ու նրա ամբողջ մեծութիւնը լիովին տեսած, միայն նա կը ժառանգի անանցանելի ուրախութիւնն ու անտրտում մխիթարութիւնը։

«Ո՛չ, իմ պատուական տէրեր, այսչափ վեր բարձրանալուց յետոյ՝ նորից այստեղ երկիր չընկնենք ու թաւալուենք, այլ այդ նոյն բարձրութեան վրայ հաստատ կանգնած մնանք։ Եթէ նայելու լինենք դէպի ցած՝ երկիր, այն կը տեսնէք լի ամէն ապականութեամբ և անսուրբ պղծութիւններով։ Որովհետեւ ի՞նչ աղետալի բաներ ասես, որ չեն գործւում այս ախտաբեր երկրայինների մէջ. աղքատների թշուառութիւններ և նրանց անթիւ չարչարանքներ. հարկահաւաների կողմից ծանր նեղութիւններ, բռնաւոր ընկերների կողմից զրկանք և թուք ու մուր, քաղց ու ծարաւ մեր բնութեան կարօտութեան համեմատ։ Ձմեռուայ սառնամանիք և ամառուայ խորշակ, տարաժամ հիւանդութիւններ ու մահաբեր ցաւեր չարունակ տանջում են մարդկանց. անդադար վրայ են հասնում երկիւղ արտաքիններից և

արհաւիրք ներքիններից. ժամանակից առաջ մահ են ցանկանում, բայց չեն գտնում. և շատերը կան, որ հետամուտ են լինում ու փնտռում են, և երբ գտնում են՝ ուրախանում են, իսկ ովքեր մեղ թւում է, թէ յաջողուած են մեծութեան մէջ և փափկակեաց ուրախութեամբ են անցկացնում այս անցաւոր կեանքը, մեծամտում-հպարտանում են այս աշխարհի դատարկ գործերով, հէնց նրանք են, որ կուրացած՝ ճշմարիտ կեանքը չեն տեսնում. իսկ արդ, ի՞նչ չարիքներ կան, որ չեն գործւում նրանց մէջ. մեծութեան հետ խառնուած է աղքատների գոյքի յափշտակութիւնը, սուրբ ամուսնութեան հետ վատթար պղծութիւնը, ճշմարիտ կեանքից չեղուած՝ ինչ որ անխտիր կերպով վայելում են, նրանց էլ երկրպագութիւն են մատուցանում իբրեւ Աստծու։

«Չէ՞ որ այս ամբողջ աշխարհը ամէնքի Արարչի ստեղծածն է, և ինչ որ նրանք պաշտում են ու պատուում, միեւնոյն նիւթի մասն է, ապա ուրեմն մասերը մասերին են ծառայութիւն մատուցանում. Որովհետեւ եթէ այս աշխարհի մի մասն ապականացու է, պէտք է որ բոլոր մասերն էլ նրա հետ ապականուեն։ Նաև այն մասերի մէջ էլ պէտք է ընտրութիւն լինի. արդ, թէ ո՛րն է լաւը, այդ յայտնի է բոլորին, և ով որ կարող է հասկանալ, նա՛ է մասերի մէջ ընտիրը։ Իսկ եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն հեթանոսների պաշտած ու երկրպագած բոլոր բաներից՝ երկրպագուներն աւելի գերազանց են, քան անբան առարկաները, որոնց նրանք չարաչար կերպով ծառայում են. և չեն պաշտում ի Աստծուն, որ մարդու կերպարանք առաւ, այլ երկրպագում են արարածներին. նրանց մեղքերին քաւութիւն չկայ արդար առեանում։

«Նկէ՛ք՝ դէն դցենք մոլորուածների խաւարային խորհուրդները, նրանց համարենք բոլոր մարդկանցից աւելի խղճալի և ողորմելի. մանաւանդ որ իրենց կամքով են կուրացած և ոչ հարկից ստիպուած և երբեք չեն գտնի ճշմարտութեան ճանապարհը։ Իսկ մենք, որ բացահայեաց աչքով տեսել ենք երկնաւոր լոյսը, թող չպատահի մեզ արտաքին խաւարը։ Որովհետեւ ովքեր խաւարի մէջ էին, նրանց մօտ եկաւ ճշմարիտ լոյսը. նրանք կուրացած՝ զրկուեցին կեանքից։ Իսկ դուք, որ հաւա-

ռով ընդունեցիք, որդիներ էք և ոչ թէ օտար ու խորթ մարդիկ, սիրելիներ էք և ոչ թէ թշնամիներ, վերին իմանալի քաղաքի բաժանորդներ և ժառանգորդներ։

«Այնտեղ է մեր փրկութեան առաջնորդը. նա այստեղ քաջութեամբ նահատակուեց և մխեւնոյն բանը սովորեցրեց իր նիզակակից ու գործակից բոլոր առաքեալներին. նրանց հետ այսօր դուք էլ էք կրկին երեւում, հաւատով օրհնուած՝ աներեւոյթ թշնամու դէմ, որ զրահապատուած կանգնած է դէմ առ դէմ իբրեւ սպառնալական գործի ընկերակից։ Այսպէս թէ այնպէս, երկու կողմերին էլ պարտութիւն կը պատճառէք, ինչպէս որ ինքը Տէրն էլ արեց աչխարհի նկատմամբ. թուաց, թէ մեռաւ, բայց նա այն ժամանակ տարաւ առաքինութեան յաղթութեան կատարեալ մրցանակը. ախոյեանին տապալեց, պատերազմում ջարդեց, թշնամիներին ցրուեց, աւարը ժողովեց. գերիներին յետ դարձրեց, պարգեւները բաչխեց իր բոլոր սիրելիներին՝ իւրաքանչիւրի առաքինութեան համեմատ։

«Դուք բոլորդ գիտէք, որ առաջուայ ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թէպէտեւ սովորութիւն ունէիք քահանաներին միչտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ յանձնելով նրանց աղօթքին՝ որեւէ ամուր տեղ էիք թողնում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները և երէցները ու սարկաւագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամէն մէկը սահմանուած կանոնով իբրեւ սպառազինուած և պատերազմի պատրաստուած՝ կամենում են ձեզ հետ միասին յարձակուել ու ջարդել ճչմարտութեան թշնամիներին։ Եւ եթէ նոյնիսկ մեռնեն էլ նրանց ձեռքով, այդ բանից էլ չեն վախենում, որովհետեւ աւելի լաւ են համարում մեռնել, քան թէ մեռցնել։ Կարծես թէ կրկնակի աչքեր ստացած լինեն. հաւատի աչքերով տեսնում են մարգարէների քարկոծուելը, իսկ մարմնի աչքերով՝ ձեր քաջ սխրագործութիւնը։ Մանաւանդ որ ձեր մէջ տեսնում ենք երկուսն էլ. որովհետեւ դուք էլ տեսնում էք սուրբ առաքեալների չարչարանքները և բոլոր քաջ մարտիրոսների սպանուելը, որոնց մահով հաստատուեց սուրբ եկեղեցին և նրանց արիւնը թափուելը պարծանք եղաւ վերիններին ու ներքիններին համար։ Արդ, մինչեւ երկրորդ գալուստը նոյն քաջա-

գործութիւնն է կատարուում առաքինիների և ընտիր նահատակների չարչարանքներով, որոնց մէջ դուք էլ էք գտնուում այսօր, և հրաւիրուած էք ձեր սուրբ լուսաւորիչներից՝ հասնել նրանց գնդին և ժառանգորդ լինել այն անանց բարիքներին, որ խոստացել է Քրիստոս Քիսուսը, որ օրհնուած է յաւիտեան».

Այսքանը լսեց այն գիշերը սուրբ Ղեւոնդ երէցը և փառք տալով վերջացրեց ամէն ասելով։ Եւ սեղան կանգնեցնելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին. պատրաստեցին նաև աւազան, և եթէ զօրքի բազմութեան մէջ չմկրտուած մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին. և առաւօտեան սուրբ հաղորդութիւն ընդունեցին, և այնպէս լուսաղեաստ դարձան, ինչպէս տէրունական մեծ Սուրբ Ջատկին։

Եւ զօրքի ամբողջ բազմութիւնը մեծ զուարճութեամբ և սաստիկ ուրախութեամբ աղաղակեց և ասաց. («Թող Աստուած) մեր մահը արդարների մահուան հետ հաւասարեցնի և մեր արիւնը թափուելը՝ սուրբ մարտիրոսների արեան հետ. թող Աստծուն հաճելի լինի մեր կամաւոր զոհաբերութիւնը, և իր եկեղեցին թող հեթանոսների ձեռքը չմատնի»։

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՑԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սրանից յետոյ, երբ Պարսից բանակի զօրավարը տեսաւ, որ մէջտեղն է՛լ պատգամաւոր չմնաց նրանց խաբելու համար և իր յոյսն ու ակնկալութիւնը կտրուեց նրանց բաժան-բաժան անելու անքակտելի միաբանութիւնից, այն ժամանակ իր առջեւ կանչեց անօրէն վասակին և նրա հետ եղած Հայոց աշխարհի բոլոր ուրացած իշխաններին. հարցուփորձ արեց նրանց և նրանցից սովորում էր յաղթութեան հնարագիտութիւնը։ Եւ երբ տեղեկացաւ ամէն մէկի քաջութիւններին, կանչեց նաև իր ձեռքի տակ եղած զօրագլուխներից չատերին և հրամայեց իր առաջ բերել փղերի երամակները. դուռդ-դուռնդ բաժանեց այդ գազաններին և ամէն մի փղի մօտ երեք հազար սպառազէն մարդ դրեց, բացի մնայած ամբողջ զօրքից։

Արքունի հրամանով խօսում էր նաև մեծամեծների հետ և ասում. «Ամէն մէկդ յիշեցէք մեծ թագաւորի պատուէրը և նպատակ դրէք քաջութեան անուն հանել. մահը գերադասեցէք քան թէ վախկոտ կեանքը։ Մի՛ մոռանաք այն իւղը [144], պսակը, ուռերն ու առատաձեռն պարգեւները, որ չնորհւում են ձեզ արքունիքից։ Ամէն մէկդ գաւառների տէր էք և չատ իշխանութիւն ունէք. դուք ինքներդ գիտէք Հայոց աշխարհի քաջութիւնը, և ամէն մէկի անվեհեր քաջութեան փորձն առել էք և ճանաչում էք. գուցէ պարտութիւն կրելով՝ կենդանի-կենդանի ղրկուէք այն մեծ կեանքից, որ ունենալու էք։ Ցիշեցէ՛ք ձեր կանանց և որդիներին, յիշեցէ՛ք ձեր սիրելի բարեկամներին. գուցէ ոտնահար լինէք արտաքին թշնամիներից և ներքին սիրելիների հետ միասին ողբաք»։

Ցիչեցնում էր նրանց նաեւ բազմաթիւ փախած ընկերակից-ներին, որոնք թէեւ պատերազմից փրկուեցին, բայց սրով ստացան իրենց մահուան պատիժը. նրանց տղաներն ու աղջիկները և ամբողջ ընտանիքը տուն ու տեղից զրկուեցին և հայրենական բոլոր գաւառները խլուեցին նրանցից։

Ասում էր այս բանը և սրանից էլ աւելի էր սաստկացնում արքունական հրամանը։ Կարգաւորեց ամբողջ զօրքը և ճակատը տարածեց-երկարացրեց մեծ դաշտի երկարութեամբ։ Եւ ամէն մի գաղանի աջ ու ձախ կողմը երեքական հազար սպառազէն պատրաստեց և ամենաընտիր քաջ զինուորականներին իր չուրջը ժողովեց. և այսպէս Մատեան գունդն[145] ամրացրեց ինչպէս մի հզօր աշտարակ և կամ մի անմատչելի բերդ։ Նշաններ բաշխեց, դրօշներ արձակեց և հրամայեց, որ մեծ փողի ձայնին պատրաստ լինեն։ Իսկ Ասպարհացի գունդը և Կաստաց, Հոնաց և Գեղայ գնդերը[146] և էլի ուրիշ բազմաթիւ ընտիր-ընտիր զօրականների մի տեղ ժողովեց և պատուէր ու հրաման տուեց իր զօրքերի աջ կողմում[147] պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարի։

Իսկ քաջ Վարդանը առաջ գալով՝ հարց ու փորձ արեց մեծամեծներին և բոլորի տուած խորհրդի համաձայն զօրագլուխներ նշանակեց այս ձեւով.

Առաջին գունդը յանձնեց Արծրունեաց իշխանին և նրան նիզակակից կարգեց Մոկաց մեծ իշխանին. և ուրիշ բազմաթիւ նախարարների այս երկուսին նիզակակից նշանակեց, և գնդի ամբողջ բազմութիւնը այս ու այն կողմից օգնական տուեց նրանց։

Երկրորդ գունդը յանձնեց Խորէն Խորխոռունուն, և նրան նիզակակից կարգեց Ընծայինին[148] և Ներսեհ Քաջբերունուն։

Երրորդ գունդը յանձնեց Թաթուլ Վանանդեցուն, և նրան նիզակակից հրամայեց լինել Տաճատ Գնթունուն, և չատ քաջ մարդիկ էլ այս ու այն կողմից օգնական տուեց նրանց։

Ինքը վերցրեց չորրորդ գունդը, և իրեն նիզակակից՝ քաջ Արշաւիրին և իր հարազատ եղբայր Համազասպին։

Այսպէս կարգաւորեց ու ճակատ կազմեց՝ սփռելով դաշտի

ամբողջ երեսին, Արեաց զօրքի դէմուդէմը, Տղմուտ գետի ափին։

Եւ երբ այս այսպէս պատրաստուեց, երկու կողմերն էլ սրտմտութեամբ և մեծ բարկութեամբ զայրացան և երկուսն էլ գազանացած զօրութեամբ միմեանց վրայ յարձակուեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպէս իրար խառնըւած ամպերի միջից. և ձայների դղրդիւնը չարժում էր լեռների քարանձաւները։ Բազմաթիւ սաղաւարտներն ու զրահապատուած զօրականների ղէնքերը փայլում էին ինչպէս արեւի ճառագայթների չողեր։ Նաև բազմաթիւ սուսերների չողալուց և բազմախուռն նիզակների ճօճուելուց կարծես ահագին կրակ էր թափւում երկնքից։ Որովհետեւ ո՞վ կարող է պատմել ահաւոր ձայների մեծ իրարանցումը, և թէ ի՛նչպէս վահանաւորների թնդիւնն ու աղեղների լարերի ճայթիւնը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները։

Այնտեղ պէտք էր տեսնել, թէ ի՛նչ մեծ տագնապ և անչափ իրարանցման աղէտ կար երկու կողմերում էլ, երբ յանդուգն յարձակումով իրար էին բախւում, որովհետեւ թանձրամիտները յիմարանում էին և վախկոտները վհատւում. քաջերը խիզախում էին և անվեհեր կտրիճներն աղաղակում։ Եւ ամբողջ բազմութիւնը իրար գլխի խմբուելով՝ գետն ամէն կողմից փակեցին, և գետի դժուարութիւնից վախեցած Պարսից զօրքն սկսեց իր տեղում վխտալ։ Իսկ Հայոց զօրքն անցաւ գետը, և ձի նստած՝ մեծ զօրութեամբ յարձակուեց։ Ուժգին թափով իրար զարկուելով՝ երկու կողմից էլ բազմաթիւ վիրաւորներ գետին ընկած թպրտում էին։

Այս մեծ տագնապի մէջ դէպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսաւ, որ Պարսից զօրքի ընտիր-ընտիր քաջ զօրականները Հայոց զօրքի ձախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով յարձակուեց այն տեղը և Պարսից զօրքի աջ թեւը ջարդելով՝ քշեց գազանների կողմը և շուրջը պտըտելով կոտորեց մինչեւ նոյն տեղը։ Եւ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մէջ, որ մինչեւ անգամ Մատեան գնդի հաստատուն կազմակերպութիւնը քայքայուեց-ցրիւ եկաւ, և նա դեռեւս պարտութիւն չկրած՝ փախուստ տուեց։

Ապա աչքերը վեր բարձրացրեց Մուշկան Նիսալաւուրտը և տեսաւ, որ Հայոց զօրքից ոմանք բաժանուել և յետ են ընկել լեռների հովիտներում. Ուստի և աղաղակ բարձրացրեց, քաջալերեց իր շուրջը գտնուած Արեաց զօրքին, որոնք կանգնած էին Վարդանի գնդի հանդէպ. Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտըւած էին զգում, և ընկած դիակների թիւն այնքան մեծ էր, որ նմանուում էր խորտուբորտ քարակոյտերի.

Երբ այս բանը տեսաւ Մուշկան Նիսալաւուրտը, սպասում էր Արտաշրի գաղաններին, որը նրանց վրայ նետած էր (ինչպէս) բարձր դիտանոցում. ինչպէս ամուր քաղաքում, և գալարափողերի բարձր ձայնով չտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զօրքերով շրջապատեց նրան.

Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հէնց ինքն էլ արժանի եղաւ ստանալու կատարեալ նահատակութեան պսակը.

Եւ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարաժամեց և երեկոյեան դէմ դադարեց. չատերն իրենց մահուան օրհասը գտանմանաւանդ որ դիակներն այնպէս խիտ էին ու իրար մօտ թափուած, ինչպէս անտառի կտրատուած փայտերը.

Այնտեղ պէտք էր տեսնել նիզակների կոտրատումն ու աղեղների խորտակումը. ուստի և չէին կարողանում ատոյգ որոշել երանելիների սուրբ մարմինները. և սաստիկ խուճապ ու իրարանցում էր երկու կողմերի ընկածների համար. Իսկ ովքեր (լինդանի) էին մնացել, ցիրուցան եղան ամուր ձորերի լեռնադաշտերում. և երբ պատահում էին միմեանց, դարձեալ սպանում էին մէկ մէկու. Եւ այսպէս դաժան գործը չարունակուեց մինչեւ արեւի մայր մտնելը.

Եւ որովհետեւ ժամանակը գարնանային էր, ծաղկալից դաշտերը լցուեցին յորդահոս արիւնով. Մանաւանդ երբ մէկը տեսնում էր ընկած բազմաթիւ դիակների կոյտերը՝ սիրտը կտրատւում էր և աղիքները գալարւում, լսելով խոցուածների մըրմռոցը և ջարդուածների մռնչիւնը, վիրաւորների թաւալգլոր աղալն ու չարչուելը, վախկոտների փախուստը, վհատուածների թաք կենալը, անարի մարդկանց սրտաբեկութիւնը, կանացի ճիչերը, սիրելիների ողբը, մերձաւորների սուգը, բարեկամ-

ների վայնասունը։ Որովհետեւ ո՛չ թէ մի կողմը յաղթեց, և միւս կողմը պարտուեց, այլ քաջերը քաջերի դէմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտութիւն կրեցին։

Բայց որովհետեւ Հայոց մեծ սպարապետն ընկել էր պատերազմում, այնուհետեւ էլ ոչ ոք գլխաւոր չկար մէջտեղում, որին յենուած ժողովուէին մնացած զօրքերը։ Թէպէտեւ ողջ մնացածներն աւելի չատ էին, քան թէ մեռածները, սակայն նրանք ցանուցիր եղան և քաշուեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով տիրեցին չատ գաւառների ու բերդերի, որոնք ոչ ոք մինչեւ իսկ առնել չէր կարողանում։

Եւ սրանք են այն քաջ նահատակների անուննները, որոնք այդ նոյն տեղում վախճանուեցին.

Մամիկոնեանց ցեղից Քաջ Վարդանը հարիւր երեսուն և երեք մարդով.
Խորխոռունեաց ցեղից Կորովի Խորհնը տասնիննը մարդով.
Պալունեաց ցեղից Արի Առտակը յիսուն և եօթը մարդով.
Գնթունեաց ցեղից Զարմանալի Տաճատը տասնիննը մարդով.
Դիմաքսեանց ցեղից Իմաստուն Հմայեակը քսաներկու մարդով.
Քաջբերունեաց ցեղից Հրաժակերտ Ներսեհը եօթը մարդով.
Գնունեաց ցեղից Մանուկ Վահանը երեք մարդով.
Ընծայնոց ցեղից Արդար Առսհնը եօթը մարդով.
Սրուանձտեան ցեղից Յաուսջադեմ Գարեգինը երկու հարիւր զաւներով և տասնուեօթը մարդով։

Այս երկու հարիւր ութսունեւեօթը նահատակները՝ ինն մեծամեծ նախարարների հետ՝ հէնց այնտեղ վախճանուեցին։ Եւ Թագաւորական տնից և Արծրունեաց տնից և միւս նախարարների տնից, բացի այս երկու հարիւր ութսուն և եօթ հոգուց՝ (դարձեալ ընկան) էլի եօթ հարիւր և քառասուն հոգի, որոնք ամէնքն էլ այն օրը մեծ պատերազմում իրենց անուննները գրեցին կեանքի մատեանի մէջ։ Եւ այս բոլորը միասին լինում հազար երեսուն և վեց մարդ։

Իսկ ուրացողների և հեթանոսների կողմից այն օրը ընկան երեքհազար հինգ հարիւր քառասուն և չորս մարդ։ Նրանցից ինը հոգի խիստ պատուաւորներից էին, ուստի և չատ խորը

վչտացաւ. Մուշկան Նիսալավուրտը, Մանաւանդ երբ տեսաւ, որ իր զօրքի ստացած սաստիկ հարուածները երեք անգամ աւելի մեծ էին, քան հայերինը, նրա ուժն ու զօրութիւնը կոտրուեց, ընկաւ. և նրա սիրտը չէր հանգստանում, որ մտածի ու որոշում անի. ուրովհետեւ պատերազմն այնպէս չվերջացաւ, ինչպէս ինքը կարծում էր։ Մանաւանդ երբ նայում էր ու տեսնում իր կողմից ընկածների բազմութիւնը և հաշիւ էլ էր անում ու այնքան չատ էր գտնում իր զօրքից ընկածները հայոց զօրքից ընկածների համեմատութեամբ, առաւել եւս այն երեւելի մարդկանց պատճառով, որոնց յատկանէ յանուանէ ճանաչում էր թագաւորը, — այդ մարդը մեծ տագնապի մէջ էր ընկնում։ Դէպքերն արդարութեամբ գրել և յայտնել՝ վախենում էր թագաւորից. բայց թաքցնել էլ չէր կարող, որովհետեւ այդպիսի մեծ կռիւը ծածկել չէր լինի։

Ու. մինչդեռ ինքն իրեն այս մտորումների մէջ էր և սրտնեղում էր, ուրացող Վասակը, որ գազանների մէջ թաք կացած ազատել էր իր անձը, սկսեց մխիթարել նրա վհատուած միտքը և նենգութեամբ նրան զանազան հնարներ էր սովորեցնում, թէ ի՛նչպէս կարող է խաբէութեամբ կռուել ամրութիւնների դէմ։ Երդումներ էր կնքում թագաւորի հրամանով և իր անձի վկայութեամբ և այն խարեբայ երէցների միջոցով, որոնք նրա հետ էին. պատգամաւոր էր ուղարկում նրանց և այնպէս էր ցոյց տալիս, թէ ապստամբութիւնը ներուած է և կրկին իրաւունք է շնորհուած եկեղեցիները չինելու, և բոլոր կարգերը դարձեալ նորոգելու առաջուայ սովորութեան համաձայն։

Թէպէտեւ թագաւորի հրամանն իսկութեամբ էր տրուած,— որովհետեւ նրա զօրութիւնը չատ կոտրուեց, ըստ որում նրա երկու կողմերն էլ149 ջարդուեցին,— սակայն Հայոց զօրքը, որ չատ անգամ վերահասու էր եղել Վասակի նենգութեանն ու խաբեբայութեանը, չուտով չէր կարողանում հաւատ ընծայել նաեւ թագաւորի հրամանին։

ԵՕԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԽՌՎՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՐԿԱՐԱՋԳՈՒՄԸ

Արդ՝ այն ժամանակ (Վասակը) դարձեալ դրդեց Մուշկան-Նիսալավուրտին և Արեաց բոլոր մեծամեծներին, զօրքը հետն առնելով՝ հասաւ այն ամրոցին, որտեղ ապաստան էին գտել Հայոց զօրքերից մի գունդ սուրբ քահանաների հետ միասին, և սկսեցին պատերազմել բերդի շուրջը։ Բայց երբ ոչինչ կարողացան անել նրանց, կրկին ապաստանեցին երդումներին, որ պէսզի դաշնադրութեամբ ցած իջեցնեն նրանց առանց որեւէ դաւադրութեան, և երկու-երեք անգամ (նրանց) մօտ ուղարկեցին Աւետարանը։ Թէպէտեւ քահանաները համաձայնում էին իջնել ցած և ներկայանալ, բայց զօրականներից շատերը չէին կարողանում հաւատալ Վասակի սուտ դաշինքին, որովհետեւ Մուշկան-Նիսալավուրտն սկսեց հետեւել Վասակի չարամիտ խրատին։

Հայոց քաջ զօրականներից մէկը, Բակ անունով, որ փախչելով ընկել էր բերդը. բարձրանալով պարսպի վրայ՝ սկսեց նախատել անօրէնին և յիշեցնում էր Պարսից զօրագլխի առաջ այն բոլոր չարիքները, որ նա հասցրել էր Հայոց աշխարհին։ Այս բանը շատերը լսելով՝ արդարացնում էին մեղադրանքները ո՛չ միայն Հայերի կողմից, այլ մանաւանդ Պարսից զօրքից։ Այդ միեւնոյն մարդը նոյն գիշերը ելաւ-հեռացաւ այն բերդից եօթ հարիւր հոգով, և չկարողացան ձեռք տալ նրան։

Իսկ ովքեր ամրոցի ներսը մնացին, թէպէտեւ աստյգ գիտէին նրանց խաբեբայական երդումները, բայց ներսում պաշար չունէին։ Երբ ակամայ ցած իջնելով՝ ներկայացան նրան, հրամա-

յեց նրանցից սպանել երկու հարիւր և տասն երեք հոգու։ Բոլորն աղաղակեցին և ասացին. «Շնորհակալ ենք քեզանից, մեր Տէ՛ր Աստուած. քանի դեռ չէն են եկեղեցիները և չեն քանդուած վկաների մատուռները և միաբան ու առաքինացած է եկեղեցու սուրբ ուխտը, մեզ արժանի արիր այս երկնաւոր կոչումին։ Թո՛ղ մեր մահը հաւասարուի քաջ նահատակների մահուանը և մեր արիւնը խառնուի ընկած վիրաւորների արեան հետ և Տիրոջը հաճելի լինեն իր եկեղեցիները՝ այն բազմաթիւ կամաւոր զոհերով, որոնք բարձրանում են այս սուրբ սեղանի վրայ»։ Այս ասելով՝ տեղն ու տեղը նահատակուեցին երկու հարիւր և տասներեք հոգին։

Իսկ այն ամրոցում գտնուած սուրբ քահանաները, այս երանելի Յովսէփն ու Ղեւոնդն իրենց բազմաթիւ ընկերներով, նրանք եւս իրենց պարանոցները մեկնեցին դահճապետի սրի առաջ, միեւնոյն խօսքերն ասելով, ինչ որ այն երկու հարիւր հոգին։ Որովհետեւ այս երանելիները ո՛չ թէ որեւէ ակնկալութիւն ունէին մարմնաւոր կեանքի համար, այլ իմաստութեամբ հնարք էին փնտռում (գտնելու) ամբողջ աշխարհի չինութեան համար։ Ուստի և բողոքեցին արքունիք և ամբողջ մեղքը գցեցին անօրէն վասակի վրայ։ Երբ այս լսեց Մուշկան-Նիսալավուրտը, չհամարձակուեց նրանց մահուան պատիժ տալ. այլ Յովսէփին ու Ղեւոնդին ծեծել տալով՝ հրամայեց զգուշութեամբ պահել, որովհետեւ բողոքեցին արքունիք։ Իսկ միւս քահանաներին արձակեցին ամէն մէկին իր տեղը, հրամայելով, որ աշխարհը չէնացնեն և խաղաղացնեն։

Սակայն հայ մարդիկ, որ լաւ հասկացել էին Թագաւորի և ուրացող չարամիտ վասակի յեղյեղուկ հրամանները, բոլորովին չհաւատացին այդ կեղծ ներմանը, այլ քաջալերում էին միմեանց և ասում. «Էլ ինչի՞ է պէտք մեզ այս անցաւոր աշխարհի կեանքը և կամ ինչո՞ւ ենք արեւ տեսնում մեր սիրելիներից յետոյ։ Որովհետեւ քանի որ մեր քաջ կտրիճներն ընկան մեծ պատերազմում և բազմաթիւ վիրաւորներ արիւնաշաղախ տապալուեցին դաշտի մէջ, և բոլորի մարմինները թռչուններին գէշ և գազաններին կերակուր դարձան, և մեր պատուական նախարարները թշուառութեան ու անարգանքի հասան, լքեցին իրենց

իշխանութիւնները և հալածանքի ու նեղութեան մէջ են, երբ Հայոց բոլոր փափկասունները վշտերի ու վտանգի և չլսուած ոչնչացման ենթարկուեցին, էլ ականջ չենք դնի այդ խաբեբայական հրամաններին և չենք ընկնի անօրէն իշխաններիդ ձեռքը»։

Այնուհետեւ իւրաքանչիւրը թողեց իր գիւղը, աւանն ու ագարակը։ Հարսները դուրս եկան առագաստներից և փեսաները՝ սենեակներից, ծերերն ընկան աթոռներից և երեխաները (ծնողների) գրկերից. երիտասարդներն ու կոյսերը և տղամարդկանց ու կանանց ամբողջ բազմութիւնը գնացին բոնեցին անմարդաբնակ ամրոցներն ու բաղմաթիւ լեռների ապահով տեղերը։ Աւելի լաւ էին համարում գազանների նման քարանձաւների մէջ բնակուել աստուածապաշտութեամբ, քան թէ ուրացութեամբ փափուկ կեանք վարել իրենց տներում։ Առանց տրտնջալու դիմանում էին խոտեղէն կերակուրներին և չէին յիշում իրենց սովորական խորտիկները։ Այդ դարուփոսերը նրանք հաւասար էին համարում (իրենց) բարձր չէնքերի յարկերին, իսկ գետնանկողինները՝ նկարազարդ պատգամբներին։

Նրանց մրմունջներն ու երգերը սաղմոսներն էին, իսկ կատարեալ ուրախութիւնը՝ սուրբ գրքերի ընթերցումը։ Ամէն մարդ ինքն իր մէջ եկեղեցի էր և նոյն ինքն քահանայ. իւրաքանչիւր մարմին սուրբ սեղան էր և նրանց հոգիները՝ ընդունելի զոհաբերութիւն։ Որովհետեւ նրանցից ոչ մէկը յուսահատօրէն չէր ողբում սրով ընկածներին, և ոչ ոք չէր հեծում ու հառաչում իր մերձաւոր սիրելիների համար։ Ուրախութեամբ ընդունեցին իրենց մեծ գոյքերի յափշտակութիւնը, և ամենեւին չէին յիշում, թէ երբեւիցէ ստացուածք են ունեցել։ Համբերութեամբ դիմանում էին և մեծ առաքինութեամբ տանում այդ քաջ նահատակութիւնը։ Որովհետեւ եթէ բաց աչքերով չտեսնէին խնդալից յոյսը, չէին էլ կարող այնպիսի մեծ առաքինութիւն կատարել։

Որովհետեւ չատերը մեծ նախարարների ցեղից էին, եղբայրներ, որդիներ ու դուստրներ, իրենց բոլոր սիրելիների հետ միասին այդ ամուր վայրերում էին, ոմանք Խաղտեաց անլոյս երկրում, և ուրիշ չատերը հարաւային կողմերում՝ Տմորիքի

անմատչելի ամրոցներում, մի մասն էլ Արցախի խիտ անտառներում, և ուրիշ ոմանք այնտեղ Միջնաշխարհում տիրեցին շատ ամրոցների։ Բոլորն էլ մեծ համբերութեամբ տանում էին բազմաթիւ նեղութիւններ Քրիստոսի սիրոյ համար և միայն մի բան էին աղաչելով խնդրում Աստծուց, որ եկեղեցիների աւերելը չտեսնեն։

Բայց ինչպէս որ շատ անգամ արդէն ցոյց ենք տուել ամբարիշտ (վասակի) չարամտութիւնը, յորդորում և ստիպում էր մօտիկ երկրների Պարսից զօրքերին, որ թագաւորի հրամանով նրանց օգնելու համար զօրք գայ։ Եւ շատ հեծելազօր եկաւ՝ աւելացաւ սպանուածների տեղը, և զօրքի թիւն էլի առաջուայ չափ եղաւ։ Սրանք առաջ չարժուեցին դէպի Միջնաշխարհը և պատերազմ սկսեցին կապոյտ լերան մեծ ամրոցների դէմ, իսկ ներսում գտնուողները քաջութեամբ կռուելով չարդեցին Պարսից զօրքից շատերին և մնացածներին փախցրին հասցրին բանակը։ Իսկ նրանք դարձեալ անուշ խօսքերի դիմելով՝ ուզում էին խաբէութեամբ նուաճել նրանց։

Երբ ոչ ոք չհաւատաց ու չիջաւ նրանց մօտ, որպէսզի չարաչար կերպով չմատնուեն թշնամիների ձեռքը, հարկ եղաւ. որ երդումների պատճառով նրանց մօտ մի քահանայ իջնի, որի անունն Արշէն էր։ Սա խօսում էր նրանց հետ մտերմաբար ու աղերսելով, ապացուցում էր անմեղների փախուստի անվնաս լինելը. աշխատում էր շարժել ուրացող վասակի գութը և պաղատելով յիշեցնում էր նրան քրիստոնէութեան առաջին ուխտը, որպէսզի նա թերեւս մի քիչ մեղմանայ անչափ դաժանութիւնից։ Բայց նա ամենևին չլսեց և ականջ չդրեց նրա բազմաթիւ խօսքերին, կապեց ու տարաւ երանելուն և նրա հետ իջած մարդկանց։

Մանաւանդ երբ տեսաւ, որ զօրավարը նրա խրատին է հետեւում, այնուհետեւ սկսեց շատ տեղեր առպատակներ ուղարկել, և մարդկանց ինչ բազմութիւն էլ գտնուում էր ամրոցներից դուրս, գերի տարան և ջահը ձեռներն առած՝ շատ տեղեր կրակ տուին։

Իսկ ովքեր Տմորիքի ամրոցներում էին, երբ լսեցին արքունի զօրքի կատարած այս բոլոր չարագործութիւնները, էլ ա-

մեծաւին օգտակար չհամարեցին ամրոցներում նստելը, քաջութեամբ դուրս եկան և յարձակուեցին ամրոցականների օգնութեամբ, և հասնելով պարսիկների մօտակայ երկիրը՝ անխնայ կոտորելով արեան նախճիրներ գործեցին, մնացածներին էլ գերի վերցնելով՝ տարան-գցեցին ամրոցները և ջահը ձեռներն առած՝ այն երկրի չինութիւնները հրի ճարակ դարձրին։

Նոյնպէս և Խաղտեաց լեռներում գտնուածները՝ երբ տեսան, որ Պարսից զօրքը յանդգնաբար և աներկիւղ դիմում է Հայոց աշխարհի ամրոցների վրայ, նրանք էլ մեծ զօրութեամբ յարձակուեցին Տայքի ձորագաւառի150 վրայ։ Այնտեղ նրանք գտան արքունի զօրքերից մի մեծ գունդ, որոնք ուղում էին այն երկրում ամրացած մարդկանց գերի առնել. նմանապէս և կարծում էին, թէ նախարարների գանձերն այնտեղ են, ուստի և անխնայ հետախուզում էին այն վայրերը։

Այնտեղ տեսան նաև, որ երկու գիւղերում այրել են եկեղեցիները. այս բանի պատճառով է՛լ աւելի բարկացան ու նախանձախնդրութեամբ լցուեցին։ Յարձակուեցին, բախուեցին միմեանց և հզօրապէս յաղթելով՝ ջարդեցին Պարսից գնդի զօրութիւնը. նրանցից չատերին կոտորեցին, իսկ մնացածներին քշեցին—փախցրին երկրից։ Եւ այնչափ յանդուգն յարձակումից միմիայն Հայոց Վարդան սպարապետի եղբայր երանելի Համազասակը՝ անձնազոհ քաջութեամբ կռուելով՝ նահատակութեամբ վախճանուեց միաբանութեան սուրբ ուխտի համար։ Իսկ մնացած բոլորը ողջ և առողջ փրկուելով (կռուից)՝ հալածում էին փախստականներին։

Եւ երբ այս այսպէս կատարուեց, թագաւորի զօրքը դադրեց անխիղճ կերպով ամէն տեղ գործի մէջ խառնուելուց, և մանաւանդ զգուշանում էին եկեղեցիներին ձեռք տալուց։ Նորից մի անգամ էլ սկսեցին հարցնել արքունիքին։

Նմանապէս և ովքեր փախել-ընկել էին Արցախի անտառները, իրենց տեղերում ամենևին հանգիստ չմնացին, այլ չարունակ մարդ էին ուղարկում Հոնաց աշխարհը, դրդռում և յորդորում էին Հոների զօրքին և նրանց յիշեցնում էին այն ուխտը, որ դրել էին Հայերի հետ և անսուտ երդումով հաստատել։ Նրանցից չատերին հաճելի էր թուում քաղցրութեամբ լսել այս

խօսքերը։ Նաև նրանց սաստիկ մեղադրում էլ էին, թէ «Պատերազմի ժամանակ ինչո՞ւ պատրաստուած չեկաք»։ Եւ թէպէտ սկզբում չկարողացան մխիթարից հետ համաձայնել, բայց յետոյ մնծ զօրք հաւաքեցին և անմիջապէս յարձակուելով հասան Պարսից տէրութեան սահմաններըը. և շատ գաւառներ աւերելով՝ էլ աւելի շատ գերիներ տարան իրենց աշխարհը, և յայտնապէս ցոյց տուին թագաւորին այն մխիթարութիւնը, որ ունէին Հայոց զօրքի հետ։

Իսկ երբ այս բոլորի լուրը հասաւ Պարսից զօրավարին, սրտմտեց ու զայրացաւ և մեծ բարկութեամբ մեղքը գցում էր անօրէն Վասակի վրայ, որպէս թէ նա է այն բոլոր չարիքների սկիզբն ու առաջնորդը, որոնք գործուեցին։ Եւ այնտեղից վեր կացաւ, առաջ խաղայ, գնաց–հասաւ Պարսից աշխարհը։ գրեց և ցոյց տուեց թագաւորին ամէն ինչ ստուգութեամբ և գործի մեղքը ուրացողի վրայ գցեց։

Երբ թագաւորը լսեց աշխարհի ամբողջ աւերածութիւնը, և ստուգեց մեծ պատերազմի հանգամանքները, սիրտը կոտրուեցիջաւ մեծ–մեծ խրոխտալուց, և լռեց ու դադարեց մչտական խաբեբայ մտադրութիւններից. հարց ու փորձ էր անում և քննում այդ անհանճար գործի վրիպման պատճառները և ուզում էր իմանալ, թէ «Ո՞վ կարող է այդ գործերի մասին իրեն ստոյգ տեղեկութիւններ տալ»։ Իսկ նոյն Միհրներսեհ հազարապետը, որ այնտեղ արքունի Դրանն էր և այդ անօրէն գործին գիտակ էր, առաջ եկաւ և ասաց թագաւորին. «Այդ բանը ե՛ս կ՛ասեմ քեզ, քա՛ջ թագաւոր. եթէ ուզում ես ստոյգ լսել ճշմարիտը, կանչել տուր քրիստոնեաների գլխաւորներին, որոնք Հայաստանում են. նրանք յօժարութեամբ կը գան և ամէն բան քեզ կը պատմեն արդարութեամբ»։

Այն ժամանակ (թագաւորը) Հայոց աշխարհի մարզպանութիւնը դրեց և յանձնեց իր աւագ նախարարներից մէկին՝ Ատրորմիզդ անունով, որի իշխանութիւնը սահմանակից էր Հայոց աշխարհին և զօրավարի գործակիցն էր նոյն պատերազմում։ Իսկ Մուշկան-Նիսալավուրտին մնացած բոլոր զօրքի հետ ուղարկեց Աղուանից, Լփնաց, Ճղրաց և Հեճմատակների, Թաւասպարների և Սիբիովան[151] երկրները և այն բոլոր ամրոցնե-

րը, որ աւերել էր Հոնաց գունդը՝ Հայերի հետ ունեցած դաշինքի պատճառով։ Այդպէս էլ՝ թագաւորը սաստիկ տրտմել էր ո՛չ միայն երկրների աւերուելու և զօրքերի ջարդուելու համար, այլ առաւել եւս այն պահակի աւերուելու համար, որ չատ ժամանակներից ի վեր հազիւ էին կարողացել չինել. այդ պահակն այն ժամանակ հեշտութեամբ առնուել էր ու քանդուել և այլեւս յոյս չկար, թէ այն կը շինուի։ Իսկ Վասակին գլխաւոր քրիստոնեաների հետ միասին հրամայեց կանչել Դուռը։

Արդ, Ատրորմիզդ մարզպանը եկաւ, Հայոց աշխարհը մտաւ սիրով և խաղաղութեամբ։ Արքունի հրամանով իրեն մօտ կանչեց Ռշտունեաց տէրը եպիսկոպոս Սահակին, որ նրանից տեղեկանայ ամբաստանութեան հանգամանքները. բայց նա, թէպէտեւ աւերել էր մի ատրուշան և մեծ չարչարանքներ էր տուել կրակի պաշտօնեաներին, ամենեւին չվախեցաւ գալ ներկայանալ հրապարակայինատեանին։

Նոյնպէս և Արծրունեաց տնից մի բարեպաշտօն երէց Մուշէ անունով, որ Արծրունեաց երկրի առաջնորդ էր, նա էլ աւերել էր մի կրակատուն, և կապանքներով ու տանջանքներով չատ չարչարանք էր տուել մոգերին. սա էլ ամենեւին չվախեցաւ, այլ յօժարակամ եկաւ և ներկայացաւ մարզպանին։

Երկու ուրիշ երանելի քահանաներ էլ, որոնց անուններն են Սամուէլ և Աբրահամ, սրանք էլ քանդել էին Արտաշատի կրակատունը և ուրացող Վասակը նրանց առաջուց բռնել ու կապել էր տուել. սրանց էլ բերին առաքինի ընկերների մօտ։

Նոյն տեղը բերին նաև մեծ Յովսէփին ու Ղեւոնդին, Քաջաջին և Արշէնին[152]։ Եւ երբ մարզպանը բոլորից լսեց ու տեղեկացաւ, ամէն ինչ գրեց և ցոյց տուեց արքունիքին ճշմարտութեամբ, ինչպէս որ լսել էր նրանց բերանից։

Բայց Վասակը թէպէտեւ առաջուց էր հասել Դուռը և ամէն ինչ իր ուզածի պէս էր պատմել վայրիվերոյ և սուտ, սակայն չէր կարողանում իր անձն արդարացնել թագաւորի առաջ, որը պատասխան տուեց նրան և ասաց. «Երբ որ քրիստոնեաներն էլ կը գան, բոլորիդ միասին կը լսեմ ատեանում»։

Իսկ որովհետեւ սուրբ քահանաներին չղթայած էին տանում, երկու ամիս և քսան օրից յետոյ միայն հասան արքունի ձմերոցը։ Երբ մեծ հազարապետը լսեց, որ նրանց քաղաք են բերել,

անձամբ տեսաւ նրանց, բայց թէպէտեւ ամէն ինչ մանրամասնօրէն լսեց նրանցից, սակայն չկարողացաւ ձեռք տալ նրանց եւ չարչարել, որովհետեւ Հայոց նախարարներից շատերը դեռեւս ուժով զրաւած էին պահում աշխարհի ամուր տեղերը, և մարզպանը դեռեւս երկիւղի մէջ էր։ Դրա համար էլ հրամայեց զգուշութեամբ պահել սրբերին, և պատուիրեց աշխարհը սիրով նուաճել։

Այդ պատճառով էլ հէնց ինքը (մարզպանը) չրջում էր. ժողովում ու վերաչինում հաստատ խոստումներով։ Եպիսկոպոսներին էլ հրաման տուեց որ ամէն մէկն իր իշխանութիւնն ստանձնի և նախկին սովորութեան համաձայն յայտնի կերպով պաշտօն կատարի, և ազատ համարձակ հրապարակ դուրս գայ։ Մինչեւ իսկ իրեն առջեւ կանչելով՝ ընծաների և պարգեւներով արժանացրեց նրանց։ Եւ որովհետեւ զօրականներն առել ու աւերել էին շատ գաւառներ, ուստի հրամայեց երկրի հարկերը նեբել։ արքունի այրուձին էլ միառժամանակ թեթեւացրեց։ Հրամայեց նաեւ, որ միայնակեացները, որ վախել-անհետացել էին, գան և ամէնքն իրենց տեղերը բռնեն։

«Հատուածպաշտութեան բոլոր կարգերը, ասում էր, հիմա էլ այնպէս կատարեն, ինչպէս որ կատարում էին առաջուայ ժամանակները, նախնիքների օրով։ Եւ եթէ մէկը որեւէ հեռու աշխարհ է գնացել, արքունիքից իրաւունք եմ ստացել, որ, ազատ լինեն նրանք թէ չինական, թէ եկեղեցական, ինչ կայք էլ թողած լինեն, թող գան և իւրաքանչիւրն իր ունեցածին տէր կանգնի»։

Այսպէս էր ասում և երդումներ էր կնքում ու ուղարկում զանազան կողմեր։ Հէնց չատերն էլ եկան հաւաքուեցին, և ամէն մէկը իր կալուածքին տէր դարձաւ։

Նաեւ, որ ամենից մեծ բանն է, եթէ որեւէ մէկը բռնութեամբ էր մոգութիւն ընդունել, արքունիքից հրովարտակներ ուղարկեց՝ նորից քրիստոնեայ դառնալու։ Եւ թագաւորը խօսում էր արքունիքում եղածների դէմ յանդիման, թէ՝ «Ովքեր սիրով չեն ընդունում մազդեզն կրօնը, այդպիսիների վրայ աստուածներն էլ են զայրանում և ես էլ ամենեւին չնորհակալ չեմ. և այսօր նոյն հրամանն եմ տալիս բոլորին՝ ամէն մարդու թողնել իր կամքի համաձայն վարուելու. ով ինչ կամենում է,

թող այն պաշտի. բոլորն էլ իմ ծառաներն են»։ Այս ասում էր և գրաւոր հրաման տալիս ամբողջ աշխարհին։

Երբ այս լսեցին ու տեսան չատերը, որոնք ցիրուցան էին եղել հեռաւոր տեղեր, եկան և տէր կանգնեցին իրենց սեփականութեան։ Իսկ այն նախարարները, որոնք գտնւում էին աշխարհի ամրոցներում կամ հեռաւոր օտարութեան մէջ, երբ տեսան երկրի չէնանալը, մանաւանդ եկեղեցու ապահովութիւնը, նրանք էլ սիրտ առան և համարձակուեցին ներկայանալ թագաւորին։ Ուստի և պատգամ ուղարկեցին երկրի մարզպանին, որ նախարարների խօսքերը յայտնի արքունիքին։ Իսկ նա չտապով արքունիքի կողմից և արքունի հրամանով մի յորդորական և ապահով դաշինքի գիր ուղարկեց նրանց։ Բայց նրանք, թէպէտեւ գիտէին տէրութեան դաժանութիւնը, որ ամէն բանի մէջ կեղծ են, ուզեցին մասնակից լինել սրբերի չարչարանքին. այնպէս որ եթէ մահ էլ սպասելու լինի նրանց, ամենևին երկիւղ չկրեն և չվախենան։

Այս որ լսեց թագաւորը, հրամայեց նրանց իրեն մօտ կանչել ո՛չ թէ կապանքներով. այլ արձակ ձեռներով ու ոտներով։ Նրանք չուտով բերին իրենց կանանց ու որդիներին և ունեցած գոյքը յանձնեցին մարզպանի ձեռքը, և իրենք չտապով գնացին արքունի ձմերոցը։

Եւ մինչդեռ թագաւորը այնտեղ ձմերոցում էր, հրամայեց հարց ու փորձի ատեան կազմել նրանց համար։ Եւ հազարապետը նստեց, որ երկու կողմերին էլ լսի։ Եւ երբ ամբաստանութիւնը երկար օրեր չարունակուեց, ուրացողի կողմը յանցաւոր ճանաչուեց։

Որովհետեւ ցոյց տուին այն թղթերը, որ Վասակը և բոլոր նրա հետ եղածները տուել էին, թէ նրա հետ միաբան են սպրստամբութեան ուխտի մէջ. մի թուղթ Վրաց աշխարհից և մի թուղթ Աղուանից աշխարհից. նոյնպէս և Սղձնիք գրած մի թուղթ և մի գրութիւն Ցունաց թագաւորին և մի թուղթ էլ Անտիոքոս մեծ սպարապետին։ Այս բոլոր թղթերի վրայ դրուած էր Վասակի վաւերական մատանին[153]։ Նմանապէս և նա խառն էր մոգերի կոտորածին Զարեհաւանում. Պարսիկներից խլուած շատ բերդերի վերաբերմամբ էլ նրա այդ առթիւ տուած թըղ-

թերն ու հրամաններն էին մէջտեղ բերում, որովհետեւ նա՛ էր այս ժամանակուայ մարզպանը։

Ինչպէս նաեւ մի նախարար, որի անունն Ատոմ էր, Գնունեաց ցեղից. և որին նա պատգամաւոր էր ուղարկել Յոյների մօտ, առաջ եկաւ և մեղադրեց նրան մեծ ատեանի առաջ հէնց այն հրովարտակով, որ նա տուել էր՝ կնքած իր մատանիով։

Նրան ամբաստանում էր նաեւ Մուշկան Նիսալավուրտը և իր պատերազմակից ընկերների հետ միասին յայտարարում էր, թէ պատերազմը վերջանալուց յետոյ էլ վասակը չատ արիւն թափել տուեց. թէ ինչպէս սուտ երդումներով խաբում ու ցած էր իջեցնում ամրոցներից. արքունի ծառաներից ու աղախիններից ոմանց կոտորում էր, ոմանց էլ գերի էր տանում։ Եւ բացի այս բոլոր վնասներից՝ նա գող դուրս եկաւ նաեւ երկրի այն հարկերի վերաբերմամբ, որ արքունիք էր գնում։

Նոյնպէս և նրա ուրացող ընկերներից չատերը կային, որոնք բաց արին այն չարիքները, որ նա գործել էր Հայոց աշխարհում։ Նրա մասին հարցրին նաեւ այն մոգերին ու փշտիպաններին, որոնք եղել էին կապանքների մէջ և փրկուել և ապա բերուել արքունիք, և ասացին. «Ի՞նչ որեէ բան գիտէ՞ք նրա չարագործութեան մասին»։ Պատասխան տուին և ասացին. «Այն բոլոր անցքերն ու չարչարանքները, որ անցան մեր գլխով, և այն բազմաթիւ հարուածները, որ թափուեցին արքունի զօրքի վրայ, և Հայոց աշխարհի աւերն ու գերութիւնը, այլեւ արքունի հարկերի կորուստը,— այդ բոլոր չարիքների սկզբնապատճառն ու առաջնորդն այդ մարդը եղաւ»։

Եւ մինչդեռ այս բոլոր ամբաստանութիւնները երկար օրեր կուտուում էին նրա վրայ, առաջ եկան նաեւ նրա ազգականները[154], որ աւելի առաջ էլ գանգատուել էին նրա վրայ թագաւորին, սկսեցին կարգով ցոյց տալ և յայտնել, թէ ինչպէս նա բարեկամացել էր Հոն Հեռանի հետ Բաղասական թագաւորի հետ միաբանած, այն ժամանակները, երբ այդ Հեռանը կոտորեց Պարսից զօրքերին Աղուանքում, ասպատակելով հասաւ Ծունաց երկիրը և բազմաթիւ գերիներ ու չատ աւար տարաւ Հոռոմներից, Հայերից, Վրացիներից և Աղուաններից. այնպէս որ թագաւորն ինքն էլ հասկացաւ այդ մատդրութիւններն ու

ապանեց Բաղասական թագաւորին, իսկ վասակն այն ժամանակ Հայոց մարզպանն էր և արքայի թշնամիներին խորհրդակից դուրս եկաւ։ Նրա ազգականները ցոյց տուին և յայտնեցին, թէ ինչպէս իրենք հմուտ և տեղեակ էին նրա չար խորհուրդներին, ամէն ինչ ցոյց էին տալիս և յայտնում թագաւորին. և էլի ուրիշ բազմաթիւ խարդախութիւններ, որ կեղծութեամբ էր վարում իր կեանքը ո՛չ միայն ընկերների վերաբերմամբ, այլև ամբողջովին հէնց իրեն իսկ թագաւորի նկատմամբ, որովհետեւ մանկութիւնից ի վեր երբեք արդարութեամբ չէր գործել։

Այն ժամանակ հազարապետը հրաման տուեց և ասաց. «Այստեղ բերէք նաեւ կապեալներից, որոնք բանտումն են գտնւում»։ (Կապանքներից) արձակեցին և բերին երանելիներից Ոչտունեաց Սահակ եպիսկոպոսին, սուրբ Յովսէփին և Ղեւոնդ երէցին։

Երբ ատեանում լսուած բոլոր բանները յայտնեցին նրանց, Սահակ եպիսկոպոսը[155] պատասխան տուեց և ասաց. «Ովքեր յայտնի կերպով ուրացել են ճշմարիտ Աստծուն, չգիտեն՝ թէ ինչ են անում և կամ ինչ են խօսում, որովհետեւ նրանց միտքը խաւարած է. տէրերին ծառայում են սուտ պատճառանքներով և ընկերների հետ էլ կեղծ ուխտ են կապում։ Նրանք սատանայի դարաններ են, որովհետեւ հէնց նրանց միջոցով է կատարում իր դաժան կամքը, ինչպէս որ երեւում է հէնց այդ վասակի վերաբերմամբ։ Որովհետեւ քանի դեռ նա քրիստոնէութեան անունն էր կրում, կարծում էր, թէ արտաքուստ ծածկում ու թաքցնում է իր ամբողջ չարութիւնը ձեր անգէտ աչքերի առաջ, և իր ամբողջ նենգութիւնը քրիստոնէութեամբ էր ծածկում։ Ուստի և դուք էլ նրան վստահելով՝ մեծապէս պատուեցիք դրան, եւ՛ քան արժանի էր։ Դրա՛ն հաւատացիք վրաց աշխարհը[156], հարցրէք՝ արդեօք գո՞հ են դրանից։ Դրա՛ն տուիք Սիւնեաց իշխանութիւնը. իր ազգականներից լսեցէք, թէ ի՛նչ են պատմում դրա մասին։ Դրան Հայոց մարզպան դարձրիք. այն, ինչ որ ձեր նախնիքները մեծ աշխատութեամբ էին ձեռք բերել, դա մի տարուայ մէջ կորցրեց ամբողջ երկիրը։ Տեսա՞ր, որ երբ դրանից վերացաւ Աստծու պատուական անունը, որ կեղծութեամբ էր կրում, բացէ ի բաց ե-

բեւցաւ դրա ամբողջ չարագործութիւնը։ Որովհետեւ եթէ իր Աստծու մօտ սուտ դուրս եկաւ, էլ այս մահկանացուներից որի՞ առջեւ պէտք է դա արդար ճանաչուի։

«Արդ, այն ամբողջ ամբաստանութիւնը, որ այժմ յայտնի եղաւ դրա մասին, չէ՞ որ դուք առաջուց արդէն լսել էիք։ բայց թէ ի՞նչ դիտումով ծածկեցիք, դուք ինքներդ էլ լա՛ւ գիտէք։ Ինձ այնպէս է թւում, թէ դա ձեզ սուտ յոյսով է ուրախացրել[157]։ Բայց ո՛չ դուք, ո՛չ դա, և ոչ էլ ով ձեղանից յետոյ գալու է, այդ բանը չի կարող մեր մէջ տեսնել։ Ուրեմն, վարուեցէ՛ք դրա հետ, ինչպէս կամենում էք. մեզ էլ ի՞նչ էք հարցընում»։

Մեծ հազարապետը զարմացաւ իր մտքում և ինքն իր մէջ քննում էր ատեանում ասուած բոլոր խօսքերը։ Որովհետեւ հասկացել էր, որ այդ մարդը իրաւացի կերպով դատապարտուեց իր անարժան գործերի համեմատ, ուստի մտաւ արքունիք և ատեանում ասուած բոլոր խօսքերը յայտնեց թագաւորին։ Եւ երբ թագաւորը լսեց և հազարապետից ստուգեց այդ մարդու մեղաւորութիւնը, սաստիկ բարկացաւ և խորը խոցուեց, միայն թէ կամեցաւ համբերութեամբ նրան մեծ անարգանքի հասցնել։ Տասներկու օր լուռ մնաց, մինչեւ որ աւարտուեց–սրծաւ ամբաստանութեան հարցուփորձը։

Եւ մի նշանաւոր օր հրամայեց բոլոր երեւելի և պատուաւոր մարդկանց ընթրիքի կանչել։ Կանչեցին նաև ուրայողին. և նա՝ արքունի նախկին կարգերի համաձայն՝ հագաւ թագաւորից ստացած պատուական հագուստը, կապեց նաև վարսակալը և գլխին դրեց ոսկեղէն խոյրը. և մարգարտով ու պատուական ակներով հիւսուած կռանակուռ ոսկեձոյլ կամարը կապեց մէջքին, գինդերը կախեց ականջներից և մանեակը պարանոցից, սամոյրի մուշտակը գցեց ուսերին և թագաւորից ստացած բոլոր չքազգեստները վրան առնելով՝ գնաց արքունիք։ Նա բոլորից աւելի չքեղ և երեւելի էր երեւում բազմութեան աչքին։

Իսկ Հայաստանից կամաւոր կերպով եկած նախարարներին, որոնք անձամբ իրենց անձը փորձութեան էին տուել, և առաջուց տեղ հասած սրբերին բոլորին չզթայակապ էին պահում արքունի Դրանը։ Երբ նրան տեսան զարդարուած ու չքեղացած և բազմաթիւ գնդով արքունիք գնալիս, իրենց մտքներում

սկսեցին ծաղրել և ասել. «Ո՞վ անմիտ վաճառական, անմահ և անանց պատիւը տուիր և այդ անցաւորը գնեցիր. և այդ էլ մօտ օրերս կորցնելու ես»։

Հասաւ և նստեց նաբսի դահլիճում, որ մեծամեծների ժողովատեղին էր։ Արդ՝ դուրս եկաւ սենեկապանը, թագաւորի կողմից հարցրեց նրան և ասաց «Թագաւորն (ինձ) ուղարկեց քեզ մօտ, թէ ումի՞ց ես ստացել այդ բոլոր պատուական նուէրները. ասա՛ չուտով, ո՞ր արդար ծառայութիւններիդ համար»։ Եւ յիշեցրեց նրան առեանում ասուած այն բոլոր խօսքերը, որով դատապարտուել էր. նոյնիսկ այնպիսի բաներ էլ ասաց նրան, որ այնտեղ խօսուած չէին, Որովհետեւ նա օրինաւոր կարգով չէր ստացել Սիւնեաց աշխարհի իշխանութիւնը, այլ նենգութեամբ ու քծութեամբ սպանել տուեց իր հօրեղբայր Վաղինակին և ինքը գրաւեց իշխանութիւնը ինչպէս արքունիքի համար վարձատրութեան արժանի գործ կատարող[158]։ Էլի ուրիշ շատ խօսքերով դատապարտեցին նրան, և այդ բանին վկայ էին բոլոր մեծամեծները։ Նա բոլորովին պապանձուեց, և ոչ մի ճշմարիտ խօսք չգտնուեց նրա բերանում։ Երբ երկու-երեք անգամ կրկնեցին՝ հասկացնելով թագաւորին ներսում, մահուան վճիռ տուեց նրա համար։

Արդ՝ դուրս եկաւ դահճապետը և մօտեցաւ, բոլոր մեծամեծների առաջ հանեց նրանից արքունիքից ստացած շքազգեստները և նրան մահապարտի զգեստ հագցրեց. Ոտներն ու ձեռները կապեցին և կնոջ նման մատակ ձի նստեցրին և այն զընդանը յանձնեցին, որտեղ բոլոր մահապարտներն էին գտնուում։

Իսկ Հայոց նախարարներն ու սուրբ եպիսկոպոսները երէցների հետ միասին, թէպէտեւ մեծ պատուհասի մէջ էին, ամենեւին չէին յիշում այն նեղութիւնները, որ անցել էին նրանց գլխով և կամ որ սպասում էին ապագայում էլ, այլ զարմացել էին այն մեծ յայտնութեան վրայ, որ Աստծուց եղաւ։ Միխթարում էին միմեանց և ասում. «Ցաջութեամբ պատերազմեցինք. է՛լ աւելի մեծ համբերութեամբ տանենք չարչարանքները։ Մեր սուրբ հայրերից լսել ենք, որ բոլոր առաքինութիւններից գլխաւորը համբերութիւնն է, և կատարեալ աստուածապաշտութիւնը՝ երկնաւոր իմաստութիւն. իսկ այս բանը ոչ ոք

չի կարող առանց չարչարանքի ձեռք բերել։ Իսկ երբ չարչարանքը երկար է տեւում, այն ժամանակ չատանում է նաեւ պարգեւն ու վարձահատուսմը։ Եթէ ուրեմն այդ այդպէս է, Աստծուց միմիայն ա՛յս խնդրենք, որ կարողանանք բոլոր փորձութիւններին դիմանալ. և Տէրն ինքը կը գտնի մեր փրկութեան հնարը»։

«Մենք լսել ենք Քրիստոսի քառասուն զինուորների դատաստանը, որոնք չատ հարուածներ ու տանջանքներ կրեցին։ Նրանցից մէկը չտապեց-գնաց բաղանիք, և զրկուեց պսակից. իսկ երեսուն և ինը համբերութեամբ նահատակուեցին և հասան այն աւետիքին, որ ցանկանում էին։ Իսկ մեր այն ընկերակիցը, որ առաջուց բաժանուեց մեզանից, ահա սատանայի գործակիցը դարձաւ։ Հոգին մարմնից դեռ դուրս չեկած՝ ընդունեց Գեհենի տանջանքների առհասատչեան, որ ո՛չ միայն սրբերի համար է ողբալի, այլեւ բոլոր գազանաբարոյ մարդկանց»։

Այս ասում էին և չատ արտասուք թափում կորուսեալի վրայ. և միաժամանակ հոգեւոր երգեր էին երգում և ասում. «Վաւ է Տիրոջ վրայ յոյս դնել, քան մարդկանց. լաւ է Տիրոջ վրայ յոյս դնել, քան իշխանների. բոլոր ազգերը չրջապատեցին ինձ, և Տիրոջ անունով յաղթեցի նրանց»159։ Քաջալերում էին միմեանց և ասում. «Քանի որ այս բանը գիտենք, եղբայրնե՛ր, չվախենանք այս անաստուած հեթանոս ազգից, որ զայրացած ժամանակ մեղուների չատ աւելի վատ են, որովհետեւ նրանց զայրոյթն էլ սատակումն է լինելու իրենց անձերի համար։ Իսկ մենք Տիրոջ անունը կանչենք և յետ մղենք բոլորին»։

Իսկ ուրացող վաճառականը նայում էր սուրբ կապուածների միաբանութեանը, որոնք մեծ ուրախութեամբ ընդունում էին չարչարանքները և աւելի զուարթ ու պայծառ էին երեւում, ինչպէս և առաջ արքունիքում. նայում եւ կարօտում էր, բայց ոչ ոք նրան չխառնեց նրանց հետ, այլ առանձին էին պահում միեւնոյն կապանքներով։ Եւ օր օրի վրայ բերում ինչպէս գէշ գազան էին մեծ հրապարակը, նախատում ու ծաղրում էին եւ ամբողջ բանակի առաջ խաղք ու խայտառակ անում նրան։ Կողոպտեցին–խլեցին ինչ որ հետն ունէր եւ ոչինչ չթողին. այնպիսի խայտառակ աղքատութեան մէջ գցեցին, որ նրա ծա-

տանները մինչեւ իսկ հայ էին մուրում և թերում նրան, նա երկրի հարկերի այնպիսի ծանր պարտք դրին նրա տան վրայ, որ նոյնիսկ հայրերի ու պապերի եւ իր ունեցուածքն ու կանանց զարդերն էլ վրան դրեց, տուեց ու տուժեց, բայց չկարողացաւ արքունի պարտքը վճարել։

Այն տեղը հասցրին, որ նոյնիսկ հարցնում էր՝ «Մեր նախնիքների գերեզմաններում արդեօք որեւէ գանձ մնացե՞լ է», եւ եթէ գտնէր, կը հանէր և տուգանք կը տար իրեն և ընտանիքի համար, ինչպէս որ չատ մարդիկ էլ տոյժի փոխարէն (գերի) գնացին160։

Եւ երբ այսպէս ամէն կողմից հարուածներ կրեց ու տկարացաւ, հէնց այնտեղ կապանքների մէջ դժնդակ ցաւերի մէջ ընկաւ։ Նրա փորը եփ եկաւ, նրա ծոցը ճզմուեց ու տրորուեց և նրա թանձրամսութիւնը հալուեց-քամուեց։ Որդերը եռացին նրա աչքերի միջից և ցած թափուեցին քթածակերից, նրա ականջները ծանրացան, և սաստիկ ծակծկուեցին նրա շրթունքները։ Նրա բազուկների ջիլերը քայքայուեցին և ոտների կրունկները դէպի յետ ծռուեցին։ Մահուան հոտ փչեց նրանից և նրա ձեռնասունն ծառաները փախան նրանից։ Միմիայն լեզուն կենդանի մնաց նրա բերանում, բայց խոստովանութիւն չբերեաց նրա շրթունքների վրայ։ Ճաշակեց հեղձամղձուկ մահը և անհուն դառնութեամբ դժոխք իջաւ։ Նրան անարգեցին իր բոլոր սիրելիները, իսկ բոլոր թշնամիները չկշտացան նրան հասած այդ սաստիկ հարուածներից։

Եւ նա, որ մատնութեամբ ուզում էր Հայոց աշխարհի վրայ թագաւոր լինել, նրա գերեզմանի տեղ էլ չգտնուեց այնտեղ, որովհետեւ մեռաւ ինչպէս չուն և քաշ տրուեց ինչպէս գէշ։ Նրա անունը չյիշուեց սրբերի շարքում, և նա չյիշատակուեց եկեղեցում սուրբ սեղանի առաջ։ Ոչ մի չարիք չթողեց, որ չգործէր իր կեանքում, և մեծամեծ չարիքներից ոչ մէկն էլ չմնաց, որ նրա գլխով չանցնէր մահուան ժամանակ։

Այս յիշատակարանը գրուեց նրա մասին՝ նրա մեղքերը կշտամբելու և յանդիմանելու համար, որպէսզի ամէն մարդ, որ լսէ և իմանայ այս բանը, նզովք կարդայ նրա յետեւից և նրա գործերին ցանկացող չլինի։

ԵՕԹԸ ԳԼՈՒԽՆԵՐԸ ՎԵՐՋԱՑԱՆ՝

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԵՕԹԸ ԴԼՈՒԽՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՁԱՐՁԱՐԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, նոյն թագաւորի իշխանութեան տասնեւվեցերորդ տարում[161] *նորից մեծ բարկութեամբ վեր կացաւ գնաց Փուշանների աշխարհը պատերազմելու, եւ գնալով Վրկանից*[162]*, անցաւ Ապար աշխարհը, հրամայեց նախարարներին ու քահանաներին նոյն կապանքներով պահել Նիւշապուհ*[163] *քաղաքի դղեակում. իսկ երանելի կապեալներից երկուսին իրեն հետ տարաւ. Որտեղից որ անցնում էր, սարսափ էր տարածում բոլոր քրիստոնեաների վրայ:*

Երբ այդ տեսնում էր Բէլ անունով մի Հոն, որ Խայլանդուրների երկրի թագաւորների ցեղից էր, և գաղտնի կերպով հակուած էր քրիստոնեաների կողմը և սիրով ու յօժարութեամբ սովորում էր նրանցից ճշմարտութիւնը, և իր կամքով հնազանդուել էր թագաւորի իշխանութեանը, անչափ դառնանում էր իր սրտում, երբ տեսնում էր սրբերին չարչարուելիս: Եւ երբ էլ ուրիշ ոչ մի օգնութիւն չկարողացաւ անել, փախաւ-գնաց Փուշանների թագաւորի մօտ: Գնաց և պատմեց նրան այն բոլոր չարչարանքները, որ թագաւորը բերեց Հայոց աշխարհի գլխին. տեղեկացրեց նրան նաև, որ Հոնաց պահակը քանդուած է, յայտնեց նաև, թէ երկպառակութիւն կայ զօրքի մէջ, թէ շատ ազգեր արդէն հեռացել են թագաւորի սիրուց. հասկացրեց նրան նաև, թէ Արեաց աշխարհն էլս տրտնջում է:

Այս որ լսեց Փուշանների թագաւորը, ամենևին կասկած չտարաւ այդ մարդու վրայ և իր մտքում էլ նրան լրտես չհա-

մարեց։ Որովհետեւ մի քիչ առաջ նա լսել էր (այդ բանները), դարձեալ երբ ինքից այն էլ առուգեց, թէ վեր է կացել-գալիս է Քուշանների աշխարհի վրայ, չտապեց չուտով զօրք ժողովեց. գունդ կազմեց, որպէսզի հզօր զօրութեամբ դուրս գայ նրա դէմ։ Եւ թէպէտ դէմ ու դէմ պատերազմել չէր կարող նրա դէմ, բայց զօրամասերի թեւերի վերջապահների վրայ յարձակուելով՝ մեծ հարուածներ էր հասցնում արքունի զօրքերին։ Եւ այնպէս նեղեց ու չփոթեցրեց նրանց, որ սակաւաթիւ զօրքով ձախորդութեան մէջ գցելով նրանց՝ յետ դարձրեց և ինքն ապատակով յետեւից ընկած՝ աւերեց արքունի բազմաթիւ գաւառներ և այնտեղից ողջ-առողջ վերադարձաւ իր երկիրը։

Երբ Թագաւորը տեսաւ, որ անարգանքով ու խայտառակութեամբ եմ վերադարձել այս պատերազմից, մի քիչ իջաւ հպարտութիւնից և հասկացաւ, որ այդ բոլոր չարիքներն առաջացան զօրքերի երկպառակութիւնից։ Եւ մեծ սրտնեղութիւնից չգիտէր, թէ ո՛ւմ վրայ թափի այն դառն թոյնը։ Իսկ մեծ հազարապետը սաստիկ երկիւղի մէջ էր, որովհետեւ ինքն էր այն բոլոր չարիքների պատճառը, որ գործեցին։ Սկսեց խօսք դնել մոգպետի և մոգերի բերանը, որոնք՝ ներկայանալով Թագաւորին՝ ասացին նրան. «Քա՛ջ Թագաւոր, մենք մեր կրօնից արդէն գիտենք, որ մարդկանցից ոչ ոք չի կարող կանգնել քո մեծ զօրութեան դէմ. բայց աստուածները մեզ վրայ բարկացել են քրիստոնեաների պատճառով, որոնք մեր կրօնին դէմ են, որովհետեւ մինչեւ այսօր նրանց կենդանի ես պահել»։ Եւ յիշեցնում էին նրան նաեւ, թէ ի՛նչպէս նրանք բանտում անիծում էին քեզ։ Ուրիշ շատ հայհոյութիւններ էլ էին խօսում այն սրբերի մասին և ամէն օր աչխատում էին աչքից գցել տալ և Թագաւորի միտքը գրգռում զայրացնում էին, մինչեւ որ շատպեց չուտով թափել այն անմեղների արիւնը։

Հրամայեց տուեց այն երկուսի մասին, որ այնտեղ բանակում իրեն մօտ էին — Սամուէլի և Աբրահամի մասին — որպէսզի գաղտնի կորցնեն նրանց։ Իսկ ովքեր քաղաքի դղեակում էին, բանակից տասն և հինգ օթեւանի չափ հեռու էին։ Հրամայեց համբարակապետին, որի անունը Դենչապուհ էր, որ իրենից առաջ գնայ այն քաղաքը, ուր գտնւում էին Տիրոջ սուրբ քահա-

նաներըը և իրաւունք ունենայ չարաչար տանջանքներով դատել և հարց ու փորձ անել նրանց, և սրով սպանել։

Բայց դեռ առաջ՝ Թագաւորի հրամանից շատ աւելի էր չարչարել նրանց այն մոգպետը, որին յանձնուած էին նրանք. որովհետեւ նա Ապար աշխարհի գենպետ իշխանն էր և աւելի պինդ էր մոգութեան մէջ. նաև շատ գիտուններից աւելի տեղեակ էր վրադաչտական կրօնին։ Այլեւ, որ մեծ պարծանք էին համարում իրենց մոլորութեան կարգի համեմատ, Համակոդէն[164] անուն էին տալիս նրան. գիտէր նաեւ Ամպարտքաչը[165], սովորել էր նաև Բոզպայիտը[166], ծանօթ էր նաև Պահլաւիկին ու Պարսկադենին[167]։ Որովհետեւ այս հինգ կէչտերն են, որոնց մէջ բովանդակուած է մոգութեան ամբողջ կրօնը. բայց բացի սրանցից մի ուրիշ վեցերորդն էլ կայ, որին Պետմոգ[168] են կոչում։

Ինքն իր մէջ կարծում էր, թէ ամբողջ գիտութեամբ ճոխացած է. երանելիների վրայ այնպէս էր նայում, թէ նրանք տգիտութեան պատճառով մոլորուած են մեր մեծ գիտութիւնից։ Մտքում մի անուտի յոյս դրեց՝ անդադար չարչարել նրանց, որպէսզի մարմնի նեղութիւններին չդիմանալով՝ թերեւս նրանցից որեւէ աղաչական խօսք լսեմ։ Այս պատճառով էլ քահանաներին զատեց ու բաժանեց նախարարներից և հեռացրեց նրանցից, և գցեց մի խոնաւ ու խաւար նեղքնատուն, եւ պատուիրեց վեց մարդուն պահէ պահ երկու գարեհաց տալ և դորակ ու կէս ջուր, և ամենեւին ոչ ոքի չէր թողնում մօտենալ բանտի դռներին։

Եւ երբ քառասուն օր սրանով տանջում էր նրանց և նրանցից թուլութեան խօսք չլսեց, ուրիշ բան անցաւ մտքով, որպէս թէ իր ծառաներից մէկը գաղտնի բան ստացած լինի նրանցից և ծածուկ կերակուր լինի տանելիս նրանց։ Ինքը գնաց, կնքեց բանտի երդիկն ու դուռը, և նշանակուած պարէնը իր հաւատարիմ մարդկանց ձեռքով էր հասցնում նրանց այս բանն արեց տասն և հինգ օր։

Բայց և այնպէս երանելիներն ամենեւին իրարանցման ու տագնապի մէջ չընկան, այլ մեծ համբերութեամբ կրում էին չարչարանքները և անդադար սաղմոսներ երգելով կատարում էին ամէնօրեայ պաշտամունքը. և աղօթքը վերջացնելուց յետոյ

զուարթ հոգով գոհանալով՝ մի քիչ պառկում–հանգստանում էին չոր գետնի վրայ։

Իսկ կապուածներին վրայ նշանակուած պահապանները սաստիկ զարմացել էին նրանց չհիւանդանալու և առողջութեան վրայ, երբ լսում էին նրանց ձայների անդադար հնչումը։ Այդ պատճառով ծածուկ պատմեցին մոգպետին և ասացին. «Այդ մարդիկ առանց մեծ զօրութեան չեն. որովհետեւ եթէ պղնձի մարմիններ էլ ունենային նրանք, այնտեղի խոնաւութիւնից արդէն քայքայուած պիտի լինէին։ Շատ ժամանակ է, քո այս քանտի պահպանութիւնը մեզ է յանձնուած. չենք յիշում, որ կապուածներից որեւէ մէկը մի ամիս ժամանակ ապրած լինի այդ տան մէջ։ Արդ՝ մենք ասում ենք քեզ. եթէ նրանց վերաբերմամբ մահուան հրաման ես ստացել և կը սպանես, դու գիտես. իսկ եթէ ոչ՝ քեզ յանձնարարուած է պահել նրանց և ոչ թէ դատել, ապա կապուածները սաստիկ վտանգի մէջ են։ Մենք ինքներս էլ ահուդողի մէջ ենք և խիստ վախենում ենք, երբ տեսնում ենք այսպիսի անառանելի նեղութիւնները»։

Երբ այս լսեց մոգպետը, կէս գիշերին ինքը վեր կացաւ, գնաց քանտի երդիկը։ Եւ գիշերային մթութեան մէջ ներս նայելով այն միջոցին, երբ նրանք պաշտամունքից հանգչում էին, տեսաւ, որ իւրաքանչիւր կապուածի անձը բորբոքւում էր անշէջ վառուած կանթեղի նման։ Մեծ սարսափի մէջ ընկաւ և ասում էր իր մտքում. «Ի՞նչ է այս մեծ հրաշքը. ուրեմն մեր աստուածները եկել-իջել են այս քանտը և նրանց փառաւորութիւնն է վառուած–բորբոքւում։ Եւ եթէ նրանք սրանց չմօտենան, անկարելի է, որ սոսկական մարդը այսպիսի պայծառ լուսով լուսաւորուի։ Ես այսպէս էի լսել այս կրօնի մասին, թէ աստիկ յիմարութեան պատճառով մոլորուած են և սուտ կերպարանքներ են ընդունում տգէտ մարդկանց աչքում. գուցէ այս տեսիլն էլ այդպիսի մի բան էր, որ երեւաց ինձ»։

Եւ չէր կարողանում առհասարակ հասկանալ այդ տեսիլքը։ Մինչդեռ այսպիսի մտածմունքի մէջ էր, սրբերը նորից ամէն մէկն իր գետնանկողնից վեր կացաւ և սկսեցին սովորական պաշտամունքը։ Այն ժամանակ մոգպետն ստուգեց և իմացաւ, որ իրեն երեւցածը մի խառնափնթոր տեսիլ չէր, այլ հէնց նրանց

անձերից էր բխում լուսաւորութիւնը։ Այն ժամանակ նորից սարսափեց և ասաց. «կապուածներից ո՞ւմ վրայ է տեսնուել այսպիսի յայտնութիւն. ես ոչ մէկին էլ չգիտեմ և ո՛չ էլ լսել եմ նախնիքներից»։ Եւ որովհետեւ չափազանց յուզուեց այն մեծ հրաշքից, ուստի ամբողջ մարմնով դողում էր և մինչեւ առաւօտը թմրած ու կիսամեռ մնաց (բանտի) կտուրի վրայ. լոյսը բացուելու ժամանակ ինչպէս մի երկար ժամանակուայ հիւանդ վեր կացաւ-գնաց իր բնակարանը, բայց իր տեսածը ամենեւին չհամարձակուեց պատմել որեւէ մէկին։

Իրեն մօտ կանչեց պահապաններին և ասաց նրանց. «Գնացէք, կապուածներին տեղափոխեցէք մի աւելի չոր վերնատուն, և այնտեղ նրանց զգուշութեամբ պահեցէք, ինչպէս որ ասացիք»։ Այն դահիճներից մէկը, երբ լսեց մոգպետի հրամանը, չտապեց գնաց՝ իբրեւ մի մեծ աւետիս տալու նրանց. «Հրամայեց, ասում է, որ դուք տեղափոխուէք մի աւելի չոր վերնատուն. դէ՛հ, չուտ եկէք և մի՛ ուշանաք. որովհետեւ մենք էլ պաղատեցինք՝ ձեզ տառապանքներից (ազատելու) համար»։

Իսկ սուրբ Յովսէփն սկսեց հեղութեամբ խօսել դահճապետի հետ և ասաց. «Գնա՛ և ասա՛ ձեր յիմար առաջնորդին. դու չե՞ս լսել մեր Տիրոջ ապագայ գալստեան մասին և կամ այն հրաշակերտ շինուածքների մասին, որոնք սկզբից պատրաստ պահուած են մեզ համար. այդ պատճառով էլ հեչտութեամբ ենք դիմանում այս մեծ նեղութեանը այն յոյսի սիրոյ համար, որ տեսնում ենք։ Դու լաւ արիր, որ խղճացիր (մեր) այս մարմնաւոր նեղութեան համար. բայց մենք ամենեւին չենք ձանձրացել իբրեւ մի անասուած մարդ, որի մտքում ոչ մի այլ յոյս չկայ, քան այն, ինչ որ երեւում է։ Բայց մենք մեր Քրիստոսի սիրոյ համար շատ ուրախ ենք այս բանի վրայ. և այս նոյնիսկ կատարեալ պարգեւ ենք համարում, որպէսզի այս ժամանակաւոր վշտերի չնորհիւ անժամանակ երանութիւնները ժառանգենք»։

«Եթէ չինուածքների ցանկացող լինենք, երկնքում առանց մարմնաւոր ձեռագործի չինուածքներ ունենք, որոնց մօտ արքայական պալատները (բան) չեն երեւայ։ Նոյնպէս էլ զգեստների, փառքի և անախտ կերակուրների վերաբերմամբ. այս

քանը եթէ մէկը կամենայ ձեզ ասել, ձեր ակարամտութիւնը չի կարողանայ լսել. որովհետեւ վազեմի կուրութիւնից չէք տեսնում և չէք լսում ու չէք հասկանում, այդ պատճառով էլ մեզ դատում էք սուր ու անիրաւ և անողորմ՝ առանց յանցանքի։ Բայց մեր թագաւորն առատաձեռն է և բարերար և նրա արքայութեան դուռը բաց է. եթէ մէկը կամենայ դիմել այնտեղ, թող համարձակ դիմի, դէպի ապաշխարութիւն դարձողներից և ոչ մէկին երբեք չար աչքով չի նայում։

«Բայց այն դիւրութիւնների համար, որ դու հրամայեցիր տալ մեզ, մենք մեր աչխարհում հնարաւորութիւն ունէինք քո թագաւորի ձեռքը չընկնելու, ինչպէս և ուրիշները, որոնք ազատուեցին այսպիսի փորձանքներից. բայց ինչպէս որ յօժարակամ եկանք, կարծես գիտենալով այս վիշտն ու վտանգները, և բոլորովին չվախեցանք այսպիսի նեղութիւններից, այդպէս էլ կամենում ենք, որ է՛լ աւելի ծանրացնես դրանք մեզ վրայ, մինչեւ որ քո չար կամքը յագենայ մեր վերաբերմամբ։ Որովհետեւ եթէ մեր Աստուածը, որ երկնքի ու երկրի և բոլոր երեւացող ու աներեւոյթ բաների արարիչն է, իր բարերարութեան ու սիրոյ պատճառով խոնարհուեց–իջաւ մարդկային ազգի մօտ և չարչարելի մարմին հագաւ, ամէն տեսակ առաքինութիւն կատարեց և աւարտեց նախախնամութեան բոլոր գործերը,—եթէ նա իր կամքով մատնուեց խաչահանների ձեռքը, մահով մեռաւ ու գերեզմանի մէջ դրուեց. և իր աստուածութեան զօրութեամբ յարութիւն առնելով երեւաց իր աշակերտներին և ուրիչ չատերին, և վերացաւ երկինք իր Հօր մօտ, և նստեց հայրենի աթոռի աջ կողմը և մեզ երկնաւոր զօրութիւն չնորհեց, որպէսզի նրա անմահութեան համաձայն՝ մենք էլ մեր մահկանացու մարմնով կարողանանք չարչարակից լինել նրա անմահ մեծութեանը. և նա մեր մահն այլեւս մահկանացու մահ չի համարում, այլ իբրեւ անմահակից՝ հատուցանում է մեզ մեր աշխատութիւնների վարձը,— արդ՝ մենք փոքր բան ենք համարում մեր այս չարչարանքները այն սիրոյ փոխարէն, որ նա ցոյց տուեց մարդկային ազգին»։

Երբ մոգպետն այս բոլոր խօսքերը լսեց դահճապետից, յուզուեց, նրա միտքը պղտորուեց և քունը նրա աչքերից փախաւ

չատ գիշերներ։ Իսկ մի օր երեկոյեան պահին վերկացաւ, գնաց նրանց մօտ միայնակ ու լռիկ և սպասաւորներից ոչ ոքի հետը չվերցրեց։ Եւ երբ հասաւ տան դրանը, մի ծակով ներս նայեց և տեսաւ էլի առաջին տեսիլքի նման. բայց նրանք անդորր քնած էին։ Հեզութեամբ կանչեց եպիսկոպոսին անունով, որովհետեւ նա լաւ գիտէր պարսկերէնն։ Նա դուրս եկաւ և հարցրեց. «Ո՞վ ես դու»։ — «Ես հէնց ինքն եմ, ասաց, ուզում եմ ներս մտնել և ձեզ տեսնել»։

Եւ երբ մտաւ սրբերի մէջ, նշանն այլեւս չերեւաց նրան. և պատմեց նրանց, թէ ի՛նչպէս իրեն երկու անգամ հրաշք երեւաց։ Ղեւոնդ երէցը պատասխան տուեց և ասաց. «Աստուած, որ ասաց. թէ խաւարի մէջ թող լոյս ծագի, որ և ծագեց և իմաստութեամբ լուսաւորեց աներեւոյթ արարածներին, նոյն զօրութիւնն այսօր էլ ծագեց քո խաւարած մտքի մէջ և քո կուրացած հոգու աչքերը բացուեցին, եւ տեսար Աստծու չնորհքի անշէջ լոյսը. չտապի՛ր, մի՛ ծուլանար. գուցէ նորից կուրանալով՝ խաւարի մէջ խարխափես»։

Եւ երբ այս ասաց, բոլորը ոտքի կանգնեցին, ասելով քառասուներկուերորդ սաղմոսից. «Ուղարկի՛ր, Տէ՛ր, քո լոյսն ու քո ճշմարտութիւնը, որ նրանք առաջնորդեն ու տանեն մեզ սուրբ լեռը և քո յարկերը։ Իսկապէս որ, Տէ՛ր, ճշմարտութեամբ առաջնորդեցիր այս մոլորուածին եւ բերիր դէպի քո անանցանելի ուրախութիւնը և անմերժելի հանգիստը։ Ահա այս օրը նման է քո սուրբ չարչարանքներին. ինչպէս որ մահապարտ աւազակին փրկեցիր երկրորդ մահից եւ նրանով բացարիր Ադէնի[169] կողպած դուռը, այնպէս էլ գտար նաեւ այս կորուսեալին. սա, որ չատերի մահուան պատճառ էր, այժմ սրան դարձրիր կեանքի պատճառ մեզ եւ իր անձի համար։ Շնորհակալ ենք քեզանից, Տէ՛ր, չնորհակալ ենք եւ ձայնակցում ենք սուրբ մարգարէին[170]. «Ո՛չ թէ մեզ, Տէ՛ր, ո՛չ թէ մեզ, այլ քո անունը փառք տուր՝ քո ողորմութեան եւ ճշմարտութեան համար. որպէսզի հեթանոսների մէջ երբեք չասեն թէ ո՞ւր է նրանց Աստուածը. ինչպէս որ այսօր էլ յայտնի եղաւ քո մեծ զօրութիւնը այս անսանձ խաւարասէր ազգի մէջ»։

Իսկ նա, որ ձրի գտաւ Աստծու տուած չնորհը, նա էլ ըս-

կըսեց ինքն իրեն ասել. «Տէրն է իմ լոյսն ու կեանքը, ես ումի՞ց պիտի վախենամ. Տէրն է իմ կեանքի ապաւէնը, ես ումի՞ց պիտի դողամ[171]։ Որովհետեւ ատոյգ գիտեմ, որ այսուհետեւ իմ թշնամիները բազմաթիւ են և ուզում են մօտենալ ու ուտել իմ մարմինը. բայց դու, բոլորի Տէ՛ր, եկար բոլորին կեանք տալու համար, որպէսզի յետ դառնան և ապրեն քո մարդասիրութեան առաջ։ Ինձ մի՛ ջոկիր այն սուրբ գառներից, որոնց իւառնուեցի, որպէսզի քո վարակից դուրս գալիս չար գազանը նորից չպատառոտի ինձ։ Տէ՛ր, մի՛ նայիր իմ բազմամեայ ամբարշտութիւններին, որպէսզի ճշմարիտ կեանքիդ չմոլորուեմ և կրկին անգամ չատերին կորստեան ճանապարհը սովորեցնեմ, այլ որոնց մահուան պատճառ եղայ. նրանց համար էլ կեանքի պատճառ դառնամ։ Սատանան, որ ինձնով խրոխտացած պարծենում էր այս բազմաթիւ կորստեան մատնուածների մէջ, թող ինձնով գլխիկոր ամաչի իր աշակերտների մէջ»։

Այս ասելուց յետոյ հէնց նրան էլ թոյլ տուին աղօթքը կատարել, և նրա հետ միասին հանգստացան մինչեւ երրորդ պահը, և այդպէս խաղաղ քնի մէջ մնացին բոլորը մինչեւ առաւօտեան ժամը։

Իսկ նա ոտքերի վրայ կանգնած՝ չքնեց, այլ ձեռները վերեւ բարձրացրած՝ աղօթում էր։ Եւ մինչդեռ աչքերը երդիքին սեւեռած նայում էր երկինք, յանկարծ տունը լուսով լցուեց. և նրան մի լուսեղէն սանդուխք երեւաց, որ դրուած էր երկրից մինչեւ երկինք. և գունդ-գունդ զօրքեր վեր էին բարձրանում. և բոլորի տեսքը նոր էր ու չքնաղ, ահաւոր ու սքանչելի, ինչպէս հրեշտակի տեսքը։ Տեսած բոլոր գնդերի թիւն ու համարն էլ մտքում ունէր. կար, որ հազար էր, կար, որ երեսուն և վեց էր, կար, որ երկու հարիւր և տասերեք էր[172]։ Եւ այնքան չատ մօտեցաւ, որ մինչեւ անգամ ճանաչեց նրանցից երեքին՝ Վարդանին, Արտակին և Յորէնին։ Նրանք իրենց ձեռներին իննպատակ ունէին. միմեանց հետ խօսում էին և ասում. «Ահա եկաւ-հասաւ ժամանակը, որ սրանք էլ խառնուեն մեր գնդին. որովհետեւ մենք էլ հէնց սրանց էինք սպասում և սրանց համար ենք բերել առհասատչեայ նուէրը։ Իսկ որին չէինք էլ սպասում, եկաւ-երեւցաւ և խառնուեց, և դարձաւ ինչպէս Քրիստոսի ընտրեալներից մէկը»։

Այս չքնաղ տեսիլը երեք անգամ երեւաց երանելի մարդուն, ինից, զարթեցրեց սրբերին և ամբողջ տեսիլը կարգով պատմեց նրանց։

Իսկ նրանք վեր կացան, աղօթքի կանգնեցին և ասում էին. «Տէ՛ր տէր մեր, ի՞նչ սքանչելի է քո անունը ամբողջ երկրի վրայ. քո մեծ վայելչութիւնը բարձրացաւ երկնքից էլ վեր. ծծկեր մանուկների բերանից օրհնութիւն հաստատեցիր, որ ոչնչանայ թշնամին ու հակառակորդը»[173]։ Որովհետեւ սրանից յետոյ այլեւս չպէտք է ասել՝ «կը տեսնեմ երկինքը, որ քո մատների գործն է», այլ թէ՝ քեզ կը տեսնեմ երկնքի ու երկրի տէր. ինչպէս որ այսօր իսկ երեւացիր քո սուրբ զօրականների միջոցով այս հեռաւոր օտարին, որ իր կեանքի ակնկալութիւնից ձեռք էր քաշել։

«Ահա դու, Տէ՛ր, քո ողորմութեամբ պսակեցիր սիրելիներիդ, և քո գթասրտութեամբ եւար այս կորածին փնտռելու, զարձրիր և խառնեցիր քո ընտրեալների դասին։ Սա ո՛չ միայն երկինքը տեսաւ, որ քո մատների գործն է, այլ տեսաւ երկինքըն ու նրա բնակիչներին, և մինչդեռ այս երկրի վրայ է, խառնուեց քո բիւրաւոր հրեշտակների գնդերին։ Տեսաւ նաեւ նահատակուած արդարների հոգիները, տեսաւ նաև անեղեւոյթ պատրաստութիւնների փառքի նմանութիւնը, տեսաւ նրանց ձեռքին նաև անկասկածելի գրաւականը[174], որ պատրաստուած պահուում է ճարտարապետի ձեռքում։ Երանի՛ սրան այս սուրբ տեսիլքի համար, և երանի՛ է մեզ, որ սա մօտեցաւ մեզ. որովհետեւ սրա միջոցով հաստատապէս իմացանք, թէ քանի որ սրան այսպիսի սքանչելիքներ են յայտնուում, քո անապատ բարութիւններից սա մեծ բաժին ընդունեց։ Քո պարգեւներն անապատ են, Տէ՛ր, և առանց խնդրելու տալիս ես՝ ում կամենում ես՝ քո յորդաբուխ և աննախանձ առատութեամբ։ Եւ քանի որ չխնդրողներին էլ չես մերժում այն, բա՛ց մեզ, Տէ՛ր, քո ողորմութեան դուռը, որ մեր մանկութիւնից քո սրբերի բարեմասնութեան ցանկացող ենք եղել։ Քո այս նորագիւտ ձեռակերտին բարեխօս ենք դարձնում մեր անձերի համար. մեր հաւատի նաւը թող չընկղմուի մեղքերի ալեկոծուած ծովի մէջ»։

Եւ այսպէս երկար աղօթք անելով՝ յորդ և առատ արտասուք էին թափում իրենց անձերի համար։ Գթութիւն էին հայցում

զարերարից, որ լսելի լինի նրանց պաղատանքների ձայնը և հաստատուն մնան իրենց վիշտ ու նեղութիւնների մէջ, որպէսզի չզրկուեն այն ցանկալի պսակներից, որ ունէին սրբերն իրենց ձեռքին, ինչպէս և ազդարարուեց նրանց Սուրբ Հոգու կողմից, որովհետեւ մօտեցել էր նրանց կանչուելու ժամանակը, որ գնան և աներկիւղ հանպատրաստ այն կասկածելի ակնկալութիւնից, որին դիմանում էին մեծ տառապանքներով, որպէսզի փոքրիկ առհաւատչեայով հասնեն երկնաւոր մեծութեանը, որին ցանկացող էին ի վաղուց հետէ։

Եւ որովհետեւ հէնց ինքը մոգպետը այն աշխարհի իշխանն էր և նրան էին յանձնուած այն քաղաքի կալանաւորները, ուստի և առաւօտեան համարձակ կերպով հանեց-տարաւ նրանց իր ապարանքը, լուաց ու սրբեց նրանց բանտի աղտեղութիւններից, վերցնում էր սրբերի լուացաջուրը և ածում իր մարմնի վրայ։ Իր տան մէջ աւազան սարքեց և նրանցից սուրբ մկրտութիւն ընդունեց, հաղորդուեց մեր տէր Յիսուս Քրիստոսի կենդանարար մարմնին և քաւիչ արեանը։ Բարձր ձայնով աղաղակում էր և ասում. «Այս մկրտութիւնը թող իմ մեղքերի լուացումն լինի ինձ համար, և Սուրբ Հոգով վերստին ծնունդ ու նորոգութիւն, և անմահ խորհրդի ճաշակումը երկնաւոր որդեգրութեան ժառանգ դարձնի ինձ»։ Նրանց առջեւ մարմնաւոր կերակրի սեղան էլ բաց արեց, և նրանց միխիթարութեան բաժակ մատուցեց, և նրանց հետ միացաւ օրհնուած հացն (ուտելուն)։

Բայց թէպէտեւ ինքը հասաւ երկնաւոր բարիքներին և երկիւղ չուներ մարդկային հարուածներից, սակայն սաստիկ կասկածի մէջ էր հարազատների վերաբերմամբ, որ չլինի թէ մատնուեն իբրեւ արքունի գործերի մէջ վնասակար մարդիկ։ Այդ պատճառով գիշերով ծածուկ կանչեց նաեւ այն նախարարներին, որոնք կալանաւորուած պահուում էին նոյն քաղաքում, և մեծամեծ ծախսեր արեց։ Եւ բոլորը մեծ ուրախութեան մէջ էին այն հրաշքների համար, որ երեւաց նրանց։ Ամենեւին չէին յիշում, թէ որեւէ նեղութիւններ էին անցել իրենց գլխով։

Բայց սեղան նստելու ժամանակ սրբերը մտները բերին մի երէց[175], որ նրանց հետ միասին սուրբ կապանքների մէջ էր. որովհետեւ նա չինական մարդկանց մէջ էր ապրել և աւելի

տգէտ էր Սուրբ Գրքի մխիթարութեան կողմից։ Նրան հրամայեցին նստել սեղանի գլխին. պատասխան տուեց երանելին և ասաց. «Այդ ի՞նչ բան է, որ դուք գործում էք, և կամ ինչո՞ւ էք ինձնից թաքցնում ձեր գաղտնի խորհուրդները։ Ես ձեր կրտսերներից էլ աւելի նուաստ եմ և ձեր աշակերտներից փոքրերից էլ աւելի տգէտ. ի՛նչպէս կարող եմ դիմանալ այդ բանին, Հէնց այս էլ ինձ համար մեծ բան է, որ այսօր հաղորդակից եմ ձեր սուրբ կապանքներին։ Եթէ ինձ արժանի էք համարում ձեր սեղանին, ամէն մէկդ ձեր տեղը բռնեցէք սեղանի չուրջը և ինձ էլ հրամայեցէք իմ տեղը նստել»։ Եւ մեծ եպիսկոպոս Յովսէփը մի-ւս բոլոր սրբերի հետ միաբան հարկադրեցին և բոլորից վերեւ բազմեցրին նրան։

Եւ երբ բոլորը բազմեցին սեղանի չուրջը և ուրախ-զուարթ ճաշակեցին կերակուրը, ոտքի կանգնեց սուրբ Յովսէփը և սկսեց ուրախութեան աղօթք մատուցանել և ասել այսպէս.

«Բոլորդ էլ ուրախ եղէք Քրիստոսով. որովհետեւ վաղն այս ժամին արդէն մոռացած կը լինենք այն բոլոր նեղութիւնները ու չարչարանքները, որ կրեցինք։ Եւ մեր այս փոքրիկ աշխատութեան փոխարէն բազմապատիկ հանգիստ ենք ընդունելու և այս բանտի խաւարային ղնդանի փոխարէն մտնելու ենք երկնքի լուսաւոր քաղաքը, որպիսի քաղաքի քաղաքապետը ինքը Քրիստոսն է, ինչպէս և այն ասպարէզի հանդիսապետը, որի մէջ նախ ինքն առաքինացաւ՝ յաղթութեան նշան ցոյց տալով։ Եւ այսօր նոյն Տէրն է, որ յաջողում է մեր գործը՝ նոյն նշանն ընդունելով մեր անձերի փրկութեան և մեծափառ սուրբ եկեղեցու պարծանքի համար։ Եւ ինչպէս որ դուք այս եղբօրը տեսաք մեր սեղանի գլխին, այնպէս էլ վաղը ամենից առաջ սա է ընդունելու պսակն իր նահատակութեան միջոցով։ Որովհետեւ ահաւասիկ եկել-հասել և մօտեցել է մեզ մեր կեանքի թշնամին եւ Քրիստոսի ծառաներիս սուրբ չարչարանքները պսակողը»։

Երբ այս ասաց, քաջալերման խօսքեր լսեց նրանից176, որով բոլորն էլ չատ մխիթարուեցին։

Նա ասաց. «Ձեր սուրբ աղօթքներով թո՛ղ այդպէս անի ինձ Քրիստոս, և քո ասածի նման կատարի իմ կեանքի վախճանն այս աշխարհից։ Եւ ահա քո ասելուն պէս՝ ազդում եղաւ հոգուս և ես յիշեցի Քրիստոսի մարդասիրութիւնը, որի այս աշխարհը գալն էլ հէնց մեր մեղքերի համար եղաւ։ Թո՛ղ գթայ ինձ, ինչ-

պէս աւազակին խաչուելու ժամանակ. ինչպէս որ նրանով փակուած դրախտի դռները բաց արեց, և առաջացաւ կարապետ եղաւ նրանց համար, ովքեր նոյն տեղն էին վերադառնալու ուրախութեան համար, թո՛ղ Տէր Յիսուս Քրիստոսն այսօր ինձ էլ ձեր մեծաչուք գնդին սպասաւոր դարձնի։

«Ահաւասիկ մի ապաշխարող մեղաւորի համար հրեշտակների ուրախութիւնն անվերջ է լինում երկնքում, որովհետեւ հէնց գիտեն իրենց տիրոջ կամքը։ Որովհետեւ նա եկաւ փրկուելու մի կորած ոչխար, այդ պատճառով էլ նրանք խնդակցում են մի ապաշխարողի համար։ Թերեւս ինձ համար էր եկել Հայոց մեծ զօրավարն իր բազմաթիւ սուրբ ընկերակիցներով. պատկը ձե՛զ համար էր բերել, իսկ ուրախութեան աւետիսը առհասարակ բոլորին էր տալիս։ Եւ աւելի եւս զարմացել էին ինձ վրայ, որովհետեւ իրենց կենդանի եղած ժամանակ ինձ չէին ճանաչում, ահա իրենց սուրբ մահուան ժամանակ կամենան, որ ես էլ բաժին ընդունեմ երանելիների հետ։

«Աղաչում եմ ձեզ, ի՛մ տէրեր ու հայրեր, աղօթք արէք անարժանիս համար, որպէսզի արժանի լինիմ հասնելու այն մեծ աւետիքին, որ ձեր անսուտ բերանով ասուեց, որպէսզի ես լսեմ։ Այժմ չտապում եմ տեսնելու այն օրը, և այդ օրուայ մէջ այն ժամը, որ եկել-հասել է մեզ վրայ։

«Ե՞րբ պիտի լինի, որ դուրս գամ այս թանձր ու դանդաղ ձանձրալի մարմնիցս. ե՞րբ պիտի լինի, որ տեսնեմ քեզ, Տէր Յիսուս, ե՞րբ պիտի լինի, որ իմ տգիտութիւնը կատարեալ գիտութեան հասնի։ Օգնի՛ր ինձ, Տէր, օգնիր ինձ և ամենազօր աջդ մեկնի՛ր օգնելու համար. որպէսզի իմ խոսքերի խոստման համաձայն՝ գործն էլ իրօք կատարուի ինձ վրայ, և ինձնով, մեղաւորով, փառաւորուի մեր տէր Յիսուս Քրիստոսի անունը»։

Երբ երանելին այս ասաց, վեր կացան այն սեղանից, գոհութիւն յայտնեցին՝ ասելով. «Փա՛ռք քեզ, Տէ՛ր, փա՛ռք քեզ, թագաւո՛ր, որ մեզ ուրախութեան կերակուր տուիր. լցրո՛ւ մեզ սուրբ հոգով, որպէսզի հաճելի լինենք քո առաջ և չամաչենք, որովհետեւ դու բոլորին հատուցանում ես իրենց գործերի համեմատ»։

Նոյն ժամին նրանք մեծ խորհրդակցութիւն ունեցան, թէ ի՛նչ եղանակով կարողանան փրկել մոգպետին, որպէսզի ար-

քունքում չլսեն և (թագաւորը) կրակի պէս չբորբոքուի մնացածների վրայ, երբ այդ միջոցին չկարողացան (խորհուրդը) վերջացնել, միաբանութեամբ աղօթք արին և այն հաւատացեալ մարդու կեանքը Աստծու ձեռքը յանձնեցին։

Իսկ նախարարները սրբերից բաժանուեցին յորդառատ արտասուքներով, և ողբալից ուրախութեամբ նրանց ոտներն ընկած՝ սաստիկ աղաչում–պաղատում էին, որ սուրբ հոգուն յանձնեն նրանց, «Որպէսզի, ասում են, մեզանից ոչ ոք չթուլանայ և հաւարակաց միաբանութիւնից դուրս գալով՝ չարաբարոյ գազանին կերակուր դառնայ»։

Իսկ երանելիները միաձայն քաջալերում էին նրանց և ասում. «Եղբայրնե՛ր, զօրացե՛ք տիրոջով. մխիթարուեցե՛ք Աստծու մարդասիրութեամբ, որ ձեզ որբ չի թողնում, և չի հեռացընում մեզնից իր ողորմութիւնը Քրիստոսի հաւատով. չնորհիւ այն բազմաթիւ բարեխօսների, որ ունենք նրա մօտ, ձեր վառած կանթեղները չեն հանգչի, և չի ուրախանայ ձեր կեանքի խաւարասէր թշնամին։ Նոյն Տէրն է, որ զօրացրեց առաջին նահատակներին, խառնելով նրանց իր հրեշտակների գնդերի մէջ. նրանց սուրբ հոգիները և արդարների ամբողջ դասը կը հասնեն ձեզ օգնելու համբերութեան մէջ, որպէսզի նրանց հետ միասին արժանի լինէք նրանց պսակներին»։

Այս էին խօսում նրանց հետ և ամբողջ գիշերը լուսացնում աղմոսներով. իսկ առաւօտեան ժամին բոլորն ասացին. «Տէ՛ր, քո ողորմութիւնը ծագի՛ր նրանց վրայ, ովքեր ճանաչում են քեզ, քո արդարութիւնը՝ ովքեր ուղիղ են սրտով։ Ամբարտաւանների ոտքը թո՛ղ մեզ վրայ չգայ, և մեղաւորների ձեռքերը թո՛ղ չդողացնեն մեզ։ Այնտեղ կործանուեն բոլորը, ովքեր անօրէնութիւն են գործում. մերժուեցին, և այլեւս չկարողանան հաստատուել»[177]։

Այդ միջոցին դահիճները չտապով հասան բանտի դուռը, ներս մտան և տեսան, որ նա, ով առաջ մոգպետ էր և հէնց նրան էր յանձնուած պահել նրանց, նստած էր նրանց մէջ և լսում էր նրանց. նոյնիսկ քաջալերում էլ էր նրանց, որ մահից չվախենան։ Երբ այս մեծ հրաշքը տեսան դահիճները, սաստիկ զարմացան այդ բանի վրայ, բայց չէին վստահանում որեւէ բան հարցնել նրան. սակայն գնացին և պատմեցին Դենչապուհին, որին յանձնարարուած էր սրբերին չարչարելը։

Իսկ սա, երբ լսեց արքունի դահլիճներից, մեծ երկիւղի մէջ ընկաւ, մտածելով թէ գուցէ անձամբ իրեն էլ գործի մէջ խառնեն, մանաւանդ որ շատ լաւ ծանօթ էր այն մարդուն։ Հրամայեց բանտից հանել ամենքին իրենց կապանքներով և այն քաղաքից տասներկու պարսկական հրասախ178 հեռացրեց, եւ թաքուն խօսեց մոգպետի հետ, թէ ի՞նչ է նրա զառանցանքների պատճառը։ Պատասխան տուեց այն մարդը և ասաց. «Թաքուն մի՛ խօսիր ինձ հետ և լուսաւոր մտքերը մի՛ լսիր խաւարի մէջ, որովհետեւ այժմ իմ աչքերը բացուեցին, քանի որ տեսայ երկնաւոր լոյսը։ Եթէ ուզում ես կեանքի խորհրդակից լինել, դէմ յանդիման հարցրու ինձ և կը պատմեմ քեզ, որովհետեւ տեսայ Աստծու մեծամեծ գործերը»։

Երբ նա լսեց նրանից ամէն բան և ստուգեց էլ նրա միաբանութեան վերաբերմամբ, որ չի բաժանուի սրբերի համերաշխութիւնից, չհամարձակուեց ձեռք բարձրացնել նրա վրայ, թէպէտ և արքունիքից հրաման ունէր։ Այլ չտապեց, ինքն անձամբ գնաց թագաւորի մօտ և թաքուն պատմեց նրան այն ամէնը, ինչ և ինչպէս լսել էր նրանից։

Պատասխան տուեց թագաւորը և ասաց Դենչապուհին. «Ոչ ոք ամենեւին չլսի քեզանից այդ բանը, մանաւանդ այն մեծ տեսիլքի մասին, որ երեւացել է նրան, որպէսզի տգէտ մարդիկ երկմտելով՝ չբաժանուեն մեր հաստատուն կրօնից։ Մինչ մենք ուզում էինք ուրիշներին հնազանդեցնել, որ թերեւս իրենց հոգիները գտնեն, երբ մենք չկարողացանք նրանց ոչինչ անել, մեր կրօնի վարդապետները չեղուեցին-գնացին նրանց մոլորութեան յետեւից»։

«Նաեւ մեզ համար ամենից վատն այն է, որ մի չնչին մարդ չէ, որ չեղուել է դէպի նրանց կրօնը, այլ մի համակղէն մարդ, այս ամբողջ վերին աշխարհում179 երեւելի։ Եթէ պայքարի մտնենք նրա հետ, նա աւելի տեղեակ է, քան մեր աշխարհի բոլոր վարդապետները. գուցէ հիմքից խարխլելով քանդի մեր կրօնը, եւ եթէ նրան միւս չարագործների հետ դատենք, այդ ձեւով էլ կը հռչակուի նրա քրիստոնէութեան համբաւը, և մեծ անարգանք կը կրի մեր հաւատը։ Եթէ մինչեւ իսկ սրով սպանուի, մեր բանակում բազմաթիւ քրիստոնեաներ կան, նրա ոսկրները կը ցրուեն–կը տարածեն ամբողջ երկրով մէկ։ Ինչ

էր մեր անարգանքը այն ամէն մարդկանց մօտ, ուր մեծարում-պատուում էին այդ նածրացինների ոսկրները. իսկ եթէ մոգերի և մոգպետների ոսկրներն էլ նոյն պատիւն ստանան, հէնց մենք մեր ձեռքով քանդած կը լինենք մեր կրօնը։

«Իսկ այժմ ես քեզ երդուեցնում եմ անմահ աստուածներով. ամենից առաջ՝ այդ ժանտ ծերունուն կանչի՛ր քո առաջ. եթէ սիրով համաձայնի և ղղջալով հրաժարուի նրանց կախարդութիւններից, սիրով մեծարիր նրան՝ պատուելով ինչպէս առաջ. և թող ոչ ոք ամենևին չիմանայ նրա նախատինքը, իսկ եթէ չհամաձայնի և չկամենայ ականջ դնել իմ խօսքերին, նրա վրայ բազմաթիւ մեղադրանքներ բարդիր այն երկրի կողմից, որպէսզի վնասակար համարուի արքունի գործերի մէջ. հրապարակով հարցուփորձ արա և աքսորիր Կուբանից ու Մակուբանից180 էլ այն կողմը. այնտեղ թող նրան գցեն մի վիրապի մէջ և թշուառութեան մէջ մեռնի։ Իսկ այլակրօնների կեանքը չուտով կարճիր այս աշխարհից, որպէսզի մեր աշխարհի կրօնը չսասանեցնեն։ Որովհետև եթէ ճարտար մոգպետին այնպէս չուտով իրենց աչակերտ դարձրին, տգէտ մարդիկ ի՞նչպէս կարող են նրանց ստապատիր խաբէութեանը դէմ կանգնել»։

Արդ, Դենչապուհը ելաւ տեղից նստեց բանակից դուրս, ինչպէս ասացինք, տասներկու հրասախ հեռու։ Հարցրեց մոգպետին և ասաց. «Ձո վերաբերմամբ իրաւունք ստացայ ո՛չ միայն խօսքերով հարցնել, այլեւ ամէն տեսակ տանջանքներ տալով։ Քանի դեռ քեզ ձեռք չեմ տուել, ընդունի՛ր մեծարանքներն ու արհամարհի՛ր անարգանքները և խնայի՛ր քո պատուական ծերութիւնը։ Հեռացի՛ր քրիստոնէութիւնից, որ իբենէ չունէիր և նորից դարձի՛ր մոգութեան, ինչպէս որ չատերի համար վարդապետ էիր»։

Պատասխան տուեց երանելին և ասաց. «Աղաչում եմ քեզ, տէ՛ր, որ առաջ իմ աչքում հարազատ եղբայր էիր համարուում, իսկ այսօր՝ կատարեալ թշնամի. մի՛ գթա ինձ առաջուայ սիրուդ համեմատ, այլ կատարի՛ր ինձ վրայ ձեր չար թագաւորի կամքը. և ինչպէս որ իրաւունք ես ստացել իմ վերաբերմամբ՝ այնպէս էլ դատի՛ր ինձ»։

Այն ժամանակ, երբ Դենչապուհը տեսաւ, որ ոչ մի բանի տեղ չդրեց թագաւորի սպառնալիքները, և ոչ էլ իր յորդորներին ուշք դարձրեց, և աւելի կամենում էր, որ յայտնի խօսուն-

և ոչ թէ ծածուկ, նրա վերաբերմամբ վարուեց թագաւորի պատուէրի համաձայն։ Գաղտագողի քշել տրուեց հեռաւոր օտարութիւն. ինչպէս որ սովորել էր իր ուսուցչից, այնպէս էլ արեց։

Եւ (թագաւորը) հրամայեց Դենչապուհին աւագ գործակալներից երկու ընկեր էլ վերցնել իրեն օգնական — Ջնիկանին, որ արքունի մարզպետ էր, և Մովան հանդերձապետին՝ մովպետան մովպետի կողմից։

Արդ, այս երեքը, իրենց սպասաւորների հետ միասին, վերցրին սրբերին այն անապատից և նոյն գիշերը տարան նրանց նոյնչափ հեռու մի աւելի դժնդակ տեղ։ Եւ բանակի միջից ոչ ոքի չթոյլին տեսնելու նրանց, ո՛չ հայերից և ո՛չ էլ ուրիշ քրիստոնեաններից, և ո՛չ էլ երբեք արտաքին հեթանոսներից։ Եւ այն քաղաքում կալանաւորների վրայ նշանակուած սպասաւորներին հրամայեցին, որ նրանց զգուշութեամբ պահեն, որպէսզի ոչ ոք չիմանայ նրանց հետքը, որով տանելու են մահուան տեղը. ո՛չ նրանք և ո՛չ էլ ուրիշ որեւէ մարդ։

Բայց արքունի զօրքից մի մարդ, Յուժիկ անունով, որ ծածուկ քրիստոնեայ էր, և որին վիճակուած էր դահիճների խմբում լինելու, և տանջական գործիքներով սպասաւորում էր օրապահներին, կէս գիշերին եկաւ-մտաւ և խառնուեց նախատարների խմբերին։ Առաջին խումբը կարծում էր, թէ նա մի-ջին խմբից է, միջին խումբը կարծում էր, թէ երրորդ խմբից է, իսկ երեքն էլ նրան միւս խմբից էին համարում. և նրանցից ոչ ոք չհարցրեց. թէ «Դու ո՞վ ես մեզ հետ», ո՛չ տէրերից և ո՛չ էլ սպասաւորներից։

Երբ հասան մի անապատ տեղ, որ բոլորովին զուրկ էր բնականութիւնից. և այնպէս դժնեայ ապառաժ էր, որ նրանց համար նոյնիսկ նստելու տեղ չգտնուեց այնտեղ, երեք նախատարներն իջան մի քիչ աւելի հեռու տեղ և իրենց դահիճներին հրամայեցին կապել նրանց ձեռներն ու ոտները։ Երկար պարաններ գցեցին նրանց ոտներին և երկու-երկու լծուեցին ու սկսեցին քաշել։ Եւ այնպէս ձգեցին ու ճղճղոտեցին ապառաժ տեղերով քաշ տալով, որ ոչ մի ողջ տեղ չմնաց երանելիների մարմինների վրայ։ Եւ ապա կապերը բաց արին ու մի տեղ բերին։

Նրանց մի տեսակ այնպէս էր թւում, թէ կակղացրին նրանց խստութիւնը և հնազանդեցրին նրանց բիրտ ապստամբութիւ-

նը, և հիմա ինչ էլ ասենք, մեր խօսքերին կը լսեն և թագաւորի կամքը կը կատարեն և անտանելի տանջանքներից կ'ազատուենք։ Բայց այն չկարողացան լաւ հասկանալ, որ նրանց քաջ զինուորների նման ոգեւորեցին, կրթութեան հրահանգների մէջ վարժեցրին նրանց, և նրանց սովորեցրին ինչպէս վայրենի արիւնարբու գազանների։ Եւ եթէ առաջուց մի քիչ կասկած ունէին, նայելով իրենց մարմինների չարաչար վէրքերին՝ նախկին վախը մի կողմ նետեցին։ Հարբած ու անզգայացած մարդու նման սկսեցին միմեանցից գերազանցել պատասխաններ տալու մէջ, և չտապում էին՝ ինչպէս ծարաւը դէպի աղբիւրն է վազում, թէ ո՛վ աւելի շուտ կը թափի իր արիւնը երկրի վրայ։

Մինչդեռ սրբերն այս պատրաստութեան մէջ էին, խօսել սկսեց նրանց հետ Դենչապուհը և ասաց. «Թագաւորն ինձ ուղարկեց ձեզ մօտ. Հայոց աշխարհի ամբողջ աւերածութիւնը, ասում է, և զօրքերի կոտորածը, որ տեղի ունեցաւ, ձեր պատճառով եղաւ այդ ամբողջ վնասը. և չատ նախարարներ, որ այժմ կապանքների մէջ չարչարւում են, ձեր յամառութեան պատճառով եղաւ այդ բոլորը։ Բայց հիմա էլ, եթէ ուզում էք լսել ինձ, ասում եմ ձեզ. ինչպէս որ բոլոր չարչարանքների և մահուան պատճառ եղաք, այսօր էլ պատճառ եղէք ձեր կեանքի։ Կապանքների մէջ եղած նախարարներին արձակելու իշխանութիւնն էլ ձեր ձեռին է. և ձեր աշխարհի աւերը ձեզնով կը չինուի, և չատերը, որ գերի են տարուած՝ կը վերադառնան։

«Ահա դուք ձեր աչքերով տեսաք այսօր, թէ ի՛նչպիսի մի տոհմիկ մարդ էր, որին թագաւորն ինքն անձամբ ճանաչում էր մեր կրօնը չատ լաւ գիտենալու պատճառով, և կատարեալ էր մեր հաւատի մէջ և բոլոր մեծամեծներին սիրելի, և գրեթէ այս ամբողջ երկիրը կախուած էր նրանից, բայց որովհետեւ անարգեց դենիմազդեզնը և մոլորուեց ձեր տխմար գիտութեան կողմը, թագաւորն ամենեւին չխնայեց նրա մեծ պատուին, այլ ինչպէս մի անտուն-անտէր գերի նրան աքսորեցի այնպիսի հեռաւոր օտարութիւն, որ չի էլ կարող գնալ–հասնել իր պատժավայրը։

«Արդ, եթէ նոյնիսկ նրա ազգակցութեանը չխնայեց պատուական կրօնի պատճառով, ո՛րքան աւելի չի խնայի ձեզ օտարերկրացիներիդ, որ նոյնիսկ մահապարտ էլ էք արքունի

գործերի վերաբերմամբ։ Եւ ձեզ համար ապրելու ուրիշ ոչ մի ճար չկայ, բացի այն, որ երկրպագութիւն տաք արեգակին և կատարէք թագաւորի կամքը, ինչպէս որ սովորեցրել է մեզ մեծ Զրադաշտը։ Եթէ այդ անէք, ո՛չ միայն կապանքներից կ'ազատուէք և մահից կը փրկուէք, այլեւ մեծամեծ պարգեւներով ձեր աշխարհը կ'ուղարկուէք»։

Առաջ անցաւ Ղեւոնդ երէցը և թարգման դարձրեց Սահակ եպիսկոպոսին. «Ի՞նչպէս հնազանդուենք քո երկդիմի հրամաններին, ասաց նա. ահա դու երկրպագութիւնդ նախ արեգակին տուիր, իսկ երկրպագութեան կատարումը թագաւորի կամքին վերագրեցիր. մեծարեցիր արեգակին՝ նախ տալով նրա անունը, իսկ թագաւորին արեգակից աւելի մեծացրիք. և ցոյց տուիր, որ արեգակն առանց իր կամքի է սպասաւորում արարածներին, իսկ թագաւորն իր ազատ կամքով ում կամենում է՝ աստուածացնում է և ում կամենում է՝ ծառայեցնում է. և ինքը դեռ վերահասու չի եղել ճշմարտութեանը։ Մեզ հետ մի՛ խօսի ինչպէս երեխաների հետ, որովհետեւ հասակով կատարեալ մարդիկ ենք և գիտութեանն էլ անտեղեակ չենք։ Որտեղից դու սկսեցիր, հէնց այնտեղից էլ քեզ պատասխան կը տամ։

«Մեր երկրի աւերածութեան և արքունի զօրքերի կոտորածի պատճառ չէ՞ որ մե՛զ համարեցիր. մեր կրօնն այդպէս չէ սովորեցնում մեզ. այլ պատուիրում է մեծապէս պատուել երկրաւոր թագաւորներին, և նրանց սիրել մեր բոլոր ուժով, ոչ իբրեւ մի չնչին մարդու՝ մարդկանց միջից, այլ ծառայել ինչպէս ճշմարիտ Աստծուն. և եթէ զրկանքներ կրենք նրանց կողմից, երկրաւորիս փոխարէն մեզ խոստացաւ երկնքի արքայութիւնը։ Եւ ո՛չ միայն իբրեւ հպատակ պարտաւոր ենք ծառայել նրանց, այլեւ մեր անձերը մահու չափ դնել թագաւորի սիրոյ համար։ Եւ ինչպէս որ երկրիս վրայ իրաւունք չունենք նրանց ուրիշ տիրոջ հետ փոխելու, նոյնպէս և երկնքում իրաւունք չունենք ուրիշի հետ փոխելու մեր ճշմարիտ Աստծուն, որից բացի ուրիշ Աստուած չկայ։

«Բայց քեզ մի բան ասեմ, որին ինքդ էլ մի քիչ տեղեակ ես։ Քաջ զօրականներից ո՞րը յետեւից կը մտնի պատերազմի մէջ. և եթէ այդպիսի բան անի, նա ո՛չ թէ քաջ կը կոչուի, այլ շատ վախկոտ։ Կամ թէ՝ իմաստուն վաճառականներից ո՞վ պատուական մարգարիտը կը փոխանակի անպէտք ուլունքի հետ,

բացի նրանցից, ովքեր յիմարացած են տգիտութեամբ, ինչպէս և ձեր մոլորութեան առաջնորդները։

«Մենակ ես գտել մեզ մեր բազմաթիւ առաքինիներից և ուզում եմ խարդախութեամբ քանդել մեր հաստատուն մտադրութիւնները. մենք մենակ չենք, ինչպէս որ դու ես կարծում. չկայ ոչ մի դատարկ տեղ, որտեղ չլինի մեր թագաւոր Քրիստոսը. միայն քեզ և քո չարադեւ իշխանի նմանները են, որ զուրկ են նրանից, որ մերժուած են նրա կողմից։ Որովհետև մեր աշխարհի կինուորներն էլ, որոնք մեր միջոցով աշակերտել էին Քրիստոսին, ոտնահարեցին ձեր թագաւորի ահեղ հրամանները, և մեծամեծ պարգեւները ոչ մի բանի տեղ չդրին. նրանց հայրենական իշխանութիւնը կողոպտուեց, բայց նրանք չխնայեցին իրենց կանանց ու որդիներին և այս աշխարհի մարմնաւոր կեանքի գանձերը։

«Մինչեւ անգամ իրենց արիւնը մտքները չէին բերում Քրիստոսի սիրոյ համար, այլ արեգակի երկրպագուներին, որոնք ձեր ուսուցիչներն էին, չարաչար հարուածներով սպանեցին և մեծամեծ չարիքներ հասցրին ձեր զօրքին, և նրանցից շատերն ընկան նոյն պատերազմի մէջ, ոմանք տեսակ-տեսակ փորձութիւնների մատնուեցին, ուրիշները հեռաւոր օտարութիւն քշուեցին և է՛լ աւելի շատերը գերի տարուեցին։ Նրանք բոլորը մեզանից առաջ մտան Աստծու արքայութիւնը և խառնուած են վերին հրեշտակների գնդերին և ցնծում են պատրաստուած ուրախութիւնների մէջ, որին հասնելով խառնուեց նաև այն երանելի մարդը, որի համար ասում եմ, թէ աքսոր քշեցիր։ Երանի եմ տալիս նրան և երանի այն երկրին, որի միջով նա պիտի անցնի և այն տեղին, որտեղ նա պիտի վախճանուի. նա ո՛չ միայն ձեր արքունիքից է գերազանցում իր պատուականութեամբ, այլեւ այդ երկնային լուսաւորներից, որոնց դուք երկրպագում էք»։

Պատասխան տուեց Մովսէս հանդերձապետը և ասաց նրանց. «Աստուածները բարերար են և համբերութեամբ հոգում են մարդկային ազգի համար, որպէսզի հասկանան ու ճանաչեն իրենց փոքրիկութիւնն ու նրանց մեծութիւնը և վայելեն այս աշխարհի պարգեւները, որոնք յանձնուած են թագաւորի իրաւունքին, և նրանց բերանից են դուրս գալիս կեանքի ու մահ-

ուան հրամաններըւ Դուք իրաւունք չունիք այդպէս ընդդիմանալու նրանց և յանձն չառնելու արեգակին երկրպագել, որ իր ճառագայթներով լուսաւորում է ամբողջ տիեզերքը և իր ջերմութեամբ հասցնում է մարդկանց և անասունների կերակուրը· և իր ընդհանուրին բաչխող առատութեան և անաչառ մատակարարութեան պատճառով կոչուեց Միհր աստուած, որովհետեւ նրա մէջ չկայ նենգութիւն և անիմաստութիւն։ Ուստի և մենք էլ երկայնամիտ ենք լինում ձեր տգիտութեան վերաբերմամբ, որովհետեւ գիշակեր և արիւնարբու գազանների նման մարդատեաց չենք։ Խնայեցէ՛ք ձեր անձերին և մեզ ակամայ մի՛ խառնէք ձեր արիւնի մէջ։ Մի կողմ թողէք ձեր նախկին յանցանքը և առաջիկայ գործերդ ուղղեցէք, որպէսզի ձեր պատճառով ուրիշներն էլ ողորմութեան արժանան մեծ թագաւորի կողմից»։

Սրան Սահակ եպիսկոպոսը պատասխան տուեց և ասաց. «Ինչպէս մի ուսեալ և խիստ կրթուած մարդ՝ գեղեցկապէս հոգում ես աչխարհի չինութեան և թագաւորի փառքի համար· բայց այս բանը չատ տգիտաբար ես սովորեցնում, որ բազմաթիւ աստուածներ ես դաւանում և բոլորի մասին չես ասում, թէ մի կամք ունեն։ Եթէ վեհագոյնները հակամարտ են միմեանց, մենք, նրանցից աւելի խոնարհներս, ի՞նչպէս կարող ենք համաձայնել քո խօսքերին։ Միացրո՛ւ ջուրն ու կրակը, որպէսզի նրանցից խաղաղութիւն սովորենք· արեգակին տուն կանչիր որպէս կրակ, և եթէ նրա գալը հնարաւոր չէ, որպէսզի աչխարհը խաւարի մէջ չմնայ, դրա՛ն ուղարկիր նրա մօտ, որպէսզի նրանից անկարօտութիւն սովորի։

«Եւ եթէ քո աստուածների բնութիւնը մէկ է, թող միանալով հաւասարուեն միմեանց. կրակն անկերակուր դառնայ ինչպէս արեգակը և արքունի ծառաները (գործից) չխափանուեն՝ դրան փայտ հասցնելու համար[18]։ Արդ, դրանցից մէկն անյագաբար ուտում է և չարունակ մեռնում, իսկ միւսը, որ չի ուտում, առանց օդի նուազում է նրա ճառագայթների լոյսը. ձմեռը ցրտանում է և բոլոր դալար բոյսերը սառցնում, ամառը տօթանում է և հրկիզում ամէն մի կենդանի բան։ Եւ նա, որ չարունակ փոփոխութեան մէջ է, չի կարող որեւէ մէկին հաստատուն կեանք չնորհել։ Ես չեմ կարող քեզ մեղադրել· ով չի տեսել մեծ թագաւորին, երկրպագութիւն է տալիս պատուա-

ւորներին. իսկ եթէ հմուտ գիտուններից մէկն այսպէս վարաւի, իսկոյն մահուան հրամանն կը տան նրա վերաբերմամբ։

«Իսկ արեգակի մասին, եթէ կ'ուզես սովորել, ճշմարիտը կ'ասեմ քեզ։ Նա այս աշխարհի արարածների մի մասն է, չատ մասերից մի որոշուած մաս. ոմանք նրանից վերեւ են, ոմանք՝ ներքեւ։ Նա առանձին սուրբ և յատակ լոյս չունի, այլ Աստծու հրամանով նա իր ճառագայթները տարածում է օդի միջով և հրային մասով տաքացնում է իր կայանի ներքեւը գտնուող բոլոր արարածներին, իսկ վերիններն ամենեւին մաս չունեն նրա ճառագայթներից. որովհետեւ լոյսը նրա գնդի մէջ տեղաւորուած է ինչպէս մի ամանում, և բերանը դէպի ցած բաց արած՝ լոյսը թափում է դէպի ներքեւ՝ մեր, ներքեւում ապրողներիս, վայելչութեան համար։ Ինչպէս օրինակ մի նաւ թռչում-սահում է ծովային անհուն ջրերի վրայով և անգիտութեամբ ճանապարհ է. կտրում հմուտ և ճարտար նաւապետի ղեկավարութեամբ, այդպէս էլ արեգակը իր կառավարի ձեռքով փոփոխում է իր շրջանը տարեւոր ժամանակում։

«Եւ ինչպէս որ այս աշխարհի ուրիշ մասերը հաստատուած են մեր կեանքի համար, նա էլ, ինչպէս միւս մասերից մէկը, տրուած է մեզ՝ լոյս տալու համար, ինչպէս լուսինն ու աստղերը և յարածուփ օդերն ու անձրեւաբեր ամպերը, նոյնպէս և երկրիս մասերից՝ ծովն ու գետերը, աղբիւրներն ու բոլոր պիտանի ջրերը, նոյնպէս և ցամաքայիններն իրենց բոլոր պիտոյքներով։ Սրանցից և ոչ մէկին էլ չպէտք է աստուած անուանել. իսկ եթէ մէկը համարձակուի ասել, իր անձը կորցնում է տգիտաբար, իսկ նրանք էլ աստուած անունով մեծարուելով ոչ մի օգուտ չստացան։ Մի իշխանութիւնը երկու թագաւոր չի ունենում. և եթէ մարդն այդ բանը յանձն չի առնում, ո՞րքան աւելի հեռու է Աստծու բնութիւնից այդպիսի խառնաշփոթ կարգը։

«Արդ՝ եթէ ուզում ես ճշմարիտը սովորել, քաղցրացրո՛ւ սրտիդ ժանտութիւնը և բաց արա մտքիդ աչքերը և արթնութեամբ կուրօրէն մի՛ գնա խաւարի միջով. ինքդ ընկել ես խորխորատը և բոլորին էլ կամենում ես քաշել քեզ մօտ։ Եւ եթէ քոյինները գալիս են մոլար ուսմունքիդ յետեւից, առանց

տեսնելու և հասկանալու. մեզ էլ այդպես մի՛ կարծի. որովհետեւ մեր մտքի աչքերը բաց են և սրատես ենք։ Այս մարմնաւոր աչքերով տեսնում ենք արարածներին և հասկանում ենք, որ սա ուրիշն է ստեղծել, և բոլորն էլ ապականացու են։ Իսկ բոլորի արարիչն անտեսանելի է մարմնաւոր աչքերի համար, և նրա զօրութիւնը մտքով է հասկացւում։

«Եւ որովհետեւ մեզ տեսաւ մեծ տգիտութեան մէջ և խըղճաց մեր անուսումնութեանը, որով մենք էլ ձեզ նման տեսանելի (արարածներին) արարիչ էինք կարծում և ամէն տեսակ անառակութիւններ գործում, այդ պատճառով էլ իր սիրով եկաւ մարդկային մարմին առաւ և մեզ սովորեցրեց իր աներեւոյթ աստուածութիւնը։ Նա, որ իրեն բարձրացրեց կախաղանի խաչի վրայ, քանի որ մարդիկ մոլորուել էին այդ լուսաւորների յետեւից, արեգակին զրկեց իր ճառագայթների լոյսից, որպէսզի խաւարն սպասաւոր լինի նրա մարդկութեանը. որպէսզի ովքեր ձեզ նման անարժան լինեն, իրենց կեանքը չտեսնեն մեծ անարդարութեան մէջ։ Այդպէս և այսօր. ով չի խոստովանում խաչուած Աստծուն, նոյն խաւարն է պատել նրա հոգին ու մարմինը. ինչպէս որ դու էլ այսօր նոյն խաւարի մէջ ես և դեռ մեզ էլ չարչարում ես։ Պատրաստ ենք մեռնելու մեր Տիրոջ նման. ի՛նչպէս և ի՛նչ կերպ ուզում ես՝ կատարի՛ր քո դաժան կամքը»։

Այն ժամանակ, երբ անօրէն Դեննչապուհը նայեց նրանց և տեսաւ բոլորին մեծ ուրախութեան մէջ և զուարթ, հասկացաւ, որ նրանց վրայ ազդեցութիւն չեն ունենում սպառնական և յորդորական խօսքերը։ Հրամայեց առաջ բերել ամենակրտսերներից մէկին, Արշէն անունով մի երէցի, որի մասին առաջ հէնց կարծիք էր ընկել սրբերի մէջ։ Կապեցին ոտներն ու ձեռները և այնպիսի մեծ ուժով ձիգ տուին, մինչեւ որ բոլոր ջղերի ճարճատիւնը կտրուեց. և այսպէս երկար ժամանակ մնաց անտանելի պրկոցի մէջ։

Սուրբն իր բերանը բաց արեց և ասաց182. «Ահա իմ չուրջը պատեցին բազմաթիւ շներ և չարերի ժողովը պաշարեց ինձ. ծակեցին իմ ոտներն ու ձեռները և իմ բերանի փոխարէն բոլոր ոսկրներս աղաղակեցին։ Լսի՛ր ինձ, Տէ՛ր, և լսի՛ր իմ ձայնին, և ընդունի՛ր իմ հոգին քո սուրբ զօրականների ժողովում,

որ երեւաց քո նորակերտ ձեռակերտին183։ Ես որ ամէնքից կրտսերն եմ, քո ողորմութիւնը գթալով ինձ վրայ՝ առաջ քաշեց»։

Եւ երբ այս ասաց, այլեւս չէր կարողանում բերանը բաց անել գելարանի անտանելի պրկոցներից։ Դահիճներն անմիջապէս հրաման ստացան երեք նախարարներից՝ սրով կտրել երանելու պարանոցը, և մարմինը գցեցին մի ցամաք խորխորատի մէջ։

Եւ հէնց տեղն ու տեղը Դենչապուհն սկսեց խօսել եպիսկոպոսի հետ և ասաց. «Երբ ես եկայ Հայոց աշխարհը, ինձ վիճակուեց մի տարի և վեց ամիս չրջել այնտեղ. ես ամենեւին չեմ յիշում, թէ որեւէ մէկից մի տրտունջ լսած լինեմ քո մասին, նոյնպէս և աւելի Յովսէփի մասին, որովհետեւ հէնց դա էր բոլոր քրիստոնեաների պետը և հաւատարիմ էր արքունի բոլոր գործերի մէջ։ Նոյնպէս և նա, ով իմ գնալուց առաջ այն աշխարհում մարզպան էր, չատ գոհ էր այս մարդուց. ես ինքս էլ իմ աչքով տեսայ, որ աշխարհի համար հաստատուն հայր էր համարւում, և անաչառ կերպով սիրում էր մեծամեծներին և փոքրերին։

«Արդ, փոխանակ որ դուք աղաչէք, ե՛ս եմ աղաչում ձեզ. խնայեցէ՛ք ձեր պատուական անձերին և մի՛ մատնուէք չարչարալից մահուան առաջուայ նման, ինչ որ տեսաք ձեր աչքերով։ Որովհետեւ թէեւ դուք այդ յամառ մտքի վրայ էք մնում, ես էլ մտքումս դրել եմ անթիւ չարչարանքներով վերջ դնել ձեր կեանքին։ Ես գիտեմ, որ դուք այդ մարդու հրապոյրով էք տարուած. որովհետեւ ինքը մարմնով հիւանդ է և բժշկների օգնութեամբ չի կարողացել առողջութիւն գտնել, հիւանդոտ կեանքից ձանձրացել է և աւելի մահուան է փափագում, քան թէ կեանքի»։

Այս բանին պատասխան տուեց սուրբ Յովսէփը և ասաց. «Այդ գովասանքը, որ դու տուիր նախ այս եպիսկոպոսին և ապա ինձ, իրաւացի արիր և ըստ կարգի պատուեցիր այդ ալեհերութեան համար. այդպէս էլ վայել է։ Բայց Աստծու ճշմարիտ ծառաներին օրէնք չէ ընդդիմանալ երկրաւոր իշխաններին, և ժողովրդից ոչ ոքի՝ տրտնջալ մարմնաւոր աչքածակութեան

համար, այլ խոնարհութեամբ և հեզութեամբ սովորեցնել Աստծու պատուիրանները, և առանց խարդախ իմաստութեան խաղաղասէր լինել բոլորի վերաբերմամբ, և անաչառ վարդապետութեամբ բոլորին առաջնորդել դէպի արարածների միակ տէրը։

Իսկ այս մարդու հրապուրանքների համար որ ասացիր, այդ էլ չատեցիր, այլ բոլորովին ճշմարիտն ասացիր։ Որովհետեւ ո՛չ թէ իբրեւ մի օտար մարդ է հրապուրում մեզ և ո՛չ թէ իբրեւ մի մոլորեցուցիչ խաբեբայ, այլ սաստիկ սիրում է մեզ։ Քանի որ մեր մայր եկեղեցին մէկ է, որ երկնեց մեզ, և մէկ է մեր հայր սուրբ հոգին, որ ծնեց մեզ, ինչո՞ւ պէտք է մի հօր և մի մօր որդիները երկպառակուած լինեն և ոչ թէ միաբան։ Այն, ինչ որ քեզ թւում է, թէ հրապոյր է, մենք գիշեր ու ցերեկ նոյն մտածմունքի մէջ էինք, որ անքակ պահենք մեր կեանքի միաբանութիւնը։ Իսկ եթէ սա ձանձրացել է և ուզում է իր հիւանդ մարմնից դուրս գալ, առաւել եւս մենք բոլորս. որովհետեւ քնաւ ոչ ոք չկայ կանանցից ծնուածների մէջ, որ առանց ցաւերի ու չարչարանքների մարմին ունենայ»։

Պատասխան տուեց Դենչապուհը և ասաց. «Դուք չգիտէք, թէ ո՛րքան երկայնամիտ եմ դէպի ձեզ. թագաւորի հրամանով չէ, որ այսչափ երկարաբանում եմ ձեզ հետ և վիճում, այլ իմ քաղցրութեամբ եմ այդ թոյլ տուել ձեզ, որովհետեւ ձեզ նման անագորոյն չեմ, որ ձեր անձերին ատելի էք և ուրիշներին թշնամի։ Ես աղ ու հաց եմ կերել ձեր աշխարհում, ուստի գութ ու սէր ունեմ ձեր աշխարհի վերաբերմամբ»։

Պատասխան տուեց Ղեւոնդ երէցն ու ասաց. «Ով դէպի դրսինները գութ ու սէր ունի, Աստծու պատուիրաններն է կատարում, բայց պարտական է խնայել նաև իր հոգին. որովհետեւ մեր անձերի տէրը չենք. այլ կայ մէկը, որ հաշիւ է պահանջում մեզնից թէ՛ դրսիններն և թէ ներսիններն համար։ Իսկ որ ասացիր, թէ իմ կամքով եմ ձեզ ականջ դնում և ոչ թէ թագաւորի հրամանով, եթէ դուք սովոր էք զանց անել ձեր թագաւորի հրամանը, այդ լաւ էք անում, որովհետեւ նա աշխարհ աւերող է և անմեղ մարդկանց սպանող, սատանայի բարեկամ և Աստծու թշնամի։ Բայց մենք չենք կարող մեր թագաւորի հրամանից դուրս գալ, և ո՛չ էլ կարող ենք մեր անանց կեանքը փոխանակել այս աշխարհի ապականացու պատրանքների հետ։

«Իսկ ինձ համար որ ասացիր, թէ բժիշկներից առողջու-

թիւն չգտնելով՝ մանն աւելի է սիրում քան թէ կեանքը, այդ խօսքերը վայել չեն այն մարդկանց, որոնք տեսնում են այս աշխարհի բոլոր չարչարանքները։ Հապա՛, մի փոքր մեղմի՛ր այդ զայրագին սրտմտութիւնդ և հետեւիր իմ ճշմարիտ խօսքերին և կարդով նայի՛ր աշխարհիս գործերին։ Մահկանացուներիցս ո՞վ է, որ անտրտունջ կեանք ունի. չէ՞ որ ահա բոլորն էլ ախտերով լի են, ո՛րը ներսից և ո՛րն էլ դրսից — ցուրտ ու տօթ, քաղց ու ծարաւ և ամէն տեսակ աղքատութիւն ու կարիք։ Դրսից՝ անիրաւութիւն, յափշտակութիւն, գէշ պղծութիւն ու անառակութիւն. ներսից՝ ամբարշտութիւն, ուրացութիւն, տգիտութիւն, անդարձ մոլորութիւն կամաւոր ազատութիւնից։

«Բայց դու որ բժիշկներին մերժելով անարգեցիր, թէ ես նրանց միջոցով առողջութիւն չեմ գտել, այդ էլ զարմանալի չէ. որովհետեւ նրանք էլ մարդ են. ցաւ կայ, որի առողջացման հնարը գտնում են, և ցաւ էլ կայ, որ նրանց հնարներին չի ենթարկւում. որովհետեւ բոլորս էլ մահկանացու ենք, թէ՛ բժըշկողը և թէ բժշկուողը։ Բայց երանի թէ դուք էլ բժշկական արուեստից օրինակ առնէիք, որովհետեւ փոքր չէ նրանց բժըշկութեան ճշմարտութիւնը։ Որովհետեւ երբ նրանք մէկին հիւանդացած են տեսնում, չեն դանդաղում նրանց մօտ գնալ, այլ չտապում են հնար գտնել և առողջացնել։ Մանաւանդ եթէ արքունիքում թագաւորի սիրելիներից մէկը հիւանդանայ, և մեծ հրապարակը հասնելով՝ (բժիշկը) տեսնի պատուաւոր մարդկանց մի բազմութիւն, և գեղեցիկ ու առողջ երիտասարդներ, և է՛լ աւելի ներս մտնելով արքայական սրահները՝ այնտեղ տեսնի բոլոր սպասաւորների չքնաղ և սքանչելի տեսքը, նա ամենեւին չի զարմանայ այդ հրաշակերտ տեսարանով։ Նաեւ, եթէ ականատես և ամբողջովին ոսկեղէն լինի այն մահիճը, որի վրայ դրուած է հիւանդը, նա այդ բոլորի վրայ քնաւ ուշադրութիւն չի դարձնի. այլ կը հրամայի հեռացնել ոսկեհուռ վերարկուները, եւ ձեռքը ներս տանելով, կը զննի ամբողջ մարմինը՝ արդեօք ջե՞րմ է քնութիւնը, եւ սիրտն արդեօք հանգի՞ստ է իր տեղում, եւ կամ թէ լեարդը փափո՞ւկ է եւ կամ թէ երակների շարժումը կարգի՞ն է. դրա համեմատ էլ բուժելու. դարմանն կ՛անի՝ առողջութիւն չնորհելով նրան։

«Իսկ արդ, եթէ մարդկային բժշկութիւնը այսպէս գիտէ արհամարհել ամէն բան և միայն իր աւուրեան առաջ տանելով գործ կատարել, ո՛րքան աւելի արժան է ձեզ, որ այս ամբողջ աշխարհը (ձեր) մեծ իշխանութեան տակ էք առել, հոգ տանել նախ ձեր հոգիները բժշկելու այս աշխարհի ամէն տեսակ ախտալից մոլորութիւններից. իսկ մարմնով բոլորն էլ արդէն ձեր ծառայութեան մէջ էին։ Այժմ, որ դուք տգիտացել էք և անմահ հոգիներդ մահկանացու էք դարձրել Գեհենի անչէջ կրակի համար, ուզէք չուզէք՝ մարմնով էլ բռնուած էք անբուժելի ցաւերով. և մեզ նախատում էք մարմնի ցաւերի համար, որ մեր ազատ կամքից չեն առաջացել, այլ ինչպէս իւրաքանչիւր մարդու պատահում է մարմնի բնութեան համեմատ։

«Եւ Քրիստոսը կենդանի և կենդանարար ճշմարիտ Աստուածը՝ իր բարերար կամքով հոգիների և մարմինների բժիշկ դարձաւ. և նախ ինքն իր չարչարանքների ցաւերի չնորհիւ բժշկեց ամբողջ մարդկային ազգը։ Եւ սրանից էլ աւելի խանդաղատելով ու գթալով՝ կրկին ծննդեամբ ծնեց մեզ անցաւ և անվէրք առողջութեամբ. առողջացրեց դաղտնի հարուածներից վիշապի հասցրած հին վէրքերը, և մեզ դարձրեց հոգով ու մարմնով անապական և անարատ, որպէսզի բանակակից լինենք հրեշտակներին և զօրք՝ մեր երկնաւոր թագաւորի համար։ Իսկ դուք այս չհմանալով և վայելած չլինելով Աստծու երկնաւոր պարգեւները՝ չես էլ կամենում մեզանից սովորել, և դեռ մեզ էլ կամենում ես մոլորեցնել, որ անհնար է և չի լինի, և չես կարող անել։

«Իսկ իմ ցաւագար մարմնիս մասին հակիրճ կ՛ասեմ քեզ։ Շատ ուրախ եմ, երբ իմ մարմինը չարչարուած եմ տեսնում. գիտեմ, որ իմ մէջ զօրանում է հոգուս առողջութիւնը։ Մանաւանդ որ ինձ համար գրաւական ունեմ հեթանոսների մեծ վարդապետին[184], որ իր մարմնի ցաւերով իրեն մխիթարում էր և սատանայական մարմնի տանջանքով պարծենում էր և ասում. «Որովհետեւ եթէ տնկակից եղանք նրա մահուան նմանութեանը, ո՛րքան աւելի եւս մասնակից կը լինենք նրա յարութեանը»[185]։ Իսկ դուք, որ իշխանութիւն ունես մեզ վրայ, դատի՛ր մեզ քո չար կամքի համեմատ։ Ամենևին չենք վախենալու ո՛չ քո անագին անուսոր սպառնալիքներից և ոչ էլ այն դաժան մահից, որ բերելու ես մեր գլխին»։

Այն ժամանակ երանելիներին մի փոքր մեկուսացրեց միմեանցից և միայն սուրբ եպիսկոպոսին ասաց. «Առաջ քեզ չատ գովասանք տուի, բայց քո անձի պատիւը չիմացար։ Ցիշեցնում եմ քեզ այն չարիքները, որ դու գործել ես, որպէսզի ինքդ քեզ մահապարտ անես, իսկապէս՝ դո՞ւ աւերեցիր ատրուշանը Ռըշտունիքում, և կամ կրակը դո՞ւ սպանեցիր. նաև, ինչպէս լսեցի և ստուգեցի, մոգերին էլ դո՛ւ ես չարչարել և պաշտամունքի սպասները դո՛ւ ես տարել. արդ, եթէ իրօք դո՛ւ ես վերցրել, պատմի՛ր ինձ»։

Պատասխան տուեց սուրբը և ասաց. «Ա՞յժմ ես կամենում այդ իմանալ ինձնից, թէ առաջուց գիտէիր»։

Դենչապուհն ասաց. «Համբաւն ուրիշ է, ճշմարտութիւնն ուրիշ»։

Եպիսկոպոսն ասաց. «Դու ի՞նչպէս ես կարծում՝ ասա՛ ինձ»։

Դենչապուհն ասաց. «Ես լսել եմ, որ բոլոր վնասները Ռըշտունիքում դո՛ւ ես հասցրել»։

Եպիսկոպոսն ասաց. «Եթէ այդպէս ստոյգ կերպով տեղեկացել ես, ինչո՞ւ ես նորից հարցնում»։

Դենչապուհն ասաց. «Ուզում եմ ճշմարտութիւնը քեզանից իմանալ»։

Եպիսկոպոսն ասաց. «Ո՛չ թէ կեանքիդ օգուտն ես ուզում լսել ինձանից, այլ իմ արիւնն ես ցանկանում»։

Դենչապուհն ասաց. «Արիւնարբու գազան չեմ, այլ վրէժխնդիր եմ լինում աստուածներին անարգելու համար»։

Եպիսկոպոսն ասաց. «Համր տարրերին աստուած ես անուանում և քո պատկերակից մարդկանց ուզում ես մորթոտել. քո թագաւորի հետ միասին պատասխան պիտի տաս Աստծու անկաշառատեանի առաջ։ Եւ ինչ որ քո չար կամքով ուզում ես լսել ինձանից, այդ ես կ'ասեմ քեզ։ Արդարեւ կրակատուն ե՛ս աւերեցի, և մոգերին ծեծելով չարչարեցի և տան մէջ գտնուած պղծութեան սպասները ե՛ս նետեցի ծովը։ Բայց կրակն ո՞վ կարող է սպանել, որովհետեւ արարածների ամենիմաստ Արարիչը առաջուց հոգ տանելով՝ չորս նիւթերի բնութիւնը հաստատել է անմահ։ Հապա՛, եթէ կարող ես, սպանի՛ր օդը, կամ փճացրո՛ւ հողը, որ խոտ չբուսցնի, գետը մորթի՛ր, որ մեռնի։ Եթէ այս երեք բանը կարող ես անել, կրակն էլ կարող ես սպանել։

«Բայց քանի որ մեր Ճարտարապետը այդ չորս տարրերն

անքակտելի կերպով միացրել է ուստի և կրակի բնութիւնը գոնուում է քարերի և երկաթների և գոնելի բոլոր տարրերի մէջ, ինչո՞ւ ես ինձ ստութեամբ զրպարտում, թէ դու կրակն ոչնչանել ես։ Հապա՛, ոչնչի՛ր արեգակի ջերմութիւնը, որ կրակի մասն ունի, և կամ հրամայ տո՛ւր, որ երկաթից կրակ չթափուի։ Մեռնում է այն, որ չնչում է և շարժուում, գնում, ուտում է ու խմում. ե՞րբ ես տեսել, որ կրակը գնայ կամ խօսուն ու գիտուն լինի։ Արդ, ինչ որ կենդանի չես տեսել, մեռա՞ծ ես ընդունում։ Ո՜րքան աւելի աննեղելի է ձեր ամբարշտութիւնը, քան թէ բոլոր հեթանոսներինը, որոնք աւելի գիտուն են, քան թէ դուք. նրանք թէեև ճշմարիտ Աստծուց մոլորուած են, բայց անխօս տարրերին աստուած չեն ընդունում։ Այժմ, եթէ դու անգիտութեամբ կորնչելի ես ասում կրակի բնութիւնը, արարածները քո ասածը չեն ընդունի, որովհետեև դա խառն է բոլորի մէջ»։

Դենչապուհն ասաց. «ես քեզ հետ ամենևին վէճի ու քննութեան մէջ չեմ մտնում արարածների բնութեան վերաբերմամբ, այլ խոստովանուիր ինձ՝ կրակը դո՞ւ ես հանգցրել, թէ ոչ»։

Պատասխան տուեց երանելին և ասաց. «Որովհետեև չկամեցար ճշմարտութեանն աչակերտ լինել, կ'ասեմ քեզ քո հօր՝ սատանայի կամքը։ Ես ինքս մտայ ձեր կրակատունը և տեսայ ձեր անուտի ուսմունքի ամբարիշտ պաշտօնեաներին կանգնած, և կրակարանը կրակով լի բորբոքուում-այրուում էր նրանց առաջ։ Հարցրի նրանց խօսքով և ոչ թէ ձեռով, թէ ձեր մտքում ի՞նչ էք համարում ձեր այս սպաշտած կրակը։ Պատասխան տուին և ասացին. մենք ոչինչ չգիտենք. միայն այսքանը գիտենք, որ նախնիքների սովորութիւն է եւ թագաւորի սաստիկ հրաման։

«Ասացի նրանց դարձեալ. այդ կրակի բնութիւնն ի՞նչպէս էք հասկանում. արարի՞չ էք կարծում, թէ արարած։ Բոլորը միաբան ասացին. մենք դրան արարիչ չենք համարում, ո՛չ էլ աշխատող մարդկանց հանգստացնող։ Մեր ձեռքերը կոշտացել են կացին գործածելով եւ մեր մէջքերը քերթուել փայտ կրելուց. աչքերս ջրակալել են արտասուքներով դրա ծխի կծու լինելուց եւ մեր երեսները մրոտուել են նրա թանձր ծխի խոնաւութիւնից։ Եթէ՝ չատ ենք նրան կերակուր տալիս, սաստիկ սովածանում է. իսկ եթէ քնաւ չենք տալիս, բոլորովին հանգ-

չում է. եթէ մօտ ենք գնում եւ երկրպագութիւն ենք տալիս, այրում է մեզ, իսկ եթէ ամենեւին մօտ չենք գնում, մոխիր է դառնում։ Մենք այսպէս ենք հասկացել դրա բնութիւնը։

«Դարձեալ ասացի նրանց. իսկ դուք լսե՞լ էք, թէ ո՛վ է սովորեցրել ձեզ այդպիսի մոլորութիւնը։ Պատասխան տուին և ասացին. ի՞նչ ես լսելու մասին հարցնում մեզ. ահա նայիր՝ ինչ որ կայ առջեւդ. որովհետեւ մեր օրէնսդիրները միայն հոգու աչքերով են կուրացած, իսկ մեր թագաւորը մարմնի մէկ աչքով կոյր է[186], իսկ հոգին բնաւ աչք չունի։

«Այս պատճառով էլ, երբ լսեցի մոգերից այս ամէնը, չատ խղճացի, որովհետեւ տգիտութեամբ ճշմարիտը խօսեցին։ Մի քիչ չարչարեցի նրանց ծեծելով և հէնց իրենց տուի կրակը, որ ջուրը գցեն և այսպէս ասացի. այն աստուածները, որ երկինքն ու երկիրը չեն ստեղծել, թող կորչեն երկնքի տակից եւ յետոյ արձակեցի մոգերին»։

Երբ Դենչապուհը լսեց այս բոլորը սուրբ եպիսկոպոսի բերանից, սաստիկ զարհուրեց, որ թագաւորին այդպէս նախատեց եւ կրօնն անարգեց։ Ուստի եւ մինչեւ իսկ վախեցաւ հարուածներ ու տանջանքներ տալ նրան, որ չլինի թէ աւելի մեծ անարգանքներ ասել տայ թագաւորի մասին ատեանի մէջ, եւ իրեն վրայ կասկած ընկնի իբրեւ այդ անարգանքների պատճառ, որ այնքան երկայնամտութեամբ վէճի մէջ մտաւ նրանց հետ։

Եւ որովհետեւ սուրբը մէջքին կապած նստած էր ատեանում[187], սարսափ գցելով սրբերի վրայ, մռնչաց ինչպէս զայրացած առիւծ, և հանելով սուրը՝ գազանաբար յարձակուեց եբրանելիների վրայ և կտրեց եպիսկոպոսի աջ ուսը թիկունքի հետ միասին և (նրա) ձեռքը վայր գցեց։ Իսկ նա ձախ կողմի վրայ գետին ընկնելով՝ նորից զօրացաւ, աջ ձեռքը վեր բարձրացրեց, բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ընդունի՛ր, Տէ՛ր, այս կատարեալ զոհը, որ ինքս ինձ ամբողջովին մատուցի քեզ, և խառնի՛ր ինձ քո սուրբ զինուորների գնդին»։

Դարձեալ քաջալերում էր իր ընկերակիցներին և ասում. «Դէ՛հ, առաքինինե՛ր, ահա հասել է մեր նահատակութեան ժամը. մի վայրկեան փակեցէք մարմնաւոր աչքերդ և իսկոյն կը տեսնէք մեր յոյս Քրիստոսին»։ Եւ իր արիւնի մէջ թաւալուելով՝

ասում էր. «Կ'օրհնեմ Տիրոջը ամէն ժամանակ, նրա օրհնութիւնը միշտ իմ բերանում է։ Տիրոջով թող պարծենայ իմ անձը. հեզերը լսեն և ուրախ լինեն»188։ Եւ այս սաղմոսն ասելով՝ հասցրեց մինչեւ այստեղ. «Արդարները չատ նեղութիւններ ունեն. այդ բոլորից կը փրկի նրանց Տէրը և կը պահի նրանց բոլոր ոսկրները»։

Եւ մինչդեռ մի քիչ ուժ կար մարմնում, հէնց իր աչքերով նայեց ու տեսաւ, որ երկնքից գալիս էին հրեշտակների չատ գնդեր և վեց պսակ կար հրեշտակապետի ձեռին։ Նոյնպէս և ձայն լսեց վերեւից, որ ասում էր. «Քաջալերուեցէ՛ք, ի՛մ սիրելիներ, որովհետեւ ահա մոտացաք ձեր այդ վշտալի կեանքը և հասաք այս երանելի պսակներին, որ ձեր ճարտարութեամբ կազմեցիք. վերցրէք և դրէք իւրաքանչիւրդ իր գլխին։ Որովհետեւ դրանց պատրաստելու համար հարկաւոր նիւթը դուք հայթայթեցիք, իսկ ձեր գործի ճշմարտութիւնը Քրիստոսի ամենասուրբ ձեռքով կազմուեց. դա ընդունեցէք այդ սպասաւորների ձեռքից և պսակակից կը լինէք Ստեփանոսին»189։ Շատ լաւ տեսնում էր նաև այն, որ սուրբը դեռ չորում էր երանելիների պարանոցի վրայ։

Երբ սուրբ Ղեւոնդն այս տեսաւ, որ այլեւս չեն ուզում մէկ-մէկ հարցնել ու դատել, այլ միանգամից մահի հրամանը տրուեց, ասաց երանելի Յովսէփին. «Մօտեցի՛ր, առա՛ջ գնա սրի դէմ, որովհետեւ աստիճանով դու բոլորից բարձր ես»։ Եւ երբ այս ասաց, մէկը մէկի յետեւից շարքով կանգնեցին. և որովհետեւ տագնապով ու չտապով սպասում էին դահիճներին՝ միանգամից կտրեցին երանելիների պարանոցները ու գցեցին սուրը եպիսկոպոսի առաջ. իսկ նա հոգիները աւանդելիս աղաղակեց և ասաց. «Տէ՛ր Յիսուս, ընդունի՛ր մեր բոլորի հոգիները, և մեզ խառնի՛ր քո սիրելիների գնդերի մէջ»։ Եւ նոյն տեղում անմիջապէս նահատակուեցին բոլորը»190։

Եթէ կամենաս նրանց հետ հաշիւ անել նաև մոգպետին, որ հաւատաց Քրիստոսին, թուով ութն են, բացի նաև այն երկուսից, որ Վատգէսում191 նահատակուեցին, և Թաթիկ անունով մի ւս եպիսկոպոսից192, որ (նահատակուեց) Ասորեստանում։ Իսկ այդ նոյն տեղում վեց հոգի էին, որոնց անուններն են՝

ՍԱՀԱԿ Ռշտունեաց եպիսկոպոս.
Սուրբ ԾՈՎՍԷՓ վայոց ձորից, Հողոցիմք գիւղից.
ՂԵԻՈՆԴ երէց Վանանդից, Իջաւան գիւղից.
ՄՈՒՇԷ երէց Աղբակից.
ԱՐՇԷՆ երէց Բագրեւանդից, Եղեդէկ գիւղից.
ՔԱՋԱՋ սարկաւագ, որտեղից Ռշտունեաց եպիսկոպոսն էր.
Իսկ երանելի ՄՈԴՊԵՏԸ Նիւշապուհ քաղաքից.
ՍԱՄՈՒԷԼ երէց Այրարատից, Արածոյ գիւղից.
ԱԲՐԱՀԱՄ սարկաւագ՝ նոյն գիւղից։

Արդ, Դենշապուհը, մոգպետն ու Ջնիկան մայրապետը193 նոյն տեղում պահապաններ ընտրեցին ամէն մէկն իր սպասաւորներից և այն անապատում, որտեղ այս վեց սրբերը նահատակուեցին, հրամայեցին երանելիների մարմինները պահել մինչեւ տասն օր կամ աւելի, մինչեւ արքունի բանակն անցնի գնայ, որպէսզի այլակրօնները չգան ու չվերցնեն դրանց ոսկրները և բաժանելով տարածեն ամբողջ աշխարհով մէկ, որով և մարդիկ աւելի եւս յորդորուելով՝ կը մոլորուեն–կը գնան նածաբացիների աղանդի յետեւից։

Իսկ Յուժիկը, որի մասին առաջ ասացինք, զէնքով միասին սպասում էր այնտեղ պահապանների հետ, որպէս նրանցից մէկը, իմաստութեամբ լի և աստուածային գիտութեամբ կատարեալ մի մարդ. նա սպասում էր և ակնդէտ նայում, թէ ի՞նչ եղանակով հնար գտնի սրբերի ոսկրները գողանալու նրանցից։

Եւ երբ երեք օր անցաւ, մեծ սարսափ ընկաւ բոլորի վրայ, և ինչպէս թմրած ու կիսամեռ անկանգնելի վեր ընկած մնացին այն երեք օրը։ Իսկ չորրորդ օրը պահապաններից երկուսը սաստիկ դիւահարուեցին։ Դարձեալ կէս գիշերուան մօտ անեղ ձայներ լսուեցին և ներքեւից որոտաձայն թնդիւններ, երկրաշարժի դղրդոցի նման. երկիրը դողում էր նրանց ոտքի տակ և սրերի չողչողալուց կայծակ էր թափւում նրանց չուրջը։ Եւ տեսնում էին բոլոր դիակները կանգնած, և առեանում աստծները բարձր ձայնով խօսում էին նրանց ականջին, այն աստիճան, որ նրանք՝ իրարանցման մէջ ընկնելով՝ միմեանց էին կոտորում։ Եւ այսպէս տագնապած ու ցնորուած՝ ընկերն ընկերոջից փախուստ տալով՝ չգիտէր, թէ ուր էր գնում։ Եւ գալով՝

մեծ զարմանքով պատմեցին այն բոլոր անցքերն ու չարչարանքները, որ կրեցին։

Յորդրդի նստեցին երեք նախարարները և սկսեցին զարմանքով ասել միմեանց. «Ի՞նչ անենք, ի՞նչպէս վարուենք քրիստոնեաների այս անքննելի աղանդի հետ. որովհետեւ քանի կենդանի էին, զարմանալի էր նրանց կեանքը. ընչատեաց էին՝ ինչպէս անկարօտ մարդիկ, սրբասէր էին՝ ինչպէս անմարմինները, անաչառ էին՝ ինչպէս արդարադատ մարդիկ, աներկիւղ էին՝ ինչպէս անմահներ։ Եթէ այս բոլորի վերաբերմամբ ասենք, թէ նրանք ոգեշ էին և յանդուգն, դարձ ա՞յն ինչ անենք, որ այստեղ բանակում եղած բոլոր դաւադարները նրանց չնորհիւ առողջանում են։ Եւ կամ, որ այդ բոլորից մեծ է, ո՞ր մեռած մարդու դին է կանգնած երեւացել և ո՞վ է նրանցից որեւէ խօսք լսել։

«Որովհետեւ սուտ չենք (ասում) մեր սպասաւորները. մենք ինքներս ստուգել ենք սրանց ճշդութիւնը։ Եթէ նրանք ուզենային մարմնաւոր ագահութիւն խառնել իրենց գործի մէջ, մի փոքրիկ ակնարկ անէին բանակում եղած քրիստոնեաներին՝ իրենց կշռովը մէկ ոսկի կ'առնէին։ Մէկ էլ՝ այն մարդիկ, որոնք դեւի կողմից չարչարուեցին, այն ժամանակ նրանք ցաւոտ չէին, մենք այդ գիտենք. յայտնի է, ուրեմն, որ այսօր մեծ հրաշք կատարուեց։ Եթէ լուռ մնանք, մենք և մեր անձերը այդպիսով կասկածի տակ կ'ընկնենք. իսկ եթէ դրանց տանենք թագաւորի առաջ, նա էլ դրանցից լսելով այդ բոլոր մեծամեծ հրաշքները, գուցէ նոյնիսկ մեր կրօնը քայքայուի»։

Պատասխան տուեց մոգպետն և ասաց նրանց. «Ձէ՞ որ ինձ աստիկան կարգեցին ձեր երկուսիդ վրայ. ինչո՞ւ էք այդպէս արտնեղուում ու տագնապում ձեզուձեզ. դուք ձեր գործը կատարեցիք և արքունի հրամանը գլուխ բերիք։ Արդ, եթէ այդ լուրն իմացուի և թագաւորի առաջ որեւէ հարձուփորձ լինի, այդ մեր, մոգերիս, գործն է. դուք անհոգ եղէք և ոչ մի բանի մասին մի մտածէք։ Եւ եթէ ձեր մտքերը զարհուրած են, առաւօտը վաղ եկէք Դարիթիր194, որովհետեւ վաղն այնտեղ տէր195 Մովպետան Մովպետը գոհ է մատուցանելու. նա էլ ձեր մտքերը կը հանգստացնէ»։

Իսկ Յուժիկը, երբ այս բոլորը լսեց և հասկացաւ, որ այ-

ն ուհետեւ նրանք հոգս չեն քաշելու սուրբ սպանուածների մասին, չտապեց չուտով տաս մարդ վերցրեց, որոնց քրիստոնեայ լինելու վրայ վստահ էր, և հասնելով այնտեղ՝ բոլորին կարգին վիճակի մէջ գտաւ։ Եւ որովհետեւ դեռ կասկած ունէր նոյն գահիճների վրայ. այնտեղից սրբերին էլի հեռացրին երկու հրաստախի չափ։ Եւ երբ ապահովուեցին, սրբեցին, կարգի բերին երանելիների ոսկրները. բերին բանակը և ծածուկ պահում էին. և կամաց-կամաց յայտնեցին նախ հայ զօրականներին, ապա նաև բանակում եղած բազմաթիւ քրիստոնեաներին։ Եւ ընծայի առաջին պատուղը մատուցին կապուած նախարարներին. և նրանք իսկոյն եւեթ արձակուեցին իրենց կապանքներից196, մահուան սպառնալիքը վերացաւ նրանց վրայից և ներման հրովարտակներ ուղարկուեցին Հայոց աշխարհը։

Արդ, այս երանելի Յուժիկը, որ արժանի եղաւ ծածուկ ապաստարան լինելու սրբերին, ինչ որ նրանց մահից մինչեւ այժմ ասուեց իբրեւ այս վճռի դատակնիք՝ սա՛ պատմեց մեզ կարգով այս ամէնը — չարաչար քաշ տալը, դատաւորների հարցուփորձը, սրբերից իւրաքանչիւրի պատասխանները, նրանց նահատակութիւնը, և պահապանների կրած ահագին արհաւիրքները, և երեք նախարարների հեծեծանքն ու տարակուսանքները, և նրանց սուրբ ոսկրների ամփոփումը ո՛չ թէ խառնիխուռն մի տեղ ժողովելով, այլ նրանցից ամէն մէկը առանձին՝ վեց տապանների մէջ ժողոված. և իւրաքանչիւրի անունն էլ սովորել ու տապանների վրայ նշանակել էր։ Եւ երկաթի կապանքները գրել էր իւրաքանչիւրի ոսկրների հետ, որովհետեւ դահիճները դէն էին գցել. ինչպէս նաև նշանակել էր իւրաքանչիւր տապանի հանդերձանքը։

Եւ սրանք վեցը իրենց սուրբ և ցանկալի մահով նահատակուեցին Հրոտից ամսի քսանևհնգին Ապար աշխարհի մեծ անապատում՝ Նիշապուհ քաղաքի սահմաններում։

ՀԱՑՈՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՂՆԵՐ

ԽՈՐԷՆԻ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻ ՄԱՍԻՆ

Իսկ երանելիներուն աշակերտները կապանքներուն մէջ մնում էին նոյն քաղաքի ներսում. արքունի մի դահճապետ եկաւ և նրանց քաղաքից դուրս հանեց։

Նոյն քաղաքից դուրս հանեց նաև հինգ ասորեստանցի քրիստոնեաներին, որոնք նոյնպէս կապանքների մէջ էին Քրիստոսի անուան համար. սրանց հարցրեց խօսքերով, բայց չհամաձայնեցին արեգակին երկրպագութիւն տալ։ Զարչարեց նրանց ծեծելով, բայց նրանք աւելի եւս հաստատուեցին նոյն մտքի մէջ. կտրեց նրանց քթերն ու ականջները և ուղարկեց Ասորեստան, որ արքունի (գործերում) մշակութիւն անեն։ Նրանք գնացին մեծ յօժարութեամբ, կարծես թէ մեծ պարգեւներ ստացած լինէին թագաւորից։

Այժմ դարձեալ եկաւ նոյն դահճապետը սուրբ սպանուածների աշակերտների մօտ, ընտրեց նրանցից երկուսին, որոնք ամենից համեստներն էին, միւսներից հեռացրեց մի կողմ և ասաց նրանց. «Ձեր անուններն ի՞նչ են»։

Մէկը պատասխան տուեց և ասաց. «Մնողներս իմ անունը Խորէն են դրել, իսկ դրա անունն Աբրահամ է. իսկ ըստ մեր շնորհատուր կարգի՝ Քրիստոսի ծառաներ ենք և այն երանելիների աշակերտները, որոնց սպանեցիք»։

Պատասխան տուեց դահճապետը և ասաց նրանց. «Իսկ այժմ ձեր գործն ի՞նչ է, և կամ թէ՝ ո՞վ է ձեզ այստեղ բերել»։

Այս բանին Աբրահամը պատասխան տուեց և ասաց նրանց. «Այդ դուք պէտք է մեր ուսուցիչներից իմանայիք. որովհետեւ նրանք չնչին մարդիկ չէին, այլ բաւական հայրենի ստացուածքներ ունէին ըստ արժանիքի, այնպէս էլ սպասաւորներ, որ մեզ նման և ո՛րն էլ մեզանից աւելի լաւ. ովքեր մեզ

անուցել և սովորեցրել են, նրանց հետ ենք եկել։ Որովհետեւ մեր աստուածատուր օրէնքները պատուեր են տալիս մեզ՝ սիրել նրանց ինչպէս սուրբ ծնողներին, և ծառայել նրանց իբրեւ հոգեւոր տէրերին»։

Զայրացաւ դահճապետն ու ասաց. «Անկիրթ և աներկիւղ ապստամբի նման ես խօսում։ Քանի որ խաղաղութեան մէջ և ձեր աչխարհում էիք, լաւ էր. բայց երբ նրանք քրէական յանցանքի մէջ բռնուեցին արքունի գործերում և մահապարտ համարուեցին իրենց գործերի համեմատ, ձեզ վայել չէր ամենեւին նրանց մօտ գնալ։ Չէ՞ք տեսնում այս մեծ բանակի մէջ (ինչպէս է լինում). երբ պատուաւորներից որեւէ մէկը արքունի ժամանակաւոր բանտն է ընկնում, սգի շորեր է հագնում, ջոկուում–հեռանում է և միայնակ է նստում և ամենեւին ոչ ոք չի համարձակւում մօտ գնալ նրանց։ Իսկ դու այդպէս պարծենալով ես խօսում, ինչպէս մի անմեղ մարդու աչակերտ»։

Սրան պատասխան տուեց Յորէնը և ասաց. «Ո՛չ ձեր կարգն է անիրաւ և ոչ մերը սուտ. յանցաւոր նախարարը ումից որ պարգեւ էր ստացել, այնպէս պէտք է հնազանդ լինէր նրան, որ բայի իր ունեցած չուքից ուրիշ մեծամեծ պարգեւներ էլ ստանար նրանից։ Արդ՝ քանի որ այդ չի արել, նրան ձախողակի հակառակ բաներն են պատահել։ Ես մեր ուսուցիչներն էլ, եթէ յանցանք գործած լինէին Աստծու դէմ և կամ որեւէ կերպ մեղանչած թագաւորի դէմ, նոյն ձեւով էլ մենք նրանց հետ կը վարուէինք. ո՛չ մեր աչխարհում նրանց մօտ կը գնայինք և ոչ էլ նրանց յետեւից այս օտար աչխարհը կը գայինք։ Բայց քանի որ երկու կողմերի վերաբերմամբ էլ արդար են վարուել և դուք զուր ու անմեղ սպանեցիք նրանց, այժմ մենք էլ աւելի ենք սպասաւորում նրանց սուրբ ոսկրներին»։

Դահճապետն ասաց նրան. «Ես արդէն առաջուց ասացի, թէ դու մի չատ յանդուգն մարդ ես. ահա պարզ յայտնուեց, որ նրանց բոլոր յանցանքների մէջ դուք էլ խառն էք»։

Աբրահամն ասաց. «Ո՞ր յանցանքի»։

Դահճապետն ասաց. «Նախ՝ մոգերի սպանման և ապա մնացած բոլոր յանցանքների մէջ»։

Աբրահամն ասաց. «Այդ ո՛չ միայն մեզնից է, այլ նաև ձեր

օրէնքների կարգի համեմատ. թագաւորները հրաման են տալիս ձեզ, իսկ դուք գործում էք ձեր սպասաւորների ձեռքով»։

Դահճապետն ասաց. «Միևր աստուծով եմ երդւում, որ դու աւելի խիստ ես խօսում, քան թէ քո ուսուցիչները. դրանից երեւում է, որ դուք նոյնիսկ աւելի վնասակար էք։ Արդ, ձեզ համար մահուանից փրկուելու հնար չկայ, բացի արեգակին երկրպագելուց և մեր կրօնի պատուէրները կատարելուց»։

Խորէնն ասաց. «Մինչեւ այժմ իբրեւ մարդ էիր չարախօսում, իսկ այժմ իբրեւ անպիտան չուն ես վայրահաչում։ Եթէ արեգակն ականջներ ունենար, դու նրան նախատել կը տայիր. բայց նա բնութեամբ անզգայ է, իսկ դու չարութեամբ աւելի անզգայ ես, քան թէ նա։ Ինչի՞ մէջ մեզ աւելի պակաս տեսար, քան մեր հայրերն էին։ Ձլինի՞ թէ խօսքերով ուզում ես փորձել մեզ. այլ հանդէս բեր քո չարութիւնն ու մեր բարութիւնը, և թող ամօթով մնայ քո հայր սատանան ոչ միայն մեզանից, որ աւելի կատարեալ ենք, այլեւ ով քեզ խիստ փոքրիկ է թւում, նա էլ սաստիկ վէրքեր կը հասցնի քո հոգուն ու մարմնին»։

Երբ այս լսեց դահճապետը՝ սաստիկ բարկացաւ նրանց վրայ։ Առաջիններից աւելի քաշքշել տուեց նրանց. և այնքան սաստիկ քաշքշեցին, որ չատերը կարծեցին, թէ մեռան։ Բայց երբ երեք ժամ անցաւ, նորից սկսեցին խօսել երկուսը և ասացին. «Ինչ ենք համարում այս անարգանքը և ոչինչ մեր մարմնին տուած ցաւերը՝ Աստծու մեծ սիրոյ հանդէպ, որով նահատակուեցին մեր հոգեւոր հայրերը։ Հապա՛, կանգ մի՛ առնի և մի՛ դադարի, այլ ինչ որ նրանց վերաբերմամբ արիր, նոյնը կատարի՛ր նաև մեր վերաբերմամբ։ Եթէ նրանց գործերը քեզ վատթար են թւում, մերը կրկնապատիկ համարիր. որովհետեւ նրանք խօսքով էին հրամայում, իսկ մենք գործով կատարում էինք հրամայուածը»։

Այն ժամանակ է՛լ աւելի զայրացաւ նրանց վրայ և հրամայեց մահու ծեծ տալ նրանց։ Նրանցից ամէն մէկին վեցական դահիճ փոխուեց, և մինչդեռ կիսամեռ ընկած էին գետնի վրայ, հրամայեց երկուսի ականջները տակից կտրել։ Եւ այնպէս խորը կտրեցին, որ կարծես երբեք իրենց տեղում չէին եղել։

Սաստիկ հարուածներից զարթնեցին ինչպէս քնից, սկսեցին աղաչել ու պաղատել և ասացին. «Աղաչում ենք քեզ, թագաւորի քա՛ղ վինուր, կա՛մ մեզ էլ մահով սպանիր, ինչպէս մեր հայրերին, և կամ մեր պատիժն էլ վերջիններիս նման արա։ Որովհետեւ ահա մեր լսելիքն առողջացան երկնային առողջութեամբ, իսկ հոտոտելիքը դեռ մնում են իրենց տեղերում ցաւ ու չարչարանքի մէջ. կիսապարգեւ մի՛ անիր մեզ երկնքի բարութիւնից։ Մեր մարմիններըը սրբեցիր քաղ տալով և մեր լսելիքը՝ կտրելով. սրբի՛ր նաև մեր քթերը՝ կտրելով. որովհետեւ որքան մեզ տգեղացնես երկրաւորով, այնքան աւելի կը գեղեցկացնես երկնաւորով»։

Դահճապետը հեզութեամբ պատասխան տուեց և ասաց. «Եթէ ես աւելի երկար մնամ ձեզ մօտ, կարծեմ ինձ էլ ձեր յամառութեան աշակերտ կը դարձնէք։ Ահա յայտնում եմ ձեզ նաև թագաւորի կամքը։ Ձեզ պատժելու վերաբերեալ եղած հրամանն այդքան էր. իսկ այդ պատժից յետոյ դուք պէտք է գնաք Ասորեստան և մշակութիւն անէք արքունի գործերում. որպէսզի ով ձեզ նայի՝ այդ նոյն յամառութեան մէջ հաստատ չմնայ թագաւորի հրամանների դէմ»։

Երանելիներն ասացին նրան. «Դու մեր երկիրը կիսագործ թողիր197. մենք արքունի երկրում մեր կէս մարմիններով չենք կարող աշխատել»։

Երբ այս լսեց դահճապետը, նրանց տանող զինուորներին աղաչեց և ասաց. «Այստեղից դուք առէք գնացէք միայն. երբ Ասորեստան հասնեն, թող չրջեն՝ ուր կամենում են»։

Սրանք են հայոց խոստովանողները, որոնք ուրախութեամբ իրենց անձերի վրայ կրեցին խեղութիւնն ու չարչարանքը։ Բայց որովհետեւ ազատուեցին սուրբ մահից, սգով ու տրտմութեամբ էին գնում երկար ճանապարհը։ Նրանց ծանր չէին թւում ոտների և ձեռների կապանքները, այլ այն, թէ ինչո՞ւ արժանի չեղանք հաւասարուելու քաղ նահատակներին։

Երբ նրանց տարան-հասցրին Բաբելացոց երկիրը, մի գաւառ, որ Շահուղ198 է կոչւում, թէպետեւ արքունի պատժի ենթակայ էին, սակայն թէ՛ յայտնի և թէ գաղտնի մեծ ընդունելութիւն գտան այն երկրի բնակիչների կողմից։ Բայց երանելիներն այնուամենայնիւ խիստ տխուր էին այն իմաստով, թէ

քիչ ենք աշխատել և շատ ենք հանգստանում. և չարունակ նոյն մտատանջութեան մէջ էին։

Երանք աշխատում էին տեսնել նախարարների սուրբ կապանքները, ծառայել նրանց մարմնաւոր պիտոյքներին։ Այս բանն իմաց տուին այն երկրի մեծամեծներին, որոնք քրիստոնէութեան նոյն սուրբ ուխտի մէջ էին։ Եւ բոլոր մեծամեծները ու փոքրները հաւանութիւն տուին սրան՝ յայտարարել ամբողջ երկրում, որ ամէնքն էլ համաձայն լինեն մարմնաւոր պիտոյքներ (հայթայթելու) միջոցով մասնակից լինել սուրբ կապուածներին հեռաւոր օտարութեան մէջ։

Եւ այսպէս տարէցտարի ժողովում էին իւրաքանչիւր մարդու կարողութեան համեմատ, ո՛րից քիչ և ո՛րից շատ, ում ձեռին ինչ որ պատրաստ կար, թէ՛ դրամ և թէ դահեկան, ժողովում–պատրաստում և տալիս էին երանելիներին, որ տանեն նրանց։ Եւ այսպէս ծառայեցին նրանք, մինչեւ լրացաւ սպասաւորութեան տաս տարին։

Եւ որովհետեւ խիստ դաժան կեանքի մէջ էին այն չոգ երկրում և անդադար ճանապարհորդում էին նոյն Շահուղ, Մեշովն199 և Քաչկար200 երկրներում և ամբողջ Ասորեստանում ու Խուժաստանում, սաստիկ տօթից խորշակահար մեռաւ սուրբ Յորէնը և ամփոփուեց այն երկրի բնակիչների կողմից սուրբ վկաների հետ։

Իսկ երանելի Աբրահամը չարունակ նոյն առաքինի գործն էր կատարում. շրջում-հաւաքում էր հաւատացեալների բոլոր տուրքերը և տանում էր մեծ Հեռաստանը և անձամբ բաժանում իւրաքանչիւրի կարիքների համեմատ։ Եւ այսպէս չարունակուեց մինչեւ պատժուածների տասներկուերորդ տարին, մինչեւ որ բոլորը միասին աղաչեցին նրան, որ համաձայնի գնալ Հայոց աշխարհը, որպէսզի երբ նա հասնի նրանց մօտ, նրա մէջ տեսնեն նաև այն քաջ նահատակներին, որոնք սպանուեցին սրով, նրանում տեսնեն նաև չարչարանքների սուրբ կապանքները։

Եւ երբ մարտիրոսները, խոստովանողներն ու կապուածները յանձին նորա տեսնուեն, նրա չնորհիւ կ'օրհնուի ամբողջ աշխարհը, նրա չնորհիւ կ'օրհնուեն և կ'աճեն նրանց երեխաները, նրանով կը պատատանան և դէպի սրբութիւն կը դիմեն երիտա-

սարդները, նրանով կը համեստանան և կ'իմաստնանան նրանց ծերերը։ Նրա չնորհիւ նրանց իշխանները մարդասիրութիւն կը սովորեն, նրա չնորհիւ Աստծուց գութ կ'ընկնի թագաւորի սիրտը՝ չինել ամբողջ երկիրը և խաղաղութիւն տալ նրան։ Նրանով կը պարծենան եկեղեցիներն իբրեւ կատարեալ և քաջ զինուորով, նրանով կը զարդարուեն վկայարանները, նրանով վկաներն էլ կը ցնծան և կը բերկրին։ Նրանով նաև Աւարայրի դաշտը պայծառանալով՝ ծաղիկներով կը լցուի, ո՛չ թէ անձրեւաբեր ամպերից, այլ նահատակների սուրբ արիւնով և նրանց ցիրուցան եղած սուրբ ոսկրների սպիտակութեամբ։ Երբ խոստովանողն իր բազմավաստակ ոտքը դնի պատերազմի լայնատարած տեղերը, երբ կենդանի մարտիրոսը չրջի այնտեղ, կենդանին կենդանիների մօտ գնալով՝ ամբողջ աշխարհը նորից կենդանութիւն կը ստանայ։

«Գիտենք, ասում են, երբ սրան տեսնեն Հայոց աշխարհի բոլոր միայնակեացները, սրանով կը յիշեն պատերազմողների հոգեւոր դնդերին, որոնք իրենց անձը, ասում են, մեր փոխարէն մահուան ենթարկեցին և իրենց արիւնը թափեցին իբրեւ հաշտութեան զոհ Աստծուն։ Սրանով կը յիշուեն այն սուրբ քահանաները, որոնք սրախողխող արուեցին այս օտարութեան մէջ և իջեցրին թագաւորի սաստիկ բարկութիւնը։ Սրանով թերեւս մեր կապանքներն էլ յիշեն և աղօթք անելով խնդրեն Աստծուն, որ մեզ համար դերութիւնից դարձ լինի դէպի մեր հայրենի երկիրը։

«Որովհետեւ սաստիկ փափագում ենք ո՛չ միայն մարմնաւոր կարօտը լցնելու, այլ աւելի եւս տեսնելու մեր սուրբ եկեղեցիներն ու մեր արբասէր պաշտօնեաներին, որոնց մենք նշանակեցինք ու հաստատեցինք այնտեղ։ Եւ եթէ միւս անգամ Աստուած յաջողի մեզ գնալ և լրացնել մնացածների կարօտութիւնը, գիտենք, որ Աստուած մեզ համար էլ կը բանայ իր ողորմութեան դուռը՝ միեւնոյն ճանապարհով գնալու, որով այս սրբի ոտքերը կ'առաջնորդեն»,

Այս խորհուրդը մտածելով աստուածաշնորհ նախարարները՝ մեծ թախանձանքով առան Խոստովանողի հաւանութիւնը։ Եւ որովհետեւ երբեք սովոր չէր բարի բանին հակառակ գնալ, իր նախկին սովորութեան համեմատ այստեղ էլ չտապեց չուտով

կատարել աստուածային առաքինութեան հետեւողների միաբան հրամանը։ Եկաւ–հասաւ Հայոց աշխարհը։

Իսկոյն չտապեցին և նրա առաջ դուրս եկան տղամարդիկ և կանայք, մեծերն ու փոքրերը, և ազատների ու չինականների ամբողջ բազմութիւնը։ Ընկնում էին և փաթաթւում սրբի ոտներով ու ձեռներով և ասում. «Օրհնուա՜ծ լինի Տէր Աստուածը բարձունքում, որ երկնքից մեզ համար հրեշտակ ուղարկեց՝ յարութեան աւետիս բերելու մեզ, որպէսզի արքայութեան ժառանգ լինենք։ Որովհետեւ ահա քո մէջ կերպարանք առած ենք տեսնում յարութեան յուսով բոլոր հրաժարուածներին և արձակման ակնկալութիւն ունեցող կապուածներին։ Քո մէջ ենք տեսնում նաև մեր աշխարհի չինութիւնը խաղաղութեամբ. քեզանով մեր եկեղեցիները ցնծում են և բերկրանքի մէջ են, և քեզանով մեր սուրբ վկաները անդադար բարեխօս կը լինեն մեզ համար Աստծու մօտ։ Օրհնի՛ր մեզ, մե՛ր սուրբ հայր, դու հանգուցեալների բերանն ես, մեզ հետ խօսի՛ր յայտնի օրհնութեամբ, որպէսզի մեր հոգիների մէջ ծածուկ լսենք սրբերի օրհնութիւնները։

«Ճանապարհ բաց արիր նրանց համար, ովքեր փափագում էին գալ իրենց երկիրը։ Խնդրի՛ր Աստծուց, որ չուառով գան սուրբ կարապետիդ յետեւից։ Եւ ինչպէս որ բաց արիր երկրի արգելուած ճանապարհը, երկնքում էլ բաց արա մեր աղօթքների դուռը, որպէսզի մեր՝ մեղաւորներիս՝ պաղատանքն էլ հասնի Աստծու առաջ նոյն կապուածների բարեխօսութեան համար. եւ քանի դեռ այս մահկանացու մարմիններում մէջ ենք, ինչպէս որ տեսանք քո երանելի սրբութիւնը, տեսնենք նաև մեր անձկալի սիրելիներին, մենք, որ չատ ժամանակներից ի վեր կոտրուած ու պաշարուած ենք մեր հոգիներով ու մարմիններով։ Արդ, հաւատում ենք անսուտ յոյսին, որ ինչպէս կատարուեց–լրացաւ քեզանով քո սուրբ սիրոյ տեսութիւնը, այնպէս էլ մօտ ժամանակներս պիտի տեսնենք Քրիստոսի ճշմարիտ վկաներին, որոնց երկնաւոր գեղեցկութեան տեսքին փափագում ենք չարունակ»։

Բայց երանելի Յոստովանողը, թէպէտեւ այսպէս սիրով ընդունուեց ամբողջ աշխարհի կողմից, ամենեւին չուզեց ոեւէ մէկին մօտենալ մարմնաւոր կարիքների բաւարարման համար, այլ ընտրեց իրեն համար բազմամբոխ ժողովրդից մեկուսի մի տեղ և երեք առաքինի եղբայրների հետ մեծ ճգնութեամբ աւարտեց իր կեանքը։

Եթէ մէկը կամենայ նկարագրել, դժուար թէ կարողանայ պատմել նրա առաքինի վարքը։ Որովհետեւ եթէ նրա տքնութիւնն ասես, անչէջ կանթեղի նման վառուում էր ամբողջ գիշերներ. եթէ սակաւապետութիւնն ասես կերակուրների վերաբերմամբ, համարեա թէ անկերակուր հրեշտակներին էր նմանուում։ եթէ հեզութիւնն ու խոնարհութիւնն ուղենաս ասել, կենդանի էակների մէջ չես կարող նրա նմանը գտնել. իսկ եթէ անբնչաւիրութիւնն ուղենաս ասել, ինչպէս որ մեռած մարդը կայքով չի խաբուի, այդպէս էլ ճշմարտութեամբ իմացիր այս երանելու վերաբերմամբ։

Անդադար ձայնով չարունակ պաշտամունք էր մատուցանում և աննահանջում աղօթքով միշտ Աստծու հետ խօսում էր բարձունքում։ Աղ եղաւ նա անհամացածների համար, և դրդիչ խթան հանդիսացաւ բոլոր ծուլացածների համար։ Նրանով պախարակուեց ագահութիւնը, և չուայտ որկրամոլութիւնը սաստիկ աւմաչեց նրա չնորհիւ։ Նա առողջութիւն եղաւ Հայոց աշխարհի համար և շատ վիրաւորներ գաղտնի կերպով առողջութիւն գըտան նրա չնորհիւ։ Նա կատարեալ ուսուցիչ եղաւ իր ուսուցիչների համար և խրատատու սուրբ հայր՝ իր հայրերի համար։ Նրա համբաւը լսելով՝ իմաստնացան տգէտները և նրա մօտիկութիւնը տեսնելով՝ զգաստացան լկտիները։ Մարմնով բնակուում էր մի նեղ խցի մէջ, իսկ նրա սրբութեան ահը պատել էր թէ՛ հեռաւորներին և թէ մերձաւորներին։ Դեւերը զարհուրեցին և փախան նրանից, հրեշտակներն իջան և շրջապատել էին նրան։

Ցոյները նրա պատճառով երանի տուին Հայոց աշխարհին և շատ բարբարոսներ չտապեցին տեսնել նրան մարմնով։ Նա սիրելի եղաւ Աստծու սիրելիներին, և ճշմարտութեան թշնամիներից շատերին առաջնորդեց դէպի սուրբ սէրը։ Իր առաքինութեան սկիզբը հէնց մանուկ հասակից դրուեց, և նոյն առաքինութեամբ հասաւ մինչեւ իր կեանքի վերջը։ Ինչպէս որ աշխարհիս սուրբ ամուսնութեան կարգի մէջ չմտաւ, այնպէս էլ այս աշխարհի բոլոր աշխականացու բաների մարմնաւոր պէտքին չենթարկուեց։ Եւ եթէ պէտք է պարզօրէն ասել, ինչպէս որ մարմնի պիտոյքները փոխեց հոգեւոր պիտանացու բաների հետ, հէնց այնպէս էլ երկրից երկինք փոխադրուեց։

ԱՅՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ՅՕԺԱՐ ԿԱՄՔՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԻՐՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ԱՆՁԵՐԸ ԱՐՔՈՒՆԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԻ ՅԱՆՁՆԵՑԻՆ

Սիւնեաց ցեղից երկու եղբայրներ՝ ԲԱԲԳԷՆ և ԲԱԿՈՒՐ.
Արծրունեաց ցեղից՝ ՆԵՐՇԱՊՈՒՀ և ՇԱՒԱՍՊ և ՇՆԳԻՒ և ՄԵՀՐՈՒԺԱՆ և ՊԱՐԳԵՒ և ՏԱՃԱՏ.
Մամիկոնեան ցեղից՝ ՀԱՄԱՋԱՍՊԵԱՆ և ՀԱՄԱՋԱՍՊ և ԱՐՏԱՒԱԶԴ և ՄՈՒՇԵՂ.
կամսարականների ցեղից՝ ԱՐՇԱՒԻՐ և ԹԱԹ, ՎԱՐՋ, ՆԵՐՍԵՀ և ԱՇՈՏ.
Ամատունեաց ցեղից՝ ՎԱՀԱՆ և ԱՌԱՆՁԱՐ և ԱՌՆԱԿ.
Գնունեաց ցեղից՝ ԱՏՈՄ.
Դիմաքսեանների ցեղից՝ ԹԱԹՈՒԼ և ՍԱՏՈՑ, երկու այլ ընկերներով.
Անձեւացեաց ցեղից՝ ՇՄԱՒՈՆ և ՋՈՒԱՐԷՆ և ԱՌԱՒԱՆ.
Առաւեղեանների ցեղից՝ ՓԱՊԱԿ և ՎԱՐԱԶԴԷՆ և ԴԱՏ.
Արծրունեաց տոհմից՝ ԱՊՐՍԱՄ.
Մանդակունեաց տոհմից՝ ՍԱՀԱԿ և ՓԱՐՍՄԱՆ.
Տաչրացեաց ցեղից՝ ՎՐԷՆ.
Ռափսոնեան տնից՝ ԲԱԲԻԿ և ՅՈՀԱՆ։

Այս երեսուն և հինգ մարդկանցից ոմանք աւագ նախարարներից էին, ոմանք կրտսերներից, բայց բոլորն էլ մարմնով նախարարազուններ են, իսկ հոգեւոր առաքինութեամբ՝ բոլորն էլ երկնային քաղաքացիներ։ Եւ ուրիշ շատ ազատ մարդիկ էլ, ոմանք թագաւորական տնից, ոմանք հէնց նոյն նախարարների տնից, քաջ նահատակների նիզակակիցներ ու մարտակիցներ։ Սրանք բոլորն էլ յօժարակամ յանձնուեցին չարչարանքների սուրբ կապանքներին։

Բայց մենք այժմ ո՛չ մի այն այս բանի վրայ ենք զարմացած, որ կամովին գնացին, փորձութեան մէջ ընկան, այլ աւելի այն բանի վրայ ենք սքանչացած, որ նրանց նման փափկակեաց մարդիկ, ձիւնապատ լեռների լայնարձակ ապրած բնակիչները,

խորշակաբեր դաշտերի բնակիչ դարձան։ Նրանք, ովքեր ազատ երէնների նման չրջում էին ծաղկաբեր սարերում, ձեռքերն ու ոտքերը կապած գցուեցին Արեւելքի բոցակէզ աշխարհը։ Հացի նեղութեան և ջրի կարօտութեան մէջ էին, ցերեկը խաւարում և գիշերն անլոյս, անվերարկու և անանկոզին, գազանների նըման գետնին փռուած ինն տարի և վեց ամիս201։ Եւ այնպիսի մեծ ուրախութեամբ էին տանում այդ նեղութիւնը, որ ոչ ոք ամենեւին տրտունջ ու հայհոյանք չլսեց նրանց բերանից, այլ յորդառատ գոհացողութիւն՝ աստուածապաշտութեան մէջ գտնըւող բարեկեցիկ մարդկանց նմանութեամբ։

Եւ մինչդեռ նրանք այսպիսի նեղութեան մէջ էին, կասկած ընկաւ թագաւորի սիրտը, թէ սաստիկ վշտի պատճառով ձանձրացած կը լինեն իրենց գառն կեանքից։ Նրանց մօտ ուղարկեց մեծ հազարապետին և ասաց. «Գոնէ այսուհետեւ զգաստացէք ձեզ ու ձեզ, և նոյն յամառութեան մէջ մի՛ մնաք. երկրպագեցէք արեգակին, և կ'արձակուէք այդ չարաչար կապանքներից և ամէն մէկդ կրկին տէր կը դառնաք ձեր հայրական գոյքին»։

Պատասխան տուին երանելիներն ու ասացին. «Փորձելու համա՞ր ես եկել–հարցնում մեզ, թէ՞ իսկապէս թագաւորն ինքն է ուղարկել քեզ»։ Հազարապետը երդուեց և ասաց. «Աստծիս մէջ աւելի պակաս խօսք չկայ, որ նրա բերանից դուրս եկած չլինի»։ Այն ժամանակ ասացին նրան. «Ովքեր միանգամ աչքերտել են ճշմարտութեանը, այլեւս երբեք յետ չեն դառնայ նրանից, այլ ինչ որ կան՝ այնպէս էլ մնում են։ Մի թէ այն ժամանակ չիմանալո՞ւց էիք պնդում, և այսօր նեղութի՞ւնն իմաստնացրեց մեզ, այդպէս չէ։ Այլ մենք ափսոսում ենք այն բանի համար, թէ ինչո՛ւ մենք էլ առաջիններին հետ չվերջացրինք մեր կեանքը։ Իսկ այժմ աղաչում ենք քեզ և քո միջոցով ձեր թագաւորին՝ այդպիսի բաների մասին մեզ այլեւս մի՛ հարցնէք, այլ ինչ որ մտքներումդ դրել էք մեր վերաբերմամբ՝ կատարեցէ՛ք»։

Երբ մեծ հազարապետն այս լսեց, իր մտքում չատ գովեց նրանց հաստատամտութիւնը, և այնուհետեւ սկսեց նրանց սիրալիրութիւն ցոյց տալ, ինչպէս Աստծու սիրելիների։ Եւ չատ յորդորական խօսքերով թագաւորին համոզում էր, որ նրանց ների և արձակի իրենց կապանքներից։ Որովհետեւ նա թէպետև

փոխուեց արքունի հազարապետութեան պաշտօնից, և շատ բաներում վնասակար ճանաչուեց, ինքը հէնց իրեն էր համարում Հայոց աշխարհի աւերման պատճառը, ուստի և մեծ անարգանքով իր տունն ուղարկուեց, սակայն կապուածների մասին երբեք չէր ուզում չարախօսել՝ մինչեւ իր կեանքի վերջը։

Իսկ երանելիներից չատերը, որոնք աւելի երիտասարդ էին, սովորեցին իրենց հայրենի աշխարհի գիրն ու գրականութիւնը, և այն դարձաւ նրանց համար հոգեւոր կերակուր, որով իրենց խրախուսում էին և ընկերներին մխիթարում։ Եւ այնպէս ըզմայլուեցին իրենց մտքով ու հոգով, որ նրանց ծերագոյններն անգամ փափկացան, երիտասարդացան, մանկացան։ Որովհետեւ թէպէտ նրանց ուսման ժամանակներն անցել էին, սակայն բազմաթիւ սաղմոններ բերան անելով՝ հոգեւոր երգակից էին դառնում մանուկների մատաղերամ քաղմութեանը։

Եւ այնպէս էին պայծառացնում սրբութեան պաշտամունքը, մինչեւ որ դաժան դահիճներից ոմանք հրապուրուում էին՝ լսելով նրանց երգերի քաղցրութիւնը, և որքան իրենց ձեռքից գալիս էր, թագաւորի հրամանից դուրս դիւրութիւններ էին տալիս նրանց, սէր ու խնամք էին ցոյց տալիս բոլորին, և շատ անգամ հոգում էին նրանց մարմնաւոր կարիքները։ Մանաւանդ որ Աստծու յաջողութեամբ բժշկութեան հրաշքներ էլ էին կատարուում նրանց ձեռքով. ինչպէս որ դիւահարներից շատերը բժշկուեցին այն քաղաքում, որտեղ գտնուում էին կապուածները։ Քանի որ նրանց մօտ ոչ մի քահանայ չկար, նրանց էին դիմում քաղաքի հիւանդներն ու ցաւագարները, և նրանցից ստանում ամէն մէկն իր հիւանդութեան բժշկութիւնը։

Այլեւ այն աշխարհի202 մեծ իշխանը, որի անունը Հարեւաղում Շապուհ էր և որին յանձնուած էին բոլոր պատժուածները, շատ գութ ու սէր ցոյց տուեց նրանց բոլորին։ Նրանցից ծերերին հօր տեղ էր ընդունում, իսկ աւելի փոքրերին գգւում էր իբրեւ իր սիրելի որդիներ։ Շատ անգամ գրեց արքունիք և յայտնեց կապուածների վշտերն ու նեղութիւնը, և նրանցից իւրաքանչիւրի ազնիւ վարք ու բարքը բացատրեց նրանց. մեծամեծների առաջ ճգնում, ամէն տեսակ հետքերով ջանք էր գործ դնում, մինչեւ որ շատ բարեխօսների միջոցով թագաւորի հաճութիւնն առան։ Հրամայեց նրանց կապանքներն արձակել և

վերացնել նրանց վրայից պատժի սուգը և նրանց նախարարութեանը վայել զգեստ հագցնել. նրանց ոռճիկ կարգեց և հրամայեց ամբողջ սպառազինութիւնն արքունիքից տալ։ Գրեց և յանձնարարեց մեծ սպարապետին, որ արքունի գօրքի հետ պատերազմելու գնան։

Եւ երբ այսպէս կարգադրութեց ու կատարութեց թագաւորի նոր հրամանը, չատ տեղերում, ուր որ նրանք հասան, գերազանց գտնուեցին քաջութեան գործում, այնպէս որ նրանց մասին գովասանութեան գրութիւն էլ գրուեց Դուռը։ Թագաւորի սիրտն այնպէս քաղցրացաւ, որ հրամայեց բոլորին իր առջեւ բերել։ Եկան և ներկայացան արքայից արքայ Ցազկերտին։ Ուրախ-զուարթ հանդիպեց նրանց, հանգիստ խօսքերով խօսեց նրանց հետ, և խոստացաւ ամէն մէկին իր իշխանութիւնը տալ հայրենի պատուի կարգով և նրանց իրենց աշխարհն ուղարկել՝ քրիստոնէական կրօնը պաշտելու, որի համար այնքան մեծամեծ չարչարանքներ էին կրել։

Եւ մինչդեռ նրանք այնտեղ մեծ ուրախութեամբ (ազատ) շրջում էին բանակում թագաւորի առաջ, այդ նոյն ժամանակ հասաւ թագաւորի կեանքի վիրջը իր թագաւորութեան տասնիններորդ տարում[203]։ Եւ միմեանց հակառակ դուրս գալով՝ նրա երկու որդիները կռւում էին թագաւորութեան համար. այս դժնդակ պատերազմի գործը սաստկութեամբ չարունակուեց երկու տարի։

Մինչդեռ նրանք այս խռովութեան մէջ էին, ապստամբեց նաև Աղուանից թագաւորը. որովհետեւ նրանց քեռորդին էր և հայրենի հաւատի համաձայն առաջ քրիստոնեայ էր և արքայից արքայ Ցազկերտը նրան բռնութեամբ մոգական կրօնին էր դարձրել։ Եւ նա իրեն համար յարմար ժամանակ ընտրելով՝ իր անձը մահուան վտանգի ենթարկեց. աւելի լաւ համարեց պատերազմում մեռնել, քան թէ ուրացութեամբ թագաւոր լինել։ Այս բոլորի պատճառով ուշացաւ նրանց (Հայոց) աշխարհն ուղարկելը։

Իսկ Ցազկերտի կրտսեր որդու դայեակը, որի անունը Ռահամ էր Միհրան տոհմից[204], թէեւ տեսաւ Արեաց զօրքը երկու մասի բաժանուած, բայց մէկ կիսով գազանաբար յարձակուեց թագաւորի երէց որդու վրայ. ջարդեց, կոտորեց նրա զօրքը և

թագաւորի որդուն ձերբակալելով՝ հրամայեց տեղն ու տեղը սպանել։ Իսկ մնացած զօրքն էլ հաւանութեան բերեց և միաբանութիւն հաստատեց Աբեաց ամբողջ զօրքի մէջ, և թագաւորեցրեց իր սանին, որի անունը Պերոզ[205] էր։

Թէպէտեւ Արեաց աչխարհում կատարեալ խաղաղութիւն հաստատեց, բայց Աղուանից թագաւորը չէր ուզում նորից ծառայութեան տակ մտնել. այլ նա քանդեց Ճորա պահակը և Մասքութների զօրքն այս կողմն անցկացրեց. միաբանեց տասն և մէկ լեռնական թագաւորներին[206] և պատերազմով ընդդէմ կացաւ Արեաց զօրքին և մեծ վնաս պատճառեց արքունի զօրքերին։ Թէպէտ երկու–երեք անգամ աղաչանքի գրութիւններ ուղղեցին նրան, բայց չկարողացան այդ մարդուն համոզել։ Նա գրով ու պատգամաւորութեամբ յանդիմանում էր նրանց՝ Հայոց երկիրն ի զուր տեղը աւերելու համար։ Նրանց յիշեցնում էր նախարարների մահը և կապուածների չարչարանքները։ Ասում էր՝ «Այնչափ սիրոյ և վաստակների համար փոխանակ կեանք չնորհելու, նրանց արեւը խաւարեցրիք։ Լաւ կը լինի ինձ համար, ասում է, նրանց չարչարանքները յանձն առնել, քան թէ քրիստոնէութիւնը թողնել»։

Եւ երբ տեսան, որ ո՛չ բռնութեամբ և ո՛չ էլ սիրով չկարողացանք համոզել նրան, չատ դանձեր ուղարկեցին Խայլանդուքների աչխարհը, բաց արին Ալաննների դռները[207], չատ զօրք հանեցին Հոներից և մի տարի կռուեցին Աղուանից թագաւորի դէմ։ Թէպէտեւ նրա զօրքը ցրուեց ու հեռացաւ նրանից, սակայն նրան չկարողացան հնազանդեցնել, այլ դեռ մեծամեծ հարուածներ էլ ստացան, ո՛րը պատերազմով և ո՛րը հիւանդութիւնների չարչարանքներով։ Եւ պաշարումը երկար ժամանակ տեւելու պատճառով աչխարհի մեծ կէսն աւերուեց, բայց ոչ ոք նրանից չերկմտեց ու չքաժանուեց։

Պարսից թագաւորը դարձեալ մարդ ուղարկեց նրա մօտ՝ «Իմ քրոջն, ասաց, և քեռորդուս ուղարկի՛ր ինձ մօտ, որովհետեւ ի բնէ մոգական կրօնի հետեւող էին և դու քրիստոնեայ դարձրիր, իսկ աչխարհդ թող քեզ մնայ»։ Բայց այն աքանչելի մարդը կռւում էր ո՛չ թէ տէրութեան համար, այլ աստուածպաշտութեան։ Մօրն ու կնոջը ուղարկեց և ամբողջ աչխարհից

հրաժարուեց. իսկ ինքը վերցրեց աւետարանը և ուզում էր աշխարհից հեռանալ։

Երբ այս բանը լսեց Թագաւորը, շատ ափսոսաց ու ցաւեց իր մտքում, և ամբողջ մեղքն իր հօր վրայ էր գցում։ Անսուտ երդում կնքեց և ուղարկեց նրան, թէ՝ աշխարհիցդ մի՛ հեռանայ մխայն, և ինչ որ ասես՝ կ'անեմ։ Նա խնդրեց՝ ինչ որ մանկութիւնից իր սեփականն էր և որ իր հայրը չնորհել էր նրանից երեխայ ժամանակ — հալար առուն. Թագաւորից ստացաւ այդ և մխայնակեաց ների հետ մխասին նստեց այնտեղ։ Եւ այնպէս անդադար աստուածային պաշտամունքով զբաղուեց, որ ամենևին չէր էլ յիշում, թէ առաջ Թագաւոր է եղել։

Այս բոլոր երկարատեւ խռովութիւնները, որոնք չարունակուեցին մինչեւ արքայից արքայ Պերոզի հինգերորդ տարին, պատճառ եղան Հայոց նախարարների չարձակուելուն։ Բայց (նախկին) տարիների սովորութիւնից աւելի չատացրեց նրանց ռոճիկները և արքունի խնճոյքներին մասնակցելու իրաւունք տուեց։

Եւ նոյն հինգերորդ տարում նրանցից չատերին կրկին չնորհեց նրանց գոյքը և մխանեերին էլ յոյս տուեց, որ վեցերորդ տարին208 բոլորին անխտիր կ'արձակի իրենց գոյքով ու պատուով։

Բայց ես դարձեալ պիտի վերադառնամ այս կէտին։

Իսկ երանելի առաքինիների և կապուածների ու պատերազմում ընկածների կանանցն ամբողջ Հայոց աշխարհում ես հաշուել չեմ կարող, որովհետեւ չխմացածներս աւելի չատ են, քան թէ խմացածներս։ Հինգ հարիւրի չափ անուն-անուն ճանաչում եմ, ո՛չ մխայն նրանցից, ովքեր աւագագոյններից էին, այլեւ չատերին կրտսերագոյններից։

Բոլորը մխահամուռ երկնաւոր նախանձով լցուած ամենևին պակաս չմնացին նրանցից, ովքեր աշխարհ չէին մտել։ Որովհետեւ թէ՛ աւագագոյնները և թէ մանկագոյնները հաւատի մխեւնոյն առաքինութեամբ զգեստաւորուեցին։ Ամենևին չյիշեցին մայրենի ազատութեան փափկութեան անունը, այլ իբրեւ այնպիսի մարդիկ, որոնք հէնց սկզբից նեղութիւնների են համբերել չինական սովորութիւնների օրինակով և տանջուելով են անցկացրել իրենց կեանքը, նրանցից էլ աւելի մեծ վշտերի համբերել յանձն առան։

Ո՛չ միայն իրենց հոգիների մէջ մխիթարուած էին յաւիտենական յոյսի աներեւոյթ զօրութեամբ, այլեւ մարմնի նեղութիւններով է՛լ աւելի կրեցին ծանր բեռը։ Որովհետեւ թէպէտ ամէն մէկն էլ իրենց ձեռնասուն սպասաւորներն ունէին, բայց նրանց մէջ չէր երեւում, թէ ո՛րն է տիկինը և կամ ո՛րը նաժիշտը. բոլորի զգեստները միատեսակ էին և միապէս երկուսն էլ պառկում էին գետնին։ Ոչ մէկը մեւսի համար անկողին չէր գցում. որովհետեւ մինչեւ իսկ չգիտէին խոտեղէնները ջոկել միմեանցից. միեւնոյն թուխ գոյնն ունէին փոխիները եւ միեւնոյն սեւ գոյնի էին գլխաոտակերի բարձերը։

Ջկային նրանց համար առանձին անուշահամ կերակուրներ պատրաստող խոհարարներ և ոչ էլ ջոկ հացթարներ՝ նրանց ազատների սովորութեան համաձայն սպասաւորելու համար, այլ (այդ ամէնը) ընդհանուր էր։ Շարաթամուտն (անդ էին կացնում) անապատում բնակուող մենակեացների կարգով։ Ո՛չ ոք միւսի ձեռին ջուր չէր լցնում, և ո՛չ էլ կրտսերները աւագներին սրբիչ էին մատուցանում. փափկասուն կանանց ձեռքը օճառ չընկաւ և իւղ չառաջարկուեց ուրախութեան հանդէսների համար։ Նրանց առջեւ մաքուր սկուտեղներ չդրուեցին և ոչ էլ բաժակակալներ տրուեցին ուրախութեան համար. նրանցից ոչ մէկի դռների մօտ նուիրակ չկանգնեց և պատուական մարդիկ չկանչուեցին նրանց խնճոյքի սեղանին. նրանց մտքերից չանցաւ, թէ գուցէ անուշանող ոեւէ դաստիարակ կամ մի սիրելի հարազատ ունեն։

Փոշոտուեցին ու ծխոտուեցին նորահարսների սրահակներն ու առագաստները և սարդի ոստայններ ձգուեցին նրանց հարսնարանքներում. կործանուեցին նրանց դահլիճների բարձր գահերը, և խանգարուեցին նրանց սեղանների պարագաները. ընկան-կործանուեցին նրանց ապարանքները և տապալուեցին ու աւերուեցին նրանց ապաստան ծառայող ամրոցները։ Զորացանձրեցին նրանց ծաղկանոցների բուրաստանները և արմատախիլ եղան նրանց գինեբեր այգիների տունկերը։ Իրենց աչքերով տեսան իրենց կայքերի յափշտակութիւնը և իրենց ականջներով լսեցին իրենց սիրելիների վշտերն ու չարչարանքները. նրանց գանձերն առան, թագաւորական արիւն, և ամենեւին զարդեր չմնացին նրանց երեսների վրայ։

Հայոց աշխարհի փափկասուն տիկիններըը, որոնք փափուկ կեանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահաւորակների մէջ, չարունակ թռիչկ ու ոտքով էին գնում ազօթատները. ստանց ձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղութեանը, Ովքեր իրենց մանկութիւնից հորթերի ուղեղներով և երէների փափուկ մսով էին անուել, մեծ ուրախութեամբ խոտեղէն կերակուր էին ընդունում վայրենիների նման և ամենևին չէին յիշում իրենց սովորական փափուկ կեանքը։ Նրանց մարմինների մորթը սեւ գոյն ստացաւ, որովհետեւ ցերեկն արեւակէզ էին լինում և ամբողջ գիշերներն էլ գետնի վրայ էին ընկած։

Մչտական-սաղմոսներն էին նրանց բերանների զբաղմունքները, իսկ կատարեալ մխիթարութիւնը մարգարէների (գրքերի) ընթերցումն էր։ Երկու-երկու միաբանուեցին իբրեւ իրար համաձայն ու հաւատար ամոլներ՝ ուղիղ տանելով արքայութեան ակօսը, որպէսզի ստանց վրիպելու հասնեն իաղաղութեան նաւահանգիստը։

Մոռացան իրենց կանացի տկարութիւնը և առաքինի տղամարդիկ դարձան հոգեւոր պատերազմի մէջ. կռիւ բաց արին ու մարտնչեցին ծայրագոյն մեղքերի դէմ, կտրեցին և դէն գցեցին նրա մահաբեր արմատները։ Միամտութեամբ յաղթեցին խոթամանկութեանը և սուրբ սիրով լուացին նախանձի կապտագոյն ներկուածքը. կտրեցին ագահութեան արմատները և չորացան նրանց ոստերի մահաբեր պտուղները։ Խոնարհութեամբ յաղթահարեցին ամբարտաւանութեանը և մխեւնոյն խոնարհութեամբ հասան երկնաւոր բարձրութեանը։ Աղօթքով բաց արին երկնքի փակուած դռները և սուրբ խնդրուածքներով հրեշտակներին ցած բերին փրկութեան համար. աւետիս լսեցին հեռաստանից և փառաւորեցին Աստծուն բարձունքում։

Այն այրիները, որ նրանց մէջ կային, նորից առաքինութեան հարսներ դարձան և իրենց վրայից վերացրին այրութեան նախատինքը։ Իսկ կապուտածների կանայք կամովին կապեցին իրենց մարմնաւոր ցանկութիւնները և հաղորդակից եղան սուրբ կապուտածների չարչարանքներին. իրենց կեանքում նմանուեցին մեռած քրջ նահատակներին, և հեռուից մխիթարիչ

վարդապետներ եղան բանտարկուածներին, իրենց մատներով աշխատեցին ու կերակրուեցին, և թագաւորից նրանց համար նշանակուած ռոճիկը տարէցտարի թոշակ էին անում և նրանց ուղարկում մխիթարելու համար նմանուեցին անարիւն ճպուռներին, որոնք իրենց երգի քաղցրութեամբ ապրում են առանց կերակրուելու և կենդանի են միայն օդ ծծելով՝ նմանուելով անմարմին (հրեշտակ)ներին։

Շատ ձմեռների սառոյցներ հալուեցին, գարուն հասաւ և նոր ծիծեռներ եկան. կենցաղասէր մարդիկ սեռան և ուրախացան, բայց նրանք երբեք չկարողացան սեռնել իրենց անձկալիներին։ Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հասատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարօտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկութիւնը տեսնելու։ Որսի բարակները վերջացան և բոլորովին դադարեցին որսորդների արշաւանքները։ Նրանք յիշուեցին միայն գրուած յիշատակարաններով և ոչ մի տարեկան տօն նրանց հետու օտարութիւնից առուն չբերեց. նրանց ճաշատեղերին նայեցին ու արտասուեցին և բոլոր աւետաններում յիշեցին նրանց անունները։ Շատ արձաններ էին կանգնեցրած նրանց անուանը և ամէն մէկի անունը նշանակուած էր նրանց վրայ։

Եւ մինչդեռ այսպէս ամէն կողմից ալեկոծւում էին նրանց մաքերը, նրանք ամենևին չթուլացան երկնաւոր առաքինութիւնից։ Դրսից նայողներին երեւում էին որպէս սպաւոր և չարչարուած այրիներ, իսկ իրենց սրտերում զարդարուած ու մխիթարուած էին երկնաւոր սիրով։

Այլևս ոտվորութիւն չարին հետու երկրից նկած մէկին հարցնելու, թէ ե՞րբ կը լինի, որ տեսնենք մեր սիրելիներին. այլ այն էր նրանց իղձն ու աղօթքն առ Աստուած, որ ինչպէս սկսել են, այնպէս էլ քաջութեամբ ու երկնաւոր սիրով լի նոյնը գլուխ հանեն–վերջացնեն։

Եւ մենք և նրանք առհասարակ ժառանգենք երկնքի արքայութիւնը և հասնենք այն ամենին, ինչ որ խոստացուած է Աստծու սիրելիներին յանուն մեր տէր Յիսուս Քրիստոսի։

ՎԵՐՋ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եղիշէն իր պատմութիւնը վարդանի և Հայոց պատերազմի մասին գրել է Մամիկոնեան Դաւիթ երէցի խնդրով: Ո՞վ է այս Մամիկոնեան Դաւիթ երէցը՝ անյայտ է, և նրա մասին բացի Եղիշէի այս ընծայականից ուրիշ ոչինչ յայտնի չէ: Բարգէն Կիւլեսէրեան («Եղիշէ, ինքնական ուսումնասիրութիւն», Վիեննա, 1909, էջ 79—80) քմահաճ կերպով Դաւիթ Մամիկոնեան երէցի Մամիկոնեան և երէց լինելը ջնջում է և ընծայականը վերագրում Դաւիթ Անյաղթին («կը սիրէի մատնանիշ ընել զայն յանձին Դաւթի, բայց ոչ Մամիկոնեան երէցի, այլ անոր, որ Անյաղթ կը կոչուի»). սակայն այդպիսի կարծիքը հաստատելու համար ոչ մի կռուան և փաստի հեռաւոր նմանութիւն չկայ, բացի Դաւթին «երկրաւոր առաջ գիտութիւն» վերագրելուց. մի բան, որ Դաւիթ Անյաղթի մենաշնորհը համարել չի կարելի: Միխայէլ փաշա Փորթուգալ («Եղիշէի վասն վարդանայ և Հայոց պատերազմին», Վենետիկ, 1903, էջ 173) Մամիկոնեան Դաւիթ երէցին նոյնացնում է Ղազար Փարպեցու կողմից իբրեւ Արտաշատի ժողովի մասնակից յիշուած Դաւիթ երէցի հետ: Այս կարծիքի և նոյնացման դէմ է խօսում այն հանգամանքը, որ այս դէպքում Եղիշէն չէր կարող չիմանալ իր մեկենասի Արտաշատի ժողովական լինելը եւ անշուշտ անունով կը յիշէր նրան, և ոչ թէ կը գործածէր «և պատուական երիցունք ի տեղեաց» անորոշ արտայայտութիւնը:

2. Եղիշէի բնագրում ասուած է. «Ահա ինչ արդեօք հրամայեացես, քանզի թէ հրամայիցիս լաւագունացն». միտքը մութն է: Եղիշէի առաջին աշխարհաբար թարգմանիչ Մարտիրոս Սիմոնեանը թարգմանել է՝ «ինչի՞ համար ես արդեօք հրամայում, կամ գուցէ քեզ հրամայում են աւելի լաւերը» («Եղիշէ վարդապետի պատմութիւնը վարդանի և Հայոց պատերազմի համար», Մոսկուա, 1863, էջ 16): Երկրորդ թարգմանիչը՝ Հ. Ղուկասեանց թարգմանում է. «ինչ պատուէր է արդեօք, որ տալիս ես ինձ կատարելու. անշուշտ լաւագոյն պատուէր» («Եղիշէի պատմութիւնը վարդանի և Հայոց պատերազմի համար», Թիֆլիս, 1891, էջ 10), որ միանգամայն հեռու է բնագրից: Երրորդ թարգմանիչը՝ Գ. ա. ք. Աղաճեանց, հետեւելով Փորթուգալ փաշայի բացատրութեանը (անդ, էջ 174), թարգմանում է. «ինչո՞ւ ես ինձ

հրամայում գրել այդ հատուցման պատմութիւնը. անշուշտ լաւագոյն վարձքին արժանանալու համար» («Եղիշէ, Վարդանանց պատմութիւն», Թիֆլիս, 1911, էջ 2): Մեզ թուում է, որ այս տեղը լաւագոյնն է այն իմաստով հասկանալ, որ Եղիշէն մեծարում է իր մեկենասին՝ ասելով, թէ նա այնքան գիտուն անձ է, որ կարող է իր հրամայածից աւելի լաւերն արտադրել և ուրիշները պէտք է իրեն դիմէին այդպիսի լաւագոյն գործերի համար: Մօտաւորապէս այս իմաստով էլ թարգմանել եմ ես և ուրիշներն էլ այսպէս են հասկանում այս տեղը (տես Փորթուգալ փաշա, անդ, էջ 174, ծանօթ. 2., Կիւլեսէրեան, «Եղիշէ», էջ 79): Կարելի է գուցէ նաև այնպէս հասկանալ, թէ «ինչո՞ւ ինձ պիտի հրամայես գրել այս, քանի որ ինքդ կարող էիր այդ հրամանն ընդունել երեւելիներից» (տես Ս. Յարութիւնեան, Գ. Աղանեանի Եղիշէի աշխարհաբար թարգմանութեան վերաբերեալ յօդուածաշարքը, «Հովիտ», 1911 թ. էջ 333):

3. «Յաղթութեան զօրագլուխ» ասելով հասկացւում է Քրիստոսը:

4. «Արշակունեաց ցեղը» Հայոց թագաւորների այն հարստութիւնն էր, որ Հայաստանում թագաւորել է ըստ աւանդութեան Քր. առաջ 2-րդ դարի կէսերից (հաւանօրէն 132 թուականից) մինչեւ 42 թուականը Քր. յետոյ, ուրեմն հիւր 560 տարի: Այս աւանդութիւնն հիմնուած է Մովսէս Խորենացու տուած տեղեկութիւնների և հաշիւների վրայ (տես այս մասին Սե. Մալխասեան, «Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն», աշխարհաբար թարգմանութիւն, Երեւան, 1940, ակնարկներ, էջ 354—367): Սակայն օտար աղբիւրների հիման վրայ ստուգուած պատմական տեղեկութիւնները չեն արդարացնում Խորենացու տուեալները: Պատմական ճշգրիտ տեղեկութիւնների համաձայն՝ Արշակունիները թագաւորել են Հայաստանում ո՛չ թէ Քր. ա. 132 թուից, այլ միայն 54 թուականից Քր. յետոյ, հաստատապէս 66 թուականից սկսած, երբ Արշակունի Տրդատ 1 թագ ընդունեց Հռոմէական կայսր Ներոնի ձեռքից: Հայ Արշակունիների թագաւորութեան տարիները և յաջորդականութիւնը, մանաւանդ 1 և 11 դարերում, լիովին ճշտուած չեն և զանազան բանասէրներ տարբեր յաջորդականութիւն և ժամանակագրութիւն են տալիս: Մօտաւորապէս ճիշտ պէտք է համարել հետեւեալ ցանկը (տես Գ. Ա. ԽԱԼԱԹԵԱՆՑ. «Օչերկի իստորիի Արմենիի վը րսվեազի սը օբշիմ խողում սոբրիեիյ վը Պերեդնէյ Ազիի», Մոսկուա 1910 և Հ. Յ. Աստուրեան, «Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռոմայ 190—էն ն. Քր. մինչեւ 428 յ. Քր. Համառօտ Հայոց պատմութիւն այս շրջանին». Վենետիկ, 1912):

Տրդատ I (54 թ., պաշտօնապէս 66—75?)
Աքսիդար (?—110)
Պարթամասիր (110—114)
Վաղարշ (117—140)
Սոյեմոս (140—162)
Տաճոր —(162—164)

Սոյեմոս, երկրորդ անգամ (164—169)
Սանատրուկ (190—196)
Վաղարշ II (196—215)
Տրդատ II (215—222)
Արշակ II, Խոսրով (222—238)
Տրդատ III (238—252)
Արտավազդ V (253—273?)
Պարսից տիրապետութիւն և անիշխանութիւն (273—297)
Տրդատ մեծ (297—336)
Խոսրով II (337—342)
Տիրան (342—350)
Արշակ II (350—367)
Պապ (368—374)
Վարազդատ (374—377)
Արշակ III (378—386)
Հայաստանի բաժանումը 384 թ., վերջնականապէս 390 թ.
Խոսրով III Պարսից բաժնում (383—391)
Վռամշապուհ (391—414)
Շապուհ պարսիկ (415—419)
Անիշխանութիւն (419—422)
Արտաշէս կամ Արտաշիր (422—428)
Արշակունեաց բարձումը 428 թ.:

5. Պարսիկ Սասանի ցեղը *կամ* Սասանեան *ճոխմը — սկիզբն է առնում Սասանից, որի թոռն էր Պապակի որդի Արտաշիր 1-ը, Սասանեան պետութեան հիմնադիրը: Սրանք սկզբում գառնում են բուն Պարսկաստանի (Պերսիս) թագաւոր, Պերսեպոլիս մայրաքաղաքով, իսկ ապա Արտաշիր 1՝ հօր մահուանից յետոյ ոչնչացնելով իր բոլոր մեծ նրբայրներին ու հակառակորդներին և թագաւոր դառնալով՝ պատերազմի է դուրս գալիս Պարթեւների արքայից արքայ Արտաւանի դէմ և 224 թուին չարդում է նրան: Նա 226 թուին գրաւում է նաև Կտեսիփոն կամ Տիզբոն մայրաքաղաքը և ամբողջ պետութիւնը ենթարկում իրեն:*

Այս 226 թուից Սասանեան տոհմն իշխում է Պարսկաստանում և երկիրն ու պետութիւնն այնպիսի ծաղկման հասցնում, ինչպիսին նա ունեցել էր Աքեմենեանների ժամանակ միայն. կարելի է ասել, որ Սասանեան պետութիւնը մինչեւ անգամ գերազանցում է Աքեմենեան պետութիւնից թէ՛ ներքին կայունութեամբ և թէ տեւողութեամբ:

Սելեւկեանների տիրապետութեան ժամանակ Իրանում տարածուել էր յունական կուլտուրան և ազգային-կրօնական աւանդութիւնները որոշ չափով յետ էին մղուել: Պարթեւ Արշակունիների օրով, սկսած յատկապէս Միթրիդատ 1-ից (171—138 Ք.ը. ա.), Իրանը նորից անջատուել էր Մակեդոնացիներից և մի նոր համաշխարհային պետութիւն կազմել, որ տարածւում էր Հնդկական լեռնաշխարհից մինչեւ Եփրատ գետը: Այս պետութեան

մէջ բնականաբար հետզհետէ ընկնում էր յունական ազդեցութիւնը և նորի՝ բարգաւաճում զուտ իրանական արեւելեան կեանքն ու սովորութիւնները:

Բայց ազգային կուլտուրայի, կեանքի և կրօնական սովորութիւնների այս ռէակցիան առանձնապէս ուժեղացաւ և իր գագաթնակէտին հասաւ Սասանեան պետութեան ժամանակ: Այս պետութեան ժամանակ է, որ իրանական (զրադաշտական կամ մոգական) կրօնը յայտնական դիրք է գրաւում նաև Իրանում լայնօրէն տարածուած քրիստոնէութեան հանդէպ և մեծ ծաղկման հասնում, որ տեւում է մինչեւ Սասանեան պետութեան անկումը 642 թուին՝ Արաբական արշաւանքների հետեւանքով:

Եղիշէի վարդանանց պատմութիւնն ըմբռնելու համար առանձնապէս կարեւոր է ծանօթանալ քրիստոնէութեան տարածմանն ու վիճակին Պարսկաստանում և Սասանեան թագաւորների քաղաքականութեանը քրիստոնէութեան վերաբերմամբ:

Մեր ունեցած հաստատուն պատմական տեղեկութիւնները վկայում են, որ III դարի սկիզբին արդէն բազմաթիւ քրիստոնէական կազմակերպուած համայնքներ կան Պարսկաստանում, գլխաւորապէս Միջագետքում, որոնք յարաբերութեան մէջ են միւս երկրների քրիստոնէական համայնքների հետ (Եւսեբիոս Կեսարացի, «Եկեղեցական պատմութիւն», VII 5), իսկ III դարի վերջին, նոյն Եւսեբիոսի վկայութեամբ (VIII 12), Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ Միջագետքում էլ շատ քրիստոնեաներ են նահատակուել: Մանիքէութեան ծագումն էլս վկայում է, որ քրիստոնէութիւնը մեծ չափով տարածուած է եղել Պարսկաստանում: Նոյնիսկ երկրի մայրաքաղաք Սելեւկիա-Կտեսիփոնում և նրա շրջակայքում շուրջ 230—260 թուերին տարածուել ու հաստատուն արմատ է բռնել քրիստոնէութիւնը: Այդ մայրաքաղաքում է հետագայում հաստատուում Պարսկաստանի քրիստոնեաների հոգեւոր պետի՝ կաթողիկոսի աթոռը: «Պարսիկ իմաստունի»՝ Աֆրահատեսի ընթերցողներից գաղափար ենք կազմում, թէ IV դարի առաջին կէսին պարսկական քրիստոնէութիւնն ինչպիսի ամուր կազմակերպութիւն ունէր և ինչպէս էր անկախօրէն ու ինքնուրոյնաբար զարգացել՝ յունական քրիստոնէութեան համեմատութեամբ:

Մինչեւ այս կէտը մենք ոչ մի տեղեկութիւն չունենք, որ Պարսից թագաւորներն սկզբունքով հալածած լինեն քրիստոնեաներին կամ քրիստոնէութիւնը: Այս խնդրում էս շրջադարձի կէտը Կոստանդին քրիստոնէութիւն ընդունելը և քրիստոնէութիւնը Հռոմէական կայսրութեան մէջ պետական կրօն դարձնելն է: Այս դէպքից անմիջապէս յետոյ պարսկական կառավարութիւնն սկսեց իր պետութեան մէջ եղած քրիստոնեաներին կասկածանքով վերաբերուել և նրանց մէջ գաղտնի թշնամիներ տեսնել և այս տեսակէտից պարսկական կառավարութիւնն իրաւացի էր. վերեւում յիշուած Աֆրահատեսի 5-րդ քարոզը պարզ ցոյց է տալիս, որ Պարսկաստանի բոլոր քրիստոնեաների համակրութիւնը հռոմայեցիների կողմն էր: Այս պատճառով էլ պարսկա-հռոմէական պատերազմներին զուգընթաց Պարսկաստանում սկսում են նաեւ հալածանքները քրիստոնէութեան դէմ:

Առաջին մեծ և սկզբունքային հալածանքը տեղի է ունենում Շապուհ II-ի օրով (մեռել է 379 թ.) IV դարի քառասնական թուականներին: Հալածանքների գլխաւոր նպատակն էր ոչնչացնել մասնաւորապէս քրիստոնէական եկեղեցու կազմակերպութիւնը: Շապուհ II-ի յաջորդների, առանձնապէս Յազկերտ I-ի ժամանակ (399—420), քրիստոնեաների դրութիւնն այն աստիճան լաւանում էր, որ նրանք 410 թուին նոյնիսկ ժողով են գումարում Սելեւկիայում, եկեղեցական գործերը կարգաւորում և Սելեւկիայի նախկոպոս Իսահակին ընտրում ամբողջ Պարսից քրիստոնեաների կաթողիկոս: Յազկերտ I-ի մահից յետոյ հալածանքները վերսկսւում են, Վռամ կամ Բահրամ V-ի ժամանակ (420—438), կարճատեւ մի կրակատուն կործանելու պատճառով, և ապա աւելի մեծ եռանդով Յազկերտ II-ի օրով (438—457), որ հալածանքները տարածեց նաև Հայաստանի վրայ:

Ահա այս հալածանքների պատմութեանն էր նուիրուած եղիշէի վարդանանց պատմութիւնը: Միանգամայն սխալ կը լինի քրիստոնէութեան այս հալածանքները Սասանեան թագաւորների կողմից կրօնական մոլեռանդութեամբ և մոգերի սադրանքներով բացատրել: Հասկանալի է, ի հարկէ, որ իրանական կրօնի ներկայացուցիչները, մոգերն ըստ եղիշէի, ամէն կերպ աշխատում էին օգտուել ստեղծուած դրութիւնից և իրենց կրօնի ազդեցութիւնն աւելի հեռուները տարածել. մանաւանդ որ այս շրջանում է ապագայնանում և կայունանում մոգական-դրադաշտական կրօնը, բայց անկասկած է, որ պարսից թագաւորների և պետական գործիչների համար ամենագլխաւորն այստեղ քաղաքական խնդիրն էր՝ իրենց երկրի քրիստոնեաների և բիւզանդական կայսրութեան միջև անջրպետ դնել և թոյլ չտալ, որ սահմանակից քրիստոնեայ երկրները իրենց ձեռքից ելնեն և Բիւզանդիայի հետ միանան: Սրա ամենափայլուն ապացոյցն այն է, որ քրիստոնեաների ընկերական հալածանքները Պարսից պետութեան մէջ դադարեցին այն ժամանակուանից, երբ այսպէս կոչուած նեստորականները 431 թուի Եփեսոսի տիեզերական ժողովից յետոյ արտաքսուեցին բիւզանդական կայսրութեան սահմաններից, գլխաւորապէս Մծբինի նեստորական մետրոպոլիտ Բարծումայի (435—489) ջանքերով հաստատուեցին Պարսկաստանում, և պարսիկները տեսան, որ այս քրիստոնէական եկեղեցու անդամները բոլորովին էլ համակրանքով չեն վերաբերում բիւզանդացիներին: Նոյն քաղաքականութիւնը նկատուում է նաև հետագայում միաբնակների վերաբերմամբ: Մի երկրորդ ապացոյց կարելի է համարել այն, որ, օրինակ, Շապուհ II, սաստիկ հալածելով քրիստոնեաներին, ամենևին ձեռք չտուեց հրեաներին:

Կարեւոր ենք համարում այստեղ դնել Սասանեան թագաւորների ժամանակագրական աղիւսակը սկսած Որմիզդ II-ից:

Որմիզդ II (303—310)
Շապուհ II (310—379)
Արտաշիր II (379—384)
Շապուհ III (385—388)
Վռամ (Բահրամ) IV (389—399)

Յազկերտ I (399—420)
Վռամ (Բահրամ) V (420—438)
Յազկերտ II (438—457)
Որմիզդ III (457—458)
Պերոզ (458—484):

Սասանեաններուն և անոնց քաղաքականութեան մասին առհասարակ տես Th. Noldeke, «Aufsätze zur persischen Geschichte», Leipzig 1887, էջ 86—134. Ferd. Justi, «Geschichte Irans von den altesten Zeiten bis zum Ausgang der Sasaniden» (Grundriss der Iranischen Philologie, Zweiter Band, Strassburg 1895—1904), էջ 512—552, Erw. Ter-Minassian, «Das Christentum im alten Persien» (Die Religion in Gesehichte und Gegenwart, Vierter Band, էջ 1383—1384, Ս. Տէր-Մինասեան, «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն», հատոր I, Էջմիածին 1908, էջ 239—291 և Adolf Harnach, «Die Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten». Zweite Auflage, Zweiter Band, Leipzig 1906, էջ §121—126:

6. Այստեղ յիշուած Շապուհն անշուշտ Շապուհ III է (385—388):

7. Վռամ կամ Բահրամ V (420—438), Յազկերտ II-ի հայրը:

8. Յազկերտ II (438—457): Նէօլդեքէն այս թագաւորի մասին գրում է հետեւեալը. «Բահրամի մահից (438 կամ 439) յետոյ թագաւոր է դառնում նրա որդին՝ Յազկերտ II-ը: Սա հալածում էր թէ՛ քրիստոնեաներին և թէ հրեաներին: Առհասարակ էլ դժուար է նրա մասին լաւ բան ասել. նա վերացրեց ամէն ամսի 1-ին կատարուող ընդունելութիւնները, որոնց ժամանակ ամէն մի ականաւոր մարդ անձամբ կարող էր իր գանգատները կամ խնդիրները յայտնել թագաւորին: Նրա մասին պատմում են, թէ ամուսնացել է իր աղջկայ հետ—սա ի հարկէ յանցանք չէր Զրադաշտական կրօնի հետեւողի համար, ընդհակառակը, նոյնիսկ առաքինութիւն էր,— բայց յետոյ սպանել է այդ աղջկան» (Th. Nöldeke, Aufsatze zur persischen Geschichte, էջ 106): Այս բնութագիրը միանգամայն համապատասխանում է Յազկերտ II-ի կատարի բնաւորութեանը, ինչպէս այն նկարագրում է Եղիշէն, իբրև աստանայի գործակից, իբրև մի կատարի գազան, իբրև մի մարդ, որին չատ սիրելի էր խռովութիւնն ու արիւնհեղութիւնը, իբրև մի չար դև եւայլն:

9. Յունաց երկիր արտայայտութիւնը գործ է ածում Հռոմէական կայսրութեան մէջ մտած երկրների համար. մի քանի տող ներքև Եղիշէն նոյն երկրների համար գործ է ածում նոյնմների գաւառներ արտայայտութիւնը:

10. Մծբին—վերին Միջագետքի կամ Արուաստանի (Բեթ-Արբայէ) մայրաքաղաքը, լատին Nisibis, Տիգրիսից մօտ 100 կիլոմետր դէպի արևմուտք Պարսից և Հռոմայեցոց յարաբերութիւնների մէջ հսկայական դեր խաղացող ստրատեգիական կէտ: Մար-Սաբայի վկայաբանութեան մէջ (տես G. Hoffman, «Auszuge aus syrischen Akten persischer Martyrer», Leipzig, 1880,

էջ 22 շար.) Մծբինի հրշանի մասին կարդում ենք. «Սա մի երկրամաս է, որ ենթարկուած էր լինում մերթ հռովմայեցիներին, մերթ պարսիկներին...»: Քաղաքը և իր հրշանը Որխանոս կայսեր խաչտառակ դաշինքի շնորհիւ 364 թուականին վերջնականապէս անցաւ պարսիկներին և պարսկա-հռովմէական բոլոր հետագայ պատերազմներում պարսիկների համար իրրև յենակէտ էր ծառայում թէ յարձակումների և թէ նահանջների ժամանակ (տես J. Marquart, «Eranschahr nach der Geographie des ps. Moses Xorenaci», Berlin, 1901, էջ 162 և. Th. Nöldeke, «Tabari», «Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden». Leyden, 1879, էջ 63—64, ծանօթագրութիւն 1):

11. Հռոմմերի շուռ գալուն — տես ծանօթագր. 9:

12. Թէոդոս II կայսր (408—450), Արեւելեան Հռովմէական կայսրութեան ամենահոյլ կայսրներից մէկը, որ քաղաքականապէս երբէք չափահաս չդարձաւ և միշտ գտնւում էր իրեն շրջապատողների ազդեցութեան տակ:

13. Տիզբոն կամ Կտեսիբոն, այժմեան Բաղդատից մօտ 16 կիլոմետր դէպի ցած Տիգրիսի ձախ ափին, Սելեւկեանների մայրաքաղաք Սելեւկիայի դէմ ուղիղը: Պարթեւների ժամանակից բարգաւաճեց ու դարձաւ պետութեան մայրաքաղաք և թագաւորական ձմեռոց: Տիզբոնն իր այս դիրքը պահեց նաև Սասանեանների ժամանակ, մանաւանդ Շապուհ II-ից սկսած: Այժմ աւերակ է:

14. Զախակողմեան պատճառներ կոչւում են մոգերը:

15. «Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեցի և կերիցէ զկէս անձին իւրոյ»— այս ձեւով չկայ Աստուածաշնչում: Ամենայն հաւանականութեամբ ակնարկուած է Սաչի մարգարէ թ 20, որտեղ ասուած է. «Այլ խոտորեսցի յաջակողմն իւր առ քաղցի, և կերիցէ զձախակողմն իւր, և մի յագեսցի մարդ ուտելով զմարմինս բազկաց իւրոց»:

16. «Ամենայն տուն և թագաւորութիւն, որ յանձն՝ իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն»— այս ձեւով չկայ մեր այժմեան աւետարաններում: Մատթէոսի աւետարանի ԺԲ գլուխ 25 համարում ասուած է՝ «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի, և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ»: Մարկոս Գ 24—25 աւելի հեռու է այս տեքստից, իսկ Ղուկաս ԺԱ 17 ասում է՝ «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի»:

17. Փորձուգալ վիշան առաջարկում է փոխանակ «զի ոչ չինչանիս»-ի ձարդալ «զի՞ չինչանիս», որ մեզ անտեղի է թւում: Թնդիրը վերջնականապէս լուծել կարող է միմիայն նշխէի՝ ձեռագիրների մանրակրկիտ համեմատութեամբ կատարուած գիտական հրատարակութիւնը:

18. Մոգեր— կոչւում են իրանական կրօնի քահանաները, քրմերը ինչպէս զրադաշտական կրօնից առաջ, այնպէս էլ զրադաշտական կրօնի ժամանակ: Մոգ բառը գործ է ածւում նաև «կախարդ», «աստղագէտ», «երա-

պահան» նշանակութիւններով: Հերոդոտին հետեւելով (I 101) մոգերին հանդարում են մի ցեղ Մարաստանում, որի ձեռքին է եղել կրօնական պաշտամունքների կատարումը, նման Իսրայէլի պատմութիւնից յայտնի Ղեւիի ցեղին: Հնարաւոր է, որ մոգերն սկզբնապէս ոչ թէ մի ցեղ, այլ մի կրօնական կաստա են եղել, որոնց ձեռքին կենտրոնացած է եղել թէ՛ աստուածապաշտութիւնը, թէ՛ բժշկութիւնը և թէ հմայութիւններն ու գուշակութիւնները: Ահեստան խուսափում է այս անունից և քահանաներին իրենց կատարած գործի անունով կոչում է աթրաւան = կրակ վառողներ: Շատ հաւանական է, որ ժողովրդի մէջ գերակշռում էր մոգ անունը, որ եւ հետագայում մտնում է նաև պարսիկների սուրբ գրքերի մէջ և յոյներն ու հայերն էլ գործ են ածում այն պարսկական քահանաների համար իտարբերութիւն բաբելոնական քահանաներից, որոնք կոչւում են քաղդէացիներ կամ քաւդէներ (տես Edv. Lehmann, «Perser», Chantepie de la Saussaye, Lehrbuch der Religionsgeschichte, Zweiter Band, Tübingen, 1905. էջ 204—205 և «Magier» յօդուածի Die Religion in Geschichte und Gegenwart հանրագիտարանում Vierter Band, Tübingen, 1913. էջ 33):

19. Ֆուսաննիներ — Հոնական ցեղեր, որոնք ապրում էին Պարսկաստանի հիւսիս արեւելեան սահմաններին կից, Բակտրիայում (այժմեան Խորասանում) և նրանից հիւսիս ու արեւելք և այնտեղից յաճախակի արշաւանքներ ձեռնարկում դէպի Պարսից պետութեան սահմանները: Թէ՛ հայ և թէ ասորական աղբիւրներն արդէն III դարից Ֆուշաններին հաստատուած են համարում Բակտրիայում, Օքսուս գետի (այժմ Ամու-Դարեա) հովտում, Բահլ մայրաքաղաքի շուրջը (տես Խորեն., Բ 2 և ասորական «երկրների օրէնքների գիրքը», որ գրուած է III դարում — Cureton, Spic. syr. 15,10. 20,9). մայրաքաղաքը կոչւում էր նաեւ Բակտրա, համարւում էր Զրադաշտի հայրենիքը, Կիւրոսի մայրաքաղաքը, արհեստների ու առեւտրի կենտրոն: Շատ վաղ ժամանակներից նրանց երկիրը եղել է Սասանեան պետութեան մարզ և կառավարուել պարսիկ մարզպանների ձեռքով, որոնք իրենց անուանում էին «Արքա Ֆուշանաց» կամ նաեւ «Արքայից արքայ Ֆուշանաց»: 368 Թուին Շապուհը չարաչար կերպով պարտուել է քուշաններից (Փաւստ. Բիւզանդ., ե. 37) և այդ ժամանակուանից սկսած նրանք անկախութիւն են ձեռք բերել:

Ինչպէս բուն կամ սեւ հոները մի իսկական պատուհաս էին դարձել ամբողջ արեւելեան և արեւմտեան Եւրոպայի համար և իրենց Հառաչնորդ Ատտիլայի ղեկավարութեամբ V դարի կէսերին հասել մինչեւ այժմեան Ֆրանսիայի դաշտերը, այնպէս էլ նրանց ցեղակից քուշանները՝ բնակութիւն հաստատելով Բակտրիայում և նրա շուրջը գտնուած երկրներում՝ հանգիստ չէին տալիս Պարսից թագաւորներին, որոնք ստիպուած էին տասնեակ տարիներ մերթ յաջող, մերթ անյաջող պատերազմներ մղել նրանց դէմ: Պարսիկ եւ Արաբացի պատմիչները սրանց եւ սրանց յաջորդներին տալիս են Հայթաղ անունը, որ նոյնն է հայ պատմիչների Հեփթաղների հետ: Այս վերջիններն կոչւում են նաև սպիտակ հոներ, աւելի բաց մորթի գոյն ունենալու համար, մինչդեռ բուն հոները թխադէմ էին եւ ժանտատեսիլ: Սպի-

տակ հոները (քուշաններըը, հեփթաղներըը) աւելի քաղաքակրթուած էին, իսկ սեւ հոները դեռ վայրենի էին և վրանաբնակ: Արդէն Եղիշէն ինքը հոներին ու քուշաններին միևնոյնն է համարում. «Թաղաց գնաց միանդամայն ի վերայ տէրութեանն Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն» (Եղիշէ, 1 գլուխ): Բայց որքան և քուշաններըը և հեփթաղներըը հոնական ցեղեր են, այնուամենայնիւ նրանց մէջ որոշ տարբերութիւններ պէտք է դրուեն: Հեփթաղներն աւելի ուշ են պատմական թատերաբեմ դուրս գալիս, քան Քուշաններըը: Քուշաններըը 468 թուին մեծ պարտութիւն են կրում և անհետանալով պարսկական պետութեան արևելեան սահմաններից՝ անցնում են Հինդուկուշը և մի նոր պետութիւն հաստատում Պեշաւարում:

20. Պահ դուռ—տեղը հաստատապէս որոշել հնարաւոր չէ: Կ. Կոսեանեան («Հիւսուածք», գիրք երրորդ, Վիեննա 1877, էջ 70—73) ասում է. «Որովհետեւ Ապար աշխարհն ու Քուշանաց երկիրը կասպից ծովից դէպի արևելք էր ընկնում, ուստի Պահ դրան տեղն այժմու կասպից ծովի հարաւային կողմերը պէտք է ենթադրել: Ինչպէս յայտնի է, կասպից ծովի հարաւային ափերովն անցնում է Էլբուրսի լեռնային գօտին, որի մէկ ճիւղը Դեղմանց աւուած լեռներն են, որ կասպից ծովի արևմտեան կողմից հասնում են մինչև Սաւալանի գագաթը, իսկ միւս ճիւղը հասնում է մինչև Ուրմիա լիճը և միանում է Զագրոսի թևերի հետ: Այս երկու ճիւղի մէջտեղովն անցնում է Սեֆեդ-րուդ գետի հովիտը, որի ակունքը Սոհունդի աւորտոններումն են: Այդ հովիտն է և այն միակ անցքը, որտեղից կարելի էր գնալ դէպի Պարսկաստանի հիւսիսային-արևելեան կողմերը: Այն տեղում, ուր Սեֆեդ-րուդը թեքւում է դէպի հիւսիսային արևելք, որ գնայ թափուի կասպից ծովի ծոցը, կայ մի նեղ և լեռնափակ կիրճ, որի արևելեան կողմն է Րուդբար անունով անցքը, որտեղ է և Րուդբար քաղաքը, իսկ կրճի արևմտեան կողմից Սեֆեդ-րուդի ալ ափումը կայ մի բերդ՝ Դերբենդ կամ Գիւալուր-Դուլա անունով: Հին Պահ-դուռը, պէտք է կարծել, որ այդ Դերբենդի տեղումն է եղել, ըստ որում այդ տեղն իր բնական դիրքով արդարև դուռն է Հայոց և Պարսից սահմանի վրայ»: Փարպեզալ փաշան (Եղիշէ, էջ 185—187) համամիտ չէ այս կարծիքին, որովհետև Հայաստանից Պարսկաստան գնալու համար «աւելի դիւրին և սովորական ճանապարհ մի կայ, որ Գազուինէն կը տանի ի Թիանա, առանց այդ ձորէն կամ Կիալուր Գուլէի մօտերէն անցնելու»: Րուդբարի կիրճը փակել տալով, չարունակում է Փորթուգալը, ցազկերտը չէր կարող նոյնիսկ հայ փախստական զինուորներին արգելք հանդիսանալ իրենց երկիրը վերադառնալու, ուր մնաց, որ զօրքերի ահագին բազմութիւնն այնտեղ պահէր: Բացի այդ թագաւորի սաստիկ հրամանը, թէ «որ յարևելս առ մեզ (այսինքն՝ Ապար աշխարհ կամ Խորասան, ուր բանակ էր դրել ցազկերտը) գայցեն՝ թողցեն, իսկ յարևելից յարևմուտս անանց լիցի ճանապարհ» չեն համարում Սեֆեդ-րուդի կրճին և դղեակին: «Խորասանը, որ ըստ արաբացի մատենագրաց՝ գոնէ իններորդ դարէն ի վեր Ապար աշխարհի անունն է, կը նշանակէ պարսկերէն՝ «արևելք»: Ուստի Փորթուգալ Պահ դուռը համարում է Էլբուրսի հարաւակողմը գտնուող Սիրտառա կոչուած

կիրճը և նոյնացնում է այն նախկին դուռն կասպից (Pylae Caspiae) հռչակաւոր հետ, որը պաշտպանելու համար կառուցուած էր Ռէյ քաղաքը: Ցաւալին այն դէպք պարզ է, որ Գահ գուռը պէտք է որոնել Պարսկաստանի հիւսիս-արևմտեան կողմերում և ոչ թէ արևելեան, ինչպէս կարծել են բանասէրներից ոմանք:

21. Այստեղ Եղիշէն դեն բառը չի գործածում կրօնի կամ հաւատի իմաստով, այլ այդ կրօնի կամ հաւատի հետ կապուած գուշակութիւնների, համոյութիւնների իմաստով: Միտք չէր ունենայ ասել՝ «ինչպէս երևում ես մեր կրօնի մէջ, դու կը տիրես նաև գուշանների երկրին». ուստի մենք թարգմանեցինք՝ «ինչպէս երևում ես մեր գուշակութիւնների մէջ...»:

22. «Արիւ և անարիւ» համապատասխանում է պարսկերէն «Երան և Աներան» արտայայտութեանը և նշանակում է Իրան և ոչ-Իրան, իրանացիներ և ոչ-իրանացիներ: «Արեաց և Անարեաց» կամ «Երան և Աներան» Պարսից արքայից արքաների տիտղոսն է: Արտաշիր Սասանեանն իր արձանագրութիւնների և դրամների մէջ իրեն անուանում է միայն շահաց-շահ (ի) երաց նրա որդին և յաջորդը՝ Շապուհ I-ը՝ թէև իր արձանագրութիւնների մէջ իրեն անուանում է շահաց շահ (ի) երաց ու Աներաց, բայց դրամների վրայ նա նոյնպէս միայն շահաց-շահ (ի) երաց է գրում: Միայն արա յաջորդ Որմիզդ I (272—273) է սկսում նաև դրամների վրայ շահաց-շահ (ի) երաց ու Աներաց գրել և այնուհետև այդ, ինչպէս երևում է, դառնում է Պարսից արքայից արքաների տիտղոսը: Այդ տեղի է ունենում այն ժամանակուանից, երբ Որմիզդը խորասանում փոխարքայ եղած ժամանակ հպատակեցնում է գուշաններին (տես J. Marquart, Eranschahr, էջ 48—49): Այժմ աւում է Իրան-Թուրան:

23. Ապար աբխարհ — հին պարսկական ձևն է Ապրշահը, որ բառացի նշանակում է «վերին աշխարհ»— Պարսկաստանի հիւսիս-արևելեան մասը (այժմեան Խորասան), որ տարածւում էր մինչև վրկան աշխարհի սահմանները: Այստեղ է գտնւում Հալէ-րուդ գետը և Հերաթ (Հին Հարև) քաղաքը, որ այսօր էլ վաճառաշահ քաղաք է: Այս քաղաքում էին գտնւում հայ նախարարները կապանքներից արձակուելուց յետոյ (Ղազար Փարպեցի, Թիֆլիս 1904, էջ 108): Ապար աշխարհի գլխաւոր քաղաքն էր Նիւշապուհը, որ կառուցել էր Շապուհ I-ը: Այստեղ է գտնւում նաև Ռևանդ գիւղը, որտեղ նահատակուեցին Ղեւոնդեանք:

24. Ադուանից աբխարհ — վրաստանից դէպի արևելք, Կովկասեան լեռներից հարաւ, այժմեան Ադրբեջանի հիւսիս-արևմտեան մասում:

25. Լփնից աբխարհ — Լփնիք, Կովկասեան լեռնային ցեղ և երկիր, տեղը որոշակի յայտնի չէ. Ալիշանը Շիրուանի մէջ է դնում, Գլինիտոան այդ ցեղն անուանում է Լոբրիէնի և դնում է Ադուանից հարեւան:

26. Ծաւդէից աբխարհ — նոյն տեղում յիշւում է երկու անգամ, առաջին անգամ «Վրաց, Լփնաց, Ծաւդէից» իրար հետ կապուած, որ հաւանա-

կան է դարձնում դրանց Կովկասեան լեռնական լինելը և Օտտերի (Ծոդէից) հետ նոյնացնելը: Երկրորդ անգամ առւում է՝ «և որ այլ ևս ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի և Հոռոմաց աշխարհն և ի Կորդուաց և ի Դդացն և ի Ծաւդէից և յԱրզնարդիւնն. այս կապակցութիւնը ցոյց է տալիս, որ երկրորդ անգամ յիշուած Ծաւդէից աշխարհը բոլորովին այլ է և կապ չունի առաջին անգամ յիշուած հիւսիսային լեռնական երկրի հետ: Այս երկրորդ Ծաւդէից աշխարհն անշուշտ պէտք է նոյնացնել Կորդուաց աշխարհից հարաւ գտնուող Zabdicene գաւառի հետ (= ասոր. Bed Zawdai), Տիգրիս գետից դէպի արեւմուտք (տես սրանց մասին H. Hubschmann, «Die altarmenischen Ortsnamen», Strassburg, 1904, էջ 321 և J. Marquart, «Eranschahr», էջ 158):

27. Կորդուաց աշխարհ — Տիգրիսի ափին, սրա վտակների՝ Բոհտանսուի և Խարուբի միջև մինչև Մոսուլի սահմանները: Այս անունից է առաջացել հաւանօրէն Քիւրդիստան անունը:

28. Աղձնեաց աշխարհ, Աղձնիք —Aːzanene— Տիգրիս գետից դէպի հիւսիս, Միջագետքից դէպի արևելք, Մեծ Հայքի 15 նահանգներից երրորդը, Հայաստանի հարաւ-արեւմտեան կողմը. սահմաններն են Չորրորդ Հայք, Տուրուբերան և Մոկք նահանգները և Ասորեստանը: Գլխաւոր գետերն են՝ Տիգրիս և Թուխ, լեռները՝ Սիմ, Տորոս, Խուլթ հայլն:

29. Գողց աշխարհ—եթէ այս ընթերցուածը ճիշտ է, պէտք է ենթադրել, որ խօսքը վերաբերում է գոթերին, որոնք հասել էին մինչև Եփրատ և գաղութներ հաստատել այնտեղ (Փորբուզայ փաւա, Ղևիշէ, էջ 192, ծանոթագրութիւն 1): Սակայն չատ աւելի հաւանական է, որ այստեղ աղաւաղում կայ և «Գդացն» պէտք է ուղղել «Դասն»: Տես ծանոթագր. 77:

30. Արզնարզիւն—ճիշտ տեղը յայտնի չէ: Անուանւում է Մոկաց և Ծաւդէից աշխարհների կողքին, ուրեմն պէտք է նրանց սահմանակից լինէր. հաւանօրէն Աղձնեաց աշխարհի Արձն կամ Արզն գաւառն է: Այս անունը յիշում է նաև Թոմա Արծրունին, Բարձումայի մասին խօսելիս՝ «Եկն եհաս յԱրզնարզիւն և յաշխարհն Մոկաց»: Ակինեան, «Հանդէս Ամսօրեայ», 1936 թ. էջ 42 ծանոթագր. 7 գրում է սրա մասին. «Ինձ կը թուի թէ նոյն է Արզն = Արզուն գաւառին հետ, որ ժամանակ մը երկուքի բաժնուած կ'երևայ, ասորի հեղինակ ը կը զանազանեն Արզուն և Արզուն Ռատան (Braun, Synhados, 32, 34, 162, Hübschmann, Altarmen. Ortsnamen, 248—251, 311, 321), երկուան ալ եպիսկոպոսանիստ: Հաւանօրէն Արզն=Արզուն և Արզուն Ռատան. յետոյ ... վարչականապէս միացած են և կոչուած Արզն. Արզուն=Արզնարզիւն:

31. Սուրբ կաթողիկեներ — սուրբ գրքեր: Քրիստոնէական Աստուածաշունչը բաղկացած է երկու մասից. հին Իսրայէլի և հրէական գրականութիւնն ամփոփող մասը կոչւում է Հին կտակարան, իսկ աւետարանները, Գործք Առաքելոցը և Առաքելական թղթերը և այլն կոչւում են Նոր կտա-

կարան: Այստեղից էլ բղխում է Եղիշէի սուրբ կռակարանները արտայայտութիւնը:

32. Թուղթ առ Վռամշապուհ Գ. 22 համմտ. առ Սիմեսացիս Զ. 5: Եղիշէի ոճած թարգմանութիւնը տարբեր է նոր կտակարանի մեր այժմեան ունեցած թարգմանութիւնից:

33. «Բարբարոսներ» էին անուանում յոյները բոլոր օտար ազգերին: Պարսիկները այդպիսիներին պիտի անուանէին ոչ թէ բարբարոսներ, այլ «անարիներ»: Յամենայն դէպս՝ Եղիշէն այստեղ և այլուր բարբարոս ասելով հասկանում է բոլոր ոչ-պարսիկներին: Այս արտայայտութիւնը գործածելու մէջ անկասկած արտացոլում է Եղիշէի յունական կրթութիւն ըստացած լինելը:

34. Յազկերտ II-ի թագաւորութեան չորրորդ տարուանից մինչեւ տասնմէկերորդ տարին կը լինի 441 | 442—448 | 449: Յազկերտի գահակալութեան առաջին տարին է ըստ Նէօլդեկէի («Tabari», էջ 435) 438 Յուլական նոր օգոստոսի 4-ից մինչեւ 439 Յուլականի օգոստոսի 4-ը:

35. Խայլիդուրներ կամ Խայլանդուրներ — կովկասեան հոների անունն է, որոնք առաջին անգամ հանդէս են գալիս, ինչպէս երեւում է, արդէն Վռամ (Բահրամ) V-ի օրով (420—438) և առանձնապէս յիշատակւում են Յազկերտ II-ի ժամանակ (438—457): J. Marquart-ը այն ենթադրութիւնն է անում, թէ խայլնդուրներ անունը հոների արքայական հորդայի անունն է եղել, որոնք Ալանաց դռնից (Դարեալի կիրճը) մտնելով վրաստան և Ապուանից աչխարհը՝ այնտեղից անցել են Պարսից պետութեան սահմանները՝ Մարաստան: Անյաջողութեան հանդիպելով՝ նրանք վերադարձի ճանապարհը փոխել են, Մարաստանից փայտակարանի և Բագուի վրայով անցել են հարաւային Դաղստան և Դերբենդ: Որ Խայլնդուրներ հոների արքայական հորդայի անունն է եղել, այդ ցոյց է տալիս նաեւ այն հանգամանքը, որ այդ անունը հոների մեծ պետութեան քայքայումից յետոյ անհետանում է (տես J. Marquart, a. a. O., էջ 96—97):

36. Ձորա պահակ, Ձոզա, Զոզա, Կապան Ձորա, Դուռն Ապուանից, Հոնաց, Խազրաց և այլն գտնւում էր այժմեան Դերբենտ քաղաքի մօտերքը կասպից ծովի ափին: Այդ վայրն իրրեւ Պարսկաստանից դէպի հիւսիս տանող միակ դուռը Աղուանից երկրով՝ խոշոր կարեւորութիւն ունէր թէ՛ Հռոմայեցիների և թէ Պարսիկների համար: Հռոմէական պետութիւնը հոգ էր տանում և նոյնիսկ դրամական միջոցներ էր տալիս Ձորա պահակը կամ Դերբենտը կարգին ամրացուած վիճակում պահելու համար, որպէսզի հիւսիսային վայրենի ցեղերն այնտեղից Վրաստան և Հայաստան և ապա Հռոմէական գաւառները չմտնէին. և երբ Հռոմայեցիներն ուշացնում կամ դադարեցնում էին Ձորա պահակի համար պայմանաւորուած սուբսիդիայի վճարումը, Պարսիկներն անմիջապէս պահանջ էին դնում վերականգնելու այդ վճարումները և նրանց գադարեցումը պատճառ էր դառնում Թշնամական

ու պատերազմական գործողութիւններէ: Մարքուարտը կասկիս Դիոնի և Մովսէս Խորենացու (Բ 65) համադրութիւնից այն եզրակացութեան է յանգում, որ հռովմայեցիները արդէն Սեպտիմոս Սևերոս կայսեր ժամանակից (193—211) հայոց թագաւորներին տարեկան սուբսիդիա էին վճարում կովկասեան լեռնանցքները, յատկապէս Ճորա պահակը ամրացնելու և կարգին վիճակի մէջ պահելու համար (Kass. Dion 78, 27, 4). պարսիկներն ահա այս վայելմի տուրքն էին պահանջում, որ և, ինչպէս երևում է, որպէս յատուկ յօդուած մտել է Յորիանոս կայսեր կնքած խաղաղութեան պայմանքի մէջ (համմտ. J. Marquart, անդ, էջ 100—106):

37. Աստուածն — կոչւում է այն սեղանը, որի վրայ վառւում էր կրակը. չատ անգամ գործ է ածւում նաև կրակատան իմաստով: Աստ կամ Աստուր պհլ. նշանակում է կրակ:

38. Բաբելոնի հնոցը — ակնարկութիւն է Դանիէլի մարգարէութեան գլ. Գ· 19 և 45—47, որտեղ նկարագրուած է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի խարոյկ բարձրացնելը Նաբուգոդոնոսոր թագաւորի հրամանով: Նաբուգոդոնոսորը պատուիրում է հնոցը եօթնապատիկ ջեռուցանել. և սպասաւորները չեն դադարում հնոցը նաւթով ու ձէթով և այլ վառելիքներով բորբոքելուց, մինչև որ բոցը հնոցից քառասունինն կանգուն վեր է բարձրանում և չրջապատում հնոցն ու այրում չրջապատող քաղդէացիներին:

39. Քաւդէութիւն — բաբելոնական կրօնի վերջին չրջանի անունը, երբ կրօնն ամբողջովին վեր էր ածուել աստղագիտութեան կախարդութիւնների, համայութիւնների ու գուշակութիւնների: Կրօնի ներկայացուցիչ քուրմը կոչւում էր քաւդէա: Բառի ծագումը պարզ չէ (տես Հ. Անասեան, «Արմատական բառարան», Զ. հատոր, էջ 1435—1436), բայց նշանակութիւնն անկասկած պէտք է ընդունել «Աստղագիտութիւն, գուշակութիւն, համայութիւն»: Որքան և գիտնականները դժուարանում են քաւդէա բառը նոյնացնել քաղդէա=Chaldaer բառի հետ, բայց և այնպէս, նկատի ունենալով, որ բաբելացիները վերջին չրջանում քաղդէացիներ էին կոչւում և քաղդէութիւն անունը նրանց կրօնի անունն է, պէտք է հաւանական համարել այսպիսի նոյնացումը:

40. Ցազկերտ II-ի տարիների մասին տես ծանօթագր. 34:

41. Իսպական երկիր — Հայքալների կամ Հիքալների երկիրը, այլ ձեւով Քուշանների երկիրը: Տես ծանօթագր. 19: Անձեւացեաց օրինակը դնում է Թիսպական, բայց Իսպական ձևն աւելի ընդունելի և մօտ է Հիքալական ձևին (Փորքուզալ, եղիշէ, էջ 208):

42. Զրադաշտական կրօն կամ Մազդայականութիւն — Իրանական կրօնը նրա մեծ մարգարէ Զրադաշտի անունով կոչւում է Զրադաշտականութիւն; Ուրիշ խօսքով նա կոչւում է նաև Ահուրա-Մազդայի հաւատ, դեներմազդեզդն, մազդայականութիւն, այլ և մոգական կրօն՝ այդ կրօնի ներկայացու-

ցիչ քահանաների անունով (տես ծանոթագր. 18): Գոյութիւն ունէ՞ր արդեօք այդ հաւատը այն ժամանակ, երբ հանդէս եկաւ Զրադաշտը և ի՞նչ է այս մարգարէի դերն այս կրօնի սկզբնաւորութեան մէջ, դժուար է ասել. սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Զրադաշտն ինքը մի տեղ ասում է, որ ինքը կոչուած է կրօնը մաքրելու, զտելու (համմտ. Քրիստոսի «Չեմ եկել օրէնքն ու մարգարէները քանդելու, այլ լրացնելու») և հետագայում էլ հին կրօնն իր բոլոր մանրամասնութիւններով մուտք է գործում զրադաշտական կրօնի մէջ, պէտք է ենթադրել, որ Զրադաշտի մտադրութիւնն է եղել սկզբնապէս հին կրօնի reform-ով, բայց իրօք դուրս է եկել, որ նա վերջիվերջոյ իր կապերը խզել է նախ հին կրօնի քահանայութեան և ապա նաև հէնց բուն հին կրօնի հետ:

Զրադաշտական կրօնի սկզբնաւորութեան ժամանակը որոշակի յայտնի չէ: Ցոյները Զրադաշտին համարել են Պլատոնից 6000 տարի առաջ կամ Տրոյական պատերազմից 5000 տարի առաջ ապրած: Գիտնականները նրա կեանքի ու գործունէութեան ժամանակը փնտռում են XIV և VII դարերի միջև, այնքան մութն է նրա ժամանակի խնդիրը: Յամենայն դէպս այս քանը բոլորովին պարզ է, որ Աքեմենեան թագաւորների, յատկապէս Դարեհ I-ի ժամանակ (522—486) անշուշտ հին աստուած Ահուրա-Մազդայի հաւատն արդէն շատ մեծ զօրութիւն էր դարձել պարսիկների մէջ: Դարեհի արձանագրութիւններից մէկի մէջ ասուած է. «Ահուրա-Մազդան մի մեծ աստուած է, որ ստեղծել է այն երկինքը, ստեղծել է այս երկիրը, ստեղծել է մարդկանց և երջանկութիւն նրանց համար, թագաւոր է դարձրել Դարեհին, միակ թագաւորը շատերի գլխին, միակ հրամայողը շատերի մէջ»: Թէև Զրադաշտրայի կամ Զրադաշտի մասին որոշ գիտնականներ այն կարծիքն են յայտնել, թէ նա պատմական անձնաւորութիւն չէ, այլ մի առասպելական դէմք է, և իրենց այս կարծիքն հիմնում են այն բազմաթիւ առասպելախառն պատմութիւնների վրայ, որոնք գոյութիւն ունեն Զրադաշտի մասին, ինչպէս բոլոր մեծ կրօնների հիմնադիրների մասին (Քրիստոս, Բուդդհա և այլն), բայց և այնպէս անկասկած պէտք է համարել նրա պատմական անձնաւորութիւն լինելը:

Ինչ վերաբերում է Զրադաշտի ծննդավայրին ու նրա գործունէութեան տեղին, այսքանը կարելի է հաստատ կերպով ասել, որ նա պարսիկ չէր: Վկայութիւնների մեծ մասը ցոյց են տալիս, որ նա ծննդեամբ մարտաստանցի էր՝ Պարսկաստանի հիւսիս-արևմտեան մասից, իսկ նրա գործունէութեան կենտրոնավայրը, նրա համայնքի հին և նշանաւոր կենտրոնները, պարսիկների սուրբ գրականութեան կամ Աւեստայի մի նշանաւոր մասը հայրենիքը եղել է Պարսկաստանի Արեւելքը, աւելի ճշգրիտ՝ Բակտրիան, այնտեղ, ուր Հինդուկուշ սարերի և Կասպից ծովի միջև ընկած դաշտավայրերում արհական նստակեաց երկրագործներ էին ապրում խիստ կլիմայի մէջ (ամառը կիզիչ տաքութիւն, ձմեռը սարսափելի ցուրտ), միևնոյն ժամանակ քաղաքակրթեամբ, թէեւ ո՛չ միշտ յաջող դէմ դնելով անապատից եկած սոսկալի հեծեալ ցեղերի արշաւանքներին, որոնք սպառնում էին ոտքի տակ տալ նրանց ամբողջ, մեծ դժուարութեամբ ձեռք բերուած քաղաքակրթութիւնը: Այդ ասպատակարարող ցեղերը կռւում էին իրենց «աստուածների

քահանաների» առաջնորդութեամբ և «աստուծեան առաուաձնեբի» կամ դեւաներբ պաշտպանութեամբ, ինչպէս կոչւում են նրանք Աւեստայի ամենահին մասի՝ գաթաների մէջ: Այս դեւաները, որոնք յայտնի են նաև հընդկական վեդաներից, բնութեան անձնաւորեալ գոյութիւններ են, որոնց մէջ ամենագլխաւոր դերն էին կատարում արբեցութեան դեմոն Սոման և համարեա միշտ հարբած ու կռուասէր, աւազակ առպետների պաշտպան ինդրան: Այդ աստուածներին պաշտողներն այնքան սոսկալի էին նեղում, հարբստահարում ու կեղեքում խաղալ ու իրենց աշխատանքով ապրող մարդկանց, որ քանի գնում-սաստկանում էր նեղուածների օգնութեան աղաղակը, որոնք մի հովանաւոր ու պաշտպան էին ուզում գտնել երկրի վրայ և երկնքում:

Իրրեւ այդպիսի երկրաւոր հովանաւոր ու պաշտպան հանդէս եկաւ Վիստասպա (=Վշտասպ) թագաւորը, որի հետ միացաւ Զարատուստրա [illegible] կամ Զրադաշտ մոգը: Նրա սիրտը մղկտում էր իր ժողովրդի նեղութեան համար, և գուցէ այդ աւազակային ցեղերի անբարոյական և սուտ աստուածները նրա աչքերը բայ արին տեսնելու նոր ու ճշմարիտ աստծուն իրրեւ «գեղեցիկ կանոնաւորութեան» ապրիւրը, արդարութեան ու խաղաղութեան պաշտպան ազգի մէջ: Ճշմարիտ Աստուածը՝ Ահուրա-Մազդան յայտնուեց նրան, յայտնեց ու բացատրեց իրերի ընթացքը և վերջին բաների գաղտնիքը և պարտք դրեց նրա վրայ՝ ժողովրդին քարոզելու իր մասին: Զրադաշտը հեզութեամբ ու վստահութեամբ յանձն առաւ կատարելու այս ծանր պարտականութիւնը, թէև շատ լաւ գիտէր, որ հեշտ չի լինելու իր ուղին. «Ով քեզ հաւատում է,— ասում է նա՝ դիմելով Ահուրա-Մազդայինը,— նա վիշտ կը կրի մարդկանցից, բայց ինչ որ դու լաւագոյնն ես համարում, պէտք է կատարուի»: Որ յիրաւի Զրադաշտի կեանքը լի է եղել ծանր փորձութիւններով, ցոյց է տալիս մի գանգատներով լի երգ. «Ո՞ր երկիրը գնամ, դէպի ո՞ւր դիմեմ. ինձ բաժանում են ազգականներից ու բարեկամներից: Ո՛չ համայնքն է ինձ բարիք անում, ո՛չ էլ երկրի չար իշխանը: Ի նչպէս հաւուցանեմ քեզ, Ահուրա-Մազդա, արժանը». «Գիտեմ, թէ ի՛նչ է այս, Մազդա, ինչո՞ւ վատ են գնում գործերս. որովհետեւ քիչ նախիրներ ու քիչ մարդիկ ունեմ: Քեզ եմ գանգատւում, դո՛ւ մի ճար արա, տէր, օգնիր ինձ, ինչպէս բարեկամը բարեկամին է օգնում»:

Բայց նրա վիշտն ու հոգսերը վերջապէս յաղթահարուում են և նա յաջողութեամբ իր կողմն է դարձնում Թագաւորի երկու վեզիրներին, նրանց միջոցով Թագուհուն, ապա և Թագաւորին իրեն. այնուհետեւ նա յաջողութեամբ քարոզում է ժողովրդին իր նոր հաւատը, ժողովրդից պահանջելով գնալ «ճշմարիտ աստծու յետեւից և մոռանալ դէպի կորուստ տանող աստուածներին»: Բնութեան չար ոգիներից, կամայականութեան և բիրտ զօրութեան ներկայացուցիչներից պէտք է դառնալ դէպի «ճշմարիտ աստուածը», որը կարգաւորութեան և արդարութեան պաշտպանն է: Այս գաղափարները հէնց սկզբից և եթէ հաստատուն խոստովանութեան կերպարանք են ընդունում Զրադաշտի կրօնի մէջ. «Հրաժարուում եմ չար ոգուց և խոստովանում եմ Մազդայի հաւատը». «Տիրոջ կամքը արդարու-

թեան օրէնքն է. վարձ պէտք է սպասել երկնքում այն գործերի համար, որ երկրի վրայ կատարուում է յանուն Մազդայի. Ահուրան իրաւունք է շնորհում նրան, ով պաշտպանում է խեղճերին»: «Արդարութիւնը ամենալաւ բարիքն է. երանի այն մարդուն, որի արդարութիւնը կատարեալ է»:

Միմեանց հակառակ երկու սկզբունքների, բարու և չարի մշտական պայքարն է զրադաշտական կրօնի էական բովանդակութիւնը: Այդ պայքարն ու կռիւը չեն կարող վերջանալ, մինչեւ որ բարի սկզբունքը չյաղթի չարին: Չարի և բարու այդ տիեզերական հակադրութեան ու կռուի մէջ Զրադաշտն իրեն զգում է բարու մարտիկ, ինչպէս որ նրա հակառակորդները չարի կուսակիցներն են:

Ո՞րտեղից է առաջ գալիս բարու և չարի այդ տիեզերական հակադրութիւնը: Վաղուց արդէն նախապատրաստուած էր այդ միտքը: Հնդիկների և իրանացիների նախահայրերն ընդհանուր առասպելներ ունէին, որոնք պատմում էին երջանկաբեր զօրութիւնների կռիւը չանազան դեմոնների և հրէշների հետ: Այն բոլոր բարիքները, որոնց վրայ հիմնուած է մարդկային զօրութիւնը, ձեռք են բերուած այդպիսի կռուի մէջ. օրինակ՝ ջուրը, լոյսը և այլն: Այս չրջանում այդ գաղափարները միայն աւելի զըտուում են, ընդարձակուում ու խորանում. առանձին բարիքները միանում են և կազմում բարու կամ կարգաւորութեան պետութիւնը: Նրա մէջ են մըտնում ամէն զարդացում, առողջութիւն, հոգեկան և բնական մաքրութիւն, իմացութիւն, ճշմարտութիւն և լոյս, ուժեղ սերունդ և բարեկեցիկ դարձընող աշխատանք: Բարեպաշտ և աշխատասէր երկրագործը, որ հետզհետէ աւելացնում է նստակեաց կեանքի քաղաքակրթական բարիքները, զգուշութեամբ պահում և բուժում է կենդանիներին, բարու իսկական ներկայացուցիչն է և նրա զբաղմունքը սուրբ է համարուում: Բացի երկրային երջանկութիւնից, նրան սպասում էր դրախտը, ուր հնչում են միայն բարեպաշտների օրհներգութիւնները: Այստեղից պարզ երեւում է, որ զրադաշտական կրօնը կամ մազդայականութիւնը հին Պարսկաստանի երկրագործների հարուստ և ունեւոր մասի իդէոլոգիան էր:

Բարու կամ լոյսի աշխարհին հակադիր է չարի ու խաւարի, դժոխքի աշխարհը: Այդ երկու աշխարհների միջև սկզբից և եթ կեանքի ու մահու կռիւ կայ: Կռուի մէջ մասնակցութիւն ունեն նաեւ կենդանիները, որոնք լցուած են գաղտնի զօրութիւններով: Ագռաղաղը, որ յայտարարում է լոյսի բացուելը, չունը որ պաշտպանում է հօտը, բարու կուսակիցներն են. օձն ու գայլը, մրջիւնը, որ գողանում է հացահատիկները, օգնում են չարի պետութեան տարածմանը: Մարդկանցից չարի պետութեան ներկայացուցիչ են մոլորեցուցիչները, կախարդները ու անառակ կանայք: Դրանք հանդերձեալ աշխարհում շատ վատ դրութեան մէջ պէտք է ընկնեն և նրանց բնակարանը պիտի լինի «ստութեան տունը», քանի որ նրանք իրենց կեանքում չարիք են գործել և սուտ են խօսել:

Այս խիստ հակադրութիւնը Զրադաշտի կրօնի մէջ անշուշտ առաջ է եկել մի կողմից կլիմայի ազդեցութեան տակ (ամառը սարսափելի տաք,

ամեռը սասսիկ յուլար. ամենաչքեղ բուսականութիւն, կողքին չոր անապատ): Բայց միւս կոլմից անպատճառ նշանակութիւն են ունեցել նաեւ մարդկային յարաբերութիւնները. այստեղ՝ նստակեաց երկրագործները, իրենց աշխատանքով զբաղուած, հանգիստ ու հեռու չարագործութիւններից. այնտեղ՝ անապատի աւազակաբարոյ հեծեալ ցեղերը, որոնք պարբերաբար ոտնատակ էին տալիս առաջիններուի ստեղծած ամէն քաղաքակրթութիւն:

Ինչպէս Զրադաշտի ժամանակ երկրային թագաւորութիւնների գլխին, այնպէս էլ այս երկու տիեզերական պետութիւնների գլխին կանգնած են երկու թագաւորները: Մի դաթայի մէջ խօսւում է, թէ ինչ է ասում Ահուրա-Մազդան չար ոգուն. «Ես ուղում եմ քարոզել աշխարհի սկզբում եղած երկու հոգիների մասին, որոնցից մուրբը այսպէս ասաց չարին. մեր ցանկութիւնները միանալ չեն կարող, ո՛չ էլ մեր ուսմունքը կամ մտածողութիւնը. ո՛չ մեր հաւատը, ո՛չ խօսքերը և ո՛չ գործերը. ո՛չ մեր պատուիրանները և ո՛չ էլ մեր հոգիները»:

Մեծ, բարի աստուածը և բոլոր բաների արարիչը Ահուրա-Մազդան է, ամենաիմաստուն իշխանը, Որմիզդ կամ հայերէն Արամազդը. նրա մասին է մտածում բանաստեղծը, երբ հարցնում է՝ ո՞վ է ճշմարտութեան նախահայրը, ո՞վ է սահմանել արեւի և աստղերի ճանապարհը, ո՞վ է պահում երկիրն ու մթնոլորտը, որ վայր չընկնեն. ո՞վ է ստեղծել արշալոյսը, ցերեկը, գիշերը և այլն: Հակառակ Զրադաշտի կրօնի խիստ դուալիզմի՝ այստեղ մի զօրեղ մոնոթէիստական գիծ է երեւում: Աստուած, այդ խօսքի ամենակատարեալ մտքով, միայն մէկն է, Ահուրա-Մազդան, որ և ի վերջոյ կըռւի մէջ պիտի յաղթի ու ամբողջ տիեզերական գոյութեան թագաւորը դառնայ:

Ահուրա-Մազդայի և միևնոյն ժամանակ բարու թշնամին է Անգրա-Մայինեուն=Անրիմանը (թշնամի հոգի): Նա էլ անսկիզբն է, ինչպէս Ահուրան, և չարի ամբողջ աշխարհի արարիչն ու թագաւորն է: Բայց Անգրա-Մայինեուն միանգամայն հաւասար չէ իր մեծ հակառակորդին: Ահուրա-Մազդան ամենաիմաստունն է. իսկ Ահրիմանը անմիտ, տխմար. այդ պատճառով էլ վերջը նա պէտք է յաղթահարուի բարձրագոյն զօրութեան կողմից:

Երկու հակառակորդներն էլ ունեն իրենց չքախումբը, որոնք նրանց կամակատարներն են: Ահուրայի չքախմբի մէջ ամենաբարձր տեղն են բռնում վեց Ամեշասպենտաները (անմահ օգնականները), որոնք իսկապէս անձնաւորեալ կրօնական գաղափարներ են. նրանք կոչւում են «ամենալաւ կարգ ու կանոն», «լաւ միտք», «ցանկալի իրաւունք», «կատարեալ իմաստութիւն», «անմահութիւն» և այլն: Դրանց վրայ աւելանում են նաեւ երկրային իրերի—հողի, մետաղի, կենդանիների և բոյսերի—հովանաւորները: Երկրորդ խումբը, որ չրջապատում է Ահուրա-Մազդային, Յազատաների խումբն է (պատկառելիները), սրանց մէջ են գտնւում հին ժողովրդական բազմաղան աստուածութիւնները. այդպէս՝ «կրակի ոգին», ապա հին հնդիրանական լոյսի աստուած Միթրան (Միհրը). որ այժմ դառնում է մարդկանց և աստծու մէջ միջնորդ, առաջնորդում է մարդկանց հոգիներին դէպի հանդերձեալ աշխարհը և այնտեղ դատում է նրանց: Նոյն պաշտօնն է

կատարում նաև «հնազանդության ոգին»— Սրա-Օշան: Սրանց չարքին են պատկանում նաև պատմական հերոսների և սրբերի հոգիները, օրինակ՝ Զրադաշտի հոգին, որին նոյնպես երկնային զօրութիւնների չարքն են դասում քահանաները, երբ սկսում են երկնային զօրութիւնների կարգաւորութիւնը որոշել: Երրորդ կարգի մէջ են «Ֆրաւաշիները», մարդկանց հոգիները ընդհանրապէս, բայց առանձնապէս բարեպաշտների հովանաւորող հոգիները:

Սակայն, Զրադաշտի ուսմունքի համաձայն, հին աստուածներից չատերը չարի կողմն են բռնում. այն բառը, որ Վեդայի մէջ աստուածների ամենաընդհանուր արտայայտութիւնն է (դևա), Ավեստայի մէջ հանդէս է գալիս իբրև նոյնպիսի ընդհանուր արտայայտութիւն չար ոգիների համար: Հինը և նորը ամենախիստ կերպով բաժանւում են. այն բառը, որ առաջ աստուած էր նշանակում, այժմ նշանակում է սատանայ (դև): Այսպիսով, իրօք այնքան չատանում են աստուածներն ու նրանց չրջապատող չար ու բարի ոգիները ու աստուածային էակները, որ Եղիշէն իրաւունք ունէր ասելու. «ե՞րբ ուսանիցէք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա» (III գլխի սկիզբը):

Մարդկային գործունէութեան բովանդակութիւնը պիտի լինի պայքարել սատանայական էութեան դէմ: Այսպիսով աստուած և բարեպաշտ մարդը դաշնակից են դառնում կռուի մէջ: Թէ՛ անհատից և թէ ամբողջ ժողովրդից աստուածահաճոյ գործ է պահանջւում և ո՛չ թէ ճգնաւորական ծոյլ մտահայեցողութիւն, ինչպէս օրինակ բրահմանիզմի մէջ: Այդպիսի աստուածահաճոյ գործեր են անաստնապահութիւնն ու երկրագործութիւնը: «Ով որ հացահատիկ է ցանում, սերմանում է սրբութիւն», որովհետև պըտղաբեր երկիրը պատկանում է Ահուրային, իսկ անպտուղը՝ դեմոններին: Բարի գործերի տեսակէտից նոյնպիսի մեծ արժէք ունի մաքուր ընտանեկան կեանքը, շատ զաւակներ ունենալն ու նրանց ճիշտ դաստիարակելը. դրա հակառակ՝ անառակութիւնը դատապարտելի է, իսկ անբնական ցանկութիւնները՝ մահացու յանցանք, աններելի սատանայական գործ: Բացի սրանցից, իբրև գլխաւոր սոցիալական առաքինութիւններ առանձնապէս չեշտւում են ճշմարտասիրութիւն, հաւատարմութիւն, արդարութիւն, բարեգործութիւն և ողորմածութիւն: Իսկ ամենամեծ մոլորութիւնները համարւում են ստախօսութիւն, խաբեբայութիւն, երդմնազանցութիւն, պարտք աննելը (որովհետև սա էլ առանց ստի չի լինում), ժլատութիւն և քաչասրտութիւն: Զրադաշտին հետևող պարսիկների մէջ յոյներն էլ առանձնապէս նկատել են ճշմարտասիրութեան և հաւատարմութեան գիծը: Բայց բարեպաշտ մարդու կեանքի նպատակը պիտի լինի, այդ բոլորի հետ մխասին, ամէն կերպ կռուել չարի դէմ, որպէսզի բարին յաղթանակի. խօսքով, մտքով և ձեռքերով նա պիտի աշխատի ինչպես հասցնել չարին: Այդպէս, օրինակ՝ բարեպաշտ մարդու պարտականութիւնների մէջ է մտնում նաև ինչպիսակար կենդանիներին, ինչպէս մրջիւններին ու օձերին, կոտորելը: Այդ մանր կռիւն էլ տիեզերական մեծ պայքարի մի մասն է և պէտք

է նոյնպիսի հանդիսաւոր ոգեւորութեամբ մղուի, ինչպէս ամենամեծ եւ ամենասուրբ բանը:

Սակայն զրադաշտական կրօնը մտցնում կամ սրբագործում է մի սոսկալի սովորութիւն. դա մօտիկ ազգականների, մինչեւ անգամ քրոջ եւ եղբօր, հօր և իր դստեր ամուսնութիւնն է (Plutarchus, Արտաքսերքսէս 232—261): Առանձնապէս սովորական էին այսպիսի ամուսնութիւնները Աքեմենեան արքայական տան մէջ, բայց մեզ յայտնի է նոյնը նաև Սասանեանների մասին, որի մի զաղրելի օրինակը գիտենք Ցազկերտ II-ի վերաբերմամբ, որ ամուսնացած էր իր դստեր հետ, բայց յետոյ սպանեց նրան: Այդ սովորութիւնն անշուշտ առաջ է եկել ցեղի մաքրութիւնն անաղարտ պահպանելու ձգտումից:

Զրադաշտական կրօնի բարոյական պահանջների ամփոփումը գտնում ենք ցաստա 12-ի մէջ. այդ պահանջներն են՝ հրաժարուել դևաների պաշտամունքից, հաւատալ Ահուրա-Մազդային, ճանաչել Ամեշա-Սպենտաներին, խոստանալ պաշտպանելու եղջիւրաւոր անասուններին, նեղութիւն չտալ անասնապահներին, հեռու մնալ ամէն տեսակ բռնի գործողութիւններից, չնորհակալ լինել Ահուրա-Մազդային բոլոր բարի բաների համար, ուխտել, խուսափելու չարից, առանձնապէս ստախօսութիւնից, և բարի գործել:

Այսպիսի պահանջներ անող կրօնը չի կարող նպաստաւոր հող ստեղծել պատճառների համար, և իսկապէս էլ իսկական, առանձնապէս հանդիսաւոր պաշտամունք հանդէս չի գալիս գաթաների մէջ, կամ հանդէս է գալիս շատ քիչ: Այդ պաշտամունքը կապուած չէ սկզբնապէս նաև տաճարների հետ, որոնց մասին սկզբնական շրջանում քիչ խօսք կայ, այլ կատարւում է դրսում ազատ օդի մէջ, բարձունքներում կամ տանը: Իրանական կրօնի պաշտամունքի կենտրոնը ամենահին ժամանակներից արեւի և նրա նիւթական ներկայացուցիչ կրակի երկրպագութիւնն է, որ կատարւում է շատ եռանդուն կերպով սկզբում յատուկ շինուած սեղանների վրայ, հետագայում նաև դրանցից առաջացած տաճարներում: Ամենասուրբ պարտականութիւններից մէկը կրակն անշէջ պահելն է, որի համար, ինչպէս նկարագրում է եղիշէն, այնքան չանք էին գործ դնում դրա համար յատկապէս նշանակուած մոգերը, որ փայտակրութեան ժամանակ նրանց ձեռքերը կոշտանում էին կացնով աշխատելուց, մէջքերը քոս էր կապում փայտ կրելուց, աչքերը չրակալում էին ծխի առատութիւնից և երեսները մրոտւում նոյն ծխի խոնաւ թանձրութիւնից (VIII գլուխ):

Բացի արեգակի ու կրակի պաշտամունքից՝ զրադաշտական կրօնի մէջ մեծ տեղ են բռնում մարդութեան զանազան պատուէրները: Ինչպէս կրակը, այնպէս էլ մարդը, հողը, ջուրը և այլն կարող են պղծուել, ենթարկուելով զանազան չար ոգիների յարձակման կամ կպչելով դիակի, և պէտք է, ուրեմն, վերատին մաքրուեն ու սրբուեն: Սրբուելու միջոցներն են օրհնած ջուր կամ կովի օրհնած մէզ (գոմիզ), չորս աչքանի շուն (աչքերի վերև երկու բիծ) հայեացք, որ հալածեցնում է մինչև իսկ դիակին և ճանապարհորդին էլ սրբում է ճանապարհի պղծութիւնից, եթէ մի այդպիսի շուն անցկացնեն նրա ճանապարհի վրայով:

Շատ դժուար է ասել, թէ այս յատկանիշները միայն յետոյ են աւելացել Զրադաշտական կրօնի մէջ չնորհիւ քահանաների, որոնք մեծ օգուտ ունէին դրանից, քանի որ իւրաքանչիւր դէպքում նրանք պէտք է՝ առանձին վարձատրութիւն ստանալով՝ որոշէին, թէ ինչ պէտք է անել սրբութեան համար: Ի հարկէ հետագայում քանի գնում այնքան ընդարձակւում են թէ՛ կենդանիների զոհաբերութիւնները, որոնք բաժանւում էին մոգերի մէջ, և թէ մաքրուելու այդ անմիտ գործողութիւնները ու պատուէրները, որոնց մէջ նոյնպէս մեծ դեր էին կատարում նոյն մոգերը, բայց անշուշտ մտածողութեան այս եղանակից հեռու չեն եղել նաև Զրադաշտը և նրա անմիջական աշակերտները: Միայն թէ դրանք քանի գնում՝ այնքան այլասերւում են և այլանդակ չափերի են հասնում քահանաների կոլմից չահագործումն աւելանալուն զուգընթաց, որը նոյնպէս այլանդակ չափերի է հասնում: Ցամենայն դէպս՝ այսքանը պարզ է, որ մաքրութեան այդ կարգերը իրենց որոշ տեղն ունեն ամենահնական և ամենասուրբ կարգաւորութիւնների մէջ, որովհետև նրանք էլ նպաստում են բարու վերջնական յաղթանակին չարի վրայ:

Սակայն Զրադաշտական կրօնի վախճանաբանական գաղափարը կազմող այդ վերջնական յաղթութեան մասին գաթաները (հնագոյն երգերը) միայն անորոշ ակնարկներով են խօսում: Մի վերջին վճիռ, որ գուցէ շատ մօտ է. կարմիր կրակն ու եռացող մետաղի գետը աստուածային դատաստան պիտի անեն: Մազդան պիտի գայ իր սուրբ հոգու հետ և բարեպաշտներին պիտի պատկանի փրկութիւնը: Հետագայ ժամանակներում (տես Բունդեհիշ գիրքը) իրերի այդ վախճանը պատկերացնում են շատ հեռաւոր ապագայում: 6000 տարի տեւող տիեզերական մի ժամանակաշրջան լի է բարու և չարի կռւով. այդ մեծ ժամանակաշրջանի մէջտեղը, անցման կէտում, գտնւում է ինքը Զրադաշտն իր յայտնութեամբ: Արդէն այժմ նրա ճշմարիտ խօսքը աստծու մարտիկների ձեռքին մի յաղթական զէնք է մահուան ու ստութեան զօրութիւնների դէմ. բայց նրանից 3000 տարի յետոյ պէտք է երևայ նրա սաղմից հրաշքով ծնուած փրկիչ Սաոշիանտ և բոլոր մեռելներին յարութիւն տայ: Այնուհետեւ մի հսկայական տիեզերական հրդեհ պիտի հալի բոլոր տարրերը և այդ հալուածքի մէջ բարեպաշտները պիտի մաքրուեն առանց ցաւի, իսկ չարերը պիտի պատժուեն երեք-օրեայ տանջանքներով, բայց չպէտք է ոչնչանան, այլ պէտք է մաքրուած գուրս գան կրակի միջից: Միայն Ահրիմանն ու իր դեմոնները մի վերջնական վճռական կռուի մէջ պէտք է յաղթուեն և բոլորովին ոչնչանան: Այդ ժամանակ կը սկսուի մի նոր աշխարհ «առանց ծերութեան ու մահուան, առանց ոչնչացման ու նեխման, լի յաւիտենական կեանքով, լի յաւիտենական զարդացմամբ»: Այդ աշխարհում երջանկութեան մէջ պիտի ապրեն մաքուր արարածները՝ Ահուրա-Մազդայի բացառիկ իշխանութեան ներքոյ:

Բայց ո՛չ միայն աշխարհի վերջի, այլ նաեւ առանձին հոգիների դրութեան մասին հանդերձեալ կեանքում տեղեկութիւն է տալիս մեզ մազդայական կրօնը: Բարեպաշտի հոգին մահուանից յետոյ 3 օր շարունակ դեռ

ևս մարմնի մաս է մնում, բայց սրտին կատարեալ նախապատրաստում ունի իրեն սպասող դրախտային երջանկությունների մասին: Ապա նա գալիս է Չինուատ երկնային կամրջի մոտ, որտեղ դատաստան են անում: Արդարության ոգին կշիռքը ձեռքին կշռում էր չար ու բարի գործերն առանց աչառության ու երեսպաշտության: Եթե բարի գործերը գերակշռում են, հոգին կարող է կամուրջի վրայից անցնել. նրա առաջ է գալիս դրախտային անուշահոտությամբ մի հոյակերտ և մի գեղեցիկ աղջիկ է երևում, որը նրան հարցնում, թե ո՞վ ես դու, պատասխանում է. «Ես քո սեփական գործն եմ. քո բարի խոսքերի, մտքերի և գործերի մարմնացումը, քո բարեպաշտ հանգստը»: Ապա հոգին Միհրայի առաջնորդությամբ մտնում է նախ բարի մտքերի, խոսքերի ու գործերի եռակի դրախտը և վերջապես Ահուրայի կամ բարի հոգիների լուսատուր աշխարհը: Իսկ անաստուածների, անխիղճների, չարմարդկանց հոգիներին մահուան չար ոգին տանում է եռակի դժոխքը և վերջապես հասցնում Ահրիմանի խաւար բնակարանը, «ստության տունը»:

Անշուշտ այս հասկացողությունների մեջ դեր են կատարում Հնդեվրոպական անիմիզմի աւելի հին պատկերացումները, բայց Զարատուստրայի կրօնի մեջ նրանք ստորադասում են այն բարոյական հիմնական դաղափարին, որի համաձայն՝ իւրաքանչիւր մարդ պատասխանատու է ոչ միայն իր գործի արդարության, այլ և իր խոսքի ճշմարտության և իր մտածողության մաքրության համար:

Զրադաշտական կրօնի քահանաները բաժանւում են երկու խմբի. ըստորին հոգեւորականութիւնը կրում է հերբեդ (հերպետ) անունը, իսկ աւելի բարձր հոգեւորականութիւնը՝ մոբեդ կամ մոգպետ անունը. գիտնական մոգպետները կամ տաճարների աւագ հոգեւորականները կոչւում են դաստուր: Բոլորի գլուխն է հիերարխիական աստիճանաւորության համաձայն մոգպետների մոգպետը կամ մովպետան մովպետը, որը Սասանեանների տիրապետության ժամանակ կոչւում է Զարատուշտրոտեմա և պետության մեջ արքայից արքայից յետոյ երկրորդ տեղն է բռնում:

Զրադաշտական կրօնը նոր բարգաւաճման հասաւ Սասանեանների օրով: Արտաշիրը, այդ դինաստիայի հիմնադիրը, հէնց սկզբից և եթ յենուեց հոգեւորականության վրայ և ամէն առիթ յայտարարում էր, որ ինքը մազդայասնական հաւատի հետեւող է: Եւ իրօք, Սասանեանները զրադաշտական կրօնը պետական կրօնի վերածեցին և իրենց գահի յենարանը դարձրին եկեղեցու բեմը: Մոլեռանդ, նուիրապետական կազմակերպութիւն ունեցող մոգութիւնը մեծ ուժ էր պետության մեջ և սրբացնում էր այն թագաւորներին, որոնք ենթարկւում էին իրեն: Դրա փոխարէն արքայից արքաները էլ մեծ ծառայութիւններ էին մատուցանում մազդայական կրօնին: Նրանք կառուցում էին տաճարներ, որոնցից առանձնապէս հռչակաւոր էր Իստախր մայրաքաղաքում կառուցուած կրակի մեծ տաճարը: Նրանք խմբագրել տուին Ավեստան և միւս սրբազան տեքստերը: Երբեմն միայն այս դինաստիայի թագաւորներից ոմէք մէկը թուլացնում էր իր կապերը հիերարխիայի հետ կամ անուշադիր էր վերաբերում ուղղափառ հաւատին: Այսպի-

ին, եթէ չուտ չէր գգաստանում, կրում էր իր պատիժը: Բայց այս չի նշանակում, թէ բոլոր Սասանեան թագաւորները մոգերի ծառաներն են եղել. ընդհակառակը, նրանց մէջ կային բազմաթիւ լուրջ քաղաքական դէմքեր: Բայց քաղաքականութիւնը նրանց սովորաբար տանում էր նոյն հունով, ինչ որ մոգերին ու մոգպետներին, իսկ սրանք, ինչպէս ասացինք, բազմաթիւ էին, լաւ կազմակերպուած և պատկառելի ուժ էին պետութեան մէջ: Այստեղ դեր էր կատարում ի միջի այլոց նաև այն հանգամանքը, որ Սասանեան պետութեան քաղաքական հակադրութիւնը դէպի հռովմէական կայսրութիւնը միաժամանակ մի կրօնական հակադրութիւն էր պայմանաւորում քրիստոնէութեան վերաբերմամբ, որով և աւելի է մեծանում ու չեչտւում մոգերի նշանակութիւնը: Սրանից առաջացան քրիստոնէութեան ծանր հալածանքները Սասանեան պետութեան մէջ (տես ծանօթագր. 5), որոնց մէջ մոգերը բնականաբար խոշոր դեր էին կատարում:

Մաղդեզական կրօնը երկար ժամանակ իշխող մնաց իրանական ազգերի մէջ և դեռ ազդեցութիւն էր գործում հարեւանների վրայ. յատկապէս Հին կտակարանի ուշ ժամանակի հատուածների մէջ երևում է նրա ազդեցութիւնը՝ հրեշտակների պատկերացումների, սատանայի, դուժէ և յարութեան հաւատի մէջ:

Ալեքսանդր Մեծի արշաւանքներին հետեւող քաղաքակրթութիւնների և կրօնների խառնուրդի մէջ Մազդայականութիւնը անմասն մնաց, Սասանեանների պետութեան ժամանակ մօտ 400 տարի իշխեց և մխայն խալիֆը կարողացաւ ոչնչացնել նրան: Միթրայի միստերիաներն ու պաշտամունքը թէև հետագայում լայն չափերով տարածուեցին Հռովմէական պետութեան մէջ, ինչպէս նաեւ Մանիի կրօնը կամ Մանիքէութիւնը, բայց նրանց մէջ բացի իրանական կրօնից արդէն ուրիշ շատ հասկացողութիւններ էլ էին մուտք գործել և նրանց յաղթութիւնն այլևս իսկապէս մազդայականութեան յաղթութիւնը չէր:

Ի վերջոյ պէտք է շեչտել նաեւ այն հանգամանքը, որ մեզ հետաքրքրող շրջանում Պարսկաստանում տիրապետող դիրք և պաշտօնական հեղինակութիւն ունէր ո՛չ թէ բուն կամ կլասիկ զրադաշտականութիւնը այլ նրա մի այլատեսակ զարգացումը, որ Զրուանականութիւն է կոչւում և որը իր արտայայտութիւնն է գտել Միհրներսեհ հազարապետի նամակում (պահուած Եղիշէի մէջ), ինչպէս նաև Եզնիկի «եղծ աղանդոցի» այն հատուածի մէջ, որ վերաբերում է Պարսից կրօնի հերքմանը:

Գրականութիւն:—1) Hermann Oldenberg, Die iranische Religion, Die Kultur der Gegenwart *ժողովածուում*, herausgegeben von Paul Hinneberg, Teil I Abteilung III 1, Die orientalischen Religionen. Berlin und Leipzig, 1905. էջ 77—86; 2): Նոյնի «Aus Indien und Iran», Berlin 1899, էջ 129—191: 3) Edv. Lehmann, «Die Perser», Chantepie de la Saussaye-ի Lehrbuch der Religionsgeschichte-ի *մէջ*, II *հատոր*, Tübingen, 1905, էջ 162—233: 4) Geldner. *յոդուած* «Perser und Parsismus», Die Religion in Geschichte und Gegenwart *հանրագիտարանում*, *հատոր* IV, Tübingen. 1913, էջ 1364—1383:

5) A. V. N. Jackson «Die iranische Religion»—Grundriss der iranischen Philologie, hrsg. von Wilh. Geiger und Ernst Kuhn, II Band, Strassburg, 1896—1904, էջ 612—708: 6) Ե. Տէր Միքայելեան, «*Կրօնների պատմութիւն*», *Էջմիածին*, 1909, էջ 108—119: H. Gelzer, Eznik und die Entwicklung des Persischen Religionssystems (=Zeitschrift für armenische Philologie, 1902, 149—163).

43. Խնջոյն — *վարտիքի կամ անդրավարտիքի կապ: Խոնջաններըը հնքեքլը մի ծանր պատիժ էր Պարսկաստանում, որպէսզի յանցաւորը միայ իր կեղտոտութիւնների մէջ և տանջուի:*

44. *Եկեղեցու ազատութիւնը ծառայութեան տակ դրեց—նշանակում է՝ եկեղեցին, որ մինչև այժմ պետութեանը տուրք վճարելուց ազատ էր, հարկի տակ դրուեց: Համմա. Բան խրատու յաղագս միանձանց. «Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց և սուրբ քահանայք նորա կրօփին չարչարին յանօրէն հարկահանաց»:*

45. Հազարապետ— *երկրի բարձրագոյն քաղաքացիական պաշտօնեան ու բարձրագոյն դատաւորը: Բառի և պաշտօնի ծագումը J. Marquart-ը («Հանդ. Ամս.» 1898, էջ 316—320) բացատրում է հետեւեալ կերպով. Պարսից թիկնապահների բանակը կամ «անմահների» (աթանադի) գունդը բաղկացած էր 10000 հոգուց և բաժանւում էր 10 գնդի, իւրաքանչիւրը 1000 հոգուց: Ամէն մի գնդի գլուխն էր Հազարապետը (խիլիարոս) Սակայն այս տիտղոսը սովորաբար յատկացւում էր 1000 տիգաւոր (միլոֆո՛րի) կամ նիզակաւոր (տորիֆո՛րի) ընտիր թիկնապահների հրամանատարին, որ միանգամայն ամբողջ բանակի հրամանատարն էր: Թիկնապահների այս գունդը միշտ լրացւում էր ենիչերիների և խազարների խաքանների 12000 թիկնապահների գնդի նման: Կոռնելիոս Նեպոս Կոնոն գլ. 3 այս պաշտօնը նկարագրում է հետեւեալ ձեւով. «Հազարապետ, «որ զերկրորդ տեղի՝ պետութեան ունէր» (Chiliarchum qui secundum gradum imperif tenebat)»: Այս գընդի հրամանատարը արքունիքի հետ եղած յարաբերութիւնների վերահսկիչն էր և ամէն օր պարտաւոր էր թագաւորին ներկայացնելու իր զեկուցումները, համաձայնում էր թագաւորի պատգամաբերը և ամենահաստատակամ մարդը. միաժամանակ նա ամենամեծ վստահութիւն էր վայելում, որովհետեւ նրան էր յանձնուած թագաւորի անձնական ապահովութիւնը: «Ամենագօրեղ մարդն էր պետութեան մէջ, որի բռում էին լինում թագաւորները սովորաբար: Այսպէս էր Աքեմենեանների օրով, բայց նոյնն էր նաև Սասանեանների ժամանակ և հայոց մէջ: Հազարապետ բառը հոմանիշ էր պարսկական duzurg framadhar-ին: Հետաքրքրական է, որ Մխիթար Ապարանեցին (ԺԻ. դար) գրում է Արեւորդիների մասին (տես Գր. Վանցեանի յօդուածը, «Հանդ. Ամս.» 1896, էջ 16). «Սոցա առաջնորդն կոչի Հազրպետ», որ այստեղ ունի ցեղապետի և ընդհանուր զեկավարի իմաստ:*

Եղիշէի մէջ այս տեղում խօսքը վերաբերում է Վահան Ամատունուն, որը Համայեակ Մամիկոնեանի հետ աշակերտել էր Մեսրոպ Մաշտոցին և որոնց համար Կորիւնն ասում է՝ «արք պատուականք, երկիւղած հրամանակա-

տարք վարդապետական հրամանաց» (տես Կորիւն, վարք Մաշտոցի, հրատ. Մ. Աբեղեանի, Երևան 1941, էջ 92):

46. Դահեկան — հնագոյն ձեւը երևի «դարեհական»— Դարեհի նշանով դրամ, պարսկական դրամի անուն է: Հիւբշմանը (Arm. Gr. էջ 133) բացատրում է պարսկական դահիգան բառից, որ նշանակում է «տասնոց». (տես Հր. Աճառեան, Արմատական բառարան, II հատոր, էջ 382—384):

47. Սակ, բաժ եւ հաս—բաժը մաքսն է, իսկ հասն ու սակը դժուար է միմեանցից որոշելը. երկուսն էլ նշանակում են հարկ, տուրք. գուցէ սակը հողահարկն է, իսկ հասը՝ բահրան (տես Հր. Աճառեան, անդ. 1 հատոր, էջ 874, IV հ. էջ 142 և VI հ. էջ 29):

48. Վզուրկ — պհլ. վուզուրդ կամ վազուրդ բառն է, որ նշանակում է «աւագ, մեծ» (տես Hübschmann, Arm, Gr., էջ 246 և Հր. Աճառեան, Արմատ. բառարան, VI հ., էջ 652): Հրամատարի կամ յետնագոյն հրամանատարի կողքին դրուելով՝ նշանակում է մեծ հրամանատար, աւագ հրամատար կամ, ինչպէս մենք այժմ ասում ենք, մեծ վեզիր: Սա մովպետան մովպետից յետոյ պարսից պետութեան բարձրագոյն պաշտօնեան է: Այստեղ յիշուած վզուրկ հրամատար (Տաբարիի մէջ buzurg framadhar) Միհրներսեհը յայտնի պատմական անձնաւորութիւն է, որ երկար տարիներ (ցազկերտ I-ի ժամանակից) կատարել է այդ բարձրագոյն պաշտօնը և որին ծերութեան հասակում ցազկերտ II նորից նոյն պաշտօնին է կոչել: Տաբարին հետեւեալ կերպով է արտայայտւում Միհր-Ներսեհի մասին. «Այս Միհր-Ներսեհը մեծ ակնածանք էր վայելում պարսից բոլոր թագաւորների կողմից իր նուրբ կրթութեան, մեծ խոհեմութեան և այն վստահութեան պատճառով, որ դէպի նա տածում էր Ժողովուրդը» (Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden. übersetzt von Th. Nöldeke, Leyden, 1879, էջ 109): Մի այլ տեղում՝ «Նա իր ժամանակի իմաստուն մարդն էր, կատարեալ կրթութեան տէր, և իր վարուեցողութեամբ գերազանց ու աչքի ընկնող էր ժամանակակիցների մէջ» (անդ. էջ 75—76): Սրան միանգամայն համաձայն է հայ եպիսկոպոսների պատասխանի «Գիտեմ, զի այլովք ամենայնիւ յոյժ իմաստուն ես» գովասանքը:

49. Երաց և Սգեռաց — նոյնն է ինչ որ Արիք և Անարիք: Տես ծանօթագր. 22:

50. Դենիմազդեզն — Մազդայական կրօն, իրանական կամ զրադաշտական կրօնի անունը Ահուրա-Մազդայի անուան երկրորդ մասից (Մազդա=իմաստուն) և յասն բառից, որ նշանակում է պաշտել: Մազդայական կրօնի մասին տես մանրամասն ծանօթագր. 42:

51. Հարամանի, Խարամանի կամ Հարաման, Խարաման — նոյնն է, ինչ որ Արհմն կամ Ահրիման, չարութեան աստծու անունը: Hübschmann, Arm. Gr. Leipzig, 1897, էջ 26 ասում է. «Թւում է, թէ հայերէնի Հարամանի ձեւը աւելի հին է (Արշակունիների շրջանից), իսկ Արհմն ձևն աւելի նոր

է (Սասանեան)»: Արդէն Եզնիկ (Վեներիկ ՌՄՀե, էջ 144 և 235) Խարամանի կամ Խարամանի անունը գործ է ածում Արհմնի մասին: Խարամանի ձեւը հաւանօրէն ստացուել է զուգակցուելով աստրերէն խարմանա բառի հետ, որ նշանակում է օձ և յիշեցնում է դրախտի օձին կամ սատանային: Հր. Աճառեան, Արմատ. բառարան, III հ. էջ 408 ճիշտ նկատում է. «Բառը մեր մէջ ժողովրդական ստուգաբանութեամբ միացուելով զրադաշտական դեւի Ահրիման չար աստծու հետ (պհլ՝ Ahraman, Ahrman), ստացաւ սրա էլ նշանակութիւնները»: Տես նաև Հ. Ա. վարդանեանի յօդուածը («Հանդ. Ամս.» 1922, էջ 586—587):

52. «Մի թուզ ուտելու համար Աստուած մահ ստեղծեց»— ակնարկ է Ծննդոց գրքի գլ. Բ. 16—17 և Գ. 19, երբ Աստուած պատուիրում է Ադամին՝ դրախտի բոլոր ծառերի պտուղներից ուտել, բայց բարու և չարի գիտութեան ծառի պտուղներից չուտել, և նրան մահ է սպառնում այդ ծառի պտուղներն ուտելու դէպքում: Օձի միջոցով իր կնոջից խաբուած Ադամն ուտում է արգելուած պտուղը և դառնում է մահկանացու:

53. Բանբուրակ — անշուշտ Պանթերոս անուան աղաւաղումն է. հրէական զրոյցները Քրիստոսի մասին ասում էին, նրա վարկը գցելու համար, թէ անառակութիւնից ծնուած մի մարդ է և նրա հայրը եղել է հռոմէական մի զինուոր Պանթերոս անունով: Հրէական այս զրոյցն առաջին անգամ գրի է առել Կելսոսը մօտ 178 թուին գրած իր նշանաւոր Լոգոս ալիթիս տաբա՛ իւիսթիանոյ (Քան ճշմարիտ ընդդէմ քրիստոնէից) գրուածքում (Տես Ե. Տէր-Միքայէլեան, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հատ. I, Էջմիածին, 1908, էջ 91—92): Ինչպէս երեւում է, այս զրոյցը հրեաներն աշխատել են ամէն տեղ տարածել և քրիստոնէութեան հակառակորդների մէջ այն մեծ ընդունելութիւն է գտել:

54. Նածրացի կամ Նածարացի — նոյնն է, ինչ որ Նազաւրացի կամ Նազովրեցի և նշանակում է Յիսուս Նազովրեցու հետեւող կամ քրիստոնեայ. բառը գործ է ածւում ընդհանուր նշանակութեամբ թէ՛ եպիսկոպոսների և թէ սովորական քրիստոնեաների համար (հմմտ. Hoffmann, Auszuge, 34): Վկայք Արեւելից, Էջմիածին 1921, էջ 159 և 160 Յեզանդուխտն իրեն մասին ասում է՝ «զի ես եմ կին նազաւրացի և աղախին Քրիստոսի»: Սակայն այստեղ հետաքրքրականն այն է, որ Միհրներսեհը Նածրացի է անուանում մի այն քրիստոնէական կրօնի առաջնորդներին («Մի հաւատաք ձեր առաջնորդներին, որոնց նածրացի էք անւանում»). արդեօք այն պատճառո՞վ, որ պէտք մի այն նրանց մեղապարտ և դատապարտելի ցոյց տայ, ինչպէս կարծում է Փորքուզալ փաշան (Եղիշէ, 223), թէ՞ իրօք V դարում այդպէս կոչուել են յատկապէս քրիստոնեայ հոգեւորականները, դժուար է հաստատապէս որոշել: Միհրներսեհի որոշակի արտայայտութիւնը հաւանական է դարձնում այն ենթադրութիւնը, որ սկզբնապէս ընդհանուր նշանակութիւն ունեցող բառը հետագայում սկսուել է գործածուել միայն դեկավարների համար:

55. Արտաւասի ժողովական եպիսկոպոսների անուններ տալիս են մեզ

թէ՛ Եղիշէն և թէ Փարպեցին, վերջինս առանց ժողովի տեղը յիշելու: Համեմատութեան համար դնում ենք նրանց ցանկերը.

Եղիւէ	Փարպեցի
1. Յովսէփ Այրարատի եպիսկոպոս	Յովսէփ կաթողիկոս
2. Սահակ Տարօնի »	Անանիա Սիւնեաց եպիսկոպոս
3. Մելիտէ Մանազկերտի »	Մուշէ Արծրունեաց »
4. Եղնիկ Բագրեւանդի »	Սահակ Տարօնի »
5. Սուրմակ Բզնունեաց »	Սահակ Ռշտունեաց »
6. Տաճատ Տայոց »	Մելիսէ Մանազկերտի »
7. Թաթիկ Բասենի »	Եղնիկ Բագրեւանդի »
8. Քաոսն Տուրուբերանի »	Սուրմակ Բզնունեաց »
9. Երեմիա Մարդաստանի »	Թաթիկ Բասենի »
10. Եւլալի Մարդաղեոյ »	Երեմիա Մարդաստանի »
11. Անանիա Սիւնեաց »	Դաւ Վանանդի »
12. Մուշէ Արծրունեաց »	Բասիլ Մոկաց »
13. Սահակ Ռշտունեաց »	Եղբայր Անձեւացեաց »
14. Բասիլ Մոկաց »	Տաճատ Տայոց »
15. Դաւ Վանանդի »	Քաոսն Տարբերունոյ »
16. Եղիշէ Ամատունեաց »	Ջաւէն Մանանաղեոյ »
17. Եղբայր Անձեւացեաց »	Եղիշէ Ամատունեաց »
18. Երեմիա Ապահունեաց »	Երեմիա Ապահունեաց »

Այս անունների կարգը թէեւ տարբեր է, բայց բոլորը նոյնն է, բացի մէկից. մինչդեռ Եղիշէն յիշում է Եւլալի Մարդաղեոյ եպիսկոպոսին, Փարպեցին նրա փոխարէն տալիս է Ջաւէն Մանանաղեոյ եպիսկոպոսի անունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մանանալին անշուշտ յունաց բաժնում էր (Եփրատ գետի ափին եկեղեցի գտնուին սահմանակից: Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, էջ 287), աւելի հին է թուում Եղիշէի ցանկի Մարդաղեոյ եպիսկոպոսը (Մարդալին գտնուում էր Կարինից դէպի հարաւ: Hübschmann, 327): Բացի այդ՝ մեր հին եպիսկոպոսական աթոռների ցանկերի մէջ Մանանալին չի յիշուում, բացի այս տեղից Ղազար Փարպեցու մէջ, մինչդեռ Մարդաղեոյ եպիսկոպոսութիւնը յիշուում է մի քանի անգամ, օրինակ՝ Ներսէս Բ.ի (547/548—556/557) ժողովում (տես Գիրք թղթոց՝ Թիֆլիս, 1901, էջ 73), Յովհաննէս Բ.ի (556/557—571. մեռել է Կ. Պոլսում 573 թուին) թղթերում (Գիրք թղթոց, էջ 78, 81), Ներսէս Դ. Շինողի 645 թուին Դուինում կայացրած ժողովում («Կանոնք Դուինայ սուրբ ժողովոյն», Էջմիածին, 1905, էջ 26—27: Արտատպութիւն «Արարատ» ամսագրից): Հայոց եպիսկոպոսական աթոռների մասին տես նաեւ Ն. Ադոնց, «Արմէնիա վա էպոխու Իւստինիանա», Պետերսբուրգ, 1908, էջ 322—337:

Այստեղ յիշատակուած անձերից յայտնի են Յովսէփր՝ վայոց ձորի խոզոցիմք գիւղից, որ կաթողիկոսական իշխանութիւնն վարեց 441—452. Մելիսէ Մանազկերտցին, կաթողիկոս դարձաւ Յովսէփի նահատակութիւնից

յետոյ. Բագրեւանդի եպիսկոպոս հռչակաւոր Եզնիկ Կողբացին, «Եղծ աղանդոց»ի անմահ հեղինակը և Աստուածաշունչի Թարգմանութեան եռանդուն մասնակիցը. Բզնունեաց տխրահռչակ Սուրմակ եպիսկոպոսը, Սահակ Պարթևի հակաթոռը և՛ապա Մեսրոպ Մաշտոցի մահից յետոյ անուանապէս կաթողիկոս Պարսից Թագաւորի հրամանով. Թաթիկ՝ Սահակի և Մեսրոպի աշակերտներից, որին ուրիշ կրօնաւորների հետ «երանութեան հասած սրբի (=Մաշտոցի) համար սպասաւոր կարգեցին» (Կարիւճ, հրատ. Մ. Աբեղեանի, էջ 96): Մնացած անունների մասին որոշակի բան չգիտենք: Հաւանական է, որ նրանք մեծ մասամբ Սահակի և Մեսրոպի աշակերտներ եղած լինեն և իրրեւ այդպիսիները եպիսկոպոսական աստիճանի հասած: Բանասէրներից ոմանք եղիշէ Ամատունեաց եպիսկոպոսին նոյնացնում են մեր պատմագրի հետ, բայց այդ կարծիքը հաւանական չէ (տես Ներածութիւն):

56. Քորեպիսկոպոս կոչւում էին Արեւելքում գաւառների ու գիւղերի եպիսկոպոսներն իւ տարբերութիւն քաղաքների եպիսկոպոսներից: Մինչեւ IV դարի կէսերը բաւական տարածուած էին, ունէին լրիւ եպիսկոպոսական իրաւունքներ և ստանում էին եպիսկոպոսական ձեռնադրութիւն. բայց IV դարի կէսերից սկսած ամէն կերպ աշխատում են նրանց իրաւունքները կրճատել և նրանց ամբողջովին ենթարկել քաղաքների եպիսկոպոսներին. նրանք այլեւս եպիսկոպոսական ձեռնադրութիւն չեն ստանում, այլ միայն քահանայական, և այս ձեւով իրենց գոյութիւնը շարունակում են մինչեւ VI դարը: Տես Fr. Gillmann, Das Institut der chorbischöfe im Orient, München 1903, XI+136:

57. Երէցներ—յունարէն պրեսբիւտեր բառի Թարգմանութիւնն է. այսպէս էին կոչւում քրիստոնէական համայնքի աւագները, որոնք կանգնած էին լինում համայնքի գլուխը: Սկզբնական շրջանում նրանք ձեռնադրութիւն չէին ստանում և կառավարում էին համայնքի գործերը: Հետագայում, երբ եկեղեցին միապետական կերպարանք է ընդունում, նրանցից մի կողմից զարգանում է եպիսկոպոսական իշխանութիւնը, միւս կողմից երէցները քահանայական ձեռնադրութիւն են ստանում և դառնում են առանձին համայնքների հոգեւոր ղեկավարներ: Այդ պատճառով էլ մեզանում երէց և քահանայ բառերը հետագայում իրենց նշանակութեամբ նոյնանում են:

58. Սպահ Արեաց—նշանակում է Արեաց զօրաբաշակ: Պհլ. սպահ. պրս. սիպահ նշանակում է «զօրք, բանակ»: Այստեղից=սիպահսալար, որ նշանակում է զօրապետ: Կայ նաեւ սպայսալար ձեւը (տես Հր. Աճառեան, Արմատական բառարան, VI հ. էջ 383—384 և 398):

59, Որմիզդ արքայ—որովհետեւ Որմիզդ III-ը ցազկերտ II-ից յետոյ է գալիս (457—458), ուստի այստեղ խօսք կարող է լինել միայն Որմիզդ I-ի (273) կամ Որմիզդ II-ի (303—310) մասին. հաւանօրէն պէտք է հասկանալ Որմիզդ II-ը: Մաղդայական կրօնն ուրացած մոգպետի մասին ոչ մի տեղեկութիւն չի մնացել:

60. Անիտաւն իշխան—նշանակում է Աստուած:

61. Ղուկ. ԺԲ. 47—48: Այստեղ նա թարգմանութիւնը տարբեր է Աւետարանի բնագրի հայերէն կանոնական թարգմանութիւնից:

62. Գեհեն—«ի ձէ՛ննա»— յունականացրած բառ է երբայեցերէն Գեհինոմ, կամ աւելի ճիշտ՝ Գե-բնէ-Հինոմ բառից, որ նշանակում է Հինոմի որդիների հովիտ, կիրճ: Այդ կիրճը գտնւում է Երուսաղէմից հարաւ: Յետին չրջանի հրէական ժողովրդական հաւատի համաձայն՝ այստեղ պէտք է տեղի ունենայ վերջին դատաստանն ու պատիժը: Նոյնացւում է պատժի կրակի կամ գժոխքի կրակի հետ. այստեղից՝ Գեհենի անչէջ հուր արտայայտութիւնը:

63. Ամլորդի Յովհաննէս — կոչւում է Յովհաննէս Մկրտիչը՝ Զաքարիա քահանայի և նրա կին Եղիսաբէթի որդին: Ամլորդի անունն առաջ է եկել նրանից, որ Ղուկասի աւետարանի Ա. գլ. 7 համարում ասուած է. «Նրանք որդի չունէին, որովհետեւ Եղիսաբէթն ամուլ էր և երկուսն էլ ծերացած էին»:

64. Յորդանան—կոչւում է այն գետը, որ անցնում է Պաղեստինի միջով հիւսիսից դէպի հարաւ և ամբողջ երկիրը բաժանում է երկու մասի՝ Յորդանանից արեւմուտք ընկած երկիրը, որ ամբողջովին անցնում է իսրայէլացիների ձեռքը և Յորդանանից արեւելք ընկած երկիրը, որ մնում է մասամբ Ամորացիների, Ամոնացիների, Մովաբացիների և ուրիշների ձեռքին: Յորդանանն սկիզբ է առնում Հերմոն սարից բղխող 3 աղբիւրներից և թափւում է Մեռեալ ծովը:

65. Պոնտացի Պիղատոս—Հրէաստանի և Սամարիայի 5-րդ հռոմէական պրոկուրատորը (25—36 թ.թ.), որի ժամանակ հանդէս եկաւ, աւանդութեան համաձայն, Յիսուս Քրիստոսը: Պիղատոսի վախկոտ բնաւորութիւնն ընդգծուած է աւետարաններում մէջ նրանով, որ նա զիջող վերաբերմունք է ցոյց տալիս հրէական հոգեւորականութեանը և իր իսկ տեսակէտից բոլորովին անմեղ Քրիստոսին յանձնում է նրանց ձեռքը՝ խաչ բարձրացնելու համար: Սակայն ո՛չ նրա արիւնահեղ գազանութիւնները (Ղուկ. ԺԳ. 1) և ո՛չ էլ այդպիսի երկչոտ գիջողութիւնները նրան չեն փրկում, և Սամարացիների գանգատների հիման վրայ Սիրիայի կուսակալ Վիտելիոսը նրան Հռոմ է ուղարկում պատասխան տալու համար:

66. Ձիթենեաց սար—Երուսաղէմի դիմացը դէպի արեւելք ընկած լեռ, 818 մետր բարձրութեամբ: Յայտնի է Գեթսեմանի պարտէզով իբրեւ Քրիստոսի մատնութեան վայր (Մարկ. ԺԴ. 26 և Ղուկ. ԻԲ. 39) և իբրեւ այն տեղը, որտեղից Քրիստոս համբարձել է երկինք (Գործք Առաքելոց Ա. 12), որ և այստեղ ակնարկում է Եղիշէն:

67. Ասճատան — Փորթուգալ փուռայի կարծիքով՝ ծագել է պարսկերէն

Hübschmann ածականից, որ նշանակում է երջանիկ և հատանօրէն արքայական պալատի անունն էր: Hübschmann, Arm. Gr., էջ 160, գնում է պհլ, Xvanstan բառից, իսկ խոնատատանի բացատրութեան մէջ ասում է՝ «Պարսից թագաւորի ընդունելութեան կամ խորհուրդի դահլիճը»: Հր. Աճառեան, Արմատ. բառարան, III հ., էջ 571, ասում է՝ «Պարսից թագաւորական պալատը կամ տեղանը»:

68. Մեծ հրապարակ ասելով պէտք է հասկանալ այն ընդարձակ դահլիճը, որտեղ ժողովւում էին կամ այդ ժամանակ ժողովուած էին պարսից մեծամեծները:

69. Դառնացեալ ծերը — Միհրներսեհ մեծ հազարապետն է: Ուրիշ տեղ էլ Եղիշէն (տես III գլխի վերջում) նոյն կերպ է արտայայտւում Միհրներսեհի մասին:

70. «Հրաման տուբ ներսը», այսինքն հրամայիր պալատի ներսում գտնուող գրագիրներին և այլ գործադիր պաշտօնեաներին (Փորթուգալ փաստ):

71. Դայեկասնունդ բնակիմ — մէկ տան մէջ մէկ խնամակալի ձեռքով մեծացած և դաստիարակուած անձեր: Դայեակ պհլ. նշանակում է «ծծմայր, տոնտոռ» (Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. II, էջ 395), «բայց յառաջ գործ է ածւում նաև տղամարդկանց մասին՝ դաստիարակ, խնամակալ նշանակութեամբ: Հին ժամանակ սովորութիւն կար, որ թագաւորն իր որդիներին յանձնում էր ոևէ իշխանի դաստիարակութեան: Իշխանը թագաւորազն սանին սնուցանում էր իր տանը, իր զաւակների հետ, և եթէ ինքն ունենում էր ծծկեր երեխայ, թագաւորազն և իշխանազն երեխաները միեւնոյն կնոջ կաթով էին մեծանում, և այս կերպով նրանք քոյրեր էին կաթնեղբայր: Մեծանալիս թագաւորազնը եթէ թագաւոր չէր դառնում, իր մօտ էր բերում իր կաթնեղբօրը իբրեւ մտերիմ: Եղիշէն (II գլուխ) դառնապէս գանգատւում է ասելով՝ Հայոց նախարարներից ոմանք (յազկերտ II-ի) եղբայրներին սնուցել էին իրենց մայրենի կաթով, բայց նա ամենից խիստ նրանց հետ էր վարւում: Նշանակում է՝ Պարսից թագաւորները նոյնիսկ հայ նախարարներին յանձնում էին իրենց որդիների դաստիարակութիւնն ու խնամակալութիւնը: Թագաւորների օրինակով ասպետ իշխաններն էլ իրենց որդիներին յանձնում էին կրտսեր իշխանների կամ ազատների դաստիարակութեան»: (Ստ. Մալխասեան, Մովսէս Խորենացի, աշխարհաբար թարգմանութիւն, Երեւան 1940, էջ 295, ծանօթագր. 165): Դայեկասնունդ անձերի միմեանց հետ ունեցած կապերը շատ սերտ էին. դայեակները սիրում էին իրենց սաներին հարազատ զաւակների պէս, հաւատարիմ էին նրանց և ամէն նեղութիւն յանձն էին առնում նրանց վերահաս վտանգներից փրկելու համար: (Համմ. նաեւ Փորթուգալ փաստ, Եղիշէ, էջ 246—248, ծանօթագր. 3):

72. «Շապուհի ժամանակները, որ քո պապ յազկերտի հայրն էր»:—

Խօսքը Շապուհ III-ի (385—388) և նրա որդի Յազկերտ I-ի (399—420) մասին է: Առհասարակ Շապուհ II-ից (310—379) յետոյ թագաւորող անձերի ազգակցական կապերը միմեանց հետ անորոշ են. օրինակ Վռամ (Բահրամ) IV (381—399) ոմանց ասելով Շապուհ III-ի որդին էր, ուրիշների ասելով՝ Շապուհ II-ի: Այդպէս էլ Յազկերտ I-ը ոմանց ասելով Վռամ (Բահրամ) IV-ի որդին էր, ուրիշների ասելով՝ նրա եղբայրը և այլն: Նէօլդեքէն (Tabari, էջ 436 a) Շապուհ III-ի որդին է համարում Վռամ (Բահրամ) IV-ին և Յազկերտ I-ին, բայց Յանօթագրութեան մէջ երկուսի մասին էլ ասում է՝ «գուցէ սրանք Շապուհ II-ի որդիներն են»: Հետաքրքրական է, որ Եղիշէն պարզապէս Շապուհ III-ին է համարում Յազկերտ II-ի պապ Յազկերտ I-ի հայր:

73. Բոլոր տպագրութիւնների ունեն frsիկար, միայն Թէոդոսիոյինը (Անձեացեայ օրինակը) տալիս է frsur: Պէտք է լինի frպիկար, որ նշանակում է «Մազդեզական կրօնի պատուիրած բարի գործերը, որոնք արժանի են վարձատրութեան»: Այս բառը գործ է ածուած միայն երկու անգամ, մէկ այստեղ և մէկ էլ Եղիշէի VII գլուխ. «...եւ ապանանել զհօրեղբայրն իւր զՎաղինակ և ինքն տարաւ զտէրութիւնն իրրեւ քրտիկաւ արքունի»: Մանրամասն բացատրութիւնը տես Հր. Աճառեան, Հրմատական բառարան, IV հատոր, էջ 1556—1558 և Փորքուզալ փաստ, Եղիշէ, էջ 252—253:

74. Սագաստան— սակերի երկիրը Պարսից պետութեան արեւելեան նահանգներից մէկն էր, սահմանակից Հնդկաստանին, այժմեան Աֆղանիստանի սահմաններում: Հետագայում, արաբական տիրապետութիւնից սկսած, կոչւում է Սեխիստան (տես Hübschmann, Arm. Gr. էջ 71 և Փորքուզալ փաստ, Եղիշէ, էջ 255: Համմտ. նաեւ J. Marquart, Eranschahr. էջ 35—39):

75. Խուժաստան— այժմ Խուզիստան, յունական Սուզիանան, բուն Պարսկաստանի մի մասը, ուր աքսորւում էին յանցաւոր համարուածների կանայք և որդիները՝ արքունի կալուածքներում աշխատելու համար: Գտնւում է հին Բաբելոնից դէպի արեւելք, Պարսից ծոցից դէպի հիւսիս:

76. Ակնարկուած է Աստուածաշնչի մէջ պատմուած այն դրոյցը, որի համաձայն Աբրահամ նահապետը իր որդի Իսահակին զոհել է կամենում Աստծուն (Գիրք Ծննդոց, ԻԲ. 1—13):

77. Դարսան կամ Դասան աշխարհ —իսկապէս պէտք է լինի Դասն. յիշատակւում է Աղձնեաց, Կորդուաց և Ծաւդէից աշխարհների կողքին. աստերեքէն՝ Բեթ - Դասեն. Դիոնիսիոս տել-Մահրէ (177, 4) յիշում է Դասին Մոսուլի շրջանում. արաբերէն Դասին—Մեծ Զարիւ արեւմուտք ընկած մի գաւառ. Ամադիէի և Գարա լեռների շրջակայքում (Hoffmann, Auszuge, 202—207 և Hübschmann, altarmen. Ortsnamen, էջ 230—321): Ամենայն հաւանականութեամբ «Դասն» պէտք է ուղղել նաեւ «Գդացն» աշխարհը (տես Յանօթագրը. 29):

78. Փանդամ— ճերմակ լաթից քող, որով մոգերն իրենց դէմքերը ծած-

կում էին կրակին մօտենալիս, որպէսզի իրենց արատաչնչութեամբ չպղծեն սուրբ հուրը:

79. Գումէզ.— կովի մէզ. ազտեղութիւնները լուանալու և առհասարակ լուացման արարողութիւնների մէջ գործ էր ածւում կովի մէգը՝ պղծութիւնը սրբելու համար: Տես վերև, ծանօթագր. 42, Զրադաչտական կրօնի մասին:

80. Կոպնաքիւ մոխրայափ կարգով.— ինչպէս այսօրեայ երեւում է, իւրաքանչիւր տուն պարտաւոր էր, իրրեւ ապացոյց իր բարեպաշտութեան, կապիճով (չափի անուն է) չափուած որոշ քանակութեամբ մոխիր ներկայացնել:

81. Եկեղեցու սուրբ ուխտ առելով պէտք է հասկանալ առաջին հերթին հոգեւորականներին, բառի սովորական գործածութիւնն այդ է. բայց այս գլխում և եղիշէի մէջ առհասարակ եկեղեցու սուրբ ուխտ ասելով պէտք է հասկանալ եկեղեցականութեան հետ միացած և մի ուխտ կազմած ամբողջ քրիստոնեայ ժողովրդին:

82. «Դառնապէս ոգրում էին մեզ», ասում է եղիշէն յոյց տալու համար, որ նախարարների ուրացութեան պահին ինքն էլ նրանց հետ եղել է Պարսկաստանում:

83. Մատթ. ժ. 33 և Ղուկ. ժԲ. 9: Բերուած վկայութիւնը աւետարանների այժմեան տեքստից տարբեր է, օրինակ՝ «Ուրացայց և ես»ի փոխարէն եղիշէն ասում է՝ «յուրասոտ եղեց և ես»:

84. Մարթիրոս (մարդիրոս) կոչւում էին Քրիստոսի անուան համար կամ քրիստոնէութիւնը չուրանալու պատճառով նահատակուած մարդիկ, որոնց գերեզմանների վրայ վկայարաններ էին շինում. այդ վկայարանները յունարէն կոչւում էին մարդիրիոն, որից և առացուել է հայերէն մատուռ բառը:

85. Ելից Ի. 5 և Բ. օրինաց Ե. 9:

86. Պարսից ամիսները, որոնցից մի քանիսը յիշւում են եղիշէի մէջ, հետեւեալներն էին. 1) Ֆերվերդին, 2) Արդբեհեշտ, 3) Խորդատ, 4) Տիր, 5) Մորդատ, 6) Շարիր, 7) Միհր, 8) Աբան, 9) Ադեր, 10) Դէի, 11) Բահմէն և 12) Ասֆենդարմետ: Հիմնականում պարսկական տարին մեզ հետաքրքրող չրջանում եղել է փոփոխական տարի— 12 ամիս 30-ական օրով և 5 աւելեաց օրեր: Պարսկականից փոխառութիւն են համարւում կապադովկիան և հայկական օրացոյցները: Սակայն հնարաւոր է, որ երեք հիմքն էլ մի աւելի հին և առաջաւոր-ասիական տարի է (տես Ginzel, Handbuch der mathemat: und teehn. Chronologie, Leipzig 1906. I հատոր, էջ 274—309):

87. Անգղ գիւղամաղամ.— Այրարատի Շաղկոտն գաւառում ամուր բերդ և գիւղաքաղաք: Ղազար Փարպեցին (Պատմութիւն հայոց, Թիֆլիս 1904,

էջ 60) ասում է. «Գայլին նայանէին ի գաւառն, որ կոչի Թաղկոան, մեքձ ի բերդն ամուր, զոր Անդղն անուանեն»:

88. Այստեղ յիշուած Շապուհ արքայից արքան անշուշտ Շապուհ II-ն է (310—379), որի ժամանակ իրօք քրիստոնէութիւնը մեծ չափով տարածուում է թէ՛ Արեւմուտքում և թէ Արեւելքում, և որի սաստիկ հալածանքներից փախած պարսկական քրիստոնեաներն ամենայն հաւանականութեամբ հասել են մինչեւ Հնդկաստան: Սրա մասին է ասում Եղիշէն, թէ «Որքան նա կամեցաւ արգելել, նրանք (քրիստոնեաներն) աւելի ու աւելի աճեցին ու բազմացան, և հասան մինչեւ Փուշանների աշխարհը, և այնտեղից էլ (քրիստոնէութիւնը) տարածուեց դէպի հարաւ՝ մինչեւ Հնդկաստան»:

89. Զանդիկ—այստեղ Եղիշէի մէջ գործ է ածուած «Մանիքեցու» իմաստով, ճիշտ այնպէս, ինչպէս նաեւ Եզնիկն իր «Եղծ աղանդոց»ի մէջ Մանիի հետեւորդներին զանդիկ է կոչում (տե՛ս «Եղծ աղանդոց», Վենետիկ ՌՄՀԸ, էջ 116): Տաբարին եւս Մանիի անուան կողքին դնում է զանդիկ բառը՝ «Շապուհի օրերում հանդէս եկաւ զանդիկ Մանին» (Tabari, էջ 40, 47 շար.): Զանդիկ բառի բացատրութիւնը դեռ հաստատապէս չի տրուած:

Մանիհէական կրօնի հիմնադիրն է 216 թուին ծնուած պարսիկ Մանին, որ իբրեւ հերձուածող ու մոլորեցուցիչ խաչուել է Վռամ (Բահրամ) I-ի ժամանակ 276/277 թուին: Մանիի քարոզած կրօնը կամ մանիքէութիւնը պատկանում է սեմական բնութեան կրօնների շարքին և բաբելոնական բնոյթ ունի: Այդ կրօնը սերտօրէն կապուած է քրիստոնէական-գնոստիկեան Մոդդասիլահների հետ, որոնք հրէական քրիստոնէութեան մնացորդներն էին Արեւելքում: Մանիքէութեան հիմքն է կազմում հին պարսկական կրօնը լոյսի և խաւարի իր բարոյական երկուութեամբ, ինչպէս և այդ երկու աշխարհների կռիւը միմեանց հետ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մանիքէութեան վրայ, բացի նրա հիմքը կազմող հին պարսկական կրօնից, մեծ ազդեցութիւն են գործել նաեւ քրիստոնէութիւնն ու հրէութիւնը, կարելի է այն բնորոշել իբրեւ առաջաւոր Ասիայի բոլոր կրօններից կազմուած մի սինկրետիզմ (խառնուրդ) նոր-պարսկական պետութեան հողի վրայ (Մանիի և մանիքէութեան մասին տե՛ս Ս. Տէր Միքայէլեան, Ընդհանուր եկեղ. պատմութիւն, հ. I, Էջմիածին 1908, էջ 186—190):

90. Այստեղ ասուած խօսքերն ուղղուած են երկրի մարզպանին, որ այն ժամանակ Վասակն էր: Խօսողը մոգպետն է, որ յորդորում է Վասակին՝ եղելութիւնը յայտնել Պարսից թագաւորին, որպէսզի մոգպետը չմեղադրուի անխոհեմութեան կամ անկարողութեան համար:

91. Մովպետաց Մովպետ=մոգպետների մոգպետ, ուրիշ խօսքով մաղդայական կրօնի գլխաւոր քահանայապետ: Սկզբնապէս պհլ. ասուել է մոգպետ (գրուել է մաղուպատ), Սասանեան շրջանում դարձել է մովպետ և այստեղից՝ մովպետան մովպետ, մովան անդերձապետ եւայլն արտայայտութիւնները (տե՛ս Hübschmann, Arm. Gr. էջ 195 և Հր. Աճառեան, Հայոց բառարան, հ. IV, էջ 1087—1089:

92 Եւրանդերձապետ և անդերձապետ.— «Պարսից արքունիքի մեծ պաշտօնեայ»: կայ մոգայ անդերձապետ (Բուզ.), Մովսէս անդերձապետ (Եղիշէ, Փարպեցի) և դերանդերձապետ (Եղիշէ): Գրւում է նաեւ հանդերձապետ: Հ. Անասեան (Արմատ. Բառարան, հ. I, էջ 310—311) ասում է. «պհլ. andarzpat «օգնական, խորհրդական, որ կազմուած է andarz «խրհուրդ» (տես անդաթ բառի տակ) և pat «պետ» բառերից: Հին պարսից մէջ այսպիսի խորհրդականներ կային մոգպետի, նահանգապետների, հրամանատարների մօտ և այլն. ըստ այնմ ունենք պհլ. andarzpat—i—vâspuhrakân «անդերձապետ աւագանեաց», moyan andarzpat... «մոգպետի խորհրդականը»= մոգաց անդերձապետ, dar-andarzpat... «խորհրդական արքունի դրան»= դերանդերձապետ (կազմուած պհլ. dar=պրս. dar «դուռն» բառով): Sagastan andarzpat «խորհրդական նահանգապետին Սագաստանի»=Սակաստան անդերձապետ: Անդերձապետը սատրապից յետոյ նահանգի ամենամեծ պաշտօնեան էր»: Այս մասին տես նաեւ Hübschmann, Arm, Gr., էջ 99 և 179: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եղիշէի մէջ դերանդերձապետը (=արքունի դրան խորհրդականը) յիշւում է մոլպետան մոլպետից անմիջապէս յետոյ և մեծ հազարապետից առաջ, պէտք է ենթադրել, որ նա շատ բարձր դիրք է ունեցել պարսից արքունիքում և իր ազդեցութեամբ հաւասար է եղել հետագայի արքայական պալատի մինիստրին: Անդերձապետները յիշւում են երբեմն նաեւ իբրեւ զօրավարներ (Փաւստ. Բուզանդ, IV գլ. Խե և Խէ):

93. Մեծ հազարապետ.— Միհրներսեհի տիտղոսն է, նշանակում է մեծ վեզիր և ամենայն հաւանականութեամբ «վղուրկ հրամանատարի» հայերէն թարգմանութիւնն է: Հազարապետ բառի բացատրութեան մասին տե՛ս ծանօթագր. 45 և Հր. Անասեան, Արմատ. Բառարան, հ. IV, էջ 14—15 և Hübschmann, Arm. Gr. էջ 174: Ուշադրութեան արժանի է, որ Տաթարին (անդ, էջ 76) Միհր-Ներսեհին բնութագրելուց և ըստ ամենայնի գովաբանելուց յետոյ աւելացնում է՝ «Նրա մականունն էր Հազարբանդա» (Hazarbanda): Փորքուզալ փաշա (Եղիշէ, էջ 229) գտնում է, որ «հազարբանդա» բառը անշուշտ գրչագրի մի սխալ է փոխանակ հազարապետի, բայց նրա այդ կարծիքը հիմնաւորուած չէ: Նէօլդեկէն, ընդհակառակն, կարծում է, որ այս տիտղոսը պէտք է տարբերել հայերէն «հազարապետ» բառից, և գտնում է, որ հազարբանդա (=«հազար ստրկի տէր») արտայայտութիւնը բառականաչափ հիմնաւորուած է Թէոդորետի Hist. eccl. 5,39, Սու(ր)ի՛ճի խիլիոն եֆոն տէսպո՛թին արտայայտութեամբ:

94. Ջորէրի սպարապետ ասելով հասկացւում է վարդան Մամիկոնեանը թէեւ անունը տրուած չէ:

95. Փեշխաքմ— պարսկերէն բառ է, որ նշանակում է թիկնապահ, օգնական:

96. «Հաւատաւոր կանայք» — տերմին, որ յատկապէս մոլպետների համար: Կ. Կոստանեան («Հիւսուածք», 102) սխալւում է կարծելով, թէ «հաւատաւոր» խօսքն այստեղ հաւատացեալ, այլ՝ քրիստոնեայ է նշանակում: Առարկելով Առաքեան բառարանի բացատրութեան դէմ (կուսաք, մաքրապետ),

Կոստանեան ասում է՝ «Թէ ինչու է այդպէս սոուզաբանուած, մեզ անհասկանալի է: Եղիշէի խօսքերից՝ այդ չի երեւում: Գուցէ այն պատճառով, որ կանանց մասի՞ն է խօսում Եղիշէն»: Ընդհակառակը, հէնց Եղիշէի խօսքերից երեւում է, որ խօսքը սովորական կանանց մասին չէ. այլ կանանց մի առանձին խմբի, որոնց անշուշտ տարբեր տեսակի չորերն են պատասխանում վշտիպաններին կանայք: Նոյն Եղիշէի երկրորդ գլխի վերջում ասուած է՝ «եւ Գրիգորսին հաւատացող այն տղամարդիկ և կանայք, որոնք բնակուած են մենանոցներում, փոխեն իրենց հագուստը՝ աշխարհական կարգի համաձայն», ուրեմն նրանք յատուկ զգեստ են ունեցել, աշխարհիկ զգեստից տարբեր: Մեզ թւում է, որ «հաւատաւոր կանայք» արտայայտութիւնը հաւանօր է ասորերէն «բընաթ քըյամա» տերմինին, որ կարելի էր նաեւ «ուխտաւորներ» թարգմանել և նշանակում է «կոյսեր»: Տե՛ս Payne Smith Syriac Dictionary, որտեղ յիշուած ասորերէն բառի դիմաց գրուած է՝ «Church virgins, nuns», երբեմն էլ գործ է ածւում սարկաւագուհի իմաստով (համմտ. նաեւ Կ. Բրոկելմանի ասորերէնից լատիներէն բառարանը համապատասխան բառի տակ): Մեր ասածը միանգամայն հաստատում է նաեւ Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից»ը, որին անշուշտ ծանօթ է եղել Եղիշէն. այնտեղ կարդում ենք. «Հրաման եւս ունել զթերբու հաւատաւոր և ղքոյր նորա աշխարհավար» («Էջմիածին», 1921, էջ 150): Ուրեմն հաւատաւորը հակադրւում է աշխարհավարին և չի կարող սրբիչ բան նշանակել, բայց եթէ կոյս: Տե՛ս այս մասին Ե. Տէր-Մինասեան, Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից»ը և նրա ասորական սկզբնատիպը— «Հայաստանի Գիտական Ինստիտուտի Բանբերում», 1921—1922 թ. թ. էջ 114—126, յատկապէս էջ 123: Համմտ. նաեւ Հ. Ա. Վարդանեան. «Հանդ. Ամս.», 1922, էջ 287—288, որի բացատրութիւնը համապատասխանում է մեր տուածին:

97. «Երջանկատուած բանակը» պէտք է հասկանալ մոգերի և նախարարների հետ Պարսկաստանից եկող զօրքը, որի մէջ էր նաեւ երկրի մարզպան Միհրներսեհ իշխան Վասակը:

98. Այստեղ յիշուած բազմաթիւ բերդերից մի քանիսի տեղն է միայն որոշակի յայտնի, մէւանների անյայտ են: Յայտնիներն են Արտաշատը, Գառնին, Անին, Արտագերս (այժմեան Կաղզուանի մօտերքը), Ողականը (Մշոյ դաշտի արեւմտեան ծայրին, Կուրկուր կոչուած տեղը, որտեղ Արածանին սեղմւում է երկու քարաժայռերի միջեւ, դրանից երկու ժամի ճանապարհ դէպի ցած մի ապառաժ բարձրաւանդակ, որտեղ մինչեւ այժմ էլ երեւում են Ողականի աւերակները), Վանը և Որոտանը (Միհրներսեհ երկրում): Մնացածները՝ Երկայնորդք, Բարձրաբուղ, Խորանիստ և այլն անյայտ են և նրանց տեղերը որոշել հնարաւոր չէ: Եղիշէի կոնտեքստից այսքանը միայն պարզ է, որ այդ ամուր տեղերը բոլորն էլ գտնւում էին Պարսկական Հայաստանում:

99. Ասորստանցիք— Եղիշէի ժամանակ այժմեան Ադրբեջանի հարաւային և Պարսկաստանի հիւսիս-արեւմտեան մասի անուններ: Սահմանները ճշդիւ

պրոշել հնարաւոր չէ, որովհետեւ շարունակ փոխուել է այն է բեմին յօգուտ Հայաստանի, բայց մեծ մասամբ յօգուտ Պարսկաստանի (տե՛ս J. Marquart, անդ, էջ 108—114):

100. Վռամական կրակ— Բահրամ աթաշ, ամենասրբազան կրակը: Փոր-բուզալ փուռա (եղիշէ, էջ 292, ծանօթագր. 3) ասում է. «կրակք, ինչպէս և կրակատունք երկու տեսակ են. ա. մեծ կրակատուն, որ Աթաշ-Պահրամ կը կոչուի. բ. փոքր կրակատունք, որք Ատարան կ'ըսուին: Պոմպայի մէջ մինչ հարիւրի չափ Ատարանք կան, Վռամականը միայն երեք է: Վռամական կրակի և ատարան կրակի տարբերութիւնը սոցա տեսակին, այս է՝ ծագման և պատրաստութեան մէջ է: Տարի մը պէտք է ղՎռամականը պատրաստելու. տասնըվեց տեսակ կրակէ-պիտի բաղկանայ, որով կ'ամփոփէ յինքեան ամէն կրակայ ուժը և էութիւնը. և յոյժ սրբազան է և յարգելի...»:

101. Տե՛ս ծանօթագր. 12:

102. Սերայի ադիմանիներից մինչեւ Գադերովկի կողմերը— Սերաց աշխարհը համարւում է Արեւելեան Ասիան, իսկ Գադերովկը կազիքան է Սպանիայի հարաւ-արեւմտեան ծայրին: Ուրեմն ուզում է ասել Ասիայի արեւելեան ափերից մինչեւ Եւրոպայի արեւմտեան ծայրը:

103. «ի սուրբ եպիսկոպոսէն Հռովմայ»: Այսպէս են գրում Կ. Պոլսի երկրորդ և Թէոդոսիայի տպագրութիւնները: Վենետիկի և Երուսաղէմի տպագրութիւնները տալիս են «ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ»: Ըստ այսմ՝ «պետ»ը կարող է հետագայում աւելացրած լինել բնագրի վրայ:

104. Սինկղիտոս — ծերակոյտ, սենատ, յունարէն սինկղիտոս. հայերէն գրւում է նաեւ սիւնկղիտոս:

105. Մարկիանոս կայսր— (450—457) Թէոդոս կայսեր մահից (450 թուի ամրանը) յետոյ կայսերական իշխանութիւնն անցաւ Թէոդոսի քոյր Պուլխերիային, որն ամուսնացաւ Մարկիանոսի հետ և վերջինս այսպիսով կայսր դարձաւ: Եղիշէն բաւական ծանր խօսքերով է բնութագրում Մարկիանոս կայսրին. «Իրեն խրատ տուող վատ, անարդ և անաստուած մարդկանց լսող, անարի կամ վախկոտ մարդ, որ մարմնաւոր խաղաղութեան համար աւելի լաւ էր համարում իր դաշինքը պահել հեթանոսների հետ, քան թէ քրիստոնէական ուխտին պատերազմակից լինել»: Թէոդոս կայսրն էլ իր ժամանակ ո՛չ միայն չէր օգնել քրիստոնեաներին, այլ նոյնիսկ իր մայրաքաղաքում եղած պարսիկ քրիստոնեաներին բռնել և մատնել էր Պարսից թագաւորի ձեռքը (տես I գլուխ): Բայց Եղիշէն ո՛չ միայն խօսք չի գտնում նրա արած տմարդութիւնը պախարակելու, այլ մինչեւ իսկ արդարացնում է «քանզի խաղաղասէր էր ի Քրիստոս» ասելով: Արդեօք Մարկիանոսի և նրա ծառաների դէմ ուղղուած այս նախատական խօսքերի մէջ չե՞ն արտացոլում նաեւ Քաղկեդոնի ժողովի (451 թ.) հետ կապուած հանգամանքներն ու այդ ժողովի շնորհիւ ամբողջ արեւելեան կայսրութեան հաւատի մէջ կատարուած փոփոխութիւնը, որին բացասաբար է վերաբերում Եղիշէն:

106. Հեթանոսների հետ կռած պայինք ասելով Եղիշէն այստեղ հասկանում է Ցազկերտ II-ի և Թէոդոս կայսեր պայինքը (գլ. I), որ այս անգամ աւելի է ամրապնդւում նրանով, որ Մարկիանոսը խոստանում է հայերին ոչ մի օգնութիւն ցոյց չտալ ո՛չ զօրքով և ոչ էլ զէնքով:

107. Հեր եւ Ջարեւանդ գաւառները — Պարսկահայք կոչուած նահանգի երկու գաւառները, ոչ հեռու այժմեան Սալմաստից և Խոյից:

108. Խաղխաղ Տաղամ — Ազուանից թագաւորների ձմեռոցը V դարում, II և III դարերում հայոց թագաւորների ձմեռոցը: Գտնւում էր Ուտի կոչուած նահանգում, այժմեան Ջեգամ գետի ափին: Մ. Բարխուդարեան (Արցախ, Բագու, 1895, էջ 421) յիշատակում է հին աւերակների վրայ կառուցուած Խաղխաղ անունով մի թուրքաբնակ գիւղ, Ջեգամ գետի մօտերքը: Այս տեղեկութիւնը համապատասխանում է Եղիշէի այստեղ ասածին, որը նոյնպէս Խաղխաղ քաղաքը դնում է վրաստանի սահմաններին մօտիկ:

109. Սաղմոս ԼԴ. 1—2: Եղիշէի բերած տեքստը, բացի Աստուածաշնչի եզակին հասկանալի պատճառով յոգնակի դարձնելուց, առհասարակ էլ տարբեր է այժմեան Սաղմոսի տեքստից: Օրինակ՝ Եղիշէն ասում է՝ «Զինու և ասպարաւ քով օգնեա մեզ», իսկ Սաղմոսում ասուած է՝ «Առ զվէն և վահան և արի օգնել ինձ»:

110. Լոփնաս գետ—հաւանօրէն այժմեան Ջեգամ գետը:

111. Բաղասական կողմեր կամ Բաղասական դաշտ—գտնւում էր Ազուանից երկրում, հաւանօրէն երկրի հիւսիս-արեւելեան կողմերում, հոների սահմաններին մօտիկ (տես Մ. Աբեղեան, Կորիւն, վարք Մաշտոցի, Երեւան 1941, ծանօթագր. 116 և J. Marquart, Eranschahr, էջ 119—120):

112. Ազուանից մեծ ամիրասպան ասելով հասկացւում է Ազուանից աշխարհի մայրաքաղաք Պարտաւը, Տրտու (այժմու Թարթար) գետի ափին, Շահաստան անունն էր տրւում մեծ ու վաճառաշահ քաղաքներին, նահանգի կամ գաւառի կենտրոնական քաղաքին (Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. V, էջ 230—231):

113. Կապկոի լեռներ — Կովկասեան լեռներ. թիֆլիսեցիք մինչեւ այժմ էլ անուանում են կաւկաս:

114. Հոների պահակ — նոյնն է ինչ որ ձորա պահակ: Տես ծանօթագրութիւն 36:

115. Այստեղ յիշուած ձմեռոցներն ու զօրքերի կայանները մեծ մասամբ յայտնի անուններ են, ինչպէս Գառնին, Երամոնը, Օշականը, Արմաւիրը (այժմեան Շահրիար և Թափատիպի գիւղերի մօտերքը հայոց հնագոյն մայրաքաղաքը), Կուաշ աւանը (այժմեան Կոչը՝ Արագածի հարաւ-արեւմտեան լանջին), Արուճ և Աշնակ (երկուսն էլ Թալինի մօտերքը), Արագածոտն գաւառը (այժմեան Թալինի, Թալիշի, Սարդարաբադի, Կարբիի, Համբերդի կամ Բիւրականի և Վաղարշապատի շրջակայքը), Արտաշատի նահանգն ու Արտաշատ քաղաքն ինքը: Մնացած անունների տեղերը որոշ

կերպով յայտնի չեն, ինչպէս՝ Դրասխանակերտը, վարդանաշատը, փառատոտը, Ցոլակերտը, Արդեանքը:

116. «Միջոց աշխարհին» կամ միջնաշխարհ ասելով պէտք է հասկանալ Այրարատը իբրեւ Հայաստանի կենտրոն:

117. Սալմ. ձժի. 1 և ձկԴ. 10: Եպիշէի բերած վերջին Սալմոսը դարձեալ տարբերութիւններ ունի այժմեան Աստուածաշնչում եղած տեքստից:

118. Հայկական տարուայ ամիսները հեռաւեալներն են. 1) Նաւասարդ, 2) Հոռի, 3) Սահմի, 4) Տրէ, 5) Քաղոց, 6) Արաց, 7) Մեհեկան, 8) Աբեղ, 9) Ահեկան, 10) Մարերի, 11) Մարգաց և 12) Հրոտից: Բոլոր ամիսները, պարսկական ամիսների նման, ունեն 30-ական օր և վերջին ամսից՝ Հրոտիցից՝ յետոյ պակաս են 5 աւելեաց օրերը՝ տարուայ 365 օրը լրացնելու համար: Հայոց հին տարին լինելով չարժական, այսինքն՝ միշտ կազմուած 365 օրուանից, նահանջ տարիներին յուլեան տարուց յետ էր մնում և դէպի յետ էր շարժւում մի օրով. 450 թուականի Նաւասարդի մէկն ընկնում էր Օգոստոսի 6-ին. Քաղոցը լինելով 5-րդ ամիսը՝ պէտք է սկսուէը, ուրեմն, Դեկտեմբերի սկիզբներին և վերջանար 451 թուի Յունուարի սկիզբներին: Այս հաշիւը միանգամայն հաստատում է Եղիշէի ճշտութիւնը: Ամբողջ Քաղոց ամիսը (ուրեմն մինչեւ Յունուարի սկիզբները) պահքով ու աղօթքով անցկացնելով՝ ժողովուրդը պէտք է «պատերազմների յաղթութեան տօնը խառնէը Քրիստոսի Յայտնութեան Սուրբ տօնին»: Յայտնի է, որ Քրիստոսի Յայտնութեան տօնը կատարւում է Յունուարի 6-ին:

119. Պարսից արքայից արքայի ձմեռոցի տեղն ասելով պէտք է հասկանալ Տիզբոնը: Տիզբոնի մասին տես ծանօթագր. 13:

120. Յազկերտ II-ի հայրը Վռամ (Բահրամ) V-ն էր (420—438):

121. Ծերը լինչպէս այստեղ, այնպէս էլ Եղիշէի մէջ համապատասխան տեղերում, դործ է ածւում մեծ հազարապետ Մհեր-Ներսեհի համար:

122. Փայտակարան Խաղաղ — Հայաստանի փայտակարան նահանգը համապատասխանում է Սատրոնի յիշած Կասպեանի նահանգին, որ ընկած էր Ուտեաց երկրից դէպի արեւելք Արաքսի ափերին և տարածւում էր մինչեւ Կասպից ծովը, այս նահանգն իր անունն ստացել է իր մայրաքաղաք Փայտակարանի անունից, որ գտնւում էր Կասպից ծովի ափին, Արաքսի գետաբերանի մօտ: Փայտակարան քաղաքը յիշատակւում է Փաւստոսի, Ագաթանգեղոսի, Փարպեցու, Եղիշէի, Մովսէս Խորենացու և Սեբէոսի պատմութիւնների մէջ: Արաբացիները այդ քաղաքն անուանում են Բայլաքան: Ոմանք միանգամայն սխալ կերպով Փայտակարան քաղաքը չփոթել են Թբիլիսիի և Պարտաւի հետ: Տե՛ս Hubschmann, altarmenische Ortsnamen, էջ 267—270 և J. Marquart. Eranschahr, էջ 108, 111, 118, 122, և այլն:

123. «Ուրացաւ այն աւազանը, որ յղացաւ նրան» — խօսքը քրիստոնէական մկրտութեան մասին է, որով հին մարդը մեռնում է և մի նորը,

վերակենդանացածն է ծնուում՝ քրիստոնէական վարդապետութեան համաձայն:

124. «Ընկալուէ սուրբ հոգին»—պէտք է հասկանալ՝ նրան քրիստոնէական համայնքի մէջ ընդունող սուրբ հոգին:

125. «Ջնջեց որդեգրութեան գիրը և իր ձեռքով խորտակեց մատանու հաստատուն կնիքը».— այստեղից հետեւում է, որ Եղիշէի ժամանակ որդեգրութեան համար յատուկ գիր էր պատրաստւում և այն կնքւում էր մատանու վրայ փորագրուած կնիքով իբրեւ ստորագրութիւն: Խորտակել կնիքըն արտայայտութիւնը ցոյց է տալիս, որ կնիքը դրւում էր հաւանօրէն մեղրամոմով և ոչ թէ ներկով, որի համար չէր կարելի խորտակել ասել:

126. Վասակի գործակիցների անուններն և այստեղ յիշուած իշխանութիւնները ցոյց են տալիս, որ նրա կողմն էին անցել Ռշտունիք (վանայ ծովից հարաւ-արեւելք, Խորխոռունիք (վանայ ծովից հիւսիս արեւմուտք), Վահեւունիք (հաւանօրէն ստորին Բասեն), Գաբեղեանք (այժմեան Կաղզուանի շրջանը), Բագրատունիք (Հայաստանի ամենախոշոր և ամենապատուաւոր նախարարներից, որոնց պատկանում էին Բարձր Հայոց Սպեր գաւառը և Արարատի կոգովիտ գաւառը Դարոյնք գլխաւոր քաղաքով, այժմեան Հին Բայազետը), Ապահունիք (վանայ ծովից հիւսիս, այժմեան Մելազկերտի շրջանը), Ակէ (Պարսից Հայաստանում, այժմեան Մակուի շրջանում), Ուրծի տեղը որոշապէս յայտնի չէ (Ալիշան դնում է Արարատի արեւելեան սահմանագծերին) և Պալունիք, որոնք երկու մասի էին բաժանուած. մի մասը բնակւում էր Վասպուրականում և գործակցում Վասակի հետ, միւս մասը՝ սահմանակից էր Տարօնին և գործակցում էր Վարդան Մամիկոնեանի հետ:

127. Վրաց աշխարհի միաբանութիւնը հայերի հետ կրկնակի պատճառ ունէր. նախ՝ երկու երկիրներն էլ քրիստոնեայ էին և միմեանց հարեւան, երկրորդ՝ Գուգարաց Բդեչխ Աշուշան Արծրունեաց փեսան էր. իսկ Աշուշայի որդի Վազգէնը Վարդանի փեսան էր, նրա դուստր Վարդենիի ամուսինը (Ղազար Փարպեցի, էջ 52, 111: Համմ. Փորբուզալ փաւստ, Եղիշէ, էջ 325):

128. Ստորին Հայք— կոչւում է Հայաստանի արեւմտա-հարաւային մասը, Ծոփաց և Դիարբեքիրի գաւառները, որոնք աւելի ցածրադիր են և տաք կլիմայ ունեն: Հ. Յ. Տաշեան («Հանդ. Ամս.», 1937, էջ 14—15) այս մասին գրում է. «Ստորին Հայոց» թարգմանութիւն կրնայ ըլլալ Armenia interiorի, թէեւ աւելի ուղիղն էր «ներքին» բառը: Ասով կը հասկցուէր՝ Թէոդոսի բաժանումէն ետքը մինչեւ Յուստինիանոս՝ «կարնոյ աշխարհն» ընդարձակ մտօք...»: Թէ ի՛նչպէս պէտք է հասկանալ Վասակ Մամիկոնեանի վերաբերեալ այս հատուածը՝ այդ մասին տե՛ս մեր ներածութեան մէջ:

129. Ներհին Վասակը— Մամիկոնեան Վասակն է, որ ապրում էր յունաց բաժնում և գործակցում էր Սիւնեաց իշխան Վասակին: Եղիշէն Մամիկոնեան Վասակին եւս նկագրում է իբրեւ մի չարագործ և «Աստծու օրէնքներին հակառակ գործող մարդ»:

130. Տմորիք— հնագոյն ժամանակներից յիշատակւում է Կորդուաց երկրի և Կորդրիքի կողքին (Փաւստոս, Եղիշէ, Խորենացի), պարսից երկրին մօտիկ: Մովսէս Խորենացու (Պատմութիւն հայոց, Տփխիս 1913. էջ 183) ասում է՝ Տմորիք, «որ այժմ կոչւում է Կորդրիք». սրանից պէտք է հետեցնել, որ Մովսէս Խորենացու ժամանակ Տմորիքը միացած է եղել Կորդրիքի հետ և այնուհետեւ կրել է Կորդրիք անունը: Տմորիքի տեղը որոշելու համար կարեւոր է Խորենացու նոյն հատուածը, որտեղ ասուած է, թէ Սմբատ բնակութիւն հաստատեց «Տմորիքում, որն այժմ Կորդրիք է կոչւում, և գերիների բազմութիւնը բնակեցրեց Ալկիում»: Այդ Ալկին այժմեան Ելկին է, կամ Ելկն է, մօտաւորապէս այժմեան Բոհտան գաւառում (Խուրսիստան): Ասորիները այդ երկրի բնակիչներին անուանում են Թմոլայէ. դրանք եղել են «մի լեռնային վայրենի ժողովուրդ պարսից պետութեան մէջ, որոնց դէմ դեռ 506 թուի խաղաղութիւնից յետոյ ստիպուած էր կռիւ մղելու կաւատ արքայից արքան (Նէօլդեէ), տե՛ս Hübschmann, altarmen. Ortsnamen, էջ 336—337 և J. Marquart, Eranschahr, 170, ծանօթագր. 2):

131. Խաղտեաց աշխարհ, Խաղտիք— հաւանօրէն հին խալդերի անունից. այդ երկիրն ընկած էր Սեւ ծովի հարաւ-արեւելեան ափերին, այժմեան Տրապիզոնից դէպի հարաւ, Հայաստանի Տայք նահանգից դէպի հիւսիս արեւմուտք, պարխար լեռների մօտ:

132. Այստեղ յիշուած տասն մէկ երկրներն իրենց ժողովուրդներով ու թագաւորներով պատկանում էին այն դաշտային ու լեռնային ժողովուրդներին, որոնք բնակուած էին կովկասեան լեռների արեւելեան մասի հարթային ու հիւսիսային լանջերին և պահպանում էին ձորա պահակը հոների և մասքութների արշաւանքից: Սրանց տեղերն առանձին-առանձին որոշել հնարաւոր չէ: Փարթուգալ փաշա (Եղիշէ, էջ 329) կարծում է, որ այժմեան Թապաերանը Թաւասպարն է, Պուտուն-Վատը, Խուպան—Դաւը և Խիբին—Խիբիուանը:

133. Դրօշ— բացի «Դրօշակ» սովորական նշանակութիւնից՝ նշանակում է նաեւ մէկ դրօշի տակ խմբուած զօրաբաժին, «գունդ, վաշտ» (Հ. Աճառեան, Արմատ. բառարան, հ. II, էջ 642): Փաւստոսն ասում է. «Բայց ուր լինէր հանդէս ի նշանաւոր տեղիս, գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց» և այլն (III ե.):

134. Վարդան Մամիկոնեանի նիզակակիցներից էին՝ Առտակ Պալունին, Պալունեաց ցեղի մի մասի տանուտէրը Մոկաց գաւառում: Պալունեաց ցեղի միւս մասի իշխանը գործակցում էր Վասակին (տես. ծանօթագր. 126): Վահան Ամատունին, հայոց երկրի նախկին հազարապետը (տե՛ս ծանօթագր. 45), որին Վասակը բանսարկութեամբ հանել էր տուել պաշտօնից, հիմա Վարդան Մամիկոնեանի ամենաեռանդուն օգնականն էր և ապստամբութեան գլխաւոր հրահրողներից մէկը (Ղազար Փարպեցի, էջ 60): Թաթուլ Դիմախեան կամ Վանանդեցի (Եղիշէ, VI գլ. և Փարպեցի), Առշաւիր Առշարունի,

Շիրակի և Երասխաձորի տէրն ու Արշարունեաց իշխանը և շատ ուրիշ իշխաններ ու սեպուհներ, որոնք թուարկուած են այստեղ:

135. Արտազու դաշտ— այլ անունով Շաւարշական դաշտ, Արտազու գաւառ: Գտնւում է Մասխից դէպի հարաւ-արեւելք, այժմեան Մակուի մէջ: Վաւերագրմբ տեղի է ունենում այն մեծ դաշտում, որը գտնւում էր Արտագի և Հեր ու Ջարեւանդ գաւառների միջեւ, դրա համար էլ դաշտը կոչւում է Արտագի դաշտ: Այս դաշտի միջով հոսում էր Տղմուտ գետը և Փարպեցին դաշտն անւանում է Տղմուտի դաշտ, իսկ եղիշէն անուանում է Աւարայր՝ մօտը եղած մի գիւղի անունով: «Արարատ» ամսագրում (1872 թ. Նոյեմբեր-Դեկտեմբեր) Գալուստ Շերմազանեան նկարագրում է Մակու գետն անցնելուց յետոյ դէպի հարաւ ձգուած դաշտերը, որոնցից մէկը կոչւում է Զորսի դաշտ և միւս մօտակայ դաշտից բաժանւում է Աղսու գետով: Այդ Աղսու գետը համարւում է Տղմուտը, իսկ լեռներով չրջապատուած Զորսի դաշտը՝ Աւարայրի դաշտը:

136. Հռոմ. Ե. 20. «Ուր առաւել եղեն մեղքն, առաւել եւս յաւելան շնորհքն»: Եղիշէ՝ «Ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ»:

137. Աստուածային ելոյ ասելով հասկացւում է դրախտը, որտեղ բնակեցուած էր Ադամը, բայց Աստծու պատուէրը չպահելով և չարին լսելով՝ պատուիրանազանց գտնուեց և դուրս արուեց այնտեղից:

138. Ջրհեղեղի առիթով նկարագրութիւնն է. համմտ. Ծննդոց գիրք. գէ. է. 11. «Եւ պատառեցան ամենայն աղբիւրք անդնդոց բազմաց, և սահանք երկնից բացան»:

139. Ակնարկութիւն Դ. Թագ. ԺՀ. և Դ. Թագ. Ա. գլուխներում պատմուած այն հրաչքների, որ կատարում է Եղիա մարգարէն:

140. Մսեղէն մեծ բլուրը Գողիաթն է, որի դէմ դուրս եկաւ պատանի Դաւիթը պարսատիկով ու քարով և սպանեց նրան: Տես Ա. Թագ. ԺԷ. գլուխ:

141. Եսայի Մարգարէ ԽԲ. 8 և ԽԳ. 13:

142. Թուղթ առ Փիլիպպ. Բ. 8—10:

143. «Իմանալի աւեգակ» արտայայտութիւնը գործ է ածւում Քրիստոսի համար:

144. «Մի մոռանաք այն իւղը, պսակը, ուռերն ու առաստաճեան պարզեւները, որ չնորհւում են ձեզ արքունիքից», — ասում է Պարսից զօրավար Մուշկան-Ներսեհաւուրը իր զօրքերին: Իւղն այնքան ազնիւ բան էր համարւում, որ մաղթելն արդարների հոգիները հանգերձեալ կեանքում իւղով պիտի սնուէին: Պսակը նոյնպէս շատ գործնական էր Պարսկաստանում և նրանով պսակում կամ վարձատրում էին որեէ գործի մէջ աչքի ընկնող անձերին. իշխաններն ու մեծամեծներն այն իրենց գլուխներին էին դնում

աօնի և նեվրոզի օրերը, իսկ այլ մարգիկ՝ ամուսնանալու ժամանակ: Այստեղից է առաջացել նաև անշուշտ մեր մէջ սովորական պսակուել խօսքը ամուսնանալ բառի փոխարէն: Ուրբը, երևի, տրուում էր կա՛մ պսակ չինելու համար կամ այսպէս էր կոչուում խաղողի օրհը, որ տրուում էր այդի տընկելու համար (համմ. Փորբուգալ փաշա, եղիշէ, էջ 350, ծանօթ. 1):

145. Մատեան գունդ — այսպէս էր կոչուում Պարսից զօրքի մէջ ամենաընտիր, լաւ սպառազինուած գունդը: Փաւստոս Բիւզանդն ասում է մատենիկ գունդ: Ըստ Հր. Աճառեանի (Արմատ. բառարան, հ. IV, էջ 867)՝ «Իրանեան ծագում ունի, բայց մայր ձեւը աւանդուած չէ»: Տես նաև Hubschmann Arm. Gr. էջ 192: Փորբուգալ փաշա (եղիշէ, էջ 360—361) կարծում է, որ այդ անունն առաջ է եկել մատեան, գիրք բառից, որովհետեւ յատուկ մատեանի մէջ արձանագրել են այս գնդի զինուորներին իրենց ամբողջ զէնքով ու սարքով: Օրինակ՝ խոսրով I Անոշառուանի (531—579) մասին Տաբարին (Տես Անդ, էջ 247—249) և Միրխոնդը պատմում են, թէ նա պատուիրել էր Պաբաք անունով համարապետին, որ նա մէկ-մէկ զննի զինուորներին. «Եթէ զէնքերն ու սարքերն ամբողջ են, արձանագրիր մատեանի մէջ, և ամէն անգամ որ թոշակ վճարելու ես, քննիր, թէ զէնքերը կատարեա՛լ են. եթէ պակաս լինեն, մի վճարիր»: Ամենայն հաւանականութեամբ նոյնն է, ինչ որ Հերոդոտի յիշած անմահների գունդը, որ բաղկացած էր լինում 10 հազար ընտիր հեծեալներից. գունդն անմահ էր կոչուում այն պատճառով, որ երբ նրա մէջից ոևէ մէկն սպանուում էր կամ մեռնում, տեղն անմիջապէս ուրիշին էին նշանակում, այնպէս որ 10 հազար թիւը երբէք չէր պակասում (Հերոդ. գիրք է. գլ. 83): Հերոդոտի տեղեկութիւնը վերաբերում է Քսերքսեսի զօրքերին, բայց VI դարի պատմիչ Պրոկոպիոսի վկայութեան համաձայն՝ Սասանեանները վերահաստատել են Անմահների գունդը (այս ամենի մասին տես Փորբուգալ փաշա, եղիշէ, էջ 360—361):

146. Ապարհացիք, Կասիւցիները եւ Գելերը լեռնցի և կիսավայրենի ժողովուրդներ էին, որոնք ապրում էին Կասպից ծովի հարաւային և հարաւարեւմտեան ափերին: Պտղոմէոսի և Ստրաբոնի տուած տեղեկութիւնների համաձայն՝ Կասիւները բնակւում էին այժմեան Թալիշ նահանգում: Պլուտարքոսը Կասիւցիների երկիրը նկարագրում է իբրեւ մի պժուար մատչելի եւ միեգպատ երկիր, որտեղ ո՛չ ցորեն էր բուսնում և ո՛չ էլ այլ արմտիք. երկրի պատերազմասէր բնակիչները անում էին տանձով ու խնձորով եւ ուրիշ պտուղներով: Գելերը այժմեան Գիլանի բնակիչներն են, իսկ Ապարհացիք երեւի Ստրաբոնի յիշած Պարհասեանցիներն են, որոնց բնակութեան վայրը եղել է այժմեան Մազանդարանի գաւառը (տես Փորբուգալ փաշա, Եղիշէ, էջ 361 և J. Marquart, Eranschahr, էջ 125):

147. Պարսից զօրավարը հրաման է տալիս իր զօրքերի ալ կողմում պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարի. այս նշանակում է, որ Վարդան Մամիկոնեանը բռնել էր Հայոց բանակի ձախ թեւը, ինչպէս պատմում է

ղազար Փարպեցին (Պատմութիւն հայոց, Տփխիս 1904, էջ 72. «եւ ընդ ահեկէ կողմանէ պատրաստէր զինքն իւրով գնդովք և իշխանաւն Առաւեղենից Փափագաւ և այլ իշխան նախարարօքն հայոց»):

148. Խորէն Խորխոռունեաց նիզակակից տրուած Ընձայիները Արսէն Ընձայեցին է (տե՛ս նաեւ գլ. V և մի քիչ յետոյ նահատակների ցանկում՝ «յազգէն Ընձայնոց արդարն Արսէն»): Անձախի ձոր կամ Անձահիճ ձոր— վասպուրականի գաւառներից մէկն էր. գրւում է նաեւ Անձախաձոր և Ընձահիճ ձոր: Ըստ Թովմա Արծրունու՝ այս գաւառի սահմանները հասնում են մինչև Պարսկահայքի Հեր գաւառի սահմանները: Նշանաւոր է այս ձորում գտնուող Կոսոր բերդը, որի անունով էլ կոչւում է այժմեան Գոդուր վիճակը (տե՛ս Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ 1900, էջ 213):

149. «Պարսից երկու կողմերն էլ չարդուեցին»— ակնարկ է մի կողմից՝ III գլխում պատմած Գուշաններին դէմ մղած պատերազմի անյաջողութեան մասին— «Մանաւանդ զի արեւելից պատերազմէն կորակոր և ոչ բարձրագլուխ էր դարձեալ»— միւս կողմից՝ իրերի խառնաշփոթ վիճակի մասին Հայաստանում:

150. Տայոց ձորագաւառը— Հայաստանի XIV նահանգը, սահմանակից էր հիւսիս-արեւմտեան կողմից Եգեր ացոց աշխարհին, իսկ հիւսիս-արեւելեան կողմից Գուգարքին. յայտնի է իր ամուր դիրքով՝ ամրոցներով ու բերդերով: Պատկանում էր IV դարուն Մամիկոնեան տոհմին: Փաւստոս Բիւզանդն այս երկիրն անուանում է աշխարհ, եղիշէն՝ ձորագաւառ, յաճախ պարզապէս գաւառ է կոչւում Փարպեցու կողմից (էջ 94, 110, 121): Բնակիչները կոչւում էին տայեցիք, Տայք անունն առաջացել է մի ոչ հայկական ժողովրդի անունից, որ ամենից առաջ յիշում է Քսենոփոնը. դրանք կոչւում էին դա՛խի կամ նաեւ դա՛ի, որ համապատասխանում է հայերէն Տայք, Տայոց անուանը (տես Hübschmann, altarmenische Ortsnamen, էջ 276—278):

151. Խիբիովաճ— կովկասեան լեռնականների երկրի անուն է, այս երկիրը չի յիշւում IV գլխի 11 լեռնական ցեղերի անունների շարքում, բայց այստեղ անուանուած է նոյն երկիրների թւում և անշուշտ նրանցից մէկն է: Տե՛ս ծանօթագր. 132:

152. Սամուէլ, Աբրահամ, Առէն եւ Քաջայ սարկաւագ:— VIII գլխում եղիշէն աւելի որոշ տեղեկութիւններ է հաղորդում սրանց մասին: Սամուէլը Արարատից էր, Արածա գիւղից (ըստ Ալիշանի՝ Շիրակ, էջ 6, Շարուրի գաշտում), Աբրահամը, որ VIII գլխում սարկաւագ է կոչւում, մինչդեռ VII գլխում քահանայ աստուած, նոյն գիւղից էր ըստ Փարպեցու (Տփխիս 1904, էջ 75 և 78) և Սամուէլի «հոգւոյ որդին»: Պէտք է ասել, որ Փարպեցին եւս Աբրահամին էջ 75 քահանայ է անւանում, իսկ էջ 78 սարկաւագ: Այս Աբրահամ նահատակին ի հարկէ պէտք չէ շփոթել յայտնի Աբրահամ Խոստովանողի հետ, որը Տայոց գաւառի Ջենակ գիւղից էր: Սա չնահատակուեց Պարսկաստանում, այլ բազմաթիւ տանջանքների ենթարկուելուց, խեզանգամ դառնալուց և երկար տարիներ աքսորում անցկացնելուց յետոյ

Հայաստան վերադարձաւ: Այս վերջինս է նաեւ Մայիերկաթի եպիսկոպոս Մարութայի հռչակաւոր «Վկայք Արեւելից» գրքի թարգմանիչը: Առէնը բագրեւանդ գաւառի եղեգեկ կամ եղեգեակ գիւղի երէցն էր: Քաջաջ սար-. կաւագի մասին Եղիշէն ասում է. «Որոեղից Ռշտունեաց եպիսկոպոս Սահակն էր», առանց ճշգրիտ որոշելու վայրը: Ղազար Փարպեցին (էջ 79) Քաջաջ սարկաւագի մասին ասում է՝ «որ էր և նա ի գաւառէն Ռշտունեաց, աշակերտ սրբոյ եպիսկոպոսին Սահակայ»:

153. «Այս բոլոր թղթերի վրայ դրուած էր Վասակի վաւերական մատանին»: Հին սովորութեան համաձայն մատանիների վրայ կնիք էր փորագրուում՝ և պաշտօնական դրութիւնները վաւերացուում էին այդ կնիքը դրոշմելով ստորագրութեան փոխարէն, եթէ մանաւանդ համապատասխան անձը անգրագէտ էլ էր, ինչպէս պատահում էր յաճախ:

154. Վասակին Պարսից արքունիքում ամբաստանող նրա աղգականները կարող էին միայն վեհապետ Վարագվաղանը և հօրեղբօր որդիները՝ Բարգէնը և Բակուրը լինել, որոնց նա հալածել էր հայրենի ժառանգութիւնից և տիրացել Սիւնեաց իշխանութեանը: Եղիշէի IV գլխում նրանք եղբօր որդի են անուանուած, բայց անշուշտ պէտք է աւելի ընդարձակ իմաստով հասկանալ: Բարգէնը և Բակուրը Վասակի հօրեղբօրը՝ Վաղինակի որդիներն էին և բնականաբար թշնամի պիտի լինէին Վասակին, որովհետեւ սա բանտարկութեամբ պահանել էր տուել նրանց հօրը և իշխանութիւնը յափշտակել:

155. Պարսից արքունիքում կատարուած դատավարութեան ժամանակ հոգեւորականների կողմից խօսում և պատասխան է տալիս Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսը, թէեւ այնտեղ էր գտնուում կաթողիկոսական իշխանութիւնը վարող Յովսէփ երէցը և իսկապէս նա պէտք է իրրեւ եկեղեցու պետ բոլոր հոգեւորականների կողմից պատասխան տար: Այդ բացատրուում է նրանով, որ ինչպէս Եղիշէն VIII գլխում ասում է՝ Սահակ եպիսկոպոսը «լաւ գիտէր պարսկերէն»: Նոյնը վկայում է նաեւ Ղազար Փարպեցին (էջ 97). «Սուրբ եպիսկոպոսն միայն գիտէր պարսկերէն, և այլ ոք ի սրբոցն ոչ գիտէր»:

156. «Դրան հաւատացիք վրայ աշխարհը»— ասում է Եղիշէն Վասակի համար, ակնարկելով նրա վրայ մարզպան նշանակուած լինելը: Ե՞րբ է Վասակը վրաստանի մարզպան եղել, անյայտ է, յամենայն դէպս Հայաստանի մարզպան նշանակուելուց առաջ պէտք է եղած լինի, հաւանօրէն 442—445-ի միջեւ: Այդ մարզպանութեան տեւողութիւնը նոյնպէս անյայտ է, միայն այնքանն է երեւում Եղիշէի խօսքերից, որ վրացիները շատ էլ գոհ չեն եղել նրանց իշխանութիւնից:

157. «Ինձ այնպէս է թւում, թէ դա ձեզ սուտ յոյսով է ուրախացրել»,— ասում է Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսը Վասակի մասին: Սահակ եպիսկոպոսն ուզում է ասել՝ թէեւ դա շատ լաւ գիտէր, որ հայերին պարսից կրօնին դարձնել չի կարող, բայց ձեզ կերակրել է սուտ յոյսերով, թէ ինքն այդ գործը կը կարողանայ կատարել:

158. «Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Միւնեաց աշխարհին, այլ ներգութեամբ և քաջութեամբ ետ պահանջել զհարեղբայր իւր զվաղինակ, և ինքն տարաւ զտէրութիւնն իբրեւ էրեիկար յարեան»: Սա երկրորդ տեղն է, որ եղիշէն գործ է ածում այս «քրտիկար» կամ աւելի ճիշտ՝ «քրպիկար» արտայայտութիւնը: Իմաստն այն է, որ վասակը ներգութեամբ ու քաջութեամբ պահանջել տալով իր հօրեղբայր վաղինակին՝ նրա իշխանութիւնը իբրեւ վարձատրութեան արժանի երախտաւոր գործ գրաւել էր տուել յարքունիս և իր այդ ծառայութեան փոխարէն նա ինքն էր պարսից թագաւորից ստացել Միւնեաց իշխանութիւնը: Տե՛ս նաեւ ծանոթագր. 73:

159. Սակմ. ձժէ. 8—10: Միանգամայն համապատասխան է Աստուածաշնչի այժմեան հայերէն թարգմանութեանը:

160. «Որպէսզի բազում մարդիկ իսկ չոգան ի տուժին» ասելով պէտք է հասկանալ, որ պարսիկները վասակի ընտանիքից շատ մարդկանց բռնել և որպէս գերի արքունիք էին տարել տուժի փոխարէն, որովհետեւ վասակը դատապարտուել էր նաեւ արքունի հարկերը տեղ չհասցնելու և իւրացնելու համար, և նրա ու իր հայրերի ունեցած-չունեցածն ու նոյնիսկ կանանց զարդերը բաւական չէին եղել նրա վրայ բարդուած պարտքը հանդիսնելու համար: Եղիշէն ասում է՝ եթէ վասակն իր նախկին քներէ գերեզմաններում էլ գանձ գտնելու յոյս ունենար, նա «այդ գանձերը կը հանէր և տուգանք կուտար իրեն և ընտանիքի համար»:

161. Յազկերտ II-ի 16-րդ տարին համապատասխանում է 453/454 թուականին:

162. Վրկան— Կասպից ծովից դէպի հարաւ-արեւելք ընկած աշխարհի անունը. այլ անունով կոչւում է Հիւրկանիա, յունարէն Հիւրկանիա: Անուան աւելի ուշ ձեւն է Դուրգան, ինչպէս գործ են ածում ասորիները: Մինչեւ II դարի կէսերը Ք.ր. յետոյ առանձին պետութիւն էր: Այդ ժամանակուանից յետոյ Արշակունիների օրով այդ երկրի դրութեան մասին տեղեկութիւններ չկան մինչեւ Սասանեանները. Տաբարին տեղեկութիւն է տալիս նրա նուաճման մասին Արտաշիրի կողմից, առանց նրա քաղաքական դրութեան մասին որեւէ բան ասելու: Վրկանը շատ մեծ դեր էր կատարում, պարսից թագաւորների պատերազմներն մէջ Քուշանների և Հեփթաղների դէմ ծառայում էր իբրեւ օպերացիոն բազա: Հետագայում, 595—602, Սմբատ Բագրատունին այդ երկրի մարզպանն էր (տես. J. Marquart, Eranschahr, էջ 72—74):

163. Նիւսապուն խաղամ — Ապար աշխարհի մայրաքաղաքն է այժմեան Խորասանում: Հիմնել է ըստ ոմանց Շապուհ I-ը (242—273), ուրիշների ասելով (Տաբարի, էջ 59)՝ այդ քաղաքը կառուցել է Շապուհ II-ը (310—379): Անունը նշանակում է «Գեղեցիկ Շապուհ»: Տե՛ս Hübschmann, Arm, Gr., էջ 20 և J. Marquart, Eranschahr, էջ 74:

164. Համակղեն— կրօնի ամբողջ ուսմունքը լաւ գիտցող, թամա Արծրունին (Հրատ. Պատկանեանի, էջ 28) ասում է՝ «Անուանէին զինքեանս հա-

մակդեննս, այսինքն ամենագէտ ի հասատ կրակի»— կրակի հաւատի կամ պաշտամունքի մէջ ամէն բան իմացող (տե՛ս Hübschmann, Arm. Gr., էջ 117 և Հր Աճառեան, Արմատ. բառարան, IV հատոր, էջ 57—58): Բայց այստեղ եղիշէն համակրենութիւնը կարծես առանձին կեչտ կամ դասանանք է համարում այն իմաստով, որ նրա մէջ պարունակւում են միւս բոլոր չորս կամ հինգ դասանութիւնները:

165. Անպարտաս— բանասէրներից ոմանք (Փորթուգալ փաշա, Հր. Աճառեան և այլն) գտնում են, որ այս բառի սկզբնական ձեւը եղել է պարտաս. բնագրում գրուած է եղել զամենայն պարտաս, ինչպէս ունի կ. Պոլսի 1823 թ. տպագրութիւնը. սրա համառօտագրուած գամ պարտաս ձեւից առաջացել է ամպարտաս ուղղականը (Փորթուգալ փաշա, եղիշէ, էջ 399—400 և Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. V, էջ 1010—1011): Ուրիշները (Տաշեան, Հիւբշման և այլն) ճիշտ են համարում ամպարտաշ ձեւը: Վերջիններս այդ ամպարտաշ բառը բացատրում են «չահակրօն կամ լուսամիտ» իմաստով: Իսկ առաջիններդ մեկնում են պառյոյո — առաջին, նախնական և քեչա — կրօն, հաւատք բառերից. ուրեմն պարտաշ նշանակում է «առաջին կամ նախնական կրօն»: Մաղդեզական գրքերն այս անունով են կոչում Իրանի հնագոյն կրօնը, այն, որ յայտնուեց Ջեմշիտին և նրա յաջորդներին, և տեւեց մինչեւ Զրադաշտի ռեֆորմացիան (տե՛ս Փորթուգալ փաշա և Հր. Աճառեան, անդ): Մեզ հաւանական է թւում վերջին բացատրութիւնը, որովհետեւ եղիշէի կոնտեքստի մէջ «չահակրօն» կամ «լուսամիտ» բառերը բաւարար իմաստ չեն տալիս, իսկ «առաջին» կամ «նախնական» կրօնը խիստ որոշակի իմաստ ունի և կարող է հինգ կեչտերից մէկը համարուել: Ակինեանը («Հանդ. Ամս.», 1934, էջ 391—392) նոյնացնում է ասորական գրականութեան մէջ յիշուած պարսից արաւսակ կրօնագրքի հետ. «Պարտ և պատշաճ է զաբաստակ հարցանել, եթէ իշխանութի՞ւն ես ունի Ահրիմանայ զայնպիսոյ գործել» (Hoffmann, Auszüge, 64) կամ «գրեալ է ի ձերում աբաստակի, եթէ աստուած իցէ հուրն» (անդ, 109). մի ուրիշ կամ մոգերի գլխաւորի համար ասւում է՝ «գիտէր նա կատարեալ զաբաստակ» (անդ, 110): Ըստ այսմ Ակինեանն առաջարկում է անպարտաշն ուղղել ապաստաշ:

166. Ռոզպայիս— պարսկական կրօնին վերաբերեալ մի գրքի անուն, որ մեկնւում է իբրեւ «մեղքերի քաւութիւն» (Hübschmann, Arm. Gr., էջ 122): Փորթուգալ փաշա (անդ, էջ 400) ենթադրում է, որ կարող է նշանակել «աղօթք, աղերս, պաշտամունք», և եղիշէն այստեղ ուզում է ասել, թէ մոգպետը ո՛չ միայն գիտէր բուն կրօնը, այլ նաեւ միւս արարողութիւններն ու պաշտամունքի կարգերն ու աղօթքները. յայտնի է, որ պարսիկներն այս վերջիններին էլ նոյնքան կարեւորութիւն էին տալիս, որքան առաջինին (տե՛ս նաեւ Հր. Աճառեան, Արմատ. բառարան հ. I, էջ 112 և Ց. Թիրեաքեան, «Արարատ» ամսագիր 1903, էջ 735—736):

167. Պահլաւիկ եւ Պարսկադեն— նշանակում է՝ մոգպետը ծանօթ էր պահլաւիկ լեզուին, որով թարգմանուած և մեկնաբանուած էին Աւեստայի անհասկանալի լեզուով գրուած գրքերը և, ուրեմն, գիտէր ամբողջ կրօնական

վարդապետութիւնը, որ ամփոփուած էր Պահլաւիկ գրքի մէջ: Իսկ պարսկագէն ասելով պէտք է հասկանալ այն ուսմունքներն ու զրոյցները, որոնք պահլաւիկ գրքերում չկան, ինչպէս Զրուանի նախագոյութիւնը, Որմզդի սպանումը, արեգակի և լուսնի առասպելախառն ծագումը և այլն, առնուազն էին եկել Սասանեանների ժամանակ և տարածուած էին Պարսկաստանի արեւմտեան և հարաւային նահանգներում և դասանանքի զօրութիւն ունէին (Փորքուզալ փաստա, անդ, էջ 399: Հմմտ. նաև J. Marquart, Eranschahr, էջ 123, ծանօթագր. 5):

168. Պեսմոզ, այլ ընթերցուած՝ մոգպետն—այսպէս է անուանում եղիշէն վեցերորդ կէշտը կամ դասանանքը: Ի՛նչ է այդ վեցերորդ կէշտը և ի՛նչպէս պէտք է բացատրել պեսմոզ բառը, մինչեւ այժմ որոշ չէ: Գուցէ նոյնպէս կրօնական որևէ գրքի անուն էր՝ նախորդների նման:

169. Ադեն—նոյնն է, ինչ որ եղեմ կամ եբրայեցերէն լիքէն, որ նշանակում է «հաճոյք, բերկրանք»: Այս այն պարտէզի կամ, ուրիշ խօսքով, դրախտի անունն է, որ եբրայական առասպելի համաձայն՝ Աստուած տնկեց նախամարդկանց—Ադամի և Եւայի համար, բայց նրանք պատուիրանազանց գտնուելով և օձին լսելով՝ զրկուեցին նրանից և արտաքսուեցին այնտեղից: Այդ պարտէզը կոչւում է նաև Աստծու պարտէզ (Եզեկիէլի մարգարէութիւն ԻՀ. 13 և ԼԱ. 8 և այլն): Պատուիրանազանցութիւնից և արտաքսուելուց յետոյ եդեմի դուռը փակուած է մարդկանց առաջ, դրա համար էլ եղիշէն այստեղ ասում է, որ Քրիստոսը «բայց է արել Ադենի կողպած դուռը»:

170. Սաղմ. ձԺԹ (ձԺԵ) 1—2: Փորքուզալ փաստան սխալաբար մատնանշում է ՀՀ Սաղմոսը: Նոյնն է այժմեան Սաղմոսի տեքստի հետ:

171. Սաղմ. ԻՋ 1: Ճիշտ համապատասխանում է Սաղմոսի այժմեան տեքստին:

172. Մոգպետի տեսիլի մէջ գնդերի թիւի մասին ասում է՝ «կար, որ հազար էր. կար, որ երեսունըվեց էր. կար, որ երկուհարիւր տասներեք էր: Եւ այնքան շատ մօտեցաւ, որ մինչեւ անգամ ճանաչեց նրանցից երեքին՝ Վարդանին, Արտակին և Խորէնին»: Փորքուզալ փաստան այս տեղի «զերեսուն և վեցից»ն ուղղում է «զերեսուն և զերից»՝ առանձնացնելով վերջին երեքին՝ Վարդանին, Արտակին և Խորէնին: Մեզ թւում է, որ այդպիսի ուղղումն անհիմն է, որովհետեւ եղիշէն պարզ ասում է, որ մոգպետը խմբի մէջ մինչեւ անգամ ճանաչեց այդ երեքին՝ «մինչեւ ճանաչել նմա զերիս ի նոցանէ»: Ուրեմն պէտք է ճիշտ համարել «զերեսուն և վեցից» ընթերցուածը: Երկուհարիւր տասներեքը այն խումբն է, որ Աւարայրի ճակատամարտից յետոյ ապաւինել էր մի ամրոց և ապա անձնատուր եղել ու պարսից զօրավարի հրամանով նահատակուել (տե՛ս Եղիշէ, VII գլխի սկիզբը):

173. Սաղմ. Ը 2—3: Միանգամայն համապատասխան է այժմեան տեքստին, բացի մի երկու բառի կրճատումից:

174. «Ետես և ի ձեռին նոցա զանչուշտ ռաքունայն, որ հանդերձեալ

պահի ի ձեռն ճարտարապետին»: Իաբուռնա (Մահրունա) ասորերէն բառ է, որ անցել է յունարէնին ա՛rrաւռն ձեւով և նշանակում է գրաւական, առհաւատչեայ (տե՛ս Payne Smith, Syriane Dictionary, Oxford 1903, էջ 531 և C. Brockelmann, Lexicon syriacum, Berlin 1895, էջ 348):

175. Այստեղ առանց անունը տալու յիշուած երէցը Բագրեւանդի եղեգեկ գիւղի Արշէն երէցն է, ինչպէս յետոյ՝ նահատակութիւնը պատմելիս բացատրում է ինքը եղիշէն. «երէց մի Արշէն անուն, վասն որոյ յառաջ միտս արբոյն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն»:

176. «Զայս իբրեւ ասաց, լուաւ ի նմանէ բանս պնդութեան». «ի նմանէ» պէտք է հասկանալ «մոգպետից», նկատի ունենալով յայնմդոյ խօսքերը, թէեւ մոգպետի մասին չէր առաջ խօսքը, այլ Արշէն երէցի:

177. Սպասմ. Լե. 11—13:

178. Հրասախ— ասւում է նաեւ Խրասախ, փարսաղ— երկայնութեան չափ է (5250 մետր): Փարսախ բառը ունեցել է իրանական լեզուի մէջ երկու ձեւ՝ պհլ. frasang և հիւս. պհլ. frasach: Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. VI, էջ 1186 գրում է՝ «հայերէն հրասախ գալիս է հիւս. պհլ. frasach ձեւից. նախաձայնը վերջաձայնից ազդուելով (համմտ. հարբուխ > խարբուխ) բառը յետոյ դարձած է խրասախ և ապմամբ՝ հրասխ, խրասխ. յետին փարսախ ձեւը փոխառեալ է արաբ. farsax-ից, իսկ փարսանգ՝ պրսկ. farsang ձեւից:— Հիւբշ. 183»:

179. Վերին աշխարհ— բառացի թարգմանութիւն է Ապար աշխարհ կամ Ապրշահրի: Տե՛ս ծանօթագր. 23:

180. Կուրան եւ Մակուրան— Պէտք էր սպասել, իսկապէս, Տուրան և Մակուրան (Սերէոս, երեւան 1939, էջ 111), որովհետեւ Պարսկաստանի այս երկու ամենահեռաւոր հարաւային նահանգները համարեա միշտ միասին են յիշւում: Եւ սա շատ յարմարւում է եղիշէի տեքստին, որտեղ ասւում է, թէ Յազկերտ II-ը հրաման է տալիս Գենշապուհին՝ եթէ մոգպետը դարձի չգայ, նրան աքսորել Կուրանից ու Մակուրանից էլ այն կողմը, ուրեմն պարսից պետութեան ամենահեռաւոր ծայրամասերը, և այնտեղ սպանել տալ նրան: Իրօք Կուրանն ու Մակուրանը կամ այժմեան Մեկրանը գտնըւում էին Պարսից երկրի ամենահեռաւոր հարաւային ծայրին. այժմեան Բելուջիստանում, Հնդկաստանի սահմաններին կպած: Կուրանի և Մակուրանի մասին տե՛ս J. Marquart, Eranschahr, էջ 31—34:

181. «Մի խափանեսցին ծառայքն արքունի ի ծախս առճկայ սորա»— խօսքը կրակի «առճկի» մասին է. այս կապակցութեան մէջ առհասարակ էլ առճիկ բառը նշանակում է «օրական ուտելիք, պարէն, թոշակ» (Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. V, էջ 1279), ուրեմն այստեղ վառելափայտի այն քանակութիւնը, որ սահմանուած էր պետութեան կողմից և անհրաժեշտ էր

կրակը վառ պահելու համար: Պետությունը նշանակել էր նաեւ պաշտօնյաներ՝ այդ գործին խնամք տանելու համար: Այդ պատճառով էլ Եղիշէն ասում է՝ «Թող կրակն անկերակուր դառնայ ինչպէս արեգակը և արքունի ծառաները (գործից) չխափանուեն՝ դրան փայտ հասցնելու համար»:

182. Սաղմ. ԻԱ. 17—18:

183. Ակնարկուած է մոգպետի տեսիլը: Համմտ. ծանօթագր. 172:

184. «Հռիփսիմեանց մեծ վարդապետ» կամ «Հռիփսիմեանց մեծ Առաքեալ» Տօդոս Առաքեալի մականունն է իբրեւ հակադրութիւն միւս առաքեալների, որոնք սկզբում իրենց միմիայն հրեաների առաքեալ էին համարում և հեթանոսներին քրիստոնէութիւն չէին քարոզում:

185. Թուղթ առ Հռովմ. Ջ. 5: Եղիշէի բերածը տարբեր է Հռովմ. Թղթի այժմեան տեքստից. այնտեղ ասուած է՝ «Զի եթէ տնկակից եղեալ նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք». իսկ Եղիշէի մէջ՝ «Զի եթէ տնկակից եղաք նմանութեան մահու նորա, որչափ եւս առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա»:

186. Այստեղից պէտք է եզրակացնել, որ Յազկերտ II-ը մի աչքով կոյր է եղել, եթէ հարուստանական դարձուածք չհամարենք «Թագաւորն մեր մարմնով միով ակամբն կոյր է, այլ ոգւոյն բնաւ չէք իսկ աչք» արտայայտութիւնը:

187. «Եւ քանզի սուսերը ընդ մէջ ածեալ նստէր յատենի».— ուրեմն դատական ատեան էր կազմուած անապատում, որի մասին Փարպեցին ասում է, թէ միանգամայն անմարդաբնակ էր, քարքարոտ, առապարաձոր և աւազուտ, անճանապարհ մի վայր: Փարպեցին չարունակում է, թէ դատական ատեանի համար նոյնիսկ աթոռներ էլ էին տարել այդ անապատը— «Եւ արկեալ աթոռս երեցունց իշխանացն՝ նստէին...» (Տփխիս 1904, էջ 97):

188. Սաղմ. ԼԳ. 2—3 և 20: Եղիշէի տարբերութիւնը մեր այժմեան տեքստից այն է, որ նա «յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ» բառերի փոխարէն ունի «հանապազ օրհնութիւն նորա...»:

189. Խօսքը Սեբիանոս Նախավկայ կոչուածի մասին է, որին քարկոծեցին հրեաները իբրեւ Քրիստոսի հետեւորդի և վկայի՝ առաջին անգամը լինելով: Տե՛ս Գործք Առաքելոց, Ջ 8—է 59:

190. Վեց նահատակների հետ այստեղ յիշուած Արարատի Արածոյ գիւղացի Սամուէլ երէցը և նոյն գիւղացի Աբրահամ սարկաւագը նահատակուել էին ըստ Փարպեցու 18 օր առաջ Հրոտից ամսի 7-ին վատգէս գաւառում (տե՛ս 191-րդ ծանօթագրութիւնը): Վեցի մասին նոյն Փարպեցին ասում է, որ նրանք նահատակուեցին «ի վեշտասաներորդում ամի թագաւորութեան Յազկերտի, որ օր քան և հինգ էր ամսոյն Հրոտից, Ապար աշխարհի, մերձ ի գեղն Մոգուց, որ անուանեալ կոչի Ոռեան», Եղիշէի նման, որը սակայն գիւղի անունը չի տալիս, այլ ասում է՝ «ի սահմանն

Նիւշապուհ քաղաքին»: Յունվարի 16-ին տարում Հրտիից ամսի 25-ը համապատասխանում է 454 թուականի Յուլիսի 25-ին և Կիրակի օր է գալիս (Nöldecke, Tabari, էջ 424), ինչպէս, երեւի հին ալբիւրից առնելով, ասում է Ասողիկը (տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 101 և Ասողիկ, էջ 79):

191. Վաւգէս կամ Վադգէս — հին Բակտրիայի գաւառներից մէկն էր, բահլ շահաստանից ոչ շատ հեռու, այժմեան Խորասանից դէպի արեւելք և Հերաթից հիւսիս (համմ. J. Marquart, Eranschahr, էջ 64—78, 150 և այլն)

192. Թաթիկ եպիսկոպոսը Արտաշատի ժողովին մասնակից բասենի եպիսկոպոսն էր (տե՛ս II-րդ գլուխ), որ առաջուց քշուած էր Պարսկաստան և այդ ժամանակ գտնւում էր Ասորեստանում: Նահատակուեց նոյն ժամանակները:

193. Բոլոր տպագիրներում գրուած է՝ «Դենճապուհ, մոգպետ եւ Զրվիկանն եւ մայրապետ»— ուրեմն 4 հոգի, այն ինչ պարսից արքունի պաշտօնեաները միայն 3 հոգի պէտք է լինեն (տե՛ս Ղազար Փարպեցու մեր կոլմից ծանօթագր. 187 մէջ բերուած խօսքերը՝ «եւ արկեալ աթոռս երեցունց իշխանացն՝ նստէին»): Ահասաարակ Ղազար Փարպեցին ուրիշ տեղ էլ չեշտում է նրանց երեք հոգի լինելը, օրինակ՝ էջ 100. «եւ սլսումտեալ անդէն երեցունց իշխանացն»: Էջ 88 Ղազար Փարպեցին ասում է. «Տայր հրաման վեհդենշապհոյ ամբարապետի առնուլ ընդ իւր երկուս եւս այլ օգնականս աւագանւոյն, զՋնիկան մայրապետն արքունի, և զՄուլան անդերձապետ՝ ի ձեռանէ մովպետան մովպետի»: Էջ 97 անապատի գատաստանական առեանում եւս յիշատակւում են միայն 3 իշխաններ՝ վեհդենշա պուհը, Ջնիկան մայրապետն արքունի և մուլան անդերձապետը: Եղիշէն ինքն էլ վերեւում ասում է՝ «եւ հրամայեաց եւս Դենշապհոյ երկուս եւս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն. զՋնիկանն, որ էր մարզպետ արքունի, և զմուլան հանդերձապետ՝ ի ձեռանէ մովպետան մովպետի»: Ըստ այսմ պէտք է ուղղել նաեւ Եղիշէի այս հատուածը՝ «Դենշապուհ և մոգպետն և Ջնիկան մայրապետն»: Մայրապետ բառի ինչ լինելը որոշապէս յայտնի չէ. յիշւում է միայն փարպեցու և Եղիշէի մէջ և պէտք է մի բարձր աշխարհիկ պաշտօնեայ լինի, որովհետեւ նրա կոչքին յիշւում է նաեւ հոգեւոր բարձր պաշտօնեաներից մէկը՝ մուլան անդերձապետը կամ մոգպետը: Հիւբշմանը հաւանարութեան նշան է դնում մայրապետի և մարզպետի մէջ (Arm. Gr., էջ 193) և հարցական նշան դնելով առաջարկում է մայրապետ կամ մարզպետ կարդալ մարդպետ (Անդ, էջ 66)= ներքինապետ: Մայրապետ բառի մասին տե՛ս նաեւ Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. IV, էջ 792—793:

194. «Վաղագոյն առաւօտուցն ի Թարի-Թիր եկայք». գրւում է նաեւ «ի Դարիթիւրէ»: Այս բառը միայն Եղիշէն ունի այստեղ: Բառին զանազան մեկնութիւններ են տրուած, ինչպէս օրինակ՝ «դուռն օրինաց», բայց այս իմաստը չի համարւում, որովհետեւ իշխանները ո՛չ թէ դատարան պիտի գնային, այլ մոգպետի կոլմից հրաւիրւում են ներկայ լինելու մովպետան մովպետի զոհաբերութեանը: Մի այլ բացատրութիւն տրւում է «մուրթ,

մ֊ին, մ֊ադոյն» նշանակութեամբ, իբր թէ իմաստն այն է, թէ «վաղը մուխին եկէք». բայց այս բացատրութիւնն եւս յարմար չէ, որովհետեւ եղիշէի ասածից երեւում է, որ խօսքը տեղի մասին է. «Զի վաղիւ անդ մովպետան մովպետ ռաստ՝ յազէ»: Այս բացատրութիւնները մերժելով՝ Փորքուզալ փաւսան («Բազմավէպ» 1895, էջ 6—7, եղիշէ, էջ 438—439) Թարխիր բառն առաջարկում է սրբագրել Թարխմիր կամ առանց «հ.»ի Թարխմիր=«դուռն Մխոյի», որ գործ էր ածւում մեծ զոհարերութիւնների սրբավայրի, կրակի մեծ տաճարների համար: Այս բացատրութիւնը չատ յարմար է տեղին: Դարխիր բառի մասին տես մանրամասն Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. II, էջ 455—456:

195. «Զի վաղիւ անդ մովպետան մովպետ ռաս՝ յազէ»:— «Ռաս» բառը նշանակում է «գլխաւոր, մեծ» և յաճախ գործ է ածուած որպէս տիտղոս որևէ գաւառի պետի համար: Նէօլդեկէն յիշատակում է այդպիսի ռասեր (radh) Arzanene (Moesinger, Mon. syr. II, 68, 15), Adiabene և Garamaea (անդ, 68, 16), Zabdicene (անդ, 66, 26) երկրամասերի համար և այլն (տե՛ս Tabari, էջ 447): Ռաս բառը գլխաւոր կամ մեծ իմաստով գործ է ածուած նաև իրրեւ մոգերի տիտղոս (տե՛ս Hoffmann, Auzüge aus syrischen Akten persischer Mùrtyrer, Leipzig 1880, էջ 61 և 109): Փորքուզալ փաւսան (եղիշէ, էջ 439 չար.) այդ բառը համեմատում է պհլ. rad, դնդ. ratu բառի հետ, որ նշանակում է «տէր, գլուխ», և իրրեւ պատուանուն տրուում էր մոգպետների մոգպետին: Այս բացատրութիւնը թեում է ամենայարմարը և արդէն Հիւբշմանն էլ իր Arm. Gr. յաւելուածում (էջ 514) հարցականով գնում է նոյն «տէր» բացատրութեան խնդիրը (տե՛ս Հր. Աճառեան, Արմատ. բառարան, հ. V, էջ 1268—1269):

196. Նախարարները կապանքներից արձակուելուց յետոյ Հայաստան չեն ուղարկւում, այլ առժամանակ դեռ մնում են Պարսկաստանում և ուղարկւում են Հրեաց կամ այժմեան Հերաթի քաղաքը՝ արքայից արքայի զօրաբանակում ծառայելու և Քուշաններին դէմ մղուող կռիւներին մասնակցելու համար:

197. «Դու զմեր երկիրս կխաւարծ թողեր, մեք յարքունի երկիրն կէս ամարնովք մերովք ոչ վաստակեմք»— հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նախորդը. այնտեղ պատմուած է, որ Խորէնին ու Աբրահամին սաստիկ տանջանքների են ենթարկում, մեռցնելու չափ ծեծում և երկաթէ ականջներն էլ տակից կտրում, ինչպէս եղիշէն է ասում՝ այնպէս խորը, որ կարծես երբեք իրենց տեղում չէին եղել: Այս առիթով նրանք ասում են դահճապետին. «Ահա մեր լսելիքն առողջացան երկնային առողջութեամբ, իսկ հոտոտելիքը դեռ մնում են իրենց տեղերում չարչարանքի մէջ. կխաւարցուս մի՛ անի մեզ երկնքի բարութիւնից... սրբի՛ր նաև մեր քիթերը՝ կտրելով»: Երբ դահճապետը նրանց առաջարկում է գնալ Ասորիստան և մշակութիւն անել արքունի դործերում, նրանք դահճապետին ասում են այս ծանօթագրութեան սկզբում գրուած խօսքերը, կամենալով

մատնանշել, թէ դահճապետը նրանց խեղանդամ է դարձրել, կիսապարզեւ անելով երկնքի բարութիւնից և չլրացնելով նրանց մարմնաւոր չարչարանքը(=դու մեր երկիրը կիսագործ թողիր), իսկ խեղանդամ լինելով՝ նրանք արքունի հոգը մշակել չեն կարող:

198. Շահուղ: — Շահուղի փոխարէն Փարպեցին (էջ 106) տալիս է Շապուղ կամ Շապուղ: Անշուշտ եղիշէի մէջ «հ.»ից յետոյ դուրս է ընկել «փ» կամ «բ» տառը: Այդ գաւառը և իր նոյնանուն գլխաւոր քաղաք Շապուրը պէտք է լինի Շիրազի և կազերունի մօտերքը և յիշատակւում է իբրեւ գաւառ Տարաբի կողմից (տե՛ս էջ 111):

199. Մեծով՚ի—պարսկերէն կոչւում էր Մեչուն և համապատասխանում է Մեչան կամ յունարէն Մեսինի նահանգին, որ մինչեւ Արշակունեաց հարստութեան վերջերն առանձին կիսանկախ պետութիւն էր կազմում և Արտաշիր Սասանեանը նուաճելով նահանգի վերածեց: Այդ նահանգը գտնւում էր այժմեան Բասրայի մօտերքը ստորին Տիգրիսի ափերին՝ Իրաքում: Այդ նահանգը 410 թուին արդէն յիշատակւում է իբրեւ մետրոպոլիտութիւն Պորաթ-դէ-Մեսան գլխաւոր քաղաքով, որ եղել է Բասրայի մօտ կամ հէնց նրա տեղում: Սրա թեմերից յիշւում է նաև Կարքհա-դէ-Մեչանը, հին Աբասինուխարաքը կամ քաղաքը, Ռեհան և Նըհար-գուրը, որը ըստ եակուտի գտնւում էր Մեչանի և Ահուազի միջեւ:

200. Քաւխար— գտնւում էր այդ վայրերից աւելի հիւսիս Սաւադում, այժմեան Վասիտի ճահճուտ վայրերում: Նոյնպէս 410 թուից յայտնի է որպէս եպիսկոպոսական աթոռ և պատկանում էր Կտեսիփոնի կամ Տիզբոնի կաթողիկոսի թեմին: Սաւադի հին անունն է Սուրիստան, որը թարգմանուած է արամերէն Բէթ-Արամայէ—ասորիների երկիր— անունից: Հայ պատմիչներն (Ագաթանգեղոս, Փաւստոս, եղիշէ, Փարպեցի, Սեբէոս) այս երկիրն անուանում են Ասորեստան, որի մայրաքաղաքն է Տիզբոնը:

Ուրիշ խօսքով՝ յիշատակուած երեք նահանգներն էլ գտնւում էին անմիջապէս Պարսից ծոցից դէպի հիւսիս-արեւմուտք, հիւսիս և հիւսիս-արեւելք: Նրանց մասին տե՛ս ընդհանրապէս Նէօլդեկէ, Տաբարի, էջ 13—15 և J. Marquart, Eranschshr, էջ 21 և 40—42:

201. Հայ նախարարների ատրոի տեւողութիւնը մօտ 12 տարի է, սկսած 451 թուականի վերջերից կամ 452 թուականի սկիզբից մինչեւ 463/464 թուականը, երբ նրանք կրկին Հայաստան վերադարձան: Այստեղ յիշուած 9 տարի և 6 ամիսը պէտք է հասկանալ նախարարների կապուած ու բանտարկուած վիճակի մասին: Մինչդեռ ժամանակը նրանք թէեւ ազատ էին բանտարկութիւնից, բայց դեռ աքսորի մէջ էին Պարսկաստանում, իրաւունք չունէին Հայաստան վերադառնալու և ծառայում էին պարսկական հեծելազօրի մէջ Հրեաստում կամ Հերաթում:

202. «Նա և որ մեծ իշխանն էր աշխարհին»— խօսքը Հրեաի կամ Հերաթի մասին է, որ գտնւում է այժմեան Աֆղանստանում:

203. Ցազկերտ II-ի մահուան տարին է 457 թուականը:

204. Միհրան տոհմը Սասանեաններուն պատմութեան մէջ հռչակաւոր դարձած երեք ամենանշանաւոր տոհմերէն մէկն էր—Մուրէնի, Ասպահապետի և Միհրանի— երեքն էլ Արշակունի, բնակութեան վայրը բուն Պարթեւների երկիրը: Այս տոհմի չառաւիղ է համարուում նաեւ թէ՛ եղիշէի պատմութիւնից և թէ առհասարակ շատ յայտնի Միհր-Ներսեհը (տե՛ս Nöldeke, Tabari, էջ 109, 139 և 439):

205. Պերոզի թագաւորութեան տարիները են 458/459—484 թուականները:

206. Տասնեւմէկ լեռնական թագաւորների մասին տե՛ս ծանօթագր. 132:

207. «Ալանաց դուռ» էր կոչւում այժմեան Օրջոնիկիձէի (Վլադիկաւկազի) ճանապարհը կամ Դարիալի կիրճը:

208. Պերոզի թագաւորութեան 5րդ տարին է 462/463 թուականը, իսկ 6րդ տարին, երբ նա խոստանում է բոլոր հայ աքսորական իշխաններին ազատ արձակել, կը լինի 463/464 թուականը:

— o —

209. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ եղիշէն մի քանի անգամ տալիս է հայ նախարարական յուշակները, աւելորդ չենք համարում այստեղ դնել յայտնի գահնամակը (=հայ նախարարների պահերի պատասխանութիւնը): Այդ գահնամակը գտել է Ի. Ֆ. Ախվերդովը, առաջին անգամ հրատարակել է իմինը իր Թորեննացու ռուսերէն թարգմանութեան առաջին տպագրութեան մէջ (1858 թ., էջ 358), նրանից վերցրել է Թորէն Ստեփանէն, իսկ Ալիշանն իր «Այրարատ»ում հրատարակել է այն ֆոտոտիպով, բնական մեծութեամբ (էջ 430-ի և 431-ի միջեւ): Մենք վերցնում ենք այն Ն. Ադոնցի՝ «Արմենիա վը էպոխու Իւստինիանա» (Ս. Պետերբրգ., 1908) աշխատութիւնից, որովհետեւ Ադոնցի ընթերցումը լաւագոյնն է եղածների մէջ (տե՛ս յիշեալ գիրքը, էջ 249—250):

Գ Ա Հ Ն Ա Մ Ա Կ

(Իմ Սա)հակայ խնդիր արարեալ ի գրան արքունի յԱրտաչէսի թագաւորի զոր ի Տիսպոնն խաւսեցեալ եթէ ես զռամականն զնամա զոր Արտաշրի ի դիւանին տեսի ի Գաղոց ամասոյ ժէ. ն. վռամայ արքայից արքայի և բարերարի ի գիր արարի ես Սահակ կաթողիկոս թէ որպէս Ձեր բարերարութիւնդ հրամայն տայցէ հայոց ազատաց և տանուտէրանց որպէս յառաջ առ հայոց ալգին, նոյնպէս և ի ձերում դիւանի չահհամա(ր)ին առնել, որ յայսմհետէ հայոց ազատաց և տանուտէրանց գահ ի յայտ լինէր, նոյնպէս ներսէհ հրամանաւ արքայից արքայի և ես (Սա)հակ հայոց կաթողիկոս կնքեցաք զգահնեամակին և եղաք մատանի զարքայից արքայի և զմերս. և է այսպէս արդար և ճշմարիտ.

(Առաջին իշխան Հայոց և մախազան)

ա. Սիւնեաց տէր
բ. Ասպետն
գ. Արծրունեաց տէր
(դ. Մաղխազունի)
դ. Մամիկոնէից տէր
ե. Շահապն Ծովից տէր
զ. Մոկաց տէր
է. Ռշտունեաց տէր
ը. Վահունեաց տէր
թ. Կասպէից տէր
ժ. Անձաւացեաց տէր
ժա. Ապահունեաց տէր
ժբ. Կամսարականն
ժգ. Այլ Ապահունի
ժդ. Վանանդացին
ժե. Ամատունի տէր
ժզ. Գողթան տէր
ժէ. Գնունեաց տէր
ժը. Այլ Անձաւացի
ժթ. Տայոց
ի. Բասենոյ դատաւորն
իա. Գնդունեաց տէր
իբ. Վարձաւունին
իգ. Գարդմանայ տէր
իե. Սահառունին
իզ. Գաբեղէնից տէր
իէ. Ակեղէնից տէր
իը. Սիւնեաց երկրորդն
իթ. Արծրունեաց երկրորդն
լ. Արծրունեաց երրորդն
լա. Մամիկոնէից երկրորդն

լբ. Ռոփսեանն
լգ. գ-Աչոցեանն
լդ. Դիմաքսեանն
լե. Բուխա Դիմաքսեանն
լզ. Այզ Աբեղեանն
լէ. Այզ Դիմաքսեանն
լը. Գալուստին
լթ. Առաւեղեանն
խ. Աշտմարեանն
խա. Համբուժեանն
խբ. Վարսապակեանն
խգ. Զիւնակեանն
խդ. Ակէացին
խե. Զարեհաւանեանն
խզ. Ընծայեցին
խէ. Մանդակունին
խը. Սղկունին
խթ. Տայգրեան
ծ. Երմանթունին
ծա. Սպանդունին
ծբ. Առաւենեանն
ծգ. Տրունին
ծգ. Տրունին
ծդ. Մամբերացին
ծե. Հաւնունին
ծզ. Բժնունին
ծէ. Քաջբերունին
ծը. Մեհնունին
ծթ. Նախճերին
կ. Քաղաքապետն արքունի
կա. Որսապետն արքունի
կբ. Արտաչէսեանն
կգ. Վանանդացին երկրորդն
կդ. Ծուլն
կե. Վիժանու(նի)
կզ. Աքաժու
կէ. Շիրակա Դիմաքսեանն
կը. Գազրիկանն
կթ. Մարացեան տ(էր)
հ. Վաղրաապու(նին)

Ն. Ադոնց լգ. գ-Աչոցեան ուղղում է Աչոցեան, համարելով գ. տառը կրկնուած, ծդ. Մամբերացին առաջարկում է ուղղել Տամբերացի (նոյն առաջարկն արել է Ալիշանը, Այրարատ, Վենետիկ 1890, էջ 431, ծանօթագր. 1) և խ. Աշտմարեանն համարում է հաւանօրէն աղաւաղուած Աշխատարեանից։

Իսկ իդ. գահի բացթողումը բացատրւում է հետեւեալ կերպով. «Առաջին իշխանն Հայոց և Մաղխազն» (Որխոռունեաց իշխանների տիտղոսը) իր տեղում չէ. յայտնի չէ թէ երբ Որխոռունեաց իշխաններից մէկն ստացել է Հայոց առաջին իշխանի գահը և այդ պատճառով նրա անունը գահնամակում իր տեղից հանել են և տարել են վերեւ։ Ցայտնի է, որ Որխոռունիների գահը չորրորդն է, և դրա համար էլ Ադոնցը դ. տեղը փակագծերում դրել է «Մաղխազունի»։ Ուրեմն, Մամիկոնեաններից սկսած պէտք է գահերի համարները մէկ-մէկ միաւորով իջեցնել մինչեւ իգ. Գարդմանայ տէրը, որն այսպիսով կը դառ-

նայ իդ., և այնուհետեւ թուահամարները կ'ընթանան ճիշտ կարգով մինչեւ վերջը։

Այստեղ դնում ենք գաննամակի նախաբանի աշխարհաբար թարգմանութիւնն ըստ Ստ. Մալխասեանի (տե՛ս Խորենացի, աշխարհաբար, Երեւան 1940, էջ 338—339).

«Ես Սահակ խնդիր յարուցի Արտաչէս թագաւորի արքունի դռնում, Տիբոնում, ասելով, որ ես տեսայ ամբողջ նամակը Արտաչէրի դիւանում Քաղոց ամսի 17ին, և ես Սահակ կաթողիկոս գիր գրեցի վրամ արքայից արքային և բարերարին, թէ թող ձեր բարերարութիւնը հրամայ տայ՝ հայոց ազատների և տանուտէրների ցուցակագրութիւն կազմել ձեր դիւանում, ինչպէս առաջ եղել է հայոց ազգի մէջ, որպէսզի այսուհետեւ հայոց ազատների և տանուտէրների գահերը յայտնի լինեն։ Ըստ այսմ Ներսեհը արքայից արքայի հրամանով և ես Սահակ կաթողիկոս կնքեցինք գաննամակը և վրան գրինք արքայից արքայի և մեր մատանիները։ Եւ այսպէս է արդար եւ ճշմարիտ»։

— o —

ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբրահամ Նահապետ:—134, 181:
Աբրահամ սարկաւագ (Նահատակ):— 200, 210, 239:
Աբրահամ քահանայ:— 242, 243, 244, 246:
Ադէն:—215:
Ալանների դուռներ:—254:
Ակեա:—169:
Ակեացիներ:—175:
Աղբակ:—239:
Աղձնիք, Աղձնեաց աշխարհ, Աղձնեաց երկիր:— 104, 137, 170, 202:
Աղուանից աշխարհ, Աղուանից երկիր, Աղուանք:—104, 137, 146, 151, 155, 159, 171, 199, 202, 203, 253, 254:
Աղուանից նահապարներ:—157:
Աղուաններ:—112 156, 157, 158, 179, 203:
Ամատունի վահան:—129,175, 250:
Ամատունիք:—118, 169:
Ամատունեաց Առանձար:— 180, 250:
Ամատունեաց տոհմ, Ամատունեաց ցեղ:—129, 180, 250:
Ամպարտքաչ:— 211:
Այրարատ, Այրարատ գաւառ:—118, 159, 239:
Այրուկ Սլկունի:—175:
Անգղ գիւղաքաղաք:— 142:
Անանիա եպիսկոպոս Մխենեաց: — 118
Անատոլ, Անատոլիոս սպարապետ:— 102, 154:
Անարիք, անարիներ:— 104,119:
Աներան:—115:
Անի:—150:
Անձեւացի Շմաւոն:— 129, 175, 250:
Անձեւացիներ, Անձեւացեաց տոհմ կամ ցեղ:—118, 129, 250:
Անտիոքացիներ:— 179:
Անտիոքոս սպարապետ:— 202:
Աչնակ:—158:
Աչոտ Կամսարական:—250:
Ապահունիք:—118, 155, 169:
Ապահունեաց տոհմ:— 129:
Ապար աշխարհ:— 104, 209, 211, 241:
Ապահարյի գունդ:—189:
Ապրսամ Արծրունի:—175,250:
Առանձար Ամատունի:—180, 250:
Առաւան Անձեւացի:— 250:
Առաւեղեաններուն ցեղ:— 250:
Առնակ Ամատունի: —250:
Ախացոց կողմեր, երկիրներ:— 153:
Ասորեստան:—239, 242, 245, 246:
Ասորի փլորենտիոս, տե՛ս փլորենտիոս ասորի:
Աւարայրի դաշտ:—247:
Աւոմ Գնունի:—152, 175, 202, 250:
Ատրպատական աշխարհ, Ատրպատականի կողմեր:— 151, 155, 159:
Ատրոմիզդ:—199, 200:
Արագածոտն:— 158:
Արածոյ գիւղ:— 239:
Արդեանք:—158:
Արզնարզիւն:—104:
Արեւելք:— 99, 104, 108, 112, 152, 153, 154, 165, 251:
Արեւմուտք, Արեւմտեան երկիր: — 99, 145, 152, 165:

Աբիներ, Արիք:—104, 119, 171, 189, 191, 194, 254:
Արեաց աշխահ:— 161, 209, 254:
Արծրունի Ապրսամ:—175, 250:
Արծրունի Ներշապուհ:— 129, 175, 250:
Արծրունիք, Սրծրունեաց աշխարհ: — 118, 189:
Արծրունեաց տոհմ, ցեղ, տուն: — 129, 192, 200, 250:
Արհին:—116, 121:
Արհնի:—150:
Արմաւրի բերդ:— 158:
Արշակ Թագաւոր՝ որդի Տիրանի:— 101:
Արշակունեաց ցեղ: — 101:
Արշաւիր Արշարունի: — 157, 175, 189:
Արշաւիր Կամսարական:— 250:
Արշէն երէց Բարգեւանդի:—197, 200, 230, 239:
Արուճ:— 158:
Արսէն Ընձայեցի:— 175, 192:
Արտագերս:—150:
Արտազու դաշտ:—176:
Արտակ Մոկացի:—129:
Արտակ Պալունի:— 175 192, 216:
Արտակ Ռշտունի:—129, 169:
Արտաշատ քաղաք:— 119, 150, 158, 175, 200:
Արտաշատի նահանգ:— 158:
Արտաշէս Թագաւոր՝ որդի Վռամշապուհի: — 101:
Արտաշիր:—191
Արտաւազդ Մամիկոնեան:— 250:
Արտէն իշխան Գաբեղէնից:— 169:
Արցախ:—171, 196. 198:
Արփանեար:—150:
Աքաբ:—182:

Բաբգէն Սիւնի:— 250:
Բաբելոն:— 107:
Բաբելոնացիների երկիր:— 245:
Բաբիկ յՏափսոնեան տնից:— 250:
Բագրատունիք:—155, 169:
Բագրեւանդ:— 118, 239:
Բակ զօրական:—194:
Բակուր Սիւնի:—250:
Բաղասական:—156, 203:
Բանթուրակ.—117, 126:
Բասէն:—118:
Բասիլ եպիսկոպոս Մոկաց.—118:
Բարձրաբուղ:— 150:
Բել հոն:— 209. 210:
Բղնունիք:— 118:
Բոզպայիտ:—211:

Գաբեղէնք:—155, 169:
Գաբելեան Խոսրով:— 175:
Գադ եպիսկոպոս Վանանդի:—118:
Գադերոլիք:—153:
Գադիշոյ Խորխոռունի:—129, 169:
Գազրիկ Դիմաքսեան:— 157, 175:
Գառնի, Գառնի քաղաք:—150, 158:
Գաւ:— 171:
Գարեգին նախարար:— 107:
Գարեգին Սրուանձտեան:— 192:
Գդաց աշխարհ:—104:
Գեղէոն:— 183:
Գեղաց գունդ:— 189:
Գեհեն:— 126, 140, 207, 234:
Գղվար:— 171:
Գիւտ Վահեւունի:— 129, 169:
Գնթունիներու ցեղ, Գնթունիք: — 192:
Գնթունի Ճաճատ:— 189:
Գնթունի Ատոմ:— 152, 175, 202, 250:
Գնունի Վահան:— 192:
Գնունեաց ցեղ, տոհմ:— 152, 192, 202, 250:
Գուդք:— 104
Գռեհալ:— 150:

Դաստակերտ:— 158:
Դաւիթ երէց Մամիկոն:— 99:

Դաւիթ մարգարէ:—182:
Դատ Առաւելեան: —250:
Դարիվիր:—240:
Դասն, Դասան, Դարսան աշխարհ:—137:
Դենիմազդեղն:— 162, 225:
Դենշապուհ:— 114, 210, 221—225, 230—232, 235—237, 239:
Դիմաքսեան Գազրիկ:— 157, 175:
Դիմաքսեան Թաթուլ:—175, 250:
Դիմաքսեան Համայեակ:—175, 192:
Դիմաքսեան ցեղ:— 192, 250:
Դիմաքսեաններու գունդ:—157:
Դուռն:— 118, 130, 134, 146, 199 200, 205, 253:
Դրասխանակերտ:—158:
Եգիպտացիներ:— 181, 182:
Եզնիկ եպիսկոպոս Բագրեւանդի:—118:
Եղբայր եպիսկոպոս Անձեւացեաց:—118:
Եղեգեկ գիւղ:—239:
Եղիշէ եպիսկոպոս Ամատունեաց:—118:
Եղիսա:—182:
Եւլալի եպիսկոպոս Մարդալոյ:—118:
Եւրոպա:—153:
Երամոնս:—158:
Երան:—115:
Երեմիա եպիսկոպոս Ապահունեաց:—118:
Երեմիա եպիսկոպոս Մարտաստանի:—118:
Երիքով քաղաք:—183:
Երկայնորդ:—150:
Եփթայա: —183:

Զանգակ երէց:— 170:
Զարեհաւան:—202:
Զարեւանդ և Հեր:—155, 180:
Զուարէն Անձեւացի:—250:
Զրադաշտ:—225:
Զրադաշտական կրօն, օրէնք:—112, 211:
Զրուան:—115, 116:

Ընձայացի, Ընձայացի Արսէն:—175, 192:
Ընձայինն:—189:
Ընձայնոց ցեղ:—192:
Ընկուղ իշխան Ակեայի:—169:

Թաթ կամսարական:— 250:
Թաթիկ եպիսկոպոս Բասէնի:—118, 238:
Թաթուլ Դիմաքսեան:—175, 250:
Թաթուլ Վանանդեցի:—189:
Թաւասպարներու աշխարհ. Թաւասպարք:—171, 199:
Թէոդոս կայսր:— 102, 152, 153:
Թիտալական երկիր—111:
Թիր—տե՛ս Դարիվիր:—

Իլավանք գիւղ:—239:
Իսրայէլ:—182, 183:
Իտալական երկիր:—111:

Լոփնաս գետ:—156:
Լփինք:—157, 171:
Լփնաց աշխարհ:— 104, 137, 199:
Խաղխաղ քաղաք:— 156:
Խաղտիք, խաղտեաց աշխարհ:—171, 196, 198:
Խայլնդուրներ:— 105:
Խայլանդուրներու աշխարհ, երկիր.—209, 254.
Խիրխուվան:—199:
Խոնաստան:—128:
Խոսրով Գաբեղեան:—275:
Խոստովանող:—247, 248:
Խորանիոտ:—150:
Խորէն Խորխոռունի:—175, 189, 192, 216:

Խորէն վկայ, նահատակ—242, 243, 244, 246:
Խորխոռունիք—155, 169:
Խորխոռունեաց տոհմ և ցեղ—129, 192:
Խուժաստան— 134, 246:
Խուժիկ—224, 239, 241:
Խուբս Սրուանձտեան—175:
Խրատն—171:

Ծաւղեայք, Ծօղք—104:
Ծաւղէից աշխարհ—104. 137:
Ծխանխուտ—150:

Կամաւորականներու ցեղ:—250:
Կապկոհի լեռներ: —157:
Կապոյտ, Կապոյտ լեռ—197:
Կապոյտ բերդ—150:
Կաուշայ գունդ—189:
Կարէն Սահառունի—175:
Կորդուք, Կորդուայց աշխարհ—104, 137, 171:
Կուաշ աւան—158:
Կուր գետ—156:
Կուրան—223:

Համազասպ Մամիկոնեան—250:
Համազասպեան—189, 250:
Համակրեն—211, 222:
Հայոց ազգ, հայ, հայեր—99, 101, 112, 114, 130, 137, 139, 154, 160, 164, 168, 170, 188, 192—196, 198, 199, 203, 224, 241:
Հայոց այրուձի, հեծելազօր, զօրամաս, զօրագունդ, զօրք—101, 139, 142, 147, 151, 152, 154, 156, 157, 158, 159, 170, 171, 173, 180, 190, 193, 194, 198:
Հայաստան, հայոց աշխարհ, երկիր: 101, 104, 110, 114, 130, 131, 135, 136, 138, 141, 142, 143, 146, 153, 158, 159, 160, 163, 164, 166, 170, 172, 174, 180, 188, 194, 198, 199, 200, 203, 205, 208, 209, 225, 231, 241, 246, 247, 249, 252, 253, 254, 255, 257:
Հայոց խոստովանողներ— 242, 244:
Հայոց զօրավար, սպարապետ— 189, 191, 194, 220:
Հայոց մարզպան— 203, 204:
Հայոց նախարարներ— 101, 106, 110, 157, 200, 206, 255:
Հայոց սէխտ, մխարանութիւն— 154, 155, 168:
Հայք Մեծ— 115:
Հայք Ստորին— 170:
Հարամանիւ— 115, 117, 132:
Հարեւչում Շապուհ իշխան— 252:
Հեծեմատակներու աշխարհ— 171:
Հեծեմատակներ— 199:
Հեռան հոն—203:
Հեռաստան— 246:
Հեր և Ջարեւանդ— 155, 180:
Հմայեակ Դիմաքսեան— 175, 192:
Հմայեակ՝ եղբայր Վարդանի— 198:
Հնդկաստան— 143:
Հոլոցիմք գիւղ— 239:
Հոն բեր, տե՛ս բեր հոն:
Հոնաց աշխարհ, հոներու աշխարհ, երկիր— 105, 151, 158, 198:
Հոներ:— 106, 129, 159. 171, 254:
Հոներու գունդ, զօրք— 198, 199:
Հոներու պահակ, Հոնաց պահակ— 130, 158, 189, 209:
Հոռոմներ, աշխարհ, գաւառներ — 102, 104, 106, 117, 164, 170, 203:
Հռոմ— 153:
Հրոտից— 241:

Ձիթենեաց լեռ— 127:

Ղեւոնդ երէց— 142, 176, 180. 186, 195, 200, 204, 215, 226, 232, 238, 239:

Ձղրաց աշխարհ, Ձղրիք— 171, 199:
Ձորա կողմեր, Ձորա պահակ— 106, 155, 156, 171, 254:

Մակաբայեցիներ— 179:
Մակուրան— 223:
Մամիկոնեաններ, տոհմ, ցեղ— 129, 170, 192, 250,
Մանազկերտ— 118:
Մանդակունիների տոհմ— 250:
Մանդակունի Փարսման— 175, 250:
Մաներճ իշխան Ապահունի— 129, 169:
Մաներն սեպուհ Ամատունի— 169,
Մասքութների զօրք— 254:
Մատաթիա— 180:
Մատաթիայի ազգատոհմ— 180:
Մատեան գունգ— 189, 190:
Մարդպի— 118:
Մարդաստան— 118:
Մարիամ կոյս— 117, 126:
Մարկիանոս կայսր— 154, 164:
Մելիտէ եպիսկոպոս Մանազկերտի — 118:
Մեծ Հայք— 104:
Մեհրուժան Արծրունի— 250:
Մեշոփ— 246:
Միհր— 121, 123, 228, 244:
Միհրներսեհ վզուրկ հրամանատար, հազարապետ— 115, 119, 166, 168, 171, 172, 199:
Միջնաշխարհ— 159, 196, 197:
Մծբին քաղաք— 102:
Մոկաց տոհմ— 129:
Մոկք— 118, 189:
Մովան հանդերձապետ— 224, 227:
Մովպետան մովպետ— 224, 240, 241:
Մովսէս Մարզպարէ— 124, 181:
Մուշ Դիմաքսեան— 157:
Մուշէ եպիսկոպոս Արծրունեաց— 118:
Մուշէ երէց Արծրունեաց— 200:
Մուշէ երէց Աղբակի— 239:
Մուշեղ Մամիկոնեան— 250:
Մուշկան նախալաւուրտ— 173, 190, 191, 192, 194, 195, 199, 203:

Յաղկերտ Ա., Յաղկերտ Բ.ի պապը— 131:
Յազկերտ Բ.— 101, 102, 253, 254:
Յայտնութեան տօն— 160:
Յեսու— 183:
Յիսուս— 126, 127, 149, 178, 183, 186, 218, 220, 238, 258:
Յոհան յԻտափոնեան տնից—250:
Յոյներ— 104, 105, 170, 202, 249:
Յոյների աշխարհ, յունաց երկիր— 102, 103, 104, 153, 160, 170, 171, 203:
Յովհաննէս Մկրտիչ— 127:
Յովսէփ այր Մարիամի— 117:
Յովսէփ եպիսկոպոս Այրարատի— 118, 119, 130, 152, 176, 180, 195, 200, 204, 213, 219, 231, 238, 239:
Յունաց թագաւոր— 202:
Յորդանան գետ— 127:

Նաճրացի, նաճարացի— 117, 223:
Նաւասարդ— 137:
Ներշապուհ Արծրունի, Իմբռսեան— 129, 153, 154, 175, 250:
Ներսեհ իշխան Ուրծի— 169:
Ներսեհ կամսարական— 250:
Ներսեհ Փալքերունի— 175, 189: 192:
Նիւշապուհ քաղաք— 209, 239, 241:

Շահասուան— 157:
Շահխոռապետ— 175:
Շահուղ գաւառ— 245, 246:
Շապուհ արքայից արքայ— 101, 131, 143:
Շաւասպ Արծրունի— 250:
Շմաւոն Անձեւացի, Անձաւացի— 129, 175, 250:
Շնգին Արծրունի— 250:

Ոզական:— 150:
Ոստանիկներ:— 104, 169:
Որմիզդ արքայ:— 119:
Որմիզդ որդի Զրուանի:—116, 121:
Որոտ:—150:
Ուրծ:—155, 169:

Պալունի Աւրտակ:—175, 192, 216:
Պալունիներ. Պալունեաց ազգ, ցեղ:— 155, 169, 192:
Պահակ Ճորա:—106, 155, 156, 171, 254:
Պահ գուռն:—103, 112:
Պահլաւիկ:—211:
Պարգեւ Արծրունի:—250:
Պարսիկ, պարսիկներ:—102, 115, 150, 157, 158, 160, 197, 202:
Պարսիկ Սասան:—101:
Պարսից աշխարհ, երկիր:—106, 143, 144, 164, 199:
Պարսից արքունիք:—101:
Պարսից բանակ, զօրք, գունդ:—139, 151, 155, 188, 190, 194, 197, 198, 203:
Պարսից իշխանութիւն, տէրութիւն, պետութիւն:—137, 166, 170, 198:
Պարսից թագաւոր:—154, 171, 254:
Պարսից հազարապետ:—171:
Պարսից զօրագլուխ, զօրավար:—180, 194, 199:
Պարսկապեն:—211:
Պերոզ արքայ պարսից:—254, 255:
Պեռոզ:—211:
Պետրոս երէց:—170:
Պիղատոս Պոնտացի:—127:
Պօղոս Առաքեալ:—105:
Պոնտացի Պիղատոս—տես Պիղատոս Պոնտացի:

Ջնիկան:—224, 239:

Ռահամ՝ Մխիթան տոհմից:—254:
Ռափաոնեան տուն:—250:
Ռշտունի:—118, 169, 235, 239:
Ռշտունեայ զօրք:—176:
Ռշտունեաց տոհմ:—129:
Սադաստան:—133:
Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց:—118, 200, 204, 226, 228, 239:
Սահակ եպիսկոպոս Տարօնի:—118:
Սահակ Մանդակունի:—250:
Սահակ որդի Աբրահամի:—134:
Սահակ սարկաւագ:—170:
Սահառունի կարէն:—175:
Սամուէլ քահանայ:—200, 210, 239:
Սասան պարսկի ցեղ:—101:
Սատանայ:—101, 121, 137, 165, 169, 204, 207, 216, 232, 236, 244:
Սատոյ Դիմաքսեան:—250:
Սարգեանք—տես Աղձեանք:
Սեբուխտ մարզպան:—156:
Սերա սահմաններ:—153:
Սինա լեռ:—124:
Սինկղիտոս:—153:
Սկկունի Այրուկ:—175·
Սիւնիք, Սիւնեաց աշխարհ: —118, 146, 160, 204, 206:
Սիւնեաց տոհմ, ցեղ:—129, 250:
Սուրմակ եպիսկոպոս Բզնունեաց:— 118:
Ստեփանոս Նախավկայ:—238:
Սրուանձտեան Խուբս:—175:
Սրուանձտեան ցեղ:—192
Վահան Աղուանից թագաւորներ ի ցեղից:—158:
Վահան՝ Ամատունի.—129, 175, 250:
Վահան Գնունի:—192:
Վահեւունիք:—155, 169, 175:
Վահեւունեաց տոհմ:—129
Վաղինակ Սիւնի:—206:
Վայոց ձոր:—239:
Վան աւան:—150:
Վանանդ:—118, 239:
Վանանդեցի թաթուլ:—189:
Վանանդեցիք:—189:

Վասակ Մամիկոնեան:—170:
Վասակ Սիւնի:—129, 147, 152, 155, 156, 158—161, 168, 170—173, 175, 180, 188, 192—195, 197, 199, 200, 202—204, 207:
Վասակաշատ:—150:
Վատ:—171:
Վատգէս:—238:
Վարազդեն Առաւելեան:—250:
Վարազշապուհ Պալունի:—169:
Վարդան Մամիկոնեան:— 99, 129, 152, 155, 156, 159, 172, 174, 175, 189, 190—192, 198, 216:
Վարդանաշատ:—158:
Վարձ կամսարական:—250:
Վերին աշխարհ:—222:
Վզուրկ Միհրներսեհ:—Տես Միհրներսեհ Վզուրկ:
Վսուրկ Լփնաց Թագաւորի եղբայր:—157:
Վռամ՝ հայր Ցազկերտ բ-ի:—101:
Վռամշապուհ:—101:
Վրաստան, Վրաց աշխարհ:—104, 135, 136, 170, 171, 202, 204:
Վրացիներ:—112, 203:
Վրէն Տաշրացի:—176, 250:
Վրկան:—209:

Տաճատ Արծրունի:—250:
Տաճատ Գնթունի:—175, 192:
Տաճատ եպիսկոպոս Տայոց:—118:
Տաճկաստանի:—104, 145:
Տայք, Տայց ճորագաւառ:—118, 198:
Տաշրացի Վրէն:—175, 250:
Տաշրացիների ցեղ:—250:
Տարօն:—118:
Տիգրոն:—102:
Տիրան՝ հայր Արշակ Թագաւորի:—101:
Տիրոց Բագրատունի:—169:
Տղմուտ գետ:—189:
Տմորիք:—171, 196, 197:
Տուրուբերան:—118:
Տրդատիոս:—153:
Տրդատունիք:—175:

Ցոլակերտ աւան:—158:

Փայտակարան քաղաք:—166, 171:
Փապակ Առաւելեան:—250:
Փառախոտ:—158:
Փասխ:—171:
Փարսման Մանդակունի:—175, 250:
Փեղեհեզ քահանայ:—182:
Փլորենտիոս աստրի:—154:
Փխէքուան:— 171:
Փոսխ:—171:

Քալդէացիներ:—108:
Քաղց աւխս:—160:
Քաշկար:—246:
Քաջաջ սարկաւագ:—200, 239:
Քաջերունի Ներսեհ:—175, 189, 192:
Քաջերունեաց ցեղ:—192:
Քաստուն եպիսկոպոս Տուրուբերանի:—118:
Քողեաններ:—175:
Քուշաններ, Քուշանք:—105, 111, 135, 210:
Քուշանների աշխարհ, երկիր, պետութիւն, կոլմներ:—103, 104, 143, 209:
Քրիստոնէութիւն:—109, 111, 137, 143, 154, 158, 163, 170, 172, 179, 180, 197, 204, 222, 223, 246:
Քրիստոս:—102, 103, 106, 107, 112,—114, 126—128, 130—134, 138, 139, 141, 147, 149—151, 153, 159, 160, 164, 165, 168, 169, 178, 181, 183, 184, 186, 197, 206, 213, 216, 218, 219—221, 227, 234, 238, 242, 248, 250, 258:

Օշական:—158:

ԳԻՆ Ե. Դ 60

Printed in Egypt
by «HOUSSAPER» PRESS
Cairo